208.21
Z - 85

2004

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽՆԱՑ

ՈՍԿԵՐԵՐԱՆ

3454

1901-42

1765
208.21
Հ-85

ՅՈՎՀԱՆՆՈՒ
ՈՍԿԵՐԲԱՆԻ

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՕԼՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ

ՅԱՒԵՏԱՐԱՆԱԳԻՐՔ

ՄԱՏԹԷՈՍ

ԳԻՐՔ ԿՐԿԻՆ

1001
310 63

ԻՎԼԻՆԵՏԻԿ
ԴՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄՍ 1826 ՌՄՀԵ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ — СССР
ՀԱՅ. Ա. Մեսրոպյան
Ս. Էջմիածնի մատեան

225

ԱՌ ՀՆԹԵՐՑՈՂՍ

Առանց յերկար դեգերելոյ 'ի գովութիւն մատենիս, համառօտիւ զլուանդակն ասել համարիմք, թէ սա է գլուխ ամենայն պերճախօս վարդապետութեանց ՅԾԱՅՆՈՅՆ այնորիկ Ճարտարախօսի, որ յամենայն աշխարհէ ԲԵՐԱՆ ՈՍԿԻ Ճանաչի։ Յելինչ քան զայս ասել խիղճ է մեզ, զի մի յամեցուսցուք զընթերցողն անձամբ մատչել 'ի կարդացումն, և վկայել կամակար՝ թէ 'ի սմա են ծայրալեր ամենայն հրահանգք անստերիւր կարդաց և անարատ վարուց առն քրիստոնէի. և թէ չիք ուրեք մատեան՝ յորում այնպէս խիտ առ խիտ երևեսցին հանճար և հոգի ՅԾԱԽՕՍ պերճաբանութեան 'ի քանցումն ախտից և 'ի բարեզարդութիւն վարուց, այլ և ոչ իսկ յայլ աքանչելի շարագրածս սորին Սրբոյ, որպէս և 'ի մատենի ասա մատթէոսեան մեկնութեան։ Զարդարասցի նոցա յայնժամ և ըղձումն երջանկի ուրումն գլխաւորի յՅԾԱԲԱՆՍ, որ քան 'ի Փարիզ քաղաք պանծալի՝ առաւել խանդաղատելոյ զայսու գրովքս իբրև 'ի գանձ ինչ անգին։

Իսկ մեզ ոչինչ ընդհատ գովութեան և զարմանացս է հրաշալի ոչ՝ հայկազն թարգմանչիս, իբրև գրիչ ոսկի ոսկեբուղխ բերանոյ 'ի Աստ եկեալ։ Զի զհոգի և զիմաստս բնագրին յամենայնի անվրէպ պահեալ քան թէ զխտրանս բառից, այնպէս կենդանաբերէ զնոսա 'ի հայ բան, մինչև 'ի բնէ հայերէն զոսա կարծել շարագրեալ։ քան թարգմանածոյ ստացուած. կրկին բախտի յաջողուած յօրինեալ զսա իւրոցն բազմերան թարգմանչին, զի ընդ այնպիսի ՝ածային Աստուածաբանութեան և զայսպիսի գանձ ունիցին և օրինակ հարազատ հայկաբանութեան։

Ինագիր մատենիս յիննսուն Աստուս բովանդակիզորս և համարին քննիչք խօսեալ Ոսկեբերանի ընդամեն 390=398 Ինտիոք քաղաքի, որպէս և յայտնի իսկ ասէ ինքն 'ի յորդորակի ԵՒԹն Աստուն, թէ «Ոուք, յորժամ գահերիցութեան բանք ի ցեն, յառաջանայք 'ի վերոյ քան զամենայն տիեզերս նստելոյ քանզի զառաջին՝ մեր քաղաքս էառ զանուն քրիստոնէութեան»։

Հայ թարգմանն, որ անշուշտ մի 'ի գլխաւոր աշակերտաց սրբոցն է Սահակայ և Մեսրովպայ, թուի ինքն բաժանեալ զմատեանն յերիս գիրս կամ հատորս, և եդեալ առ իւրաքանչիւրսն զցանկ Աստուծոյ, որ չերևի 'ի յոյնն։ Ի առաջին գիրքն, Աստուք քան և հինգ, կոչումն առեալ է ԾՆՆԴՈՅՑ, վասն զծնունդս Տ՝ Հայապետացն և զՏեառնն սկիզբն ունելոյ. երկրորդն՝ Աստուք քան և ութ, ԿԱՓԱՌՆԱՈՒՄ գիրք, զի սկիզբն առնէ 'ի բանն «Դու մնեալ 'ի Կապառնաումի», մատեաւ առ նա հարիւրապետ մի». երրորդն՝ ԿԵՍԱՐԱՑԻՈՅ կամ ՓԱՐԻՍԵՑԻՈՅ գիրք,

վասն անտի սկսանելոյն, թէ «Լ,ելեալ 'ի կողմանս Փիլիպպեայ Կեսարեայն Հարցանէր զաշակերտսն»։ և սորա էին արդեւք Ճառք երեսուն և եւթն, եթէ չգոյր և այլ հատոր չորրորդ։ քանզի երևի ուրեք և յորջորջումն ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ գրոց։

Զաջիկայ մատեանս ունի տալանթերի զառաջին և զերկրորդ գիրսն։ զի զայսոսիկ միայն յաջողեաց մեզ գտանել և թափել յամենաձախ ժանեաց ժամանակին։ մինչև ազգասէր փոյթ հայկազանց կամ տուրք ժամանակաց յայտնեսցեն զցանկալին զայն զերրորդ մասն։ Միայն զհատակոտորս սորա ունիմք 'ի մտի առ ժամս տալ 'ի լոյս յայլ հատոր, զի մի բնաւ անհաշակ մնասցեն փափաքողք։

Զ Հայ թարգմանութեանս օրինակ համեմատեցաք ընդ յունին և ընդ այլ գաղափարս, և ընդ Շնորհալին մեր, 'ի սրբել զնս յանտերելի և եթ վրիպանաց գրչին։ Այլ ոչ յոյժ ընդարձակեալ զայդոցիկ դատաստան։ զի, որպէս յայտնի վկայէ յիշատակարան գրչին, 'ի չորից ընտիր և ստոյգ օրինակաց ընդօրինակեալ էր մերս, 'ի թուականութեանս հայոց ՉԽԸ, ըստ կարի կարևոր զգուշութիւն, զայլ և զայլ ընթերցուածսն 'ի լուսանցս գրոշմելով։ Որոյ սովորաբար զլուսանցիցն 'ի ծանօթութիւնսն նշանակեալ, զմիջինն պահեցաք։ իսկ ուր անդէպն թուէր կամ անկիրթ, զլուսանցիցն առաք 'ի ներքս, և զօրինակին նշանակեցաք 'ի ներքոյ։ ուրեք և 'ի յունէն ուղղեցաք 'ի կարգի անդ, զմերն 'ի ստորև միշտ դրոշմեալ։ իսկ ուր արդարանայր իւիք մերս, առանց փոխելոյ զայն՝ զյոյնն ստորագրեցաք։ և այն 'ի կարևորս ինչ ևեթ։ Զ սոյն կալաք ոչ և 'ի բաղդատութիւնս

այլոց օրինակաց. նշանագրել զգլխաւոր զանազանութիւնսն, և հաղիւ երբեք ըստ նոցա զմերն ուղղել. զոր թէ և արարաք ուրեք, որպէս և յուղղեցն զերկբայելի վրիպակս ինչ գրչին, անսպասս զմերոյն ընթերցուածս ցուցաք 'ի ներքոյ արձանագրեալ։

Յուղղագրութեան մասին խոտորեցաք միայն սակաւ ուրեք 'ի հին գրչէն. զի զոՙ 'ի մեր բառս եդաք ՀՀ. և ուր նա ունէր ԲԷ, ԲԷՁԷ, ԷՀ, ԷԷ, ԷՀՆ, ասէին, հրեէց, 'ի մարգարէէ, մարգարէացան, երբէր, այլ ըզշաղկասն, էարայէղ, մեք ըստ սովորութեան եդաք, զի մի ոտնառութեան տացի պատՀառս համբակաց. նա զի և ամենայն նախնի գրիչք չեն յայդոսիկ միաբան։ Իսկ զոլորակսն զոր ինչ ուրեք եդաք, ամենայն ըստ ուղիղ առոգանութեան նախնեացն է, և ըստ մերոյ գրչագրին. բայց միայն զի յոչ կարևորսն և 'ի յայտնիս գյոլովն 'ի շեշտից 'ի բաց թօթափեցաք։

Լոր և թուղթ մի 'ի գաղափարէ մերմէ անկեալ, 'ի Հառն ԺԲ. երկրորդ գրոցն, զոր համարձակեցաք ընուլ նորոգ թարգմանութեամբ 'ի յունէն. և ոչ շատ համարեալ ծանուցանել առ տեղեաւն, աստէն և ևս յայտնի առնեմք ամենեցուն։

Այս է աւասիկ մերոյ հաւատարմութեանս ըզգուշաւոր խնամ, յորմէ և չէ իսկ պարտ խոտորել 'ի նախնեացն բանից արտադրութիւնս։

Այսուհետև մատուցեալ զայս վաստակ զնախնեացն և զմեր՝ 'ի վայելումն հայաստան ժողովրդոց, մնամք 'ի հայրենասէր նախանձուէ նոցա զիսարէնն ընդունել, քաջալերս և ձեռնտուութիւն 'ի գիւտ վերջին մասին ոսկեղինիկ մատենիս և այլոց գրաւոր բական երկոց մերոցն բազմերախտ նախնեաց, 'ի պայ-

ծառութիւն հաշակելի անուան նոցա և անչափ վաստակոց, և հասարակաց 'ի վայելս տպագրութեամբ։ Այլ որ 'ի սոյն սատար գտանիցին, զբեսցին անուանք նոցա յաստի և յանտի անմոռաց գալրութիւնսն, և զՀայկազանցն տոհմ համբէն և զմեզ կալցին իւրեանց ընդհակալուս արդեամբք և բանիւք։

Է.Ջ.	ՏՈՂ.	ՎՐԻՊԱԿԻՑ ՏՊԱԳՐԻՆ	ՈՒՂՂԵԱԼ
75	29	յաւետարանն	յաւետարանիչն
76	15	յանօրէնութենէ	յանիրաւութենէ
108	8	հոգիպգ	յոգիպգ
116	32	յաշխարհ	աշխարհ
118	9	սանն	սանէն
164	10	խոստմամբ	խոստմամբք
194	15	գարձուցանեա	Յօրինուին գարձացուցանեա
251	29	գսանիցեն	գսանիցէն
264	8	կացուցանիցկ	ցուցանիցկ
277	8	իլեալ	խլեալ
292	31	մեծամեծ	մեծամեծս
295	27	այսորիկ	զայսորիկ
299	8	'ի ծառայիցէն	'ի ծառայակցէն
308	19	կուէն	կուէն
313	8	առաձինն յոմանս	առանձինն
344	22	զատատամեալն	Յօրինուին զատամամսեալն. գոչէ զատատամսեալն
365	37	բարութեանն	բարեբարութեանն
428	12	'ի լերին	'ի լերինն
435	7	'ի պատանաց	'ի պաղատանաց
463	12	առնիցէն	առնիցեն
481	14	որքան	Յօրինուին որ քան
485	5	առնիցէն	Յօրինուին առնիցեն
488	21	յառաքինութեանն	յառաքինութենէն
489	5	թաքուցայանեն յոմանս	թաքուցանեն
508	12	մեժիցի յոմանս	մերժիցի
559	15	բնակութեան	բնակութեանն
601	30	գայ յոմանս	կայ
676	12	չլինիցիս յոմանս	չլինիս
746	18	ասացելովքն	ասացեալովքն

ՅՈՎՀԱՆՆԵՍԻ

ՍԱԿԵՐԵՐԱՆԻ

ՅԱՒԵՏԱՐԱՆԱԳԻՐՆ

ՄԱՏԹԷՈՍ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԳԼԽՈՑ ՅԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍ ԽՆԴՈՑ ԳՐՈՑՍ

ՃԱՒԻԱ. Թէ չէր պարտ զրոյ կարօտանալ. և թէ վասն էր տուան զրովք էին. և զանազանութիւն հնոյն և նորոյս. և թէ ընդէր կոչէ զպատմութիւն աւետարան. և վասն աւետարանչացն. և վասն կարգի աւետարանին. և վասն հնչելոյ հեթանոսական առասպելեացն, և հաստատելոյ ճշմարտութեանն. և թէ չէ դիւրին բանք առաքելոցն քան զմարգարէիցն. և տարակոյսք բանից ազգահամարին։ Եւ խրատ ուղղութեան զրոց։

Բ. Գիրք լինելոյ Յսի Քրիստոսի. թէ ընդէր նախ որդի Դաւթի և ապա Աբրահամու կոչէ զՔրիստոս. և թէ ասոյգ ի Դաւթայ է Քրիստոս. և թէ Կոյսն ոչ եմուտ յազգահամարն. և որպէս ըստ հասարակաց բնութեան էր ծնունդն և չէր ըստ հասարակաց։ Յորդորակն, յորդորումն յուսկնդրութեան զրոց։

Գ. Թէ վասն էր Յովսեփի մուտանէ յազգահամարն. և քննութեան ազգահամարին. և թէ ընդէր զպոռնիկան յիշէ։ Յորդ. չհպարտանալ յառաքինութեան նախնեացն, և ոչ յիւրն, այլ խոնարհել։

Դ. Թէ ընդէր յերեք չորեքտասանս բաժանէ զազգահամարն, և զոմանս թողու ի թագաւորացն. և թէ Մարկոս վասն էր չառնէ ազգահամար. և թէ ըստ մարգարէիցն ոչ ակասի։ և վասն նշանացն առ Յուլիանոսիս. և պատճառ ծննդեանն ան։ և թէ վասն էր յառաջ քան զխօսին չյղացաւ Կոյսն, և խորհէին Յովսեփայ արձակել զՊՂՍն, և զալ հրեշտակի յերազ։ Յորդ. զինի մկրտութեանն և գործով պարտ է պարծառանալ. և թէ քան զազգանս և զդէս չար է մեղուորն. և վասն խոնարհութեան օրինակ երեք մանկունքն։

Ե. Յղութեան Կուսին վկայ մարգարէն. և բան առ որք ի լսեն օգտին և ի դուրս եղեալ մուտանան, և վասն անարատութեան Կուսին մինչև ցվախճանն։ Յորդ. ոչ պանծանալ յառաքինի ազգականն.

օրինակ՝ եղաբքն ՝ն և Մովսէսի քոյրն և այլք. և վասն ողորմածութեան։

Զ. Վասն աստեղն և գալոյ մոգուցն. և Հերովդէի խռովելն։ Յովդ. գովելի ոգոյ և արտասուաց, և վասն ծագու և ի թատերսն նստելոյ։

Է. Հայրցանէն Հերովդի ցքաւհանայս զտեղի ծնընդեանն Քրիստի. և ցուցանէն զԲեթղահէմ. և անմիտ նենգ խորհուրդն Հերովդէի վասն կորուսանելոյ զմանուկն։ Յովդ. ընթանալ յեկեղեցին ըստ արժանւոյն, և ոչ ՝ի թատրն ՝ի կորուստ ոգւոց։

Ը. Երկրպագութիւն և ընծայիւք պատուելն մոգուցն զՔրիստն. և հրամանաւ դառնալն յիւրեանց աշխարհն. և փախչելն ՝ն յԵգիպտոս։ Յովդ. գովութի վանականացն Եգիպտոսի, մեծին Անտոնի և այլոցն։

Թ. Բարկանալն Հերովդէի և կոտորել զմանկունսն. և յոլով բանս վասն ասելոյ ոմանց անիրաւ ըշմարէ մանկուցն, և վասն այլոց օրք յանիրաւի կրեն վտանգս։ Յարէ ՝ի նոյն և զմարգարէութիւնն Երեմիայի։ Յարէ և զդառնալն ՝ն յԵգիպտոսէ և զբնակելն ՝ի Նազարէթ. և թէ ՝ինչ ՝ն օգնեն անպիտան որդւոց ազնուութիւն հարցն։ Յովդ. առ ընդասէրսն։

Ժ. Քարոզելի Մկրտչին. և փոփոխումն ախտից բնութեանս ըստ հասակացն, որոց ՝ներն յաղթեաց. վասն որոյ երեսնամեայ եկն ՝ի մկրտել։ Յովդ. խրատ զղջման և ապաշխարելոյ զմեղսն. և յերկարել յաղօթս. և փարձութեանցն հանդերել։

ԺԱ. Ցանգիմանութի փարիսեցւոցն և սադուկեցւոցն վասն ՝ի հարսն պարծելոյ. և սպառնալիք օրինակաւ ծառոյն հատման, և առաքելն զնոսա առ Քրիստ։ Յովդ. թէ չ՝ բաւական հաւատալն. և ոչ լսելն զդիրս միայն առանց գործոց։

ԺԲ. Մկրտիչն Քրիստ ՝ի Յովհաննէ. և դարձն հոգւոյն. և ընդդէմ հերձուածողացն որք զՀոգին փոքր ասեն։ Յովդ. թէ պարտ է յետ մկրտութեանն արժանի ըստ պարգևին վարս ցուցանել։

ԺԳ. Փորձիչն ՝ն ՝ի սատանայէ. և պատասխաններն։ Յովդ. նմանել ՝ն ՝ի յաղթել դիւին. օրինակ Յովբ. և թէ ստոյգ զոյ դատաստան, և վրէժս ըստ գործոց։

ԺԴ. Խոյս տալն Քրիստ ՝ի Գալիլեայ. և սիրելն քարոզութեան. և կոչումն աշակերտացն. և բժշկելն զախտաժէտսն։ Յովդ. թէ չար է ոգւոյ անդամ

մալուծութիւն քան զմարմնոյ. վասն որոյ պարտ է աղաչել զնա։

ԺԵ. Վարդապետին ասն՝ի լերինն. և տալ զերանուէնսն. և անուանել զաշակերտսն աղ և լոյս։ Յորդ. ելեկնել՝ի բամբասանաց. և յայ պահանջել զվտին և ոչ՝ի մարդկանէ. և՝ի կուրան խաղաղութիւն առնել։

ԺԶ. Զդուշութիւն կարելոյն լուծանել զօրէնսն, և առաւելութիւն նորոյս քան զհնոյն. և արգելուլ զբարկանալն և զնախատելն. և օրէնք հաստատէ։ Յորդ. մխիթարել զանձն՝ի վիշտսն որ վասն Քրիստի. և թէ զիւրին է առաքինութիւնն այ օգնականութեամբն։

ԺԷ. Թէ զպարկեշտ գեղն որոնել ցանկութիւն կատարեալ շնութիւն է. և թէ պարտ է զգայթակղեցուցիչ բարեկամսն հատանել՝ի բաց. և չարձակել զկանայս. և ելերդնուլ. և թէ յայ էր հին օրէնքն։ Յորդ. չէ դժուարին յառաքինութիւն դառնալ։

ԺԸ. Բարեաւն է յաղթել չարին. և սիրել պարտ է զթշնամին նմանելով այ։ Յորդ. թէ պարտ է նախ ողջոյն տալ պատասխելոցն. և թէ վասն այ արհամարհիլն լաւ է քան զպատիւ թագաւորաց։

ԺԹ. Զողորմութիւնն և զաղօթսն ոչ առնել՝ի ցոյցս. և շատի աղօթից։ Յորդ. որք զթշնամութիւնն ոչ լուծանեն, այլ և յայ խնդրելն վրէժս։

Ի. Կեղծիւք չպահել, և որք՝ի չպահելն կեղծաւորին պատճառելով զբաղմացն գայթակղութիւն. և վն չատանալոյ ինչս, զի կուրութիւն է մեաց։ Յորդ. որք զինչսն յերկրի թաղեն՝ պատճառելով զաղաղմ ինչս։

ԻԱ. Թէ ընդդէմ ծառայելն հանէ՝ի Քրիստի ծառայութենէն, և ոչ հոգալ՝ նայելով ընդ թռչունս։ Յորդ. չէ դժուարին առաքինութիւնն՝ եթէ սկսանիմք։

ԻԲ. Անհոգս հրամայէ լինել վասն հանդերձից և կերակրոց՝ հայելով ընդ ծաղիկսն, և խնդրել զարժանին խնդրելոյ։ Յորդ. թէ չէ ինչ որ արգելուցու զմեզ բարի լինել, եթէ կամիցիմք և կարդամք առ ոնձ։

ԻԳ. Մեղաւորին չէ պարտ դատել զընկերն. և շնաբարոյին և խոզամտացն չէ պարտ պատուել ըստանն. և զնմ ինչ՝ յայ առնուլ խնդրողացն. և յանձնել ուսանել առնել զարին, և զդուշանալ՝ի չարացն։ Յորդ. առ ընչասէրսն, և համեմատութիւն հարստութեան ընդ առաքինութեան։

ԻԴ. Թէ չէ պարտ հաւատովք միայն առանց գործոց ապրել. և թէ չեն զարմանք և անարժանիցն առնել նշանս. և օրինակ առնելեացն և չառնելեացն զբանն՝ հաստատուն և վաղափուլ տուն-քըն։ Յորդ. փախչել ՚ի չարէ և առնել զբարի։

ԻԵ. Քնի զրուխքին քաղցրացոյց ժողովրդեանն զբանսըն. և խնամատուքիւ և հաւատով բժշկիլ բորոտին։ Յորդ. գոհանալ պարտ է զայ վասն նմ երախտեացն զոր արար։

1007
31067

Bernardino del.

G. Morina inc.

ՅՈՎՀԱՆՆՈՒ
ՈՍԿԵՐԵՐԱՆԻ

ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՒՊՕԼՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ

ՅԱՒԵՏԱՐԱՆԱԳԻՐՆ

ՄԱՏԹԷՈՍ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ՃԱՌ ԱՌԱՋԻՆ

ՊԱՐՏ և պատշաճ էր մեզ ոչ կարօտանալ 'ի նշանագիրս [1] գրելոյն օգնականութենէ. այլ այնպէս որբական վարս ընծայեցուցանել, որպէս զի շնորհք հոգւոյն փոխանակ ընդ գրոց լինելին մերոց հոգւոցս 'ի պաշտպանութենէ. և զորօրինակ զգրեալսն մերանաւ, նոյնպէս և զմեր սիրտս՝ 'ի հոգւոյն գրել։ Իսկ արդ քանզի յայնպիսի շնորհայն վերպեցաք, ծն առեալ մտադիւր յերկրորդն դիմեսցուք։ Եւ զի առաջինն ազնուագոյն էր, և որովք ասացն և որովք եցոյցն, արդեամբք յայտ արար ՅԾ. որպէս Հոյի և Աբրահամու, և նոցին որդւոց և Թոռանց, և Յովսայ և Մովսէսի. որոց ոչ գրով խօսեցաւ, այլ ինքն ինքեամբ եկիտ զնոսա մտացն յստակութեան։

Եւ քանզի ամենևին 'ի բնաւ 'ի յատակն իսկ չաւութեաց հասեալ անկաւ խառնիճաղանճն հեբրայ-

[1] Ճառընտիր Գ. և Շնորհալին 'ի մեկն. Մատթ. Նշանագիր գրեալոյ կամ գրոյ։

եցւոց, յայնժամ ապա և գրոց և տախտակաց՝ նո-
քօք յուշարար յիշատակի լինէին պէտք։ Եւ այն ոչ
յորս ըստ հնոյն միայն էին սքէն, այլ և որ ըստ նո-
րոյս էին՝ կատարէր, եթէ ոք կամեսցի զհանդէս առ-
նուլ տեսանել։ Վասնզի և ոչ առաքելոցն էտ ինչ
ՀԾ գրով, այլ ընդ գրոյն՝ զհոգւոյն պարգևս խոս-
տացաւ տալ. «Եւ յիշեցուսցէ ձեզ, ասէ, զամ»։
Եւ զի ուսանիցիս թէ այս ազնուագոյն էր, լուր
մարգարէին. «Ուխտեցից, ասէ, ընդ ձեզ ուխտնոր»։
Եւ դարձեալ՝ թէ «Տացէ զօրէնս իմ 'ի միտս նոցա,
և 'ի վերայ սրտից նոցա գրեցից զնոսա, և եղիցին
ամենեքեան ուսեալք յայ»։ Եւ Պաւղոսի հայեցեալ
յայսպիսի առաւելութիւն՝ ասէր, «Ոչ եալ օրէնս ոչ
'ի տախտակս քարեղէնս, այլ 'ի տախտակս սրտի
մարմնեղէնս»։ Եւ զի երկայնաձիգ ժամանակաւ վրէ-
պեալ գտանէին ոմանք յանծանօթ օրինացն. և
այլքն 'ի կարգաց և 'ի հաճոյական վարուց, պիտոյ
լինէր այնուհետև և առ 'ի գրելոցն յիշատակ յու-
շարար։ Եւ արդ 'ի միտ առնուցուս, որպիսի ինչ էաւ
ըիք էին, որոց այսպէսն պարտ և պատշաճ էր զպար-
կեշտն ցուցանել, զի մի և գրելոցն անգամ կարօ-
տանայցեն, այլ փոխանակ գրոց զսիրտն տայցեն
հոգւոյն։ Եւ արդ զի զայնպիսի պատիւ կորուսաք,
և իմաք անկաք 'ի կարօտուն այլոց պիտոյից, զիարդ
ոչ գոնեայ երկրորդաւն գտանիցեմք զպէտս դեղոցն
պատշաճից։ Օ ի եթէ ինչս ինչ իցէ գրոցն կարօտա-
նալ, ապա առաւելագոյն այն է, եթէ 'ի հնարս հոգ-
ւոյն ոք չդիմիցէ։ Եւ միտ եդեալ նայիցես, եթէ որ-
պիսի ինչ ամբաստանութիւն իցէ՝ այնպիսի օգնական-
նութիւնք չխորժել առնուլ զշահս, այլ վայրապար
լինն և անօգուտ զգրեալսն արհամարհել, և մեծամեծ
տանջանս ծուլութեանցն գտանել։

Վասն որոյ ստէպ աղաչեմ, զի մի ումեք այն դի-
պեսցի, միտ եդեալ նայիցիմք զգուշութիւն գրելոցն և
տուելոց. և ուսանիցիմք, եթէ զիարդ հին օրէնքն
տուան, կամ որպէս նոր կտակարանքս։ Որպէս արդ-
դեւք, կամ երբ, կամ ուր։ Այս է եթէ յետ սա-
տակմանն եգիպտացւոց, յանապատին և 'ի լերինն
Սինայի, յորժամ ծուխն ցոլանայր, և հուրն տոչ-

բեր, և պատեր զ լերամբն · ուր փողն հնչեր, և որոտումն, և փայլատակումն · ուր Ի՝ովսեան 'ի մէջն և 'ի հուրն մտանէր ։ Իսկ նոր կտակարանքս, ոչինչ այսպիսի · ոչ յանապատի, ոչ 'ի լերինն, ոչ 'ի ծուխ և 'ի խաւարի, կամ 'ի մէջ և 'ի մառախուղ · այլ 'ի սկսա նել և յերևեալ տուընջեան ամենեցուն որ 'ի ստուերս մահու նստէին, մեծաւ մեղմական զգնուեթ ամենայն ինչ լիներ ։

Ի՞նհանդարիցն և խստապարանոցաց՝ մարմնաւոր իմն տեսիլքն վայելէին · անապատն ահագին, լեառնն ծխումն և հրոմն բորբոքեալ, փողոցն հնչումն, և այլքն ևս այնպիսիք ։ Իսկ սոցա՝ որք զբարձրագոյնսն նկատեալ՝ ունէին 'ի մտի, հաձեալք և հաւանեալք, և ըստ մարմնաւոր միտս անդր 'ի բարձունս վերաբերեալք, ոչինչ պիտոյ էին այսպիսիքն։ Օ ի թէպէտ և 'ի վերայ սոցա գայր հասանէր բարբառ ինչ, ոչ վասն առաքելոցն, այլ վասն մեծատակացաց հրեիցն երևեցան լեզուքն հրեղէնք · զի թէ յետոյ ասէին՝ թէ քաղցուալիցք են, որչափ ևս առաւել՝ թէ չեր այսպիսի ինչ տեսեալ, և՛ն իմն ամպարշտագոյնս և մեծաւ մեծս խօսէին ։

Այլ 'ի հնումն յետ երանելոյն Ի՝ովսիսի 'ի լեառն՝ ապա էջ ՅԾ ։ Իսկ 'ի նորումս յետ վերանալոյ մերոյ ընուեթես յերկինս, մնաւանդ զի յարքունական իսկ աթոռս, ապա ինքանէր հանդչէր հոգին ։ Օ ի թէ հոգին նուազագոյն ինչ էր, ոչ այնպիսի մեծամեծք և զարմանագործք կատարէին ։ Այս և տխստակք առաւելեալ աղնուագոյնք, և ուղղութիւնքն լուսաւորագոյնք ։ Վասնզի ոչ եթէ 'ի լեառնի ինքեալք՝ քարեղէն արձանս բերէին 'ի ձեռս առաքեալքն ըստ օրինակի մովսիսական տախտակացն, այլ զՀոգին սբ զրեալ 'ի միտս և 'ի սիրտս, և գանձս իմն մեծացուցիչս՝ աղբերք կրօնից և հնորհաց և ՅՄ բարութեց բղխեալ · ամենայն ուրեք գիրք և օրէնք ընտրորք լեալ հնորհօք · այսպէս զժողովս երիցն հաղարացն և զամենայն իսկ համարն տիեզերս հնազանդեալ՝ առնէին գունդս և ժողովուրդս ՅՅ · լեզուօքն՝ զոր առին 'ի նմանէ,

1 Ճ· Գ· Ն։-ութ։

առեալ զամենայն մերձաւորս և զհեռաւորս ուսուցանէին։

Ասատի և Մատթէոս լցեալ հոգւովն սրբով, գրեաց զոր ինչ գրեացն. Մատթէոս մաքսաւորն և մաքսապետ։ Մինչ զանգիտեմ կոչել զնա իւրով արուեստին[1] անուամբ. նա և ոչ զայլսն և զնորին ընկերսն։ Զանգի այսու յայտ առնին հոգւոյն շնորհք, և նոցա մեծամաստակ առաքինութիւն։ Իսկ աւետարանն նոցա զշահս իւրոց արուեստիցն նմանագոյնս կոչեաց. զպատժոյն ազատութիւն, զմեղացն քակումն, զարդարութիւն, զսրբութիւնն, զմկրտութիւնն, զորդեգրութիւն, զերկնիցն ժառանգութիւն, ընդ որդւոյն այ զաղգականութիւն, եկեալ տայ աւետիս ամենեցուն, թշնամեաց և ապաշնորհաց, խաւարելոց և ստուերականաց։

Օ մինչ ինչ այնպիսի աւետեաց լինիցի զուգական. զի ած յերկրի, և մարդիկ յերկինս. և ամենեցուն խառնուրդք լինեին. հրեշտակք բանակակիցք մարդկան, և մարդիկ հաղորդք հրեշտակաց, և այլոցն ևս վերին զօրութեանց։ Այլ էր տեսանել զերկայն ժամանակեան պատերազմն քակեալ, տուրև առիկ փոփոխմունսն, այ ընդ մերում բնուեսն նուաձեալ, զթշնամին ամաչեցուցանել[2], զդևս հալածականս, զմահ լուծեալ, զդրախտն բացեալ, զանէծս եղծեալ, զմեղաց ոտս հատեալ, զմոլորութիւնն փախուցեալ, զճշմարտութիւն եկեալ հասեալ, զնաւս ած պաշտութեան բանիւք և արդեամբք ընդհանուր սերմանեալ և աճեցուցեալ, զերկնաւոր առաքինութիւս յերկրի տնկեալ, ընդելական հնամարձակութեամբ վերին զօրութեանցն ընդ մեզ խօսեցեալ. երկրի յանձնախոյս լեալ բանակք հրեշտակաց, և բաղմապատիկ զհանդերձելոցն բարութեանց առեալ յուսով զաւետիսն։

Ա՝ ամն այսր ամենայնի՝ կոչէ զպատմութիւնն աւետարան. որպէս զի այլն ամենայն արտաքնոցն ձառք՝ լուկ և ունայն են յայսպիսի ինչ շահից. եթէ ընչիցն

[1] Ի լուս. արուեստին։
[2] Ճ. Գ. և Շնորհ. ամաչեցուցեալ, համաձայն յունին։

յաՀախութիւն, և եթէ զօրութեանց ինչ առաւելութիւն, և իշխանութիւնք և փառք և պատիւք, և այլ ինչ այսպիսի, որ մարդկան թուին բարութիւնք։ Այլ միայն որ 'ի ՀԷնորսացն պատմեցաւ, է հաւատաւ և Հշմարիտ. և կոչին աւետիք. ոչ միայն զի Հաստատուն և անշարժ են բարութիւնքն, և 'ի վերք քան զմեր պատիւս, այլ զի դիւրաւն և առանց ամենայն աշխատութեաց շնորհեցան[1]. զի ոչ եթէ վաստակովք և քրտամբք, և տառապանօք ստացան, այլ միայն սիրեցեալք յայ՝ առին զոր ինչ առին։

Այլ զիարդ իցէ, զի յայնչափ աշակերտացն՝ երկուքն միայն յառաքելոցն գրեցին զաւետարանն, և երկու ևս այլ արքանեակք նոցին, մինն Պաւղոսի, և միւսն Պետրոսի աշակերտք՝ ընդ Յովհաննու և ընդ Մատթէի գրեցին զաւետարանս։ Օ՛ զի ոչ յանձանց ինչ պատիւ պարծանաց, այլ զամենայն 'ի պէտս և յօգուտ գործեցին։

Իսկ արդ զիարդ. չէր արդեւք բաւական մի աւետարանագիրն զամենայն ասել։ Բաւական էր. այլ թէպէտ չորք իցեն՝ որ գրեցինն, և ոչ ընդ նոյն ժամանակս, և ոչ 'ի նոյն տեղիս, և ոչ առ միմեանս հասեալ և զմիմեանս զգուշացուցեալ իբրև 'ի միոջէ բերանոյ բարբառիցին զամենայն, այն իսկ առաւելագոյն լինի յուցիչ Հշմարտութեանն։

Այլ և հակառակ իմն միմեանց են, ասեն, և 'ի բազում տեղիս չմիաբանին։ Այլ եթէ այն իսկ է[2] մեծ օրինակ Հշմարտութեան. զի եթէ զամենայն ամենեցուն՝ միաբան Հշդիւ էր ասացեալ՝ մինչև ցբանս և ցժամանակս և ցտեղիս, ոչ ոք 'ի թՀշամեաց առնոյր յանձն աւատալ, եթէ ոչ 'ի մի վայր եկեալ՝ մտեալ 'ի դաշն ընդ միմեանս, մարդկեղէն մտօք գրեցին զոր ինչ գրեցինն։ Եւ ոչ ընծայութիւն անմեղական միաբանութեանն երևէր։ Իսկ նա աւանիկ կարծեալն սակաւուք չմիաբանութիւնն ապատեցուցանէ յամենայն կարծեաց, և լուսաւորագոյնս քան զմիաբանութիւնն առնէ[3] պատասխանի։ Այլ թէ վասն

1 'Ի լուս. ընդհանր։
2 Յայնն ունի. Իսկ այն իսկ է։
3 'Ի լուս. Ի՝ զանազ դրեալ։
առնէ, փոխանակ բառիցն՝ զիարդ։
2 Բանութիւնն առնէ։

ժամանակաց կամ տեղեաց այլ և այլ խմն կարծիցի պատմութիւնն, այն ոչ եթէ զճշմարտութիւն պատմութեանցն աղաւաղէ։ Բայց սակայն և զայն ևս, որ պէս ՝ի նորհքն տայցեն, մատուցեալ յառաջագոյն՝ ջանասցուք յայտ առնել։

Բ. Յլ ընդ պատմութեցն աղաւէսք զձեզ և զմամ ևս զգուշանալ, զի ՝ի գլխաւորսն՝ որ զմեր կեանս հաստատուն պահեն, և զքարոզութիւնն յարդեն, ոչ որ ուրեք ՝ի նոցանէ երևի երկապառակ ինչ ճառիւք պատմեալ։ Յա՛ որպիսի՞ ինչ իցէ։ Օ՛ի ՝ա՛ն էր, և եղև մարդ. և զի խաչեցաւ, և զի նշանս արար[1], և զի թաղեցաւ, և զի յարեաւ, և զի վերացաւ, և զի գալոց է դատել, և զի ետ զկենարարն իւր պատուիրանս, և զի ոչ հակառակութիւն ինչ ընդ հին և ընդ նոր կտակարանս եմոյծ, և զի որդի է միածին և ՝ճշմարիտ, և անդստին ՝ի նմին էութենէ. և որ այլ ևս սոյնպիսիք ինչ իցեն, յայսպիսիսն յաճախագոյն դատանեմք զմիաբանութիւն։

Բ. զգա եթէ ՝ի նշանս ոչ ամենեքեան զամենայն ասացին, այլ ոմն զայս՝ և ոմն զայն, այն ինչ զքեզ մի խռովեցուսցէ։ Օ՛ի եթէ միոյն զնմ էր ասացեալ, ապա աւելորդ էր և այլոցն ևս թիւ. և եթէ ամենեցուն այլակերպս և նորս ՝ի միմեանց էր գրեալ, նա և ոչ այնպէս յայտ ինչ լինէր միաբանութեանն ընծայութիւն։ Ա՝ան այնորիկ և հասարակ զբազումս ինչ խօսեցան, և իւրաքանչիւր զիւր ինչ միայն. զի մի աւելորդ ինչ և ընդվայրընկեցիկ կարծիցի, և զասացելոցն ՝ճշմարտութեան հաւաստեաւ յայտ չառնիցէ քննութիւնն։

Գ. Յա՛ աւանիկ և Պ ուկաս զպատՀառան ասէ, որով էին ՝ի գրելն. « Օ՛ն ունիցես, ասէ, զբանիցն՝ որոց խելամուտ եղեր՝ զճշմարտութիւն »։ Բ. Յսինքն՝ զի ստէպ ստէպ յիշատակօք կայցես հաստատուն ՝ի ՝ճշմարտութեանն։ Իսկ Յովհաննէս ոչինչ արար յայտ զպատՀառան. բայց որպէս ՝ի հարցն ՝ի մեզ կարգեցաւ, ասեն՝ ոչ վայրապար ինչ և նա էին ՝ի գրել.

[1] Յոյնն և Շնորհալին ունին զայս կարդ. Ա զի նշանս արար, Ա զի Խաչեաւ։

այլ քանզի երեցուն այն ինն փոյթ եղև՝ վասն տեսչութեանն պարապել, և զծածութենն կրօնից Աստի լուել՝ ի տաղնապի կացուցանելոյ, նովին յորդորելով և նա ելն յաւետարանագրութենն։ Այս զայս անդաստին ի գրոցն, և մանաւանդ ի սկզբան աւետարանին է իմանալ. զի ոչ եթէ ներքուստ ի վեր նոյնն այլոցն սկսանի, այլ անդուստ ի վերուստ, զսրմն և փոյթ յանձին իսկ ուներ, վասն որոյ զամենայն ըզգիրսն գնեւ։ Ոչ միայն ի սկզբանն, այլ ի բնաւ իսկ յաւետարանին բարձրագոյնս քան զայլսն Ճառէ։

Այսոքն և զԱտթէէ, թէ որ ի հրէից հաւատացեալք էին՝ աղաչէին, թէ զոր ինչ բանիւքդ քարոզեցեր, դոյն հրէական բարբառովն՝ գրով և թողուցուս։ Այս զԱրկոս, ասէն, որ Այգիպտոս աշակերտեալքն էին՝ աղաչէին զնոյն առնել։ Զ ամն այսորիկ Աստէոս քանզի երբայեցերէն երբայեցւոյն գրեաց, ոչ այլ ինչ աւելի կամեցաւ ցուցանել, այլ զի թէ Այբրահամայ և ի Դաւթայ էր։ Իսկ Զուկաս քանզի ամենեցուն առ հասարակ Ճառեաց, անդ ուրեմն ի վեր հանէ զազգն մինչև Այդամ։ Այլ սա թերևս ի ծննդենէն առնէ սկիզբն, իմացեալ՝ թէ այլ ինչ ոչ հաճեր զհրեայսն, բայց ուսուցանել՝ զի Դաւթայ և Աբրահամու իցէ ծնունդն Աստի։ Իսկ Զուկաս ոչ այսպէս, այլ նախ զայլ բազում իրս յիշէ՝, և ապա յետոյ գայ հասանել յազգահամարն. և ոչ այսչափ միայն, այլ և այլ ևս ազգ։

Զա և յամենայն աշխարհաց պարտիմք հաստատել զմիաբանութենն, զի այնպէս վաղվաղակի ընկալան զՃառեալսն և թշնամիք իսկ ճշմարտութենն. և քանզի բազումք յետ նոցա ծնան հերձուածք հակառակ կարծել ասացելոցն, և կէսքն զամենայն Ճառեալսն ընկալան, և այլքն հաւին ինչ ինչ յայլոցն[1], և այնպէս ունին յինքեանս զհատակատորսն։ Իսկ եթէ կռիւ ինչ կայր ի բանս, ապա ոչ կէսքն՝ որ հակառակն իմանային՝ զամենայն ընդունէին, այլ մասն ինչ՝ որ նոցա կարծեացն միաբաներ. և ոչ նոքա որ զմասնն առնուին՝ կամէին ժխտել, որ և հատակո-

1 Ի լուս. յայլոց։

տորք իցեն՝ յայտ յանդիման աղաղակեն, թէ ընդ ամենայն իսկ ողջ մարմնոյն ունին աղգականութիւն։ Օ որօրինակ եթէ 'ի կողից առնուցու մասն ինչ, և սակաւ մասամբն գտանես զամենայն, յորոց ամենայն կենդանին իսկ յարուցեալ կայցէ՝ 'ի ջրից և յերա կաց և յարենէ. որպէս զի ասիցէ զբ՝ ողջոյն իսկ զանգուածոյն զօրինակ։ Այսպէս և 'ի գիրս տեսա նել, յիւրաքանչիւր կողման ասացելոցն զընաւ զա մենայնի աղգականութիւն երևեալ. զի եթէ չէին միա բան, ապա և ոչ սակաւ ինչ երևէր, և ոչ 'ի սակա ւուն և այլն ևս ամենայն յայտներ։ "Ամենայն, ասէ, թագաւորութիւն՝ որ յանձն իւր բաժանեալ իցէ, ոչ հաստատեսցի"։ Եւ արդ՝ այսու իսկ երևի զօրութիւն հուլոյն՝ ածել 'ի հաւան զնամ մարդիկ 'ի կարևորսն և 'ի պիտոյս, զի մի ինչ յայսպիսի փոքունց 'ի բաց ոք մնասեսցի։

Եւ արդ ուր առեալ իւրաքանչիւր գրեին չորե քեան, ոչինչ պարտիմք աւելի քան զչափն վիճել. այլ զի ոչ հակառակ միմեանց գրեցին, զայն սահ նեին 'ի հանդիսի գործ արարեալ ցուցանիցեմք։ Այլ դու այնպէս իմն մեղադիր լեալ չմիաբանուես, զնոյն բանս և զնոյն գիրս պատգամսց կարգել հրա մայես։ Եւ ինձ չև ևս է ժամանակ ասել, եթէ հուն տորականն և փիլիսոփայութիւն Ճոռոմաբանք բազում գիրս զնոցին և զնոյն իրաց գրեցին. և ոչ միայն չմիաբանեցին, այլ և հակառակ ևս միմեանց խօսե ցան։ Եւ այլ այլ է՝ որ զմի մի ինչ այլագունակս պատմեցին, և այլ այն է՝ որ կռուելով և զմիմեանց քակելով Ճառեցին։ Եւ ինձ մի լեցի ասել ըստ նո ցա անմտութեան օրինակ ինչ պատասխանուոյ. քանզի ոչ եթէ 'ի ստութէն կամիցիմ[1] հաստատել զՃշմար տութիւն։ Այլ զայն միայն կամեցայ 'ի հարցանել, թէ զիարդ, թէ հակառակ միմեանց էին, եղեն հա ւատալիք. կամ զիարդ կալան զընաւ երկիր չմիաբա նեալքն. նա և զարմանային ևս, և հաւատային, և քարոզէին ընդ բնաւ տիեզերս։ Օ՛ի թէպէտ և վկայք բազումք էին ասացելոցն, սակայն և թշնամիքն

[1] Յօրինակին, կամիցի ... կամիցաս։

և ա բազմադոյնք, և պատերազմողք և դիմակագք։
Վասն զի ոչ եթէ յանկեան ուրեք գրեցին և թա-
գուցին, այլ ընդհանուր 'ի ծովու և 'ի ցամաքի տարա-
ծեցին լցին յականջս ամենեցուն. և առաջի թշնա-
մեացն ընթեռնուին, որպէս և այժմ, և ոչինչ 'ի ձա-
ռեալցն զոք գայթակղեցոյց։ Վասն զի ահեղին զօ-
րութիւն էր՝ որ յերիւրեր և ուղղեր զամ յամենե-
սեան. զի եթէ այս այսպէս ոչ իցէ, զիարդ մաքսա-
ւորն և ձկնորսն և առանց դպրութեան՝ այնպիսի ինչ
ճարտար խօսէր, զոր արտաքին իմաստունքն և ոչ
յերազն անգամ տեսանել կարէին։ Իսկ սոքա աւա-
սիկ մեծաւ հաստատութեամբ և պատմեն և հաւանե-
ցուցանեն, ոչ միայն մինչ կենդանիքն էին, այլ և ա-
ռաւել յորժամ վախճանեցանն, ոչ զերկուս մարդս,
կամ զքսան, կամ զհարիւր, կամ զհազար, կամ
զբեւր, այլ զբազաքս համօրէնս, և զազգս և զաշ-
խարհս և զծով և զցամաք և զյոյնս և զբարբա-
րոսս և զշէնս և զանշէնս։ Այլ իրքն առաւել ան-
չափ էին քան զմարդկան բնութիւն. զի զերկիր թո-
ղեալ և զերկնաւորսն ճառէն, այլոց իմն կենաց լեալ
առիթք. և վարք ազնուականք, և մեծութեամբ շահա-
ւէտ. աղքատք և մեծացուցիչք, և նորանշան իմն
ազատութեամբ և ծառայութեամբ. և կեանս, և մահ, և
չքնաղ առաքինութիւս։ Այլ ոչ որպէս Պղատոն, որ
զծաղրալից զվարս իմն հաստատէր. և Օ ինոն, և թէ
այլ ոք առաքինութեամբ ինչ գրեաց՝ կամ՝ օրէնս կար-
գեաց. և անդատին իսկ ամենեքեան յայտ առնէին,
եթէ այս սիրոյ և դէ իմն վայրենի մատուցեալ ընդ
բնութեան, ցածութեան թշնամի է, և ուղիղ կարգաց
պատերազմող, զամ վերՙիսկայր հարեալ հնչեաց յա-
դիս նոցա։ Օ՛ի յորժամ հասարակաց ամենեցուն
համարիցին զկանայս, և կոյս մերկանդամն ածեալ
'ի կռիւ՝ առ 'ի տեսիլ նշաւակութեան արանց, և գռ-
զացիկ ամենութեամբ կարդիցեն, և այնպիսի մոլ-
ութեամբ ապականիցեն զահմանս կարգաց բնութեան,
զինչ այլ ինչ իցէ առ այս ասել, այլ զի դիւաց
դիւաք էին ամ, և արտաքոյ քան զբնութիւն բանք։
Վ կայեսցէ ինքն իսկ բնութիւն, սոսկացեալ 'ի բա-
նիցն։ Այլ զայն ոչ եթէ հալածանաք կամ պատե-

բազմաւ, այլ մեծաւ համարձակութիւն և ազատութիւն զրեին, և բազմաց յամ կողմանց գովէին։ Իսկ ծերկնորսքն 'ի հալածանս, 'ի տանջանս. զորոց տգէտք և իմաստունք, ծառայք և ազատք, թագաւորք և զօրականք, յոյնք և բարբարոսք, մեծաւ մտադիւրութեամբ ընդունէին։

Լոյս ոչ ունիս ասել, թէ վասն զի փոքունք էին և երկրաւորք, յայն սակս եղեն ընդունելի ամենեցուն։ Այլ՝ ես իմն աւելի բարձրագոյն քան զնոցայսն են։ Օ ի նոքա զկուսութիւն և ոչ յանուրջս ուրեք զանուն ածէին զմտաւ. ոչ զչքաւորութիւն, և ոչ զպատհոց, և ոչ զայլոց ինչ իրաց մեծամեծաց։ Իսկ մերքս՝ ոչ միայն զցանկութիւն մերժեն, և ոչ զգործսն և եթ խոտեն, այլ զերեսս լրբաբանականս, և զբանս թշնամանիկս, և զլեզու յանդուգն, և զկերպարանս, և զդնացս ոտից, և զաղաղակ, և զցասումն. և մինչև ցփոքունս մատուցանեն զհաւաստիսն նոցա. այլ զամ տիեզերս լցին տնկով կուսութեանն. և զայ Ճարտար խօսել զսոյն՝ հաստատէին[1] զամենեսեան, և զերկնաւոր իրաց՝ զորոց ոչ ոք երբէք 'ի նոցանէն կարէր ածել զմտաւ։

Վանդի զիարդ, որ զՃնեացն և զգետնաքարշ սողնոցն, և զայլ ևս վատթարաց դիմակս՝ առնէին պատկերս ոչ և պաշտէին, կարէին հաւանեցուցանել զոք։ Իսկ ածէղէն վարդապետութիւն և տնկեցաւ և հաստատեցաւ. և օր ըստ օրէ աճէ և զարգանայ. և նոցայն խաբեսի և հալի 'ի նմանութիւն սարդիոստայնից։ Լոյս յիրաւի իսկ. քանզի զիւաց վարդապետութիւն էր. վասն որոյ հանդերձ աղտեղութիւնքն՝ և բազում մեծ ածեալ ունի, և յաճախ աշխատուի։ Օ ինչ ծաղր քան զայնպիսի գնացս կայցէ, յորում հանդերձ ասացելովքս՝ բեւեր ստիպս ծախեաց փիլիսոփոսն երկայնբանութիւն, և բազում զգուշութեամբ եղեալ զասացեալսն, զի կարասցէ ցուցանել թէ զինչ ինչ լցէ արժանն։ Որ թէպէտ և օգուտ ինչ ոչ ունէր[2], առաւել յոյժ անպիտան լինելոց էր մարդկանն վարուք։

1 'Ի լուս. հաստատէին։ 2 Յոյնն. օգուտ ինչ ունէր։

Եթէ մշակ կամ դարբին կամ շինօղ կամ նաւորդ, և իւրաքանչիւր ոք որ 'ի ձեռացն արուեստէ կեայ, թողուցու զարուեստն և զարդարութեան վասակն, երթայցէ ծախիցէ ամն բազումս ուսանել զարժանն ինչ, և յառաջ քան զուսանելն թերևս 'ի սովոյ սատակիցի վասն այնպիսի ինչ զարժանն ուսանելոյ. և զայլ ինչ 'ի պիտանեացն չուսանիցի, այլ բռնութեամբ մնհուամբ զկեանս վաճառիցէ, որպիսի ինչ օգուտ անտի գործիցէ։ Եւ այլ ոչ նոյնպէս մեքս. այլ զարժանն և զիրաւն և զօգուտն և զդէպն ամ առաքինութեանց՝ սակաւ և յայտնի բանիւք ուսոյց մեզ Տէր։ Երբեմն ասէ, «Հերկուս պատուիրանս կախեալ կան ամ օրէնք և մարգարէք. և թէ սիրեսցես զտէր ամ ծ քո, և զընկեր քո իբրև զանձն քո»։ Եւ երբեմն, թէ «Օ որ ինչ կամիցիք՝ զի արասցեն ձեզ մարդիկ, արարէք և դուք նոցա. զի այս են օրէնքն և մարգարէքն»։ Ամ և ծառայից և մշակաց և կանանց այրեաց և մանկտուոյ, և այլոց որ կարի ևս անմիաք իցեն, յայտնի է և դիւրագոյն։ Եւ այսպիսի ինչ է Ճշմարտութեան կէտ։

Եւ վկայէ կատարումն իրացն. զի ամենեքեան ուսան զպատճառսն. և ոչ միայն ուսան, այլ և միմեանց արկին նախանձուկս. ոչ միայն 'ի քաղաքս և 'ի գեօղս, այլ և 'ի գլուխս լերանց. քանզի և անդ տեսանեմք զդաստասիրութեան, և զունդս հրեշտակաց 'ի մարդկեղէն մարմնոս երևեալ, և զերկնաւոր քաջութիւնս յերկրի յանձինս ցուցեալ։ Եւ զառաքինութիւնն՝ զոր գրեցին ձկնորքն, ոչ եթէ 'ի մանկութենէ հրամանն տան անդր գրաւելոց, որպէս էին նոքքայն. և ոչ այսչափ ամն կամ այնչափ կրօնս դնեն առաքինի լինելոյ, այլ համարձակ ընդ ամ հաստակ խօսին։ Եւ ոչ եթէ իբրև մանկտուոյ խաղ էր, այլ Ճշմարտութեան արդեանցն կատարելոյց. և բնակութեան զերկինս. և ձեռագէտ Ճարտարապետ զամ. և օրէնդրիր այնց օրինաց զԱ, որպէս և պատշաՃ իսկ էր։ Եւ առաքինութեան պարգև ոչ տերև դափնեայ, և ոչ ոստ և պսակ ձիթենեայ, և ոչ ռոՃիկք պատուիրանաւ [1], և ոչ պատկերք պէնձիք. քանզի այն ամ

[1] Ցոյն. պէիոգանաս, կամ 'ի պէիոգանէն, որ էր ապարանք

մխիթարութիւն ոյժ և արհամարհեալ էր։ Լայլ կեանս անվախճանս, և որդիս ոչ լինել, ընդ հրեշտակս գնդակից լինել, և առաջի արքունական աթոռոյն կալ, և մշտնջենաւոր լինել ընդ Քրիստի։

Լոյս առաջնորդ առաքինութեանն՝ մաքսաւորքն և ձկնորքն և խորանակարքն. ոչ սակաւակեացք, այլ յաւէժ կենդանականք. զի և յետ կատարելոյն՝ առնեն շահս այնոցիկ, որ նոսին Ձգամբք կամիցեն նահատակել։ Լոյս մարտ պատերազմի ոչ ընդ մարդկան, այլ ընդ դեւս չարս, և ընդ անմարմնականն զօրութիւնս։ Ամն այնորիկ և զօրավարն ոչ ոք 'ի մարդկանէ է, և ոչ ոք 'ի հրեշտակաց, այլ ինքնին Աստծ։ Լոյս զէն զինուորացն՝ նման պատերազմին, ոչ 'ի մաշկէ և յերկաթոյ կազմեալ, այլ 'ի Ճշմարտութենէ, և 'ի հաւատոց, և յարդարութենէ։ Լոյս ըստ առաքինութեանս ըստ այսմիկ գրեցաւ գիրքս այս։

Լոյս մեզ 'ի դէպ է այժմ ասել, եթէ զգուշութիւն եդեալ հայեսցուք ընդ Ամատիոս, որ զայս ամ Ճառեաց. ոչ զիւր ինչ, այլ զայնք՝ որ եցոյց զՏէր զամանս այսպիսի առաքինութեաց՝ Քրիստի։ Լայեսցուք ընդ գրեալսն, զի և մեք ընդ նոսին գրեսցուք, ընդ նոսին լուսաւորեսցուք, որք զառաքինութիւն ցուցին յանձինս, ընդ նոսին և անթառամ պսակացն լիցուք արժանի։ Օ 'ի թէպետ և բազումք դիւրին ինն զայս բանս համարին, և դժուարին զմարդարէիցն. քանզի չէն հմուտ խորոց գիտութեանն որ 'ի սոսա կայ։ Ամն այնորիկ աղաչեմք զՏեր՝ առաւելագոյն փոյթ յանձին ունել, զի ընդ մեզ 'ի խորս գրելոցն մտանել ցէք. և Քրիստոս լինիցի մեզ և ձեզ հասարակաց առաջնորդ։ Լոյսեսցուք, զի դիւրագիւտ լիցին միտք Ճառիցս՝ որպէս և զայլ գրեանցն, որոց կամօքն ոյ արարքաց սկիզբն, և կատարեցաք։ Լոյս արդ մնցուք յրնթերցուածսն, որք առաջնորդիցեն և 'ի գիտութիւն ընթերցուածոցն հասանել. որպէս և 'ի դէպ եղեալ և նեբբինուցն 'ի Փիլիպպոսէ պատահէր. քանզի բազում ինչ և յաՃախ խնդիրքն կան 'ի միջի։

կամ Ժողովարան ՅԱԹԻՆս, ուստի եղանիցն հրամանք և պատուէրք։

Լե արդ տես 'ի սկզբանս իսկ աւետարանին, որ-չափ այսր և անդր հարկանէ զիտոն։ Նախ՝ թէ ընդէր Յովսէփ մնանէ յազգահամարն, որ չէր հայր Մարիամ։ Այլ, թէ ուստի յայտ իցէ 'ի Դաւթայ կաղ-դեալ ազգն Մարիամայ՝ յորմէ Մշոն ծնաւ. զի նախ-նեայն նորա անուանք ուրեք յայտ ինչ ոչ երևին. քանզի և անկաւ իսկ ոչ յազգահամարն կոյսն։ Այլ, թէ վասն էր Յովսէփ, որ ոչ և իւիք՝ ինչ հաղորդուն ունէր 'ի ծննդեանն, մնանէ յազգահամար. և կոյսն որ և մայր՝ ոչ երևի թէ որոց հարանց կամ հաւուց կամ նախնեաց իցէ։

Յետոյ և զայն ևս պարտ խնդրել, թէ ընդէր զի արամբք գայր յառաջ ազգահամարն, յիշեցան և կանայք. և զի այս այսպէս հաճոյ եղև նմա, ընդէր ոչ զամ կանայս արկ 'ի համար, այլ զլաւագոյնսն Թողեալ, զՍառա և զՀռեբեկ և զՀռաքել, և զայլսն ևս զայսպիսիս, և զհամբաւեալսն 'ի չարիս միայն բերէ 'ի մէջ, զպոռնիկն և զշունն և զանիրա-ւեալն յամուսնութեան, և զայլազգին և զաբրբարոս։ Վասանզի զՄուրիայի զկինն յիշէ, և զԹամար, և զՐա-հաբ. յորոց մին այլազգի էր, և միւսն ընդ սկեսր-բէի պղծեալ. և զայն ոչ եթէ օրինաւք ինչ ամուս-նութեան, այլ գողացիկ խառնակութեամբ՝ պաճուճեալ 'ի կերպարանս պոռնկութեան. և Մուրիայ կինոջն ոչ ոչ իցէ տեղեակ վասն յանդուգն անօրէնութեան։ Սա-կայն աւասիկ զամենեսին Թողեալ աւետարանիչն, զսոսա միայն արկանէ յազգահամարն. և թէպէտ և յիշել ինչ պարտ էր զկանայսն, ապա զամենեսեան օրէն էր յիշել. իսկ եթէ ոչ զամենեսեան, գոնէ զայսս որք յառաջինութիւնս ինչ էին, և ոչ զհամ-բաւեալսն 'ի յանցանս։ Լե արդ տեսցէք, որչափ պարտ ու պատշաճ իցէ մեզ Հշմարտագոյն միտ դնել սկզբան աւետարանին, որ այնպէս ինն Թուի՝ եթէ յայտնագոյն ևս իցէ քան զայլ ևս ճառսն. և թէ բևս բազմաց և աւելորդ ինն Թուիցի Թիւ անուանցն։

Լե յետ այնր զայն ևս արժան է խնդրել, եթէ ընդէր զերիս Թագաւորսն եթող. և թէ իբրև զա-

1 'Ի լուս. որ ալ ի։

ուղղոյն իմն ամպարշտաց չարաբ արժանի յիշել զանուանս, ապա և ոչ զայլոցն այնպիսեաց պարտ էր յիշել։ Որ և այս իսկ այլ իմն խնդիր է. չորեքտասան ազգ ասաց, և յերկրորդում մասինն ոչ աճէ ամբողջ զթիւն։ Այլ եթէ ընդէր Ղուկաս զայլոց անուանսն յիշեաց. և ոչ միայն զնոցին՝ ամենեցուն, այլ և առաւել զբազմաց և։ Իսկ Մատթէոս՝ զսակաւուց, և զայլոց. Թէպէտ և մինչ ցՅովսէփ և նա տարաւ կատարեաց՝ յորմէ և Ղուկասն սկսաւ համարել։ Ցեսանէք, որչափ տքնութեամբ պէտք էն, ոչ միայն առ 'ի մեկնել զինդիրսն, այլ առ իմանալ թէ զինչ և զինչ արժան իցէ մեկնել։ Բանզի և այն չէ փոքր, եթէ զերկբայութեանցն որ կարիցէ գտանել՝ Այս և այն իսկ երկբայութեամբ է, թէ զիարդ Այսպարեմ՝ որ զեւտացի էր, և ազգաւ աղգական էր Մարեմայ։

Այլ զի մի ծածկեսցուք հեղձուցուք զյիշատակս ձեր քաղմութիւն բանիցս տողելոց, առ այժմ ասա հանդուսցուս զբանս։ Բանզի բաւական մեզ, առ 'ի զարթուցանել՝ և զինդրականն միայն ուսանել. ապա թէ լուծմանն եւս ցանկանայիք, և յառաջ քան զմեր ասել՝ դուք ձեզին իսկ տեարք էք. և եթէ տեսից զձեզ զարթուցեալս և ցանկացեալս առ ուսանել, քանացայց և զլուծումն եւս 'ի սոյն յօդել. ապա եթէ դանդաղեալս և անյօժարս յունկնդրութիւն, թաքուցից և ես զինդիրս և զլուծումն. ածեղէն օրինացն հաւանեալ՝ թէ «Մի տայք զսրբութիւն շանց, և մի արկանէք զմարգարիտս առաջի խոզաց, զի մի առ ոտն կոխիցեն»։ Այլ ոմ իցէ որ առ ոտն կոխիցէ։ Որ ոչ համարիցի զայս պատուաւանս և պարկեշտս։ Այլ ոմ, ասեն, այնչափ հէք ոք իցէ, որ ոչ պարկեշտս և պատուականագոյնս քան զնա համարիցի զայս։ Որ ոչն պարապիցէ սոցա, որ չափ ինչ պարապիցէ պառնկաց և թատերաց սատանայականաց. քանզի անդ և զցերեկ ամ դեգերին, և զբազում ինչ տան պէտս ընդ վայր հարկանեն՝ վասն անօգուտ դատարկութեան, և հաւաստեաւ՝ զոր ինչ և լսիցենն՝ ունին 'ի մտի, և յապականութիւն ոգւոյ իւրեանց զգուշանան բանիցն զոր լսեն։ Իսկ ասա ուր ածէ իսկ խօսի, և ոչ սակաւ ինչ ժամն ան-

սան յամէլ։ Ամն այսորիկ չունիմք հաղորդութիւն ինչ ընդ երկինս. այլ բանիւք միայն են մեր վարք և առաքինութիւնք։ Այս և զգեհենն վասն այսորիկ սպառնացաւ ՅԾ, ոչ զի անդր արկանիցէ, այլ զի հաւանեցուցանիցէ փախչել 'ի դժոգակ բռնութենէն։ Այս մեք զնորին հակառակն կամ առնեմք, կամ լսել ախորժեմք. և հանապազ յայն Ճանապարհ, որ անդր տանի, ընթանամք։ Թէպէտ և ՅԾ հրամանս տայ ոչ միայն լսել, այլ և առնել զպատուիրեալսն, մեք և լսել անգամ չանսամք։

Այս արդ աղէ ասա, երբ առնիցեմք զհրամանսն, և ձեռն 'ի գործ արկանիցեմք, ուր և զբանս որ վասն այնոցիկ իցեն՝ չախորժեմք լսել, այլ դանդաղիմք և վեհերեմք այնմ պարապել, թէպէտ և կարի իսկ յոյժ թեթևագոյնք իցեն։ Այս մեք զցուրտ իրաց Ճառ արկեալ խօսիմք. և թէ որ զմեզ շուրջն նստիցին՝ տեսանիցեմք թէ չգնեն միտ, թէնամանս զիրսն համարիմք. և ոչ չհամարիմք բարկանալ՝ յորժամ վասն այսպիսեաց խօսիցի, և մեք արհամարհեմք ըստ բանսն, և այսր անդր հայիցիմք։ Այլ ոմն ծեր անցեալ ընդ բազում աշխարհս, և զերախանայն [1] և զվտաւանայն համարս, և զքաղաքաց կայսոս և զկերպարանս, և զնաւահանգստաց, և զվաճառաց, բազում հաւաստեաւ և ճշգրիտ պատմէ։ Իսկ մեք՝ եթէ ուրչափ ինչ հեռի իցեմք յերկնից քաղաքէն, չգիտեմք. եթէ ջանայաք հատանել անցանել զերկայնութիւն, և զլայնութիւնն դիտեաք։ Վասնզի ոչ այնչափ ինչ հեռի է 'ի մենք քաղաքն, որչափ ընդ երկինս և ընդ երկիր իցէ 'ի միջի, այլ և առաւել՝ եթէ հեղգայցեմք։ Որպէս զի՝ թէ փութայցեմք, և 'ի միում իսկ վայրկենի երթեալ 'ի դրունս հասանիցեմք. քանզի ոչ եթէ վայրաց բացարձակութիւն, այլ կամայն կարգաւորութեամբք լինին մնրմնաւորացն [2] բացարձակութիւնք։

Իսկ դու աւադիկ զերս աշխարհիս հաւաստեաւ դիտես. և զնոր ինչ և զհին, և զերկանս համարել կարես՝ առ որոշք զինուորեցար յառաջին ժամա-

1 'Ի լուս. զերախանայն։ 2 'Ի լուս. մօրաւորացն։

նակն. և զյօրինիչս մարտից, և զսպարգևատուս, զօրաշլուխս, որ չեն ինչ քեզ օգուտ. և կաս հա-մարիս եթէ ի յայսմ անուան քաղաքի եղև առա-ջին իշխան, ի երկրորդ, ի երրորդ. կամ իւրաքան-չիւրաքը որչափ ժամանակս կալան. և զինչ գործեցեր՝ և որպիսի ինչ ուղղութիս ցուցեր, զայն և յերազի անգամ չտեսանես։ Լ.ՍԼ օրինաց որ ինչ 'ի քաղաքիս յայսմ լցեն, ոչ այլոց՝ յորժամ Ճառիցեն, ըստ և անսաստ ախորժես։

Լ.այց աղէ՛ ասա, զիարդ ակն ունիցիս հանդերձե-լոց բարութեանցն հասանել, զի և բանիցն անգամ չկամիս անսաստ։ Լ.ՍԼ թէպէտ և յառաջագոյն ոչ, գտնէ այժմ արասցուք. քանզի 'ի քաղաքն ոսկեղէն հանդերձեալ եմք մտանել՝ եթէ ՀՈՍ հրամայեսցէ. որ քան զնմա ոսկի առաւել պատուականագոյն է։ Մ'ինչ դիցուք հիմանցն և դրանց, որ 'ի շափիղայէ և 'ի մարգարտոյ ընդելուզեալ են։ Լ.անզի ունիմք ընդ մեզ զՀմուտն զառաջնորդ զԱ'ատթէոս. և զի ընդ նորա դրուանն այժմ մտանելոց եմք, բազում փուքթոյ պէտք են։ Լ.թէ տեսանիցէ զոք յուլացեալ և անյօժար յունկնդրութի՛ն, հանէ արտաքս 'ի քա-ղաքէն. քանզի արքունական և ամենապայծառ է քա-ղաքն. ոչ որպէս ասաս՝ 'ի վաՃառս և յարքունիս բաժանեալ է, այլ այն ամենևին իսկ արքունիք են։

Լ.ացցո՛ւք այսուհետև զդրունս մտաց մերոց. ընդ-արձակեցո՛ւք զլսելիս. և բազում դողութի՛ն՝ յոր-ժամ մտանելն լինիցիմք, երկիր պագցուք Թագաւո-րին՝ որ անդ է. քանզի անդէն վաղվաղակի առաջին իսկ յայտնութիւնն կարօղ է զարմացուցանել զտե-սօղն։ Վ.ակեալ կան մեզ այժմ դրունքն. իսկ յոր-ժամ բաց տեսանիցեմք զնոսա, այն իսկ է խնդրա-կանացն լուծումն, ապա տեսանիցեմք 'ի ներքս բա-զում լուսաւորութի՛ն։ Լ.անզի հոգւոյն աչքք առաջ-նորդեալ՝ զնմա ինչ խոստանայ ցուցանել քեզ մաք-սաւորս, թէ ուր նստի Թագաւորն. և որք են զօրքն՝ որ շուրջ զնովաւն կայցեն. ուր հրեշտակքն, ուր հրեշտակապետքն. և որպիսի ինչ տեղի նորոց քաղա-քացւոց անդ պատրաստեալ է. և որ Ճանապարհ է՝ որ անդր տանիցի. և որպիսի ինչ հանդստեան հա-

սին՝ որք յառաջագոյն անդր զինուորեցան, և որք յետ նոցա, և այլք որ զնոցա կնի. և որչափ իցեն դասակք զնդից այնոցիկ. և որչափ ինչ այլ և այլ աստիճանք պատուոցն և խորհրդականացն։

Այլ այսուհետև ամբոխիւ և խռովութիւք մնանիցեմք, այլ խորհրդական լռութիւք։ Օրինակ՝ ի թէ՝ ի թատերան՝ յորժամ բազում լռութիւն ունիցին, ապա ընթեռնուն հրովարտակք թագաւորաց, որչափ և առաւել յայսմ քաղաքի պարտ իցէ ամենեցուն ցածնալ, և յոտն կալ ոչ։ և լսելեաք. զի ոչ եթէ երկրաւորքն ուրուք, այլ հրեշտակացն՝ որս ընթեռնուլոց է գիրն։ Այս եթէ այսպէս զանձինս յարգարեսցուք, և ընդհանրք հոգւոյն բազում ճշմարտութեամբ առաջնորդեսցեն մեզ. և անդր իսկ յաթոռն արքունական հասանիցեմք. և եամի որ անդ բարութիւնն են՝ հասանեմք ընդհանրաբար և մարդասիրութեամբ՝ որս մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԳԱՆ ՏԱՆԳԻՐՔ

ՃԱՌ ԵՐԿՐՈՐԴ

«Դիրք լինելոյ Յոի Աստի որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահամու»։

ՅՈՒՅՑԻՆՔ արդեւք զպատուէրն՝ զոր տուաք ձեզ յառաջագոյն, և աղաչեցաք բազում լռութեամբ և խորհրդական հանդարտութիւն դնել ունկն՝ համ բանիցն՝ որ ասացին. քանզի մնանելոց իսկ եմք այսօր ընդ գեղեցիկ դրունսն. վասն որոյ և զպատուէրն յիշեցի։ Օի եթէ հրեայքն՝ որք 'ի լեառնն ծածկեալ հրով և միգով և մառախղով մերձենալոց էին, մանաւանդ եթէ ոչ մերձենալոց, այլ 'ի բացէ կալ լսել և տեսանել զայն, երիւք աւուրքք յառաջ հրամանն առնուին 'ի կին չմերձենալ, զհանդերձս լուանալ, յահի և 'ի դողութիւն կալ. և այն զի Մովսէս ևս ընդ նոսա էր. որչափ ևս առաւել մեք, որ զայսպիսի բանս լսելոց եմք, ոչ 'ի բացէ կալ 'ի լեռնէ ինչ՝ որ հրով և ծխով վառեալ իցէ, այլ անդր իսկ յերկին մտանել, պարտ է բազում պարկեշտութիւն ցուցանել. ոչ հանդերձս լուանալ, այլ զպատմուճանն ոգւոյն սրբել, և յամենայն աշխարհական ցանկութեց պարսպել։ Ոչ եթէ մեզ և ծուխ և մառախուղ տեսանիցէք, այլ զթագաւորն իսկ նատեալ յաթոռ անձառ փառաւքն, և զհրեշտակս և զհրեշտակապետս 'ի սպասաւորութիւն, և զգունդս սրբոցն ընդ այնչափ անչափ բիւրաւորս։ Ամանչ այնպիսի է քաղաքն այն, յորում եկեղեցին անդրանկաց է, և հողիք արդարոց կատարելոց, և ժողովք տօնից հրեշտակաց, և արիւն սրսկման՝ որով համ 'ի մի միաբանութիւն եկն. երկինքք ընկալան զառյերկրիսն, և երկիր զերկնից. և որ յառաջագոյն իսկ և 'ի բնէ ցանկալն էր և հրեշտակաց և սրբոց, եկն ի հաս խաղաղութիւն։ Ի նմա կանդնեցաւ նշան խաչին Աստի, երևելին և ամենապայծառ, աւար մերոյ բնութեան, զոր թափեաց թագաւորն մեր։

Լայմ ամի ստուգութեամբ խելամուտ հաստատութիւն յաւետարանացն լիցուք. եթէ զհետ միայն պատշաճ հանդարտութիւն ստէպ գայցես, կարացուք զքեզ շրջեցուցանել ընդ ամ տեղիսն, և ցուցանել եթէ ուր մահն պրկեալ, ուր մեղքն ի կախաղանի, ուր ի սաստիկ և ի նորաբաղձս պատերազմս և ի կռուոյ նուէրքը։ Նդր տեսանիցես և զընտաւորն ի կապանս, և զգերւոյն բազմութիւն զհետ երթեալ, և ի մեծ քաղաքն հասեալ. յորմէ ամենապիղծ դևն զամ զառաջին ժամանակսն փութացաւ վարատել հանել։ Նդ տեսանիցես զծակս գողոյն, և զայրս աւազակին՝ յայտնեալ կողոպտեալ, թափուր և աւերակ. քանզի և անդր չոգաւ եհաս թագաւորն։

Այլ մի ինչ ձանձրանար, սիրելի։ Վանզի և ոչ եթէ յայտնի պատերազմաց ոք զրոյց տայր, և ըզյաղթութեց, և զձակատսն մղելոյ, յագեալ երբեք, այլ չհամարեիր ինչ քան զայնպիսի պատմուն քաղցրագոյն. և եթէ այն քաղցր իցէ, ուրշափ առաւել այս։ Մի՛ թէ՝ որպիսի ինչ հասանէ լսել. զիարդ անդուստ յերկնից և յարքունի աթոռոյն յարեաւ էկն յերկիր, և անդր իսկ յանդունդս դժոխոց եհաս ամ, և ի պատերազմն եկաց ձակատեալ։ Այս զիարդ ընդդէմ ձակատեցաւ սատանայ. մանաւանդ եթէ ոչ ընդդէմ այ մերկոյ, այլ այ մարդկեղէն բնութեամբ ծածկելոյ։ Այս այն է զարմանալի, յորժամ տեսանիցես զմահն մահու լուծեալ, և զանէծսն անէծիւք ապականեալ. քանզի որովք հարստացաւն սատանայ, նովիմբք քակեր բռնութիւն։ Օ արթիցուք այսուհետև և մի ննջեսցուք. ահաւասիկ տեսանեմք բացեալ մեզ զդրունսն. այլ մոցուք ամ կարգաւորութիւն, ահիւ և դողութեամբ. հասեալ կացցուք իսկ և իսկ յառաջին դրունսն։ Օ ինչ իցեն առաջին դրունքն։

"Դիրք, ասէ, լինելոյ Յոսի ՎՀսի որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահամու"։ Օ ինչ խօսիս. զմիածնէ որդւոյն այ խոստացար ձառել, և զԴաւիթ յիշես. զայր մի՝ որ յետ բազում ազգաց եղև, և զնա նոա հայր և նահնի կոչես։ Այս դու հանդարտ լեր, և մի զամ միանգամայն խնդրեր ուսանել, այլ մեղմով և սա-

կաւ սակաւ. զի այժմ դեռ առաջի դրացն կաս մօտ յանդաստակն արտաքինս՝ զի այդչափ փութաս յանմուտսն մտանել. չև ևս զարտաքինս զնամ քաջ նշմարեցեր։ Արանդի ոչ եթէ զայնմ ծննդեանէ պատմեմ քեզ. նա և ոչ զմիւսմէն՝ որ յետոյն եղև. քանզի անձառ և առանց հասանելոյ է։ Այլ նախ քան զնա՝ զայս քեզ Լսայի մարգարէն ասաց, քարոզեալ յաւաղագոյն զնորոյն չարչարանսն, և զաղամապատիկ զաշխարհացն տեսութիւն. զարմացեալ հիացեալ թէ զինչ է և զինչ եղև, և յոր վայր ուստի էջ, լուսաւորագոյնս ինն բարբառի, եթէ «Զաղագատոյնն նորա ո՞ պատմեսցէ»։ Այլ այժմ ոչինչ զառաջին ծննդեանէն պատմիցեմք, այլ զայսմանէ որ ատ 'ի խոնարհս յերկրիս եղև բազում վկայիւք։ Այլ զայսմանէ՝ որչափ մեզ մարթիցէ ասել, ընկալեալ զշնորհս հոգւոյն՝ այնպէս պատմեսցուք. քանզի և զայս չէ ինչ հնար՝ թէ ամենեին բովանդակ կարիցեմք ճառել. զի ահագին է և անքննական։

Այլ արդ՝ մի փոքր ինչ համարիցիս լսել, յորժամ զայսմ ծննդեանէ լսիցես. այլ զարթուցեալ զմիտս ահիւ, թէ ո՞ւ եկն յերկիր. և այնպիսի ինչ զարմանալի և նորանշան էր, զի և զգունդս հրեշտակաց կացոյց վկայս նորոց իրացն կատարելոց, որ 'ի վերայ ոմ աշխարհաց գործէին. և զմարդարէսն յառաջագոյն զարմացոյց, յերկրին երևելով և ընդ մարդկան շրջելով։ Այա և նոր ինն և չքնաղ է լսել, եթէ ոչ անձառն և անհաս, որ ոչ ընդ մտաք փակի՝ և ոչ ընդ գիտութիւն սահմանի, հօրն հաւասար, ընդ կուսական արդանդն գայցէ, և լինել 'ի կնոջէ յանձն առնուցու, և ունել նախնիս զԱւրիթ և զԼ՚բրահամ. և որ ահագին և սոսկալի է, և զկանայսն զորոց այժմ յիշեցաք զանուանսն։ Օ այս լուեալ՝ յարուցեալ զարթնուցուս, և մի ինչ խոնարհագոյնս կարծել. այլ վասն այնորիկ համարել զայս զարմանալի, զի և որդի է անսկզբանն ոչ, և ստոյգ և ճշմարիտ որդի, առնոյր յանձն անուանել և որդի Ավրաթի, զի զբեզ արասցէ որդի ոչ. յանձն առնոյր հայր իւր անուանել զծառայն, զի քեզ ծառայիդ արասցէ հայր զնոսն։ Ցեսանես անդստին 'ի զլխոյն՝ որպիսի ինչ

երևին աւետիքն. զի եթէ 'ի քումնէն ինչ երկմտիցես, 'ի նորայոյն հաւատասջիր ուսանել. զի աւելագոյն 'ի միտս մարդկան այն իմն դժուարին է, թէ ՝ծծ մարդ լինիցի՝ քան թէ մարդ որդի ՝ՅՅ անուանիցի։

ԼՀ. արդ յորժամ լսիցես, թէ որդի ՝ՅՅ՝ որդի է Դաւթայ և Լբրահամու, մի ինչ այնուհետև յերկմտիցես, եթէ գու՞ որդի Լդամայ ո՞չ լինիցիս որդի ՝ՅՅ։ Օ՛ի ո՞չ եթէ 'ի զուր ինչ և վայրապար այնպէս զնոսն խոնարհեցոյց, եթէ ո՞չ հանդերձեալ էր մեզ բարձրացուցանել։ Օ՛նաւ ըստ մարմնոյ, զի դու ծնցիս ըստ հոգւոյն. ծնաւ 'ի կնոջէ, զի դու ծնցիս յաւազանէ՝ որ եղերդ որդի։ Ա՛ն այնորիկ կրկին ծնունդ եղև, և մեզ նման, և 'ի՝ վեր քան զմեզ. զի 'ի կնոջէ ծնանելն՝ այն մեզ անդ է. և ո՞չ յաբենէ և ո՞չ 'ի կամաց մարմնոյ, այլ 'ի հոգւոյն սրբոյ, այն նմա՝ որ 'ի վեր քան զմեզ ծնունդ էր. և 'ի մեզ հանդերձեալ էր կատարել, յառաջագոյն գուշակէր. զի որպէս ինքն առանց արեան և առանց կամաց մարմնոյ ծնաւ զերկրորդ ծնունդն, նոյնպէս և մեք առանց արեան և առանց մարմնոյ 'ի սուրբ հոգւոյն ծնանիցիմք զվերստին ծնունդն։ Լա և մկրտութիւնն և այլ ՝ՅՅ՝ այսպիսի ինչ՝ էր սորին օրինակ. զի ունէր ինչ և 'ի հնոյն, ունէր ինչ և 'ի նորոյս։ Լ՝ մարգարէին մկրտել՝ այն զհին գուշակէր. և հոգւոյն ինքնել՝ այն զնորս հաստատէր։ Լ՝ զորօրինակ զձեռս քակեալս 'ի միմեանց՝ անդրէն ոք առ իրեարս ամիս փիցէ, նոյնպէս և նա զհին և զնոր անջատեալս անդրէն 'ի միմեանս յարեալ, և զանծեղէն բնութիւնն 'ի մարդկեղէնն, և զիւրսն 'ի մերս։

Տեսանես զլուսաւորութիւն քաղաքին, զիարդ միայն 'ի սկզբանն պայծառութիւն լուսաւորեաց. որպէս և ցոյց զթագաւորն 'ի քո կերպարանս՝ իբրև 'ի Ճակատու. քանզի և անդ ո՞չ յիւրում պատուին երևի հանապազ թագաւորն, այլ հանէ զթագն և փոխէ զպատմուճանն՝ լինել յանծանօթս յիւրոցն զինուորաց կերպարանս, զի մի Ճանաչիցի և ձգիցէ յանձն զախոյեանսն։ Լակ ասա՞ ո՞չ այսպէս. այլ զի մի Ճանաչիցի՝ 'ի փախուստ դառնալ 'ի գերկընդխառն լինելոյ նորա թշնամւոյն, և զիւրսն խռովեցուցանիցէ։ Բ՛ան

զի փրկել, և ոչ վիրաւորել փութացաւ. որոյ և ա-
նունն կանխագոյն զիրկութիւն յայտ առնէր։ «Կո-
չեսցես, ասէ, զանուն նորա Յիսուս, զի նա փրկեսցէ զժո-
ղովուրդ իւր 'ի մեղաց»։ Քանզի Յիսուս անուն յեր-
բայեցւոց՝ հայերէն փրկիչ թարգմանի. զի 'ի փրկ-
կութենէ ժողովրդեանն յայտ լինիցի փրկիչն։ Տես
զիարդ ընտանի բարբառովն թռոյց զլսողսն, և որ-
ինչ 'ի վեր քան զկարծիսն էր՝ յայտնեաց մեզ։ Քան-
զի երկոցունց անուանցս այսոցիկ բազում ծանօթք
էին առ 'ի հրէիցն. և զի նորագործ էին իրք՝ որ լի-
նելոց էին, յայն սակս յառաջագոյն նկարեցան և
անուանցն օրինակք։ Քանզի անդստին 'ի քնէ ամե-
նևին բառնայցին կարծիքն՝ որ երևէր նոցա իրաց
ինչ օտարութիւն։ Օի և Յեսուս յետ Մովսիսի՝ տա-
նէր զժողովուրդ որդւոցն Իսրայելի յերկիրն պար-
գևաց։ Տեսեր զօրինակն. հայեաց և ընդ Ճշմար-
տութիւնն։ Նա յերկիրն պարգևաց, և սա յերկինս՝
և յերկնաւոր բարութիւնն։ Նա յետ վախճանելոյն
Մովսիսի, սա յետ դադարելոյ օրինացն։ Նա իբրև
զզօրավար, և սա իբրև զթագաւոր։ Բայլ զի մի
լուեալ զՅիսուս անուն՝ անուանակից անուամբն մոլ-
բիցիս, ասէ անդէն առ նմին. «Յիսի Յիսի որդւոյ
Դաւթի»։ Քանզի նա չէր 'ի Դաւթայ, այլ Յայլ-
մէ ազգէ։

Եւ ընդէր արդեաք գիրս լինելոյ Յիսի Կոչէ
զաւետարանն. անդ քանզի ոչ միայն զծնունդ՝ բայց
բնաւ իսկ զտեսչութիւն յայտ առնէ։ Քանզի ամ իսկ
տեսչութենն գլուխս և սկիզբն և արմատ ամ բարու-
թեանց մեզ այս է։ Օի զոր օրինակ գիրք լինելոյ
երկնի և երկրի կոչին, թէպէտ և ոչ վասն երկնից և
երկրի միայն խօսեցաւ, այլ և վասն ամ իրիք որ 'ի
մէջ նոցա էին. նոյնպէս և աստ զգլխաւորն ամ ուղ-
ղութեանց կոչեաց գիրս լինելոյ Յիսի Քրիստի։ Բայլ լի
էին զարմանալեօք և 'ի վեր քան զյոյս և զակնկա-
լութիւն մարդկան, այն է մարդն լինել այ. և յետ
մարդն լինելոյ, ասպա և ամ ինչ մի ըստ միոջէ զնո-
բին հետ գայ։

Իսկ թէ ընդէր ոչ նախ ասաց որդի Աբրահամու՝
և ապա որդի Դաւթայ։ Ոչ որպէս ունայն կարծէ-

ցին, եթէ 'ի նեբբուստ 'ի վեր կամեցաւ կարդել զազ-
գահամարն, որպէս և Ոլ ուկսն կարդեաց. այլ արդ
տեսանեմք՝ զի այլազգաձոյնս իմն վարէ զազգահա-
մարն։ ԼՀր վասն զԱւետեաց յիշեցէ։ Օր յամենե-
ցունց բերեալս կայր այրն, և ամենեցուն էր երևելի.
և ժամանակաւ և մեծաւորութիւն՝ ոչինչ այնպէս վա-
ղագոյն էր վախճանեալ իբրև զԲրահամն։ Օր
թէպէտ և երկոցունց տուան աւետիքն յայր, սա-
կայն նա իբրև զհին մոռացեալ էր, և սա իբրև զնոր
յայտնի էր ամենեցուն, նա աւանիկ ինքեանք իսկ
ասէին, թէ «Ի զաւակէ Ոտաւեթի և 'ի Ի՛ենեղեէմ
գեղջէ՝ ուստի Ոտաւեթն էր, գալոց է Ի՞ն»։ ԼՀ-
չիոչէին զնա որդի Բրահամու, այլ ամենեքեան որ-
դի Ոտաւեթի անուանէին։ ԼՀ վասն ժամանակին՝
որպէս և յառաջագոյն ասացի, և մանաւանդ վասն
թագաւորութեն զնա ունէին 'ի մտի։ ԼՀ զոր ոք
պատուէին յետ նորա 'ի թագաւորացն, 'ի նորա
անուն անուանէին՝ և նորա և ՀՀ։ ԼՀ ԼՀզեկիէլ, և
այլ ևս մարգարէքն ասէին՝ եթէ Ոտաւեթի գալոց է.
ոչ զմտանն՝ որ վախճանեցաւն ասէին, այլ զայնցանէ
որ նման նմա լինելոց էին առաքինութիւք։ ԼՀ ցՀզե-
կիա ասէր ՀՀ, եթէ «Ա երակացու եղէց քաղաքիս
այսմիկ՝ վասն իմ և վասն Ոտաւեթի ծառայի իմոյ»։
ԼՀ զՍողոմոնէ ասէր, եթէ վասն Ոտաւեթի ոչ պատա-
ռեաց կենդանւոյն զթագաւորութեն նորա ՀՀ։ Բա-
զում փառք էին առնն՝ և յայր և 'ի մարդկանէ,
զ՞ այնորիկ իսկ և իսկ որ երևելին և ճանաչելին էր՝
'ի նմանէ առնէ սկիզբն, և ապա ընթանայ առ հայրն
նահապետացն։ Ոանզի աւելորդ իմն հոմարէր
հրեից՝ ևս վերագոյն տանել զազգահամարն. զի նա-
քա էին զարմանալիք. մին իբրև զմարդարէ և ըզ-
թագաւոր, և մին իբրև զհայր նահապետաց։

ԼՀ ուստի՞, ասեն, իցէ յայտ, թէ 'ի Ոտաւեայ էր.
զի ահաւասիկ յառնէ ոչ ծնաւ, այլ միայն 'ի կնոջէ.
և կոյսն ոչ մտանէ յազգահամարն. մեք զիարդ զի-
տասցուք՝ եթէ ծնունդ իցէ Ոտաւեթի։ Ոանզի երկու
էն՝ զորս կարևոր պարտ է խնդրել, թէ ընդէր մայրն
չմտանէ յազգահամարն, և զՅովսէփ՝ որ չէր ինչ
հուպ 'ի ծնունդն՝ յիշէ. այնպէս իմն թուի՝ եթէ մին

առաւելագոյն իմն է, և միւսն հաւասարագոյն։ Բ.Որդ զոր կամիր՝ զոր յառաջագոյն պարտ իցէ ասել. զայն՝ եթէ 'ի Դաւթայ իցէ կոյսն, և եթէ ուստի խմանայցեմք ասել՝ եթէ 'ի Դաւթայ է կոյսն։ Լուր այ իսկ, որ ասէ ցԴաբրիէլ. «Լ'ըթ առ կոյս մի խա սեալ առն, որուն անուն է Յովսէփ, 'ի տանէ և յազգէ Դաւթի»։ Օ՛ինչ այլ ինչ կամիցիս քան զայս յայտնագոյն, յորժամ լուիցես թէ 'ի տանէ և յազգէ Դաւթի էր կոյսն։ Ուստի յայտ իսկ է թէ և Յովսէփ անտի էր։ Բ.անզի և օրէնքն էին՝ որ հրամայէին չիշխել առնուլ կին այլ ուստէք, բայց եթէ անդաստին 'ի նմին ցեղէ։ Լաւ նահապետն Յակովբ՝ յազգէ Յուդայ յառաջագոյն ասէր յառնել նմա, թէ «Մի պակասեսցէ իշխան Յուդայ և մի պետ յերանայ նորա, մինչև եկեսցէ այն՝ որուն կայն ինայ, և նա է յոյս հեթանոսաց»։

Բ.Որդ մարգարէութիւնն՝ զի յազգէ Յուդայ յառնելոց էր՝ յայտ առնէ, բայց եթէ 'ի ցեղէն Դաւթի իցէ՝ ոչինչ այնպէս։ Իսկ արդ որ յազգէն Յուդայ իցէ, ոչ ևս իցէ 'ի ցեղէն Դաւթի։ Բայց բազում ևս այլ ինչ դիպեցաւ լինել 'ի ցեղէն Յուդայ, և ոչ ևս յազգէն Դաւթի։ Բ.Յլ զի մի զայն ասիցես, բաբՃեալ 'ի քէն զքո կարծիսդ աւետարանչին՝ ասէր, եթէ 'ի տանէ և յազգէ Դաւթի էր։

Բ.պա թէ այլ ուստէք կամիցիս Ճշմարտագոյնս ըզնոյն ուսանել, սակայն և ոչ զայն չքաւորեսցուք ցուցանել։ Բ.անզի ոչ եթէ ոչ միայն յայլմէ ազգէ չէր օրէնն ամուսնանալ, այլ և ոչ յայլմէ ցեղէ, այլ 'ի մաւտաւոր ազգականութենէ։ Հրակէս զի՝ թէ 'ի կոյսն՝ պատշաՃիցեմք զայն՝ թէ «'Ի տանէ և յազգէ Դաւթի». այնպէս հաստատուն և անշարժ գտանի կալ 'ի բանին։ և եթէ Յովսէփ, սակայն և այն և սոյն հաստատի. զի 'ի տանէ և յազգէ Դաւթի էր, առպա ոչ այլ ուստէք առնոյր կին, եթէ ոչ ուստի ինքն իսկ էր։

Լ'թէ այդ այդպէս իցէ, ասէն, գտան անցեալ զօրինօքն։ Դա վասն այնորիկ յառաջագոյն վկայեաց զնմանէ եթէ «Բ.յր արդար էր Յովսէփ», զի

1 Յորինակին վ.ոյ.։

մի զայդ ասիցես. այլ ուսեալ զնորա քաջութիւն, և զայն տեսանիցես, եթէ ոչ երբէք անց զօրինօք։ Որ այնպէս մարդասէր և ազատ 'ի նախանձուէ էր, զի ոչ բռնադատեցաւ 'ի կարծեացն՝ ձեռնամուխ լինել և չարչարել զկոյսն, զիարդ վասն ցանկութեան անցաներ զօրինօք՝ որ 'ի վերս քան զօրէնս զգաստասէր գտանէր բարուքն. զի և արձակել զկոյսն, մանաւանդ գաղտ արձակել 'ի վերոյ քան զօրէնսն զգաստասէր և իմաստասէր բարուց էր։ Այլ որ այսպիսի ոք էր, զիարդ արդեաւք անարժան ինչ արտաքոյ օրինաց գործէր. մանաւանդ զի ոչ ուստեք ոչ մի ինչ 'ի պատճառանաց գրգռեր բռնադատեալ։ Այլ զի յաղթէ Դաւթի էր կոյսն՝ այսու ամենայնիւ յայտ է։

Իսկ թէ ընդէր ոչ արկ զկոյսն յաղգահամարն, այլ զՀովսեփ, հարկ է ասել։ Զի չէին օրէնք հրեից՝ համարել յաղգս զկանայս. արդ զի զօրէնս պահիցէ, և մի անդէն 'ի սկզբանն զկարգն որոշիցէ, և զի զկոյսն առնիցէ Ճանաչելի, վասն այնորիկ լռեաց զնախնեաց կուսին զանուանս, և արկ յաղգահամարն զՀովսեփ։ Զի թէ զկոյսն արկեալ էր յաղգահամարն, այնպէս թուէր՝ եթէ նորաձև իմն նորոգիցէ. և եթէ զՀովսեփայ ևս լռեալ էր, ոչ ինչ խմանայաք և ոչ զկուսին նախնեաց։ Արդ զի Ա՝աբեմայ տեղեակ լինիցիմք՝ եթէ ով էր և ուստի, և զի կարգ օրինայն անշարժ մնայցէ, զայրն՝ որում խօսեալն էր զկոյսն, արկանէ յաղգահամարն. և յայտ առնէ՝ թէ նա և կոյսն՝ երկոքեան էին 'ի տանէ Դաւթի. զի յորժամ այս լինիցի յայտ, և այլն լնդ սմին ցուցանի՝ զի և կոյսն անտի է։ Զի արդար էր՝ որպէս յառաջագոյնն ասացի, և ոչ առնոյր յանձն յայլմէ ազգէ ածել իւր կին, բայց եթէ միայն յազգէն Դաւթայ՝ յորմէ ինքն իսկ էր։

Այլ այլ ինչ է ասել խորհրդական իրս, վասն որոյ լռեցան և ոչ ասացան նախնիքն կուսին. զոր ոչ պարտապեցաք այժմ յայտնել, քանզի բազում ինչ ասացաւ. վասն որոյ և աստ իսկ հանգուցուք զբան խրատական։ Այլ այժմ ընկալցուք հաւաստեաւ որ յայտնեցան մեզ, թէ ընդէր նախ զԴաւիթ յիշեաց, և ապա զԱ՝բրահամ. և վասն էր զիրս լինելոյ Հոսի

Ի՞նչ կուէ զդիրսն. և որպէս ըստ հաստարակաց ծնրև դեան է ծնունդն, և չէ ըստ հաստարակաց. և ուստի ցուցաւ՝ եթէ Մարիամ 'ի Դաւթայ իցէ, կամ վասն էր լուեցան նախնիք կուսին, և եմուտ յազգաւ համարն Յովսէփ։

ՑՈՐԴՈՐԱԿ

ԱՅԴ զայս պահիցէք, և յօժարագոյն զանձինս և առ այլսն՝ որ ասելոց են՝ գործիցէք. իսկ եթէ 'ի բաց թքանիցէք և ընկենուցուք 'ի մտաց, ապա և մեք առ մեսացորդսն և դանդաղագոյնս լինիցիմք. քանզի և ոչ երկրի՝ որ զսերմն ապականիցէ, մնա. դեալ մշակն դարման տանիցի։ Այսն որոյ աղաչեմ զայս ստէպ ածել ընդ միտս, քանզի յայսպիսի հոգոց մեծամեծ և կեցուցիչ բարութիւնք ոգւոցն ծնանին. և ՈՒՅ իսկ հաՀոյ կարեմք լինել՝ յորժամ զայս ստէպ զմտաւ ածիցեմք. և 'ի թշնամանաց և 'ի բամբասանաց և 'ի խառնիմսութենէ սրբին բերանք, յորժամ ընդ հոգևոր բանս ընդելնուցումք. և դիւաց ահագինք երևեսցուք, եթէ վառիցեմք զլեզուս մեր այսպիսի բանիւք, և զՈՒՅ շնորհն 'ի մեզ կորզեսցուք, և քաջատես և սուրբ ակն լինիցիմք։ Այսանզի և աչս և բերան և լսելիս վասն այնորիկ ետ մեզ ՈՒԾ, զի բնաւին ՈՒՄ անդամքն նմա ծառայեսցեն. զի զնոբայսն խօսեսցուք, և զնորինսն արասցուք. զի հանապազորդ օրհնութիւս երգեսցուք նմա. զի գոհութիւս առաքեսցուք, և այնու ամենայնիւ պարզեսցուք ըզխիղճն 'ի մտաց։ Զոր օրինակ մարմնոյ 'ի սուրբ օդ վայելեալ՝ առողջագոյն լինի, նոյնպէս և ոգին զգաստագոյն, յորժամ այսպիսի զբօսանօք բուծանիցի։

Ընտեսանեն և զմարմնոյ իսկ զայս. յորժամ հանապազ ընդ ծուխ գայցեն, արտօսր բերեն. և յորժամ 'ի խաղաղ օդս և 'ի մարգս և յայգիս և 'ի դրախտս զբօսնուցուն, առողջագոյնք և քաջատեսք։ Այնպէս և մտացն ակն եթէ յեղտիւրս հոգևոր բանիցն ՀաՀակիցի, սուրբ՝ յստակ և քաջատես լինի. իսկ եթէ

ընդ ծուխ ինչ աշխարհի իրացս գայցէ, բժարեր արտօսրալից լինիցի, և զաղգի աղգի լալիւնս լայցէ, և ասա և անդ։ Բանզի ծխոյ իսկ նման են ամ իրք մարդկօրէնք. վասն որոյ և ոմն ուրեմն ասէր, «Պատկասեցին իբրև զծուխս աւուրքդ իմ»։ Կա զկարճն և զանկայ ժամանակն ողբայր. բայց ես ոչ միայն առանն ասեմ, այլ և՝ի խռովութեան ինչ իրս պատշաճ համարիմ առնուլ զասացեալսն։

Զի՞ք ինչ որ այնպէս տրտմեցուցանէ զձկն ոգւոցն և պղտորէ, որպէս աշխարհական հոգոց բաղմութիւնք, և չարեաց ցանկութեանցն յաճախութիւնք։ Բանզի այնպիսի փայտի է ծուխն. դոյնպէս[1] և հուր՝ յորժամ զգէջ և զդալար անտառաւոք վառիցի, ծուխ յոլովէ. նոյնպէս և ցանկութիւնն յայնժամ սաստիկ մրբկի, յորժամ՝ի գէջ և՝ի լոյծ ոգիսն բորբոքիցի. քանզի և նա յաճախ ծնանի զծուխն։ Վասն այսոքրիկ ստէպ պէտք են հոգևոր ցողոյն, և խաղաղ օդոց, զի զհուրն շիջուցանիցէ, և զծուխն պարզիցէ, և թռչուն զմիտն գործիցէ։ Բանզի չէ և չիք իսկ հնար՝ այնչափ չարեաւք ծանրանալ, և ընդ երկինս թռչել. այլ պարտ և պատշաճ է զմէջս պնդել, ժրանալ, հատանել անցանել զայն ճանապարհս. մանաւանդ եթէ և այնպէս չէ հնար՝ թէ ոչ զհոգւոյն թեւս ստանայցեմք։ Իսկ եթէ մնաց երազութեամբ և հոգևոր շնորհաց պէտք իցեն ելանելոյ յայնպիսի բարձունս, յորժամ ոչ այնպիսի ինչ իցէ, այլ ամ հակառակ, և ստատնայական ծանրուն, ոչ ասպաքէն՝ի խոնարհ սողիցիմք. զիարդ կարիցեմք՝ի վեր թռանել՝ ուր այնչափ ծանրութեամբ՝ի վայր ձգիցէ։ Եթէ ոք յարդար կշիռս առնոյր զմեր բանս կշռել, ՝ի բեւր տարանդաս աշխարհական բանից հաղիւ թէ գտանէր հարիւր դահեկան զհոգևոր բանիցն, մանաւանդ թէ ոչ տասն դանդ։

Եւ արդ չիցէ՞ ամօթ և յետին ծաղր՝ ծառայ ստանալ, և բազում պէտս կարևորս վճարել նոցա, և բերան ունել՝ և ոչ իբրև ծառայիւն վճարել նոցա պէտս ինչ. որ և հաստատեալ իսկ կայ՝ի մերում

1 Ի լուս. «դդէ»։

անդամն. այլ յետս ընդդէմ. զի յանօգուտ և յան-
պատշաճ իրս վարեմք։ Այլ երանի թէ յանօգուտ
միայն. նա աւանիկ զնորին հակառակն, և ի փոխսա-
կարս եւ՝ որ բնաւ չիցէ մեզ պիտոյ. և թէ զմեր պի-
տոյսն խօսէաք՝ ապա և այ սիրելի էին բանքն։ Այս
աւանիկ՝ զոր ինչ սատանայ դրդէ, զայն խօսիմք.
մերթ ծիծաղիմք, մերթ խեղկատակեմք, մերթ անիծ-
ծանեմք և թշնամանեմք, մերթ երդնումք և ստեմք,
մերթ հայհոյեմք, մերթ շաղփաղփեմք, և եւս չար
քան զպառաւունս՝ զառանցելոց բանս խօսիմք. որ
ինչ չէ մեզ հարկ՝ զայնպիսի ճառս ի մէջ բերեմք։
Զի՞ասա, ո՞ զի՞ ի ձէնջ՝ որ այժմ ասա իցէք, պա-
հանջիցի սաղմս մի ասել, և կարիցէ ասել, և կամ
սակաւ ինչ բանս յածեղէն գրոց։ Զիք զի՝ չիք ու-
րեք. և ոչ այն միայն չարիք են, այլ զի և առ հո-
գևորսն ծուլացեալք, և առ սատանայականսն իբրև
զհուր սաստկագոյնք։ Այլ եթէ կամիցի զի հարցա-
նել զձեզ զդիւական երգոց և զբողիչն խեցբեկ նուա-
գայն, զբազումն գտանեմ՝ զի զայնս հաւատեաւ զի-
տեն, և բազում յօժարութիւն պատմեն։

Այլ տես զինչ պատճառս ի մէջ բերեն՝ յոր-
ժամ մեղադիր զի լինիցի։ Զեմ, ասէ, վանական,
այլ կին ունիմ և որդիս և տան հոգամ։ Այլ այն
իսկ է որ զբնաւ եղծանէ, յորժամ նոցա միայն
պատշաճ համարիցիք զյածեղէն գրոց ընթերցուածս։
Զեզ աւելի պիտոյ է՝ քան նոցա, իբրև զբաղելոց,
և հանապազ վերս յանձինս առելոց, այնպիսեացն
պիտոյ է դեղն։ Որպէս զի՝ քան զչգիտելն, աւելորդ
զիրսն համարել՝ կարի չար է. սատանայական մնայ
են այնպիսի բանք։ Զլսիցէք Պաւղոսի որ ասէ, եթէ
«Այս ամ՝ ի խրատ գրեցաւ»։ Զանգի եթէ աւետա-
բան հաստանիցէ՝ ի ձեռս առնուլ, անլուայ ձեռօք չը-
կամիս հուպ լինել. և որ՝ ի ներքս աղտեղութիւնքն
մթերեալ կան, զայն չհամարիս ինչ կարևորս։ Ա՛ն
այսորիկ ամ՝ ինչ վեր՝ ի վայր հարեալ եղծաւ։ Եթէ
կամիս ուսանել զշահս գրոց, զքո իսկ անձնդ հարց.
զինչ յայնժամ լինիցիս յորժամ սաղմոսիցն լսիցես,
և զինչ յայնժամ յորժամ սատանայական երգոցն.
որպիսի՞ զի՞ յորժամ յեկեղեցւոջ կայցես, և որպի-

սէ ինչ յորժամ 'ի Թատերոն նստիցիս. և ապա տե-
սանիցես եթէ բազում կրձիմ 'ի միջի ընդ այս և
ընդ այն ոգի կայ, Թէպէտ մի իցեն։ Պան այսորիկ
ասէր Պաւղոս՝ Թէ «Ոչ պականեն զբարս քաղցուցս
խօսք չարք»։

Պան այնորիկ յաճախս պէտք էն մեզ հոգեւոր
Թուչնութեանցն, զի այնու իսկ գլեմք[1] քան զանա-
սունս. և այլովքն կարի իսկ նուազագոյն եմք քան
զնոսա։ Ոչն է կերակուր ոգւոյն, նոյն նորին զարդ.
ապա ուրեմն չլսելն սով է և ապականութիւն։ «Ցաց,
ասէ, նոցա ոչ սով հացի և ոչ ծարաւ ջրոյ, այլ սով
լսելոյ զբանն Տեառն»։ Օ ինչ չուառութիւն քան զայն
մեծ կայցէ, յորժամ զոր ինչ ասէ 'ի տանջանաց կարգի
սպառնայցէ, դու զայն քեզէն անձամբ 'ի գլուխ կու-
տիցես. զչար սովն և զապականիչ յոգիսդ կորզիցես,
և քան զամենեսեան ախտացեալ գործիցես։ Պանզի
'ի բանիցն՝ ապականել և կեալ պատշաճեցաւ։ Օ ի
և 'ի ցասումն անչափ գրգռէ, և 'ի հանդարտութիւն
ածէ. նոյն իսկ դարձեալ և յուսութեց զցանկութիւն
բորբոքէ, և 'ի զգաստութիւն ածէ որ համանման պար-
կեշտութիւնք իցէ։ Պ.թէ լոկ բանն այնպիսի զօրութիւն
ունի, դու զիարդ իցէ զի զգրոց բանն արհամար-
հիցես։ Պ.թէ խրատքն այնչափ ինչ վնասարեն, որչափ
եւ առաւել յորժամ հոգւոյն հանդերձ խրատքն։
Պան զհուր եւ առաւել զխստացեալ ոգիսն կակղե-
ցէ, և պատրաստագոյն զգուշանալոյ յամ չարեաց
կարձիցէ բանն, որ յածեղէն գրոց հնչիցէ։

Ոչ յսպէս զկորնթացիսն հպարտացեալս առաւել
Պաւղոս ցածուցանէր և հանդարտագոյնս գործէր.
զի որովք պատկառելն և անկանել պարտ էր, նա-
վիմբք մեծամտեալ մեծաբանէին. այլ յորժամ ըզ-
Թուղթն ընկալան, լուր զդարձէն նոցա զոր ինքնին
վարդապետն վկայէ զնոցանէն. «Օ ի ըստ այ տըրա-
մանելն ձեր, ասէ, որչափ ինչ փոյթ գործեաց 'ի ձեզ.
նա և զպատասխանատուութիւնն, նա և զցասումն, նա
և զվրէժխնդրութիւն»։

Ոչ այսպէս և մեք զծառայս, և զորդիս, և զկա-

1 'Ի ըլս. ՀԷԳ։

նայս, և զբարեկամն նուաՃեսցուք, և զԹշնամիս բաբեկամս արասցուք. զի այսպէս և աւագ որեարն՝ այ բարեկամք մուերիմք լինէին։ Եւ Դաւիթ յետ մեղայն իսկ, քանզի պատգամաւն վայելեաց, և 'ի բարեւոք ապաշխարութեան եկն. և առաքեալքն նոյնպէս եղեն՝ որպէս ինչ եղենն, և զամենայն տիեզերս գրաւեցին։

Եւ զի՞նչ օգուտ իցէ, ասեն, յորժամ լսիցէ ոք, և չընդունիցի զբանն։ Ողառնի սակաւ շահ 'ի լսելոյն. քանզի զանձն ըստգտանէ և զոփայ. և թերեւս երբեմն և յառնելն իսկ գայցէ։ Իսկ որ ո՛չ և զայն գիտայ՝ եթէ և մեղաւ, երբ մեկնիցի յանցանայն, երբ ըստգտանիցէ զանձն։ Այլ՝ այսուհետև արհամարհեսցուք զունկնդրութիւն ՅԾեղէն գրոց. քանզի սատանայական մտայ է այն, որ ո՛չ տայն հայել մեզ 'ի գանձն, զի մի և զմեծութիւնն շահեսցուք։ Այսն այնորիկ չտայ ինչ համարել զունկնդրութեան ՅԾեղէն օրինացն, զի մի և զգործն յունկընդրութենէն տեսանիցէ 'ի մեզ գործեալ։

Եւ արդ՝ խմացեալ զայսպիսի ինչ արուեստ նորա, յամ կողմանց ամրասցուք. զի այսպիսի զինուք վառեալք մեք չանկանիցիմք 'ի բուռն, և գնորա գլուխն հատանիցեմք. և այնպէս զառաքինութեան յաղթութիւս 'ի գլուխս առեալ, և հանդերձելոց բարութեանցն հասանիցեմք հնորհօքն և մարդասիրութեամբ Ցն մերոյ Յսի Քրիստի. ընդ որում հօր, միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ԵՐՐՈՐԴ

«Գիրք լինելոյ Յովի Վրթի որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահամու»։

ԱՀԱՒԱՍԻԿ երեք Ճառք, և զսկզբանս բանս ոչ և-ս կարացաք լուծանել։ Այնթէ վայրապար լինչ ա-սելի՝ եթէ խորք անդնդոց են միաք Ճառիցս։ Օն առեալ այսօր զմնացեալսն արկանիցեմք 'ի հարց և 'ի փորձ, եթէ վասն էր Յովսեփ՝ որ ոչինչ ունէր ամե-նեին հաղորդուի 'ի ծննդեանն, մտանէր յազգահա-մարն։ Այս որպէս զմի պատՃառսն ասացաք, հարկ է զի և զերկրորդն ասիցեմք՝ զխորհրդականն և զան-Ճառ. և եթէ զինչ լինչ իցէ այն։ Այ՛ չափէր յայտ առնել հրեիցն անդէն 'ի ժամանակի ծննդեանն, եթէ 'ի կուսէ ծնեալ իցէ Քրիստոս. և դուք մի՞ ինչ խռովես-ջիք ընդ զարմանս ասացելոցն։ Քանզի ոչ եթէ զիմ լինչ բանս ասեմ, այլ զհարցն առաջնոց զընտիր և զպիտանի արանց։ Զի թէպէտ և բազում լինչ ծաղ-կեաց 'ի սկզբանն, զի որդի մարդոյ կոչեաց զանձն, և չյայտնեաց ստոյգ ՅՈՒՄ ուրեք՝ եթէ հաւասար իցէ հօր, ընդ այն զի զարմանաս՝ զի զայն ծաղիկեաց առ այժմ վասն մեծ լինչ և աբանելի մատակարարելոց։

Այս զինչ իցէ ասեն մեծն և աբանելի։ Պարել կուսին 'ի պատժոց, և ազատանալ 'ի չարաչար կար-ծեաց. զի եթէ յառաջնումն յայտնեալ էր հրեիցս, թերևս առ չաւատալ բանին՝ քարկոծ իսկ առնէին, և հնութիւն բարբանաց՝ անհնարին դատաստանաց դա-տէին։ Զի թէ բազում իրք 'ի հնումն յայտ յան-դիման գործէին, և նոքա երբեք ոչ ակնածէին, և 'ի հանել զգեաս՝ զնա դիւահար կոչէին, և 'ի բժշկել 'ի շաբաթու՝ ՅՈՒՄ հակառակ ՅՈՒ կարծէին։ Թէպէտ և բազում անգամ յառաջագոյն իսկ ինքեանք լուծա-նէին զշաբաթսն. զիարդ ոչ և սնոլարտս խօսէին՝ յորժամ լսէին եթէ կոյս ծնաւ. մանաւանդ զի և զանցեալ և ժամանակսն ձեռնտու իւրեանց լսելշա-

նաց ունէին, զի ոչ երբէք այնպիսի ինչ գործեցաւ։ Օ՛ի եթէ յետ առնելոյ զնշանն՝ տակաւին զնա որդի Յովսեփայ կոչէին, որպէս յառաջագոյն քան զնշանն հաստատելն՝ եթէ 'ի կուսէ ծնաւ։ Վասն այնորիկ անկանէր յազգահամարն Յովսեփ, և Խօսեալ էր նմա կոյսն կնութեամբ։ Եւ և Յովսէփ՝ զի թէպէտ և արդար էր և զարմանալի այր, բազում ինչ պիտոյ եղև նմա առ 'ի հաձել և ընդունել զծնունդն. և հրեշտակին յայտնել, և երազոյն երևեալ, և մարգարէիցն վկայութիւք, զիարդ հրեայքն եղծեալք և մտակորոյսք՝ որ այնպիսի թշնամութիւն ունէին ընդ նմա, կարէին ազատանալ 'ի կարծեաց։ Զանազի յոյժ խառնվելոց էին զնոսա իրքն նորք և չքնաղք, որք և ոչ յականջալուր երբէք եկեալ էին 'ի նախնեացն։ Իսկ որ միանգամ ոք հաստատեալ էր՝ եթէ արդարև որդի է այ, ապա և ոչ յայլոցն և՛ իրաց երկմտեր։ Զայց որ ոք մոլորեցուցիչ՝ և ՝ամ հակառակ այ կարծէր զնմանէն, զիարդ ոչ այնու և՛ առաւելագոյն զայթակղէր։

Վասն այնորիկ և ոչ առաքեալքն վաղվաղակի 'ի սկզբանն ՝ամառէին զայն. այլ վասն յարութեան բազում ինչ պատմէին, որոյ և յառաջին ժամանակն զոյր օրինակ, թէպէտ և ոչ այնպիսի ինչ։ Իսկ եթէ 'ի կուսէ ծնաւ, ոչ յաՀախէին ՝ամառել. և նաև ոչ մայրն իսկ իշխեր 'ի վեր հանել։ Զու արդ տես, ցնա իսկ զինչ ասէր, եթէ «Զհաւասիկ ես և հայր քո սրտ՝ իբեր ան շրջեալք և խնդրեալք զքեզ»։ Օ՛ի եթէ այս այսպէս էր կարծեալ՝ եթէ Յովսեփայ՝ որդի չիցէ, ապա և ոչ Զաւթայ որդի համարեին. և եթէ Զաւթայ որդի չհամարեին, անտի այնուհետև ծնանեին բազում չարիք։ Վասն այնորիկ և հրեշտակքն այլ ինչ ոչ ասացին, բայց եթէ 'ի Մարեմայ է և 'ի Յովսեփայ։ Զայց յորժամ հովուացն տային աւետիս զծնունդսն, ոչ և յաւելին։

Իսկ եթէ ընդէր յիշեաց զԶ.բրահամ, և ասէ թէ «Զ.բրահամ ծնաւ զԻսահակ, և Իսահակ զՅակովբ»։ և զեղբօրն ինչ ոչ ՝ամառեաց. և յորժամ առ Յակոբն եկն՝ եթէ «Յակովբ ծնաւ զՅուդա», յիշէ՝ թէ «Զու զեղբարս նորա». ոմանք ասեն՝ թէ

վան անառակութեան Խաւայ, և այլոցն առաջնոց։ Բայլ ես ոչ այսպէս ասեմ. զի եթէ այս այսպէս էր, զիարդ իջեալ խոնարհագոյն՝ զկանայսն որ նման նմին էին՝ յիշէր։ Օ՛ի որ հակառակն թուին, անտի առաւել երևին փառքն նորա. ոչ առ՝ի մեծամեծսն ունելոյ նախնիս, այլ փոքունս և կրտսերս. զի մեծի ումեք աւելի այն փառք են՝ յորժամ խոնարհել կարիցէ։ Այլ թէ ընդէր չյիշեաց զեղբարսն Յակոբայ. քանզի ոչինչ հաղորդութեի ունէին ընդ իսրայէլեան ազգին. զի ոմանք տաճիկք և իսմայէլացիք էին, և այլքն արաբացիք և եդոմայեցիք, զատեալք ցեղընտիրք՝ի նախնեացն։ Ո՞ման այնորիկ զնոսա ինչ ոչ յիշէ. այլ փութացեալ՝ի Ռաքի նախնին հանէ զազգահամարն, և յազգն յուդայեան։ «Յակովբ, ասէ, ծնաւ զՅուդա և զեղբարս նորա»։ Ռանզի Յուդայ ազգին սերէր անուն յուդայական, այսինքն հրէական։

«Յուդա, ասէ, ծնաւ զՓարէս և զ՝Օ՛արա՝ի Թամար»։ Օ՛ինչ գործեաս, այր դու. զպատմութեաց ինչ իմն յուշ առնես մեզ, յորում անօրէն խառնակութիւնք են։ Այլ զինչ, ասէ, ինչս իցէ այս. զի եթէ զմարդոյ ուրուք զլեկոյ զազգէ Ճառէի, յիրաւի ասէիր թէ լռել պարտ է և ոչ Ճառել. իսկ եթէ զմարմնացելոյն ՈՒՅ, ոչ միայն լռել չէ պարտ, այլ և ընդ ազգս և ընդ աշխարհս հանել զամենատես տրնտեսութիւնն մեծագոր զօրութիւն։ Ռանզի վասն այնորիկ իսկ եկն, ոչ զի փախիցէ՝ի մերոց նախատանացն, այլ զի և՝ի մէնջ ևս բարձցէ։ Օ՛որօրինակ ոչ զի մեռաւն, այլ զի խաչեցաւն՝ այն աւելի են զարմանք, թէպէտ և նախատանաց էին իրքն։ այլ որչափ նախատանաց էին, նոյնչափ առաւել յայտնի լինի մարդասիրութիւնն։ Ի՞ստ սմին օրինակի և զծննդենէն է ասել. ոչ զի մարմինն առ և եղև մարդ, ընդ այն միայն է զարմանալ, այլ զի և զայնպիսին ազգականս արժանի արար իւր ունել։ Ոչ ուրեք համարի ամօթ զմեր չարին. և զայն անդէն՝ի սկզբան Ծննդեանն քարոզեաց։ Այլ զի չհամարի ամօթ զմերս, խրատէ այնու զմեզ՝ մի երբեք համարել մեզ ամօթ զնախնեաց չարիս, այլ զանձին և եթէ ցուցանել զառաքի-

նութեան։ Օ՛ի այնպիսին թէպէտ և յայլազգեաց իցէ կամ 'ի պառնկացելոց նախնեաց, ոչ կարէն վնասել նմա մեղք իւրոյ ազգին։ Օ՛ի թէ զպառնիկն դարձեալ ոչ կարէն ամաչեցուցանել իւր առաջին խառնակեցիկ կենաքն, որչափ և առաւել որ 'ի շանց և 'ի պառնկաց իցէ ծնեալ՝ և զանձն 'ի լաւութիս և 'ի սրբութիս տայցէ, ոչինչ առնիցէն զնա յամօթ իւրոյ նախնեացն չարիք։

Այլ այսու ոչ զմեզ միայն խրատէ, այլ և զՀրեէլեան զՀպարտութենն զիջուցանէ, որք զՀոգւոյն դարմանոց անփոյթ առնէին, և յԱբրահամ վեր 'ի վայր պանծացեալ պարծէին, համարեալ եթէ 'ի նախնեացն առաքինութենէ պատասխանատուութի ինչ ունիցին։ Ցուցանէ անդէն 'ի սկզբանն՝ թէ չէ ինչ օգուտ յայլոց առաքինութիս պանծանալ, եթէ ոչ յիւր ինչ ուղղութիս։

Այս հանդերձ այսուիկ և այլ ինն յարդարէ, ցուցանել թէ ամենեքեան ընդ մեղօք էին և նոքա և նախնիքն. և մանաւանդ մի նահապետն՝ յորոյ անունն իսկ անուանէին՝ ոչ սակաւ ինչ երևի մեղուցեալ։ Օ՛որմէ (Ամաքար յայտ յանդիմանն ամբաստան լինէր վասն պառնկութենն։ Այլ Պաւիթ 'ի պառնիկ կնոջէն ծնանէր զՍողոմոն. զի թէ 'ի մեծամեծացն օրէնքն ոչ կատարեցան, որչափ և առաւել 'ի կրտսերոցն։

Իսկ եթէ ոչ կատարեցան օրէնքն, յայտ է թէ ամենեքեան մեղան. և հարկ լինէր այսուհետև Աշխի գալստեանն։ Ասն այնորիկ իսկ և զերկոտասան նահապետսն յիշէ, զի այսու զՀպարտանալն 'ի նախնեացն ազգականունն ցածուսցէ։ Անազի բազումք 'ի նոցանէ և 'ի հարձից էին ծնեալք։ Այլ սակայն և յազգականութիւն ծնողացն ոչինչ խոտեաց ըզծնունդսն. քանզի նոյնպէս ամենեքեան էին նահապետք և տանուտէրք։ Օ՛ի այս եկեղեցւոյ զլխաւորութեն, և գահերիցութեն մերոյ ազնուականութենս անգուստ 'ի բնէ առնոյր օրինակ. զի թէպէտ ծառայ իցես կամ ազատ, ոչինչ առաւելադոյն կամ նուազագոյն գտանիցես. քանզի մի ինչ է պիտոյ, բաղք սրբասէրք և ոգիք անմեղք։

1 'Ի լուս. ՀՈՍԳՈՒԻՆ։

Այլ ընդ այսց բանից և այլ ինն է խմանալ, վասն որոյ և զպատմուելն ինն յիշեաց. զի ոչ վայրապար ինչ իբք էին զՓարէս յիշել՝ ուստի զԲՃն արկանելոց էր յաղագս համարն. յիշէ և զՕ արա, յորմէ ոչինչ վարէ զկարգն յառաջ։ Այլ ընդ՚էր արդեաք յիշէ զերկուսեան. այլ յորժամ՝ մերձ էր՝ի ծնանել Թամար, էհան նախ Օ արա զձեռն մի արտաքս. իսկ մանկաբարձն իբրև զայն տեսանէր, վասն ճանաչելոց զառաջինն՝ կապէր կարմիր՝ի ձեռինն։ Այլ իբրև կապեաց զկարմիրն, անդրէն ամփոփեաց մանուկն ընդ՚ձեռնն. և ապա գայր ելանէր նախ Փարէս, և ապա Օ արա։ Մանկաբարձն իբրև զայն տեսանէր՝ ասէր, զի՞արդ իցէ զի վասն քո խրամատեցար ցանդ։ Ցետանեա զխորհրդոցն առակս, զի ոչինչ վայրապար գրեցար որ ինչ գրեցար։ Այս և ոչ զՃառս ինչ այնպիսի հարկ էր ուսանել, թէ զինչ խօսեցար մանկաբարձն. և ոչ զպատմութիւնն ճանաչել, եթէ ձեռն նախ արտաքս ելանիցէ առաջնոյն, և ապա երկրորդն յառաջիցէ։

Այլ թէ զինչ ինչ առակ կայր անդ, նախ յանուանէ մանկանն պարտիւք ուսանել, զի Փարէս խրամատութիւն թարգմանի. և ապա յիրացն պատահելոց. զի և չէն իսկ կարգ բնութեանն, եթէ ձեռնն նախ երևիցի՝ և ապա անդրէն ամփոփիցի։ Որ ինչ խօսուն շարժմանն էր, այն բնութեամբ կարգին լինէր. նախ ձեռինն երևել, և ապա միւսոյն կանխել ելանել՝ թերևս բնական ինչ իցէ. բայց անդրէն ամփոփել և միւսումն տալ տեղի արտաքս ելանելոյ՝ ոչ ևս օրինաց ծնանելեացն էր, այլ շնորհքն այ նկարեալին ինն տեսչութեամբ՝ ի մանկուանն. օրինակէր որ նաքօք ինչ լինելոց էր այս յապայ։ Օ՚ի որք ձշմարտագոյնս քննեն զերմն՝ ասեն, առակ օրինակի էին երկու մանկունքն երկուց ժողովրդոցն։ Այլ զի ուսանիցիս եթէ երկրորդ ժողովրդեանն առաքինութիւն սակաւ ինչ փայլեաց յառաջագոյն և ծածկեցաւ. որպէս մանուկն զձեռնն միայն երևեցոյց՝ և անդրէն ամփոփեաց, և ոչ ամենևին զանձն ցուցանէր. և եթ տեղի եղբօրն ելանել կատարեալ՝ ամ՚ անդամաքն, և յետ ելանելոյ եղբօրն՝ ապա և ինքն ելանէր կատա-

բեալ։ Նոյնպէս և յերկոսեան ժողովուրդսն նշանա-
կէր. զի եկեղեցական առաքինութիւնն յաբրահա-
մեան ժամանակին սակաւ ինչ երևեալ՝ և անդրէն
ամփոփէր. և հրէական ժողովուրդն և օրինաւոր
առաքինութիւնն նախ երևէր, և ապա յետ այնր նորս
երևեցաւ հանդերձ իւրովք օրինօքն։ Զ ասն որոյ և
մանկաբարձն ասէր, եթէ «Օ՛ի իցէ զի վասն քո
խրամատեցաւ ցանգ»։ Զ՚ասնզի զաղատութիւն առա-
քինութիւնն՝ անկեալ՝ ի մէջ օրէնքն խրամատեցին։
Զ՚ու զի ցանգ զօրէնսն սովոր են կոչել գիրք, ուստուք
՝ի մարգարէէն՝ որ ասէ, եթէ «Զ՚ոնդէր քակեցեր ըզ-
ցանգ նորա, և կթեն զնա ամենեքեան ոյք անցանեն
ընդ Ճանապարհ». և այլուր՝ եթէ «Զ՚անգով փակե-
ցի զնա». և Պաւղոս ասէ, եթէ «Օ՛ միջնորդ ցան-
գոյն քակեաց»։ Զ՚ակ այլք՝ եթէ «Զ՚ասն քո խրա-
մատեցաւ ցանգ», ասեն՝ զնոր Ժողովրդենէս է ասա-
ցեալ. զի յորժամ եկն նորս, քակեաց զՀին օրէնսն։
Տեսանես, զի ոչ վայրապար յիշեաց զՃառա Յու-
դայի և զՊարեսի և զ՚Օ արայի և զԹամարայ։ Զ՚ա
և ոչ զՀաւատոյ, և ոչ զկնոջն Ռուբիայ. զմիոյն զայլ-
ազգոյ՝ և զմիւսոյն զպոռնկելոյ։ Օ՛ի ուսանիցիս,
թէ որ եկն, զամենայն չարիս մեր եկն քակել, իբրև
զբժիշկ, և ոչ իբրև զդատաւոր. զի որպէս նորա
առին զպոռնիկ կանայսն, նոյնպէս և ՅԾ զպոռնկա-
ցեալ ընութիւն խօսեցաւ իւր. որպէս և մարգարէքն
՝ի վաղուց յառաջագոյն կարապետէին՝ զերման կա-
տարել՝ ի ժողովուրդն։ Զ՚այլ նա չեղև հաւատարիմ
ամուսնութեանն. իսկ եկեղեցի՝ միանգամայն ազա-
տեալ՝ ի հայրենի չարեաց, եկաց ինաց հաստատուն
՝ի սեր փեսային։
Տեսեր զայս. տես և զմիւսն որ՝ ի Հռութն նկարեր
հանգոյն մերոցս՝ որ՝ ի մեզ կատարեցան։ Օ՛ի որպէս
նա այլազգի եր և յանպատպարան աղքատութեանն,
սակայն իբրև ետես զնա Բոոս՝ ոչ զազգութիւնն
արհամարհեաց, և ոչ յայլազգութենէն զարշեցաւ։
Օ՛որօրինակ և Զ՚Ն յառնուլ հարսն զեկեղե-
ցի, ոչ զայլազգութիւնն աղարտեաց և յանպատեհ
աղտեղութենէն եհան, և արար հաղորդ մեծամեծ
բարութեանցն։ Զ՚այլ զորօրինակ նորա թէ չէր նախ

թողեալ զհայր, և անարգեալ զտուն և զազգ և ըզ-
ուսումն և զաշխարհ, չլիներ արժանի օրինաւոր մեր-
ձաւորութեան. նոյնպէս և եկեղեցի՝ նախ մերժեաց
ընկէց զվնասակար բարն, և ապա եղև ցանկալի փե-
սային։ Որպէս և մարգարէն լիներ թելադիր յա-
ռաջադոյն, եթէ «Լուա զժողովուրդ քո և զտուն
հօր քո, և ցանկասցի թագաւոր գեղոյ քում»։ Օ այս
արար և Հռութ, վասն այնորիկ և մայր իսկ եղև թա-
գաւորաց, զորօրինակ և եկեղեցի, քանզի և 'ի նմա
նէ է Դաւիթ։

Բ. յսու ամենայնիւ պատկառեցուցանէ զնոսա, և
հաւանեցուցանէ չմերժամտել. զազգահամարն կար-
գեաց եղ, և զկանայսս զայսոսիկ եբեր 'ի մէջ։ Դա և
զթագաւորն իսկ մեծ սա 'ի մէջ այլոցն ծնաւ. և չա-
մաչէ ինչ Դաւիթ ընդ այն։ Դանզի չէ և չէ իսկ ոչ
յառաքինութենէ և ոչ 'ի չարաց ծնողաց՝ լինել լաւ
կամ յոռի, կամ առաքինի կամ անպիտան։ Բ. յլ
պարտ է և զարմանալի ինչ ասել. զի այն առաւել
պայծառագոյն է, որ ելցէ 'ի պիտանեաց նախնեաց
և լինիցի առաքինի։

ՑՈՐԴՈՐԱԿ

Ա. ոք այսուհետև այնու ինչ մեծամտիցէ. այլ
զմտաւ ածեալ զմոնն նախնիս, զհպարտութենէ զամե-
նայն 'ի բաց թօթափիցէ, և յուղղութիւնսն մեծա-
մտեսցէ. մանաւանդ թէ և ոչ այնմ. զի այսպէս և
փարիսեցին եղև յետին քան զմաքսաւորն։ Դ. թէ
մեծ կամիցիս ցուցանել զուղղութիւնսն, մի մեծա-
մտեր, և ապա ցուցանես զնա մեծ. մի ինչ համարիւ-
ցիս գործել, և զամ ինչ արարեր։ Օ. թէ յորժամ մեղաւորք իցեմք, եթէ այնպէս համարիցիմք
զանձինս՝ որպէս և եմքն իսկ, արդարանամք, զորօրի-
նակ մաքսաւորն. ոչափ ևս առաւել յորժամ արդարք իցեմք՝ և զանձինս առ մեղաւորս ունիցիմք։
Օ. թէ 'ի մեղաւորաց արդարս առնէ խոնարհելն,
ոչափ ևս յարդարոց կատարեալ արդարս։ Դ. ոչ
պէտ և չէր այն խոնարհութիւն, այլ յանձին ունել

զվնասակարութիւն. և եթէ յանձն առնուլ զվնասն այնչափ ինչ կարօղ լինի վնաբել մեղաւորաց, ապա և խոնարհութեամբ արդարոցն միտ դիր թէ օրչափ ինչ կարօղ է վնաբել։

Մի այսուհետև ասպականիցես զվաստակսն, և մի ընդունայն զբրտունսն առնիցես, և մի՛ զուր զբաղումս ասպարիսացն ընթացից զաշխատութիւն։ Օ՛ի առաւել քան զքեզ զիտէ որ զաշխատութիւնս քո։ Թող և բաժակ մի ցուրտ ջուր տայցես, և զայն չառնէ անտես. և եթէ մի դանգ ընկենուցուս, և եթէ յոգւոց միայն հանիցես, բազում խնամով ընդունի և յիշէ, և մեծամեծ վարձս հատուցանէ ընդ այնր։ Վասն էր Ճնդիւ քննիցես զուղղութիւնս ինչ քո, և ցանգ՛ի մէջ բերիցես. չգիտես, եթէ դու զանձն քո գովիցես, ՈՒՇ զքեզ այնուհետև ոչ գովէ. որպէս զի եթէ և աղաղտիցես՝ զանձն, ոչ դադարեսցէ առ ամենեսեան քարոզել. քանզի վկայի իսկ զվաստակսն քո նուազեցուցանել։ Օ՛ի իսկ ասիցեմ նուազեցուցանել. զամենայն ինչ առնէ և հնարի, զի զքեզ և փոքրումբքն պսակեսցէ. շուրջ գայ և պատճառս խնդրէ, թէ իւ կարասցէ ապրեցուցանել զքեզ՛ի զեհենէ։ Վասն այսորիկ եթէ և՝ի մեստասներորդ ժամէն վաստակիցես, զողջոյն իսկ զաւուրն վարձս տայ քեզ. և եթէ ընաւ իսկ չունիցիս պատճառս փրկութեան, ասէ, վասն իմ առնեմ, զի մի անուն իմ հայհոյեսցի. եթէ յոգւոց միայն հանիցես և արտասուիցես, յաւիտենական առնէ զայն ՈՒՄ վաղվաղակի պատճառս փրկութեան։

Մի այսուհետև հպարտասցուք, այլ կոչեսցուք զանձինս անպիտանս, զի լիցուք պիտանիք։ Լ՚թէ համարիցիս զանձնդ առաքինի, եղեր անպիտան՝ թէ պէտ և առաքինի իցես։ Լ՚թէ անպիտան անուանիցիս, եղեր առաքինի՝ թէպէտ և անպիտան իցես։ Վասն այսորիկ կարեւոր հարկ է զուղղութեանն մոռացօնս գործել։ Լ՚ւ զիարդ մարթիցի, ասէն, զոր գիտեմքն՝ չգիտել։ Օ՛ինչ խօսիս, հանապազ յանցաւոր ՈՒՆն գտանիս, փափկանաս, գրգիս, ծիծաղիս

1 Յորինակին «-ոյ-ինչ»։

զուարճանաս, և բնաւ գիտես իսկ ոչ թէ մեղաւ. քանզի մոռացօնս առնես ամենայնիւ։ Իսկ զուղղութեանցն յիշատակ չկարիցես հանել 'ի մտաց. ուր և երկիւղն իսկ առաւել սաստկագոյն է. մեք աւասիկ հակառակ իմն նմին գործեմք. զօրհանապազ բազում յանցանս յանցանեմք, և բնաւ զմտաւ իսկ չածեմք։ Եթէ սակաւ ինչ պախարեիկ աղքատին տայցեմք, ստէպ վեր 'ի վայր զայն յեղյեղումք որ յետին անմտութիւն է, և մեծ ինաս ժողովելոցն։

Շ տեմարան ամուր ուղղութեանցն, մոռացումն ուղղութեցն է։ Օ որ օրինակ դշանդերձս կամ զոսկի 'ի հրապարակս եթէ յանդիման ամենեցուն դնեմք, բազում նենգիւս ամմ ստանամք. եթէ 'ի տան ամփոփեալ թաքուցանիցեմք, յամրի պահեմք զգուշութեամբ։ Եղծանիցեն և զուղղութեան եթէ ցանդ զմտաւ ածիցեմք, բարկացուցանեմք զտէրն, և զթշնամին զրգռեմք և 'ի գողութիւն կոչեմք։ Եպա եթէ ոչ որ գիտիցէ, բայց միայն նա՝ որում պարտն իցէ գիտել, յամրի կայ՝ զգուշութիւն պահի։

Ա'ի այսուհետև յաձախ ածիցեմք զվայրեօք, զի մի որ հանիցէ զնոսա 'ի մէջ. որպէս և ընդ փարիսեցին անց. որ լեզուաւն զվայրեօք ածէր, և եհատմուտ յափշտակել ստանայի. թէպէտ և գոհութիւն յիշէր զնոսա և զամ ոյ համարէր, այլ չեղև այն նմա բաւական։ Քանզի չէ գոհուն նախատել զընկերս, և պարծելն առաջի բազմաց, գեր 'ի վերոյն երթալ յանցաւորաց։ Եթէ գոհանաս զոյ, շատացիր նովաւ միայն. մի հաներ մարդկան 'ի վեր, և մի զընկերն դատապարտիցես. քանզի չէ այն գոհութիւն։ Եթէ կամիս գոհութիւն բանս ուսանել, լուր յերից մանկանցն. "Ա'ղեղաք, ասէին, անօրինեցաք և յանցեաք. արդար ես որ յամի՝ զոր արարեր մեզ, զի ստոյգ դատաստանաւ ածեր զամ 'ի վերայ մեր"։ Օ իւր մեղն խոստովան լինել՝ այն գոհանալ զոյ է, և սերտ խոստովանուն՝ որ ցուցանէ զանձն բազում ինաստուց պատժապարտ, և չպահանջիցի զարժան դատաստանն. այնպիսին է որ առաւել գոհանայցէ։

Օ գուշացուք այսուհետև առ 'ի զուղղութիւնս ինչ մեր պատմելոյ, զի այն և մարդկան և ոյ առնէ

զմեզ գարշելիս։ Այսն այսորիկ որչափ ինչ մեծամեծ ուղղութիւն գործիցեմք, նոյնչափ փոքունս զանձինս համարեսցուք։ Այլ այնպէս շահիմք մեծամեծ փառս՝ և 'ի մարդկանէ և յայ. մնաւանդ թէ ոչ միայն փառս յայ, այլ և վարձս և հատուցումն մեծ։ Այլ 'ի այսուհետև պահանջեր վարձս, զի առնուցուս վարձս։ Շ նորհօք համարեալ կեալ, զի նա զանձն խոստացաւ քեզ պարտապան, ոչ միայն ընդ ուղղութեցն, այլ և ընդ այնպիսի բարեկամութ. զի յորժամ ուղղութիւն ինչ առնիցեմք, ուղղութեցն միայն պարտապան ունիմք. և յորժամ չհամարիցիմք ինչ ուղղութիւն գործել, և ընդ այնր ևս հատուցումն իբրև ընդ ուղղութեցն լինիցի։ Այսպա ուրեմն համեմատ ուղղութեցն է այս. զի թէ սա չիցէ, և ոչ նոքա մեծամեծք երևին։ Այլ մեք ծառայից յայն սակս շնորհ ունիմք, յորժամ զնմա սպասն խնամով առնիցեն, և չվարկանիցին մեծամեծս։ Այրպէս զի թէ կամիցիս մեծամեծս առնել զուղղութիւն քո, մի համարիցիս զնոսա մեծամեծս։

Այսպէս ասէր և հաբիւրապետն, "Չեմ արժանի՝ թէ ընդ յարկաւ իմով մտցես". վասն այնորիկ եղև արժանի, և քան զնմա հրեայսն առաւել զարմանալի։ Այոյսպէս և Պաւղոս ասէր, եթէ "Չեմ բաւական կոչել առաքեալ". վասն այնորիկ առաջին քան զամենեսեան եղև։ Այոյսպէս և Յովհաննէս, թէ "Չեմ բաւական լուծանել զկօշկայն նորա". վասն այնորիկ էր բարեկամ փեսային. և զձեռնն՝ զոր ասէր եթէ չեմ արժանի լուծանել ըղկոշկայ մի կօշկայ նորա, եդ Այ'ա 'ի վերայ գլխոյ իւրոյ։ Այ Պետրոս ասէր "Այ՝ բաց կաց յինէն, զի այր մեղաւոր եմ ես". վասն այնորիկ եղև հիմն եկեղեցւոյ։

Չնիք ինչ այսպէս սիրելի՝ այ՝ որպէս յորժամ ընդ յետինս ոք համարիցի զանձն. այն իսկ է սկիզբն՝ամ ստուգութեանէ։ Օ 'ի խոնարհն և բեկեալ սրտիւ՝ ոչ հպարտանայ, ոչ բարկանայ, ոչ ընդ ընկերին նախանձի, և ոչ այլ ինչ բիծ յանձն ընդունի։ Այա և զձեռն բեկեալ թէպէտ և բազում անգամ ջանայցեմք՝ չկարեմք 'ի վեր ամբառնալ. իսկ արդ եթէ

զոգիսն նոյնպէս բեկանիցեմք, թէպէտ և բեւր ան-
դամ ջանայցեն հպարտացեալ ախտքն վերացուցա-
նել, և ոչ սակաւիկ ինչ կարիցեն ամբառնալ. զի
եթէ վասն աշխարհիս ոք իրաց 'ի սուգ իցէ՝ զամ-
զայլ ախտսն մերժէ հանէ 'ի մտաց, որչափ և առա-
ւել որ վասն մեղաց զնոյն առնէ՝ վայելիցէ 'ի զգաս-
տութեան։

Լոյս ով, ասեն, այնպէս կարիցէ բեկանել զսիրտ
իւր։ Լոյսն 'Լաւթայ՝ որ այսուիկ առաւել պայծա-
ռացաւ, և տես զբեկումն սրտին։ Հետ այնչափ ուղ-
ղութիւնն գործելոյ՝ յաշխարհէ և 'ի տանէ հալա-
ծեալ, և 'ի կենաց ևս մերձ եր անկանել. անդէն ևս
'ի վշտի և 'ի կարեւոր ժամանակին՝ զզօրական մի վատ-
թար և ապաժամն տեսաներ նմա ոսն հարեալ և
թշնամանս արարեալ. ոչ միայն չբամբասաց ընդ
բամբասանացն, այլ և ոմն 'ի զօրագլխացն կամեցաւ
սպանանել զնա, և արգել. «Ով տուր, ասէ, ՝որ
հրամայեաց դմա զայդ»։ Լոյս դարձեալ՝ յաղաչել
քահանայիցն զի տապանակ կտակարանացն ընդ նմա
շրջիցի, չառնոյր յանձն. այլ զինչ ասէր. «Դարձ՛
զտապանակդ ՝այ 'ի քաղաքն, և կացցէ 'ի տեղւոջ
իւրում. եթէ գտից շնորհս առաջի ՝ոն, և նստել հա-
ստանիցէ 'ի տաճարին, և ասիցեն զիս ՝ոծ 'ի վերջ-
տաց, որ առաջի կան, տեսից զդա և զվայելչութիւն
դրա. ապա եթէ ասիցէ ցիս, եթէ չկամիմ զքեզ,
ահաւասիկ կամ, արասցէ զինչ և հաճոյ իցէ առա-
ջի իւր»։

Եւ որ առ Շաւուղիս մի անգամ և երկիցս և
երիցս և բազում անգամ գործեցաւ, զոր առաւել
լութիւն զդաստութեան չցուցանիցէ։ Օ հին օրինօքն
էլ և էլ արար, և յառաջելոցն հրամանն մեծ եկն
մերձեցաւ։ Վասն այնորիկ զինչ և գայր 'ի ՝ոնէն՝ ըն-
դունէր զամ, և չլինէր դատաւոր գործոցն այլ նմին
միայն փութայր, ամ ուրեք անսալ և զհետ օրինացն
նորա երթալ։ Լոյս յետ այնչափ ուղղութեաց՝ տեսա-
ներ զապիրատն բռնացեալ, զհայրանարգուն, զեղ-
բայրասպան, զթշնամանիչն, զմոլեկան, զի դարձաւ
ընդդէմ, և առ զթագաւորութիւն։ Վակայն և այն-
պէս չդայթագղեր. այլ թէ ՝այ, ասէ, այն կամք իցէն,

ինձ հալածական և մոլորեալ և փախստական լինել և նմա զպատիւն ունել, յանձն առնում, և ընդհ
ևս ունիմ վասն բազում վիշտն 'ի վերայ ածելոյ։
Այլ ոչ որպէս բազումք յանամենից և 'ի լքեաց, որք
և ոչ սակաւ ինչ 'ի նորա ուղղութենէն՝ զոր գործեաց՝
գործիցեն, և եթէ տեսանիցեն զայլս 'ի բարիս և
զանձինս սակաւ ինչ 'ի տրտմութենէ, բազում հայհոյ-
ութիւնք կորուսանեն զոգիս։ Բայց Պաւիղոս ոչ այն-
պիսի ոք. այլ բազում հեզութիւն ցուցանէր. վասն
որոյ և ասէր իսկ ՝ահ, եթէ «Պտի զՊաւիղոս զորդի
Յեսսեայ՝ այր ըստ սրտի իմում»։

Ամենեքեան ոգի ստասցուք և մեք. և զոր ինչ չար-
չարանս և չարչարիցիմք, տարցուք մտադիւրութիւնք.
և նախ քան յարքայութենէ, ասատէն իսկ վայելեսցուք
'ի պտուղս խոնարհութենէն։ «Ուսարուք, ասէ, յինէն,
զի հեզ եմ և խոնարհ սրտիւ, և գտջիք հանգիստ
անձանց ձերոց»։ Օ՜ի վայելիցեմք 'ի հանգստեանն
և ասա և անդ, բազում փութով զմայրն ՝ամ բա-
րութեց տնկեսցուք յոգիս մեր. զի այնպէս ընդ ծով
կենաց աշխարհիս առանց ալեաց կարասցուք անցա-
նել, և 'ի խաղաղ նաւահանգիստն հասանել, ընդ-
հօք և մարդասիրութիւնք ՝ան մերոյ Յիսի Վրդի. ընդ ո-
րում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխա-
նութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ՁՈՐՐՈՐԴ

«Մինչև ազգք Աբրահամ մինչև ցԴաւիթ ազգք չորեքտասան, և ի Դաւիթ մինչև ցգերութիւն բաբելացւոց ազգք չորեքտասան, և ի գերութենէն բաբելացւոց մինչև ցՔրիստոս ազգք չորեքտասան»։

Յերիս մասունս բաժանեալ զազգսն ամ, յայտ առնէ՝ թէ ոչ առաքինութեանցն ինչ փոփոխելով եղեն ընտիրքն, այլ յորժամ յընկերհաչտութեան էին, և ընդ Թագաւորօք, ընդ նուազ իշխանօք, սակայն ի նոյն չարիս կային։ Քանզի ոչ ի զօրավարացն՝ և ոչ ի քահանայից՝ և ոչ ի Թագաւորացն ունել զնոսա, կալան աւելի ինչ լաւութիւն յառաքինութենէն համարի։

Իսկ եթէ ընդդէմ ի միջին մասինն եթող երիս Թագաւորս, և յեմնումն եդ երկոտասան ազգս, և ասէ՝ թէ չորեքտասան են. զառաջինն ձեզ Թողում խրնդրել. քանզի ոչ եթէ զամ ինչ հարկ է մեզ մեկնել, զի մի ի դատարկութիւն հարեալ հատանիցիք. բայց զերկրորդն մեք ասացուք։ Զնձ այսպէս Թուի եթէ անդ և զժամանակ դերութեան ի կարգի ազգի դնէ. և զՔրիստոս յամ կողմանց ածեալ յարէ ի մեզ։ Զու յիշեցուցանէ ազնուազոյն վասն դերութեան. զի Թէպէտ և անդր իջին, սակայն չերևեցան ինչ զգաստացեալք. զի ամ ուստեք յայտ լիցի, եթէ կարևոր պիտոյ էր գալուստն Քրիստի։

Իսկ ընդդէմ, ասեն, Աբրահամ չառնէ ազգահամար Քրիստի, այլ զի կարճառօտիւք համառօտս բարբառի զամ։ Զնձ այսպէս Թուի, եթէ Մատթէոս յառաջքան զայլոցն սկսանէ՝ արար սկիզբն իրացն. վասն որոյ և զազգահամարն հաւաստեաւ դնէ, և ի կարևոր պէտսն հասանէ՝ դադարէ։ Իսկ Մարկոս յետնորա համառօտ ճանապարհն էին. որ յետ այնր ինչ ասացան և յայտնի եղեն՝ ճառէ։ Զու զիարդ Ղուկաս ազգահամար կարգէ և զայն բազում մնուամբք. զոր յառաջագոյն հորդեալ էր ճանապարհ Մատ-

թէի, բազում ինն և այլ յաճախագոյն քանս ուսուցանել կամի մեզ։ ԼՀ։ իւրաքանչիւր ոք նոյնպէս և իւրեանց վարդապետացն նմանեալք. ոմն Պաւղոսի, որ առաւել քան զվտակս գետոց բղխէր. և ոմն Պետրոսի, որ խոնարհագոյն քանից ունէր փոյթ յանձին։

ԼՀ։ զիարդ արդեւք սկսեալ Մատթէի զաւետարանն՝ ոչ ասէր ըստ օրինակի մարդարէիցն, եթէ տեսիլ զոր տեսի, կամ քանն ոն որ եղև առ իս։ Լ.յլ քանզի առ դիւրահաւանս ոմանս և յոյժ ունկնդիրս իւրոյ վարդապետութեան գրէր, և նշանքն ևս և արուեստքն աղաղակէին, և ընդունելիք քանիցն հաւատացեալ էին։ Իսկ առ մարգարէիւքն ոչ նշանք ինչ այնպիսիք երևեալք՝ յայտ առնէին զնոցանէն. և սուտ մարգարէիցն յաճախութիւք, որոց առաւել անսային հրէիցն ազգքն՝ քան ճշմարիտ մարգարէիցն. վասն որոյ հարկ էր այնպիսի պայման առնել սկզբան մարգարէութեան։ ԼՀ։ թէպէտ և եղէն երբէք նշանք, վասն այլազգացն և եկացն՝ որ էին 'ի միջի նոցա՝ լինէին յօրինակ ամենազօր ՀՅ զօրութեան. կամ յոյժամ 'ի գերել զնոսա թշնամեացն՝ համարէին զօրագոյն զիւրեանց դիսն քան զՅԾ՝ որպէս ԱՀ։ դիպատոս. յոր սակս ելանէր իսկ ընդ նոսա բազում խառնիճաղանճ. յետոյ և 'ի Բաբելոնի, և 'ի հնոցին, և երազոյն յայտնութեան նշանք լինէին, և յոյժամ միայն առանձինն էին յանապատին։ Որպէս և առ մեւք բազում անգամ եղէն նշանք. յոյժամ սկիզբն էր 'ի մոլորութենէն ելանելոյ՝ բազում նշանք երևէին. և 'ի հաստատել ՅԾպաշտութեանն ամենոյն ընդ բնաւ՝ դադարեցին։

Լմենպէտ և եղէն սակաւ ինչ և անօսր նշանք յետ այնր առ նոսա, արեգական կասել յընթացից, և դարձեալ անդրէն յետս դառնալոյ։ Սակայն այնպիսի ինչ և առ մեւք եղև. 'ի ժամանակի՝ յոյժամ ամնարշտութիւքն Յուլիանոսի անօրէն թագաւորին կարծէր ամենեցուն յաղթել, բազում նորագործ նշանք դիպէին. և 'ի հրեայսն՝ որք ԱՀրուսաղէմ առին հրամանն զտաճարն շինել, հուր բորբոքեալ ելանէր 'ի հիմանցն և արգելոյր։ ԼՀ։ յոյժամ զուրբ

զսպան՝ իւրեանց խառնակուիչն՝ կապարձակիրն, և իւր քեռին և անուանակից՝ յանդգնեալ թշնա-մանէին, մին որդնալից հարեալ սատակէր, և միւսն ընդ մէջ հեղձոյր։ Եւ և մեծանձնական աղբերացն 'ի Դաւիսոս անուանոցաց՝ ուր զզոհն կատարէին, լիներ ջուրցն նուազութիւն. և յայնր վերայ՝ վասն անօրէն թագաւորին սով սուր ընդ աշխարհս տարա-ծանէր և ընդ քաղաքս՝ 'ի նշանակ նոցացոյց սքան-չելեաց։

Դանդղ սովոր իսկ է ՝ծծ՝ յորժամ չարիք ինչ սկիզբն առնուցուն առնել, նայեցեալ յիւրսն լկեալ 'ի բռնութիւ չարարարացն, ցուցանել նորագործ սքան-չելիս. որպէս և 'ի պարսս՝ յիւր մեերիմն 'ի հրեայս։

Եւ զի մի ոք կարծիցէ՝ եթէ վայրապար ինչ և ընդ վայր զերսն Ճառիցէ, վասն այնորիկ յերիս մա-սունս զԲՒՆի նախնիսն բաժանէ։ Եւ այս յայտ է յասացելոց բանիցն։ Եւ միտ դիր՝ թէ ուստի սկսա-նի, և ուր կատարէ։ ՅԱբրահամէ 'ի Դաւիթ. և 'ի Դաւիթայ 'ի գերուին բաբելացւոց, և անտի 'ի ԲՒՆ։ Դ՚սկսանէն՝ զերկոսեան եղ մի ըստ միոջէ զԴաւիթ և զԱբրահամ. և 'ի բռնադպակէն նոյնպէս զերկո-սին յիշեաց. քանզի առ երկոսեան՝ որպէս կանխա-դոյնն ասացի, եղէն աւետիք։

Եւ զնորդ իցէ զի զգերութիւն բաբելացւոց յիշէ, և զպանդխտութենէն որ յեգիպտոս՝ ինչ ոչ Ճառէ։ Դ՚ՍՒ քանզի յայնմանէ ինչ չերկնչէին, և յայսմանէ դեռ ևս կասկածագոյնք էին. և այն հին էր, և այս նոր և այն ինչ լեալ. և անդ ոչ վասն մեղայ ելջին, և այսր [2] վասն անօրէնութեանէ էին գերեալ։

Դ՚սպա եթէ ոք և զանուանացն ևս մեկնութիւն կա-միցի ՃՀգրտել, բազում ինչ տեղեկութիւնս գտանէ առ 'ի պէտս պատշաճից նորոց կտակարանաց՝ ան-դրստին իսկ Դ՚Աբրահամու անուանէ, և Յակոբայ, և 'ի Սողոմոնէ, և 'ի Օ օրաբաբելէ։ Դանդղ ոչ եթէ վայրապար ինչ կուչեցան այսպիսի անուանք նոցա։ Դ՚ՍՒ զի մի երկայնեալով զՃառս՝ առնիցեմք տաղտ-կալի բազմայ, զայս թողեալ՝ 'ի կարևորսն ընթաս-ցուք։

1 'Ի Լուս. Խոյսառուիոնքն։ 2 Յօրինակին Ն այս։

Բ.ոդ ասացեալ մի ըստ միոջէ զանուանս նախ-
նեացն, և ապա ածեալ կատարեալ մինչև զՅովսէփ, ոչ եկաց մնաց առ նմա, այլ ևս յառաջագոյն
ձգէ, եթէ «Յովսէփ այրն Աբրահամայ». զի յայտ
արասցէ՝ եթէ վասն կուսին և զՅովսէփ արկ յազ-
գահամարն։ Բայց զի մի յորժամ լուեալ այր Ա-
բրեմայ, համարիցիս եթէ հասարակախառն ինչ բնու-
թեամբ օրինաց իցէ ծնեալ մանուկն, տես զիարդ
յարդարէ յաջորդաւն։ Լուար, ասէ, այր, լուար և
մայր, լուար և անուն կոչեցեալ մանկանն. պարտիս
այսուհետև և զայսման ծննդեանն 'ի միտ առնուլ։
«Յոի Աչոի ծնունդն էր այսպէս»։ Որպիսի ինչ
ծնունդ ասիցես։ Թէպէտ և անուանց նախնեացն
արարեր հմուտ, այլ կամիմ զի և զպատճառս ծնընդ-
եանն իմացուցանիցես։ Ցեսնէր, զիարդ զարթոյց
զլսօղն որպէս զի նոր ինչ ասելոց իցէ, և զկերպա-
բանսն խոստանայ ասել։ Դ.ս միտ դիր գեղեցիկ
կարգի ասացելոցն. քանզի ոչ իսկ և իսկ 'ի ծնունդն
եկն, այլ նախ յիշեցուցանէ՝ թէ քաներորդ է Յ.ա-
բրահամ, և քաներորդ 'ի Դաւթայ, և 'ի գերութենէն
բաբելացւոց. և փոյթ լսողին տայ քննել հաւատաւ
զժամանակն, յայտ արարեալ՝ թէ սա է օծեալն, որ
մարգարէիւքն քարոզեցաւ։ Յորժամ համարիցիս
զազգն, և լինիցիս տեղեակ 'ի ժամանակացն, ձրշ-
մարտեալ կայցես 'ի վերայ, եթէ նա է օծեալն, դիւ-
րաւ առանց դժուարելոյ ընդունիցիս զսքանչելիս
ծննդեանն։

Զանգի մեծ ինն և չքնաղ էր Հառելոց, եթէ 'ի
կուսէ ծնաւ. և մինչև զժամանակն համարեալ էր՝
իբրև անբերևոյթ ինն էին բանքն. այր Աբրեմայ ասէ
զՅովսէփ, և կարՀառօտ ինն զպատմութիւնս ծնընդ-
եանն հատանէ։ Համարի այնուհետև զամսն, յուշ
առնելով լսողին՝ եթէ սա է որ 'ի նահապետէն Յա-
կովբայ ասացաւ, եթէ յետ սպառելոյ իշխանացն
հրեից գալոց է։ Որ և մարգարէն Դանիել յետ
բաղում եւթներորդացն գուշակէր թէ գալոց է. զոր
թէպէտ և կամիցի ոք՝ զթիւ ամաց եւթներորդացն,
որ 'ի հրեշտակէն ասացաւ Դանիելի, 'ի շինածոյն
քաղաքին համարել իջանել մինչև 'ի ծնունդն Աչոի,

գտանէ զայս այնմ կշիռ։ Եւ արդ զիարդ արդեւք ծնաւ, ապաքէն ասել պարտիս։

«Լսեսցէ՞ էր, ասէ, զմայր նորա զՄարիամ Յովսեփայ»։ Եւ ոչ ասէ թէ զկոյսն, այլ լոկ զմայրն, զի դեւբրնկալ ընծայեցուցանիցէ զբանն. վասն որոյ և յառաջագոյն տայ կարծիս լսողին ըստ սովորութեանէ իւրաց. և ապա զարմացուցանէ չքնաղ իրօքն՝ որ զնովիմբ ածէ, եթէ «Մինչև եկեալ էին առ միմեանս, գտաւ յղի 'ի հոգւոյն սրբոյ». և ոչ ասաց, եթէ մինչև ածեալ էր զկոյսն 'ի տուն փեսային. քանզի անդէն իսկ 'ի տան էր. զի սովորութիւն էին առաջնոցն՝ անդէն յիւրաքանչիւր տան պահել զկուսանն ընկալուչս. զոր և այժմ իսկ բազումք առնեն։ Մանզի և Ղ ոմոտայ փեսայքն ընդ նմա անդէն էին 'ի տանն. նոյնպէս և նա ընդ Յոսեփու էր։

Եւ ընդէր յառաջքան զկուսանն ոչ եղև յղի։ Զայլ որպէս յառաջագոյնն ասացի՝ թէ դեռ ևս ծաւծուկ էին իրքն. զի յայմ չար կարծեաց լինիցի ազատ կոյսն։ Մանզի յորժամ որում նախանձել պարտ էր, երևեսցի ամենեցուն ոչ միայն չհանել 'ի տանէ և չխայտառակել, այլ ախորժելով ևս ընդունել և դարմանել յետ յղանալոյն, դիւրաւ յայտ լինիցի, եթէ ոչ զի հաւատեաւ յայտ 'ի վերայ հասեալ էր, եթէ 'ի հոգւոյն աղդեցութէ էին իրքն, ոչ արդեւք ունէր զնա 'ի տան, և ոչ այնչափ սպաս ունէր։ Եւ կարի իսկ հաւատարմութիւն զգաստն յղի՝ էդ. և զչքնաղից և արտաքոյ քան զյոյս և զանկարելութիւն իրաց դիպելոց սովոր է ասել։

Զարդ մի ևս յառաջ մատուցեալ խնդրեր աւելի ինչ քան զասացեալսն, եթէ զիարդ հոգին կատարեաց այնպիսի ինչ իրս 'ի կուսէն։ Օ՛ի եթէ որ ըստ բնութեանէ ինչ գործիցին իրք՝ ոչ ոք կարէ զդէպս իրաց գործելոց մեկնել, որչափ ևս առաւել զզարմանա գործս հոգւոյն չիցէ որ բաւական ճառել։ Զայլ զի մի աշխատ առնիցես զաւետարանիչն ստէպ ստէպ հարցուածովք, ազատ և անհոգ արարեալ զանձն՝ ոչ այլ ինչ աւելի գիտեմ, ասէ, բայց միայն՝ զի 'ի հոգւոյն կատարեցան իրքն։

Եւ արդ ամենեսցեն՝ ոյք զվերին ծնունդն 'ի խոյզ

արկեալ քննիցեն։ Օ ի եթէ զայս՝ որ բիւրուց բեւրք վկայեն, և յառաջ և այնչափ ժամանակաց քարոզեալ, և յայտնեալ, և շշոչափեալ, ոչ ոք կարէ մեկնել, զոր յաձախութեան մոլորութեան թողուցուն՝ որք զանձառն իբրև զձառեալ ինչ յուզեալ քննիցեն. զի ոչ Դաբրիել և ոչ Մատթէոս աւելի ինչ կարացին ասել, բայց միայն՝ եթէ 'ի հոգւոյն է։ Իսկ եթէ զիարդ կամ որով օրինակաւ, ոչ ոք 'ի նոցանէ կարաց մեկնել, քանզի անհնարին է։

Այլ արդ մի կարծիցես՝ եթէ կարիցես զամ ինչ հաւաստեաւ ուսանել. մանաւանդ յորժամ լսիցես՝ եթէ 'ի հոգւոյն է։ Վասնզի բազում և այլ ևս իրաց եմք անտեղեկագոյնք, թէ զիարդ անբաւն 'ի բովանդակելի արգանդին. կամ որ զամ ընդ իւրև փակեալ ունի՝ յղանայցէ 'ի կնոջէ. կամ զիարդ ծնանիցի կոյս՝ և կոյս մնայցէ։ Օ՜ամ զմարմինն յարգանդէն առ արդեւք, եթէ մանն ինչ 'ի նմանէ նկաւեաց և ձեղոյց։

Օ ի 'ի մարմնոյ կուսին եւ յայտնեցաւ, զայն եւ ցոյց ասելովն, թէ «Որ 'ի նմանէն յղացեալն է, 'ի հոգւոյն սրբոյ է»։ Այլ առաքեալ ասէ, «Այն և եղև 'ի կնոջէ», առ 'ի ըմբերանել զայնոսիկ՝ որք ասեն, եթէ իբրև ընդ ցնցուղ ինչ էանց Վրա։ Օ ի եթէ այնպէս էր, զի՞նչ պէտք արգանդին էին, կամ զի՞նչ հաղորդութեան ուներ ընդ մեզ, եթէ այլաւստեք էր մարմնին, և ոչ 'ի մերմէ զանգուածոյս. զիարդ էր յարմատոյն Յեսսեայ, կամ որպէս դաւազան, կամ զիարդ որդի մարդոյ. և որպէս մայր Մարիամ, և կամ զիարդ 'ի զաւակէ Դաւթի, կամ զիարդ զկերպարանս ծառայի էառ, և որպէս բանն մարմնի եղև. և ընդէր հաւմայեցուցն զրէ, թէ «Յորոց Վրա ըստ մարմնոյ. որ է 'ի վերայ ամենայնի աՀ՝ օրհնեալ յաւիտեանս»։

Ընդ 'ի մէնջ և 'ի մերմէ զանգուածոյ և 'ի կուսական արգանդէն էառ մարմնին և ծնաւ. յայսմ ամենայնէ՝ և յայլոց բազմոց յայտ է։ Այլ եթէ որպիսի ինչ իցէ պայման ծննդեանն, չէ ինչ յայտ։ Ընդ մի 'ի խնդիր արկեալ քննիցես, այլ ընկալ զյայտնեալն, և մի քններ զբռեալն։

«Յովսէփ, ասէ, այր նորա քանզի արդար էր, ոչ կամեցաւ առակել զՄարիամ, այլ խորհեցաւ գաղտ արձակել»։ Բայց եթէ 'ի հոգւոյն է, և առանց աւ մուսնուէ. նա և այլուստ յարդարէ զքանն, զի մի որ ասիցէ՝ թէ ուստի յայտ է այդ. ով, ասէ, ետես, կամ ով լուաւ այսպիսի ինչ երբէք պատահել։ Այլ զի մի կարծիցես պաշտօն առնելով աշակերտին ստեղծանել այսպիսի ինչ զվարդապետէն, էած 'ի մէջ զՅովսէփ, թէ որովք կրեաց զվիշտն՝ նպաստ եղև 'ի հաւատս բանիցն ասացելոց։ Զրեթէ այսպէս ասէ, թէ որովք նայն պատմէ. զի եթէ ինձ ասէ յաւատաս, և կարծիս ինչ զիմոյ վկայութենէս կարծես, գտնէ առնն հաւատա։ «Յովսէփ, ասէ, քանզի այր արդար էր»։ Այս ասէ արդար՝ զընաւին առաքինին կոչէ։ Զանզի է արդարութիւն չագահել, կամ չյափշտակել. և է արդարութիւն՝ որ զամ իսկ քաջութիւն ցուցանէ յանձին, զոր և գիրք բազում անգամ արդարուն կոչեն. ըստ այնմ որ զՅովբայն ասէր, «Այր արդար և ճշմարիտ»։ և զՕ. աբարիայ և զԼդիսաբեթէ, թէ «Երկոքին արդարք էին»։ ասա՝ թէ «Յովսէփ քանզի այր արդար էր, այսինքն հեզ և քաղցր, կամեցաւ գաղտ արձակել զնա»։ Զան այսորիկ ասէ յառաջ քան զծնունդն զիրացն՝ որ դիպելոցն էին, զի հաւատասցէ յետ գիտութեան՝ գործոցն որ գործիցին։ Օ 'ի թէպէտ և ոչ առականաց միայն պարտ էր, այլ և տանջանաց՝ ըստ օրինացն, սակայն Յովսէփ ոչ միայն զմնծն, այլ և զփոքրն՝ զի և զամօթն ևս չնորհեաց. ոչ միայն մատնել 'ի տանջանս չկամեցաւ, այլ և ոչ առակել հաւաներ։

Տեսանես, որպիսի՝ ոք իմաստուն և զգաստասէր էր, և ազատ և անարատ 'ի բռնաւոր կարծեաց։ Զի տեսէք իսկ որչափ ինչ նախանձ է առ այնպիսի իրս. և որ քաջ հմուտն էր այնմ՝ ասէր, եթէ «Լի է նախանձու բարկութիւն առն, և ոչ խնայէ յաւուր դատաստանի». և այլուր, եթէ «Դաւուն է իբրև ըզդժոխս նախանձ»։ Այս մեք իսկ գիտեմք զբազումն, զի լաւ համարին զանձինս 'ի մահ մատնել, և ոչ 'ի կարծիս նախանձու անկանել։ Իսկ անդ ոչ կարծիքն էին, այլ իրքն Ճշմարիտք. զի ասէր ընտերացն օր

քան զօր լինէր յանդիմանիչ։ Բ. այլ այնպէս սուրբ էր ի կարծեաց նախանձու, զի և ոչ փոքր ինչ իրաւք կամեցաւ տրտմեցուցանել զկոյսն։ Բնդէն ի տան ունել անօրէնութիւն համարէր. և ի վեր հանել և յատեան տանել, հարկ լինէր ի մահ մատնել։ Ղառնէր ինչ անտի. այլ ի վերոյ քան զօրէնսն առաքինանայր։ Օ՛ի պարտ և պատշաճ՝ էր ի մերձենալ հնորհացն՝ երևել այնուհետև բազում նշանակաց բարձրագոյն առաքինութեն։ Օ՛որ օրինակ մինչև տարածեալ իցեն Ճառագայթք արեգականն, բացուստ ի բաց յառաջարձակ լուսոյն լուսաւորէ զաշխարհս ամ. նոյնպէս և Նա՝ որ երևելոց էր յայմմ արգանդ, և մինչև եղեալ՝ լուսաւորեաց զամ աշխարհս։ Ա՛ստն այնորիկ և մարգարէքն ցնծացեալ կարապետէին. և կանայք յառաջագոյն ասէին զՀանդերձեալսն. և Յովհաննէս մկրտիչն չև եղեալ ի սաղմաբոյն մշանայն խաղայր ցնծայր ընդդէմ կուսորդւոյն։ Ա՛ստի և Յովսէփ ցուցանէր բազում ըգգաստութիւն, ոչ բամբասէր և ոչ նախատէր, այլ արձակէլ ևէթ լռելեայն գնէր ի մտի։

Նա մինչդեռ այսպիսի իրք անհնարին առաջի կայէն, գայր հասանէր հրեշտակն, և զամ տարակուսանսն միով բանիւ լուծանէր։ Պարտ է խնդրել, թէ ընդէր ոչ յառաջագոյն, մինչև զայս ամ զմտաւածեալ էր առնն, ասաց հրեշտակն. այլ "Որբև մտաքսէն եղև, եկն հրեշտակն առ նմա". Թէպէտ և կուսին յառաջագոյն քան զյղանանն աւետարանեաց։ Նա յայսմ դարձեալ այլ իմն տարակոյսք կան. զի թէ և հրեշտակն ոչ ասաց, կոյսն որ լուաւ ի հրեշտակէն՝ ընդդէմ ոչ պատմեաց. մանաւանդ զի տրտում և տեսանէր զայրն՝ որում էր խօսեալ, և չփարատէր զտարակուսանս նորա։ Նա դարձեալ ընդդէմ ոչ յառաջ քան զտրտմէն Յովսէփայ յայմնեաց նմա հրեշտակն։

Նա հարկ է զառաջինն նախ լուծանել՝ թէ ընդէր ոչ ասաց։ Օ՛ի մի թերահաւատիցէ, և գտանիցի իբրև զՕ՛աբրիա ընդ պատժողք։ Ա՛ւր իրք ինչ երևիցին, դիւրաւ իմն լինի և հաւատայն. և ուր չիցէ սիրդն ինչ իրաց, ոչ այնպէս ընդունելի լինին պատ-

մուԹիւնքն։ Վասն այնորիկ ոչ ասաց յառաջագոյն հրեշտակն. և ի նոյն պատճառս լռեաց կոյսն, և չէ հան ի վեր։ Վասնզի չհամարէր հաւատալ նմա առնն որում խօսեալն էր՝ վասն նոր և աբանելի իրացն. այլ առաւել ևս զայրացուցանել զնա, եԹէ զմեղս ինչ գործեալս կամիցի ծածկել։ Օ՛ի և մինչ նմա տային աւետիքն՝ ընդունել զայնպիսի շնորհս, մարդ կեղէն իմն մնօք ակարացեալ՝ ասէր, եԹէ «Լուսոյ լինիցի ինձ այս, քանզի զայր ես ոչ գիտեմ»։ Որ չափ առաւել ևս Յովսեփ երկմտեր. մանաւանդ զի ի կարծեալ կնոջէն լսեր։ Վասն այնորիկ կոյսն ոչ ինչ ասաց. իսկ հրեշտակն ի դէպ ժամանակի գայր հասաներ և յայտներ։

Լ՝ուր ընդէր, ասեն, և կուսին ևս յետ յղութեանն ոչ աւետարանեցաւ։ Օ՛ի մի բազում խռովուԹիւն և տրտմուԹիւն ընկղմիցի. քանզի ի դէպ էր՝ առ՝ի զստոյգն չգիտելոյ՝ անձին օձիրս ինչ խորհել, և ի խեղդ և ի սուր մտաբերել վասն ամօԹոյն չժուժելոյ։ Լ՝ՍԼ քանզի զարմանալի էր կոյսն՝ և յայտ առնէ Պ՝ուկաս զառաքինուԹիւն նորա յասելն, եԹէ իբրև լուաւ զողջոյնն՝ ոչ վաղվաղակի տարածեաց զանձն և ընկալաւ զբանն, այլ խռովեցաւ, և խնդրէր ի միտս՝ ԹԷ որպիսի ինչ իցէ ողջոյնն։ Լ՝ՐԴ որ այնպէսն հաստատուն էր, ԹԷպէտ և խռովէր տրտմուԹեամբն՝ առ՝ի զամօԹն զմտաւ ածելոյ, և չունէր ակն՝ որչափ ինչ և ասիցէ՝ հաւանեցուցանել զոք ի լսողաց, ԹԷ չէ շնուԹիւն գործն. արդ զի մի այնպէս ինչ լինիցի, յառաջ քան զյղուԹիւն եկն հրեշտակն։ Ա՝յա և պարտ և պատշաճ՝ իսկ էր առանց խռովուԹիւն լինել այնմ արգանդի, յորում ամենեցուն արարիչն էր մտեալ բնակեալ. և ազատ ի տրտմուԹիւն ոչ-ոյն, որ արժանի եղև լինել պաշտօնեայ այնպիսի խորհրդոց։ Վասն այսորիկ կուսին յառաջ քան զյղուԹիւն աւետարանեցաւ, և Յովսեփայ ի ժամանակս ծնունդեանն Ճանաչէր։ Օ՛ որ բազումք ի տգիտաց առ չհասանել՝ անմիաբանուԹիւն իմն կարծեցին զ՝Պ՝ուկայ ասէին, եԹէ Վ՝արեմայ տայ զաւետիսն, և զՎ՝ատԹէէ՝ ԹԷ Յովսեփու. և ոչ գիտեն եԹէ երկոքեան կատարեցան, և Պ՝ուկայ և Վ՝ատԹէի։ Վասն որոյ կարէաք իսկ

է գրոյն հաւատեաւ միտ դնել, զի անտի լուծանիցեմք զկարծեալ բազում անմիաբանութիւնս։

Այլ արդ զայր հասանէր հրեշտակն յայնմ ժամանակի՝ յորում 'ի տրտմութիւն էր Յովսեփ. և վասն վերագոյնն ասացելոց, զի երևեսցի այնպիսի առն զգաստութիւն, յապաղէր զգալուստն. բայց յորժամ իրքն յայտ գալոց էին, ապա զայր հասանէր հրեշտակն։

«Մինչդեռ, ասէ, նա յայնմ մտաց խորհրդի էր, հրեշտակ 'ի տեսլեան երևեր Յովսեփայ»։ Տեսանես զառնն զհեզութիւն, զի ոչ միայն ոչ պատժեաց, այլ և ոչ 'ի վերս ումեք հանէր զիրսն. նա և ոչ նմին իսկ որ կարծեալն էր. այլ առանձին զմտաւ ածէր, և ջանայր և զկոյսն և ապրեցուցանել 'ի պատժոյն։ Այ՛ասէ՝ եթէ հանել կամեցաւ, այլ արձակել լռելեայն. այնպէս հեզ և զգօն էր այրն։ «Այս մինչդեռ զայս զմտաւ ածէր, երևեր նմա 'ի տեսլեան հրեշտակն»։

Այս ընդէր ոչ յայտ յանդիման, որպէս հովուացն, կամ Օ՞աբարեայ, կամ կուսին։ Այլ քանզի յոյժ հաւատացեալ էր այրն, էր ինչ պիտոյ տեսիլ երեսաց յանդիմանակաց։ Այլ կուսին մեծ ինն աւետարաբ նեցաւ, և Օ՞աբարիայի նոյնպէս, յառաջ քան զիրսն պիտոյ էր տեսիլն զարմանալի երեսաց։ Իսկ հովիւքն քանզի վայրենագոյնք էին՝ և նոցա յայտ յանդիման տեսիլ պիտոյ էր։ Իսայ սմա յետ ծննդեանն, յորժամ միտքն այնուհետև 'ի չար կարծեացն հանդարտեալ էին, և պատրաստ էր 'ի բարի յոյսն փոխել, եթէ երևեր ոք որ յայն առաջնորդէր, դիւրաւ ընդունէր զյայտնութիւն։ Պատն որոյ յետ կարծեացն առնու աւետիս. զի այն իսկ ասացելոցն նմա լինիցի հաստատութիւն. 'ի վերն չհանել, այլ 'ի մտի խորհել, և գնոյն լսել 'ի հրեշտակէն ասացեալ նմա, առանց երկմտութեան նշանակ տայր՝ թէ յոյ էին և խօսեցաւ. զի նորա միայն է զծածուկս սրտի ճանաչել։ Այս արդ տես, որչափ ինչ լիներ. և առնն հեզութիւն յայտնէր, և 'ի հաւատն և նմա նպաստ գործէր 'ի դէպ ժամանակին ասել. և բանն առանց կարծեաց լիներ. յայտ արտրեալ՝ թէ վշտացաւ, որչափ ինչ պարտ էր վշտանալ առնն։

Լու թէ զմարդ հաւատալն առնէր նմա հրեշտակն, լուր և զարմացեր ընդ խմաստութեան բանիցն ասացելոց։ Վանդի էին, և ասէ. «Յովսէփ որդի Դաւթի, մի երկնչիր առնուլ զՄարիամ կին քո»։ Լաս վաղվաղակի յիշեցուցանէ նմա զԴաւիթ, ուստի Վշտն էր լինելոց, և անուամբ նախնեացն հանէ ըզխառնուութիւնն ի մտացն, և զաւետիսն՝ որ առ ամ ազգն եղէն՝ յիշեցոյց։ Զպա եթէ ոչ այս այսպէս իցէ, ընդէր կոչէր զնա որդի Դաւթի, և ասէր՝ թէ մի երկնչիր։ Թէպէտ և այլուր ամ՝ յորժամ կամեցաւ ումն ուրեմն զայլոյ կին անդիտուլ իւր առնուլ, սաստիկ պատժովք սպառնացեալ բարբառէր. և թէպէտ և անդիտութի էր անդ, և առ չգիտել առ զՄարա, սակայն պատիժս պատուհասից կրեաց։ Իսկ ասա մեղմագոյնս ինն և ընտանեբար խօսի. զի մեծամեծ էին իրքն այ տեսչութեանցն, որ կացին ի մէջ սորա և նորա. զի անդ սպառնալիք պիտոյ էին, և ասա հաւանութի։

«Մի, ասէ, երկնչիր»։ Օ՛ի յայտ արասցէ՝ եթէ կասկածէր, գուցէ այ ինչ հակառակ կայցէ՝ զշնացեալն ի տան ունելով։ Լու եթէ ոչ այս այսպէս էր, ապա ոչ ածէր զմտաւ արձակել լուելոյն։ Լու արդ այսու ամենայնիւ յայտ է՝ թէ յայ առաքէր հրեշտակն. զի զոր ինչ զմտաւն ածէր, և որով նեղէր ի խորհուրդս, զայն ամ ածիցէ յայտ։ Զա և զկուսին և ամուսն ասէր. և չկայ յայտմ միայն, այլ զնովիմբ ածէ, թէ «Կին քո». նա կոչէր իսկ ոչ այնպէս, թէ ապականեալ ինչ էր։ Բայց կին ասա զխօսքանն կոչէ, որպէս և փեսայս յառաջ քան զամուսնութիւնն սովոր են կոչել գիրք զընկալուցս։

Լու առնուլն զկին քո՝ զինչ իցէ։ Ընդէն ի տան ունել զի ի նորա միտս իրքև զարձակեալ համարէր. այլ զարձակեալն, ասէ, անդրէն քեզ յանձն արար ամ. ոչ հայր և ոչ մայր, այլ ամ. ոչ յամուսնութի, այլ ընդ քեզ անդրէն ի տան ընակել. ոչ առթից հաւանութիք, այլ իմով բարբառով։ Օ՛որ օրինակ և Վշ յետոյ յանձն արար զնա աշակերտին, նոյնպէս և ասա ամ հրեշտակաւն Յովսէփայ։ Լու զպատճառսն ակնարկեաց, և զչար կարծիսն չա-

սաց. բայց բարւոք համբաւաւ և պարկեշտութիւն ըստ արժանի ծննդեանն՝ և զայն երբարձ 'ի միջոց. յայտ արարեալ եթէ վասն որոյ կասկածէրն, և հանել կամէր, վասն այնորիկ առնուլ և 'ի տան ունել արժան էր։ Յաձախագոյնս լուծանէ զկասկածն զի ոչ միայն ասէ յանօրէն խառնից ազատ է, այլ և 'ի վեր ևս քան զընդունթիս է յղութիւնն. և արդ մի միայն զերկիւղն մերժեսցես 'ի մտաց, այլ առաւել ևս ուրախ լինիցիս։

«Օ՛ի որ 'ի նմա յղացեալն է՝ 'ի հոգւոյն սրբոյ է»։ Որանշան է բանս, 'ի վեր քան զմարդկէղէն միտս, վերագոյն քան զընդունթեան օրէնս։ Այս ընդէ՞ր արդեւք. այլ զի հաւատասցէ. այր մի՝ որ այսմ ամի պատմութեաց անտեղեակ էր, յանցելոց անտի լեցի հմուտ։ Ամն այնորիկ նախ զայն ամ որ ընդ նորա միտն անցանէր՝ յայտնեաց, զի 'ի վերանս մտեալ էր, վասն որոյ խորհէրն առնել. զի և զայս արասցէ հաւատարիմ։ Ա՛յ ոչ միայն յանցելոցն, այլ և 'ի հանդերձելոցն՝ զորս 'ի նոյնս յարեալոց է։

«Ծնցի, ասէ, որդի և կոչեսցես զանուն նորա Յիսուս»։ Այս մի վասն զի 'ի հոգւոյն սրբոյ է, կարծիցես եթէ օտար ինչ իցէ քո սպասաւորութեդ ըստ տեսչութեանն. զի թէպէտ և 'ի յղութիւնն ոչինչ եղեր նպաստ, քանզի անարատ և անմատոյց մնաց։ Կոյսն, որ ինչ հօր սեպհականն է՝ խնամ ունել, և չասպականել զպատիւ կուսութեն, զայն քեզ յանձն արարիցէ. զի անուն ծնանդեանն դու կոչեսցես։ Օ՛ի թէպէտ և չէ քո ծնունդն, սակայն զտեղի հօր ընուցուս մանկանն։ Ամն այնորիկ և անունն դնելոց ընտանեցուցից զքեզ մանկանն։

Լսակ զի մի յայտմանէ զբ հայր մանկանն կարծիցէ զնա, լուր զնարդ զյաջորդն Ճշմարտագոյնս զնէ։ «Ծնցի, ասէ, որդի»։ Այս ոչ ասաց՝ թէ ծնցի քեզ որդի։ Ամն որոյ 'ի մէջ եղ զբանն. քանզի ոչ եթէ նմա ծնաւ, այլ՝ ամ աշխարհաց։ Ամն այնորիկ և զանունն յերկնից եբեր հրեշտակն։ Այս ասաց յայտ

։ 'Ի լուս. մարդ։

առնէ՝ եթէ մեծասքանչ է ծնունդն, և ՝ի այ և եթէ վայելէ. զի և Յովսեփայ յերկնից հրեշտակաւ յայտնեցաւ յորջորջումն անուանն։

Այս և ոչ այս դոյզն ինչ իրք էին, այլ բիւրուց և անբաւ բարութեաց գանձք. վասն որոյ և մեկնէ իսկ զնոյն հրեշտակն, և բարութեաց յոյսս առաջի դնէ. և այսու ածէ զնա ՝ի հաւատս։ Զանգի յայն ինն միտեալ սովոր եմք. վասն որոյ և առաւել իսկ հաւատալ նոցա ցանկամք։ Այս այսուհետև յամէ կազմեաց զՀաւատոն, և յանցելոցն իրաց, և որ առ յապայն էին լինելոց, և ՝ի մօտաւորացն, և առ ՝ի նոքին իսկ պատուոյ։

Զ՝ծէ ՝ի մէջ և զմարգարէն ՝ի դէպ ժամանակի՝ գալ միաբանել իւրոց աւետեացն. զոր պատմեաց յառաջ քան զնա, որ դիպելոցն էր աշխարհի, զբաւրութիւն որ նովաւ լինելոց էին կանխաւ քարոզեր։ Որպիսի ինչ իցեն։ Ի մեղաց ազատութիւն. ՝ի մահ հուանեալ և ՝ի դժոխոց փրկութիւն։

«Ա՝յ, ասէ, փրկեսցէ զժողովուրդ իւր ՝ի մեղաց իւրեանց»։ Այս ասա նոր ինն և չքնաղ իրս յայտառնէ. զի ոչ ՝ի յայտնի պատերազմողաց, և ոչ յեբրեալի հինէ, այլ որ ևան առաւել մեծ է, ՝ի մեղաց ազատել տայ աւետիս. որ ոչ ումեք յառաջին ժամանակսն եղև այսպիսի ինչ։

Այս ընդէր, ասեն, զժողովուրդ իւր ասաց, և ոչ ըզհեթանոսս ևս յաւել։ Օ՝ի մի խրտուցանիցէ զլսօղն անդէն ՝ի սկզբանն. այլ ի՝նքսանոց լսողաց յայտնի է, թէ և զհեթանոսաց ակնարկեաց։ Զանգի ոչ միայն հրեայքն են նորա ժողովուրդ, այլ ամենեան որ մնատուցեալ ընդունիցին զդիտութիւն նորա։

Այս արդ միտ դիր՝ զնարդ և զպատուոյն նորա զուշակեաց մեզ այսու. ժողովուրդ նորա կոչեաց զազգն հրեական, և այսու ոչ այլ ինչ յայտ առնէ, եթէ ոչ՝ զի այ որդի է որ ծնաւն, և վասն վերին թագաւորին են նորա բանք. քանզի և ոչ զմեղս թողուլ՝ այլոյ ուրուք զօրութեան է, բայց միայն այնր էութեան։

ԳՈՐԴՈՐԱԿ

Եւ արդ քանզի այսչափ վայելեցաք 'ի պարգևս, զնմա՛ ինչ արասցուք առ 'ի չթշնամանել զայնպիսի բարերարութիւն։ Օ՜ի թէ յառաջ քան զպատիւս զայս՝ տանջանաց արժանի էին գործքն որ գործէին, որչափ ևս առաւել յետ անչափ բարերարութեանցն։ Եւ զայս այժմ ո՛չ թէ վայրապար ինչ ասեմ, այլ զի զբազումն տեսանեմ յետ մկրտութեանն ծուլութիւն զգածեալս քան զերախայս, և չունին ծանօթս զիւրեանց զինուորութեանն։

Զանս այնորիկ ո՛չ 'ի հրապարակս, ո՛չ յեկեղեցւոջ զոյ հնար վաղվաղակի զոք տեսանել հաւատացեալ կամ անհաւատ։ Այլ եթէ ոք 'ի խորհրդոյն ժամանակի կայցէ, և միտ դիցէ գնացելոցն արտաքս, և ճնացելոցն 'ի ներքս։ Պարտ և պատշաճ էր, ո՛չ 'ի տեղւոյն, այլ 'ի կարգացն ճանաչել։ Վանզի արտաքին պատիւքն նմանագոյնս յարտաքին պաճուճանացն լինին գուշակաւորք։ Իսկ մերոցս՝ յոգւոյն արժան է ծանօթոյս լինել. զի հաւատացելոյն ո՛չ միայն 'ի պարգևացն պարտ է երևելի լինել, այլ և 'ի կենացն նորոց։ Հաւատացելոյն լուսաւոր աչխարհի արժան է լինել՝ և աղ։ Իսկ արդ յորժամ և անձինդ լոյս ո՛չ տայցես, և զքո լուծութիդ չանդիցես, ուստի զքեզ ճանաչիցեմ այնուհետև զի յաղագիս սրբութեանցն հասեր. այլ այն իսկ քեզ պաշար տանջանաց լինիցի։ Վանզի մեծ պատիւ այնոցիկ՝ որք ո՛չ ըստ արժանի պատուոյն կամիցին կալ, յաւելուած պատժոց է։ Հաւատացելոյն ո՛չ միայն յորոց առն յա՛յլ, այլ և յորոց ինքն նպաստ եղև, պարտ է պայծառանալ, և ա՛մ ուստեք ծանօթաւոր լինել, և 'ի գնացից, և 'ի հայեցուածոց, և 'ի կերպարանաց, և 'ի բարքառոյ։ Օ՜ այս ասեմ, ո՛չ զի 'ի ցոյց ինչ՝ այլ զի յօգուտ տեսողացն զանձինս յարգեսցուք։

Իսկ դա աւագիկ՝ ուստի և կամիցիմ զքեզ ճանաչել, ա՛մ ուրեք 'ի նոցուն հակառակաց գտանեմ

զքեզ երևեալ։ Լսեմ 'ի տեղեացն կամիմ զքեզ ճշգրտել, 'ի ձիոցն ասպարէզս, և 'ի թատերս, և յանօրէնութիւնս տեսանեմ ցանկորդեալ, 'ի չար ժողովս, յապականեալ մարդկան հաղորդութիւս։ Լու եմ 'ի կերպարանաց, երեսս լկտիս, և միշտ յայրատս տեսանեմ, և պաճուճեալս իբրև զբոզկոցն և զկերուսելոցն։ Լու եմ 'ի հանդերձիցն, քան զգուշանացն ոչինչ լուաղոյն։ Լու եմ 'ի սպասաւորացն, հացակատակաց սուտակասպասս կուտեալ շրջեցուցանես։ Լու եմ 'ի բանից, ոչինչ առողջ և կարևոր, և ոչ որ ունի հաստատուն զմեր կեանսս, և լսեմ բարբառեալ։ Լու եմ 'ի սեղանոյ, անտի բնաւ իսկ յաճախ երևի ամբաստանութիւն։

Լու արդ աղէ՛ սա, ուստի կարիցեմ ճանաչել զքեզ՝ եթէ հաւատացեալ ես. զի զոր ասացաքս, ամենևին իսկ հակառակս նոցին բերեն զքեզն հաշիւս 'ի մէջ։ Լու զինչ ասիցեմ եթէ հաւատացեալ. նա բնաւ թէ և մարդ իսկ իցես, չկարեմ ստոյգ իմանալ։ Յորժամ կցածիցես [1] իբրև զեշ, և եղջիւր աճիցես իբրև զցուլ, և վընջիցես 'ի կանայս իբրև զձիս, և շուայտիցիս իբրև զարջ, և պարարիցես զմարմնդ իբրև զջորի, և ոխս մթերեալ պահիցես իբրև զուղտ, և յափշտակիցես իբրև զգայլ, և ցասմամբ վառիցիս իբրև զօձ, և խայթիցես իբրև զկարիճ, և աղու լինիցիս իբրև զլիժ, և թոյնս պահիցես իբրև զքարբ, և կռուիցիս ընդ եղբարս իբրև զդև չար. զինչդ կարացիցէ զքեզ ընդ մարդկան հաշուել, յորժամ ոչ տեսանիցեմ 'ի քեզ նկարագիրս այսպիսի բնութեան։ Օ երեխայն և զհաւատացեալն չգտանեմ իւիք 'ի միմեանց ընտրել, որպէս ոչ զմարդ և զգազան զատանել 'ի միմեանց։ Լու արդ զինչ կո չեցից զքեզ. գազա՞ն. այլ գազանքն միով իւիք յայնպիսի վիճասուց ըմբռնեալ են, և դու միանգամայն ամենեքեանքդ զգածեալ ամենևին՝ քաջ 'ի բաց քան զնոցա անամանութիւն գնաս գնացս։ Իսկ դև՞ անուա՞ նեցից զքեզ. այլ դև ոչ որովայնի բռնութեամբ ծառայէ, և ոչ ընչից ցանկանայ։ Իսկ յորժամ քան

1 Փարիզեան օրինակն կ[illegible]։

զգաստնս և քան զդեւս յանձնիսազոյն վնասակարութիս ունիցիս, զիարդ կոչեսցուք զքեզ մարդ։ Եւ արդ աղէ ասա. եթէ մարդ չմարթի զքեզ կոչել, զիարդ անուանեսցուք զքեզ հաւատացեալ։

Եւ այն իսկ են անհնարին աղէտք, զի այնչափ յախտի կամք, և վիմնամք զոգւոցն ծիւրութի, և չգնեմք միտ տգեղութեան նորա։ Եւ յլ առ վարսաւիրայսն նստեալ՝ և զհերդ փոքրես, և զհայելին առեալ՝ շուրջ ձշգրիտս իմն նշանակես զգանգուրս վարսիցդ. և ցմոտակայսն հարցանես և ցվարսաւիրայսն, եթէ գեղեցիկս զդիսակսդ յօրինեաց. և թերևս ծեր ևս իցես, և չամաչես զմանկուց հրպտանս հպտել։ Իսկ զոգւոցն ոչ միայն զտգեղութի, այլ և զգաստնի կերպարանս, և զշնկնձթաց, և զբազմարդապայն՝ քաղից ըստ արտաքնոցն առասպելաց՝ յանձին ցուցեալ, ոչ սակաւիկ ինչ զդամք։ Եւ զի՞ և աստ հայելի հոգևոր կայ առաջի, և ևս լաւ է և աղնուագոյն քան զայն. որ ոչ զտգեղութիւն միայն ցուցանէ, այլ յանհնարին գեղն փոխէ՝ եթէ կամիցիմք։ Եւ այն յիշատակն է արանց առաքինեաց, և երանելի կենացն նոցա պատմութի, և գրոց ընթերցուածք, և ՝ուծատուր օրէնք. եթէ միանգամ միայն կամիցիս հայել ընդ պատկերս այնպիսի սրբոց, և զքս մտացդ զտգեղութեան տեսանիցես, և տեսեալ՝ ոչ ևս ումեք այնուհետև կարօտ լինիցիս զերծուցանել զքեզ՝ի յոռութէ։ Վանդի այնմ պիտանացու է մեզ հայելին, և դիւրին գործէ զփոփոխումն։

Ա՛ի ոք այսուհետև յանանոցն տգեղութի մնասցէ։ Եթէ ծառայն՝ի տուն հօր չմնանէ, յորժամ և գաղան ևս լինիս, զիարդ կարիցես գոնէ զարտաքին հրապարակն կոխել։ Եւ զի՞ ասիցեմ գաղան. քան զի՞մ գաղանս ևս դժնդակ է այնպիսին. զի նոքա թէպէտ և բնութի՛ ունին զգաստանութի, մարդկեղէն արուեստիւք պատրեալ՝ բազում անգամ դան՝ի համբոյր։ Իսկ դու որ զնոցա գաղանութի՝ի չընա կաւոր զգոնութիւն դարձուցանես, զո՞ր պատասխա-

1 Փարիզեան օրինակն Լուդովոգոն։

նատուութեի ունիցիս, որ զքո բնակաւոր հեզութիդ 'ի չքնակաւոր գազանութիւնն հաներ։ Օ վայրենին բնութիւ՝ ընտանի արարեր. և զընտանիդ բնութիւ՝ արտաքոյ բնութեի վայրենի կացուցեր։ Օ առեւծն ողորեաս և 'ի համբոյր ածես. և զքո ցասումնդ՝ քան զառիւծուն վայրենագոյն կազմես։ Լաւպէտ և անդ երկու իսկ արդելք իցեն. զի 'ի մտացն զրկեալ է, և զի գազան՝ և քան զամենեան բարկագոյն է. բայց սակայն յաճախութիւ՝ այ իմաստութենն՝ որ տուաւ քեզ՝ և բնութենն յաղթեա։ Լաւ արդ որ գազանացն բնութեան յաղթես, զիարդ քեզ բնութեամբդ և կամացդ մատն լինիցիս։ Լաւ եթէ զայլ մարդ հրամայէին քեզ զգծացուցանել, և ոչ այնպէս ինչ անհնարին համարեալ էր զհրամանն. բայց սակայն գոյր պատճառս յառաջ բերել՝ զչլինելն տէր ընկերին կամաց, և զչառնիլն ձեռնհաս ամի. դա աւաղ դիկ քո է գազանդ, և չկամիս տիրել։

Լաւ արդ զոր պատասխանատուութի ունիցիս. որ պիսի դիպոզ պատճառս յառաջ բերել կարիցես. որ զառեւծդ մարդացուցանես, և զանձնէ անփոյթ առնես՝ 'ի մարդոյ առեւծդ եղելոյ։ Լմա զչքնաւորն ընորհես, և անձինդ զբունդ չպահես. այլ զվայրենի գազանն 'ի մեր ազնուականութիս ջանաս աճել, և զքեզ յաթոռոյ թագաւորութե կործանես, և 'ի նոցա մոլորութենն մդես ընկենուս։ Համարեա, թէ կամիս, և զցասումնն՝ գազան. և որչափ այլքն յառեւծն, նոյնպէս և դու 'ի նա ցոյց փոյթ, և զգծացո և ցածռ զսյնպիսի խորհուրդս. քանզի և նա սաստիկ ժանիս և մագիլս ունի. և եթէ ոչ ցածուցանիցես զնա, զամ սատակէ։ Օ ի ոչ այնպէս առեւծ և ինձ ։ ծակոտեն զաղիս՝ որպէս ցասումնն միշտ երկաթի մագլաբ զնոյն գործէ. ոչ զմարմին միայն ապականէ, այլ և զոգիսն եղծանէ, և զառաղջութիւնն ուտէ. պատառէ և կոտորէ զամ զզօրութիւն նորա, և անպիտան առ ամ իրս գործէ։

Լթէ որդունս որ 'ի փորի պարարիցէ, և ոգի անգամ չկարիցէ առնուլ՝ յորժամ 'ի ներքուստ ուտի

։ Փարիզեան որինակն ի՝ ըստ յուսին։

ցէն զնա ամբէն։ Իսկ մեք որ զայնպիսի օձ 'ի փորն ունիմք՝ որ ուտէ 'ի ներքոյ, զցամանէն ասեմ, զինչ ինչ լաւութիւն ծնանել կարիցեմք. և կամ զիարդ ապրեսցուք յայնպիսի ժանտէ։ Այնթէ ըմբիցեմք զըմպելիսն՝ որ կարօղն է սպանանել զորդումն, որ 'ի ներքս էն, և զձմն։

Այլ զինչ ինչ ըմպելիսն է, ասէն, որ այնչափ զօրութիւն ունիցի։ Արիւնն քոյ. զոր թէ անխիղճ հաւմարձակութիւն ոք առնուցու, կարօղ է զամ ախտն շիջուցանել։ Ցա և հանդերձ նոսա՝ ածելոյն զրոց ունկնդրութիւնք, և ողորմածութիւն խառն ընդ ունկնդրութեան։ Օ՛ի այնու ամիւ կարիցեն մեռանել ժանտագործ ցաւքն ոգւոց մերոց, և յայնժամ միայն կեցցուք։ Օ՛ի այժմ չեմք լաւագոյն քան զմեռեալսն. և՛ չէ հնար՝ մինչ նոքա կենդանի իցեն, կեալ մեզ։ և հարկ է սատակել։ Այնթէ չժամանիցեմք զնոսա ատ սպանանել, անդ սպանցեն զմեզ. մանաւանդ թէ նախ քան զայն մահ ատէն անհնարին վրէժս պահանջիցեն 'ի մէնջ։ Պանդի իւրաքանչիւր յայնպիսի ախտից, և միտք անագորոյնք, և բռնաւորութիւն, և անյագութիւն, հանապազօր ուտեն զմեզ, և ոչ երբէք դադարին։ Պանիք առիւծուց են ժանիք նոցա. մանաւանդ թէ և դժոգաւկագոյնք։ Պանդի առեւծ իբրև յագի, 'ի բաց կայ 'ի գիշերն. իսկ այնպիսի ախտք ոչ յագին, և ոչ 'ի բաց մեկնին, մինչև մնտ առ սատանայ տանիցին ըմբռնեալ զմարդն։ Պանդի այնպիսի զօրութիւն է նոցա, մինչև 'ի ծառայութիւն արկանել, զոր Պաւղոս վասն Պէնին ցուցանէր, և զգեհէն և զարքայութիւն վասն նորա արհամարհէր. զնոյն և յըմբռնելեացն նոցա պահանջէ. եթէ 'ի մարմնոց ցանկութիւնս, և եթէ յընչից, և եթէ 'ի փառաց անկանիցի ոք, և զգեհէն արհամարհէ այնուհետև՝ և զարքայութիւն անգոսնէ, զի զնոցա կամն կատարեսցէ։

Այլ արդ մի անհաւատ լիցուք Պաւղոսի որ ասէր, եթէ այնչափ սիրեաց զՊէն։ Յորժամ զատանիցին ոմանք կարեացն այնպէս կալ 'ի ծառայութիւն, զիարդ անհաւատ զայն համարիցիս այնուհետև։ Այլ վասն այնորիկ Պէնի զուարթն նուազագոյն է 'ի մեզ, քանզի

ՇԱՄ ոյժ յայս ցանկութիւն վատնի. յափշտակեմք և ագահեմք, և մնոտի փառաց ծառայեմք. քան զոր զինչ այլ կայցէ վատթարագոյն։ Եպիսկոպոսն և բիւրապատիկ երևելի լինիցիս, չառնիս ինչ լաւագոյն քան զանարգս. և վասն այնորիկ իսկ առնիս անարգագոյն. զի որովք կամիցիս փառաւոր և պայծառագոյն երևել, նոքաք իսկ ծաղր առնիցեն զքեզ վասն առ 'ի նոցանէ փառացն ցանկանալոյ։ Այլ զիարդ ոչ 'ի նորին հակառակն դառնայցէ քեզ փոյթ այսպիսի փառաց. և զի բամբասանաց են իրքն։ Օ որ օրինակ զչցանկացօղն չնութիւն և պոռնկութիւն, նոյնպէս և զանտենչմին փառաց գովեմք ամենեքեան. և բամբասօղք առաւել եմք, և ոչ գովիչք փառացասիրացս։ Այլ արդ ընդէր ձգես յանձն զիրս ինչ՝ ուստի նորին հակառակն սովոր է դիպել քեզ։

Այթէ կամիս փառաւոր լինել, արհամարհեա ըզփառս, և քան զամ պայծառագոյն լինիցիս։ Ընդէր ախտանաս՝ որով Աբրոդոնոսորն ախտացաւ. քանզի և նա պատկեր կանգնեաց 'ի փայտէ և յանզգայուն կերպարանաց, և համարեցաւ յաւելուած ինչ շահել փառաց. և կենդանին՝ 'ի չկենդանոյ կամէր պայծառագոյն երևել։ Ցեսէր զյաձախութիւն մոլորութեն. ակն ունէր պատուել զանձն, առաւել թշնամանեաց, յորժամ երևէր յանշունչն վստահ լինել՝ քան յիւր կենդանի շունչն. և վասն այնորիկ զփայտն յայնչափ պատիւ ածէր։ Օ իարդ չիցէ ծաղու արժանի, ոչ 'ի կարգաց, այլ 'ի տախտակաց փութացեալ պայծառանալ. զոր օրինակ եթէ ոք վասն բաթրոնի՝ որ 'ի տան իցէ, կամ վասն սանդղոց պայծառանալ համարիցի, և ոչ վասն զի մարդն է՝ յօրանալ։

Այլ մինն և առ մեզ այժմ բազումք նմանն են. որպէս և նա 'ի պատկերէն, նոյնպէս և սա 'ի հանդերձից, կէսք և 'ի տանց, այլք և 'ի ջորւոց և 'ի կառաց, և 'ի սեանց՝ որ 'ի տունս կանգնեալ իցեն, համարին զարմանալի լինել։ Վանզի զմարգիին լինել կորուսին, յածեալ շրջին՝ կուտել անձանց այլուստ զյաձախ ծաղրալից փառան։

Այլ ոչ առաքինիքն և մեծամեծ ծառայքն ոչ

անտի ինչ, այլ յորոց պարսն և պատշաճ էր՝ նո-
քօք առաւել պայծառանային։ Զանգի գերիք և
ծառայք և մանկունք և օտարք, և ամենևին յիւ-
րեանց ընտանեաց լոկք, քան զնա որ ամենևին այ-
նուիկ պայծառացեալն էր՝ առաւել պարկեշտագոյնք
երևեցան։ Յաբոքոգնոսորայ ոչ այնչափ ոչ նա-
խարարք, և ոչ զօրավարք, և ոչ բազմութի զօրաց,
և ոչ ոսկւոյ յաճախութիւք, և ոչ այլ ինչ պաճուճանք
հանոյ եղեն 'ի ցանկութիւն և ցուցանել զնա մեծ։
Այլ նոցա՝ որ յամէ մերկ էին, հանոյ եղև միայն
զգաստութիւնն. քան զնա՝ որ զթագն և զծիրանիսն
ունէր, և այնչափ երևելի էր վայելչութիւ, զնոսա՝ որ
չունէին ինչ այնպիսի, պայծառագոյնս եցոյց. այն-
չափ՝ որչափ արեգակն քան զտիղմ լուսաւորագոյն
է։ Օ՛ի 'ի մէջ այնչափ աշխարհաց շրջէին մանկունքն, և գերիք, և ծառայք. և յերևելն միայն
նոցա՝ վաղվաղակի թագաւորն հուր յաչաց յարձակեր. և զօրավարքն, և հազարապետք, և կուսակալք, և ամենայն թատրն սատանայի շուրջ հասեալ
գումարեալ կայր. և ձայն սընդացն և փողոց և ամենայն արուեստականաց յամենայն կողմանց յերկիր
ընկեցեալ[1] հնչէր 'ի լսելիս նոցա. և հուր հնոցին
բորբոքեալ ծառացեալ՝ յամպսն կցեալ հասանէր,
և զնոսա ինչ ոչ զարհուրեցոյց։ Այլ իբրև զմանկըաւոյ խաղ համարեալ՝ արութիւն և ցածութիւն ցուցանէին. և քան զփողոցն՝ պայծառագոյնս բարբառ
արձակեալ՝ ասէին. « Օ՛այս գիտասջիր արքայ »։
Այլ ոչ բանիւք կամէին թշնամանել զբռնաւորն,
այլ միայն զանծպաշտութիւնն ցուցանել. վասն որոյ
ոչ երկայնաձիգ ինչ բանս յերկարեցին, այլ 'ի կարճոյ զամ յայտ արարեալ ցուցանէին։ « Ի՛, ասեն,
ո՞ծ յերկինս, որ կարող է ապրեցուցանել զմեզ »։
Օ՛ի մեզ զաղամանբոխ ժողովսդ ցուցանես. զի՛ մեզ
զՀնոց բորբոքեալ. զի՛ մեզ զուսերս սայրասուրս.
զի՛ զահ և զերկիւղ տագնապաց[2]. յամենայնէ յայդմանէ 'ի վեր և զօրագոյն է մեր Տէրն։

1 Փարիզեան օրինակն յերկինս կնչեաւ։

2 Յօրինակին գագնագաց. է. դաք ըստ փարիզեան օրինակին. իսկ այժմու յոյնն ունի գէգաւոյ։

Լ՝ պա զմտաւ ածեալ, թերեւս ՝ի այնպէս ինչ կամ լինիցի և թոյլ տայցէ այրել զնոսա, զի մի յորժամ այն լինիցի՝ ստուգեալ ինչ համարիցին խօսել, զի թէ և այն չլինիցի, « Օ՝ այս գիտասջիր արքայ, եթէ զից քոց պաշտօն ոչ տանիմք »։ Լ՝ թէ ասացեալ էր, եթէ վասն մեղաց չփրկէ, թէ և չփրկէր՝ նոքա ոչ հաւատային. վասն այնորիկ զայն անդ լռեցին։ Լ՝այց ՝ի հնոցին ամենեքին իսկ զմեղն այնմ պատճառդնէին. առաջի թագաւորին ոչինչ այնպիսի. այլ թէ և այրելոց ելցեն՝ չլինին մասն ՝ի ածպաշտութենն։ Օ՝ի ոչ վասն վարձուց և փոխարինաց առնէին զոր առնէինն, այլ միայն վասն սիրոյ. թէպէտ և ՝ի գերութեան էին և ՝ի ծառայութեան, և չէր ինչ ՝ի դեբրութեան վայելեալ. և յաշխարհէ և յազատութենէ և յամէ անկեալ։

Լ՝ զայն մի ինչ ասիցես ցիս, եթէ յարքունեաց պատիւս էին։ Լ՝անգի սուրբք և արդարք էին, բիւրապատիկ մեբանալ ՝ի տանն յանձին ունէին, և ՝ի տաճարին վայելչութեան վայելել. ըստ այնմ, եթէ « Լ՝ նտրեցի ընդ աղբ գալ ՝ի տան ՝այ՝ քան բնակել ՝ի յաթկս մեղաւորաց. և՝ Լ՝ աւ է մի օր ՝ի գաւիթս քո քան զհազարս »։ Լ՝ ուրապատիկ յանձին ունէին ՝ի տան ընկեցիկ լինել, և ոչ ՝ի բաբելացւոց աշխարհին թագաւորել։ Լ՝ զայս ՝ի բանիցն՝ զոր ՝ի հնոցին ասէին, յայտ առնեն, թէ զիարդ տաղտկային ընդ անդ յամէին։ Օ՝ի թէպէտ և ինքեանք ՝ի բաղում պատիւս վայելէին, սակայն ընդ այլոցն տաղտկային, որ սեպհականն իսկ է սրբոց, ոչ զփառս, ոչ զպատիւ, և ոչ զայլ ինչ՝ մեծարոյ քան զընկերացն փրբկութենէ համարել։ Լ՝ արդ տես զիարդ մինչ ՝ի հնոցին էին, ընդ ՝այ՝ ազգին պաղատանս մատուցանէին. իսկ մեք և ոչ ՝ի հանգստեան յիշեմք զերբարս։ Լ՝ յորժամ յերաղոյն վերայ հասանել կամէին, ոչ զանձանց ինչ գիտէին[1], այլ զբաղմաց։ Լ՝ զի զմահ արհամարհեցին, բազում իրաք յետ այնորիկ ցուցանէին. ՝այ՝ ուրեք զանձինս յառաջ մատուցեալ, յորժամ զ՝ած՝ ՝ի հաւան ածել կամէին։ Լ՝ քանզի

1 ՝Ի լուս. ԷԻԳԷԷ. բայց և փարիզեան օր. ԳԻԳԷԷ։

զանձինս բաւական լինել չհամարելին, 'ի հարսն դէմ մեալ ապաւինելին. ինքեանք ոչինչ աւելի ասեն նպաստ լինել, այլ միայն ոգի մաղեալ։

Այսոցին նախանձաւոր լիցուք և մեք. քանզի և այժմ կանգնեալ կայ պատկեր ոսկեղէն, մամոնայի բռնութեան։ Այլ մի ունկնդիր լինիցիք տաւղաց, և մի փողոց, և մի ծնծղայից, և մի այլ մեծութեան զբօսաւնօք զբաղնուլ. այլ թէպէտ և յաղքատութեան հնոց հասանիցէ անկանել՝ յանձին կալցուք, առ 'ի չմեռ տուցանել երկրպագութեան մեծութեանն. և լինիցի ցող շառաչուկ սրսկեալ 'ի մէջ հնոցին։ Մի այսուհետև զարհուրեցուք՝ յորժամ լսեմք, եթէ հնոց է աղքատութիւնն. քանզի և յայնժամ որք մտին 'ի հնոցն՝ պայծառագոյնք երևեցան. և որք երկիրն պագին՝ սատակեցան։ Այլ յայնժամ ամ միանգամայն եղև. բայց այժմ է ինչ որ աստ լինի, և է ինչ որ աստ և 'ի հանդերձեալ աւուրն[1]։ Իսկ որք վասն չպագանելոյ երկիր մամոնայի՝ յանձին կալան զաղքատութեան, և աստ և անդ լինիցին պայծառագոյնք. և որ աստ յանիրաւութեան մեծանան, անդ զանհնարին վրէժս հատուցանիցեն։

Այսմամ հնոցէ ելանեք և Ազար՝ ոչինչ նուազագոյն պայծառացեալ քան զմանկունսն։ Այլ որ յերկրպագուաց պատկերին գնդին գտաւ մեծատունն, 'ի գեհենի դատապարտեալ պատժէր։ Այլ զոր ասացաքս՝ նոցին օրինակ են. զի որք անկան 'ի հնոցն, ոչինչ վնասացան. և որք արտաքոյն նստէին, բռնութիւն յափշտակեցան։ Այսպէս և անդ լինիցի. սուրբքն 'ի մէջ հրեղէն գետոյն զձեմ առեալ շրջիցին, և ոչինչ վնասիցին, այլ ևս քան զևս պայծառագոյնք երևիցին. և որոց պատկերին երկիր պագեալ իցէ, տեսանիցեն զՀուրն քան զնամ գազան սատակագոյն զայրացեալ յարձակեալ, և 'ի ներքս ամփոփեալ։ Որպէս զի որ թերահաւատ որք գեհենին լինիցի, ընդ այն հնոց հայեսցի, և յաստեացս՝ հանդերձելոցն հաւատասցէ. և մի զանգիտեսցէ յաղքատութեան

1 Փարիզեան օր. Բայց այլ է ինչ որ աստ լինի, և է ինչ անդ և 'ի հանդերձեալ աւուրն։

հնոցէն։ Օ՛ի այս բոց է և ցաւք, և այն ցօղ և հանդիստ. առ այնմ հնոցի սատանայ կայ, և առ այսմ հրեշտակք, և 'ի բաց թօթափեն զբոցն։

Լուիցեն զայս մեծատունք, որք զաղքատութեան հնոցն բորբոքեն. զի նոցա ինչս ինչ ոչ գործեն, քանզի ցօղն շուրջ զնոքօք ցօղիցէ. և զանձինս ըմբռնելիս բոցոյն գործեն՝ զոր իւրեանց ձեռօք վառիցեն։ Յայնժամ հրեշտակ էջ ընդ մանկունսն 'ի հնոցն. և մէք ընդ այնոսիկ՝ որ յաղքատութեանէ հնոցն իցեն՝ ինքնուք, և գործեսցուք ցօղ զողորմածութեանէ, և 'ի բաց թօթափեսցուք զբոցն. զի և պսակաց նոցա պսակակիցք լիցուք. և զբոց գեհենին Վանի բարբառն փարատիցէ, որ ասէ, թէ «Վաղցեալ տեսէք զիս, և կերակրեցէք»։ Այն բարբառ փոխանակ ցօղոյ հասանիցէ 'ի վերայ մեր, շուրջանակի շառաւիցէ 'ի մէջ բոցոյն։ Ինքնուք ողորմածութեամբ 'ի հնոց անանկութենն, և տեսցուք զիարդ շրջին և կոխեն զպարանոցս։ Ցեսցուք զնորաբանս և զչքնաղ զարմանալիսն. մարդոյ 'ի հնոցի երգել նուագս սաղմանից. մարդոյ 'ի հուր գոհութեամբ յանձին կալեալ զաղքատութիւն, անհնարին կապանօք կապեալ, և բաղում փառաւորութիւն այ մատուցանել։

Վանզի և այնց իսկ մանկանց հաւատոյ լինին որք աղքատութենէն գոհութեամբ տանիցին. զի քան զհուր և ահագին է աղքատութիւն, և առաւել սոփոր է այրել։ Ցայրեաց զայն մանկունս հուրն. քանզի հնոր հակալք եղեն նոքա. և վաղվաղակի լուծանէին կապանք նոցա։ Այնպէս եթէ յորժամ յաղքատութենէ հասանիցես, գոհացօղ լինիցես, և կապանքն լուծանին, և բոցն շիջանի։ Այ թէ չշիջանիցի [1], ևս զարմանալի է. զի փոխանակ բոցոյն՝ աղբերք բղխիցէ. զոր 'ի փիլիսոփայսն է տեսանել. զի յաղքատութեամբն զմեծատունսն առաւել 'ի դիւրութեամբ են։ Օ՛ի և յայնժամ 'ի մէջ հնոցին սուրբքն ցօղոմն վայելէին. զհուրն ոչ շիջոյց, և յայրելոյ արգել զընկեցեալսն։

Մի այսուհետև արտաքոյ հնոցին նատիցիմք, մանզոզրմն գտանելով առ աղքատսն, զի մի զնոյն կրկ-

[1] Յորմնակին ՔԷՆԴԻ։

ցեմք՝ զոր նոքայն կրեցին։ Իսկ եթէ իշեալ կայցես ընդ մանկունսն, ոչինչ այնուհետև սոնանիցէ քեզ հուրն. և եթէ 'ի վերս նստեալ անտես առնիցես 'ի մէջ բոցոյն զաղքատութիւն, այրէ զքեզ բոցն։ Այլ 'ի հուրն, զի մի այրեսցիս 'ի հրոյն. մի նստիր առ տաքոյ քան զհուրն, զի մի յարիշտակիցէ զքեզ բոցն։ Եթէ տեսանիցէ զքեզ ընդ աղքատսն, հեռանայ 'ի քէն. և եթէ օտար 'ի նոցանէ, վաղվաղակի և յարձակի և յարիշտակէ զքեզ։ Մի այսուհետև մեկնիր ցիս յանկանելն նոցա 'ի հուր. այլ յորժամ բանս տարկուն հրամայիցէ՝ զայնոսիկ որ ոչ իցէ ոսկւոյն երկիր պաղեալ՝ արկանել 'ի հնոց աղքատութեանն, մի յարկանելեսցն, այլ յարկելոցն լինիջիր. զի դատ նիցիս 'ի փրկելոցն, և ոչ յայրելոցն։ Վանգն մեծ ցօղ է չբնարնիլն 'ի ցանկութիւն մեծութեն, աղքատացն մերձաւոր լինել։ Այրա են քան զամենան ընչաւէտք, որք զցանկութիւն մեծութեան առ ոսն կոխեցին։ Վանգն և նոքա իբրև արհամարհեցին, յայնժամ պայծառացան քան զթագաւորն։ Այս դու այժմ թէ չհամարիցիս ինչ զինչս աշխարհիս, քան զամ աշխարհս պատուականագոյն լինիցիս, ըստ օրինակի սրբոցն՝ զոր ոչ արժէ աշխարհ։ Այսուհետև զի արժանի՝ երկնից լինիցիս, արհամարհեա զմեծատաւորս. զի այնպէս և աստ լուսաւոր լինիցիս, և 'ի հանդերձեալ բարութիւնն վայելիցես հնարհօքն և մարդասիրութիւն տեն մերոյ Յիսի Վանի, ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ՀԻՆԳԵՐՈՐԴ

«Լյս ամ եղև, զի կատարեսցի բանն՝ որ ասացաւ մարգարէին, եթէ ահաւասիկ կոյսն յղասցի և ծնցի որդի»։

Ի ԲԱԶՄԱՑ լսեմ ասել, թէ յորժամ մեծ եմք և յանկնդրուեթեանն վայելեմք, ամիսոփիմք. իբրև արտաքս ելանեմք, դարձեալ այլք ընդ այլոց լինիմք, և հուր յօժարութեան շիջանի։ Եւ արդ զիարդ իցէ, որպէս չլինիցի այն. դիտեսցուք տեսցուք ուստի լինի։ Եւ արդ ուստի՝ լինի մեզ այնպիսի փոփոխումն։ Ի յաձախելոյ յանսպատշաձն, և յարանց չարաց մերձաւորութեէ։ Քանզի չէր պարտ ի ժողովրդենէ ելանել, և յանպատշաձ իրս ժողովրդեանն արկանել զանձինս. այլ վաղվաղակի ի տուն դալ, և գիրս ի ձեռն առնուլ, և զկին և զորդիս ի հաղորդութիւն մտադիւրութեէ պատգամացն ընթերցուածոց կոչել, և ապա յաշխարհական իրս մատչել։ Զի թէ ի բաւ զանեաց չառնուս յանձն ի հրապարակ երթալ՝ առ ի չապականելոյ զանտի հանդիսան իրօք հրապարաւ կին, որչափ ևս առաւել՝ յորժամ ի ժողովրդենէ արձակիցիս, զնոյն պարտ իցէ առնել։ Այս աւասիկ զնորին հակառակն առնեմք, և վասն այնորիկ ամենեին զանմ կորուսանեմք։ Զև շահ ի բանիցն ասացելոց ի միտս բարւոք հաստատեալ, բաղում յորձանք արտաքնոց իրաց հասեալ՝ զանմ առեալ խոցաւցուցանեն։ Արդ զի մի այն լինիցի, յորժամ ի ժողովրդենէն արձակիս՝ մի ինչ կարևոր քան զմտադիւրութեէ բանիցն ասացելոց համարեսցիս։

Քանզի վերջին իսկ ստահակութեան է զվինդ և զվեց օր կարևոր իրաց բաժանել տալ[1], և հոգևորացն և ոչ մի օր. մնասանդ թէ և ոչ սակաւ ինչ մասն զաւուրն անձանց հնարհել։ Ղտեսանիցեք զմեր

1 Յորինակին գոյ։

իսկ մանկտին, յորժամ զուսումնն առնուն՝ հանապազ զմտաւ ածեն։ Օ՝նոյն և մեք արասցուք. ապա թէ ոչ՝ ոչինչ օգուտ գործի 'ի մեզ յայսր գալոյն, քան որք 'ի ծակ կարաս կրիցեն զօրհնանապազ. յորժամ ոչ և այնպէս փոյթ յանձին ունիմք զպատգամսն պահպանուլթէ, որչափ զոսկւոյն և զարծաթոյ ցուցանեմք։ Վակաւ ուրուք ոսկի առեալ՝ 'ի քսակ արկանէ, և կնիք 'ի վերայ դնէ. և մեք քան զոսկի և քան զականս պատուականս պատուականագոյն ընկալեալ պատգամս, և զհոգւոյն սրբոյ գանձս, չհամբարեմք [1] յոգւոցն շտեմարանս, այլ ընդ վայր և վայրապար թողումք սահել 'ի մտաց։ Այս այսուհետև ո՞ողորմեցի մեզ՝ անձանցս նենգաւորաց, և յայսչափ աղքատութիւն անկելոց։ Արդ զի մի այն լինիցի, գրեսցուք անձանց օրէնս անշարժս, և կանանց և որդւոց մերոց, զի մի օր 'ի շաբաթու զողջոյն իսկ յունկնդրուն պատգամացն ՝այ 'ի ժողովս զատանել. զի այնպէս դիւրաւ ուսանել և զայլսն ևս՝ որ ասելոց իցեն՝ կարիցեք։ Օ՝ և մեզ աշխատութիւն թեթև լինիցի, և ձեզ շահ աւելի, յորժամ զվաղուց ասացեալսն 'ի մտի կալեալ պահիցեք, նոյնպէս և զյետոյ Ճառեալսն լսիցեք. զի ոչ փոքր լինչ նպաստ յիմաստութիւն ասացելոցն լինիցի դիտել զկարգն հաւատեաւ առ 'ի մէնջ ձեզ իմաստիցն կարգելոց։ Վանզի չէ հնար զամ 'ի միում աւուր սերմանել. այլ զի բազում աւուրցն մթերից ստէպ յիշատակօք՝ իբրև շաբ լինչ յեռեալ պատիցեք զոգւովք՝ առ 'ի բոլանդակ մարմին գրոց երևելոյ։ Այս արդ զմտաւ ածեալ զմնատաւոր ասացեալսն, նոյնպէս և այսօր 'ի Ճառս որ առաջնկայ եկեսցուք։ Այս զինչ է որ առաջիս կայցէ այսօր։

"Այս, ասէ, ամ եղև, զի կատարեսցի բանն՝ որ ասացաւ մարգարէին"։ Արժանի ըստ նորա գործ սքանչելեացն՝ որպէս մարթ էր նմա Ճառել՝ Ճառեաց, յասելն՝ եթէ "Այս ամ եղև"։ Վանզի հայեցաւ 'ի խորսն անքնինս և յանդունդս այ մարդասիրութեն. զի որ ոչ երբէք և 'ի կարծիս անգամ

1 Յօրինակին Հ-ամբէմ։

էր անկեալ՝ կատարեցաւ արդեամբք։ Զի բնութեան
օրէնքն լուծանէին, և նորընծայ տուրեւառիկ փո-
փոխմունք լինէին. որ ի վերս քան զնմանեան է՝ առ այն
որ ի խոնարհ քան զնմանն էր, էջ. և կրճիմքն ի մէջ
ոգոյ բարձեալ, և արգելքն խափանիչք ի բաց փարա-
տեալ. և բազում քան զայս այլ ինն շահաւորք ի
տեղւոջն հաստատեալ։

Զայս ամ՝ և եւս առաւել՝ միով բանիւ ընծայե-
ցուցեալ Ճառեաց։ «Զայս ամ՝ ասէ, եղև, զի կատա-
ւեսցի բանն տն»։ Զի մի կարծեսցես, ասէ, եթէ
արդ ինչ եղև [1], ցուցանեմ զի յառաջագոյն էր նկա-
ւեալ. զոր Պաւղոս ի բազում տեղիս յայտ առնել
փութայր։ Լուր առաքէ զմիտս Յովսեփայ առ Լսայի.
զի Թէպէտ և զնորա բանն մոռանայցէ յորժամ ի
քնոյ զարթնչիցի, որ այն ինչ և առ ժամայն ասացան,
սակայն զմարգարէականն՝ ընդ որ հանապազ անցաւ
նէ՝ յիշեսցէ, և անտի և զայս ընդունիցի։ Զայլ
գնոջն այսպիսի ինչ ոչ ասաց. զի մանուկ էր, և այս
պիսի բանից չէր խելամուտ. իսկ առնն՝ քանզի ար-
դար էր, և զմարգարէն ընթեռնոյր, անդուստ
ուստի ընթեռնոյրն, տայր նմա հաստատութիւն։

Զոր վերագոյնն ասէ՝ եթէ զԱրիամ զկին քո.
և ասաց զմարգարէն ի մէջ բերէ ածեալ, ապա հաւա-
տայ նմա զանուն կուսութեան։ Զանզի ոչ այսպէս ա-
ռանց խռովութեան կայր մնայր, եթէ նախ զկոյսն ա-
նուն լուեալ էր. այլ ածեալ զԼսայի ի մէջ նովաւ
իբրև միջնորդաւ առնէ հաւատարիմ զանուն կու-
սութեան. քանզի ոչինչ օտարոտիս Ճառէր, այլ ընդ
որ ի բազում ժամանակաց էին ընդելեալ ի մարգա-
բէէն՝ այնու առնէր դիւրընկալ զբանն հրեշտակն։
Լու Թէպէտ և ածէ ի մէջ զԼսայի, այլ ոչ ի նա
հանդուցանէ զբանն, այլ անդր ի վերս առ ՅԾ հանէ։
Զի՞ ասէ, Լսայայ է բանդ, այլ ամենեցունցն ՅԾ։
Զի՞ այնորիկ ոչ ասաց, Զի կատարեսցի՝ որ ասացաւն
ՅԼսայայ, այլ Թէ «որ ասացաւն ի նոսա»։ Զանզի
բերանն Լսայայ էր, և յայտնութիւնն ի վերուստ։
Լու զինչ ասիցէ յայտնութիւնն։

[1] Յորինակին ԵՂԻ ԻՆԼ։

«Լ.հաւասիկ, ասէ, կոյսն յղասցի և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն նորա Եմմանուէլ»։ Լ.ւ ընդէր, ա՛սեն, ո՛չ կոչեսցաւ Եմմանուէլ, այլ Յի՞ս։ Ա՛յն զի ո՛չ ասաց, եթէ կոչես, այլ թէ կոչեսցեն բաղումք. այսինքն է ըստ իրացն 'ի գլուխ ելանելոյ զնէ զեմմանուէլն անուն. քանզի սովորութիւն իսկ է գրոց, ըստ դիպելոյ իրաց ինչ՝ նոյնպէս և զանուն իրացն դնել։ Լ.ւ արդ ո՛չ այլ ինչ է իմանալ զկոչեսցեն զաւնուն նորա Եմմանուէլ, այլ զի գիտասցեն զնոյն ընդ մարդկան։ Ա՛ինչ և յաւիտենից եղև ընդ մարդկան, այլ ո՛չ այնպէս յայտնապէս։

Լ.ոյա թերևս պնդեալ կայցեն յանառակութեան հրեայքն, եթէ ո՛չ այդպէս է։ Հարցցուք և մեք ընդ նոսա, եթէ ուր երևեցաւ մանուկ տղայ՝ վաղվաղակի աւաղ հարկանել, արագարագ զսպուռ ժողովել։ Լ.ՍԼ գիտեմք թէ ո՛չ ուստեք կարէն ցուցանել։ Լ.ւ զնարդ ասեր մարգարէն, եթէ կոչեա զանուն նորա վաղվաղակի զաւաղ հարկանիջիր, փոյթ ընդ փոյթ զապուռ ժողովիջիր։ Լ.ՍԼ քանզի 'ի ժամանակին յոբում ծնաւ մանուկն, առ աւաղ և ժողովեցաւ ապուռ, ըստ իրացն դիպելոյ եդ նմա զանուն։ Լ.ւ դարձեալ եթէ կոչեսցի քաղաք արդարութիւն՝ մայր քաղաքաց հաւատարիմ Սիոնն։ Ա՛յ ուրեք տեսաւ նեմք եթէ արդարութիւն քաղաք կոչեցաւ, այլ կաց մնաց նոյն անուն քաղաքին Լ.րուսաղէմ։ Բայց քանզի 'ի ժամանակի անդ այնպէս ինն դիպեցաւ, զի 'ի յոռութեց 'ի լաւութիւնս փոխեցաւ, վասն այնորիկ ասէ այնպէս կոչել։ Յորժամ իրք ինչ դիպիցին՝ որ յորջորջմամբն յայտնի ծանօթ առնիցեն զնորին ուղղիչ, կամ զվայելելիսն 'ի նմին, զկրացս ճշմարտութիւն կոչէ նմա անուն։

Իսկ եթէ յայտմանէ ըմբերանեալք՝ այլ ինն խրնդիր 'ի մէջ բերիցեն, աղարտել զկաւսութիւն կուսին, եթէ գտանեմք զի այլ թարգմանք ո՛չ կոյս թարգմանեցին, այլ աղջիկ. նախ զայս ասացուք, թէ քան զայսն ամենն արժանի հաւատարմութիւն իւթանասունքն են. այլքն յետ գալստեանն Քրիստի՝ հրեայք ինացին, և յիրաւի կարծելիք են։ Քանզի և ընդ հակառակս ելեալ ասէին, որ և թշնամիք իսկ էին նո-

բա. և մանաւանդ հրեայքն, որ և զմարգարէութիւնն անհետ հնարէին առնել։ Իսկ եւթանասունքն՝ յառաջ քան զՀարիւր ամ՝ և ևս աւելի քան զգալուսան Քրիստոսի՝ ի նոյն զումարեալք, և այնպէս ազատ են յայսպիսի կարծեաց, նախ ժամանակաւն և ապա բազմութեամբն. և զի զմի բան ասացին ամենեքեան, առաւել պարտ և պատշաճ է հաւատալ։

Եպա եթէ և զայլոցն ևս վկայութիւնս ջանայցեն հաստատուն հանարել, սակայն և այնպէս մեր գտանի յաղթութիւն. զի և զմանկութենն անուն սովոր են դիրք՝ կուսութեան անուանել։ Զի որպէս անդ աղջիկն ասի, այսինքն է մանուկ, սոյնպէս և աստ. ոչ միայն զկանանց, այլ և զարանց, թէ «Գրիտասարդք և կուսանք, ծերք և տղայք»։ Զոր յայտ առնէ, թէ որպէս զկուսանաց, նոյնպէս և զերիտասարդացն իբրև զկուսանաց ճառէ. զի ցուցցէ թէ մանուկն աստեղ և կոյս և աղջիկ, նոյն միտք են։ Զոր աւելագոյն այսու հաստատի եթէ այս այսպէս է, զի Մովսէս յորժամ բռնազբօսելոյ ուստեր աղջկանն լինէր ջատագով՝ ասէ, եթէ «Խարբառ արկանիցէ աղջիկն, այսինքն է կոյսն, ապա անպարտ է»։ և առաջինն ասացեալքն զսոյն բան յայտ առնեն։ Զա և ոչ վայրապար ինչ ասէ, եթէ ահաւասիկ կոյսն յղասցի. այլ նախ ասէ՝ թէ ահաւասիկ տացէ տեր ինքնին ձեզ նշան. և ապա ի նոյն յարէ, թէ ահաւասիկ կոյսն յղասցի։ Զի թէ չէր կոյս որ յղանալոցն էր և ծնանելոց, այլ ըստ ամենամութեամբ օրինաց իբրեն գործեին, զինչ ինչ նշանք էին, որ չէին նշանք. զի նշանին պարտ է զգաղմաց սովորութենն անցանել կարգաւն, և նոր և չքնաղ երևեալ. ապա թէ ոչ՝ զիարդ իցէ նշան։

«Յարեաւ, ասէ, Յովսէփ ի քնոյ անտի, և արար որպէս և հրամայեաց նմա հրեշտակն Տեառնայնոյ»։ Տեսանե՞ս զհնազանդութենն և զհլուսական միտսն. տեսանե՞ս զարթուն և զզուարթուն ոգիսն, որ ամենևին անխիղճ էր։ Զի մինչ ի կարծիսն իսկ էր, ոչինչ դժուդակ կամ՝ անարժանս առնոյր յանձն անցուցանել ընդ կոյսն, և ոչ յետ ազատելոյ ի կարծեացն՝ ի

բաց հանել. այլ կայր 'ի հարկի, և ունէր սպաս ՀԱՄ անտեսութեան։

«Եւ, ասէ, զԱՀարիամ զկին իւր»։ Տեսանէս, զի ստէպ զկինն իւր ասէ աւետարանիչն. զի յայտ արասցէ՝ եթէ ոչ կամի վաղվաղակի զխորհուրդն յայտնել, զի և զբար կարծիսն 'ի միջոյ բառնայցէ։

«Եւ, ասէ, և ոչ գիտաց զնա, մինչև ծնաւ զորդին իւր զանդրանիկ»։ Եւ մինչն ասելով ասա, ոչ զի կարծիցես եթէ յետ այնորիկ գիտաց զնա, այլ զի ուսանիցիս եթէ յառաջ քան զծնունդն և յետ ծնդեանն յամ կարծեաց անսրատ էր։ Եւ ընդէր, ասեն, բնաւ զմինչն եդ 'ի միջի։ Պատմէ, եթէ սովորութիւն է գրոց զբանս զայս ասել բազում անգամ, և ոչ իբրև սահմանեալ իրաց ժամանակ ինչ գնել։ Զի և առ տապանաւն ասէ, եթէ «Եւ ապուանն, և անդրէն ոչ դարձաւ, մինչև ցամաքեցաւ երկիր». և յայտ է՝ թէ և ոչ յետ ցամաքելոյն դարձաւ անդրէն։ Եւ զոյ Հառեալ ասեն զիրբ, եթէ «Յաւիտենից մինչև յաւիտեան դու ես». ոչ թէ սահմանս ինչ գնել անդ։ Եւ դարձեալ տայ աւետիս, եթէ «Ծագեսցէ յաւուրս նորա արդարութիւն՝ և բազում խաղաղութիւն, մինչև բարձցի լուսին». և այսու ոչ եթէ կատարած ինչ տայ բարութեցն, այլ հանապազորդ հաստատութիւն։

Այսպէս և ասա մինչն ասելով, զառաջին անսրատութիւն կուսին նախ քան զծնանել յայտ առնէ, և քեզ տայ միտս իմանալ նոյնպէս։ Զի որ ինչ կարեւորն էր քեզ 'ի նմանէ ուսանել, զայն ինքն ասաց, եթէ անսրատ էր կոյսն մինչև ցծնունդն. և զոր ինչ յետ այնր 'ի նորա ասելոյ անտի պարտ է քեզ իմանալ, զայն քեզ եթող Հանապել։ Զի չէր ինչ օրէն՝ յետ լինելոյ մայր այնպիսի ահագին ծնդեան, և նորագործ և չքնաղ երկանց արժանի լինելոյ երկնից, եթէ յայլ ինչ մտաբերիցէ։ Այս և Յովսեփայ արդարութիւն յետ 'ի վերայ հասանելոյ այնպիսի սքանչելի ծննդեանն, չՀաւանէր Հաղորդել 'ի խառնս ամուսնութեան։ Զի թէ էր, և մերձեալ էր 'ի նա, և ունէր 'ի կարգի կանանց, ապա զինքրդ իբրև զանվերակացու՝ որոյ ոչ ուրեք ոք գտանիցի, առնէր յանձն աշա-

կերտին, և հրամանն տայր զի յիւր տուն տանիցի։ Բ.Յլ զիարդ, ասեն, եղբարք նորա անուանին յա-կովբեանք։ Բ.սեմք, թէ որպէս Յովսէփ այր կարծէր Մարեմայ, նոյնպէս և նորա եղբարք։ Բ.Ամանդ բա-զում ինչ վարագոյրք ձգեցան առ 'ի ծածկել զանպէ-սի ծնունդ։ Մ ասն որոյ և աւետարանիչն Յովհան-նէս այնպէս ինն կոչէր զնոսա, "Եւ և ոչ եղբարքն իւր հաւատային 'ի նա"։ Բ.Յլ սակայն որք յառա-ջագոյն ոչ հաւատացին 'ի նա, ապա յետոյ զարմա-նալիք և երևելիք լինէին։ Զ լ յորժամ ելին Յորդա-նան գետէն Պաւղոս և այլքն յառաքելոցն 'ի խնդիր կրօ-նիցն, ասէ՝ թէ նախ առ Յակովբոս մտին։ Բ.Ա այն-պէս էր զարմանալի, զի նախ իսկ եպիսկոպոսութեան աստիճան նմա հաւատացաւ։ Բ.Ա այնպիսի, ասեն, խիստ վարս ունէր յանձին, զի ամ անդամքն կեն-դանւոյն մեռեալ էին, 'ի ստէպ աղօթիցն և հանա-պազորդ ծունր դնելոյ՝ ձակատն կաշացեալ, և ծունկ-քին իբրև զուղտու դերծեալ և ցամաքեալ։ Բ.Յս-պէս և յետ այսորիկ 'ի միւսանգամ Պաւղոսի Յորդա-նան գետէն ելանել՝ տայր խրատ, թէ տեսանես եղբայր՝ ուրչափ բիւրուց բեւրք են հրեից եկեալ այսր ժո-ղովեալ։

Բ.Յսպիսի ինն միտս և իմաստութիւն և նախանձ ու-նէին. մանաւանդ զի զԲ.ոի իսկ զօրութիւն։ Զ լ որք բամբասէին զնա մինչ կենդանին էր, յետ մա-հուն այսպէս զարմանային, զի վասն նորա և մեռա-նել մեծաւ ցանկութիւն փափաքէին. և այն իսկ էր որ առաւել զյարութիւն ցուցանէր զօրութիւն. և վասն այսորիկ մեծամեծքն առ յապա պահէին, զի առանց երկմտութեան ցուցանիցի հանդէսն։ Բ.Ամանդ որ ընդ կենդանիսս զարմանամք, յորժամ մեռանին՝ ոչինչ այնպէս յիշեմք. իսկ արդ զիարդ արդեւք, զի մինչ կենդանին էր՝ ծաղր առնէին, և յետոյ քարոզէին՝ թէ ՀԾ է։ Զ լ թէ մի որ 'ի բազմից էր, ապա զիարդ վասն միոյն առնուին յանձն կոտորիլ բազումք, եթէ ոչ յայտնի զյարութեան ձշգրտեցին զհաստատութիւն։

Եւ զայս ոչ զի լսիցէք՝ ասեմք, այլ զի և արու-թիւն նոցա նմանօղք լինիցիմք, և համարձակութիւն և բնաւ արդարութիւն. զի մի զանձն 'ի կոր ոք կործա-նիցէ, թէպէտ և յառաջադոյն ծոյլ էր, մի յայլ ինչ ապաստան լինել յետ այ ողորմութեան, այլ յան-ձին առաքինութիւն։ Օ ի թէ նոքա ոչինչ յաղգակա-նութենէն [1] և 'ի տանէ և 'ի քաղաքէ շահեցան, զոր ընդ Ինի ունէին, մինչև զառաքինութիւն ցուցին, մեք յորմէ՞ ներել թողութիւն վայելեսցուք, եթէ ա-պաստան յաղգականն և յեղբարս արդարս լինի-ցիմք, և մեր չիցէ 'ի հեղութիւն և յառաքինութեան կեցեալ։

Եւ Արդարէն զսոյն իսկ ակնարկեալ ասէր, «Երդայք ոչ փրկէ և ոչ փրկեսցէ մարդ»։ Թէպէտ և Մովսէս և Սամուէլ և Երեմիայ իցեն։ Եւ արդ-լուր զինչ ասէր ցնա ՝ած. «Մի առներ աղօթս վասն ժողովրդեանդ, զի չեմ լսելոց քեզ»։ Եւ զի՞ զարմանայցես՝ եթէ քեզ ոչ լսեմ. եթէ Մովսէս իսկ գլխովին մեռ էր և Սամուէլ, և զնոցա պաղատանս վասն դոցա չընդունէի։ Եթէ Եզեկիէլ իցէ և ա-ղաչիցէ, զայն լսէ. «Եթէ յարիցեն Նոյ, Յովբ և Դանիէլ, զուստերս իւրեանց և զդստերս չկարիցեն ապրեցուցանել»։

Եւ եթէ Նահապետն իսկ Աբրահամ, և վասն չբժշկելոցն 'ի հիւանդութենէ և անդարձից պաղա-տիցի, թողու զնա ՝ած և զնայ, առ 'ի չընդունելոյ զպաղատանսն վասն նոցա։ Եւ եթէ Սամուէլ իցէ դարձեալ որ զնոյն առնիցէ, հրամանն տայ նմա չառ-նուլ սուգ վասն Սաւուղի։ Եւ եթէ վասն քեռ ոք անդէպս ինչ աղաչիցէ, լսէ դարձեալ զոր Մովսէսն լուաւ. «Եթէ թքանելով թքեալ էր ընդ երեսս նո-րա հօր, չէր պարտ ամաչել»։ Եւ արդ մի յայլս պանծանալ։

1 'Ի լուս. յանդամանութենէն։

Ամենին զօրուն մեծ սրբոցն աղօթք. այլ յորժամ և մեք ապաշխարիցեմք, և լինիցիմք պիտանիք։ Եւ և Մովսէս զեղբայրն իւր և հազարս վեց հարիւր յաճախասատ բարկութենէն ապրեցոյց, և զբոյրն չկարաց ապրեցուցանել, թէպէտ և չէին հասարակաց մեղքն. զի նա զՄովսէս թշնամանեաց, և անդ ամպարշտութիւն էր ժողովութիւնն։ Այլ զայս խնդիր ձեզ թողից. բայց զևս դժուարագոյնսն ջանացայց լուծանել։ Օ՛ինչ պիտոյ իցէ ասել զքեռուն. որ այնչափ բազմութիւն եղև պաշտպան, անձին ինչ ոչ կարաց վնասել. այլ յետ բազում աշխատութեանց և տառապանաց, և քառասնամեայ ժամանակի հանապազորդուն, արգելոյր յերկիրն մտանելոյ, վասն որոյ այնչափ աւետիք և խոստմունք էին։ Եւ զինչ ինչ այնր պատճառք իցեն։ Զեր ինչ շահաւոր այն չնորհ. այլ և կարի իսկ փնասակար, և զբազումս 'ի հրեից գայթակղեցուցանել կարէր։ Եթէ մինչև Յոզիսպոսեն միայն զերծան, զոմն թողեալ զՄովսէս խնդրելին, և ամենևին զնմա նմա համարելին, եթէ զանեն ևս տեսեալ էր յերկիրն պարգևաց, յորպիսի ամպարշտութիւս ոչ ոտնառեալ կոծանեին։ Զմին իրի իսկ չեղև յայտնի գերեզմանն նորա։

Եւ Սամուէլ զՇաւուղ չկարաց ապրեցուցանել 'ի վերին բարկութենէն, և զիսրայէլացիսն բազում անգամ փրկեաց։ Եւ Յրեմիայ հրեից չեղև բաւական, և այլ ինն ծածկեաց 'ի մարգարէութիւն։ Եւ Դանիել զխուժդուժսն՝ որ 'ի մահ մատնելոց էին՝ ապրեցոյց, և զշրեայսն որ գերելոց էին չզերծոյց։

Զա և յաւետարանսն տեսանեմք, ոչ յայլ՝ այլ յինքեանս զերկոսին գործեալ. և զնոսն մերթ անձին բաւական լեալ, և մերթ այլով կարօտ. որ զբեռ տաղանդն պարտ էր, և պաղատեցաւ, զանձն 'ի պատժոյն ապրեցոյց. և զարձեալ չկարաց ինչ վնասել։ Եւ միսն անդրէն յետս ընդդէմ՝ նախ անձին մտանն եղև, և յետոյ բազում ինչ ինքեան կարաց. և ով որ նա իցէ, որ զՀայրենի արարսն վատնեաց։ Արդեսն զի թէ ծուլայցեմք, և ոչ այլովք կարեմք ապրել. և եթէ արթուն կայցեմք, և անձամբ և այլովք զնոսն վնասեմք. քանզի և ուրեմն մեզ իսկ կամի զՀորդանն, և

ոչ այլոց վասն մեր։ Այլ արդ զի 'ի համարձակութենն վայելիցեմք, և լաւագոյնք լինիցիմք, փութասցուք փարատել յանձանց զարկութիւն. զի այսպէս քանանցուցին ողորմեցաւ. նոյնպէս և զպոռնիկն ապրեցոյց. ըստ նմին օրինակի և զաւազակն առանց ուրուք միջնորդութեան և վերակացու լինելոյ։

Օ այս ասեմ, ոչ զի չաղաչիցեմք սրբովք, այլ զի մի՞ ծուլայցեմք. և մի յուլացեալ և յայլս ապաստան ևեթ զանձինս առնիցեմք։ Այանզի և ասէ՝ "Աբարէք ձեզ բարեկամս". և ոչ յայնմ միայն եկաց, այլ և յաւել՝ թէ 'ի մանանայէ։ Օ զի դարձեալ քո քեզոյն լինիցի ուղղութիւն։ Այլ ոչ այլ ինչ՝ եթէ ոչ զողորմածութիւն ակնարկեաց աստ։ Այլ որ զարմանալն իսկ է, ոչինչ ձշդիւ պահանջէ 'ի մէնք ցաճնուլ յանօրէնութենէ։ Այլ որ ասէն, այս ինչ է։ Ստացար չարաչար, ծախեա բարոք. ժողովեցեր անիրաւութիւն, սփռեա արդարութիւն։ Թէպէտ և զի՞նչ ինչ այն առաքինութի իցէ՝ յայնպիսեացն տալ. այլ քանզի մարդասէր է ած, և ըստ այնմ զիջանէ. դեթ այնպէս առնիցեմք, բաղում բարութիւս խոստացաւ մեզ։ Այլ մեք յայնպիսի յանհանձարութիւս հասաք, մինչև յանիրաւութենէն չտալ. այլ թէ և բիւրապատիկ յափշտակեալ իցէ, և սակաւ ինչ տայցեմք, զնմա համարիմք կատարեալ։ Ընդունցես Պաւղոսի որ ասէ, "Որ սերմանէ ձշդելով, ձշդելով և հնձեսցէ"։ Այլ արդ ընդէր ձշդիցես. միթէ ծախք ինչ իրքն իցեն, միթէ թոշակ։ Այլ սակ և վաճառաշահ իցէ։ Որոյ սերմ է, անդ և բազում տոհմականք. ուր սերմ է, անդէն և հունձք 'ի մնոյ։

Պաւ եթէ զերկիր պարարտ և զհիւթեալ՝ որ բազում զօրութիւն ունէր, գործելոց էիր, և զքո զնմա ծախէիր, և յայլոց ևս փոխ առնուիր. քանզի ինաստակար զայնպիսի ձշդութիւն համարեիր։ Այակ գաւաւադիկ որ զերկինս գործելոց ես, որ ոչ և ընդ իւիք անհարթութիւք օգոց կայ, այլ ամենևին հատուցանելոց է բազում յաւելուածով՝ զսերմանսն ցանեալս, զանդաղես և յապաղես, և չառնուս 'ի միտ՝ թէ խըստայէն կորուսանել է, և չինայէն շահել։

1 Յօրինակին յ-ե-ն-ն։

Ապառեալ այսուհետև, զի մի կորուսանիցես. մի կցրեալ ունիր, այլ հան զի պահիցես, ծախեա զի շահիցես։ Լիա և պահել ինչ պարտ իցէ, մի դու պահեր, քանզի կորուսանես, այլ յԱծ ապատան արա. զի չիք ոք որ անտի յափշտակիցէ։ Մի դու քեզէն արկաներ 'ի վաճառ, քանզի չգիտես շահել. այլ տուր փոխ նմա, որ աւելի քան զդուրին՝ զտոկդ սիմն տայ։ Ընդդէմ փոխս տուր, ուր չիք նախանձ, ուր և ոչ մի ինչ ամբաստանութիւն, ոչ նենգութիւն, ոչ կասկած։ Տուր փոխ նմա, որ չէն իւիք կարօտ, և վասն քո զնամ հնարի. և քաղցելոյն[1], զի մի սովամահ լինիցիս, և աղքատացելոյն, զի դու մեծանայցես։ Տուր փոխ՝ ուստի ոչ մահ, այլ կեանս ընդ մահու է շահել։ Օ՛ի սոքա զարքայութի, և նոքա զգեհենն առթեն, զտոկոսեացն ասեմ. նոքա արծաթասիրութեան, և սոքա իմաստութեան են. նոքա անագորոյնութեան, և սոքա մարդասիրութեան։

Լու արդ զոր պատասխանատուութի ունիցիմք, յորժամ և բազմապատիկ հասանիցէ առնուլ, և զգուշութի, և 'ի կարևոր ժամանակի, և բազում առատութի, և առանց բամբասանաց և երկիւղի և տագնապի, թողեալ զայն շահել, և զհետ յոռեացն և անպիտանեաց և սխալաւորաց և վրիպելեաց ընթանայցեմք, որ զսաստիկ հնոցն առթիցեն մեզ։ Չիք ինչ և չէ իսկ քան զտոկոսին յոռութեան և անագորոյն մնաց. զայլոց վնաս շահաւաճառ հատարի այնպիսին, և բերս բարութեց զընկերին խառուանս գործէ, և վարձս պահանջէ ընդ մարդասիրութեն, զահի հարեալ թէ գուցէ ողորմած երևեսցի. և 'ի կերպարանս մարդասիրութեան խորագոյնս փորէ զխորխորատն. 'ի պատճառս օգնականութեամբէ զտանկութին. և ձեռնտու լինելով մեզ գլորել. և իբրև նաւահանգիստ կալեալ ծովակոծութեամբ մնանէ, իբրև 'ի խութս և 'ի վիմուտս և 'ի քարայրս ընդ ջրով խորտակէ։

Լ՚այլ զի՞նչ հրամայիցես, ասէ. զժողովեալ արծաթն՝ որ ինձ ինչ շահ չբերէ, ընկերին 'ի գործ տալ,

1 Յորինակին Ն գալոյնոյն։

և վարձս ինչ ոչ պահանջել։ Զն անդ, չասեմ զայդ. այլ կամիմ իսկ ուժգին վարձս առնուլ, և ոչ դոյզն ինչ և սակաւ, այլ առաւել յոյժ. փոխանակ ոսկւոյ զերկինս կամիմ առնուլ քեզ տոկոսիս։ Զի զի՞ պաշարեաս զանձն 'ի մնանկութի, և 'ի գետին ընկեցեալ քարշես, և փոքունս ընդ մեծամեծաց պահանջես. զի այնպիսեացն է որ չգիտիցին մեծանալ. յորժամ ՚ուն ընդ սակաւ ընչից զերկնից բարութիւն շնորհեսցէ քեզ, և դու ասիցես, մի զերկինս տար ինձ, այլ փոխանակ երկնից զոսկին կորստական։ Եւ այն այնպիսւոյ է՝ որ յաղքատութենն կալ մնալ կամիցի. իսկ որ մեծութեամբ և ընչաւէտութենն ցանկանայ, ընդ մնացականսն նախ քան զկորստականս, և ընդ անծախսն յառաջ քան զվատնելիսս, և ընդ բաղումս նախ քան ընդ սակաւս, և ընդ անմահն յառաջ քան ընդ երդծանելիսս հաձի. զի և այս ևս ընդ այնմ գայցէ։ Իսկ որ զերկիր յառաջ քան զերկինս խնդրէ, և յայսմանէ ևս անկանի. և որ զայն քան զայս մեծարոյ համարի, յերկոսին վայելէ բաղում յոժարութ[1]։ Որ զի և մեզ լեցի արհամարհել զաստիսս ՚ուն՝ և հանդերձելոց բարութեցն ցանկաւ ցուք. զի այնպէս և այսմ և այսմ հասցուք շնորհօքն և մարդասիրութի՚ն մերոյ Յիսի Քրիստի. ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1 'Ի լուս. յոմախառնեամբ։

ՃԱՌ ՎԵՑԵՐՈՐԴ

«Յոյն ծնանէին 'ի բեթղահեմ հրէաստանի՝ յաւուրս Հերովդի արքայի, ահաւասիկ մոգք յարևելից եկին Յերուսաղէմ, ասէին, ո՞ւր է նորածին արքայն հրէից»։

ԲԱԶՈՒՄ տքնութեամբ պէտք էին և ստէպ աղօթից, զի կարիցեմք 'ի դէպ մտանել և ելանել 'ի Ճառէս, եթէ ուստի մոգքն իցեն, և կամ ուստի եկին, և կամ ո՞րպէս կամ ո՞յորդորեաց և ած, կամ զինչ ինչ ասացն իցէ։ Այլ մանաւանդ թէ կամիցիք, նախ զոր ինչ թշնամիք Ճշմարտութեան ասեն՝ զայն 'ի մէջ բերցուք։ Այնպէս իմն հնչեաց 'ի նոսա ասացեալ, զի և ասացի վաւիցին ընդդէմ Ճշմարտութեամբ բանիցն։

Այս արդ զինչ իցէ զոր ասիցեն։ Ահաւասիկ, ասեն, և 'ի Յոյն ծնանդեան ասաց երևեցաւ. որ է նշանակ հաստատուն ցուցանելոյ զաստեղագիտութիւն։ Այս արդ զիարդ. եթէ ըստ օրինաց աստեղագիտութեանն էր ծնեալ, քակէր զաստեղագիտութիւն, և բառնայր 'ի միջոց զբախտն և զհրամանս [1], զդէս ըմբերաներ, և զմոլորութիւնն առնէր հալածական. և զամ ինչ զայնպիսի զհայթայթանս և զմեքենայս կործանէր։

Այս զիարդ մոգքն 'ի նորա աստեղէն ուսանէին՝ եթէ թագաւոր է հրէից, որ ո՞չն է այսմ թագաւորութիւն թագաւոր. ըստ այնմ զոր ցՊիղատոսն ասաց, եթէ «Իմ թագաւորութիւն չէ յայսմ աշխարհէ»։ Կա և ո՞չ այնպիսի ինչ եցոյց. ո՞չ սպասաւորս, ո՞չ առաջնորդս կամ վերջապահս, ո՞չ երիւարս և ո՞չ անդրուվարս, և ո՞չ այլ ինչ այսպիսի՝ որ թագաւորաց սպասք և պատիւք իցեն. այլ 'ի գձուձ և յանարգ կերպարանս. և երկոտասան այր տգէտք և տառապեալք, որ 'ի նա էին յարեալք։ Իսկ եթէ և թա-

1 'Ի լուս. զնմայս։

գաւառ և սի գիտէին զնա, վասն էր իրիք գային առ նա արդեւք։

Այս և չէ իսկ աստեղագիտութիւն արուեստ՝ յաստեղաց ճանաչել զծնունդս, այլ 'ի ժամուց ծննդոցն յառաջագոյն ասել զլինելոց ինչ իրս, որպէս լսեմք։ Իսկ նոքա ոչ յերկուսին մօտ էին առ մայր մանկանն, և ոչ զժամանակն գիտէին՝ յորում ծնաւն. և ոչ անդէն յաշխարհին, ուր ծնաւ մանուկն, արարին սկիզբն խմանալոյ զգնացս աստեղն, եթէ անտի ճանապարհեցեն զիրս ինչ առ յապա լինելոց. այլ այլ ընդայլոյ ինն իրքն երևէին։ Օր 'ի յառաջ քան զաւուրս ժամանակս աստղ երևեալ տեսանէին յիւրեանց աշխարհին, և գայլն խելամուտ լինել նորածին ծնընդեանն։ Որ և այս իսկ քան զառաջինն աւելագոյն երկմտութիւն էր։ Օր 'ի ոմ ոք հաւանեցոյց զնոսա, կամ որպիսի ինչ բարութիւնց յոյս յորդորեաց հաստանել անցանել զայնչափ վայրս, գալ երկիր պագանել թագաւորին։ Օր թէ նոցա իսկ էր թագաւորելոց, սակայն և այնպէս չէր ինչ 'ի ճահ թէ այնչափ աշխատ ինչ լինիցին։ Այս և թէ յարբունական և տաճարս էր ծնեալ, 'ի կեանս և 'ի թագաւորութեան հօր մանկանն, թերևս այսպէս մարթ և էր կարծել, թէ յաղերս անկեալ ինչ կամիցին հաճոյ լինել թագաւորին, և վասն այնորիկ եկեալ երկիր պագանիցեն արքայորդւոյն որ ծնաւ. և այնու յառաջագոյն բազում պատճառս խնամոց անձանց կուտիցեն։ Իսկ նա արդ ոչ իւրեանց ակն ունէին թագաւորելոց, այլ այլում օտար ազգի, որ և յաշխարհն անտի իսկ նոցա հեռի էր. և ոչ 'ի չափ արութեան զմանուկն տեսանէին. և արդ վասն էր զայնչափ ճանապարհս յանձն ունէին հատանել երթալ յօտար աշխարհ, և պատարագս և տանել։ Այլ զի կասկածէին 'ի վիշտս և ինչ մատնել. քանզի Հերովդէս իբրև լուաւ՝ խռովեցաւ, և գռեհիկք ազգաց ժողովրդեանն աղմկեալ դղրդէին, յորժամ զհամբաւն լսէին։

Այլ թերևս ասիցես, եթէ նոքա յառաջագոյն այսպիսի ինչ իրաց չէին տեղեակ։ Այսմ, թէ վայրապար խօսիս։ Այնթէ կարի անմիտք էին, սակայն

գիտէ պարտէին զնամ. զի 'ի քաղաք մի թագաւորութեան մտանէին, և համբաւ հանէին, զի այլ թագաւոր քան զայն որ կայրն 'ի ժամանակին՝ ցուցանէին. ոչ ապաքէն յառաջագոյն առնէին զանձինսն մահապարտս։ Այլ զինչ որ էր բնաւ որում երկիր պագանէին։ Անուկ 'ի խանձարուրս պատեալ։ Օ՛ի եթէ այր որ 'ի չափս արութեան հասեալ էր, գոյր արդեւք ասել, եթէ վասն զի ակն ունէին՝ անձանց օգնականութեան ինչ 'ի նմանէ գտանել, յանդգնեցան տալ զանձինս 'ի մահ։ Սակայն և այն վատթարագոյն իմն անմտութիւն էր. զուրբանց աշխարհին թագաւորն թողուլ, և 'ի հրէից արքայն 'ի հեռաւոր՝ պաշտպանել. զազգ և զտոհմ և զաշխարհ ըզտուն և զկեանս թողուլ, և եկեալ յաշխարհ մի օտար՝ այլում թագաւորի տային զանձինս 'ի ծառայութեան։

Սակ եթէ այս անմտութեան իցէ, միւսն ևս անմտագոյն յիմարութեան. վասն որոյ այնչափ ճանապարհս հատին անցին գալ երկիր պագանել, զբաղձումն խոռվեցուցանել, և գալ վաղվաղակի։ Օ՛ինչ ինչ արդեւք նշանակ թագաւորութեան տեսանէին յայնմ՝ որում երկիր պագանէին. այլ խուզ և մտուր մանուկ 'ի խանձարուրս. և զՀայրն և զմայրն աղքատս և տառապեալս։

Այս որպիսի՞ ինչ արդեւք պատարագս բերին, կամ վասն որոյ իրաց։ Որ՞ եթէ օրէ՞նք ինչ էին նոցա, կամ սովորութիւն, ա՞մ՝ ուրեք՝ ուր 'ի թագաւորութեան ոք ծնանէր, երթալ այնպէս ընծայիւք մտանել 'ի պաշտօն և ողբել, մինչև յաթոռ թագաւորութեան իցէ հասեալ տղայոյն։ Սակայն և այնպէս չէ՞ ինչ 'ի դէպ բանք խօսելոյ։ Այլ եթէ վասն մնտաւոր ինչ պարգևաց գային երկիր պագանել, զի առնուլ ինչ 'ի մանկանէն ակն ունէին։ Այրն աղքատ և տառապեալ՞ և չէր ինչ ուստեք ձեռնհաս շնորհել։ Սակ եթէ առայսպա ժամանակս ակն ինչ ունէին կենաց, ուստի՞ զիտէին եթէ յիշեսցէ զերախտիս մանուկն, որ պատեալ կայր 'ի խանձարուրս։ Այլ եթէ մայրն յետոյ յիշեցուցանէր, սակայն և այնպէս պատժոց արժանի էին, և ոչ պարգևաց. զի յայտ յանդիման 'ի մահ

մասանեցին զմանուկն։ Վասնզի ի նոցա իսկ համբաւէն ի նախանձ մտեալ Հերովդէս՝ խոովէր, ելեալ յայց և ի խնդիր մանկանն՝ սպանանել։ Վասնզի ամ ուրեք յորժամ նորընծայ ինչ անուն թագաւորուն ելանիցէ, անդէն յառաջին հասանիցն առնի այց և խնդիր. զի ուր ուրեք գտանիցի՝ անդէն վաղվաղակի մեռանիցի. և բազում Ղգուշնս և պատերազմունս անձամբ անձին յարուցանէին ի վերայ։

Տեսանես որչափ վիշտք և աղէտք և Ղգուշք բազումք երևէին յայնպիսի իրաց. զի թէ ըստ մարդկեղէն կարգի և ըստ հասարակաց սովորութեանն զիրսն քննեսք, ոչ զայս միայն, այլ և մեծամեծս քանզոր ասացաքս՝ էր յուղեալ խնդիրս։ Բայց զի մի տարակոյս ի տարակոյս կցեալ՝ ցնորեցուցանիցեմք ինչ զձեզ, ծն առեալ ի խնդիրսն զոր արկաք առաջի լուծանիցեմք, և սկիզբն արարեալ լուծմանն յասացեղէն։

Օր եթէ ի վերայ հաւատեաւ հասանիցեմք, զինչ ասացն իցէ՝ կամ որպիսի ոք, եթէ մի ի բազմաց իցէ՝ կամ թէ օտար յայլոցն, և եթէ արդարև ասաղ իցէ՝ կամ թէ կերպարանօք ևեթ ասաղ, դիւրագոյնս և զայլսն ևս ամ իմանայցեմք։ Եւ արդուստ լինիցի այս յայտ, բայց թէ անդստին ի գրեալսցն. զի ոչ մի ի բազմաց էր ասաղն. մանաւանդ զի ոչ ասաղ իսկ, որպէս ինձ թուի, այլ զօրութիւն մեր անարևայթ յայն կերպարանս երևեալ։ Վասն ի գնացիցն իսկ յայտ է. զի ոչ է և չէ իսկ ասաղ այնպէս գնալ և առաջնորդել զՀանապարհն։ Այլ թէպէտ և զարեգականն ասիցես, կամ զլուսնոյ, կամ զայլոցն ամ ասաղեաց, յարևելից յարևմուտս երթան հասանեն։ Իսկ նա ի Հիւսիսոյ ի հարաւակողմն կոյս գնայր. քանզի պաղեստինացւոց աշխարհն ի հարաւոյ կուսէ պարսից կայ։

Դարձեալ և ի ժամանակէ անտի է պատշաճ ըգնոյն իմանալ։ Օր ոչ գիշերի երևեր, այլ ի տուէ և ի մէջ արեգականն Ղառագայթից ծագեր, որ և չէր իսկ ասաղ զօրութիւն. նա և ոչ լուսնի անգամ. զի թէպէտ և այնպէս առաւելագոյն է քան զամ առաւեղս, յերևել Ղառագայթից արեգական ծածկի և

նուազն։ Իսկ սա իւրով առաքինութեամբ՝ լուսաւորութեամբն և զարեգական և Ճառագայթս խախտեր և քաքսայեր, լուսաւորագոյն քան զնոսա երևելանն. զի այնպէս մեծապայծառ քան զլոյսն արեգական ծագեր։

Յորոգդ անգամ, զի երևէրն և ծածկեր։ Պարձեալ զի մինչ յաշխարհն պաղեստինացւոց երևեր և առաջնորդեր. և յորժամ եկին հասին յՅրուսաղեմ, ծածկեր։ Յւ իբրև արարին խելամուտ զՀերովդէս վասն որոյ եկինն, և հրաժարեցին և գնացին, ցուցաներ զանձն. որ չէ աստեղ գնացից, այլ խօսուն և իմաստուն ինն զօրութեան։ Յա և ոչ իսկ ըստ իւրում գնացից գնայր. այլ յորժամ գնային նոքա գնայր, և յորժամ դադարէին դադարեր. և այնպէս ըստ պատշաճից ամենայն յօրիներ. որպէս և սիւն ամպոյն, զի նստեր և յառներ ըստ պէտս զօրաց որդւոցն Իսրայելի։

Չորրորդ անգամ, 'ի ցուցանելոյ զմանուկն է ուսանել յայտնագոյն. զի ոչ եթէ ինքն 'ի վերոյ կայր՝ և եցոյց զտեղին, քանզի ոչինչ էր հնար նոցա այնպէս իմանալ. այլ իջեալ ինքն կայր 'ի վերայ տեղւոյն և ցուցաներ։ Յւ զիտէք իսկ, զի տեղին փոքր ինչ է, այնչափ՝ որչափ զհողն միոջ զտեղն ունել. և մանաւանդ այնչափ ինչ, որչափ զմանուկ մի փոքր ունիցի, ոչ կարէր աստղն ցուցանել։ Պանզի անչափ հեռի են բարձունքն, և չէր բաւական 'ի բացուստ զփոքր տեղին նշմարել և ցուցանել նոցա՝ որ տեսանել կամէին։ Յւ զայս 'ի լուսնոյ եթէ կամիցի ոք ուսանել՝ իմանայ, որ այնչափ առաւել պայծառագոյն է քան զամ աստեղս, ամ բնակչաց երկրի որ ընդ այսչափ լայնութիս և երկայնութիս ցիր և ցան բնակեալ են, ամենեցուն իւրաքանչիւր մօտ թուի։ Յւ արդ աղէ ասա, զիարդ աստղն զփոքր տեղին ըգխուղն և զմանուն կարէր ցուցանել, եթէ ոչ թողեալ զրարձունս և իջեալ 'ի խոնարհ եկեալ կայր 'ի վերայ գլխոյ մանկանն։ Օ որ և աւետարանին առակաւ ինն իմացուցանէ. "Յհաւասիկ, ասէ, աստղն ա-

1 'Ի լուս. սաաաաէաաիէաան։

ռաջնորդէր նոցա, մինչև եկեալ եկաց 'ի վերայ տեղւոյն ուր էր մանուկն։ Տեսանէ՞ս, որչափ իրաւք յայտառնեալ, եթէ ոչ մի 'ի բազմաց անտի էր այս աստղ. և ոչ ըստ կարգի արտաքնոցն՝ որք զծնունդսն նշանարեն, երևեցոյց զանձն։

Այլ ընդէր բնաւ իսկ, ասէն, երևեցաւ։ Պսեմք, առ 'ի խոտել զՀրէից անմտութիւն. զի մի ամենևին գտանիցեն տալ պատասխանի անհաւանութեան։ Զի որ եկինն եհաս, զհին առաքինութիւնն դադարեցուցանելոց էր, և զտիեզերս ամ կոչէ յիւր երկրպագութիւն։ Այս զի և որ 'ի ծովու և 'ի ցամաքի իցեն, դայցեն վաղվաղակի յերկրպագութիւն։ Այսն այնորիկ անդէն 'ի սկզբանն եբաց դուռն մտի Հեթանոսաց. զի օտարօքն զիւրսն խրատել կամէր։ Զանազի 'ի մարգարէիցն ստէպ լսէին վասն գալստեանն, և ոչինչ անտային, արար զի և խուժադուժք յօտար աշխարհէ դայցեն խնդրիցեն զարքայն միածին։ Այլ նախ 'ի պարսկական բարբառոյն ուսանիցին զայն ինչ, զոր 'ի մարգարէիցն չկամէին ուսանել. զի եթէ ուղիղ միտս ունիցին, ապա մեծամեծ պատճառս ունին առ 'ի հաւանել։ Իսկ եթէ 'ի հակառակ մտեալ ինչ խեռիցեն, ամենևին զսկեալք գտանիցին այնուհետև և առ 'ի տալոյ ինչ պատասխանի։ Զանազի զինչ ինչ գտանէին ասել՝ որք ոչն ընկալան զԲԺ յետ այնչափ մարգարէից, յորժամ տեսանէին և զմգան ևս հաւանեալս միոյ աստեղն տեսլեամբ՝ գալ երկիր պագանել այնմ՝ որ երևեցաւն։ Հրամէր ընդ նենուէացիսն արար, զի առաքեաց անդր զՅովնան. և 'ի շամբրատացիսն՝ զնինն շամբատացի. և 'ի քանանացիս՝ զքանանացին, և 'ի մոգակրօնիկ աշխարհ՝ զմգան։ Այսն որոյ և ասէ իսկ, եթէ «Լրբ նենուէացիք յարիցեն օսոխ ընդ ազգիս ընդ այսմիկ և դատապարտեսցեն. և դշխոյն հարաւայ յարիցէ և դատապարտիցէ զազգս զայս»։ Զի նոքա փոքր ինչ իրաց հաւատացին, և սոքա և ոչ մեծամեծաց։

Այլ ընդէր, ասէն, այսպիսի երեսօք ձգեաց ած զնոսա։ Այլ արդ զնարդ կամէիր։ Մարգարէս, ասէն, պարտ էր առաքել։ Այլ չանսային մոգքն մարգարէիցն։ Իսկ բարբառ ինչ 'ի վերուստ արձակել։ Ա-

կայն և զայն չընդունէին։ Իսկ հրեշտակ զոք առաքէլ։ Վասկայն և նմա ստուգանէին։ Վասն այսորիկ զնմ՝ ինչ Թողցեր ՝ն ծ, և իւրեանց սովորութեան իրօք խոնարհեալ ըստ նոցա, կոչէր առ ինքն։ և ցուցանէր ատաղ իմն նորանշան զարմանալի, զի և մեծութեամբն և առաւել պայծառութեամբն, և մանաւանդ ըստ նոցա ընդ նոսա գնալո

զովն գումարէին, գտանէլ հայթայթանս բժշկութեան ծածկարուածոցն։ Այլ այնուհետև իղձքն հնարս հնարէին, պաճարանս գտանէին, եթէ երինջն տրամուղս և անդրանկածինս պարտ է լծել դնել՝ի լուծ տապանակին. և մի ումեք տալ վարել, այլ ինքեանն իւրովի զնարդուպէտ ըստ իւրեանց հեշտի գնայցեն. զի այսպէս դիւրաւ յայտ լինիցի, եթէ յոյ իցեն հարուածքն, և եթէ ինքեանք ինչ յանկարծադէպք։ Օ՛ի եթէ զլուծն առ զայրանալ տրմղութեան խորտակիցեն, և կամ առ գութ որթուցն խանդաղատեալ՝ ըշիցեն զոչիցեն և անդրէն դառնայցեն, ապա յանկարծադէպ իմն են չարիքդ եկեալք հասեալք՝ի վերայ։ Իսկ եթէ զուղղոդ ճանապարհն գնայցեն և չաղամոզիցեն առ անտեղեկութեան, և չխանդաղատիցին ինչ՝ի գութ որթուցն մատաղաց, յայտ է եթէ այ ձեռն եկեալ հասանէ կործանել զքաղաքն։ Այլ արդ իբրև զայս այսպէս լուեալ յղղձիցն, առնէին իշխանքն և ընակիչք քաղաքացն, ապա և ոչ ըստ խրատու ղղձիցն խոնարհեր իշխանքդ՝ ըստ բարի կամացն զոր եդին՝ի մտի՝ կատարել. և ոչինչ անարժան զխրատ և զկանխասաց բանս ղղձիցն տալ՝ի գործ և յարդիւնս՝ համարէր։ Այս և մեծ իմն ուղղութիւն զայն ցուցանէր, զի և թշնամիքն լինիցին վկայք այ մեծազօր զօրութեան, և զնորա վնասն նոցին վարդապետքն տայցեն։ Այլ և այս այսպիսի բաւզում ինչ է իմանալ, զի և հակառակորդքն ուղղութիւնս կատարէ՝ ոչ. որպէս և վկիաւն երբեմն հաներ՝ի դէպ զանցան որ անցանելոց էին ընդ Պաւուղ։ Այլ դուք՝ի սակաւ բանիցս ասացելոց, եթէ կամիք կարէք իմանալ և զաստեղն առաջնորդութիւն, և այլ և մեծամեծս. և անտի և զայլս և ուսուցանել. ըստ այնմ եթէ «Ցուր պատճառս իմանասցին, և իմաստնասցին և լիցի»։ Պարտիմք այսուհետև՝ի սկիզբն ընթերցուածոյն դառնալ. և զինչ իցէ սկիզբն։

«Ի Յոհիոնանէն, ասէ, ՝ի Ասիոյ հրէաստանի՝ յաւուրս Հերովդի արքայի, մոգք աստեղ առաջնորդուք եկեալ հասանէին»։ Օ՛ի որք մնրգարէից բարբառոցն ոչ հաւատացին, զոնէ մոգոքն օտարո-

տիւք հաւանեսցին։ Եւ ընդէր արդեւք և զժամանակն և զտեղին և զանուն տեղւոյն զԵրեզահեմ ասիցէ։ «Յաւուրսն, ասէ, Հերովդի արքայի»։ և զպատիւն ևս Թագաւորութեան դնէ։ Լայլքանղի և այլ ևս Հերովդէս՝ որ զՅովհան գլխատեաց. այլ նա չորորդապետ էր, և սա Թագաւոր։ Եւ զտեղին և զժամանակն դնելով, զհին մարգարէութիւն յիշեցուցանէ, զոր Միքիէ մարգարէ գուշակէ յառաջագոյն, Թէ «Եւ դու Երեզահեմ երկիր հրէաստանի՝ ոչինչ ուրեք իցես կրտսեր յիշխանսն Յուդայ, զի 'ի քէն ելցէ ինձ իշխան՝ որ հովուեսցէ ժողովրդեան իմում Իսրայելի»։ Օ որ և նահապետին Յաւկովայ Աշմարտագոյնս իմն նկարեալ՝ և զժամանակն և զգալուստն նշանակէր։ «Մի պակասեսցէ, ասէ, իշխան Յուդայ, և մի պետ յերանաց նորա, մինչև եկեսցէ այն՝ որում կայն և մնայ. և նա է յոյս հեթանոսաց»։

Լաւ է և զայն ևս խնդրել, եթէ ուստի եկին յայսոսիսի միտս մոգքն. կամ ով ոք իցէ որ զնոսա յայս իրս յորդորեաց։ Ոչ միայն աստեղն, Թուի ինձ, զգործն զայն ցուցանել, այլ և այ որ 'ի միտսն արկանէր. որպէս և զՍիւրոսի Թագաւորի յորդորեաց զմիտսն արձակել զգերիսն հրէից 'ի Բաբիլոնի։ Եւ ոչ ամենայնի ինչ արար Թէ զանձնիշխանութիւն իսկ խափանեսցէ. եթէ ոչ յիւրեանց կամն ինչ եկին, այլ բռնի ինչ վարեաց ած. այլ և ինքեանք յօժարեցին, և ած յորդորեաց։ Որպէս և զՊաւղոս զոր կոչեացն իսկ 'ի վերուստ, զի զիւր հնարսն յայտ արասցէ և զնորա հնազանդութիւն։ Եւ ընդէր, ասեն, ոչ ամ մոգուցն յայտնեաց որպէս և նոցա։ Օ 'ի ոչ ամենեքեան էին հաւատալոց. այլ նորա քան զայլսն էին պիտանիք։ Որպէս զի բազում ազգք էին որ կորեան, և նենուէացուցն միայն առաքեցաւ քարոզել մարգարէն։ Եւ երկու աւազակք էին 'ի խաչին, և մին միայն եհաս կենաց։

Եւ արդ տես զքաջութիւն նոցա, ոչ վասն զի եկինն միայն, այլ առաւել ևս զի համարձակեցանն։ Օ 'ի մի իբրև ուրուք ինչ դրդեալ իցէ զնոսա յայն կարծիցին, և զառաջնորդէն ասէին, և զերկայնութիւն

Ճանապարհին պատմէին, և մեծաւ համարձակութիւն վասն որոյ իրաց եկեալն էին զգացուցանէին։ «Լ-կաք, ասեն, երկիր պագանել նմա»։ Ի՛չ 'ի բազմութենէ զայրագնեալ ժողովոցն զանգիտէին, և ոչ յա-հէ սաստից թագաւորին երկնչէին։ Ուստի և ինձ այսպէս թուի, թէ և յիւրեանց աշխարհին բազմաց լինէին վարդապետք։ Օ՛ի եթէ անդ ոչ խորշեցան զայս ամ համարձակութիւն խօսել, որչափ և առաւել յիւրեանց աշխարհի համարձակէին. մանաւանդ զի հրաման և առեալ 'ի հրեշտակէ՝ չէին, և ըստ-վկայութիւն մարգարէին լուեալ հաստատագոյն։

«Օ՛այս, ասէ, լուեալ Հերովդէս խռովեցաւ, և ամ Երուսաղէմացիք ընդ նմա»։ Օ՛ի եթէ Հերով-դէս՝ 'ի յիրաւի խռովէր, քանզի թագաւոր էր, և երկնչէր վասն անձին և վասն որդւոց. իսկ երուսա-ղէմացիքն ընդէր խռովէին. զի և փրկիչ և երախտա-գործ և ազատիչ ժողովրդեանն քարոզէին զնա յա-ռաջագոյն մարգարէքն։ Լ՚այլ քանզի զնոյն բարս ու-նէին որովք այ ընդդէմ դառնային, յորժամ զաս-բութիւն և զերախտիս առնէր նոցա յանապատին, և նոքա զաղտեղութիւն եգիպտացւոց 'ի միտ արկեալ՝ փախչել յաղատութենէն։ Լ՚ւ արդ միտ դիր մարգա-րէիցն ճշմարտութիւն. զի և զայս ևս անդուստ 'ի վա-ղուց յառաջագոյն բարբառեալ մարգարէին, «Կա-միին, ասէ, թէ հրոյ ճարակ լեալ էին, զի մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ»։

Լ՚այլ թէպէտ և խռովէին, սակայն ոչ դնէին միտ զինչ իրքն իցեն. և ոչ զմոգուցն զհետ երթային և կային 'ի տեղւոյն վերայ. քանզի հակառակողք և ծոյլք քան զամ ազգս էին։ Որոց պարան և պատ-շաճ էր խնդալ և պարծել, թէ յիւրեանց ազգէն ծնաւ նոցա թագաւոր, և զպարսից աշխարհն ձգեաց ած յիւր երկրպագութիւն, և հնազանդելոց էին զա-մենայն ազգս, և ինքեանք անուանիք և հոչակաւք լինելոց քան զաշխարհս ամ. և մանաւանդ զի այն ինչ զերծեալ ելեալ էին 'ի գերեաց. և գերեվարքն վասն նորածին թագաւորին եկեալ էին նոցա 'ի սպաս և 'ի պաշտօն։ Լ՚ւ պարտ էր 'ի միտ առնուլ, զի թէ 'ի մանկանէն որ այն ինչ ծնեալ էր՝ այնչափ սար-

սէին, եթէ իցէ և 'ի չափ հասանիցէ, փրչափ և ա-
ռաւել երկնչէին և հնազանդ լինիցին, և քան ըզ-
խժիցն մերքս պայծառագոյնք լինիցին։

ՑՈՐԴՈՐԱԿ

Ա. ՑԻ. ոչինչ յայսպիսեացս զարթոյց զնոսա. քանզի
զի այնչափ էր հեղգութիւն, յետ այնորիկ և նախանձ.
զի զերկոսին իսկ պարտ է հաստատութիւն խլել ընկե-
նուլ 'ի բաց 'ի մնաց մերոց, և քան զհուր ' սաստիկ
լինել այսմիկ որ յայս պատերազմ հասանելոց իցէ։
Վասն որոյ և Վ՚ՇՈ ասէ, «Հուր եկի արկանել յեր-
կիր, և կամիմ թէ արդէն իսկ բորբոքեր»։ ԼՀ-
զին հրով վասն այնորիկ երևեր։ ԼՀ մեք քան զա-
ձիւն և ցրտագոյն դտաք, և քան զմեռեալ և մե-
ռելագոյնք։ ԼՀ այն զի զՊաւղոս 'ի վերոյ քան զեր-
կինս թռուցեալ տեսանեմք և քան զերկնիցն եր-
կինս, և քան զնմա բոց սաստկագոյն զբնաւ յաղ-
թեալ, զամենայնիւ անցեալ, զներքնովք և զվեր-
նովք, զաստեօքս և զհանդերձելովքն, զդոյնք և
զգոյնք։ ԼԹէ մեծ ինչ քեզ այդ օրինակ թուիցի,
մանաւանդ թէ և այնպէս ծուլուն պատճառք էին.
զինչ աւելի քան զքեզ ունէր Պաւղոս, եթէ ան
հնար ինչ համարիցիս զքեզ 'ի նորա նախանձն հա-
սանել։ Լայց սակայն զի մի ընդ Պաւղոսի հակառա-
կիցիք, թողեալ, զառաջին հաւատացեալսն զմնաւ
ածցուք, զայնսոսիկ որ զինչս և զստացուածս և ըզ-
հոգս և զնմա երկրաւոր զբօսանս 'ի բաց ընկեցին,
և ամենևին զանձինս ոչ նուիրեցին. զոյգ և զոե-
ռեկ բանին վարդապետութեամբ սկեցին։

Լմպիսի իսկ է հուրն հոգևոր. և ոչ մի ինչ ցան-
կութիւն ստանն տայ ունել յանձին, այլ յայլ ինն
զութ փոխէ։ Վասն այնորիկ որ այնմ փափաքեալ
ցանկանայցէ, զնմա ինչ վասնել հասանիցէ, և ըզ-
ցանկութիւն և զփառս արհամարհել, և եթէ զանձն

1 Ցորինակին փանդ հոր։

և տալ, ՝ամ գիւրութիւն առնիցէ զընտաւ։ Օ ի այնր հրոյ ջերմութիւն մնեալ յոգին՝ հանէ 'ի բաց զամ վհատութիւնն. և քան զթէ թեթևագոյն գործէ զրմբռնեալն. և զամ երևելիսս արհամարհիցէ։ Յ. նուհետև այնպիսին 'ի հանապազորդ զղջութիւն կայցէ, ստէպ ազբերս արտասուաց բղխեալ, և բազում հեշտութիւս շահեալ անտի։ Ի. անգղ չիք ինչ որ այնպէս յօգէ և միաւորէ ընդ ՝այ՝ իբրև զայնպիսի արտասուս։ Ի. նպիսին թեպետ և 'ի մէջ քաղաքաց բնակեալ իցէ, յանապատս՝ 'ի լերինս և յառապարս շրջի. և ոչ յաստի ինչ սգոյ ունի յանձին. բայց թէ վասն իւր, և թէ վասն այլոց յանցանաց արտասուիցէ։ Վասն այնորիկ նախ քան զայլոցն՝ նոցա ետ և բանի ՝ածՀ. "Ի. ՐանՀ, ասէ, սգաւորաց"։ Ի. զիարդ Պաւղոս ասիցէ՝ թէ ուրախ լերուք յամենայն ժամ։ Օ արտասուացն խնդութենէն ասէ։ Օ որ օրինակ աշխարհիս խնդութեան տրտմութիւն է. վիճակակից նոյնպէս ըստ ՝այ արտասուքն ուրախութեի հանապազորդ և անթառամ բղխեն։

Ի. յսպէս պտղնիին եղև պարկեշտագոյն քան զկուսանսն. քանզի այնու հրով վառեալ բորբոքեցաւ ապաշխարութեան, յանզգայեալ հարաւ այնուհետև 'ի սէրն Ի'նի։ Հերս արձակեալ, և գնդ ոտս լուանայր իւրովք արտասուօք, և հերովն մնքրէր, և զեւէն զանոյշ զեղոյր։ Ի. ս այս ՝ամ արտաքուստ լինէր. այլ որ ինչ 'ի միտսն գործէին՝ առաւել ջերմագոյնք քան զսոյնս էին, զորս ինքն միայն տեսանէր ՝ածն։ Վասն այնորիկ իւրաքանչիւր ուրուք լուեալ, ուրախակից նորին լինի, և ցնծայ ընդ նորա ուղղութիւնսն. և յամ մեղադրութեց առնէ ազատ գնա։ Օ ի եթէ մեք չարք այսպիսի վՀիռ բերելիք գնմանէ, զմտաւ ած թէ ո՞ւրչափ վայելեաց յոյ մարդասիրութենն. քանիսն յոյ պարգևաց ապաշխարութեամբն շահեցաւ պարգևս բարութիս։ Օ որ օրինակ 'ի սառամիկ հոսել անձրևի հանդարտութի օգոց լինի, նոյնպէս և 'ի վիժել արտասուաց՝ խաղաղութիւն և ջերգործի, և մութ մեղացն փարատի։ Ի. որպէս 'ի ջրոյն և 'ի հոգւոյ, նոյնպէս յարտասուաց և 'ի խոստովանութենէ սրբիմք միասնագամ, եթէ ո՞չ առ 'ի

ցոյց և 'ի պարծանս ինչ առնիցեմք։ Այլ զկին որ՝ այնպէս արտասուիցէ, քան զզարդարկոսն և որ 'ի մեզայրն և որ 'ի ծարիր շղարիցի՝ առաւել բամբասանաց արժանի համարիմ։ Զի ես զայն արտասուս խնդրեմ, որ ոչ 'ի ցոյց, այլ 'ի զղջումն ոգւոյն գործիցին. գաղտ և 'ի սենեակս. և ոչ առ ուրուք ասկանել, այլ մեղմով և անձայն, 'ի խորոց մտացն զեղեալ, նեղութիւք և տառապանօք վասն ոչ միայն լինել։ Որպէս Աստնային, զի շրթունքն ևեթ շարժէին, և զբարբառ որ ոչ լսէր։ Այլ այնպիսի արտասուք միայն առաւել պայծառազոյնս հնչեն քան զգոչիւն փողոց. վասն այնորիկ և զարդանդն բացին, և զառապարն արտաքոյ գործեցին։

Այթէ այնպէս արտասուիցես, և դու նմանօղ քում ոնն եղեր. քանզի և նա արտասուեաց և զկ ազար և զքաղաքն. և վասն ցուդայի խռովեցաւ։ Այլ զայս բազում անգամ է տեսանել արարեալ նորա. բայց ծիծաղել և ոչ երբէք, և ոչ մանր և մեղմով ժպտել։ Թէ այնպէս լցէ և ոչ յաւետարանչացն որ զայն ասաց։ Զմին իրի իսկ և Պաւղոս արտասուեաց. և զերեամ գնոյն գործէր, և ինքն զանձնէ՝ և այլք գնմանէ ասէին։ Բայց թէ ծիծաղեցաւ, և ոչ երբէք ոչ ինքն ասաց, և ոչ այլ որ. և ոչ որ 'ի սրբոց ոչ զանձնէ, և ոչ զայլ ուսեալ այսպիսւոյ։ Այլ միայն զԱռայէ է ասացեալ, յորժամ և պատուհասեցաւն իսկ. և զԶոյի որդւոյն, որ փոխանակ ազատի՝ ծառայ եղև։ Զայս ասեմ՝ ոչ զի զծաղրն հատանիցեմ՝ այլ զի զլկտուելին 'ի միջոց բարձից։

Այլ արդ աղէ՝ ասա, թէ ընդէր բերկրիցիս և լուծանիցիս 'ի ծաղուէ, որ այնչափ պատժոց պատժապարտ եղես, և ահագին առնէին յանդիման լինելոց, և ընդ ամենայնի Ճշդիւ համարս տալոց որ ինչ աստ գործս գործեցեր։ Զանգի ընդ կամացն և ընդ ակամայիցն յանցանաց պատասխանի տալոց եմք. զի "Որ ուրացի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի հօր իմոյ"։ Թէպէտ և ակամայ է այնպիսի ուրացութիւնն, այլ սակայն չապրէ 'ի տանջա-

1 Յոբենակին որ «ի ոյդէ»։

նաց։ Բ.յլ և ընդ այնր կոչիցեմք պատիժս, և ընդ որոց ոչ գիտիցեմք։ «Զինչ գիտեմ, ասէ, զանձին, այլ ոչ եթէ այսու արդարանամ»։ Ընդ որոց գիտեմք և ընդ որոց ոչ գիտեմք։ «Ա կայեմ, ասէ, զնացանէ, զի զնախանձ այ ունիմ, այլ ոչ գիտուիթ». և սակայն չէ նոցա այն բաւական 'ի պատասխանատուութիւն։ Այլ առ կորնթացիսն գրեալ ասէր, թէ «Երկնչիմ գուցէ որպէս օձն խաբեաց զԵւայ խոսրամանկութեամբ, այնպէս ապականիցին միտք ձեր 'ի միամտութենէն որ 'ի Քրիստոս»։ Բ.յսչափ պատիժս տալոց ես, և նստեալ ծիծաղիս, և կատակես, և փափկութեամն սկես։

Եթէ չառնեմ զայս, ասէ, և 'ի սուգ մտանիցեմ, զինչ օգուտ իցէ։ Մեծ իսկ օգուտ. և այնչափ, որ չափ բանիւ չէ հնար յանդիման կացուցանել։ Դար տաքին ատեանն որչափ և արտասուիցես՝ չկարես ապրել 'ի տանջանաց յետ զՔրիստոս առնլոյ. իսկ աստ եթէ արտմիցիս միայն, լուծեր զպատուհասն, և վայելեցեր 'ի թողութիւն։ Ա ստն այնորիկ բազում ինչ զսգոյ խօսի ընդ մեզ Քրիստոս. և երանի տայ սգաւորաց, և եղուկս կոչէ զծիծաղկոտս։ Ոչ աստ թատր ծաղու, և ոչ վասն այնորիկ ժողովեցաք զի քրքջիցեմք. այլ զի յոգւոց հանցուք, և զաղբայութիւն 'ի հառաջանացն ժառանգեսցուք։ Զու յորժամ առ թագաւորի կայցես, և ոչ զոյզն ժպտել ունիս յանձին. իսկ արդ զՔրիստակացն որ ունիս վանաւոր, և չկամ ցածութիւն և պատշաճ դողութիւն, այլ ծիծաղիս, մինչդեռ 'ի ցասման իցէ. և չառնուս 'ի միտ սրքան մեղաբն այնու սաստիկ բարկացուցանես զնա։ Զի ոչ 'ի մեղուցելոցն, որպէս 'ի նոցանէն՝ որ յետ մեղացն չցածնուն, սովոր է դարձուցանել զերեսս ոչ։ Այլ սակայն այնպէս յանդգայեալ կան յախտի ոմանք, մինչ յետ զայսպիսի բանս խօսելոյ, ինձ, ասէ, մի երբեք լիցի արտասուել, այլ ցանգ խաղալ և ծիծաղել տացէ ոչ։ Այլ զինչ քան զայն խակութիւն միտք կայցեն։ Ոչ թէ ոչ տայ զխաղալն, այլ սատանայ։ Այլ լաւր որք խաղացինն՝ զինչ կրեցին. «Զատաւ, ասէ, ժողովուրդն ուտել և ըմպել, և յարեաւ 'ի խաղալ»։ Բ.ստպիսիք էին սոդոմայեցիք. նոյնպիսիք և

առ ջրհեղեղաւն. քանզի ասէ իսկ զնոցանէն, թէ «Լմնարտաւանութիւն և յղփութիւն և լիութիւն հացի փարեալանային»։ Եւ առ Ղ,ոյիւն զանչափ ամն տեսանէին զկազմել տապանին, և յանհոգս ուրախ լինէին, և չհայէին ինչ յառաջագոյն ի հանդերձեալսն։ Ա ամն այնորիկ եկն եգիտ զերկ զամենեսին ջրհեղեղն, և առ հասարակ զամենայն տիեզերս նաւակոծութիւն գործեաց։

Որ ի այսուհետև խնդրեր զայն յայ, զոր ի սատանայէն առնուս. քանզի այ սիրտ մնչեալ և խոնարհ է տալ, ցածուն և հեզ և զղջացող և ստրջացող։ Լ,յս են նորա պարգևք. քանզի և սոցին իսկ են մեզ պէտք. մանաւանդ զի և պատերազմ իսկ տատիկ ի վերայ կայ. և ընդ աներևոյթ զօրութիւնն է կռիւ, ընդ այս չարութեանն ձակատք, ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս կռիւ։ Եւ պիտոյ է յորդորս և արթունս և զուարթունս լինել, առ'ի հանդուրժել հարկանել ի դիմի դազանաբարոյ բանակին։ Իսկ եթէ խաղայցեսք և ծիծաղիցիսք, և ցանդ ծուլայցեսք, նախ քան զեառնուրդսն՝ յանձանց իսկ ծուլութենէ կործանիսք։ Եւ արդ չէ մեր խաղալն և ծիծաղել և զուարճանալ, այլ դուստանայ և կանանց պոռնկաւ ցելոց, և արանց հացկատակայ և սուտակասպասաց։ Ա՛ն յերկինս կոչեցելոց, և ոչ ի վերին քաղաքն զրեալոց, և ոչ հոգևոր զինուքն վառելոց, այլ զսատանայինսն յանձնառելոց։ Ղ,ա իսկ նոքն է որ արուեստ տաղտրծեաց զիրսն, զի լքանիցէ զզինուորս Ի՛նի, և մեղկիցէ զՀիլս յօժարութեանն նոցա։ Ղ,մին իրի իսկ և թատերս շինեաց ի քաղաքս, և զծաղրածուսն յորդորեաց. վասն նոցա ապականութեան ըստ ամենայն քաղաքաց, այսպիսի ժանդագործ ցաւս զայրացուցանել։ Յորմէ փախստականն հրամայէ լինել Պաւղոս, ի բանից յիմարութեան և ի խեղկատակութենէ, քան զնորին հետ ստէպ ընթանալ։ Եւ որ եւս գժբնդակագոյնն քան զնոսին է, աւելի ինն պատճառք ժողովին. յորժամ հայհոյութիւն ինչ՝ կամ աղտեղութիւն խօսիցին զուսանքն ծաղրածուք, յայնժամ բազումք յանմտաց ստէպ ծիծաղին և զուարճանան. վասն որոց քարկոծ պարտ էր առնել զնոսա, նոքիմքք

գրուատեն և գովեն. և հնոց հրոյ այնպիսի բերկրու-
թեամբ կորզեն յանձինս. զի որք գովեն զնոսա՝ որ
զայնպիսի բանս խօսին, նոքա են որ առաւել յայն
գրգռեն. վասն որոյ և տանջանաց որ ընդ այնր պա-
հիցին, յիրաւի պատժապարտ լինիցին։ Եթէ չէր
որ որ զայն տեսանել կարէր, ապա և չէր իսկ որ որ
յայնպիսի մրցութիւն մտաբերէր։ Սակ յորժամ տե-
սանիցեն զձեզ զարուեստանոցս և զարուեստս և ըզ-
շահն անտի և զայմ առ հասարակ թողեալ՝ վասն
անդ դեգերելոյ, եւ քան զեւ 'ի նոյնս մոգանան, և
յաձախեն զիսյթն։

Օ այս ասեմ, ոչ զի զնոսա ինչ ազատ 'ի պատժոց
համարիցիմ, այլ զի դուք ուսանիցիք՝ եթէ սկիզբն
և զարմատ այնպիսի անիրաւութիւն դուք առնիք, որ
զօրն ամ յայն ծախէք. և զպարկեշտ իրս ամուսնու-
թեանն երթեալ անդ խայտառակէք, և զմեծ խոր-
հուրդն նշաւակէք։ Օ՛ի ոչ այնպէս նա որ զերսն
կեղծաւորի՝ է յանցաւոր, որպէս դու նախ քան
զնա, որ նմա զայն հրամայես առնել. մանաւանդ թէ
ոչ նմա միայն հրամայես, այլ և ստիպես, և ուրախ
լինիս, և ծիծաղիս, և գովես զգործն, և ամենայն
կերպարանօք յարգես և կազմես զայնպիսի արուես-
տանոցս դիւաց։

Եւ արդ աղէ՝ ասա, որոմ աչօք այնուհետև 'ի տուն
եկեալ ընդ կինն նայիցիս, զի տեսանիցես զնա թաշ-
նամանեալ. զիարդ ոչ ամաչիցես, եթէ յիշեսցես
զամուսնին յորժամ զընութիւն խայտառակեալ տե-
սանիցես։

Եւ զայն ինչ մի ասիցես ցիս, եթէ կեղծիք և 'ի
խաղոյ է գործն. զի այն կեղծիք զբազումն շնացօղս
գործեցին, և զբազում տունս կործանեցին։ Եւ
առաւել ընդ այն հեծեմ, զի և չար չթուի գործն,
այլ ձայթիք, և աղաղակ և ծաղր սաստիկ այնչափ
շնութիւն համարձակեալ։ Եւ զի՞ ասիցես եթէ կեղ-
ծիք և ընդ խաղ է գործն։ Ա՛ սան այնորիկ բազում՝
իսկ մահուց արժանի են, զի՝ յորմէ փախչելն հրա-
մայեն օրէնք՝ նոքա այնմ նմանել ձեպին. զի թէ
գործն չար է, ապա և նմանել նմին՝ առաւել չար։
Եւ չե՞ւ ասացից՝ թէ որչափ շնացօղս գործեն, որ

այնչափ կեղծաւորին կերպարանս հնութեց. ուրչափ յայրատս և անմոթս կազմին զտեսօղս այնպիսեացն։ Զի՞նչ պոռնկագոյն և յայրատագոյն քան զանչ, որ զայնպիսին տեսանել ախորժիցէ։ Զու՞ 'ի հրապարակի զկինն մերկ չկամիս տեսանել, մանաւանդ թէ և ոչ 'ի տան, այլ թշնամանս զիրսն կոչես. և 'ի թատրն եղեալ՝ առ հասարակ զարանց և զկանանց թշնամանես զազգ. և քեզէն առնես զաչսդ ամոթաւոր։ Զայնչափ զայն ինչ խորհիցիս թէ պոռնիկ է մերկն. այլ զի նոյն բնութիւն է, և նոյն մարմին և պոռնկին և ազատի։

Զ՝թէ չիցեն յոռի իրք, ընդէր յորժամ 'ի հրապարակի զնոյն գործեալ տեսանիցես և դու փախչիս, և զնշաւակն 'ի բաց հալածես։ Զի՞ յորժամ ուրոյն 'ի միմեանց եմք՝ յայնժամ յոռութիւն են իրքն, և յորժամ միախուռն ժողովեալ ամենեքեան նստիցիմք՝ ոչինչ այնպիսի ամոթ։ Զ՝յլ ծաղուս և նախատանաց և վերջին յիմարուն են այնպիսի բանք. լաւ էր տղմով և ցեխով ծեփել զերեսս, և մի այնպիսի անօրէն տեսլեամբ աղտեղել. զի ոչ այնպես ցիսին ինասկ աչաց, իբրև զկնտի երեսն և զկնոջ մերկոյ զտեսիլ տեսանել։

Զ՝ուր այսուհետև զինչ արար 'ի սկզբանէ զմերկութիւն, և երկիր 'ի պատճառաց այնր ծանականաց։ Զ՝ինչ արար զմերկութիւն։ Զ՝տունգամութիւն, և սատանայի խրատ. և այնպես անդուստ 'ի բնէ՝ նորա եղև այն հրաման։ Զ՝յլ նոքա գեթ ամաչէին ընդ մերկութիւն. իսկ դուք և պարծիք և ս, ըստ առաքելական բանին՝ եթէ « Զ՝ ամոթն փառս համարին »։ Զ՝ւ զիարդ այսուհետև հայիցի ընդ քեզ կինն՝ եկեալ յայնպիսի անօրէնութենէ. զիարդ մնտիցի, կամ ո՞ր պէս բանս խօսիցի, այնպես անարգութիւն զհասարակաց կանանց զընութիւնն խայտառակեալ, և գերի վարեալ յայնպիսի տեսլենէ, և 'ի ծառայութիւն անկեալ կնոջ պոռնկացելոյ։

Զ՝ւ եթէ զարիք ինչ՝ յորժամ զայսպիսի բանս լսիցէք, յոյժ իսկ հնորհակալ լինիմ ձեզ. զի ոմ է որ ուրախս առնէ զիս, եթէ ոչ որ տրտմիցին յինէն։ Զ՝ւ մի երբէք դադարէք 'ի տրտմելոյ և 'ի մերմոքե-

լոյ ընդ այնպիսի իրս · քանզի և սկիզբն իսկ լինիցի մեզ 'ի լաւութիւն փոխելոյ ընդ այնպիսեացն տրտմութիւն ։ Վասն այնորիկ և ես իսկ սատակացուցի ' զբանս , զի 'ի խորոց կտրեցից զվէրն , և ապրեցուցից զձեզ 'ի փառոյն , և 'ի սուրբ առողջութիւն ոգւոցն հաստատեցից ։ Յորս լեցի ամենևին ամենեցուն մեզ վայելել , և պարգևացն որ պահիցին այնոցիկ , որք ուղղութիւն իրացս այսոցիկ գործիցեն , հաստատել հնարհաք և մարդասիրութիւն ն մերոյ Յիսուսի , որում փառք յաւիտեանս · ամէն ։

1 Յորինակին ուրբ Խոյուոյ ։

«Յողովեալ զամ քահանայապետսն և զդպիրսն՝ հարցանէր առ 'ի նոցանէն, եթէ ուր Քրիստոս ծնանիցի. և նոքա ասեն, 'ի Բեթղահեմ հրէաստանի»։

Տեսանե՞ս զամ ինչ 'ի յանդիմանութիւն հրէական ազգին կատարեալ. զի մինչև տեսեալն էր զնա, և մինչև 'ի նախանձուէն էին հաշեալք, ճշմարտութեամբ տային զվկայութիւնն. իսկ իբրև 'ի նշանացն տեսին զփառս միածնին, ապա ըմբռնեալք 'ի նախանձուէն՝ տային 'ի ձեռս զճշմարտութիւնն։ Այլ ճշմարտութիւն ամ իւիք վերացեալ բարձրանայր. զի և 'ի թշնամեացն ևս առաւելագոյն յարգեալ գովեր։

Տես, զեմբդ և աստ զարմանալի և չքնաղ իրք մնատակարարէին. զի միանգամայն և ուսանէին իմն նոր 'ի միմեանց, և ուսուցանէին զլրեարս և հրեայքն և բարբարոսքն։ Օ՛ի հրեայքն 'ի մոգուցն լսէին և թէ առատն անդէն 'ի պարսից աշխարհին քարոզեաց նոցա. և մոգքն 'ի հրէից ուսանէին եթէ զդմանէ, զորմէ աստղն գուշակեաց, և մարգարէքն անդուստ 'ի վերուստ յառաջագոյն քարոզէին։ Այլ միմեանց երկոքին կողմանքն լուսաւորագոյն իմն և իմաստնագոյնս և զժամանակն և զհաստատութիւն ճշմարտութենն իմացուցանէին։ Այս այսպէս թշնամիքն ճշմարտութենն ակամայ և զմարգարէութիւնն հաստատէին ասելով, եթէ «Հայս Բեթղահեմ երկիր հրէաստանի ոչինչ իցես կրտսեր յիշխանսն Յուդայ. զի 'ի քէն ելցէ ինձ իշխան՝ որ հովուեսցէ ժողովրդեան իմում Իսրայելի»։ Օ՛այս ասացին, և զիւրեանս ոչ կամեցան յաւելուլ. քանզի պաշտօն իմն առնէին թագաւորին։ Այլ զինչ այն իցէ որ թողլինն և ոչ ասացին. եթէ «Այլքն նորա 'ի սկզբանէ աւուրցն յաւիտենից»։

Այս ընդէր, ասէն, զի անտի էր ելանելոց, յետ ծննդեանն 'ի Նազարեթ բնակէր, և ծածկէր զմար-

գարէութիւնն։ Բայց ոչ ծածկեաց, այլ առաւել յայտնեաց. զի մերն բնակութիւն անդ էր 'ի Նազարեթ, և զծնունդն աստ կատարեաց 'ի Բեթղահէմ. և յայտ առնէ 'ի տեսչութէ կատարեալ զիրսն։ Նա և ոչ վաղվաղակի իբրև ծնաւն, եկն անտի. այլ քառասնօրեայ ժամանակ կատարէր անդէն. զի որք կամիցին խնդրել՝ ցուցանիցէ նոցա զնամ իրացն հաստատութեան։ Նա և բազում ինչ իրք էին՝ որ տային նոցա պատճառս խնդրելոյ, եթէ կամեցեալ էր առնուլ 'ի միտ։ Զի և մոգուցն զալ դղրդեաց զքաղաքն և զթագաւորն. և վկայութիւն մարգարէին 'ի մէջ գալոյ իբրև ատեան իմն դատաստանի էր առ ընտրութեան իրացն գործելոյ։ Յաւ այլ բազում իրք գործեցան անդ, զոր Ղուկաս հաւաստեաւ պատմէ զաւետեան։ Ընտանային և Շ մաւուխի և Զ աքարիայ, հրեշտակացն և հովուացն. որ ամենայնիւ բաւական էին տալ պատճառս մտադրացն գտանելոյ զնրացն հաստատութիւն։ Զի թէ որ 'ի պարսից եկին մոգքն՝ չեղին անտեղեակ տեղւոյն, որչափ և առաւել որ անդէնն իսկ էին բնակեալ՝ զայն կարող էին ուսանել։

Բրդ եղոյց զանձն 'ի սկզբանն բազում սքանչելեօք. և քանզի ոչ կամեցան տեսանել, թաքոյց զմեջոցաւ ժամանակին, և ապա յետոյ 'ի միւսում և լուսաւորագոյն սկզբանն յայտնեաց։ Ուր ոչ այսուհետև մոգք և ոչ աստղ, այլ հայր 'ի բարձանց 'ի վերայ խաղաց վտակացն Յորդանանու բարբառեր. և հոգին սուրբ իջեալ 'ի վերայ գլխոյ անարատին՝ որ մկրտեցաւ, հանդէր։ Յաւ Յովհաննէս ամ համարձակութեամբ յամ կողմանս երկրին հրեաստանի, և 'ի շէնս և յանշէնս հնչեալ ընդոյ զվարդապետութիւնն։ Լսակ սքանչելեացն վկայութիւն՝ և երկիր և ծով և ամ արարածք առաւել լուսաւորագոյնս քան զնորա զաղաղակէն՝ արձակէին բարբառս։ Զի 'ի ժամանակի ծնդեանն պէսպէս զարմանալիքն որ լինէին՝ կարէին ծանուցանել զայս, որ եկն 'ի փրկուի աշխարհաց։ Զի մի ասիցեն, թէ ոչ երբէք ուրեք իմացան զծնունդն, և ոչ զտեղին։ Որ ինչ մոգքն մատակարարեցաւ, և այլ և ամ որ ասացաք, ոչինչ

թողուն պատճառս 'ի միջի ասելոյ նոցա՝ եթէ ոչ եղեալք հմուտ իրացն որ գործեցան։

Ցէս և զմարգարէին և զհաստատուն. ոչ ասաց եթէ 'ի Յեթլահեմ բնակէ, այլ թէ անտի ելանէ. զի և այսու ևս մարգարէութիւնն կատարեսցի եթէ անդ ծնաւ։ Իսկ ոմանք 'ի նոցանէ յանդգնեալք ասեն, վասն Օ օրաբաբիլի ասացեալ է զբանն։ Այլ արդ զիարդ իցեն 'ի դէպ բանքն. զի ոչ եթէ Օ օրաբաբիլի ելքն 'ի սկզբանէ աւուրցն յաւիտենից իցեն։ Օ ի արդ որ 'ի սկզբանէն ասացեալ է թէ 'ի քէն ելցէ, նմա 'ի դէպ իցէ. զի նա 'ի Յաբիլոնի ծնաւ, և ոչ 'ի Հրէաստանի. ուստի և Օ օրաբաբէլ կոչեցաւ՝ վասն անդր ցրուելոյն։ Այլ որ զասորի լեզու գիտիցէն, առնուն 'ի միտ զոր ասեմն։ Այլ հանդերձ բանիւքս ասացելովք՝ և ժամանակն ամ որ յետ այսր ժամանակի էր, բաւական էր հաստատել զվկայութիւնն։ Այլ արդ զինչ է որ ասիցէն։

"Ոչ ուրեք, ասէ, կրտսեր իցես յիշխանսն Յուդայ"։ Այլ զպատճառսն ևս զայսմանութիւնն առընթեր դնել ասելովն, եթէ 'ի քէն ելցէ։ Օ ի ոչ այլ ոք յայտնի և անուանի արար զտեղին, բայց միայն նա. զի յետ ծննդեանն այնորիկ յամ ծագաց երկրի դան տեսանել զմնուրն և զնշատեղին. զոր մարգարէն անդուստ 'ի վաղուց կանխաւ բարբառէր՝ եթէ "Ոչ ուրեք իցես կրտսեր յիշխանսն Յուդայ". այսինքն է 'ի տանուտերաս ցեղոյն։ Այլ զայս ասելով և զԱրուսաղէմ 'ի մէջ փակէր։ Այլ նոքա ոչ ինչ առնուցուն 'ի միտ՝ եթէ նոցա իցեն աւետիք շահից. քանզի և վասն այնորիկ ոչ ուրեք վասն պատուոյն նորա ճառէն մարգարէքն 'ի սկզբանէ, որչափ վասն բարեբարութեանն որ 'ի նմանէն լինէր 'ի նոսա։ Օ ի յորժամ ծնաւ կոյսն, ասէ, "Կոչեսցեն զանուն նորա Յս, զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր 'ի մեղաց իւրեանց"։ Այլ մոգքն ոչ ասացին՝ թէ ուր ծնաւ որդին այ, այլ ասեն, "Ուր իցէ նորածին արքայն հրէից"։ Այլ ասէ ոչ ասաց. եթէ 'ի քէն ելցէ որդին այ, այլ "Իշխանն, որ հովուեսցէ ժողովրդեան իմում Իսրայէլի"։ Նա և խոնարհագոյնս իսկ ըստ նոցա պարտ էր ճառել 'ի սկզբանն, զի մի գայ-

թագաւորին ինչ. և վասն փրկութեան քարոզել, զի այնու առաւել ընդարձնուցուն։

Եւ արդ առաջին վկայութիւնքն որ անդէն 'ի ծնընդեանն ժամանակին էին, ոչինչ մեծամեծս և բարձրագոյնս ասէին զնմանէ. և ոչ որպէս յետ նշանացն յայտարարութիւն. զի նոքա յայտ յանդիմանն զպատուոյն նոր խօսին։ Օ՛ի յետ բազում նշանաց՝ մանկտին օրհնուէս երգէին 'ի նա՝, լուր զինչ ասէ մարգարէն, եթէ "Ի բերանոյ մանկանց տղայոց կատարեցեր զօրհնութիս"։ Եւ դարձեալ, թէ "Ցեսից զերկինս զգործս մատանց քոց"։ որ և արարիչ ամի զնա առնէ յայտ։ Եւ որ յետ վերանալոյն բերեալ վկայութիւն՝ զհասարակ զպատիւ առ հօր յայտ առնէ, թէ "Լսաց ձեր ցոր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ"։ Եւ Եսայի ասէ, եթէ "Որ կանգնելոցն է իշխան հեթանոսաց, և 'ի նա հեթանոսք յուսասցին"։

Օ՛իարդ, ասեն, զԱ՛ստեղահէմ յիշխանն միայն Յուդայ չլինել կրտսեր ասիցէ. որ ոչ 'ի պաղեստին նացեալ աշխարհին միայն, այլ ընդ ամ տիեզերս եղև անուանի և հռչակաւոր զեօղն։ Այլ դեռ և առ հրեայսն էին բանքն. վասն որոյ և զնովիմբ ածէ, եթէ "Հովուեսցէ ժողովրդեան իմում Իսրայելի"։ Թէպէտ և ամ աշխարհս հովուեաց, այլ որպէս յառաջագոյն ասացի, վասն զի ոչ կամեցաւ զայնքագրեցուցանել զժողովուրդն, ծածկեաց զՀառս մտին հեթանոսաց։

Եւ զիարդ, ասեն, ոչ հովուեաց հրէական ժողովրդեանն։ Ա՛նառանդ եթէ այն իսկ եղև. զի աստ Իսրայել զՀաւատացեալսն հրէից ասաց առակաւ։ Եւ զայս մեկնէ Պաւղոս յասելն, եթէ "Ո՛չ ամենեքին որ յԻսրայելէն են, Իսրայել իցեն, այլ որք հաւատովքն և աւետեօք ծնան"։ Եւ զամենեսեան չհովուել՝ նոցա փնաս էր, և ոչ նորա. զի պարտ և պատշաճ էր նոցա ընդ մտգոն երկիր պագանել և փառաւորել զնոր, որ ած հասոյց յայնպիսի ժամանակ՝ յորում բառնայր զմեզ ամենեցուն։ Բ՛ամզի ոչ եթէ զատենից ինչ և զպատժոց լուան, այլ թէ

1 'Ի լուս. նմա։

հեզ և խոնարհ, և հովուէ ժողովրդեանն. և նոքա ընդ այն մոլեին և խռովէին, և բազում նենգուն պատրաստէին։

«Յայսմ ժամանակի, ասէ, կոչեաց Հերովդէս դաղտ զմոգսն՝ ստուգել 'ի նոցանէ զժամանակ աստեղն երևելոյ»։ Հնարել բառնալ զմանուկն 'ի միջոյ. որ կարի անմտութիւն գործ էր, և ոչ միայն մոլորութիւն. զի բանքն ասացեալք և իրքն կատարեալք բաւական էին ցածուցանել զնա յայսպիսի յանդգնութիւն. զի ոչ մարդկօրէն ինչ իրք էին, այլ այ գործ։ Օ՛ի ծագել աստեղն որ 'ի վերուստ կոչեաց զմոգսն, և խուժ դուժ այլազգեացն զայնչափ վայրս հատանել անցանել գալ երկիր պագանել մանկանն, որ պատեալ 'ի խանձարուրս և դներ 'ի մսուր. և մարգարէութիւն որ անդուստ 'ի վերուստ զայս ամ յառաջագոյն քարոզեր, և այլ ևս մեծամեծ իրք առնէին յայտ, թէ այ գործ է, և ոչ մարդոյ։ Սակայն ոչինչ յայտնանէ զնա խրատեր. զի այնպէս ինքն իւրովի կործանել զանձն չարութիւնն, և յանօգուտ իրս միշտ յանդգնի։

Լ՚ւ արդ միտ դիր անմտութեան առնն. զի եթէ հաւատայր մարգարէութեան՝ եթէ անչարժ է և ոչ վրիպի, պարտ էր խմանալ եթէ յանհնարինսն յանդգնի ձեռն արկանել։ Լ՚սպա թէ չհաւատայր, և չուներ ակն եթէ բանքն 'ի գլուխ ելանիցեն, ընդէր իսկ բնաւ երկնչէր, և ջանայր նենգաւ մեղանչել։ Օ՛ի յայտ լինիցի՝ եթէ երկոցունց կողմանց անշահ էր նենգութիւն։ Լ՚ա՝ և ոչ ակն իսկ ուներ յայնչափ մոլորութիւն կործանել նոցա։

Լ՚ւ անհնարին ևս այն անմտութիւն էր՝ համարել զմոգուցն, թէ զնա առաւել քան զմանուկն պատուիցեն, վասն որոյ այնչափ տար աշխարհս հատեն եկին։ Լ՚ոկ մինչև տեսեալ էր՝ այնչափ բորբոքեալ էին զթով, յետ տեսանելոյն և հաւատարիմ 'ի մարգարէութենէն լինելոյ՝ զիարդ կարծեր հաւանեցուցանել զնոսա լինել նմա մատն զմանկանէն։ Լ՚այլ թէ պէտ և պարտ էր յայսմ ամենայնի խրատել, սակայն յանդգներ։

«Լ՚ւ կոչեաց, ասէ, դաղտ զմոգսն ստուգել 'ի նո-

ցանէ „։ Վանդի և կարծէր զՀրէիցն՝ եթէ խնայեսցէն ինչ ի մանուկն. և զայն ոչ գիտէր՝ եթէ յայնպիսի մոլորութիւն էին կործանելոց, զի զքրիստիէն և զաղատիչ ժողովրդեանն կամէին մատնել թշնամեաց։ Վասն այնորիկ գաղտ կոչէր, և ՀՀգրտէր զժամանակ ոչ զմանկանն, այլ զաստեղն. քանզի մեծաւ հնարիւք ջանայր գնել զորոգայթ որսոյն։

Լոյս թուի ինձ՝ թէ և աստղն ի վաղուց հետէ էր յայտնեալ, զի բազում վայրք կային ՝ մոգուցն. եթէ ոչ յառաջագոյն յայտնեալ էր, զիարդ ի սակաւ ժամանակին կարէին զալ կալ ի վերայ տեղւոյն՝ ուր ծնաւ մանուկն։ Վանդի մինչ ի խանձարուրսն էր, պարտ էր նմա երկիր պագանել, զի նորակերտ աքսանչելիքն երևիցին, յառաջ քան զբազում ժամանակս ցուցանել զանձն աստղն։ Օ՛ի թէ յորժամ ծնաւ ի Պաղեստինէ՝ յայնժամ երևէր նոցա յարևելս, բազում ժամանակս յամեալ ի Հանասարի՝ չժամանելին գալ տեսանել զնա ի խանձարուրս։ Լոյս զի յերկեմնիցն և ի խոնարհ հրամայեաց կոտորել զմանկտին, ընդ այն մի ինչ զարմացուք. զի առ զայրուցան [2] և առ կասկած զգուշանայր բազում և ժամանակս յաւելուլ, զի մի զերծանիցի այն՝ զոր խնդրէին։

“Կոչեաց, ասէ, զնոսա, և ասէ, երթայք ստուգեցէք վասն մանկանն. և յորժամ գտանիցէք՝ պատմեսջիք ինձ, զի և ես եկեալ երկիր պագանիցեմ նմա„։ Տես զանմտութիւն առն. զի թէ Հշմարտութիւն ասիցես զոր ասեսդ, ընդէ՞ր գաղտ հարցանես. ապա թէ նենգել ինչ կամիս, զիարդ ոչ իմանաս՝ եթէ ի գաղտն հարցանելոյ իմանան մոգքն զնենգութիւնն։ Լ.սլ որպէս յառաջագոյնն ասացի, եթէ ոգիք ըմբռնեալք ի չարին և ի մտացն և ի մտացն անկանին։

Լոյս ոչ ասաց՝ թէ երթայք Հշգրտեցէք վասն թագաւորին, այլ վասն մանկանն. զի և զանուն անգամ թագաւորութեանն չկամէր այլ ումիք կոչել։ Լոկ մոգքն այսպիսի ինչ մեղմեխութեամբ չէին տեղեակ իւ-

1 Յօրինակին գոյն։
2 Ճառընտ. Գ. ՠ զայրացուցեալ։

բնանց աշնուականն լաւութիւն։ Օ՛ի չածէին զմտաւ՝ թէ նա ինչ յայտնիսի չարութիւն ելանիցէ, և աքանչելի տեսչութեան նենգել յանդգնիցի։ Այրթային, և յայն ինչ ոչ հայէին, բայց իւրեանց իրացն և այլոցն և ամի ակն ունէին։

"Այս ահաւասիկ, ասէ, աստղն՝ զոր տեսին յարևելս, երևեցաւ և առաջնորդէր նոցա"։ Այս և վասն այնորիկ իսկ ծածկեցաւ, զի յորժամ զառաջնորդն կորուսանիցեն՝ հարկ լիցի երթալ հարցանել զՀրեայս, և յայտ յանդիման լինիցին իրքն։ Իսկ յորժամ հարցինն, և գտին վարդապետ զթշնամին, ապա միւսանգամ երևէր նոցա։ Այս տես զկարդ գեղեցիկ ինն կարգաւ իրքն Ճահէին. զի յաստեղէ անտի ընկալան զնոսա հրեական ժողովքն և Թագաւորն. և զմարգարէն ևս ածէին 'ի մէջ վարդապետ եղելոցն։ Իսկ 'ի մարգարէէ անտի հրեշտակն առնոյր զնոսա, և իմացուցանէր զամենայն։ Ո՛ առաջինն Յայրուսաղէմ 'ի Յեթղահէմ առաջնորդութիւն աստեղն երթային. քանզի և անտի աստղն եղև նոցա Ճանապարհակից. զի և յայնմանէ ևս յայտ լինիցի, եթէ ոչ մի 'ի բաղմաց էր. զի և ոչ ունի իսկ այնպիսի բնութիւն աստղ։ Օ՛ի ոչ վայրապար գնայր, այլ ունէր զձեռանէ և ձգէր տանէր 'ի տուէ յայտ յանդիման։

Այս զի՛ ևս, ասեն, պիտոյ էր այնուհետև աստղ՝ յորմէ հետէ առին զնշանս տեղւոյն։ Օ՛ի և զմնուէին ևս ցուցցէ. քանզի ոչինչ այնպէս յայտնի տեղին, ոչ տուն ինչ նշանաւոր, և ոչ մայրն երևելի ոք և անուանի. ապա պարտ և պատշաճ էր աստեղն տանել կացուցանել 'ի վերայ տեղւոյն։ Վանզի յայն սակս իսկ յայտնեցաւ յետ ելանելոյն մոգուցն Յայրուսաղէմ, և ոչ ուրեք դադարեաց՝ մինչև տարաւ հասոյց 'ի մնուին։ Այս աքանչելիք 'ի աքանչելիս խառնեին, և աստեղն տանել հասուցանելոյ, և մոգուցն երկիր պագանէին։ Բաւական էին իրքն և զքարեղէնսն անգամ հաւանեցուցանել։ Օ՛ի թէ առացեալ էր մոգուցն, եթէ 'ի մարգարէից լուաք, կամ հրեշտակք յայտնեցան և պատմեցին, թերևս էին պատճառք չհաւատալոյ. իսկ նա աւանիկ աստեղն յայտ յանդիմ-

ման երևել՝ և զայնոսիկ, որ բնաւ իսկ անամօթք և ցեն, ըմբերաներ։

Այլ իբրև տարաւ կացոյց 'ի վերայ մանկանն, զտեղի առնոյր այնուհետև ասաղն։ Այլ առաւել զարմանալիք այն էին, զի մերթ ծածկէր և մերթ յայտնէր. և 'ի յայտնելն՝ մերթ գնայր և մերթ դադարէր։ Այլ յայսմանէ ևս առաւել հաստատէին 'ի հաւատս. և ուրախ լինէին, զի զոր խնդրէինն՝ գտին, և եղեն հրեշտակք ճշմարտութեան։ Օ՛ի ոչ վայրապար զայնչափ ճանապարհ աշխատ եղեն գալ. ուստի և քաջալերեալ զութ անկանէր նոցա ընդ Քրիստի։ Այլ ասաղն եկեալ հասանէր և կայր 'ի վերայ գլխոյ մանկանն, զի յայտ արասցէ՝ թէ ածեղէն է ծնունդն. և կալցին 'ի վերայ՝ և զնոսա ևս ածէր յերկրպագութիւն. ոչ վայրապար զագէտս զոք կամ զխուժ դուժս, այլ զիմաստնագոյնս առաւել քան զնմա՛ իմաստունս արևելեաց։ Տեսանեն, զի յիրաւի էր ասասէն երեւեալ. զի յետ մարգարէութեան, և յետ քահանայիցն և դպրացն պատմութի՛ և այնմ ևս ուշ ունէին։

Մանչեսցէ Հարկիոնն, ամանչեսցէ Պաւղոս սամոատացին, որք ոչ կամիցին տեսանել զայն՝ զոր նախնիք եկեղեցւոյ մոգքն տեսին։ Հ՛ինչ ամանչեմ կոչել զոգմգան նախնիս։ Մանչեսցէ Հարկիոնն՝ տեսեալ զնոր ճարմնով որ առնոյր երկրպագութիւն 'ի մոգուցն։ Մանչեսցէ Պաւղ սամոստացի՝ տեսեալ զԲ՚ն որ ոչ իբրև զմարդ լոկ առնոյր երկրպագութի։ Օ՛ի 'ի մարմնի էր, խանձարուրքն և մնուրն վկայեն. և զի ոչ լոկ մարդոյ 'ի տհաս հասակի երկրպագէին, 'ի պատարագացն՝ զոր ՚այ պարտ էր մատուցանել, յայտ առնէին։

Մանչեսցեն ընդ նոսա և հրեայք, որք զխուժ դուժմն մոգմն տեսանէին եկեալ, և նոքա և ոչ յետ նոցա կամեցան գալ։ Այա և այն օրինակ էր իրացն որ առ յապա էին կատարելոց. և անդէն 'ի սկզբանն յայտ լինէր, եթէ յառաջնանալոց էին քան զՀրեից ազգն հեթանոսք։

Այլ ընդէր, ասեն, 'ի սկզբանն չասաց, եթէ «Երթայք աշակերտեցէք զամենայն հեթանոս»։ Այլ որպէս ասացի իսկ, եթէ օրինակ էին սակաւ իրքն բազմաց իրաց, որ յետոյ էին կատարեալ

լոց. և այնպէս պատշաճ էր, զի նախ հրեայք մերձենայցեն. իսկ քանզի նոքա կամին այլոց եւտուն զիւրեանց բարերարութիւն, յետս ընդդէմ ինն իրքն կատարէին. զի և ոչ յայնժամ իսկ պարտ էր մոգուցն յառաջել մերձենալ քան հրեից։ Զի նոքա 'ի հեռաստանէ եկին, և սոքա անդէն շուրջ զքաղաքաւն նստէին. և նոցա չէր երբէք լուեալ, և սոքա միշտ զմարգարէսն ընթեռնուին։ Բ. Զի քանզի նոքա յոյժ զիւրեանց բարին մերժեցին, որք 'ի պարսկին յԱրարատաղէմ դիմեցին՝ յառաջանային քան զերուսաղէմացիսն։ Զոր և Պաւղոս ասէ, եթէ «Զեզ պարտ էր նախ խօսել զբանն աստ. արդ քանզի դուք անարժանս զանձինս համարեցարուք, ահաւասիկ դառնամք 'ի հեթանոսս»։ Քանզի թէպէտ և յառաջ քան զայն ժամանակս չկամէին լսել, զոնէ յորմէ հետէ 'ի մոգուցն լուան՝ պարտ էր ընթանալ, և չհետեալ. այլ ոչ կամեցան. վասն այնորիկ մինչդեռ նոքա 'ի քուն կային՝ այլքն յառաջեցին։

ԳՈՐԴՈՐԱԿ

Զի արդ ստէպ երթիցուք և մեք զհետ մոգուցն. զվայրենական սովորութիւնսն նման նոցին 'ի բաց ընկեսցուք. և 'ի հեռաստանէ գալ մի դանդաղեսցուք, զի արժանի լիցուք տեսանել զԲԷ. քանզի և նոքա եթէ չէին հեռացեալ յիւրեանց աշխարհէն, զնա ոչ տեսանէին։ Փախիցուք զերկրաւոր իրաց. քանզի և մոգքն մինչ 'ի պարսս էին, զաստղն տեսանէին. և իբրև անտի հեռացան, արժանի եղեն տեսանել զաստեղակնն արդարութեան։ Զյա թերևս տեսանէին իսկ ոչ զաստղն, եթէ ոչ յօժարութիւն յարուցեալ խաղացեալ էին։ Զարիցուք և մեք, և 'ի տուն մանկանն ընթացցուք. թէպէտ և թագաւորք և զօրք և բրուտաւորք զմանապարհն ունիցին, մի կասեսցուք ըզդուրթն. զի այնպէս զնամ դժուարութիւն որ 'ի վերայ կայցեն՝ մերժեսցուք։ Քանզի և նոցա թէ չէր զմանուին տեսեալ, չապրէին 'ի տապնապէ թագաւորին։ Զյաս քան զմանուին տեսանելոյ՝ արտաքրք և վրտանկք և խռովութիւք յամ կուսաց կային 'ի վերայ.

իսկ յետ երկիր պագանելոյ, խաղաղութիւն և անհոգութիւն. և ոչ ևս աստղ, այլ հրեշտակ յինքն առնոյր զնոսա։ Օ՛ի քահանայք եղեն յերկրպագութէն, և պատարագս մատուցին։

Այսուհետև և քո թողեալ զհրեական ժողովուրդն, զամբոխեալ զքաղաքն, զսպանող բռնաւորն, զաշխարհական ցնորս պաճուճանաց, փութա՛ի Լեթեզահէմ, ուր տուն հոգևոր հացիս է։ Այլ եթէ հովիւ ևս իցես՝ և կամիցիս այսր գալ, տեսանես մանուկ՝ ի խանձարուրս յիջեալսն. և եթէ թագաւոր իցես՝ և այսր ոչ գայցես, չէ ինչ քեզ օգուտ՝ ի ծիրանեացդ։ Այլ եթէ մոգ, չէ քեզ ուստեք արգել. միայն թէ պատուել և երկիր պագանել գայցես, և ոչ առոսն հարկանել զորդին ՝այ. եթէ դողութիւն և խրնդութիւն զայն առնիցես, քանզի մարթի երկոցուն երթալ՝ի միասին։ Լ՚այլ զգոյշ լեր գուցէ ըստ օրինակի Հերովդի լինիցիս, և ասիցես, եթէ եկեալ երկիր պագից նմա, և եկեալ սպանանել կամիցիս։ Վանզի նմա նման են, որք խորհրդոյն անարժանութիւն հաղորդին։ Պատապարտ լիցի այնպիսին մարմնոյ ՝ամն։ Վանզի ունին յանձին զբռնաւորն՝ որ խանտայ ընդ թագաւորութիւն Պէթ, զանօրինագոյնն քան զՀերովդէս, զմամոնայ։ Վանզի նա կամի տիրել, և առաքէ զիւր երկրպագուսն կերպարանօք երկրպագութիւն սպանանել։

Այրեցիցուք, գուցէ կերպարանս աղօթականաց և երկրպագութիւն[1] ունիցիմք, և արդեամբք զնոցին հաւատակոն ցուցանիցեմք։ Օ՝ամ ինչ թօթափեսցուք՝ի ձեռաց, եթէ երկիր պագանելոյց իցեմք։ Այթէ ոսկի ունիցիմք, նմա մատուցցուք, և մի յերկրի թաղեալ ծածկեսցուք։ Այթէ խուժ դուժքն յայնժամ բերին մատուցին՝ի պատիւ, դու զի՞ գործիցես, զի և կարօտելոյն անգամ չտաս։ Այրքա այնչափ ՝ամանապարհս հատն եկին, զի զմանուկն տեսանիցեն. դու զո՞ր պատասխանատուութիւն ունիցիս, որ ոչ և ընդ մի կարՃ փողոց անցանիցես՝ երթալ զհիւանդն և զբանտարգել տեսանել։ Ամ և բազումք կալանաւորաց

1 Ի փարիզեան օրինակն երկրպագութեան։

և Թշնամեաց ողորմին, և դու քում բարեկամին [1] և ոչ չողորմիս։ Այրա ոսկի բերին մատուցին, և դու նկանակ մի հաց հաղիւ թէ տայցես։ Այրա զաստղն տեսին և ուրախ եղեն, և դու զԼՃ իսկ տեսանես օտար և մերկ, և չդթաս։ Ամ՚ի ձէնջ վասն ՎՃՆի այնչափ տարաշխարհս եհար՝ որ յայդչափ բիւրապատիկ բարութիւն վայելէք, որչափ խուժդուժքն, մանաւանդ եթէ իմաստնագոյն քան զիրիլիստիայս։

Այս զինչ ասացից՝ եթէ այնչափ Ճանապարհ հատին. զի բաղում կանայք այնպէս քնքշին մեզ [2], մինչև և զմի անդաստակ [3] չանցանել, և չտեսանել զնա ՚ի հոգևոր մուրս, եթէ ոչ ջորեօք բարձեալ բերիցին։ Լսակ ոմանք թէպէտ և հետի շրջիցին, կէսք զաշխարհ հայանն իրացս զբօսանս, և այլք ՚ի թատերսն քան այսր գալ՝ լաւ համարին։ Խուժդուժքն մինչև տեսեալ էր զնա, այնչափ Ճանապարհս հատին [4] վասն նոքա. դու և ոչ յետ տեսանելոյ՝ նախանձաւոր լինիցիս նոցա, այլ թողեալ զնա յետ տեսանելոյն՝ ընթանաս զի զմիւսն հապիտս տեսանիցես։ Դարձեալ զնոսին առ՚ի՝ զորոց յետանդն ասէի։ Օ սա՚ի մուր եդեալ տեսանես և թողուս, զի զկին թշնամեալ՚ի մահէն տեսանիցես. օրէնք բարկութեան չիցեն արժանի այնպիսի իրք։

Դայց աղէ՝ ասա. եթէ ոք զքեզ յարքունիս տանել խոստանայր՝ և զթագաւորն ցուցանել, միթէ ունէիր յանձին զթատրն փոխանակ այնր տեսանել. թէպէտ և ոչ անտի մինչ է օգուտ զտանել։ Այս ասա աղբեւր հրեղէն հոգևոր բղխէ ՚ի սեղանոյս. և քո զայս թողեալ՝ ՚ի թատրն Ճեպիս երթալ տեսանել զկանայս ՚ի լոյզս, խայտառակեալ զընութիւն. թողեալ զՎՃՆ՝ որ նստի առ աղբեւրս, քանզի և այժմ առ աղբեւրն նստի. ոչ ընդ շամարտացոյ [5] միայն խօսի, այլ ընդ համբոյրն քաղաքիս։ Դայց թերևս և այժմ ընդ շամարտացոյն. քանզի չիք ոք և այժմ առ նմա մնա. այլ ոմանք մարմնով միայն, և այլք և

1 ՚Ի փարիզեանն Բարէբարին։
2 ՚Ի փարիզեան ինչքն։
3 ՚Ի լուս. և ՚ի փարիզեանն անդաստան։
4 ՚Ի լուս. և ՚ի փարիզեանն հարին։
5 ՚Ի փարիզեան օրինակն, զամբարշտոյն, ասա և ՚ի վայր։

անձամբ իսկ մեկուսի. և սակայն նա ոչ թողու և գնայ, այլ կայ և մնայ, և 'ի մէջ խնդրէ ոչ ջուր, այլ սրբութիւն. քանզի զսրբութիւնն սրբոց տայ։ Ո՛չ ջուր հնորհէ մեզ յայսմ աղբերէ, այլ արիւն կենդանի. թէպէտ և մահու նշանակ է, այլ կենաց պատճառք եղև։ Իսկ քո թողեալ զաղբերս արեան՝ զահագին բաժակս, 'ի սատանայական աղբերն ընթանաս[1], 'ի լոյդս[2] զբոզսն տեսանել, և նաւակոծուիս հոգիսդ գործելոյ։ Քանզի ջուրն այն՝ ծով զեղխուեցեալ է. ոչ զմարմինս հեղձուցանել, այլ ոգւոց նաւաբեկութիւնս գործել։ 'Կա մերկանդամ իջեալ զուղղ[3], և քո տեսեալ՝ ընկղմիս յանդունդս գիջութեն։ Օ 'ի այնպիսի է ուռկան բանսարկուին. ոչ զիջեալն 'ի ջուր, այլ զնոսա որ 'ի վերն նստիցին՝ և սաստիկ քան զԹարաւոնն հեղձուցանէ, որ յայնժամ կառաջն և երիւաւոջն ընկղմեցաւ։

Այս եթէ էր հնար զոգիսն տեսանել, զբազումս ցուցանէի ծփեալս կոծեալս 'ի վերայ ջուրցն այնոցիկ՝ իբրև զմարմինս եգիպտացւոցն։ Այս անհնարին վտանգք այն են, զի խրախութիւն զհամաջուանջ սատանայնոյն կոչեն. և զկորստեան ծոմն՝ վայելչութիւն ծովակս անուանեն. թէպէտ և դիւրագոյն իսկ ոք ընդ եգեսացւոց և ընդ տիւրենացւոց համատարածն անցանիցէ անկասկած, քան ընդ այնպիսի տեսիլ։ 'Կախ զցայգն իսկ՝ ամ յառաջագոյն գրաւէ ակնկալութիւն զնոցա ոգիսն սատանայ. և իբրև ցուցանէ՝ որում ակն ունէին, կապէ վաղվաղակի և 'ի գերութիւն վարէ։ Այս մի, զի չխառնակեցար ընդ բոզին, զանձն սուրբ 'ի մեզայ համարիցիս. յօժարութիւնդ մնացդ զնամ կատարեցեր։ Այնթէ 'ի ցանկութիւն ըմբռնեալ իցես, յաճախագոյն բորբոքեցեր զբոցն։ Այս եթէ չլեկիցիս ինչ 'ի տեսլեանցն, սաստիկ ամբաստանութիւնդ արժանի ես. զի այլոց գայթագղութիւն եղեր, և այնպիսի տեսլեանց յորդորիչ, և զքոյին երեսս յամոթ առնես, և հանդերձ երեսօքդ և զոգիսդ։

1 'Ի լուս. էրթաս, այլ և 'ի փարիզեանն։

2 Փարիզեան օր. 'ի ղոլ։

3 Փարիզեանն Ի՛ՔՏ 'ի ղոլ։

Լսել զի մի միայն պատուհասասկոծ առնիցեմք, օն առեալ և օրինակ ինչ ուղղութեան հնարեսցուք։ Լիս զոր օրինակ իցէ հնարել։ Զերոց իսկ կանանցն յանձն առնեմ զձեզ, զի նոքա խրատիցեն զձեզ։ Ձեզ պարտ էր լինել նոցա վարդապետ՝ ըստ Պաւղոսի օրինացս. իսկ որովհետև եղծաւ կարգն վասն մեղացն, և մարմինն 'ի վեր եղև և գլուխն 'ի վայր, և մեք ըստ նմին գնասցուք։ Լիս եթէ ամօթ համարիս զկինն վարդապետ ունել, փախիր 'ի մեղացն, և վաղվաղակի պատասպարիցիս եւանել յաթոռն, որ տուաւ քեզ յայր։ Որպէս զի մինչ 'ի մեղսն իցես, ոչ միայն առ կանայս, այլ և առ նուազագոյն անասունս առաքէն զքեզ գիրք։ Զամաչիցէք որ բանիւք պատուեալ էք՝ երթալ լինել մրջեան աշակերտ. և ոչ գրոյն ինչ բամբասանք են այն, այլ նոցա՝ որ իւրեանց աղնուականութենն մատն եղեն։ Օ նոյն այժմ և մեք ասասցուք [1]. առ այժմ զքեզ կնոջն յանձն առ բասցուք. եթէ գնա անգոսնիցես, յանասնոցն վարդապետանոցս յղեսցուք, և ցուցցուք եթէ ոչ բաւ հաւք, քանի ձկունք, ոչ բան չորքոտանիք և սողունք՝ քան զքեզ պարկեշտագոյնք և ցածունք գտանիցին։ Պպա եթէ ամօթ ինչ և պատկառանս զհամեմատութեն համարիցիս, եկ անդրէն 'ի քո աղնուականութենն, և փախիր 'ի ծովէ գեհենին և հրեղէն գետոյն [2], զԹատերցն աւազանէ ասեմ։ Օ ի այն աւազան՝ հրեղէն ծովուն առիթ է, և զբոցեղէն անդունդն բորբոքէ։ Օ ի եթէ որ հայի ընդ կին՝ անդէն ընայցէ, որ մերին տեսանէ՝ զիսրդ ոչ բաղմապատիկ գերի լինիցի։ Լիչ այնպէս ջրհեղեղն առ Դաւիս սատակեաց զազգ մարդկան, որպէս նոքա արդ 'ի լցղսն [3] զամենեսին ընկղմեն բազում ամօթով։ Օ ի այն անձրև թէ և մահ մարմնոցն գործեաց, այլ զոգւոցն չարիս խափանեաց. և սա զնորին հակառակն առնէ. թէպէտ և մարմինքն կայցեն, զոգիան կորուսանէ։

Դուք, յորժամ գահերիցութեան բանք իցեն, յա-

1 Փարիզեան օրինակն արա. ղեն փէրոցն։ ցոտ։

2 Փարիզեան օրինակն 'ի հրեղ. 'ի ղղեն։

3 Փարիզեան օր. նոյա անդ

ռաջնայք 'ի վերոյ քան զնամ տիեզերս նստել. քանզի զառաջին՝ մեր քաղաքս էառ զանուն քրիստոնեութեան։ Իսկ 'ի ցածութեան հրահանգն՝ և քան զ չինաստանագոյն քաղաքսն վատթար դտանիք, և չամաչէք։ Այո, ասեն, և զինչ հրամայիցես առնել. 'ի լերինս երթալ և վանականս լինել։ Ինդ այն իսկ կարի նեղիմ, զի նոցա միայն պատշաճ համարիք զցածութիւնն և զպարկեշտութիւնն, թէպէտ և Աստ հասարակաց եդ օրէնս։ Այանզի յորժամ ասիցէ, թէ "Որ հայի 'ի կին մարդ 'ի պատճառս [1] ցանկութեան", ոչ վասնականին միայն ասէ, այլ և կանամբոյն։ Զի և լեառնն իսկ յայնժամ ամենեքումբք լի էր սիրելեօք։

Զ մտաւ ած այսուհետև զայն թատր, և առեալ զսատանայականս. և մի դժկամակ լինիցիս ընդ բանիս ծանրութեան։ Զարգելում զամուսնութեան, և չխաւփանեմ զվայելեալսն [2]. այլ կամիմ զի ցածութեան լինիցի, մի ամօթով և բամբասանօք և բազում պատժով։ Զդնեմ օրէնս 'ի լերինս երթալ և յանապատս բնակել, այլ քրիստոնեայ լինել՝ հեզ և ցածուն, և 'ի մէջ քաղաքի կալ։ Այանզի ամ օրէնք՝ մեր և վանականացն հասարակաց են, բայց յամուսնութենէ. մանաւանդ եթէ և յայնմ ևս հրամայէ Պաւղոս ամենեցուն հասարակ լինել։ "Ընցանէ, ասէ, վայելչութեան աշխարհիս. զի որ ունիցին կանայս, որպէս թէ չունիցին"։ Զհրամայեմ, ասէ, 'ի լերինս ելանել. թէպէտ և զայն իսկ կամէի՝ վասն քաղաքացս սոդոմայեցւոց գործոցն նմանելոյ, բայց չտիպեմ ինչ յայն։ Ի տան կեցեալ՝ և որդեակս և կին ունիցիս, այլ մի թշնամաներ զկինն, և մի խայտառակեր զորդիսն. մի բերեր 'ի տուն 'ի թատերց ըզժանտ սիսն։ Զլսես Պաւղոսի՝ որ ասէ, եթէ "Այր իւրում մարմնոյ ոչ իշխէ, այլ կինն". և հասարակաց դնէ զօրէնսն։

Զոտ, եթէ յեկեղեցի ստէպ կինն գայցէ, դառն դատախազ լինիս. և զքո 'ի թատերսն դեգերել ցե-

1 Փարիզեան օրինակն — 'ի դարձառս։

2 Փարիզեան օրինակն զվայելեալսն։

բեկոյ չհամարիս ամբաստանութիւն արժանի։ Ա.յլ՝ի կնոջէն այնչափ ճշդիւ ցածութիւն պահանջէս, մինչև արտաքս անգամ չհամարիս իշխանութիւն ելանելոյ. և քեզ զնմա իշխանութիւն հաշուիս։ Ա.յլ ոչ հրամայէ քեզ այնպէս Պաւղոս, որ և կնոջն զնոյն իշխանութիւն ետ. զի և կնոջ, ասէ, այրն զպատշաճ պատիւն հաստուցանիցէ։ Որ պատիւ ելցէ յորժամ՝ի կարևորսն թշնամանիցես զնա, և զմարմինն նորա պոռնկաց տայցես. զի քո մարմինդ՝ նորա մարմին է։ Յորժամ խառնութիւնս և կռիւս՝ի տուն բերիցես, յորժամ այնպիսի ինչ առնես՝ի հրապարակս, զոր թէ և՝ի տան խօսիցիս՝ յամօթ առնես զկինն որ լսէ, յամօթ և զդուստրն որ մնա կայցէ. զի հարկ է կամ լռել, կամ այնպիսի ինչ ծանակել. զոր թէ և ծառայք խօսիցին, զանի արժանի էն։ Լաւ արդ աղէ՝ ասա, զոր պատասխանատուութիւն ունիցիս, յորժամ զոր խօսէն չէ բարւոք՝ զայն տեսանել մեծաւ փութով ջանայցես. զոր և պատմէն չէ՝ ախորժելի, զայն քան զնմա լաւ համարիս։

Բայց առ այժմ զի մի կարի ծանրագոյն երևէ ցայց, ասա հանգուցից զբանս։ Իսկ եթէ տակաւին՝ի նմին կայցէք, և ես քաջասուր սրեցից զերկաթն, զի՝ի խորոց հատանիցեմ զվէրն. և ոչ դադարեցից մինչև ցրեցից զթատրն սատանայի, և սրբեցից զժռոմս եկեղեցւոյ։ Օ՛ի այնպէս և յաստէն[1] ամենայն ապրիցիմք, և զՀանդերձեալ կեանսն շահեսցուք հնորհօքն և մարդասիրութեամբ նոր մերոյ Յսի Քրիստի. ընդ որում հօր, միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1 Փարիզեան օր. յոգի։

ՃԱՌ ՈՒԹԵՐՈՐԴ

« Իբրև եկին 'ի տունն՝ տեսին զմանուկն հանդերձ Մարեմաւ մաւրն իւրովն։

Եւ զիաւրդ Ղուկաս ասիցէ, թէ 'ի մուրն գներ մանուկն. և Մատթէոս թէ առ մրն։ Օ՛ի մայրն իբրև ծնաւ, վաղվաղակի դադարեցոյց զմանուկն 'ի մուրն։ Զանազի 'ի բազմութենէն որ ժողովեալ էին վասն աշխարհագրին՝ չէր ուրեք մարթ տուն գտաւ նել. զոր Ղուկաս իսկ նշանակէ յասելն, եթէ « Զ ամն զի չէր նոցա տեղի յիջաւանին »։ Եւ ասպա յետ այնր առեալ ունէր զնա 'ի վերայ ծնկաց Մարիամ։ Զնդէն վաղվաղակի իբրև հասին 'ի Բեթղեհեմ, ստիպեցին երկունքն և ծնաւ։ Օ՛ի և այսու ևս ուսանիցիս զբնաւ իսկ զտեսչութիւն. զի ոչ վայրապար կամ յանկարծադէպ ինչ իրք գործէին, այլ ըստ ճաշեղէն իւն առաջնորդութեամբ ըստ կանխասաց կարգի մարգարէութեան կատարէր ամ։

Եւ արդ զինչ ինչ հաւանեցուցանէր զմոգն էրկիր պագանել. զի ոչ կոյսն ինչ նշանաւոր, և ոչ տունն ինչ երևելի, և ոչ այլ ինչ սպասք՝ որ կարէին զարմացուցանել և յորդորել։ Զ.յլ նոքա ոչ միայն երկիր պագանէին, այլ և զգանձս ևս բացեալ մատուցանէին պատարագս։ Եւ պատարագս ոչ իբրև մարդոյ, այլ իբրև ամ. քանզի հնդրուկն և զմուռս այնմ նշանակիչք են։

Իսկ զինչ ինչ արդեւք հաւանեցոյց զնոսա 'ի տանել ելանել, և զայնչափ վայրս հատանել անցանել։ Զ.յլ աստղն գուշակ, և ամ զմիտն յորդորել հոգևոր լուսաւորութիւն՝ առ սակաւ սակաւ առաջնորդել ա ծել 'ի կատարեալ գիտութիւն։ Օ՛ի թէ այսպէս չէր, ապա ոչ յորժամ զայնպիսի աղքատութիւնն տեսանէին՝ առնուին յանձն զայնպիսի պատիւ առնել մանկանն. զի ոչինչ պատուական տեսանէին անդ, այլ զմուրն և զնոսց և զմայրն աղքատ։ Եւ զի մերկ

իսկ տեսանիցես զմոգուցն իմաստութիւն, և ուսանիցիս զի ոչ իբրև մարդոյ լսիցի, այլ իբրև ՝ի բարեբարի մատուցեալ երկիր պագանէին։ Զանգի և ոչ իւիք գձուռ իրօք՝ զոր տեսանէին, դայթագղէին. այլ և երկիր պագանէին և պատարագս մատուցանէին, օտարացեալք զատեալք ՝ի հրեական թանձրութենէն։ Օ՛ի ոչ արքաւս կամ ոչխարս զենուին, այլ զեկեղեցական պաշտօնն յառաջագոյն նկարեալ յանձինս ցուցանէին։ Զանգի զզգաստութիւն գիտութիւն և զհնազանդութիւն և զսէր մատուցանէին նմա։

«Եւ հրաման առին, ասէ, ՝ի տեսլեան։ զի մի անդրէն դառնայցեն առ Հերովդէս, այլ ընդ այլ ճանապարհ գնասցեն անդրէն յաշխարհ իւրեանց»։ Եւ արդ տես ասա զհաւատս նոցա. զի ոչ դայթագղեցան, այլ հլուք և հպատակք գտանէին յամի. և զի ոչ խառվէին ինչ, և ոչ զմտաւ այնպիսի ինչ ածէին, թէ մեծ ինչ ոք էր մանուկն և զօրաւոր, ընդդէմ հրամանն տայ գաղտ փախչել. զի անտի յայտ եկաք և համարձակեցաք առ ազգն և թագաւորն, և աստի գաղտագողի արձակէ զմեզ հրեշտակ քաղաքիս։ Այլ ոչինչ այսպիսի զմտաւ ածէին, և ոչ խօսեցան ինչ։ Այսպիսի իսկ միտք պատշաճէն առ հաւատս. ոչ համարս խնդրել, այլ հաճել հնազանդել հրամանացն որ տացին։

«Եւ յետ գնալոյ, ասէ, մոգուցն՝ ահաւասիկ հրեշտակ յայտներ Յովսեփայ. արի առ, ասէ, զմանուկն և զմայր իւր, և փախիր յերկիրն եգիպտացւոց»։ Այստ այսր և անդր հարկանելոյ զմիտս է և վասն մոգուցն և վասն մանկանն. զի թէ նոքա ոչինչ խառվեցան, այլ մեծաց հաւատոց ցուցին մեզ նշանակ, սակայն պարտ է խնդրել, թէ ընդէր մինչ անդէնն իսկ էին չապրեցան ՝ի կասկածոյն ոչ մանուկն և ոչ մոգքն։ Օ՛ի նոքա ՝ի պարսից աշխարհն անկան փախստական, և սա մարրն հանդերձ յԵգիպտոս։ Այլ պարտ էր, ասէն, և անկանել ՝ի ձեռս Հերովդէի, և ոչ փնասել ինչ։ Այլ ոչ համարեր եթէ արգարև ճշմարտութիւն մարմին առ, և ոչ հաւատարիմ լիներ անտեսութենն մեծութի։ Օ՛ի թէ այս նմա եղև, և բազում ևս այլ իրք մարդկեղէնք մատակարարեցան,

սակայն իշխեցին ասել ոմանք՝ եթէ առասպելք և համբաւք են զմարմնոյն առնուլ, զիարդ ոչ 'ի մեծամեծ ամպարշտութիւնս անկանիցին, եթէ ամ ուրեք զայ զպատշաճն և եթ էր ցուցեալ ըստ իւրում ամենազօր զօրութեան։

Լ. Յլ զմոգն արձակէր վաղվաղակի, զի միանգամայն և վարդապետս և պարսից աշխարհին առաքեսցէ։ Այլ ընդ այնմ՝ զի և զկատաղութի մարդախոշոշ բռնաւորին ցածուսցէ. զի ուսցի թէ յանուզուտ իրս յանդգնի. և զցասումն շիջուսցէ, և 'ի զուր աշխատութենէն մերժեսցէ։ Այնպէս ոչ միայն հարստութիւք յաղթել թշնամեացն, այլ դիւրագործ իրօք ունել արժանի է նորա զօրութիւն։ Լ. Յապէս և զեգիպտացիսն հրէիւքն խաբեաց. թէպէտ և կարող էր յայտնի զմեծութիւն եգիպտացւոց հանել տալ 'ի ձեռս եբրայեցւոցն, սակայն գաղտնի և պատրանօք հրամայէր զնոցն առնել. որ և ոչ սակաւ ինչ քան զայլ մեծամեծ նշանս ցուցանէր զնա ահագին առաջի թշնամեացն։

Լսակ ասկաղենացիքն և այլքն ամենեքեան՝ յորժամ առին զտապանակն, և հարկանիցին հարուածովք, տային խրատ միմեանց՝ չպատերազմել, և ոչ կալ հակառակ այլոցն և նշանաց. և այսպիսի ինն միտս 'ի մէջ բերեալ՝ ասէին, թէ ընդէր խստացուցանէք զսիրտս ձեր, որպէս խստացուցին եգիպտացիքն և Փարաւոնն. ոչ ապաքէն յորժամ խաղացն ընդ նոսա ՅԱԾ, ապա արձակեցին զժողովուրդն։ Օ այս ասելով ոչինչ փոքր քան զայլ մեծամեծ նշանս ցուցանէին, այլ զօրութեն և մեծութեն այ համարէին հանդէս։ Զոյնպէս և որ ասին եղև կարէր ստոյգ ցուցանել զխստապարանոցսն։

Այլ արդ միտ դիր, որպիսի ինչ պարտ էր տանջանօք տանջել Հերովդէի և հեղձնուլ և մղձկել, յորժամ լուաւն՝ եթէ այնպէս խաբեցաւ 'ի մոգուցն։ Այլ արդ եթէ չեղև պիտանի, ոչ այնր ՝ ինչ միտս էր՝ որ զայն այնպէս մատակարարեաց, այլ նորա կատաղութենն յաճախութի։ Օ ի որովք կարօղն էին զնա

1 Յօրինակին «յն», եդաք ըստ լուս։

խրատել և ձգել 'ի չարեաց, չանսայր, այլ ևս քան զևս գրգռէր և ածէր պատիժս 'ի վերայ անձինն անմտութիւն։

Եւ ընդէր, ասեն, Յոգիպտոս առաքէր զմանուկն Մանասէանդ զի և աւետարանիչն իսկ յայտ առնէ զպատճառսն։ "Օ 'ի կատարեսցի, ասէ, բանն՝ որ ասացաւ մարգարէին, եթէ Յոգիպտոսէ կոչեցից զորդի իմ"։ Եւ միանգամայն զի և մեծամեծաց յուսից տային աւետիք աշխարհաց անդէն 'ի սկզբանն։ Զանգի Զաքարիան և Յոգիպտոս առաւել քան զամ երկիր բորբոքեալ էին ամպարշտութիւն, ցուցանէ անդէն 'ի սկզբանն՝ եթէ նախ զնոսա պարտ է աւծել յուղղութիւն, և յանպիտանութէն առնել պիտանիս. և նոքօք յօժարեցուցանել զամ տիեզերս՝ ունել ակն և սպասել յուսոյ մեծի փրկութեն։ Եւ այսպէս զմիոյն զմոգսն կոչեաց ած 'ի պաշտօն, և 'ի միւսն իւրովի երթեալ հասանէր հանդերձ մարգն։

Եւ հանդերձ այսու զոր ասացաքս, և այլ ինն ուսանիմք աստի, որ ոչ սակաւ ինչ շահ իցէ մեզ յիմաստութիւն և 'ի զգաստութի։ Եւ զինչ ինչ իցէ այս. անդէն 'ի սկզբանն փոքռութեց ակն ունել, և նենգելոյ յայլոց։ Եւ արդ տես անդստին իսկ 'ի խանձարրոցն զնոյն լեալ։ Զանգի 'ի ծնանելն նորա՝ և բրնաւորն մոլէր, և փախուստ և խախուտք լինէին արտաքս քան զսահմանս աշխարհին. զի ոչ մօրն ինչ ումեք մեղուցեալ էր և ոչ մանկանն, և յօտար աշխարհ լինէին հալածականք։ Օ 'ի զայս իբրև լսիցես, յորժամ հոգևոր ինչ իրաց արժանի լինիցիս ստասաւորութեան, և նեղութիւք ինչ որոց ոչ ակն ունիցիս՝ գայցեն 'ի վերայ, մի իշխեսցես սոսկալ[1], եթէ չէի այսմ արժանի, այլ պատուոյ և պսակի և պայծառաւորն երևելի լինելոյ, քանզի զհրամանն տերունի կատարեցի։ Զայլ ունիս օրինակ տանելոյ ամի ժուժկալութիւն, 'ի վերայ հասեալ՝ թէ մանաւանդ այն է կարգ հոգևոր իրաց, ամ ուրեք փոքռութիւս վինակակիցս ունել։

Եւ արդ տես զայնպիսի աղէտս. ոչ միայն 'ի վե-

1 'Ի լուս. ասել։

բայ մանկանն և մծրն հասանէին, այլ և 'ի վերայ այլ-
ազգեացն մոգուց. զի և նոքա գաղտագողի փախ-
չէին։ Եւ մայր մանկանն հանդերձ մանկամբն, որ
ոչ երբէք գիտեր զայլոց տուն, բայց միայն զիւրն,
անկեալ 'ի տառապանս, դէմ եդեալ տարադէմ
գնայր յօտար երկիր հրամանաւ՝ վասն սքանչելի ծնընդ-
դեանն և հոգևոր երկանցն։

Եւ անդ էր տեսանել զարմանալի և չքնաղ իրս։
Օ՛ի պաղեստինացւոց աշխարհն նենգէր և հալածա-
կան առնէր, և Եգիպտոս ընդունէր և ապրեցուցա-
նէր զհալածականն։ Զանգի ոչ եթէ միայն յորդիս
նահապետին նկարէին իրքն՝ որ յապայ լինելոց էին,
այլ և 'ի տերն իսկ զլիովին։ Օ՛ի որ յայնժամ 'ի
մանկութենէն 'ի նա նկարէին, յառաջագոյն քարոզէին
զայլն ևս որ յետոյ էին լինելոց, որպէս իշոին և
յովանաւորն եղև։ Եւ արդ երևէր հրեշտակ, ոչ
Մարեմայ՝ այլ Յովսեփայ. և զինչ ասիցէ,

"Զրի առ, ասէ, զմանուկդ և զմայր իւր"։ Եւ
ընդէր ոչ ասիցէ զկին քո, այլ զմայր մանկանդ։ Զ-
յալ քանզի ծնունդն կատարեցաւ, և կարծիքն բաշանն,
և այլն հաւատաց, ապա այնուհետև համարձակու-
թիւն ասէր հրեշտակն, ոչ զմանուկն և զկին քո, այլ
զմանուկն և զմայր իւր, և փախիր յերկիրն Ե-
գիպտացւոց։ Զա և զպատճառսն իսկ ասէ, եթէ
"Հերովդէս 'ի խնդիր է կորուսանել զանձն ման-
կանդ"։

Եւ թէպէտ և լուաւ Յովսէփ, ոչինչ դայթագղե-
ցաւ 'ի միտսն. և ոչինչ ասաց թէ ծաղր իմն են իրքս։
Ոչ յառաջագոյն ասէիր եթէ փրկելոց է զժողո-
վուրդն. դա՝ աւադիկ և զանձն ևս չկարէ փրկել. և
փախչել հասանիցէ և մարդապուր լինել և յօտար
յաշխարհ երթալ. թէ այս այսպէս իցէ, ապա աւե-
տիքն չեն աւետիք։ Զ-յալ քանզի հաւատացեալ էր
յոյժ այնց, ոչինչ ասաց այսպիսի. նա և ոչ զժամա-
նակ դարձին քննէր ուսանել. և ոչ հրեշտակն ինչ եղ
նմա ժամ՝ այլ խառնիխուռն ասէ, "Զնդ լինիջիր
մինչև ասացից քեզ"։ Սակայն և ընդ այն չդանդա-
ղեցաւ, այլ յանձն առնոյր յօժարութիւն ուրախու-
թիւն համբերել փոքանաց։ Զսկ մարդասէրն ՝ած ընդ

նեղութիւնս և մխիթարութիւն խառնեաց. որպէս և առ ՝ամ սրբովք իսկ առնէ. զի ոչ բնաւ նեղութիւնս ածէ ՝ի վերայ, և ոչ ամենևին անդորրութիւնս, այլ հասարակ խառն[1] երկոքումբք կողմամբք անկանէ զաւուրաբիւրութիւնս արդարոց. որպէս և անդ իսկ ասաց։

ԼՀ. արդ տես, զի նայեցաւ ընդ կոյսն յղի, և ածզնա ՝ի խռովութիւն. և յայնպիսի խռովութիւն, զի ՝ի հնութիւն կարծեր զյղութիւն. այլ վաղվաղակի գայր հասանէր հրեշտակն, և զկարծիսն բառնայր, և ըզխռովութիւն փարատեր, և տեսլեամբ մանկանն վայելէր ՝ի մեծի ուրախութիւն։ Լսակ զայսպիսի ուրախութիւն վիշտքն դարձուցանէին ՝ի տրտմութիւն. զի լսէր թէ քաղաքն խռովեցաւ, և թագաւորն դիւացաւ խնդրել զանձն մանկանն։ Լ.յլ զայն տրտմութիւն այլ միւս ևս ուրախութիւն մուտացուցանէր. զի ասաղ երևէր, և մոգք ՝ի հեռուստ գային յերկրպագութիւն։ ԼՀ դարձեալ զայն ուրախութիւն, հասեալ այլոց աղէտից ՝ի վերայ՝ չառնէին յուշ։

"Լնդրէ, ասէ, Հերովդէս զանձն մանկանդ,,։ ԼՀ փախչել և մարդապուր լինել մարդկօրէն պարտ էր։ ԼՀ ընդէր արդեաք։ Լ.յլ քանզի չէր պարտ և պատշաճ անդէն ՝ի մատաղ հասակին ցուցանել սքանչելիս. զի մի այնպէս կարծիցի թէ և չեղև իսկ մարդ։ Ա՝ամն որոյ և ոչ վայրապար տաճար ինչ ՝ի բնակութիւն ստեղծանէր, այլ յղութիւն ՃՀմարիտ, և ինամամեայ ժամանակաց ծախք և երկունք և ծնունդ և կաթամբ մանել. և մեղմով ըստ մարմնոյն գայր կարգաւ յաՃու�ն և ՝ի հասակ առն կատարելոյ, զի ամենևին լինիցի դիւրընկալ խորհուրդ անտեսութեան։

ԼՀ ընդէր, ասեն, այնչափ նշանք եղեն ՝ի սկզբան ծննդեանն։ Ա՝ամն մօրն, վասն Յովսեփայ, վասն Շ մաւոնի և վասն հովուացն, վասն մոգուցն և վասն նոցին իսկ հրեիցն ամենեցուն. զի թէ կամեցեալ էր Ճշմարտութիւն նայել ընդ իրսն, ոչ սակաւ ինչ պտուղ շահից ժողովէին ՝ի յօրինակ այլոց և մեծամեծ ի բաց՝ որ առ յապայն էին լինելոց։

ԼՀ ընդ այն մի ինչ խռովիցիս, եթէ մարդարէքն

1 Ճառընա. Գ. հասարակաւոր։

ոչ Ճառեցին ինչ վասն մոգուցն. զի ոչ զնամ ինչ ասաց-
ցին յառաջագոյն, և ոչ զնամ ինչ լուեցին։ Օ՛ի զոր
օրինակ որոց բնաւ չէր ինչ լուեալ զնմանէ, արարին
նոցա զարմանալ և խռովել իրքն կատարեալք՝ ի ժա-
մանակին, նոյնպէս թէ զնամ ինչ յառաջագոյն էր
ասացեալ, 'ի քուն առնելին զլսօղս. նա և աւետա-
բանչացն իսկ ոչ մնայր 'ի մէջ [1] ինչ Ճառել։

Լ՚սլ՝ եթէ վասն մարգարէութեան ինչ յերկուանայ-
ցեն հրեայք, ասիցեն թէ այն՝ զոր ասէն, թէ "Յա-
դիպտոսէ կոչեցից զորդի իմ", զնոցանէ իցէ ասաց-
եալ և ոչ զԼՀնեմ, ասասցուք և առ այն, եթէ առ-
անձինն իմն օրէնք են մարգարէութեան՝ ասել բազում
անգամ բազում ինչ իրս զայլոց, որ կատարիցին 'ի
վերայ այլոց [2]. որպ՝ զՀ մաւոիսէն և զՊ և եհայ ասէ, թէ
"Լաժանեցից զնոսա 'ի մէջ Յակովբայ, և սերմանե-
ցից զնոսա 'ի մէջ Լսրայելի"։ Լչ տեսանեմք զի ոչ
'ի նոսա կատարեցաւ, այլ 'ի Թոռունս նոցա։ Լչ որ
ինչ զՔանանայ մանկանէ Ճառեցաւ 'ի Լոյէ, 'ի գա-
բաւոնեացիս 'ի Թոռունս՝Քանանայ կատարեցաւ։ Լչ
օրհնութիւնքն Յակովբայ առ 'ի Ամահակայ, "Լինի-
ցիս, ասէ, տէր եղբօր քում, և երկիր պագանիցեն
քեզ որդիք հօր քո", ոչ 'ի նա կատարեցան, որ առ-
աջին և տագնապի՝ հանդերձ պատարագօք երթեալ
անկեալ 'ի գուշս պագանէր բազում անգամ երկիր
եղբօրն. այլ 'ի ծնունդս և 'ի Թոռունս նորա։ Օ՛ որ
և աստ 'ի դէպ է իմանալ։ Քանզի զիարդ ասիցի
Ճշմարտութիւն որդի ՝ այ, որ որթուն երկիր պագանէր,
և 'ի Լեգիպտոսէն կատարէր, և զուստերս և զդրա-
տերս դիւաց զոհէր։ Լսկ որ բուն Ճշմարտութիւն որ-
դին է, և զծնօղն պատուէ, և ինքն 'ի ծնողէն փա-
ռաւորի։ Լստ այնմ որպէս և էկն իսկ բարբառն
յերկնից, եթէ "Փառաւոր արարի, և դարձեալ
փառաւոր արարից"։ Օ՛ի թէ չէր եկեալ, և մար-
գարէութիւն իսկ զպատշաճ կատարումն ոչ առնոյր։

Լչ արդ տես, զիարդ առակաւ և զայն ևս ասէ
աւետարանիչն. զի կատարեսցի՝ ասէ. և յայտ առ-
նէ, զի թէ չէր եկեալ, և ոչ կատարէր մարգա-

1 'Ի լուս. Դ գծ։ 2 'Ի լուս. ոյոց։

բէուլթին, եթէ այս այսպէս չէր դիպեալ։ Եւ այս ոչ սակաւ ինչ և զկոյսն առնէր յայտնի և երևելի. զի որ ազգին ամի էր 'ի գովութեան աստիճանի, նոյն և նմա ամՃթ էր լինել։ Արանզի մեծամտելն իմն, և յարգոյ զանձինս այնու առնելն, եթէ Յեգիպտոսէ կոչեաց զնոսա ՃԾ։ Զոր և մարդաբէն ակնարկեր, եթէ ոչ ասպաբէն զայլազգիսն հանի 'ի Ղամբաց, և զասորիս 'ի Ղոթորայ[1]։ Եւ որպէս նոցա աւելի իմն զգուանք էին ելանելն Յեգիպտոսէ, նոյնպէս և կուսին։

Զայլ նահապետացն անդր իջանել, և ամ ժողովրդեանն միանգամայն անտի ելանել, խորհուրդ էր Աստի իջանելոյն և ելանելոյն անտի։ Արանզի և նոքա 'ի մահուանէ փախեան, և մեռ սովոյ իջին անդր. և սա 'ի մահուանէ և 'ի նենգութէ։ Զայլ նոքա յէջանելն 'ի սովոյն ապրեցին. և սա յիջանելն և յելանել զամ աշխարհս սրբեաց։

Եւ արդ տես, օրէսի ինչ 'ի մէջ խոնարհագոյն իրացն և ՃՃուԹեան յայտնի են։ Զի և հրեշտակն որ ասաց, թէ փախիր յերկիրն Եգիպտացւոց, ոչ խոստացաւ թէ և ես ընդ ձեզ եմ երթալոց. և չէջանելովն և չելանելովն ընդ նոսա յայտ առնէր, եթէ մեծ ուղեկից ունին ընդ իւրեանս զմանուէն։ Եւ զիրսն ամ այլակերպէր, զի անդէն ընդ յայտնէն՝ վաղվաղակի զթշնամին պատրաստէր սպասաւոր անտեսութեան։ Զի և մոգքն և այլազգիք թողին զդժոգակ հայրենի դիցն պաշտօն, և գային նմա երկիր պագանել։ Եւ Աբգոստոս կայսր լիներ սպասաւոր ծննդեանն՝ ուր ծնաւ՝ 'ի Ղեթղահէմ, հրամանաւ աշխարհագրին։ Եւ Յեգիպտոս ընկալեալ ապրեցուցանէր զնենգեալն և զփախստականն. և առնոյր առհաւատչեայ ընտանութեան. զի յորժամ քարոզիցեն զնա առաքեալքն, գտանիցէ պատճառս պարծանաց՝ թէ նախ ես ընկալայ և յանձանձեցի։ Զի թէպէտ և պաղեստինացւոց աշխարհին էին յառաջագիւտ պարծանք, սակայն Յեգիպտոս ջերմագոյն քան զնա գտանէր։

1 Յորինակին 'Ի Բոսորայ։

Այլ արդ երթեալ հասանէր յանապատն եղիպտացւոց. առաւել քան զդրախտն ծաղկալից և պըտղալից ցուցանէր։ Օ՛ի անդ բիւրուց բեւրք գունդք հրեշտակաց՝ ի կերպարանս մարդկան. անդ ժողովք մարտիրոսաց և դասք կուսանաց. անդ ամենեւին զամ բնաւորութիւն թշնամւոյն վանեալ և Աստի թագաւորութիւնն ծաղեալ ծաւալեալ։ Այլ զմայր քաղաքացն, որ զիմաստունսն և զնարտարախօսս և զմոգսն և զկախարդս մնուցանէր, և զպէսպէս մնք քինայս իւր գտեալ և այլոց ուսուցանէր, արդ տես զիարդ որսորդօքն զարդարեալ, ձկնորսօքն պարծեցեալ, խոտ արհամարհէ զիւրոյ իմաստնոցն խոբազիտութիւն. ՝ի մաքառաւորսն պանծացեալ, ՝ի խորանակարսն պերճացեալ, զնոսա և եթե ածէ զմտաւ, և զնոսին յանձին նկարէ՝ ՝ի խաչն յուսացեալ։

ՑՈՐԴՈՐԱԿ

Այլ այսպիսի բարութիւնք ոչ եթէ ՝ի քաղաքս միայն, այլ առաւել և ընդ անապատս տարածեալ։ Այլ անդ է տեսանել՝ ՝ի բնաւ իսկ աշխարհին զԱստի զօրականսն, զարքունական գունդսն, վերին զօրութեանցն առաքինիս։ Այլ այս ոչ եթէ յարս միայն է բեւեալ, այլ և ՝ի կանայս առաքինիս. որք ոչ վահան զանձամբ և ոչ սուսեր ՝ի ձեռին, ոչ ՝ի նուս երիւաբաց և ոչ ՝ի վաշտս հեծելոց, ոչ ՝ի զօրագլուխս հեթանոսօրէնս և ՝ի ճակատայարդարս կռապաշտս կանս, ոչ զաշխարհիս ինչ քաջութիւս և ոչ զդիւաց մոլորութիւնս յանձին ցուցանեն, այլ այլ իմն խիստ և ծանր պատերազմ։ Աստի արանց և կանանց հասարակաց է մարտ պատերազմի ընդ սատանայ և ընդ օդականն իշխանութիւն. և ոչ ուրեք փափկութի մարմնոյ կանանց լինի խափան առ այսպիսի պատերազմ։ Աստի ոչ եթէ պնդութի մարմնոյ պիտիցի, այլ ոգւոյն և մտաց յօժարութի. վասն այսորիկ բազում անդամ քան զարս գտանին առաքինի կանայք։ Այլ ոչ այնպէս լուսաւորագոյնք էն բազմութք պայ-

ծառութիւն աստեղաց երկինք, որպէս անապատն է զիպտացւոց ծաղեալ վառեալ վանականացն խոսանօք։

Օ՛ի որ յայնմ ժամանակի զկատաղեալն 'ի մարտ ընդ այ՝ զաղաղինն կոչց, և զերկրպագու սոխոյ զիտիցէ, Ամենայն բարւոք զզօրութիւն Ա՛ստի։ Ա՛մենաւանդ թէ չիցեն ինչ մեզ պէտք հնոցն պատմութեանց. զի տակաւին և այժմ իսկ նորին անհանձար իրաց նշխար կայ 'ի ցոյց օրինակի մերոյ մոլորութեան։ Ա՛այց սակայն նորին իսկ որ երբեմն ամենաբին յայնչափ մոլորութիւն զառաջեալ էին, զերկնից և վասն 'ի վերք քան զերկինս ինչ իրաց Ամարտարամտեն, և անգոսնեն զՀայրենի կրօնսն, և զուրեանց նախնիսն եղուկս կոչեն. և զփիլիսոփայիցն չունին ինչ փոյթ յանձին։ Օ՛ի ուսան անդստին իսկ յիրացն, եթէ նոցայն՝ պաառաւանց առասպելք են. և ստոյգ խմաստասիրութիւն և երկնից արժանի այս է, որ որսորդքն պատմեցաւ նոցա։ Ա՛ամն այնորիկ հանդերձ այնչափ Ամարիտ կրօնիւք՝ և վարուցն բազում փոյթ ցուցանեն. զի զոր ինչ ունեին զամ 'ի բաց մերկացան, և ամենևին աշխարհի 'ի խաչ ելին։ Ա՛յլ ևս յառաջ ջանան մատչել, զի մարմնոյ վաստակովք զպէտս չքաւորացն 'ի կերակրոյ վՀարիցեն։

Ա՛չ զի պահեսն և սկեսն՝ զդատարկանալն ցերեկ օգուտ համարիցին. այլ զդիշերն ընդ նուիրական օրհնութիւնն և ընդ տքնութիւնս հանեն, և զտիւս յաղօթս միանգամայն և 'ի ձեռագործութիւս ծախեն, նմանեալք առաքելական նախանձուն։ Օ՛ի թէ նա՝ ընդ որ ամ տիեղերք հայեին, զի զկարօտեալս կերակրիցէ՝ արուեստանոցս գործեաց, և 'ի Ամարտարութեան ձեռնամուխ եղև. ոչ ցայգ ենջիք, և ոչ ցերեկ դադարեր. որչափ առաւել, ասեն, և մեզ՝ որ յանապատս հասաք, և չունիմք ինչ հաղորդութեան ընդ խռովութիւնս քաղաքացւոցն, յապահովութեան պարապութիւք 'ի հոգևոր գործս պարտ իցի 'ի կիր արկանել։

Ա՛մենեսցուք այսուհետև ամենեքեան՝ մեծամեծք և աղքատք, յորժամ նոքա՝ որ բնաւ ինչ չունին, բայց միայն զմարմինն և զձեռս, ջանան և հակառա-

կին պախրէ կարօտելոյն գտանել անտի. և մեր բազում բարութիւնք 'ի ներքս կուտեալ, և յաւելորդացն անդամ յայն ոչ ծախեմք։ Օ՛ինչ պատասխանատուութիւն ունիցիմք, աղէ՝ ասա. զոր ներել թող զութիւն։ Ա՛վէտիս և զառաջինն նորա իսկ էին ընչասէրք և որովայնապարարք, հանդերձ այլովք չարեօք։ Օ՛ի անդ էին սանչն մնոյ՝ զոր հրեայքն յիշէին. անդ յաճախ որովայնի բռնութիւն. այլ սակայն յիրացն փոփոխեցան, և զհուրն Վ՛ռի ընկալան, յանկարծակի դիմեցին յերկինս։ Լ՛ս այն զի ջերմագոյնք քան զայլս էն և 'ի ցասումն և 'ի մարմնոյ ցանկութիւնս և յանդգնութիւն. և անմարմնաւոր զօրութեց հեզութիւնք և այլով զգաստութիւնք և առանց կարեաց լինելոյ նմանեն։

Լ՛ս եթէ ուրուք յաշխարհն իսկ երթեալ ելցէ՝ գիտէ զինչ ասեմ. և եթէ չիցէ ուրուք յայն խոբանս հասեալ, զմտաւ ածցէ զնա՝ որ մինչև ցայժմ յամ բերանս է. զոր յետ առաքելոցն եբեր բերս Լ՛գիպտոս, զերանելին և զմեծն զԼ՛նտոնիոս։ Լ՛ս 'ի միտ առցէ, թէ նա յայնմ աշխարհի եղև, ուր Փաբաւոնն էր. և սակայն ոչինչ վնասեցաւ, այլ ածային երեսացն արժանի եղև. և այնպիսի վարս եցոյց, որպէս Վ՛ռի իսկ օրէնքն խնդրեն։ Օ՛նա հաւատեաւ յայնժամ զբ իմանայ, յորժամ զգիրսն առեալ ընթեռնուցու, ուր նորա կենացն պատմութիւն կայ. յորում բազում ինչ մարգարէութիւն գտանիցէ։ Վ՛անզի և զԼ՛րիոսի ախտն ախտացելոց յառաջագոյն իմացեալ, ասաց և զինչսն որ 'ի նոցանէ լինելոց էր, այ ցուցանելով և առաջի աչաց նորա զհանդերձեալսն նկարելով։ Ամ մանաւանդ հանդերձ այլովքն 'ի հաստատութիւն Ճշմարտութեանն այն է, ոչ գտանել յարտաքին հերձուածսն այնպիսի առն։ Լ՛յլ զի մի 'ի մէնջ և եթէ լսիցէք, զգիրսն իսկ ընթերցարուք, և ուսարուք հաստատութիւն զայմ, և բազում զգաստութիւն շահիցիք անտի։

Լ՛ս զայս աղաչեմ, ոչ զի անցանիցեմք և եթէ ընդ գիրս, այլ զի և նախանձաւորք լինիցիմք. և մի զտեղն և մի զգնացս և մի զնախնեաց չարիս պատճառս համարեսցուք։ Լ՛թէ կամեսցուք անձանց զգուշա-

նալ, չէք ինչ անաի որ մեզ արգել լինիցի. քանզի և Աբրահամու հայրն ամենարիշտ էր, այլ չյաջորդեաց զանօրէնութիւնն, և Յզեկիա և Աքազ. և սակայն սա այ սիրելի եղև. և Յովսեփ յայնժամ Յգիպտոս ցաժուութիւն պսակ կապեաց 'ի գլուխ։ Այլ երեք մանկունքն 'ի Բաբելոնի, և 'ի տանն՝ ուր բազմախորտիկ սեղանն առաջի յօրիներ, զգլխաւոր զգաստութիւն ցուցին. և Մովսէս Յգիպտոս, և Պաւղոս յամ տիեզերս. և ոչ ումեք 'ի նոցանէ եղև արգել ինչ յընթացս առաքինութիւն։

Այլ մեր զամ խմացեալ, ամենևին զաւելորդ բարուրան և պատճառս 'ի միջոյ բարձեալ, և 'ի քրիստոնս առաքինութիւնն միջամուխ լիցուք. զի այսպէս և զամ 'ի մեծ գուութ խոնարհեցուսցուք, և հաւանեսցուք զօրավիգն լինելոյ մարտիցն մերոց, զի և 'ի յաւիտենից պսակն վայելեսցուք։ Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհքն և մարդասիրութեամբ նոն մերոյ Յսի Քրիստի. ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք յաւիտեանս. ամէն։

ՃԱՌ ԻՆՆԵՐՈՐԴ

«Յայնժամ իբրև ետես, ասէ, Հերովդէս՝ եթէ խաբեցաւ 'ի մոգուցն, բարկացաւ յոյժ»։

ԱՌԷՊԻՏ և չէր պարտ բարկանալ, այլ երկնչել և ցածնուլ և առնուլ 'ի միտ՝ եթէ յանօգուտ իրս յանդգնի ձեռնամուխս լինել, այլ ոչ հանդարտէր. զի յոյժամ անհանձար ոգիք վիրաւորիցին 'ի ցաւս անբժշկականս, ոչ ախորժէն առնուլ զօգնութիս 'ի դեղոցն՝ որ յայլ իցեն շնորհեալ։ Այլ արդ տես և ըստ առաջնոցն մնարտուցեալ, և սպանումն 'ի սպանուելս յարեալ, և դաւահոս քարավէժ ամենևին լեալ. որպէս 'ի խիստ դիւէ վարեալ 'ի բարկութենէն, և մոլեգնեալ առ նախանձու՝ ոչ այլ ինչ իրս գործէր, այլ անդէն ընդդէմ բնութենն կատաղէր. և զմոգուցն զայրուցս՝ յոյժամ՝ խաբեցաւ, ընդ անմեղ մանկտին հանէր։ Ըստ նմին գործոց յայնժամ եղիսպտացիքն անօրինեցան. ձիարկեալ և նա 'ի պաղեստինայուոց աշխարհին արշաւէր։

«Զաքեաց, ասէ, և կոտորեաց զամ մանկտին, զոր եգիտ 'ի Բեթղահէմ և յամ սահմանս նորա՝ յերկուամենից և 'ի խոնարհ, ըստ ժամանակին՝ որպէս և ստուգեաց 'ի մոգուցն»։ Այս աստ միտ դիք ինձ հաւաստեաւ. քանզի բազումք բազում ինչ շատխօսեն վասն մանկուցն. և ոչ իրաւամբք իմն գործեալ զիրսն բամբասեն. ոմանք մեղմագոյնս իմն վասն նոցա կան 'ի տարակուսի, և այլք յանդգնագոյնս և մոլեկանս։ Այս արդ զի զյանդգնութիս յանդգնելոցն, և զայլ և այլն զմտաւ ածեալ տարակուսելոցն 'ի մի ջոյ 'ի բաց բառնայցեմք, ոչ առեալ անսայքք փոքր 'ի շատէ բանիցս, որ 'ի մէնջ վասն իրացս այսոցիկ ասիցին. զի արասցուք ուղիղ պատասխանի երկոցունց կողմանց։

1 'Ի լուս. յոյժ։ Խ՝ էնս։

Եվ այսմ մեղադիր լինիցին, եթէ ընդէր անտեսութիւն անմեղ մանկտին կոտորեցան, ապա և այնմ և պարտին մեղադիր լինել՝ եթէ ընդէր զնուաղքն, որ պահէին զՊետրոս, յետ ելանելոյն նորա 'ի բանտէն՝ սպանան։ Օ՛ի որպէս ասա 'ի փախչել միոյ մանկանն բազում մանկտի վասն միոյն, զոր իբրև դրեին, կոտորեցան. նոյնպէս յայնժամ յարձակել հրեշտակին զՊետրոս 'ի շղթայից և 'ի բանտէ անուանակից և գործակից սորին բռնաւորի, իբրև խնդրեաց և չեգիտ զՊետրոս, զզինուորսն պահապանս փոխանակ նորա հրամայեաց կոտորել։

Բ.յլ այդ զինչ է, ասէն, առ խնդիրն. քանզի ոչ եթէ լուծումն ինչ խնդրոյն իցէ, այլ յաւելուած։ Այլ ես գիտեմ զի այդ այդպէս է. և վասն այնորիկ զնամ ինչ զայդպիսի 'ի մէջ բերեմ, զի ամենեցուն միանգամայն մի լուծումն արարից։ Այլ զինչ իցէ լուծումն այսոցիկ, կամ որով դիպող բանիւ պատշաճ իցէ լուծանել։

Բ.յլ զի Աստ ոչ եղև պատճառք կոտորմանն նոցա, այլ զայրագին ցասումն Թագաւորին. որպէս զի և ոչ զինուորացն Պետրոս, այլ անմտութիւն Հերոդի։ Օ՛ի թէ որմ հատեալ տեսանէր, կամ զդրունս բանտին կործանեալս, թերևս գոյին պատճառք պատուհաս առնել ծուլութեամբ պահապանացն՝ որ պահէին զառաքեալն. իսկ եթէ ամ ինչ նոյնպէս ողջ մնաց, և դրունքն 'ի փականի, և շղթայքն 'ի ձեռս կալեալ նաւորացն, որ ընդ նմա [1] կից էին կապեալ. և եր մարթի իմանալ նմա՝ եթէ կամեցեալ էր արդարութեամբ զարժանն իմանալ, եթէ ոչ մարդկեղէն զօրութեամբ իրքն գործեցան, և ոչ չարագործութեան ինչ հնարիւք, այլ ածեղէն սքանչելարար զօրութեամբ։ Այլ պարտ էր նմա երկիր պագանել այնմ՝ որ զայնպիսի նորակերտ զարմանալիս եցոյց, և ոչ մարմնոյ ընդ այ և կոտորել զպահապանսն։ Բ.յնպիսի ինչ գործ գործեաց ածմ, զի ոչ միայն պահապանացն չեղև կարօտ՝ թէ մատնեսցեն, այլ զի և Թագաւորին նոքօք առաջնորդեսցէ 'ի ձնմարտութիւնն։ Այլ թէ նա անհնազանդ

1 Յորինակին ընդ նմա. եգաբ ըստ լուս։

գտաւ, զի առ իմաստուն բժիշկ ոգւոցն անսաստուն հիւանդին, որ զամ ինչ առ ամենեցուն պէտս 'ի բաբերարութիւն 'ի կիր արկանէ։

Օ որ և աստ 'ի դէպ է ասել, եթէ ընդէր զայրացեալ բարկացար ով Հերովդէս, որ 'ի մոգուցն խաբեցար։ Ոչ իմաստս եթէ ածեղէն է ծնունդն. ոչ զքահանայապետսն կոչեցեր, և զգրիբսն օրինացն գումարեցեր. ոչ ազաբէն յորժամ կոչեցանն, և ըզմարգարէն ընդ իւրեանս 'ի մէջ բերէին, իբրև աստեան իմն ընտրութիւն անտի յառաջագոյն կարապետեալ յայտ առնէին։ Ոչ իմացար զհինն և զնոր միմեանց միաբանեալ։ Ոչ լուար եթէ աստղն եղև այսմ ամի սպասաւոր։ Դանենաձիցես 'ի փութոյ այլազգեացն. չզարմանայցես ընդ համարձակութիւնն՝ որ քո իսկ առաջի համարձակեցան։ Զզարհուրիցես ընդմարգարէն, որ յայտ յանդիման եցոյց զանչմարտութիւնն։ Ընդէր ոչ առնուցուս 'ի միտ յառաջնոցն և զվերջինսս. ընդէր ոչ ածիցես զմտաւ յայսմ ամենայնէ, եթէ ոչ 'ի մոգուցն վայրապար ինչ խաբեցար, այլ ածեղէն զօրութիւն է որ զամ ըստ պատշաճ պիտոյից մատակարարէ։ Օ 'ի թէպէտ և խաբեցար 'ի մոգուցն, մատաղ մանկտին զի մեղան քեզ։

Այո՛, ասէն, զՀերովդէս բարւոք պատուհասեցեր, զի մի գտանիցէ ամենևին տալ պատասխանի՝ որ այնչափ կոտորած գործեաց յանդգնութիւն։ Այլ իրացն, որ թուին՝ եթէ անիրաւութիւն գործեցան, ոչինչ արարեր վնիւ. զի եթէ և նա անիրաւութիւն գործեաց զգործն, իսկ ած, ասէն, ընդէր այնչափ ներեաց նմա։

Այլ արդ զինչ ասիցեմ [1] առ այս. զոր ոչ յեկեղեցւոջ և ոչ 'ի հրապարակս ասել լուեցից։ Այս զի և դուք ևս հաստատութիւն լսիցէք կամիմ. զի կանոն իմն է դիպող առ այսպիսի իրս հիանալ։ Այլ արդ զինչ իցէ կանոնն, և որպիսի՞ ինչ բան. զի որ զրկենն բաղումք են, և զրկեալ և ոչ ոք։ Այլ զի մի ստէպ առակօք կոծիցեմք զձեզ, բերցուք 'ի մէջ վաղվաղակի և զլուծումն և զվնիւ խնդրոյս։ Օ յ

[1] 'Ի լուս. ասիցեմ։

զոր ինչ զուր և յանիրաւի չարչարանս յումեքէ կրիցեմք, կամ 'ի քաւութեան մեղաց համարի մեզ զայն ուծ, կամ 'ի վարձուց հատուցումն։ Այլ զի և սա լուսաւորագոյն երևեսցի բանս, բերցուք սմին և առակ ինչ օրինակի 'ի մէջ։

Պրեսցուք եթէ ծառայ պարտիցի տեառն իւրում ինչս բազումս. և ինքն յանկարծակի 'ի ձեռս ապիրատ արանց անկանիցի, որք ընչաթափ առնիցեն զնա. և տէրն կարօղ իցէ արդելուլ զյափշտակօղն և զզրկիչ, բայց զինչսն 'ի տեղւոջ ոչ կացուցանիցէ, այլ 'ի ծառային պարտուց կողմանէ զյափշտակեալն համարիցի։ Այլ թէ վնաս ինչ արար ծառային. և եթէ բազում ևս իցէ ձիր ընտրէին, ոչ ապաքէն ամենեցուն յայտ է եթէ առաւել շահեցաւ։ Ըստ նմին օրինակի և մեք յորժամ չարչարիցիմք ինչ, առնուցումք 'ի միտ, եթէ կամ մեղաց փրկութեան զտանեմք 'ի չարչարանացն, և կամ պայծառագոյն պսակս առնուցումք, եթէ ոչ յաձախագոյն ինչ մեզք իցեն։ Այլ սմին հանգոյն լուր 'ի Պաւղոսէ՝ որ ասէր վասն պոռնկագեղջն, եթէ "Այանեցէք զայնպիսին սատանայի 'ի սատակումն մարմնոյ, զի ոգին ապրեսցէ"։

Այլ արդ զինչ 'ի դէպ իցէ, ասէն, իրացն՝ զոր խրնդրեմք. վասն զրկելոյ յայլոցն բանք էին, և ոչ վասն վարդապետացն զի ուղղեցին։ Այանաւանդ եթէ չէ՛ իսկ ինչ 'ի միջի. զի խնդիր այն էր, եթէ վշտանալն չիցէ ինաս վշտացելոյն։ Օ՛ի անդրէն իսկ մեծ 'ի խնդիրն տանիցիմ զբանս, յիշեա զԱւրիթ, որ տեսանէր զՀեմէի յարուցեալ 'ի վերայ և ոտն հարեալ կարեացն, և բազում նախատանօք լուտացեալ[1] հանեալ զնա։ Յորժամ կամեցան ոմանք 'ի զօրավարացն սպանանել զՀեմէի, արդել և ասէ. "Թողջիր տուք Թող անիծանէ, քանզի ետր ասաց անիծանել զԱւրիթ. զի տեսցէ ետր զտառապանս իմ, և հատուսցէ ինձ բարիս փոխանակ անիծիցդ՝ զոր անիծանէ դա զիս այսօր"։ Այ 'ի սաղմոսին նուագեալ ասէր, եթէ "Տես զթշնամիս իմ, զի բազում եղեն,

1 'Ի լուս. [illegible]։

և ստելութիւն՝ի նմանիր ստեցին զիս, և թող ինձ զա-
մենայն զմեղս իմ,, ։ Եւ ոչ ազար վասն այսորիկ վայ-
ելէր՝ի հանդիսան, զի բազում վիշտս ետես յաշ-
խարհիս։ Այլա ուրեմն ոչ զրկին զրկեալքն՝ եթէ
ժուժկալութիւն տանիցին ամ չարչարանացն. այլ և
մեծամեծ շահս գանձեն անձանց, թէպէտ և յայ խրա-
տիցին կամ՝ի սատանայէ։

Եւ մանկուոյն, ասեն, զինչ մեղս էր գործեալ,
թէ չարչարանօք յայնմանէ փրկիցին. զհասուն ա-
բանց և զբազմամեղաց յիրաւի ոք ասիցէ զայն. իսկ
տխեղծքն մատաղակոտորք զինչ ինչ այնպիսի մեղս
ունէին, զոր չարչարանօքն՝ի բաց թօթափեցին։ Եւ
չլուսաւ, զի յառաջնումն իսկ ասացի, թէպէտ և
մեղս ինչ չիցէ գործեալ, սակայն վարձուց մեծաց հա-
տուցումն է, յորժամ յանիրաւի՝ի բռնութենէ այլոց
ասատ չարչարիցին։ Եւ արդ զինչ վնաս եղև մանկ-
ուոյն, որ կոտորեցան. զի յայն պատճառս վաղվա-
ղակի հասին յաներկիւղ նաւահանգիստն։ Այլ թե-
բևս, ասեն, ՝ի շատ կելոյ բազում ինչ արդարութիս
գործէին։ Այլ վասն այսորիկ և ոչ այնու իսկ սա-
կաւ գանձք գանձեցան, զի յայնպիսի պատճառս ելին
տհաս յաշխարհէս։ Այլ ոչ տայր իսկ՝ի ձեռս յա-
փշտակել, թէ գիտեր եթէ մեծամեծք էին լինելոց
վատակովք մանկտին։ Օ՛ի թէ որոց հանապազն
՝ի չարութիս են ծախելոց զաւուրս՝ այնչափ երկայ-
նամիտ լինի, որչափ և առաւել նոցա չտայր թոյլ
այնպիսի երթալ, եթէ գիտեր յառաջագոյն զնոցա-
նէ մեծամեծս ինչ վնասել։

Այսպիսի ինչ բանս խօսիմք՝ որպէս և մեզ մարթ
է խօսել, այլ ոչ այնպիսի ինչ՝ որ նմա և եթէ պատ-
շաձ են, և առ մեզ անձառք։ Որ զամ ինչ ձշմար-
տութիւն գիտէ, ինքն զամ մատակարարէ։ Մ.ողցուք
այսուհետև նմա զհաւատս հասանելոյ այսպիսի
բանից, և մեք զայնոքդօքն եկեսցուք. և յայլոց
վշտաց խրատեսցուք՝ ամենայնի առաքինութիւն համ-
բերել։ Այանզի ոչ սակաւ ինչ աղէտք յայնժամ՝ի
Ռեթզահէմ և յամ սահմանս նորա հասին, ձայն
ողբմ մանկանցն յափշտակելոց, գոչիւն և կառաչ
մարդն խանդաղատելոց. որ այնպիսի անիրաւ հրա-

մանաւանդ անքնատանէին՝ 'ի սպանումն յիւրեանց աղեաց և 'ի ծննդոց։

Եւ եթէ այլ ևս երկմտեալ 'ի միտս՝ չհամարիցիս յուղղութեանն ինչ կատարումն զգործն, նայեաց ընդ վախճան մանկակոտոր յանդգնելոյն, զի անտի առնուցուս ոգի առ 'ի հաստատել զքո միտգ յերկմտութեանէ. զի ոչ սակաւ պատիժք վաղվաղակի եկեալ հասանէին 'ի վերայ անօրինին՝ նախ 'ի կեանս, և ապա չարաչար մահուամբ տանջեալ եկանէր յաշխարհէս։ Եւ զայս եթէ կամի ոք ճշգրտիւ ուսանել ընթերցցի զՅովսեպայ զպատմութիւնսն, և անդ գտանէ հաւատեաւ զամենայն. զի մի 'ի բազմացուցանել բանիցս՝ խարխալեցեմք զկարգն։

«Յայտժամ, ասէ, կատարեցաւ բանն՝ որ ասացաւ 'ի ձեռն Երեմիայ մարգարէի, եթէ ձայն լսելի եղև 'ի Հռամայ, ողբումն և լալումն և տրտմութիւն յոյժ. Հռաքէլ լայր զորդիս իւր, և ոչ կամէր միխթարել, զի ոչ էին 'ի միջի»։ Վասանզի բազում իմն զարհուրեցոյց զլսօղս կոտորածոյն համբաւ՝ բռնութեամբն ապիրատութեամբն Հերովդի, արդ առեալ միւսանգամ միխթարել, եթէ ոչ առ տկարութեան չկարաց արգելուլ ՝ՈՒծ, և ոչ թէ ոչ գիտէր յառաջագոյն. այլ այնպէս յառաջագոյն գիտէր, զի և մարգարէին իսկ կանխաւ քարոզէր. զի դու մի խառնվիցիս ինչ, և մի 'ի վարանս մտեալ տարակուսեսցիս՝ հայեցեալ յանՃառ տեսչութիւն նորա. զոր որովք առնէ և որովք թողացուցանէ, մանաւանդ է տեսանել։ Օ՝որ և այլ ուր աշակերտացն ասէր առակաւ՝ 'ի ժամանակի, յոյժամ զդատաստանն՝ որ գալոց էին 'ի վերայ նոցա, և զմարտ պատերազմի՝ որ յետ աշխարհաց լինելոց էր, և զանհաշտ կռիւն յառաջագոյն քարոզէր, հաստատէր զմիտս միխիթարէր. ասէ, «Երկու ճնճղուկ ասարի միով վաճառին, և մի 'ի նոցանէ ոչ անկանի յերկիր առանց հօր ձերոյ՝ որ յերկինս է»։ Եւ զայս ասելով յայտ արար, եթէ ոչ անգիտութիւն ինչ նորա գործի՝ որ ինչ

[1] Յօրինակին անլսեն։ 'Ի Ճ. Գ. անիրաւ մահուամբ անչարչարեին։

գործի. այլ գիտէ զնմա, և ոչ զնմա ինչ ինքն գործէ։ Այլ արդ մի ինչ, ասէ, խառովիջիք. զի որ գիտէն յառաջադոյն զձեր չարչարանսն, և կարօղ է արդելուլ, յայտ է եթէ վասն զի յառաջագոյն իմանայ զձեր օգուտն՝ չարդելու։ Օ որ և 'ի մեր ինչ փորձութիւնս պարտ և պատշաճ է իմանալ. զի բազում մխիթարութիւնս և մեք յայսպիսի իրաց ընդունիցիմք։

Այլ զինչ, ասէն, հուպ է Հռաքելի Մեթզահէմ. «Հռաքէլ, ասէ, լայր զորդիս իւր». և կամ զինչ կայցէ 'ի միջի Հռամայ առ Հռաքէլ։ Օ ի Հռաքէլ մայր էր Բենիամինի. և յորժամ մեռաւ, Թաղեցին յասպարիսին՝ որ մերձ է 'ի Մեթզահէմ։ Այլ արդ քանզի գերեզմանն մօտ էր, և դարձեալ վիճակն ևս Բենիամինի էր՝ որդւոյն նորա, զի Հռամա բենիամինեան ցեղին էր, և 'ի նահապետէն և 'ի գերեզմանատեղւոյն յիրաւի կոչին մանկտին որդիք Հռաքելայ։

Այլ զի յայտ ևս արասցէ՝ թէ առանց բժշկութեան էին իրքն, և առանց պաշարանաց վերք, դնէ և զայն, եթէ «Ոչ կամիր միխիթարել, զի չէին ուրեք 'ի միջի»։ Դարձեալ գոնէ զի այսու ևս խրատիցիմք և առնուցուսցուք 'ի մտս զնմա, որ յառաջագոյն իմացաք, թէ չէ պարտ խառովել ընդ այն, յորժամ ոճ բարիս խոստանայցէ առնել, և յանօրինաց չարիք ինչ գայցեն հակառակ այնմ։ Օ ի ահաւասիկ գալուստն նորա վասն ժողովրդեանն էր, մանաւանդ զի վասն փրկութեան մեր իսկ աշխարհաց. որպիսի աղէտք եղեն անդէն 'ի սկզբանն. մօրն փախստական լինել, վիշտն տրտմակնոք, աշխարհին խառովեալ, դառն մահ մանկտւոյն՝ որ քան զնմա մահ դաժանագոյն էր, լալումն և ողբումն և տրտմութիւն բազում։ Այլ ընդ այս մի ինչ խառովիցիս. քանզի սովոր է ոճ միշտ հակառակ ինչ իրօք զիւր տեսչութիւն կատարել. զի մեզ և յայսպիսի իրաց ցուցանիցէ մեծ գիւրոյ զօրութեանն հանդէս։ Այսպիսի իրօք և զաշակերտսն կրթեաց ոճ յուղղութիւնս. զի հակառակ ինչ իրօք նոցին հակառակ յաճախել գիւրոյ երախտեացն ըզդարմանս, զի առաւել ևս ամենու յայտ լինիցին սքանչելիքն։ Զորա 'ի տանջանս մատնէին, հալածական

լինէին, և պէսպէս չարչարանս յանձին կրէին. և այնու տանջելեացն և հալածչաց յաղթէին։

«Ի վախճանէն, ասէ, Հերովդի՝ ահաւասիկ հրեշտակ ՏԵՆ երևեր ի տեսլեան Յովսեփու յերկրին Եգիպտացւոց, և ասէ. արի առ զմանուկդ և զմայրն իւր, և երթ յերկիրն Իսրայէլացւոց»։ Այլ ոչ ևս ասէ՝ թէ փախիր, այլ թէ երթ։ Տեսանէս դարձեալ յետ փորձութեանն հանգիստ, և յետ հանգըստեանն միւսանգամ վիշտս. զի ի փախստականութէն և յօտար աշխարհէն եկն ելս յիւր աշխարհն, և զմանկակոտորն յայլոց սպանեալ գտաներ. և մեռ ցորդս առաջին վշտացն գտաներ զորդի վերագին կենդանի, և թագաւորեալ աշխարհին։ Այլ զիարդ Արքեղաոս թագաւորեաց հրէաստանի, մինչդեռ Պոնտիոս Պիղատոս էր դատաւոր աշխարհին։ Զանազի դեռ այն ինչ էր վախճանեալ Հերովդէս, և չև ևս էր ի բաղումս բաժանեալ թագաւորութիւն. այլ իսկ և իակ իբրև հայրն մեռաւ, զիշխանութիւն կալաւ որդին փոխանակ հօրն. քանզի եղբօրն նորա նոյն անուն էր, զի և յաւել ևս աւետարանիչն, թէ «Փոխանակ Հերովդի հօրն իւրոյ»։

Այլ զի թէ ի հրէաստան, ասեն, կասկածէր մտանել վասն Արքեղայ թագաւորի, ապա և ի կողմանս գալիլեացւոց երկիւղ էր երթալ վասն Հերովդի։ Այլ թէ յորժամ զգէօղն փոխէր, և իրքն ծածկէին այնուհետև. զի յանդգնութիւն սրոյն Հերովդի ի Յեթլեհեմ սատականայր և ի սահմանս նորա։ Այլ ի կոտորածն գործելոյ՝ թուէր այնուհետև Արքեղայ, թէ վնիռ եղև իրացն ամի. զի ընդ բազումն և մին ևս՝ զոր խնդրէին՝ սպանաւ. և մնաւ ևանդ զի և զՏայրն ևս տեսանէր այնպէս վախճանեալ ի կենաց, ապա մեղմագոյնս երևեցուցանէր զանձն առ ամենեսեան, զի մի զոր իսրտուցանիցէ։

Այլ այնուհետև Յովսէփ ի Նազարեթ միանդամայն զի և ի վշտացն փախչիցի, և զետեղեսցի. զի ևս քաջալերեսցի, և ի հրեշտակէն զհրամանն իրացն ընդունիցի։ Իսկ Ղուկաս ոչ ասէ՝ թէ հրամանաւ հրեշտակի չոգան անդր, այլ թէ «Իբրև կատարեցին ըստ սրբութեանն զամ, դարձան ի Նազա-

րեթ»։ Եւ առ այս զինչ է ասել. այլ թէ 'ի ժամանակն յառաջքան զինքնեան Յոգիպտոս հայեցեալ Ոուկաս՝ ասէր զայս։ Քանզի և հրամայէր իսկ ոչ յառաջքան զսրբութիւն ինքանել անդր, զի մի՝ ինչ գտանիցին արտաքոյ օրինացն կատարեալ. այլ եկաց մնաց մինչ 'ի ժամանակ սրբութիւնն, և եկն 'ի Ազարեթ, և ապա անտի ինքանէր յերկիրն եգիպտացւոց։ Եւ միւսանգամ յետ Յոգիպտոսէն գալոյ՝ հրամայէր նոցա երթալ 'ի Ազարեթ. զի յառաջքան զայն ժամանակ չէր նոցա հրաման առեալ 'ի հրեշտակէ երթալ անդր. այլ ինքեանց գուեթ արկեալ գաւառին՝ ինքնակամ զայն առնէին։ Քանզի ոչ վասն այլ իրիք եղին 'ի հրեաստան, այլ միայն վասն աշխարհագրին. և ոչ դադար ուրեք գտանէին ինչ, յորժամ կատարեցին զաւուրս աշխարհագրին։ Վասն այնորիկ եղին և վաղվաղակի դառնային 'ի Ազարեթ. քանզի և հրեշտակն առ 'ի նոցա հանգիստ տայր հրամանն դառնալ անդրէն 'ի տուն։ Որ և այն իսկ չլիներ վայրապար, այլ ըստ մարգարէութեանն։

«Օ՛ի կատարեսցի, ասէ, որ ինչ ասացաւն մարգարէիւքն, եթէ նազովրեցի կոչեսցի»։ Եւ եթէ որ մարգարէ ասիցէ զայս, զայն մի՛ ինչ քներ. քանզի բազում գիրք մարգարէիցն կորեան, և չգտան ուրեք 'ի միջի. և զայս 'ի մնացորդաց պատմութիւնն թէ կամիցի ոք ուսանել՝ գտանէ։ Քանզի ծոյլք էին, և կամ յամպարշտութիւս յաձախեալք, վասն այնորիկ անփոյթ արարեալ կորուսանէին. և զկէսն ինքեանք իսկ առ չարութիւնն կոտորէին և ընկէնուին։ Եւ զայս Երեմիայ մարգարէ պատմէ։ Եւ որ զբրբորդ գլուխ թագաւորութեցն գրեաց, յետ բազում ժամանակաց, ասէ, երկրորդ օրէնք գտան թաղեալ ուրեմն և ապականեալ։ Օ՛ի թէ մինչև նեղութիւնք ինչ հասեալ էին 'ի վերայ 'ի հինէ, այնպէս անարգ հատանրեին զգիրս և կորուսանէին, ոչչափ և առաւել 'ի հինաւանդսն[1] և 'ի գերութիւն։ Եւ զի մարգարէիցն յառաջագոյն էր ասացեալ, վասն այնորիկ առաքեալքն նազովրեցի կոչէին զնա։

1 'Ի լուս. 'ի հնդ ասուրն կամ 'ի հնդ և 'ի։

Այս այս իսկ, ասեն, ծածկեաց զայն մարգարէութիւն՝ որ զԱՂԵԹՍՀԵՄՆ է։ Այս ոչ ուրեք. այլ շարժէր իսկ, և 'ի քանի՝ բանիցն՝ որ ասացեալ էին զնը մանէ՝ զարթուցանէր։ Օ՛ի այսպէս ինն և Հաթանայէլ'ի խնդիր անկեալ՝ վասն նորա՝ ասէր, թէ "Ի Հազարեթէ մարթիցի բարւոյ իմիք լինել"։ Արանզի չէր ինչ նշանաւոր գեօղն, նա և ոչ կողմ իսկ ամենայն գալիլացւոց։ Ա՛ն որոյ և ասէին իսկ, եթէ "Չինեսա՞ և տես, զի'ի Գալիլէէ մարգարէ ոչ երբէք յառնելոց է"։ Բայց սակայն նա և անտի ոչ գաղտեցաւ կոչիլ. զի յայտ արասցէ, եթէ չէ ինչ կարօտ մարգկեղէն պատուոյ։ Հա և զաշակերտսն իսկ 'ի գալիլեացւոցն ընտրեաց, զի յամ կողմանց հատանիցէ զպատճառս այնոցիկ որ զծուլութիւնն ախորժիցեն. և յայտ արասցէ՝ եթէ ոչ իւիք արտաքնովք իրօք պարտիմք կարօտանալ, եթէ զքաջութեանցն վարս յանձին հաստատուն ունիցիմք։ Ա՛ն որոյ և ոչ տուն անգամ ընտրէր իւր, զի "Ընդոյ մարդոյ, ասէ, ոչ գոյ տեղն ուր զգլուխ դնիցէ"։ Այս 'ի նենգութէն Հերովդէի փախստական լինէր. և 'ի մնուր ծածկեալ կողմանեալ դնէր. և յիջաւանի ագանէր. և զմայր աղքատ ընտրէր։

Այս այսու ամենայնիւ ուսուցանէր զմեզ, թէ ոչ զմի ինչ իրս պարտ է խոտան համարել. և զմարդկան ամպարհաւաճութիւնն անդէն 'ի սկզբանն կոխէր, և միայն յառաքինութիւն և եթ հրամայէր կրթել։ Օ՛ի, ասէ, մեծ ինչ համարիցիս զքո գաւառ, ուր և յամ իսկ աշխարհէ հրամայեմ քեզ օտար լինել. յորժամ պարտ իցէ քեզ այնպիսի ինչ լինել, զի և զաշխարհս ամ չառնիցեմ քեզ արժանի։ Ա՛մենպէս ամ ինչ արհամարհեալ թուիցի քեզ, զի մի և զՀեթանոսացն փիլիսոփայից համարիցիս իմիք արժանի, այլ տրուպ կոչել, և ունել զվերջին տեղն։ Այս զայս Պաւղոս յայտնագոյն ուսուցանէ։ "Ի՞ստ ընտրութէն սիրելիք են, ասէ, վասն հարցն"։ Այս արդ աղէ՝ ասա՛, երբ կամ ուր կամ զուսմի՞ կամ առ ո՞ք ասաց զայս։ Ա՛յլ յայտ է եթէ վասն այնոցիկ, որ 'ի հե-

1 Յորինակին Ն ԽԵ.

թանոսաց հաւատացեալքն էին՝ և հպարտանային 'ի հաւատն, և զանձինս յարգէին, և զՏրեայսն խոտէին։ Այսոքիկ զամբարտաւանսն կարձէր յամբարտաւանութիւն. և զՏրեայսն՝ նախանձուկս արկանելով՝ ջնայ ածել 'ի հաւատս։

Բ. Յլ յորժամ վասն ընտրելոց և կատարելոց ասանց Ճառիցէ, լուր զիարդ ասէն. թէ զայսն ասեն, յայտ առնեն՝ թէ այլ գաւառ ինդրէին. և եթէ զայն յիշէին՝ ուստի ելինն, զոյր նոցա ժամանակ դարձի անդրէն. բայց արդ աւանիկ 'ի լաւ անդր ին ցանկացեալ են։ Դարձեալ ասէ, եթէ "Ի՞նչ հաւատոցն մեռան սոքա ամենեքին, և չև ևս ընկալեալ գաւառին, այլ 'ի հեռուստ տեսին զնա, և ողջոյն ետուն"։ Եւ Յովհաննէս ասէր, եթէ "Մի պանծայք՝ եթէ հայր ունիմք մեզ զԱբրահամ". և Պաւղոս դարձեալ ասէ՝ եթէ "Ոչ ամենեքին որ Իսրայելին են՝ նոքա իսրայելացիք են, և ոչ որ որդիք մարմնոյն են՝ նոքա որդիք ՀՍ իցեն"։

Եւ արդ զինչ ինչ օգուտ եղև որդւոցն Սամուելի 'ի հօրն ազնուականութենէ, որք ոչ գտան առաքինութեաց հօրն ժառանգաւորք։ Եւ կամ զինչ շահեցան Մովսէսի որդիքն, որք չեղին նախանձաւոր ճշմարտութեան նորա. քանզի և ոչ իշխանութեան գտան պայազատք. զի նոքա իւրեանց հայր համարէին զՄովսէս, և զօրավարութիւն առ այն ընթանայր՝ որ ըստ առաքինութեացն եղև նորա որդի։ Կամ զինչ ՕՇասեցաւ Ցիմոթէոս այնու զի հայրն հեթանոս էր։ Եւ կամ զինչ օգուտ եղև Լոյի որդւոցն 'ի հօրն լաւութենէ, որ ծառայ փոխանակ ազատի արարին զնա յոռութիւնն։ Ցեսամեռ, զի չէ բաւական օգնել ազնուութեամբ հարանց անպիտան որդւոց։ Վանզի յաղթեն անձնիշխանութեամբ չարիք բնութեան օրինաց. զի ոչ միայն յաղագս կանութեան ծնողին մերժեցին չարիքն զՎանան, այլ և յաղատութենէն ընկեցին։ Ոչ ապաքէն և Լոտաւ որդի էր Սահակայ, և հօրն միտք 'ի նա յանկէին քան յեղբայրն։ Բ. Յլ թէպէտ և հայրն փութացաւ և կամէր հաղորդ առնել զնա օրհնութեանցն, և ինքն իսկ նմին իբրև կատարէր զՀրամանս հօրն, սակայն քանզի անպիտան էր, ոչինչ օգ-

նեաց նմա փոյթն. և այն զի երիցագոյն ևս էր, և ինքն և հայրն փուլթային՝ զի այսմ արժանի լինիցի. քանզի զնոծ ընդ իւր ոչ ունէր, անկաւ յամենայնէ։

ԼՀ զինչ ևս ասացից զմարդկանէ. այլ և որդիք ևս ՝ի եղեն հրեայք, և ոչինչ օգտեցան յայնպիսի աղնուականութենէ։ Օ՛ի թէ և որդի ոք ՝ի լինիցի, և առաքինութեն ըստ աղնուականութենն չցուցանիցէ՝ յոչինչ համարէ, և ՝ի մեծամեծ տանջանս մատնի։ ԼՀ արդ զի զնախնեաց և զհաւոյ աղնուականութեն ՝ի մէջ բերես, որով ոչ ՝ի հնումն ոք օգտեցաւ և ոչ ՝ի նորումս։ "Ոչք ընկալան զնա, ասէ, ետ նոցա իշխանութեն որդիս ՝ի՝ այ լինել"։ սակայն որդւոցն այնպիսեաց բազմաց ոչինչ համարեցաւ Պաւղոս օգտել ՝ի հօրէն։ "Լթէ թլփատիք, ասէ, ՎՀ՝ ինչ ձեզ ոչ օգնեսցէ"։ Օ՛ի թէ ՎՀ՝ ինչ ոչ օգնէ այնոցիկ որ անձանց ոչ կամիցին զգուշանալ, զիարդ մարդ մարդոյ կարիցէ օգնել։

ՅՈՐԴՈՐԱԿ

Մ՝ այսուհետև մի յաղնուականութիւն և մի ՝ի մեծութեի՝ որ այնպիսի ինչ իցեն՝ հպարտասցուք. և մի աղքատութիւ՝ ՝ի կոր կործանիցիմք. այլ զայն մեծութեի խնդրեսցուք, որ գործովքն բարութեց է. և յայնպիսի աղքատութենէ փախիցուք՝ որ ՝ի չարիսն հատատէ զմեզ. որով այն մեծատուն աղքատ եղև, վասն որոյ և կաթի միոջ ջրոյ չէր իշխան. և այն զի այնչափ պաղատանս մատուցանէր. որում աղքատութեն առ մեզ չէ հնար լինել։ Օ՛ի որ կարի սովամահն իցեն, ՝ի կաթ մի ջուր կարօղ են վայելել. և ոչ ՝ի կաթ մի միայն, այլ և ՝ի բազում իսկ միսիթարութեն։ Լսկ նա բնաւին ոչինչ այնպէս, այլ այնչափ յաղքատութեն էր և յանհնարին դժուդաւ կութեն, մինչև ամենևին ուստեք չկարէր գտանել միսիթարութեն։ ԼՀ արդ զի հարեալ իցեմք յինչս, յորժամ յերկինս զմեզ ոչ տանիցին։

ԼՀ արդ աղէ՝ ասա, եթէ թագաւոր ոք երկրաւոր

ասէ զմեծատանէն, չէ՞ հնար՝ թէ յարքունիս պայ-
ծառանայցէ կամ 'ի պատիւ ինչ վայելիցէ, ոչ ապա-
քէն ամենեքեան [1] անարգեսցէ և 'ի բաց մերժեսցէ։
Իսկ եթէ յայսմ արքունեաց պատուոյ անկանել չէ՞
մեզ արհամարհելի, ուր երկնից թագաւորն հանա-
պազօր բողոքէ, թէ դժուարին է նոքօք հանդերձ
և զարտաքին հրապարակս սուրբ դրանցն կոխել,
զիա՞րդ ոչ մտադիր մեկնիցիմք յայմ, զի համարձա-
կութիւն մտցուք յարքայութիւն։ Արդ՞ն ներելոյ թա-
ղուիթ լինիցիմք արժանի, զի զպատեղն և զպաշարիչ
այնր մոլոր բաղում փութով պատեմք զմեզ։ և ոչ
միայն յարկեղս, այլ և յերկրի թաղեմք, զոր պատ-
շաճն էր յերկնից պահեսան աւանդել։ Զոր աւա-
դիկ այնպիսի իմն առնես, եթէ մշակի ուրուք առեալ
զցորեան՝ սերմանել յերկիր պարարտ, թողեալ ըզ-
վարն և տարեալ 'ի գուբ ամենայցէ, զի մի՛ վայելի-
ցէ, և ցորեանն ապականեալ կորնչիցի։

Զ. Այլ տես զշատախօսութիւն նոցա, յորժամ այնմ
մեղադիր լինիցիմք։ Զի՞, ասեն, սակաւ մխիթարուն
գիտելն, եթէ յամրի կայ 'ի ներքս ամ։ Զա՞ չգի-
տելն եթէ համբարեալ կայցէ, մխիթարութիւն է։ Զոչ
և 'ի սովոյ չերկնչիցիս, սակայն այլ և ս դժնդակ կաս-
կածս հարկ է կասկածել վասն պահեստիցն. զմա-
հուց, զպատերազմաց, զնենգութեց։ Զի՞ թէ սոփ-
բռնադատեալ յորովայն՝ վառէ զաջ զողոյն կարկա-
ռուլ 'ի քո տունն, և ս առաւել յորժամ զայն առ-
նիցես, և սով 'ի քաղաքս մուծանես, և և ս չար քան
զսոփն խորխորատ կործանման կազմես քում տան։

'Ի սովոյ հարկէ չգիտեմ վայրապար զոր վախճա-
նեալս. քանզի մարթի բաղում ինչ յայմ կողմանց
հնարել այնմ աղետից մխիթարութիւն. իսկ վասն ըն-
չից և մեծութեանն և այնպիսի շահաւորութեանց զբա-
զումն իսկ ցուցանեմ քեզ կոտորեալս. զոմանս գաղտ
և զոմանս 'ի հրապարակի. և բազում այնպիսի նշա-
նակօք լի են ճանապարհք և ատեանք և հրապա-
բակք. նա և զծոփն իսկ լցեալ արեամբք տեսանի-
ցես։ Զի՞ ոչ զերկիրս միայն կալաւ այն բռնութիւն,

1 'Ի լուս. ՄԱՆԵԿԵԱՆ։

այլ և զհամատարած անդունդն աղխաղխեաց ելից բազում անօրէնութիւն. ոմն նաւարկեալ շրջի վասն ոսկւոյ, և ոմն սպանանի վասն նորին. դարձեալ նոյն բռնութի զոմն ընչաւետ արար, և զոմն սպանօղ։

Այս արդ զի՞նչ չյուսալի քան զմամոնայն կայցէ, յորժամ վասն նորին և տաք աշխարհս հարկանիցես, և Ճգունս յանձին առնուցուս, և սպանանիցիս։ Այլ՞, ասէ, ողորմիցի Թովչի օձահարի։ Պարտ էր զիտակացդ անագորոյն բռնութենն՝ փախչել 'ի ծառայութէն, և այրել զդժնդակ ցանկութիւն։ Այս զիարդ, ասէ, իցէ այնմ հնար։ Այթէ այլ սէր ընդ սիրոյն մուծանիցես, զերկնիցն։ Որ արքայութէ ցանկայ, արհամարհեսցէ զաշխարհութի։ Որ եղև ծառայ Աստծի, մի լիցի ծառայ մամոնայի, այլ և տեր ևս։ Անզի փախստականին 'ի նմանէ զհետ ստէպ գալ սովոր է, և որ զնմանէ կաթողին լինիցի՝ փախչել։ Ա՛չ այնպէս զոք պատուէ՝ որպէս զարհամարհիս իւր, և ո՛չ զոք այնպէս այպանէ՝ որպէս զնորին ցանկացօղն. ո՛չ միայն ծաղր կացուցանէ, այլ և ընդ բազում կապանօք հարստէ։

Լուծցուք այսուհետև՝ զոնէ անագան երբէք՝ զանհնարին շղթայսն։ Ինդէր առնիցես ծառայ ըզխօսուն ոգիդ՝ անխօս նիւթոյն, մնրն՝ամ չարեաց։ Այլ՞ ո՛հ այպանալից ծաղուն. զի մեք ընդ նմա բանիւք մարանչիցիմք, և նա ընդ մեզ արդեամբք. և տանի ածէ իբրև զարծաթազինս, և գանալից արաբեալ թշնամանէ. քան զոր զի՞նչ լինչ այլ կայցէ յուռութի և անարգութի։ Այթէ անզգայուն նիւթոցն չառնիմք գեր 'ի վերոյ, անմարմին զօրութեցն զիարդ գամագիտ լինիցիմք։ Այթէ զդայլն հոգն չարհամարհեմք և զբարինսն ընկեցեալս, զիարդ զիշխանութիս և զպետութիւնս հնազանդեսցուք. կամ որպէս ցաւծութեամբն վառեսցուք. եթէ արծաթ պաղպաջուն քաջբայէ զմեզ, երբ զդեղ երեսաց կարասցուք բամահել։ Անզի այնպէս իսկ ոմանք կապեալ են ընդ այն բռնութի՝ որպէս և ընդ միւս կարիսն, զի խլատղել ընդ գոյն ոսկւոյն, ասիցէք, եթէ և աչաց օգնէ պատկերագիր ոսկւոյն։ Այլ մի խաղայցես զայնպիսի խաղս ոչ այր դու. զի չէք լինչ որ այնպէս վնասէ

աչաց և մարմնոյ և ոգւոյ՝ իբրև զայն ցանկութիւն։ Զ.ոն իսկ ժանտագործ ցանկութի և զլապտերս կուսանացն շիջոյց, և էհան յառագաստէն։ Զ.ոն տեսիլ զորմէ ասեն, թէ աչացն օգնէ, հիքոյն Յուդայի չետ թոյլ լսել զբարբառն տէրունի, այլ և 'ի խեղդ ևս տարաւ, և ընդ մէջ հերձուլ պատրաստեաց. յետ այնր ամի և 'ի գեհենն յուղարկեաց։ Օ ինչ քան զայն անօրինագոյն կայցէ. զինչ քան զնոյն սպանողագոյն։ Զ.է զնիւթոյ ընչիցն ասեմ, այլ զանօգուտ և զմոլեկան ցանկութենէ նոցա. զի և արիւն մարդկեղէն նիստայ [1], և 'ի սպանութիւն հայի, և քան զամենայն գազան գազանագոյն պատառէ զըմբըռնեալն։ Զ.որ ևս անհնարին աղէտք են, զի և պատառելոյն չտայ զգալ։ Զ.ի դէպ էր զայնպիսի ախտն ախտացելոց՝ և յանցաւորս ճանապարհաց ձեռս տալ, և յօգնականութիւն կոչել։ Զ.ոքա աւանիկ և հնորհունին վիրացն. քան զոր զինչ այլ ինչ թշուառագոյն կայցէ։

Օ այս ամենայն խնացեալ՝ փախիցուք յանհնարին ախտէն, և բժշկեսցուք զհարուածն 'ի նմանէ, և 'ի բաց մերժեսցուք յայնպիսի ժանտէ. զի և ասա ըզգուշաւոր և առանց խառնուածի կեանս կեցցուք, և հանդերձելոց գանձուցն հասցուք շնորհօքն և մարդասիրութեամբ նոն մերոյ Յիսի Քրիստի. որում փառք, իշխանութիւն և պատիւ յաւիտեանս. ամէն։

[1] Յորինակին մարդկեղէն գոյ։

ՃԱՌ ՏԱՍՆԵՐՈՐԴ

«Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս Մկրտիչ քարոզել յանապատին Հրէաստանի, և ասէ, ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից»։

ՅԱՒՈՒՐՍՆ յայնոսիկ, ոչ մինչդեռ մանուկն էր և 'ի Նազարեթ մնանէր, այլ յետ երեսուն ամի գայր Յովհաննէս. որպէս և Ղուկաս խօսի վկայէ։ Այլ զի՞նչ ասիցէ, «Յաւուրսն Յայնոսիկ»։ Պոլորուութի է միշտ գրոց այսպիսի իմն օրինակաւ վարել, ոչ յորժամ միայն յաջորդ ժամանակին զդիպեալսն ինչ ասիցէ. այլ և յորժամ զորս յետ բազում ամաց պատահելոց իցեն։ Այլ այսպէս մինչդեռ նստէր 'ի լերին ձիթենեաց, և մատուցեալ աշակերտքն վասն գալստեանն նորա կամէին ուսանել, և ասէ ընդ նմին և զաւերածոյն Երուսաղէմի. Թէպէտ և գիտէք իսկ որչափ ժամանակք 'ի միջի են ընդ գալուստն վերջին և ընդ աւերն Երուսաղէմի։ Այլ արդ իբրև ասաց զկործանմանէ քաղաքին, և կատարեաց զբանն վասն այսպիսի իրաց, և մերձ էր 'ի համբրէն վախճանին Ճառս ելանել, ած զնովիմբ եթէ այս ինչ և այս լինիցի. և ոչ եթէ գումարեաց զժամանակն յայնժամն ասելով. այլ զայն միայն ժամանակ յայտ արար՝ յորում այս ամ լինելոց իցէ։ Զոր ասա իսկ յարեալ՝ ասէ, թէ «Յաւուրսն յայնոսիկ»։ Ո՛չ ամ դէն զկարգն 'ի հպոյ յայտ արարեալ՝ զայս այսպէս դնէ, այլ զայն աւուրսն՝ յորս այս իրք լինելոց էին, զորս յօրինեացս պատմել։

Այլ ելէր, ասեն, յետ երեսուն ամի եկն 'ի մկրտութիւն Յո։ Զի յետ մկրտութիւնն էր լուծանելոց զօրէնսն. վասն այնորիկ մինչև կատարեսցի հասակաւ՝ որով զամ իրս մեղայ ընդունել կարէր, կայր մնայր կատարել զամ օրէնսն։ Զի մի՞ ոք ասիցէ, թէ վասն զի չէր կարօղ կատարել՝ յայն սակս եղոյծ։ Այլ զի՞նչ ոչ հանապազ յուզին 'ի մեզ կարիք. այլ յառաջ-

նում տիսն յոյժ անիմաստագոյն և կարճամտագոյնք եմք. և ապա յետոյ զօրանան ցանկութիւնքն. և յետ այնր զրգռէ ագահութիւն ընչից։ Վասն այնորիկ էանց ընդ ամ հասակս. և իբրև կատարեաց զամ օրէնսն, ապա եկն ի մկրտութիւն, զի այնու աւարտիցէ զամ պատուիրանսն։

Եւ զի այն էր վերջին ամ օրինաւոր ուղղութեանն նորա, լուր զինչ ասէն, «Այսպէս պատշաճ է մեզ՝ զի կատարեսցուք զարդարութիւնս ամ»։ Եւ զոր ասէն՝ այսպիսի ինչ է։ Ամ զօրինաւորսն, ասէ, վճարեցաք, և ոչինչ թողաք ի պատուիրանացն՝ զոր ոչ արարաք. և արդ քանզի այս միայն պակաս է, և զայս ևս պարտ է յաւելուլ յայն, և ապա կատարեմք զենաւ արդարութիւն։ Իսկ արդարութիւն ասա զլուսն ամ պատուիրանացն կոչէ. և զի վասն սորին իսկ եկն ի մկրտութիւն Յն, ասասցին իսկ յայտ է։

Եւ թէ ուստի եղև մկրտութիւն, այսպէս է խմանալ։ Ի ոչ եթէ յիւրմէ Ի աքարիայ որդին, այլ յայ յորդորեր գալ յայն. և զայս Ղուկաս յայտնագոյնս ասէ, եթէ «Բան ՝ն եղև ՝ի վերայ նորա», այսինքն հրաման։ Եւ նայն իսկ Յովհաննէս, թէ «Որ առաքեացն զիս ջուրբ մկրտել՝ նա ասաց ցիս, եթէ յորոյ վերայ տեսանիցես զՀոգին՝ զի իջանիցէ և հանգչիցի, նա է որ մկրտէ ՝ի Հոգին սուրբ»։ Եւ եթէ վասն ո՞ր առաքեցաւ մկրտել, և զայն ևս դարձեալ մկրտիչն յայտ առնէ ասելովն, եթէ «Ես ոչ գիտէի զնա, այլ զի յայտնի լիցի Իսրայէլի՝ վասն այնորիկ եկի ՝ի ջուր մկրտել»։ Եւ եթէ այս միայն իցեն պատճառք, զիարդ ասէր զնմանէ Ղուկաս՝ եթէ «Եկն ՝ի կողմանսն Յորդանանու քարոզել մկրտութիւն ապաշխարութեան ՝ի թողութիւն մեղաց»։ Թէպէտ և ոչ լմնէր թողութիւն. այլ այս պարգև յետ այնորիկ տուեալ ՝ի մկրտութենէն էր, զի այնու թաղեցաք ընդ նմա, և հին մարդն մեր յայնժամ եղև խաչակից նորա. և յառաջքան զխաչելումն չերևի ուրեք թողութիւն։ Եւ առաքեալ ասէ՝ «Այլ լուսաւորութ, այլ սրբեցարուք, ոչ եթէ մկրտութեամբն Յովհաննու, այլ յանուն Տն մերոյ Յն Քրիստոսի, և յոգի ամ մերոյ։ Եւ այլ ուր ասէ, «Քարոզեր

Յովհաննէս զմկրտութիւն ապաշխարութեան. և ոչ ասէ թէ թողութիւն, զի հաւատասցեն յայն՝ որ գալոցն իցէ յետ նորա։ Օ՛ի չէ եւ էր զնուազն զնեալ և մատուցեալ պատարագ, և ոչ հոգին սուրբ իջեալ. ոչ մեղքն լուծեալ, ոչ թշնամութիւն բարձեալ, և ոչ անիծիցն եղծեալ. զի՞արդ մարթ էր յառաջագոյն քան զայս ամ՝ լինել թողութիւն։

Այլ զի՞արդ իցէ իմանալ զայն, եթէ 'ի թողութիւն մեղաց էր մկրտութիւնն Յովհաննու։ Վասնզի ապաշնորհք էին հրեայք, և իւրեանց մեղացն ոչ երբէք զգային՝ եթէ այնչափ ընդ անհնարին չարեօք կայցեն. այլ զանձինս առ լաւս և առ արդարս ունէին. որ մանաւանդ 'ի կորուստ նոցա էր և 'ի հաւատոցն վրիպել. յայնպիսի միտս հայեցեալ Պաւղոսի լինէր մեղադիր նոցա, թէ «Ո՞ան զի տգէտ են, և զիւրեանց արդարութիւն կամին հաստատել, քանզի՝ ոչ արդարութեան ոչ հնազանդեցան»։ Այլ դարձեալ եթէ «Օ՛ինչ այսուհետև ասեմք, եթէ հեթանոսք որ ոչ երթային զհետ արդարութի՝ հասին արդարութեան. իսկ Իսրայէլ երթայր զհետ օրինացն արդարութեան, և յօրէնս արդարութեանն ոչ ժամանեաց. ընդէր, զի ոչ հաւատովք, այլ իբրև 'ի գործոց օրինաց»։ Այլ քանզի այսպիսի պատճառք չարեաց 'ի միջի կային, եկեալ Յովհաննու ոչ այլ ինչ իրս ցուցանէր, բայց միայն զմեղացն իւրեանց յիշատակս արասցէ յուշ նոցա, եթէ ոչ որպէս կարծեցին արդարք են, այլ բազում մեղօք վիրաւորեալք կարօտ են ապաշխարութի։ Այլ զայս և կերպարանքն նորա՝ և քարոզուին յայտ առնեն, եթէ ապաշխարութի և խոստովանութի միայն է մկրտութիւն։ Որպէս և ինքն իսկ ասէր, եթէ «Բ՛արէք ձեզ պտուղ արժանի ապաշխարութի»։ Վասնզի չըստգտանելն զանձանց մեղս, զայն որ Պաւղոսն ասէր, եթէ խայտալ կամին զանցանեն զՔ՛ոթիւ, յայտ առնեն՝ զի յորժամ 'ի միտն անկանիցի նոցա, ցանկանայցեն զնա փրկիչ խնդրել և թողութի փափաքել։ Օ՛այն եկն կազմել Յովհաննէս, և յորդորել զնոսա յապաշ-

1 Յորինակին նոյա։

խարութիւն. ոչ զի տանջիցին, այլ զի ապաշխարութեամբն լինիցին խոնարհագոյնք, և ըստգտանելովն զանձինս՝ ընթացցին առնուլ զթողութիւն։

Եւ արդ տես, զիարդ զոյն ստուգագոյնս հաստատէ. քանզի ասէ, թէ «Եկին Յովհաննէս քարոզել զմկրտութիւն ապաշխարութեան». և ածէ զնովմբ, եթէ 'ի թողութիւն։ Որպէս զի ասիցէ, եթէ վասն այնորիկ յօժարեցոյց զնոսա խոստովանել և ապաշխարել ըստ մեզ, ոչ զի տանջիցին, այլ զի զգիւրագոյնն յետ այնր ընդունիցին թողութիւն։ Օ՛ի եթէ չէր զանձինս ապագովել, ապա և ոչ զշնորհն իսկ խնդրէին. և չխնդրելովն՝ և ոչ թողութիւն հասանէին։ Եւ այսպէս այլ այլոյ 'ի միմեանց մկրտութիւն հորդէր Հանապարհ։ Վասանզի ասէ իսկ, եթէ «Հաւատացէն յայն որ գալոցն է յետ նորա». և հանդերձ այնու զոր ասացն, և միւսոյն ևս մկրտութեան պատճառս դնէ 'ի միջի։

Վասանզի և չէր իսկ ընդ մի համար՝ տանէ 'ի տուն զձեռանէ շրջեցուցանել զԲէտ, և ասելն եթէ 'ի սա հաւատացէք։ Այլ յորժամ 'ի մի վայր եկեալ ժողովեալ էին, և աչօք մարթ էր տեսանել և ականջովք լսել զերանելի բարբառն հնչեալ 'ի վերուստ, յայնժամ գայր 'ի մկրտութիւն։ Օ՛ի և մկրտչին լաւութիւն, և իրացն իսկ պատճառաք ձգէին ածէին յամ քաղաքաց 'ի Յորդանան գետ. և նորանչան տեսիլք երևէին անդ, յորժամ ամենեքեան 'ի միոջ վայրի ժողովեալ էին, կարձիցէ զնոսա յամբարտաւանութենէն, և յայտ արասցէ՝ եթէ բազում չարեաց են պարտապանք, եթէ ոչ ապաշխարեսցեն. և զի մի 'ի նախնիս ինչ պարծիցին, այլ յեկեալն հասեալ վայելեսցեն ընդունելով։

Եւ քանզի ծածկեալ էին 'ի ժամանակի անդ համբաւքն Բէտի, և այնպէս կարծէր 'ի միտս բազմաց՝ եթէ մեռեալ իցէ և նա ընդ մանկանն, որ կոտորեցան 'ի Եղեղայիմ։ Օ՛ի թէպէտ և յերկոտասանամեայ ժամանակի երևեցոյց զանձն 'ի տաճարին, սակայն վաղվաղակի միւսանգամ թաքոյց։ Վասն այնորիկ միւսանգամ սկիզբն լուսաւորագոյն և բարձրագոյն պարտ էր երևել քան զառաջնոյն։ Օ՛որ

ոչ երբեք էր տեսեալ հրեից՝ ոչ 'ի մարգարէից և ոչ այլ ուստեք։ Օ՛ի մեծամեծս քարոզէր, և զերկնից և զարքայութիւնն առնէր յուշ. և ոչինչ ևս զերկրաւոր իրաց արկանէր Ճառս։ Այլ արքայութիւն աստ զգալուստն զառաջին և զվերջին կոչէ։

Այս այս զինչ, ասեն, 'ի դէպ իցէ առ հրեայս, զի ոչ գիտեն զինչ դուդ խօսիս։ Այլ յայն սակս, ասէ, այսպէս ասեմ, զի անայտ Ճառիւքս զարթնուցուն դալ խնդրել զայն զոր քարոզեմն։ Այս այսպէս առորժելի յուսովք յօժարեցուցանէր գալ 'ի մկրտութիւնն, զի և մաքսաւորքն ևս անգամ և բազում զինուորքն հարցանէին, եթէ «Մեզ զինչ պարտ է գործել». կամ այնպիսի վարուք զանձանց կեանս զարմանել։ Որ և այս նշանակ յերկրաւոր իրաց ազատանալոյ, և յայլ ինն մեծամեծս հայելոյ ուշ եդեալ նայիցին, և 'ի հանդերձեալսն զբաղնոյց. և զի ամ բանքն և արդիւնքն երևեալ՝ մեծամեծ միտս տային ստանալ նոցա։

Տես որպիսի՞ ինչ էր տեսանել. զի զայր մի յետ երեսուն ամի ինքեալ յանապատէ տեսանէին, քահանայապետի Ճոխի որդի, որ ոչ երբեք ցանկացաւ մարդկէղէն ինչ պատուոյ. յորմէ ամ իւիք պարտ էր ակնածել. որ և զԴայսի ևս ունէր վկայ ընդ իւր. և այսպէս քարոզէր, եթէ սա է որ գալոցն է. որում և վկայ կոչեցի զմարգարէն, որ յառաջագոյն աղաղակէր՝ թէ ձայն բարբառոյ յանապատի. և լուսաւորեր զանապատն ամ քարոզութեամբն։ Օ՛ի այնպէս փոյթ յանձին ունէին մարգարէքն վասն իրացն, մինչ զի ոչ զոմն իւրեանց միայն, այլ և որ ինչ նմա սպաս մատուցանելոց էր՝ 'ի բազում ժամանակաց յառաջագոյն քարոզել։ Այս ոչ միայն զնմանէ ասել, այլ և զտեղեացն՝ յորս շրջելոց էր. և զքարոզութեանն օրինակ՝ զոր եկեալ ուսուցանիցէ. և զզորմութիւնն՝ որ 'ի նմանէ գործիցին, իբրն կատարիցին, յառաջագոյն քարոզել յարդիցին, և զժամանակն յայտ առնիցեն, և որ ինչ 'ի նմանէ ուղղութիւնքն գործիցին։

Այս տես զիարդ մարգարէն և մկրտիչն ընդ նոյն միտս գան, թէպէտ և ոչ ընդ նոյն բանս։ Օ՛ի մար-

գարէն ասէր « Պատրաստ արարէք զՃանապարհս նոցա , և ուղիղ արարէք զշաւիղս այ մերոյ ». և միբանի՝ եթէ « Լրարէք պտուղ արժանի ապաշխարութեան ». հանդոյն այնմ՝ թէ « Պատրաստեցէք զՃանապարհս նոցա »։ Յեսայեան, զի և այնու զոր մարգարէն ասաց , և միւսոքն զոր միրտիչն քարոզեաց , յայտնի եթէ վասն զի կարապետել եկն , և յառաջագոյն Ճանապարհ հոգալ , և ոչ պարգևս շնորհել՝ որ էր թողութիւն , այլ պատրաստել զոգիս առ ընդունելոյ զամենեցունցն ՅԾ։

Իսկ Ղուկաս աւելի ինն ասէ , զի ոչ զսկիզբն միայն ասաց և լուեաց , այլ զամ իսկ զմարգարէութիւն եդ , եթէ « Լմենայն ձորք լցցին , և ամ լերինք և բլուրք խոնարհեսցին . և եղիցին դժուարինքն ի դիւրին , և առապարքն ի հարթ Ճանապարհս . և տեսցէ ամ մարմին զփրկութիւն այ »։ Յեսայեան, զիարդ յառաջագոյն ասաց մարգարէն և զժողովելոցն ի միվայր ժողովելոյ , և զերացն ի լաւութիւն փոխելոյ , և զդիւրութիւն շնորհացն , և զամ իրացն կատարելոց զպատՃառս . թէպէտ և օրինակ ինն դնէ . քանզի մարգարէութիւն էր բանն։ Օ՛ի յորժամ ասէն , թէ « Լմենայն ձորք լցցին և ամ լերինք և բարձունք խոնարհեսցին , և եղիցին դժուարինքն դիւրինք , և առապարքն ի հարթ Ճանապարհս ». և զխոնարհմն բարձրացեալս ցուցանէ , և զհպարտացեալսն խոնարհեալս . և զորինաց դժուարինսն՝ ի հաւատոց դիւրինս փոխեալ։ Օ՛ի ոչ եւս են , ասէ , քրտունք և ոչ ջանք , այլ շնորհք և մեղայ թողութի , որ բազմապատիկ պարգևէն զփրկութեն դիւրութի։ Լ՛սպա յետոյ և զպատՃառս իրացն եդեալ՝ ի միջի՝ ասէ , եթէ « Օ՛ի տեսցէ ամ մարմին զփրկութի այ »։ Ոչ եւս հրեայք կամ եկք նոցին , այլ ամ երկիր և ծով և ցամաք և ամ մարդկան բնութիւն։ Իսկ դժուարինսն ասելով , զխառնակեցիկ կեանսն՝ որով ապականեալն էին մաքսաւորք և պոռնիկք , գողք և աւազակք և մոգք , առակ . որ յառաջագոյն վրիպեալք էին , և յետոյ եկին ելին յուղիղ Ճանապարհ։ Օ՛որ և ինքն իսկ ՅՈՐն ասէր , եթէ « Մաքսաւորք և պոռնիկք յառաջեսցեն քան զձեզ յարքայութիւն այ »։

Լոյս զի հաւատացին և այսպիսիքն, այլովք ևս բանիւք յայտ առնէ զնոյն մարգարէն. «Յայնժամ, ասէ, զայլք և զառիւք 'ի միասին Ճարակեսցին»։ Զի զոր օրինակ աստ լերամիքն և բլրովք և ձորովք զՀարթ[1] կրօնսն 'ի միասուն հաստատուն խառնեալ յայտ առնէ, նոյնպէս և անիսօս անասնոցն բարուք՝ զանխտիր վարս մարդկան, որ 'ի միաբանութիւն ՅԾ. պաշտութեան եկեալ միաբանեցին, ցուցանէ։ Պակայն և անդ զպատՃառս իրացն գնէ 'ի միջի։ Լոյս զինչ ինչ։ Թէ «Լոյսի՛ որ կանգնելոցն է իշխան հեթանոսաց, և 'ի նա հեթանոսք յուսասցին»։ Հանդոյն այնմ, զոր անդն ասաց, եթէ «Ցեսցէ Ամ մարմին զփրկութիւն այ»։ Զմենայն ուստեք յայտ առնէ, եթէ 'ի ծագս Ամ տիեզերաց զեղեալ հեղուցուն աւետեացն զօրութիւն և զիտութիւն. յանասնական բարուցն և 'ի խիստ մնաց 'ի բազում զգօնութիւն և 'ի միամտութիւն դարձուցեալ զազգս մարդկան։

«Լոյս Յովհաննէս, ասէ, ունէր հանդերձ 'ի ստեղծուղտու, և գօտի մաշկէ ընդ միջ»։ Ցեսանես, զի է ինչ զոր մարգարէքն յառաջագոյն ասացին, և է ինչ զոր աւետարանչացն թողին։ Պատն որոյ և Պատթէոս և զմարգարէութիւնն գնէ, և զլուրն յաւելու։ Զանազի և զպատմութիւն հանդերձից արդարոյն Համարէր գործ դատարկութիւն ասել։ Զի զարմանալի իսկ և աքանչելի էր՝ 'ի մարդկեղէն մարմնի այնպիսի ժուժկալութիւն տեսանել. որ մանաւանդ և զՀրեայսն իսկ ձգեալ ածէր՝ յինքեան ցուցանել զմեծն Լոգնս, և յերանելոյն յիշատակ առաքէր զմիտս նոցա՝ իրօքն, որ յայնժամ 'ի նմա երևէին. մանաւանդ զի ևս մեծամեծ զարմանալիս։ Զի նա 'ի քաղաքս և 'ի տունս մտանէր և ուտէր. և սա ամենևին անդստին 'ի խանձարրոցն յանապատ տեղիս բնակէր։

Զանազի պարտ և պատշաՃ իսկ էր կարապետին այնորիկ՝ որ զՀինն Ամ լուծանելոց էր, զաշխատութիւնսն, զանէծսն, զարտմութիւնսն, զքրտունսն, օրինակ ինչ զայսպիսի պարգևաց յանձին ցուցանել,

1 Յոյնն զանՀարն։

և վերագոյն գտանել քան զայնր ամի դատապարտութեան։ Չանզի ոչ զերկիր գործէր, և ոչ ակօսս կոտորէր, և ոչ քրտամբք երեսաց ուտէր հաց։ Այլ պէս վարկպարզի և դիւրին իմն կազմէր իւր սեղան, և առաւել քան զսեղանն դիւրագոյն զՀանդերձն, և ևս առաւելագոյն առանց պաճուճանաց զընակութիւնն։ Չանզի ոչ յարկի և ոչ մահճաց և ոչ սեղանոյ, և ոչ այլ իմիք այնպիսեաց կարօտանայր, այլ զՀրեշտակական կեանս 'ի մարմնի ցուցանէր։

Վասն այնորիկ 'ի ստեպ ուղղութ ունէր զՀանդերձն, զի և այնպիսի կերպարանաւք խրատեսցէ ըզմեզ Թողուլ զիրս մարդկօրէնս, և մի ինչ ամենևին հաղորդութեան ունել ընդ երկրի, այլ անդրէն յաւուրցն աղնուականութիւնն ընթանալ՝ յորում էր Այդամ, մինչև էր լեալ կարօտ հանդերձից և վերարկուաց[1]։ Չի այսպէս և արքայութեան ապաշխարութեան էին օրինակ այնպիսի կերպարանք։ Չի մի ասիցես, եթէ ուստի գտանէր նմա հանդերձ ստեղէն, և գօտի մաշկեղէն, քանզի յանապատին ևեթ բնակէր։ Օ՛ի թէ ընդ այնպիսի խորաձորս արկանիցես զմիտս, ապա և այլ ևս ինչ քաղցում հարկ առնի քննել, թէ զիարդ ձմերանի կամ զիարդ տօթոյ շրջէր յանապատին, և այնպիսի վշտաց փափուկ մարմնոցն համբերէր և տհաս հասակաւ, 'ի փոփոխել օդոցն ըստ իւրաքանչիւր ժամանակացն 'ի տապս և 'ի տաւասպանս, մերթ խորշակահար, մերթ ցրտաւկեզ խորովէր յանապատին։

Չի արդ ուր իցեն հեթանոսացն փիլիսոփայք, որ զմնոտի հնարարոյ զանամեթն ախորժէին ցուցանել յանձինս։ Օ՛ինչ օգուտ էր մերթ 'ի կարաս արգելուլ, և մերթ այնպիսի աղտեղուն ցուցանել։ Կամ զարդս և հանդերձս, մատանիս և կշտապանակս, բաժակս և տաշտս, ծառայս և աղախնայս, և բազում և այլ ցնորական պաճուճանս. և յայնմանէ յայնչատի անօրէն գործս անկանել։ Չամ ոչ ոք այնպիսի էր Յովհաննէս. զի իբրև յերկինս բնակէր յանապատին. և զամ զդատութիս ձշմարտութիւն յանձին

[1] Յորինակին Ընդարձակաց։

ցուցանէր. և անտի իբրև զՀրեշտակ յերկնից ինքն էր 'ի քաղաքս, ՅԾծպաշտութենն նահատակ, աշխարհաց պակիչ, և երկնաւոր իմաստութեացն արժանի Ճարտարապետ։ Այս զայս յայնժամ ցուցանէր, մինչև չէ մեղացն բարձեալ էր, և մինչև օրինացն դադարեալ և մինչև մահու կապեալ, և երկաթի գրանցն խորտակեալ, այլ մինչդեռ հին վարքն ունէին։ Այն պիսի իսկ են առաքինի միտք, և արթուն և զուարթուն խորհուրդք. զի յամ վայրի փութան առ ընթանալ, և ընդ ամ կիրձն անարգել անցանել. որ պէս և Պաւղոս 'ի նորում առաքինութես գտանէր առաքինի։

Այլ ընդէր, ասեն, բնաւ ածէր գօտի ընդ մէջ։ Օ՛ի սովորութիւն էր առաջնոցն, մինչև յայս 'ի լոյծ և 'ի մեղկ կերպարանս էին եկեալ։ Անդի և Պետրոս և Պաւղոս երևին թէ գօտեւորք էին։ "Այր գօտիս այս է, ասէ Այգաբոս մարգարէ, կապանօք տա նիցին զնա հրեայք յԱյրուսաղէմ"։ Այս զԱյզիպէ գրեալ է, եթէ գօտի ածէր ընդ մէջ. և իւրաքանչիւր որ 'ի սրբոցն յառաջնոց. զի իբրև զկազմ միշտ 'ի գործ կամ 'ի Ճանապարհ կամ յայլ ինչ պէտս աշխատել և փութալ ածէին գօտի։ Այս ոչ միայն վասն այնորիկ, այլ և վասն զպաՃուՃանս զարդուց կոխելոյ, և վշտաբերուն յանձին ցուցանելոյ։ Օ՛որ և Այս մեծ ինն առաքինութենէ գովութիւն ցուցանէր ասելովն, թէ "Օ՛ի ելեալ տեսանել. այլ 'ի հանդերձս փափկութեն զարդարեալ. ահաւասիկ որ զհանդերձս փափուկս զգենուն՝ 'ի տունս թագաւորաց բնակեալ են"։ Այս եթէ այն պարկեշտ իցէ, որչափ ևս առաւել սորայս պայծառագոյն ևս քան զերկինս։

Իսկ եթէ նա՝ որ սուրբն էր, և քան զերկինս պայծառագոյն, և 'ի վեր քան զմարգարէս, քան զոր չէր ղև ոք մեծ, որ այնչափ համարձակութիւն ունէր, այն պէս վշտամբեր լինէր, և զմեղկիչ փափկութենն անարգէր բազում յաՃախութիւն, և յայնպիսի վարս խիստս զանձն կրթէր, մեք զոր պատասխանատուութիւն ունիցիմք, որ յետ այսչափ երախտեաց, և բազում բեռինս մեղաց ընկենլոյ, և ոչ սակաւ ինչ մասն զխոստովանութեանն որ 'ի նմանէ քարոզէր՝ ցուցանեմք.

այլ արբենամք և շուայտիմք, և իւղովք անուշանամք. և քան զսոռնիկսն 'ի պոռնկոցսն չեմք ինչ աղնուագոյնք. և ամ ուստեք զանձինս մեղկեմք, և դիւրինս առ ըմբռնել առնեմք սատանայի։

"Յայնժամ ելանէին առ նա 'ի Հրէաստանէ և Յերուսաղեմէ, և յամ կողմանցն Յորդանան գետոյ, և մկրտէին 'ի նմանէ, և խոստովան լինէին զմեղս իւրեանց։ Տեսանես, որչափ ինչ վճարեաց գալուստ մարգարէին. որպէս զամ ժողովուրդն յորդորեաց, զիարդ էած զնոսա 'ի յիշատակս իրացն։ Եւ էր իսկ արժանի զարմանալոյ տեսանել 'ի մարդկեղէն կերպարանս այսպիսի իրս ցուցանել, և այնչափ համարձակութիւն 'ի գործ արկանել, և ամենեցուն իբրև մանկտուց Հոխանալ, և բազում շնորհս ծաւալեալ յերեսս ցուցանել։ Եւ այն ևս նպաստ լինէր 'ի զարմացուցանել՝ յամայր ամն մարգարէին երևել. քանզի նուազեալ էին 'ի նոցանէ շնորհք, և յետ բազում ժամանակաց դարձ արարին անդրէն։ Եւ քարոզութիւնն օրինակ նոր և չընաշխարհիկ. զի ոչինչ ըստ սովորութեանցն լսէին զպատերազմաց և զկռուոց և զերկրաւոր յաղթութեանց, զսովոյ և զսրոյ և զբաբելացւոց և զպարսից և զքաղաքին աւերածոյ և զայլ ևս սովորութեանցն, այլ զերկնից և զանտի բարութեանց և զդեհենի և զտանջանացն։

Վասն այսր ամենայնի, թէպէտ և յանապատն ապաստամբելոյց և ամենեցուն կոտորելոց ոչինչ յառաջ բազում ժամանակօք ընդ Յուդայի և ընդ Լեւեդայ, չլինէին[1] վհատագոյնք և սոքա անդր ելանել։ Եւ ասա ոչ եթէ յայնպիսս ինչ կոչէր զնոսա 'ի հատուածութիւն և յապստամբութիւն և 'ի խակադործ ստահակութիւն, այլ 'ի վերին թագաւորութիւն առաքնորդել։ Վասն որոյ և ոչ ունէր զոք ընդ իւր յանապատն, այլ մկրտեր, և զդաստութիւն բանիւք խրատեալ արձակէր։ Մինչև ուսուցանէր արհամարհել զամ իրս երկրաւորս, և հանդերձելոյն ցանկանալ, և հանապազ 'ի նոյն յորդորել։

1 Յորինակին ԼԷԷՔ։

ՅՈՐԴՈՐԱԿ

ԼՍԻՆ նախանձաւոր լիցուք և մեք. զփափկութիւն և զարբեցութիւն թողեալ 'ի պարկեշտութիւն փոխեսցուք։ Չանզի խոստովանութիւն ժամանակ է և մկրտելոյդ և չմկրտելոյն. ոմանց զի ապաշխարեսցին, և սուրբ խորհրդոյն հասցեն, և ոմանց զի սթափեսցին յետ մկրտութենն յաղագս, և սուրբ և անխիղճ մնօք 'ի սեղանս մատիցեն։ Ողորժեսցուք 'ի խմնաւ և 'ի լոյծ կենաց. քանզի չէ և չէ իսկ հնար միանգամ խոստովան լինել և փափկանալ։ Այլ զայս ուսուսցէ ձեզ Յովհաննէս 'ի հանդերձէն, 'ի բնակութենէ, 'ի կերակրոց։

Օ՛, ասեն, այդչափ հրամայիցես մեզ կծկել։ Զամամ հրաման, այլ խրատեմ, և թելադիր լինիմ։ Այլ եթէ այնմ չիցէ ձեզ հնար, գէթ ատէն 'ի քաղաքս ցուցէք ապաշխարութիւն։ Չանզի առդուրս հասեալ կայ ատեանն։ Այլ եթէ ընդ երկար ևս լինչ էր, սակայն և այնպէս չէր պարտ վստահ լինել. քանզի իւրաքանչիւր կենաց կատարած զվախճանի զօրութենէ ունի կոչեցելոյն։ Այլ զի առդուրս հասեալ կայ, լուր Պաւղոսի՝ որ ասէ, եթէ «Գիշեր մերժեցաւ, և տիւ մերձեցաւ». և դարձեալ թէ «Այկեալ իցէ[1] որ գալոցն է, և ոչ անագանեսցի»։ Չանզի և նշանքն այսուհետև կատարեալ են. «Չարոզեսցի, ասէ, աւետարանս արքայութեան ընդամամ աշխարհ 'ի վկայութեամ հեթանոսաց[2], և ապա եկեսցէ կատարած»։ Ողիտ դիր հաստատութեան բանին. չասաց թէ յորժամ հաւատացցի յամամարդկանէ, այլ յորժամ քարոզեսցի ամենեցունց։ Զմին իրի իսկ և վկայութեան հեթանոսաց ասէ. յայտ արարեալ՝ թէ ոչ մնայ[3] ամենեցուն հաւատալոց, և ապա գայ. զի 'ի վկայութենն[4], 'ի յամբաստանութի, 'ի յան-

1 Փարիզեան օրինակն Լ. ՅԷՈՅԷ։

2 Յօրինակին ա.Լ.Բ.Հայ. և դաք ըստ փարիզեան օրինակին։

3 Յօրինակին ԲԷ հայ. և դաք ըստ փար. օր։

4 Փար. օր. զի Վայոութենն։

դիմանութեն, 'ի դատապարտութեն անհաւատիցն է։
Լ.ու մեք զայս լսեմք և տեսանեմք, և 'ի քուն կամք և երազ տեսանեմք իբրև 'ի խոր գիշերի թմբրեալք և ծանրացեալք. և չեն ընդհատ յերազոց իբք ժամանակաց եթէ հեշտականք իցեն և եթէ տրտմականք։ Ա՝ ան որոյ աղաչեմ զարթնուլ այսուհետև, և յարեղանին արդարութեն հայել. զի ոչ ոք 'ի քուն կայ և զարեգանին տեսանել կարէ, և ոչ ուրախ առնել զերեսս գեղեցկութեն Հառագայթիցն. այլ զոր տեսանէ զնմա իբրև յանուրջս տեսանէ։ Ա՝ ան այսորիկ բազում խոստովանութեան պէտք են՝, և յաճախ արտասուաց. զի մեղս գործեմք, և յանհոգութեան եմք. և զի մեծամեծ են մեղքն և անցանեն ըստ թողութեն։ Լ.ու զի չասեմ սուտ, բազումք իսկ 'ի լսողացդ վկայեն։ Բ՝այց սակայն թէպէտ և մեծամեծ քան զթողութիւն մեղքն իցեն, ապաշխարեսցուք, զի և 'ի պսակն վայելեսցուք։ Բ՝ պաշխարութիւն ասեմ, ոչ միայն յառաջին մեղացն հեռանալ, այլ և մեծամեծ բարութիս ցուցանել։
Բ՝.ըարէ՛ք, ասէ, պտուղ արժանի ապաշխարութեն։ Օ՝ խրդ առնիցեմք։ Լ՝թէ զնոցին հակառակն գործիցեմք։ Բ՝.յսպիսի ինչ ասեմ. յափշտակեցեր զայլոց, տուր և զքո յաճախագոյն. բազում ժամանակս պոռնկեցար, մեկուսի կաց և 'ի քումմէ զնոջէ յայտնի ինչ ժամանակս, ցոյց յանձին ժուժկալութիւն։ Թ՝չնամանեցեր և տանջեցեր զյանցաւորն, յայսմ հետէ օրհնեա զթշնամանիչսն, և բարի արա չարաբարաց. զի չէ բաւական յառողջուն զնեան միայն հանել, այլ և վիրին դեղ դնել։ Փ՝ափկացար և արբեցար զառաջին ժամանակն, պահեա և ջրով և եթէ վիճարեա զպէտսն, զի զժանտն որ անտի եմուտ՝ հանիցես 'ի բաց։ Հ՝այեցար յայրատ աչօք ընդ գեղ օտար, յայսմ հետէ ամենեին իսկ մի հայիցիս ընդ կին, զի բազում զգուշութեամբ տրանայցես։
" Լ՝ստորեաց, ասէ, 'ի չարէ, և արա զբարի "։ Լ՝.ու դարձեալ թէ " Ա՝ռեցո զչեզու քո 'ի չարութէ, և շրթունք քո մի խօսեսցին զնենդութեն "։ Բ՝.յլ ասա և զբարւոյն. " Խնդրեա, ասէ, զխաղաղութի, և եթէ

ստէպ զՀետ նորա »։ Ո՛չ զմարդկանն միայն ասեմ, այլ և զնոյն։ Լ.Ե բարւոք ասաց, թէ ընթա՛ ստէպ զՀետ. քանզի հալածեալ և մերժեալ է, զերկիր թո՛ղեալ և յերկինս դիմեալ[1]։ Ո.յլ կարօղ եմք զնա միւսանգամ այսրէն ածել թէ կամիցիմք. զՀպարտութի՛ն, զամբարտաւանութի՛ն և զնա՛մ արգելս նորա 'ի բաց մերժեսցուք. զցածունն[2] և զմեկին վարուցն ստէպ զՀետ երթիցուք։ Զիր ինչ դժուարագոյն քան զցասումն և զյանդգնութի՛ն. զի այն իսկ հպարտս և ծառայաբարոյս գործէ. միո

ն ծաղրալիցս և միւսոյն ատելիս առնէ. և երկուս չարիս հակառակ միմեանց մուծանէ, զՀպարտութի՛ն և զտուտակասպասութի՛ն։ Ո.յլ զյաձախութի՛ն ախտին պարուրեսցուք, և խոնարհք հաւաստեաւ և բարձունք զգուշութի՛ն լինիցիմք։ Վանզի և 'ի մարմնոս մեր 'ի յաձախութենէ լինին անկշիռ խառնուածք. և յորժամ զիւրեանց սահմանն թողեալ հիւթոցն՝ յանչափութի՛ն ելանիցեն, յայնժամ բազում ցաւք և չարաչար մահք ծնանին. զոր և յոգիսն իսկ ոք դիպեալ տեսանիցէ։

Պարուրեսցուք այսուհետև շուրջ զմեզն, և զկենարարն չափոյ դեղ արքցուք. կացցուք մնասցուք 'ի պատշաճ՝ միախառնութի՛ն[3]. և զգուշասցուք հաւաստեաւ աղօթից։ Ա.ռէպէտ և չառնուցումք, յամենցուք զի առնուցումք. և եթէ առնուցումք, վասն զի առաքն։ Ո՛չ ինքն ինչ կամի յապաղել զտուրսն, այլ զի յերկարութի՛ն զստէպ հանապազորդութի՛ն հնարիցի. վասն այնորիկ իսկ յերկարէ զՀայցուածսն, և բազում անգամ և փորձութեանց թողացուցանէ գալ 'ի վերայ, զի ստէպ առ նա փախստական անկանիցիմք. և իբրև ապաւինեսցիմք[4], յամենցուք։ Որպէս հարք զթածք առնեն, և մարք որդեսերք. յորժամ տեսանիցեն զորդիսն յիւրեանց համբուրից մերժեալ, և ընդ հասակակիցսն խաղայցեն, բազում ինչ կեղծիս զարՀուրանաց ծառայիցն հրամայեն կազմել, զի տագնապեալք յերկիւղէն՝ 'ի մայրենի գոգն

1 Հեսիոդոս քերդող. գործք և տիւ. ա. 197 — 201։
2 Փար. օր. էի գ.ոՀ.ոն։
3 Յովհաննէս աբբայ. 'ի դ.ոՀ.ոՀ գ.ոՀ.ոն.ն. եգաք ըստ փար. օր։
4 Փար. օր. ոգ.ոՀ.ինի։

ընթանայցեն։ Այսպէս և ՝ն՝ծ յաձախէ բաղում սպառնալիս, ոչ զի ածցէ իսկ 'ի վերայ, այլ զի այնու առ ինքն ձգեսցէ. և յորժամ դառնայցեմք, փարա տէ վաղվաղակի զերկիւղն։ Օ՛ թէ նոյնպիսիք էաք 'ի փորձութիւնս և 'ի հանգիստս, ապա և պէտք իսկ չէին փորձութեց։

Այլ զի՞նչ ասեմ զփորձութեց՝. քանզի և սրբոցն այնպիսեաց բաղում իսկ ցածութիւն լինէր անտի. վասն այնորիկ և մարգարէն ասէ, «Լաւի է ինձ զի խոնարհ արարեր զիս»։ Այլ ինքն իսկ ասէ ցառաքեալսն, եթէ «Յաշխարհիս նեղութիւն հասանիցէ ձեզ»։ Այլ Պաւղոս զնոյն ակնարկէ յորժամ ասիցէ, եթէ «Ցուաւ ինձ խայթ մարմնոյ՝ հրեշտակ սատանայ, զի կռփեսցէ զիս»։ Ա՛ն որոյ աղաչեաց սաքրել 'ի փորձութենէն. և չէհաս՝ յաղագս բաղում օգնականութեանն 'ի նմանէ լինելոյ։ Այլ եթէ ընդ Դաւթի կեանսն գայցեմք, ամենեին զնա՞մ 'ի վիշտս գտանեմք, և նովին պայծառացեալ զնա և զայլսն ամենեսին նորին նմանիս։ Դանդի և Յոր յայնժամ առաւել պայծառացաւ. և Յովսէփ նովին յաձախ փառաւորեցաւ. և Յակովբ, և նորին հայրն, և ամենեքին իսկ ուր ուրեք և էին 'ի նեղութեանց և 'ի փորձութեանց առին պսակս և պսակեցան և քաջանունք եղեն։

Այլ արդ իմացեալ զնա՞մ, ըստ իմաստնոյն բանի՝ մի տագնապեսցուք 'ի ժամանակի վշտաց 'ի վերայ հասանելոյ՝. այլ զմին ևեթ խրատ յանձին կալցուք՝ տանել ՝ն՝մի ժուժկալութիւն. և մի ինչ խուզել և 'ի հարց և 'ի փորձ զգործսն արկանել. և գիտել թէ երբ վախճան նեղութեցն լինիցի. զայն՝ նմա որ տայն 'ի վերայ գալ՝ թողցուք. և եկեղեցն ՝ն՝մի գոհութեամբ ժուժկալել մերոյ բարեբարութիւն գործ լինիցի՝. որ թէ և լինիցին, բաղում բարութիւնք զնոցին զհետ գայցեն։ Այլ յետհետև զի գայցեն բարութիւնք 'ի վերայ, և ընտիրքն ասա՝ և պայծառագոյնք անդ լինիցիմք, զնա՞մ զինչ և 'ի վերայ գայցէ՝ ընկալցուք զնորա

1 Փար. օր. ՀՈՒՅՍՈՒԹԵՆ։
2 Սերաք. եր. 5։
3 Յորինակին ՄԻՆԷՆ. եդաք ըստ փար. օր։

հակալ լինելով ընդ ամի նմա՝ որ առաւել քան զմեզ գիտէ զմեր օգուտն, և քան զծնօղն սաստիկ սիրէ զմեզ։ Եւ զայս զերկոսեան խորհուրդս յամ վերստս յանձինս մրմնջեալ՝ ցաճուսցուք զտրտմութիւնն. և փառաւորեսցուք ընդ ամի՝ զոր առնէ և արկանէ մեզ 'ի կիր զշահն՝ ած. զի այսպէս և զնենդութեան դիւրաւ մերժեսցուք, և անմահ պսակացն հասցուք հնարհօք և մարդասիրութեամբ ոն մերոյ Յիսի Քրիստի. ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

« Իբրև Եռես զբաղումն 'ի փարիսեցւոցն և 'ի սադուկեցւոցն զի գային 'ի մկրտութիւն, ասէ ցնոսա, ծնունդք իժից ո՞ ետոյց փախչել ձեզ 'ի բարկութենէ անտի որ գալոցն է »։

Զ ԻՆՆԴ ասիցէ Պրա, եթէ Յովհաննու ոչ հաւատացին։ Զէր այն հաւատալ, յորժամ զոր 'ի նմանէն քարոզէր ոչ ընդունէին. քանզի և մարգարէիցն կարծէին թէ ունկնդիր լինիցին՝ և օրէնսդրին, բայց սակայն ասէ զնոցանէ, թէ չեղէն ունկնդիր։ Պանզի զորմէ նոքայն մարգարէանային՝ զսայն ոչ ընկալան. զի « Եթէ հաւատացեալ էր, ասէ, ձեր Մովսէսի, ապա և ինձ հաւատայիք »։ Եւ յետ այնորիկ յորժամ հարցանէին 'ի Պրնէ, եթէ « Մ'կրտութիւն Յովհաննու ուստի էր, ասէն, եթէ ասեմք՝ եթէ 'ի մարդկանէ՝ երկնչիմք 'ի ժողովրդենէն, և եթէ ասեմք՝ եթէ յերկնից էր, ասէ՝ իսկ ընդէր ոչ հաւատացէք նմա »։ Զ ի յայսմ ամէ յայտ լինիցի, եթէ եկին և մկրտեցան 'ի նմանէ, և ոչ հաստատեցան 'ի հաւատս քարոզութենէն։ Պանզի և աւետարանիչն Յովհան ցուցանէ զչարութիւն նոցա՝ որովք առաքեցին առ մկրտիչն, եթէ « Դու Եղիա՞ ես կամ Պրն կամ մարգարէն »։ Պ ան որոյ և ասէ զնորին զկնի, եթէ « Որ առաքեցանն 'ի փարիսեցւոց անտի էին »։

Եւ արդ զիարդ, ասէն. միթէ ժողովքն զայս ոչ այսպէս կարծէին։ Ժողովքն միամիտ մտօք կարծէին այսպէս. իսկ փարիսեցիքն բանս կամէին հանել 'ի նմանէ նենգութեամբ։ Պանզի յայտ յանդիմանն քարոզէր թէ 'ի գեղջէն Դաւթի գալոց է Պրա. բայց Յովհաննէս 'ի զհատացւոց ազգէն էր. և հարցանէ լուծն իբրև որոգայթ ինն կալմէին։ Եւ զայս այնու ինն յայտ առնէ, զոր անդէն յետոյ 'ի կարգին ասէ.

քանզի ոչինչ յորոց կարծէին՝ եղև խոստովան. և այնպէս մեղմեխանօք ասէին, « Լսէ դու ընդէր մկրտես, զի դու չես Քրիստոս »։

Եւ զի ուսանիցիս թէ այլ իմն միտք փարիսեցւոցն էին, և այլ իմն ժողովոցն, լուր զիարդ և աւետարանին զնոցն յայտ առնէ. զի ժողովոցն ասէ, եթէ « Գայիսն և մկրտէին 'ի նմանէ, և խոստովան լինէին զմեղս իւրեանց »։ Լսէ զփարիսեցւոցն ոչ ևս նման սմին. այլ « Լսեալ ետես, ասէ, զբազումս 'ի փարիսեցւոցն և 'ի սադուկեցւոց զի գային առ նա, ասէ, ծնունդք իժից ո՞ ետոյց ձեզ փախչել 'ի բարկութենէն որ գալոցն է »։

Ովք համարձակութիւն. ընդ որպիսի մարդկան, որք արեանց մարգարէիցն ծարաւի էին՝ խօսէր. որք չէին ինչ ընդհատ յօժից. զիարդ զնոսա և զծնօղս նոցա բազում համարձակութիւն կշտամբէր։ Օ՛ի ոչ զյանցաւորս տեսեալ խրատէր, այլ զդարձեալսն. վասն որոյ չէր իսկ պարտ կշտամբել, այլ գովել և ընդունել. զի զքաղաքս և զտունս թողեալ և ընթացեալ եկեալ լսէին քարոզութենն։

Եւ արդ զինչ ինչ ասիցեմք առ այս։ Օ՛ի ոչ այնմ ահն առնոյր՝ զի սնդեալն եկեալն էին յօժարութեամբ, այլ զդաղտնիս մտաց նոցա Հանաչէր՝ այ յայտնութեամբ։ Քանզի մեծամտեալ 'ի հարսն իմն պարծէին, և այն իսկ լսէր նոցա կորստեան պատճառք և անկանելոյ 'ի ծուլութիւնս. վասն այնորիկ զարմատն հպարտութեանն կոտորէր։ Որպէս և Եսայի իշխան սոդոմայեցւոց և ժողովուրդ գոմորացւոց կոչէր զնոսա։ Եւ միւս ևս մարգարէ ասէ, « Ոչ առպարէն իբրև զորդիս Եթովպացւոց էք դուք ինձ որդիք Իսրայելի »։ Եւ այսպէս ամենեքեան մերժեն զնոսա յայնպիսի կարծեաց, և զհպարտութիւնն նոցա ցածուցանեն, որ բազում չարեաց եղև պատճառք։

Բ. Այլ ասէն, մարգարէքն յիրաւի կշտամբէին զնոսա, քանզի յանցանս տեսանէին. իսկ աստ ընդէր կամ վասն էր, զի յօժարեալս ինքնակամ եկեալս տեսանէր։ Օ՛ի ևս զգօնագոյնս առնիցէ զնոսա. զի թէ ստոյգ ոք 'ի բանսն նայիցի, յարգանս խառնեալ ընդ պատուհասն տեսանէ, թէ որ երբեմն նոցա

զրեթէ անհնարին թուէր , այնմ կարօղ էն ։ Օ այս ասելով յօժարութեի տալոյ է , և ոչ պատուհաս առնելոյ , այլ արթունս կազմելոյ ։ Օ՛ի յորժամ երևիցի կսկծեցուցանել , զառաջու զչարիսն նոցա յայտ առնէ՝ թէ որչափ բաղումք և անհնարինքն էին , և ուստի յորպիսի մեծամեծս և՝ի սքանչելիս փոխեցան։ Լ՚ու զինչ ինչ , ասէն , եղև ։ Օ՛ի որդիք նոցա էին՝ և այնպէս չարեօք մնեալ , և ապաշխարեցին։ Լ՚յլ մեզ ուստի եղև այնչափ փոփոխումն . ով զխիստ բարն կակղացոյց . ո՞ զառանց բժշկութեի ցաւսն ողջացոյց ։ Լ՚ու տես անդէն՝ի սկզբանն , զիարդ մորմոքեցոյց անուսաբ դեհենին՝ի մէջ բերելով։ Վ՚ասզի ոչ ասաց որում իմիք ինքեանք սովոր էին , թէ ով եցոյց ձեզ փախչել՝ի պատերազմաց կամ՝ի հինէ կամ՝ի գերութենէ կամ՝ի սովոյ կամ՝ի սրոյ . այլ այլ ինն տանջանս բարբառի , որ ոչ երբէք էր նոցա յայտնի։ " Ո՞վ եցոյց, ասէ, ձեզ փախչել՝ի բարկութենն որ գալոց է " ։ Յիրաւի և ծնունդս իժից կոչեաց զնոսա . զի և գազանն իսկ այն սպանանէ զծնօղն , և ուտէ զորովայնն , և ապա , ասէն , ելանէ՝ի լոյս . որպէս և նոքա իսկ զՀարս և զմարս սպանանէին , և զվարդապետս իւրեանց ձեռօք կոտորեցին։ Վ՚ասց ոչ զպատուհասն միայն յաձախէ , այլ և խրատ ևս տայ , եթէ " Բ՚արէք ձեզ պտուղ ապաշխարութեան " ։ Վ՚ասզի չէ բաւական յարդարութեի փախչելն միայն՝ի չարեացն , այլ և առաքինութիս ևս բաղումն ցուցանել։ Մ՚ի , ասէ, զՀակառակն , որպէս սովոր էք . սակաւ մի ժամանակ կարձել՝ի մեզաց, և ապա դարձեալ անդրէն դառնայցէք։ Ո՛չ զնոսն սովորութիւն խնդրեմք , զոր առաջին մարգարէիւքն ցուցանէիք . նոր են մեր իրքս և բարձրագոյն։ Վ՚ասզի այսուհետև ինքնին իսկ գայ դատաւորն՝ որ արքայութենն տէր է . և՝ի մեծամեծ զգաստութիս՝ յերկինս կոչէ, և յայն հրահանգս ձգէ։ Ա՚ման այնորիկ զարքայութեի և զդեհենիկ ձառեմ, քանզի պատիժքն և պարգևք անմահականք են։ Ա՚ի այսուհետև՝ի նմին հաստատեալ կայցէք . և մի միշտ զսովորական պատձառն պատձառիցիք , եթէ զՄ՚բրահամ հայր ունիմք մեզ , և զՍ՚ահակ և զՅակովբ , պանծացեալ՝ի

նախնեացն աղնուականութիւն։ Այլ զայս ասելով, ոչ եթէ արգելցէր՝ զի մի կոչիցին որդիք սրբոցն, այլ զի մի 'ի նոսա պանծացեալք՝ ծուլանայցեն յոգւոցն աւանդութենէ։ Այլ թէպէտ և զմտացն ծածուկ 'ի մէջ բերէր, և զչեղեալսն և զապառնիս մարգարէանայր, սակայն ասէին յետոյ, թէ "Մի՞ եթէ հայր զԱ՞բրահամ ունիմք, և ոչ երբէք ուրեք ծառայեցաք"։ Այլ քանզի այս էր որ մանաւանդ ածէր զնոսա 'ի հպարտութիւն և կորուսանէր, նախ զայս կարգէ։

Այլ տես իսկ, զիարդ հանդերձ զպատուիս նահապետին ցուցանելով՝ առնէ և այսպիսի իրաց ուղղութիւն. ասելովն՝ եթէ "Մի՞ ձեռն յանձին հարկանիցէք, եթէ ունիմք հայր զԱ՞բրահամ"։ Այլ ոչ ասաց՝ թէ չէ կարող օգնել ձեզ նահապետն, այլ մեղմագոյնս իմն և հանդարտագոյնս ասէր առակաւ, եթէ "Կարող է ոՀ՝ 'ի քարանց աստի յայսցանէ յարուցանել որդիս Ա՞բրահամու"։ Իսկ ոմանք ասեն, եթէ զհեթանոսս կոչէ առակաւ քարինս։ Այլ ես և այլ իմն միտս ասեմ զբանին. որպիսի ինչ. եթէ մի կարծիցէք եթէ դուք կորնչիք, և անորդի առնէք զնահապետն. քանզի ՈՀ դիւրին է և 'ի քարանց առնել մարդիկ, և տալ նմա որդիս, և խառնել յաղնուականութիւն։ Զքանզի և յառաջնումն այսպիսի իմն արար. զի 'ի քարանց մարդիկ առնել՝ հանդոյն սմանէր՝ յամուլ արգանդէ տալ որդի։ Օ որ և մարգարէն իսկ ակնարկէ, եթէ "Հայեցարուք 'ի հաստատուն վէմն՝ յորմէ կոփեցարուք, և 'ի գուբ հորոյն՝ յորմէ փորեցարուք, նայեցարուք յԱ՞բրահամ հայր ձեր, և 'ի Սառա՝ որ ծնաւն զձեզ"։ Այլ արդ յայսպիսի մարգարէութիւն հայեցեալ՝ յիշեցուցանէր, թէ և յառաջնումն սքանչելեօք իմն արար զնա հայր. և իբրև 'ի քարանց յամուլ արգանդէն և յանցեալ հասակէն ետ նմա որդի. նոյնպէս և այժմ աստ կարող է առնել։

Այլ տես, զիարդ երկեցուցանէ, և բնաւին հատանէ ընկենու. և ոչ ասէ՝ թէ յարոյց որդիս Ա՞բրահամու, զի մի անոյսս առնիցէ, այլ ասէ, կարող է յարուցանել։ Այլ ոչ ասաց, թէ կարէ 'ի քարանց մարդիկ առնել, այլ զմերձաւորն և զընտանի, եթէ

«Կարող է 'ի քարանց յարուցանել որդիս Աբրահամու»։ Ցեսանեմ, զիարդ առժամայն կարձեաց զնոսա 'ի մարմնաւոր պարծանացն, զի մի պանծացեալք պարծիցին նախնեաքն, այլ անձանց ապաշխարութեաբ և զդաստութեաբ հասանիցեն յուսոյ փրկութեան։ Ցես, զիարդ խոտեն զմարմնաւոր ազնուականութիւնն, և հաստատեն զհաւատոց առաքինութիւնն։ Այս արդ միտ դիր, զիարդ և յաջորդումքն ևս ասացելովք աձեցուցանեն զերկիւղն, և յանձախեն զսատն։ «Կարող է, ասէ, ՚ած 'ի քարանց աստի յարուցանել որդիս Աբրահամու»։ և անդէն առ նմին, թէ «Հաւասիկ տապար առ արմին ծառոյ կայ»։ Այս ամենևին ա-հագին իմն զբանն ցուցանէ։ Այս և ինքն իսկ բազում համարձակութիւն ուներ 'ի վարուցն, և զնոսա յոյժ սիրտոյ էր մարմնեցուցանել, քանզի 'ի բազում ժամանակաց հետէ էին խոպանացեալք։ Օ՜ինչ ասիցեմ, ասէ, եթէ անկանելոց էք 'ի նահապետին ազնուականութէ, և զայլն 'ի քարանցն տեսանիցէք լեալ որդիս նախծինս. ոչ զայս միայն աղէտս տեսանիցէք, այլ և այլոց ևս մեծամեծ տանջանաց լինիցիք պատժապարտ։

«Հաւասիկ տապար առ արմին ծառոյ կայ»։ Զիք ինչ ահագին քան զայսպիսի բան. զի ոչ ևս գերանդի Թռուցեալ, և ոչ ցանգոյ քակել, և ոչ կոխան անցաւորաց լինել այգւոյն, այլ տապար սրեալ. և ևս այն ահագին՝ զի և 'ի դուրս եկեալ հասեալ։ Զանգի մարգարէիցն բազում անգամ չհաւատային. և ասէին, թէ «Ո՞ւր իցէ օրն ՚ած. եկեսցէ հասցէ խորհուրդ սրբոյն Իսրայէլի զի գիտասցուք»։ Այս քանզի բազում ժամանակս իմն կարծէին զկատարումն իրացն, յայտ առնէ եթէ մերձ են չարիքն այնու՝ թէ «Հաւասիկ և առ արմին դնի»։ Զիք ինչ այսուհետև, ասէ, 'ի միջի, այլ եկեալ հասեալ է և առ արմին դնի։ Այս ոչ ասաց, թէ առ ոստս կամ առ միրգս, այլ առ արմին. զի յայտ արասցէ, թէ ծուլանայցեն, առանց բժշկութեաբ առնին վերքն, և անյոյս և առանց ողջանալոյ ցաւք։ Զանգի ոչ եթէ ծառայ ոք իցէ, ասէ, որ գալոցն է իբրև զառաջինսն, այլ ինքնին ամենեցունց ՚երն, որ զմեծամեծսն և զանհնարին պատիժսն ածէ 'ի վերայ։

Լայց սակայն թէպէտ երկեցոյց, այլ ոչ եթող զնոսա անյոյս լինել։ Վասնզի որպէս վերագոյնն ոչ ասաց՝ թէ յարոյց որդիս Աբրահամու, այլ կարօղ է յարուցանել, զի երկեցուսցէ միանգամայն և մխիթարեսցէ. նոյնպէս և աստ ոչ ասաց, եթէ մեռցաւ յարմատն, այլ ասէ, մերձ է, և զնոսա առ արմատն, և ոչինչ է յապաղելոց։ Այս թէպէտ և այնպէս ած մատոյց, սակայն զձեզ արար տեսարս կտրելոյ կամ չկտրելոյ. զի թէ դառնայցէք և լինիցիք պիտանացուք, անցանէ և չմեղանչէ ինչ ձեզ տապարն։ Այսպա եթէ անդէն 'ի նմին չարիս հաստատեալ կայցէք, արմատաբին տակակոտոր խլէ ըզծառն։ Այսն այնորիկ իսկ ոչ վերացեալ յարմատոյն, և ոչ ձեռն 'ի գործ արարեալ 'ի կոտորել. զի միոմն ուսուցանիցէ չկպարտանալ, և միւսումն՝ թէ և 'ի սակաւ ժամանակի կարօղ էք դառնալ և կեալ։ Այսն այնորիկ յամ՝ կողմանց ածեցուցանէ զերկիւղն, զի զարթուսցէ և ածցէ յապաշխարութիւն։ Վասնզի և 'ի նախնեացն անկանել, և այլոց փոխանակ նոցա մտանել, և չարիքն եկեալ հասեալ 'ի դուրս, և զանհնարինսն կրել, քանզի զերկոսին արմատովն և տապարաւ յայտ արար, բաւական էին և զոյժ 'ի կոր կոծանեալսն կանգնել. որ ասէ՝ թէ "Տապար առ արմին ծառոյ դնի", և անհնարին անկելոց մարթ է կանգնել, և առնել առաքինիս։ Օ այս և Պաւղոսի առեալ 'ի մարգարէէն՝ յայտ առնէր, եթէ "Վասն հակիրճ և համառօտ արար նոր 'ի վերայ երկրի և 'ի վերայ ամ տիեզերաց"։

Այլ մի երկնչիցիս. մանաւանդ զի երկնչիցիս, և մի անյոյս լինիցիս, քանզի գոյ յոյս դառնալոյ, զի ոչ յամբայր կոտորէ պատուհասն, և ոչ վասն այնորիկ եկն զի կտրեսցէ. ապա թէ ոչ՝ զինչ էր որ արգելուլ կարէր. այլ եկեալ հասեալ առ արմատն՝ և զտեղն առեալ, զի քեզ երկիւղ արկանելով՝ առնիցէ պիտանացու առ 'ի յաճախել զպտուղ արդարութեան։ Այսն որոյ յայտ առնէ յաջորդաւն, եթէ "Մանանայն ծառ՝ որ ոչ առնիցէ պտուղ բարի, հատանի և 'ի հուր արկանի"։ Այս ամ՝ ասելով, հանէ մերժէ զպարծանսն 'ի նախնիսն պանծացելոց. զի եթէ և

նորին իսկ Ի.բրահամու ի ցեղս որդի, և բիւրուց բեւրս համարիցիս նահապետս, կրկին պատիժս կրիցես վասն անպտուղն լինելոյ։ Եւ այսպիսի բանիւ զմաքսաւորս երկեցոյց, և զզինուորս ստրջացոյց, այլ չարաչ անոյս. զի և ցծուլութինն պնդեաց երկիւղինն, և զմիխիթարութինն ոչ եբարձ 'ի միջոյ։ Զի ասելովն՝ թէ "Նման որ ոչ առնիցէ պտուղ քաղցր, կորի և 'ի հուր արկանի", ցուցանէ թէ որ առնէ զպտուղ քաղցր, ապրէ յամ պատուհասից։

Եւ զիարդ կարող եմք, ասեն, առնել պտուղ ինչ, զի աւանիկ եկեալ կայ տապարն առ արմին. զի և ժամանակն կարձեալ, և կէսն հասեալ։ Կարող էք, ասէ. քանզի ոչ այնպիսի ինչ է պտուղս այս, որպէս ծառոյն, եթէ ժամանակաց մնայցէ՝ և ժամուց ծառայիցէ, և օդոց փոփոխմամբք կարօտանայցէ. այլ ատ կամէն և եթէ պիտոյ է, և վաղվաղակի ծաղկալից պտղալից զարդարի ծառն։ Զանզի ոչ եթէ արմատ միայն ծառոյն, այլ և Ճարտարապետ մշակն առնէ յանկարծահաս վաղեփեաց զպտուղն։ Եւ զի մի ասիցեն, եթէ դու աւադիկ ստիպես և խռովես, և քարավէժ իմն առնես, "Ցապաք, ասես, առ արմին ծառոյ դնի", և մեք զիարդ 'ի ժամանակի պատժոց կարիցեմք լինել պտղաբերք, ցուցանէ դիւրաւ զպրտ. զաբերութինն։

"Եւ, ասէ, մկրտեմ զձեզ 'ի ջուր. իսկ որ զկնի իմ գալոց է, զօրագոյն քան զիս է. որում չեմ արժանի թէ լուծից զկօշկայ. նա զձեզ մկրտեսցէ 'ի Հոգին սուրբ և 'ի հուր"։ Եւ այսու յայտ առնէ, եթէ կամայն և եթէ պէտք են և հաւատոց, և ոչ աշխատութեաց կամ քրտանց. և զոր օրինակ դիւրագոյն է մկրտելն, նոյնպէս դիւրագոյն նորոգելն և լինել առաքինի։ Զարհուրեցոյց զմիտս նոցա դատաստանայն ահիւ և տանջանայն համբաւաւ, անուամբ տապարին և խոտելովն առ 'ի հարսն պարծանօք, և մնիւ այլոց որդւոց փոխանակ նոցա, և կրկին պատուհասիւքն. զի ասէ, և կորիցին և 'ի հուր անկանիցին. զի յորժամ յամ կղմմանց կակղեաց զխստութիւնն, և յօժարեցոյց 'ի ցանկութիւն ազատութինն 'ի չարեաց, ապա բերէ 'ի միջ և զԻսի ձառս։ Եւ ոչ

վայրապար, այլ մեծաւ առաւելութիւն. զի յայտ ա-
բասցէ՝ եթէ որչափ ինչ է 'ի մէջ նորա, և այնր որ
քարոզէն. և զի մի ոք այնպէս համարիցի, եթէ պաշ-
ածն ինչ առնելով այնպէս յարգիցէ, ասէ, ես ոչ
գիտեմ զնա։ Լա՛ ոչ նախ զայն ասաց՝ թէ չեմ արժա-
նի լուծանել զկրաց մի կօշկաց նորա, այլ նախ ըզ-
նուազութի իւրոյ մկրտութենն եդեալ՝ ցուցանէ, թէ
ոչինչ աւելի էր, բայց միայն ապաշխարութեան էր։
Լա՛ և ոչ իսկ ասաց, եթէ ես մկրտեմ 'ի ջուր թո-
ղութիւն, այլ յապաշխարութիւն, ասէ. և սոյն իսկ այս
անձառ պարգևօք լի էր։ Օ՛ի մի, ասէ, յորժամ լսիցես,
եթէ յետոյ իմ գալոց է, կարծիցես թէ յե-
տոյ քան զիս լեալ իցէ, մինչ դիր, որպիսի զօրութիս
պարգևաց ունի ընդ իւր, և խելամուտ լինիցիս հաս-
տատութիւն՝ թէ ըստ առաւելութեան զօրութենն ոչինչ
կարասցի արժանի ասել. նա և ոչ այն ինչ է՝ զոր ասաց-
ցին, եթէ չեմ արժանի լուծանել զկրաց մի կօշկաց
նորա։ Որպէս զի և յորժամ զայն լսիցես՝ եթէ զօ-
բաւոյն քան զիս է, մի համեմատութի ինչ իբրև մե-
ծի ընդ փոքու կարծիցես զնա ընդ իս։ Բ՛անզի և ոչ
ընդ ծառայս անդամ արժանի եմ 'ի կարգ մնանել,
նա և ոչ ընդ յետին իսկ ծառայս, և ոչ սակաւ ինչ
մնան սպասաւորութեան յանձին ցուցանել։ Վ՛ասն այ-
նորիկ ոչ լոկ ասաց եթէ զկօշիկս, այլ և ոչ զկրացս
կօշկաց, որ վատթարագոյն քան զնմա թուի։ Լ՛ոյս
զի մի համարիցիս՝ եթէ խոնարհութեան ինչ իցեն
բանքն, ածէ զնովիմբ և զկրացն զհաստատութիւն։
"Լա՛, ասէ, մկրտեսցէ զձեզ 'ի հոգին Սրբ և 'ի հուր"։
Տեսանես, որպիսի իմաստութիւն էր մկրտչին. զի յոր-
ժամ ինքն քարոզէ, ահաւորս ինն և մեծամեծս բար-
բառի. և յորժամ առ Տէրն առաքիցէ, քաղցունս
և ախորժականս։ Օ՛ի ոչ տապարի ինչ ձառս 'ի մէջ
բերէ, և ոչ ծառոյ կտրելոյ և 'ի հուր մատնելոյ, և
ոչ զհանդերձեալ բարկութիւն, այլ զմեղաց թողու-
թենէ և զարդարութի և զսրբութի և զլուսանալոյ
յաղտէ և զորդեգրութենէ և զեղբայրութենէ և

1 Յորինակին դէնալ. թերևս փոխանակ դրէալ. մեք եգաք
ըստ լուսա։

զժառանգութենէ և զհաղորդակից լինելոյ և զառաքութէ սուրբ հոգւոյն պարգևաց։ Յայս ամ հայեցեալ ասէր՝ թէ «Լա մկրտեսցէ զձեզ ի հոգին սուրբ»։ Լաւ այսու այլափոխ բանիւ զառաւելութեան պարգևացն յայտ առնէ. զի ոչ ասաց եթէ տացէ ձեզ հոգի սուրբ, այլ թէ մկրտեսցէ զձեզ 'ի հոգին սուրբ։ Լաւ պատմութիւն հոգւոյն[1] դարձեալ զյորդութէն և զանարգելս շնորհացն ցուցանէ։

Լաւ արդ միտ դիր, զինչ ինչ համարեին լսողքն լինել. այլ ըստ մարգարէիցն դառնալ վաղվաղակի, և նորոգել ըստ մեծամեծացն ըստ արդարոցն. վասն որոյ և զանուն հրոյն յիշեցուցանէր, զի զմիտս նոցա 'ի յիշատակ այնոցիկ՝ որոց հրոյն երևեցաւ, տանիցի։ Դրէթէ և ամ իսկ մարգարէիցն 'ի կերպարանս հրոյ երևեցաւ. որպէս Մովսէսի երևեցաւ 'ի մորենւոջն, և ըստ ժողովրդեան 'ի Սինա, և Յեզեկիելի 'ի քրովբէսն։

Լաւ տես, զիարդ զարթուցանէ զմիտս լսողացն այնու՝ զի նախ զայն դնէ, զոր յետոյն լինելոց էր. զի պարտ էր նախ գառնին զենուլ և մեղացն մեռանել և թշնամութեն 'ի միջոյ բառնալ և թաղել և 'ի մեռելոց յառնել, և ապա գալ հասանել հոգւոյն սրբոյ։ Լ.ԱԼ այժմ յայսցանէ և ոչ մի ինչ ձառեաց. այլ նախ զվերջինն և վասն որոյ այն ամ լինելոց էր։ Լաւ մանաւանդ բաւական իսկ այն էր, զի նախ նորա պատիւն քարոզիցի. զի յորժամ լսիցէ լսողն՝ եթէ հոգի ընդունելոց է, թէպէտ և խնդրիցէ 'ի միտս թէ զիարդ կամ որովք օրինակաւ լինիցի այս. մինչդեռ տիրեալ կան մեղքն 'ի վերայ մարթիցի ընդունել հոգի։ Լ.ԱԼ նախ կրթեաց զլսօղն, եթէ մկրտէ հոգւոյն և նորոգէ հրոյն. և ապա այնուհետև առանց զայթագղութեան ածէ զնոսա 'ի ձառս շարչարանացն։

Վասն որոյ և յետոյ իսկ ասաց, եթէ «Լհաւասիկ գառնն այ՝ որ բառնայ զմեղս աշխարհի»։ Լաւ ոչ ասաց՝ եթէ թողու, այլ զառաւել գութ տեսչութեն յայտ արարեալ՝ թէ բառնայ։ Վանզի չէ հան-

[1] Յոյնն և Շնորհալին հոգւոյ։

գոյն թողուլն՝ այնմ, յորժամ լիւր անձն բառնայցէ. զի մին առանց Ճգմանց լինէր, և միւսն մահու չափ։

Լու դարձեալ ասէ, թէ որդի՝ այ է. այլ և ոչ այսու յայտնի ինչ ցուցանէ լսողացն զպատիւն։ Զանազի չեւ ևս գիտէին՝ թէ արդարև որդի իցէ՝ այ. բայց 'ի տալոյ զՀոգին՝ և այս ևս հաստատուն լինէր։ Վասն այնորիկ և հայր յորժամ առաքէր զՅովհաննէս, այսպիսի ինն նշանս զպատուոյ զայնորիկ որ գալոցն էր՝ տայր, եթէ «Յորս վերայ տեսանիցես զՀոգին զի իջանիցէ և հանգիցէ՝ 'ի վերայ նորա, նա է որ մկրտէ 'ի Հոգին սուրբ»։ Վասն որոյ և ինքն իսկ ասէ, թէ «Լոս տեսի, և վկայեմ եթէ սա է որդին այ»։ Օ՛ի յայսմանէ և միւսն ևս յայտնագոյն հաստատուն լինիցի։

Այսպա իբրև զախորժականն ասաց և մեղկեաց նոքօք զլսողսն, յետոյ և սնդէ՝ զի մի անկանիցին 'ի ծուլութիս։ Զանազի այնպիսի էր ազգն հրէական, զի յախորժականն դիւրաւ մեղկէին, և անպիտանք լինէին։ Վասն որոյ ածէ զնովիմբ զահագինսն, եթէ «Որոյ հեծանոցն 'ի ձեռին է»։ Վերագոյն զտանջանացն յայտ արարեալ Ճառէր. իսկ աստ և զգաստուրն ևս մնատմբ ցուցանէ, և զպատուհասն անմահ ընծայեցուցանէ, ասելովն, եթէ «Օ՛յարդն անշէջ հրոյն պատրաստեսցէ»։ Ցեսանես զնոյն տէր իրացն, զնոյն և մշակ. թէպէտ և այլ ուր զՀօրէ ասիցէ, եթէ «Հայր իմ մշակ է»։ Զանազի էած 'ի մէջ զՀարտարապետն, զի մի կարծիցես եթէ վաստակոց ինչ պէտք են և աշխատութիւն, յայլ ինն իրաց դիւրագոյն ցուցանէ՝ եթէ ամ աշխարհ նորա է. զի մի երևեսցի՝ եթէ զայնոսիկ միայն որով իւրքն իցէ տանջիցէ։ Բայց այժմ աւասիկ այն խառն է. զի թէպէտ և սրբագոյն երևիցի ցորեանն, սակայն ընդ յարդին խառն է 'ի կալն և ոչ 'ի շտեմարանս. քանզի յայնժամ ընտրելոց է համառօտ ընտրութիւնն։

Լու արդ՝ ուր իցեն, որք 'ի գեհենն թերահաւատիցեն՝ թէ չիցէ գեհեն։ Զանազի երկուս իրս 'ի մէջ

1 Յորինակին հանիցէ։

եղ, թէ մկրտեսցէ 'ի հոգին սուրբ, և այրեսցէ 'ի հուր զՀաւատացեալսն։ Օ՛ի թէ այն հաւատարիմ իցէ, յայտ է և այն ևս հաւատարմագոյն. զի վասն այսորիկ խսկ և յաջորդաւն զերկուս կանխասաց իրսն դնէ. զի որով եղև առժամայն՝ և զմիւսն ևս որ առյապայ լինելոց իցէ՝ առնիցէ հաւատարիմ։ Զանազի և Զի՛ 'ի բազում տեղիս այսպիսի ինն իրս յայտ առնէ. մերթ նովին իրօք, և մերթ հակառակորդօք ինչ նոցուն եդեալ՝ 'ի միջի զմարդարէութիւնս. և աստ ընդարձակելոյն և հանդերձելոյն խոստմամբ. զի այնու որ աստ լինիցի՝ և այնմ որ չէ՛ ևս իցէ լեալ, հաւատացուցանէ հակառակորդքն։ Զանազի և այնոցիկ՝ որք վասն նորա մերկացան ընդեցին զամ ինչ զոր ունէին, խոստացաւ աստ հարիւրապատիկ զամ, և անդ զկեանսն յաւիտենից. և այնու զոր աստն եւ, հաստատեաց զոր անդն խոստացաւ։ Որպէս և Յով՝ հաննէս յայտ արար՝ զերկուս իրս 'ի միջի դնելով, թէ և մկրտէ 'ի հոգին, և այրէ անշէջ հրովն։ Օ՛ի թէ չէր մկրտեալ հոգւովն սրբով զառաքեալսն, և զամենեսին օր ըստ օրէ՝ որք կամին, ապա յիրաւի թերահաւատեիր 'ի հանդերձելոցն։ Իսկ եթէ որ մեծն և դժուարագոյնն թուէր՝ զայն արար և առնէ հանապազ, զի՞նչդ զդիւրագոյնն չհամարիցիս ՀԱՍՄարիա։

Զանազի ասաց՝ եթէ «Մկրտեսցէ 'ի հոգին և 'ի հուր», և մեծամեծ պարգևս խոստացաւ աստ, զի մի յուլանայցես մեծամեծ խոստմամբքն, ածէ յարէ 'ի նոյն և զայն, թէ «Որոյ հեծանոցս 'ի ձեռին իւրում է», և զընտրութիւնն որ հեծանոցաւն լինիցի։ Մի՝ ասէ, բաւական համարիցիք ձեզ միայն զմկրտութիւնն, եթէ յետ այնր անպիտանք լինելոց իցէք. քանզի պիտոյ է ձեզ քաջութիւն և զգաստութիւն յետ մկրտութեան. վասն այնորիկ 'ի տապարէն 'ի մկրտութիւնն փախուցանէ, և յետ մկրտութեանն հնորհաց՝ 'ի հեծանոցէն և յանշէջ հրոյն երկեցուցանէ։ Լու յառաջ քան զմկրտութիւնն ոչ առնէ այսպիսի ինչ ընտրութիւն, այլ մեկնագոյնս ինն Ճառէ, թէ «Ի՞նչ ծառ՝

1 Յովհաննէն և աստ դիմաւ. եդաք ըստ լուս։

որ ոչ առնիցէ զպտուղ, հատանիցի և 'ի հուր արկաւ նիցի ,, . այն է, զի անհաւատք ՝ամ 'ի տանջանս մատնիցին։ Եւ այսպէս յետ մկրտութեան այլ իմն որոշումն 'ի միջի դնէ . քանզի բազումք յետ զհաւատն ընդունելոյ՝ անարժան վարս ցուցանելոց էին յանձինս, վասն այնորիկ երկեցուցանէ սպառնալեաւքն, թէ " Որոյ հեծանոցն 'ի ձեռին է՝ սրբել զկալ իւր, և ժողովել զցորեանն յշտեմարանս, և զայրդն մատնել ՝ անշէջ հրոյն յաւիտենից ,,։

Մի՞ ոք այսուհետև լիցի յարդ, և մի այսր անդր աղամղեալ իբրև զունգ, և մի չար ցանկութեանցն կայցէ առընթեր՝ ՝ամ ուրեք դիւրաւ հոսել և մաղել 'ի նոցանէ։ Եթէ կայցես մնայցես ցորեան, թէպէտ և փորձութիւն գայցէ 'ի վերայ՝ ոչինչ կրիցես վնասս. քանզի և 'ի կալ կամնասայլից անիւքն սղոցաձեւք զցորեանն չկտրեն։ Իսկ եթէ 'ի յարդին տկարութիւն իջանիցես, և աստ անհնարին աղէտս գործես՝ մանր կոտորել յամենեցուցոց, և անդ զանանհ տանջանս ընդունիցիս։ Զ՝ի այսպիսիսքն ամենեքին և յառաջ քան զհնոցն որ անդ իցէ՝ և աստէն իսկ անհանձար ցանկութեանցն կերակուր լինին . որպէս յարդն՝ անիսօսուն անամնոցն, նոյնպէս և նոքա նիւթ և կերակուր հրոյն։

Եւ ուղղորդ իսկ ասելի է, թէ ինքնին դատելոց է գործովքն զոր գործիցեն, ոչ առներ այնպէս դիւրընկալ զանն. այլ առակս խառնել՝ և նովաւ զ՝ամ յարդարել, առաւել հաւանեցուցաներ, և բազում միկթարութիւն ձգեր զլսօղն։ Ա՝ան որոյ և բազում ինչ այնպէս խօսեր ընդ նոսա . զկալ և զհունձս և զորթ և զհնձան և զհարաւունս և զուռկան և զձկնորսութիւն, և զ՝ամ որ ինքեանք ընդել էին՝ խառներ ընդ բանս իւր։ Զ՝որ և մկրտիչն ասաւ արար, և մեծ հաստատութիւն տայր զբանիցն՝ զհոգւոյն տալ. զի որ այնչափ զօրաւոր է, մինչև զմեղս թողուլ և զհոգին տալ, և զայլն եւս ՝ամ կարող է առնել, ասէ, առաւել։ Տեսանես, զի անդէն իսկ յառաջագոյն կարգաւ ընծայեցուցաներ զիսորհուրդ յարուցեալն և զդատաստանի։

1 Յորինակին պակասեր մոռնել։

Եւ ընդէր, ասէն, վաղվաղակի չՀառեաց զնշանացն և զարուեստից, որ լինելոց էին 'ի նմանէ։ Օ՛ի այս մեծ էր, և այն ՀամՀ վասն սորին լինէր. զդվխաւորն դնելով զլնաւ միանգամայն ընդ նմին փակեաց. ըզմահու լուծանել, զմեղացն բառնալ, զանիծիցն ապականութիւն, զբազմաժամանակեայ զպատերազմացն զդիւրութիւն, 'ի դրախտն մտանել, յերկինս վերանալ, հրեշտակաց քաղաքակից լինել, հանդերձելոց բարութիւնցն հաղորդել. քանզի և սա այնց առհաւատչեայ է։ Իբրև ասաց զայն, և զմարմնոցն յարութիւնէ, և արքայութիւն հաղորդ լինելոյ՝ և բարութեց, զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ. քանզի զայս ՀամՀ այնու շնորհօք պարգևեաց, աւելորդ էր այնուհետև վասն նշանացն՝ որ վաղվաղակի լինելոց էին և աչօք ընտրելոց, ասել. այլ զայնցանէ որք երկմտութեանն էին՝ Հաւաքել, թէ իցէ որդի ՀայՀ, թէ առանց Համեմատութեան 'ի վերս իցէ քան զՀոգիանէս, թէ բառնայցէ զմեղս աշխարհի, թէ վերէժս ընդ գործոցն պահանջիցէ, եթէ չիցեն աստէն և եթէ մեր իրքս, այլ անդ ըստ արժանաւորութեան ընդունիցի իւրաքանչիւր ոք։ Եւ այս յանդիման առաջի երեսաց կայցէ՝ որպէս թէ չէ իսկ ինչ։

ՑՈՐԴՈՐԱԿ

Եւ արդ զայս ՀամՀ իմացեալ, բազում փոյթ 'ի կիր արկցուք, մինչդեռ եմք աստէն 'ի կալս։ Վասն զի մարթի մինչ աստէն եմք և յարդէ 'ի ցորեան փոխել, որպէս 'ի ցորենոյ բազումք 'ի յարդ։ Այլ այսուհետև ծուլասցուք, և մի յՀամ հողմոյ շարժեսցուք, և մի յեղբարց մերոց Հեղքեսցուք, թէպէտ և փոքունք ինչ և նուազագոյնք թուիցին. զի և ցորեանն քան զյարդ ըստ մեծութեան փոքրագոյն է, բայց ընութեամբ ազնուագոյն։

Այլ յարտաքին պաՀուՀանս հայիցիս, քանզի հրոյ պատրաստեալ են, այլ 'ի խոնարՀութիւնն որ ըստ այ իցէ 'ի հաստատուն և յանեղծ. որում ոչ կոտորել

մարթի, և ոչ հրոյ Ճարակ լինել։ Ա՛ն որոյ և յաղ-
դին երկայնամիտ լինի, զի նոցա մերձաւորութիւն լի-
նիցին աղնուագոյնք։ Ի՛մին իրի չեն այժմին դա-
տաստանք, զի հասարակ ամենեքին պսակիցիմք. զի
'ի չարեաց բազումք 'ի բարիս դառնայցեն։ Օ՛ար-
հուրեսցուք այսուհետև յորժամ լսիցեմք զառակս
զայս. քանզի անչէջ է հուր։ Յո՛ւ զիարդ, ասեն, ան-
չէջ իցէ։ Ղ՛տեսանեն զարեգակնս, որ հանապազ այ-
րի՝ և երբէք չչիջանի։ Ղ՛ուիցես զմարենուոյն, զի
հուրբ վառեալ էր՝ և չայրէր։ Յո՛ւ եթէ դու կամի-
ցիս զերծանել 'ի բոցոյն, զողորմածութեան գանձս
գանձեա, և չլինիցի ինչ քեզ այնուհետև գանգիտ
հուրն։ Յ՛եթէ ասասցես բանիս, չտեսա-
նիցես զհնոցն՝ յորժամ անդր երթայցես. և եթէ
չաւատայցես այժմ սոցա, անդ առնուցուս բարւոք
'ի միտ յորժամ չիցէ հնար փախչելոյ. քանզի և
անհրաժեշտ իսկ են տանջանք այնոցիկ՝ որ ոչ ուղիղ
վարս ցուցանիցեն։

Զ՛է բաւական միայն հաւատալն. քանզի և դևք
սարսեն յոյ. այլ բազում դարմանք ուղիղ կենաց
պիտոյ են մեզ։ Ա՛ռ այնորիկ և ստէպ իսկ զձեզ[1] ժո-
ղովեմք այսր. ոչ զի մտանիցեք միայն, այլ զի և
շահս[2] յաստի հրահանգաց շահիցիք։ Իսկ եթէ գայ-
ցէք ցանգ, և շահեալ ինչ ոչ աստի մեկնիցիք, չէ ինչ
օգուտ 'ի ստէպ այսր կանխելոյն։ Օ՛ի թէ զմանկտի
յորժամ առ վարդապետս տեսանիցեմք յղեալս՝ և
շահ ինչ անտի ոչ շահեալ, սաստիկ ամբաստան զվար-
դապետացն լինիմք, և անտի հանեալ բազում ան-
գամ յայլս տամք. զոր պատասխանատուութի ունի-
ցիմք, զի ոչ որչափ երկրաւորաց՝ ունիմք փոյթ յանձ-
ին զառաքինութենէն, այլ միշտ ունայն բերեմք 'ի
տուն զպնակիտս. և այն զի առաւել և մեծամեծ
վարդապետք աստ են։ Ի՛անզի զմարգարէս[3] և զա-
ռաքեալս և զնահապետսն և զարդարսն ամենեսին
ցանգ կացուցանեմք վարդապետս եկեղեցւոյ, սակայն
և այնպէս չգործի ինչ լաւութի։ Ա՛յլ թէ երկուց

1 Յորինակին յեղ. եգաւ ըստ փար. օր։

2 Փարիզեան օր. շահ ինչ։

3 Փար. օր. գանգի Ի մարգարէս։

սաղմոսաց կամ երից կցիցէք, և զհանապազորդ աղօթսն լոկ ըստ սովորութեան առնիցէք, լուծանիք մեղկիք. և զայն միայն բաւական համարիք ձեզ 'ի փրկութեն։ ՀՐԱՄԱՅՔ մարգարէին՝ որ ասէ, մանաւանդ թէ՝ այ իսկ մարգարէիւն, եթէ "Յողովուրդս այս շրթամբք մեծարէ զիս, և սրտիւ քաջ 'ի բաց հեռի է յինէն"։

Ա.ՐԴ զի մի՝ այն լինիցի և առ մեզ, ինչեա զզիրն, մանաւանդ զարժանն՝ զոր արժանեաց յոգիսդ սատանայ. բէր յառաջ սիրտ ազատ յերկրաւոր խառվութեց, զի համարձակ զոր կամիս՝ գրել գրեցից։ Ա.ՅԺՄ ոչ այլ ինչ է ընթեռնուլ, բայց միայն զնորա գիր, զյաջիշտակութեն, զադահութեն, զնախանձ, զըշարակնութիւն։ Ա.ՅԺՄ յորժամ առնուս զանանկիտսն ձեր, չկարեմ ընթեռնուլ. զի ոչ զայն գիր գտանեմ, որ ըստ իւրաքանչիւր կիրակէիցն գրեմք 'ի ձեզ և արձակեմք, այլ այլ ընդ այլոյ խանգարս և կամակորս։ Լոկ եթէ ինչեա մինչեմ և միւս անգամ զհոգւոյսն գրիցեմ, ձեր երթեալ սատանայական ազգեցութեցն տայք զսիրտս ձեր, զի զուրմն միւսանգամ ընդ այնր գրիցէ ձեզ։ Ա.Ն արդ զինչ վախճան[2] այնր լինիցի. թէպէտ և ես չասեմ, սակայն իւրաքանչիւր մտաց խիղճ գիտէ։ Ա.այց ես ոչ դադարեցից զմանն առնելոյ, և զուղիղ գիրն գրելոյ. իսկ եթէ դուք եղծանիցէք, այն ձերոյ չփութեցդ գործ լինիցի, և մեզ վարձք անսխալք։

Ա.այց ոչ ևս կամիմ տաղտկալիս ինչ խօսել, այլ աղաչեմ և փարեալ ասեմ, զի գէթ հանգոյն մանր մանկտւոյն ունիցիմք փոյթ յանձին զիրացս զայսոցիկ։ Օ ինքնա նախ զնշմարանս գրոցն[3] ուսանին, և ապա ցանգ զնոյնս կրթեալ Հանապէն. յետոյ և յրնթերցուածոյն Հանապարհ նոքօք եկեալ Հասանեն։ Ոյնպէս և մեր բաժանեալ 'ի բաժինս զառաքինութեն, արասցուք սկիզբն նախ չերդնուլ. և անտի մի սուտ երդնուլ չբամբասել[4]։ Ա.Ն ասպ 'ի միւս կարգ գրոյն եկեսցուք. չչարտիսել և չցանկալ մարմնոց.

1 Յօրինակին Խ-Ի-Ն. Եդաք ըստ փար. օր։
2 Փար. օր. ՀՀար։
3 'Ի լուս. գրոյն. փար. օր. գրոց։
4 Փար. օր. Ե ԼԷՄՄԷԼ։

չլինել որովայնապարար, չարբենալ, մի անագորոյն միտս ունել և մի ծոյլս գտանել։ Պարձեալ և 'ի հոգեւորսն փոխեալ՝ կրթեսցուք 'ի ժուժկալութիւն, և յորովայնի անտեսութիւն, 'ի ցածութիւն, յարդարութիւն։ Այլ եւս յառաջ մատուցեալ, ազնուագոյնս և հեզս և խոնարհս մտօք լինել։ Այլ ընդելուզեալ ընդ միմեանս զայս ամ՝ գրեսցուք յոգիս մեր և 'ի տունս և 'ի բարեկամս և 'ի կանայս և յորդիս 'ի հանդիսի անցուցանել զամ։

Այս յառաջնոյն և դիւրնոյն [1] սկիզբն արասցուք. 'ի չերդնելոյն։ Այլ զայն գիր ստէպ զմտաւ ածցուք 'ի տան. քանզի այնմ կրթուիթ բազում խաւփանիչք են 'ի տան։ Օ՛ի և ծառայն զայրացուցանէ, և կինն տրտմեցուցանէ, և որդի ստահակ 'ի սպառնալիս և յերդումն ածէ։ Իսկ եթէ 'ի տան ստէպ 'ի նոցանէ զրդռեալ՝ կայցես յուղիղ կայի՝ չձգել անկանել յերդմունս, ապա և 'ի հրապարակն կարօղ լինիցիս անընդունելի լինել, յորժամ ոչ զկին թշնամանիցես, ոչ զծառայն և ոչ զայլ ոք։

Օ՛ի և կինն բազում անգամ յորժամ գովիցէ զոք, և եղուկ զանձն կոչիցէ, բորբոքէ ածէ զքեզ 'ի բամբասանս ուրումն. այլ դու մի բռնադատիցիս 'ի բամբասել զգովելին, այլ տանիցիս ամի ժուժկալութիւն։ Այլ եթէ ծառայս տեսանիցես, զի գովիցէն զայլոց տեսարս, մի խռովիցիս, այլ հաստատուն կայցես։ Հրահանգք և կռուանոց առաքինութիւն լինիցի տունն. զի անդ բարիոք վարժեալ՝ բազում տեղեկութիւն և 'ի հրապարակս զանձն յառաջ կացուցանիցես։

Օ՛սոյն և 'ի մնապարծութիւնն առնիցես։ Այթէ կրթիցիս չմնապարծել առ կնոջ և առ ծառայս, ապա և ոչ ուրեք իսկ այնուհետեւ ըմբռնիցիս դիւբ [2] յայնպիսի ախտ։ Պանզի ամ ուրեք բռնադոյն է ախտն այն. մանաւանդ յորժամ կին մօտ լցէ։ Այթէ անդ լուծանիցեմք զզօրութիւն նորա, ապա և յայսմ [3] դիւրաւ յաղթեմք։ Օ՛նոյն և յայլ կարիսն արասցուք. 'ի տան կրթեալ առանձինն հանապազ վարժեսցուք, զի դիւրաւ լինիցին մեզ հրահանգքն. և անձամբ

1 Փար. օր. 'ի դիւրնոյն։
2 Փար. օր. դիւրաւ։
3 Փար. օր. յոյսմ։

անձանց առանձինն սաստեսցուք, յորժամ յանցանիցեմք յիրս ինչ՝ որ առաջի կայցեն։ Լինիցի դարձեալ և սասան մի 'ի վասս, այլ 'ի վարձս և 'ի մեծամեծ շահս առեալ։ Լիցէ այն լինի, եթէ յաձախ պահովք զանձինս պատժեսցուք, և գետնատարած անկողնովք, և այլովք նոյնպիսի վշտամբերութիւք։ Լիցէ այնպէս յամ կողմանց գայցեն մեզ շահք. և աստէն զհեշտական կեանս առաքինութիւք կեամք, և հանդերձելոց բարութեցն հասանիցեմք, և մշտնջենաւոր ՅՍ բարեկամք լինիմք։

Ա.ՅԼ զի մի այնպիսի ինչ լինիցի՝ եթէ աստ վայրապար զարմացեալ ընդ բանսս երթայցէք, և զպնակիտս մնացն ձերոց ընկեցեալ՝ տայցէք սատանայի զայն ջնջել. այլ յորժամ աստի գնայցէք, իւրաքանչիւր որ կոչեսցէ զկին իւր, և պատմեսցէ զայս ամ. և առցէ ընդ իւր օգնական. և յայսմ օրէ և անդր 'ի բարւոք կռուանոցն մնանիցէ, օծեալ իւղով հոգւոյն պարգևաց։ Լիցէ եթէ մի անգամ կամ երկիցս, կամ բազում անգամ գլորիցիս 'ի կրթութենն, մի վհատիցիս. այլ յարուցեալ միւսանգամ կռուիցիս, և մի դադարիցես, մինչև զպայծառագոյն պսակն հակառակ սատանայի առնուցուս 'ի գլուխ, և յանկողոպուտ գանձս արքայութենն[1] համբարիցես դնիցես զստացուածն։ Լիցէ եթէ ընդելուցանիցես զանձն ընդ այնպիսի[2] զգաստութի, ոչ թէ և ծոյլ գտանիցիս՝ կարիցես անցանել զմիով 'ի հրամանացն, վասն սովորութենն բնութեդ հաստատութենն նմանելոյ։ Զի որպէս ննջելն և ուտելն և ըմպել և ոգի առնուլ դիւրաւ է, նոյնպէս և զառաքինութենն հեշտութի դիւրաւ և հաստատուն շահեսցուք. և յանծուփ նաւահանգստի նստիցիմք և 'ի հանապազորդ խաղաղութենէ վայելիցեմք. և բաղում բեռամբք աղխաղխեալ գնաւն, երթեալ հասանիցեմք յօրն, և անմահ պսակացն արժանի լինիցիմք. յորս լիցի ամենեցուն մեզ վայելելոյ հնարհօքն և մարդասիրութիւնն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում փառք և զօրութիւն յաւիտեանս. ամէն[3]։

1 Փար. օր. ըստ այժմեայս յունին. ՊՊՈՒՆՈՒԹԵՆ։

2 Փար. օր. ընդ այդոսիկ։

3 Փար. օր. յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

« Յայնժամ, ասէ, գայ Յի՞ 'ի Գալիլեէ 'ի կողմանս Յորդանան առ Յով »։

Բնդ ծառայն տէրն, ընդ պատժապարտն դատաւորն գայր 'ի մկրտութիւն։ Բայլ ընդ այս մի ինչ խառնիցիս. քանզի խոնարհագոյն իրօքն՝ եւս առաւել լուսաւորի նորա բարձրութիւն. զի որ զյղանալն զայնչափ ժամանակս 'ի կուսական յարգանդին կալաւ յանձին, և ելանել անտի հանդերձ մերով բնութեամբ, և ապտակել և ելանել 'ի խաչ, և զայլ եւս ամ չարչարանսն չարչարել, ընդ այն զի զարմանաս, թէ և մկրտել եւս յանձն առնոյր ընդ այլսն ամենեսին 'ի ծառայէն։ Քանզի առաւել սքանչելիք այն են, զի կամեցաւ լինել մարդ՝ էն ամ. և այն ամ [1] զկնի այնր գայ կարգաւ։ Այսն այնորիկ և Յովհաննէս յառաջագոյն ասէր զոր պարսն էր ասել, եթէ « Ահա՛ մարժանի լուծանել զիրաց մի կօշկաց նորա ». և զայլն եւս ամ, թէ և դատաւոր է, և ըստ իւրաքանչիւր գործոց հատուցանէ ամենեցուն, և զհոգին առատ տնորհելոց է ամենեցուն։ Օ՛ի յորժամ տեսանիցես զնա 'ի մկրտութիւն եկեալ, մի ինչ խոնարհագոյն կամ կարօտութիւն կարծիցես զնմանէ։ Այսն այնորիկ իսկ յորժամ եկնն, արդեալոյր զնա Յովհաննէս։

« Լսեա՛, ասէ, 'ի քէն պարտ է մկրտել, և դու առ ինս գաս »։ Լու քանզի մկրտութիւնն Յովհաննու ապաշխարութիւն էր, և ամբաստանութիւն յանցաւորաց, զի մի կարծիցի թէ և նա եւս այնպիսի մտօք գայցէ 'ի մկրտութիւն, յառաջագոյն բառնայ զկարծիսն 'ի մէջ ջրոյ, գառնն կոչելով և այ գառն, և փրկիչ որ բառնայ զմեղս ամ աշխարհաց։ Օ՛ի որ զամ ազգաց մարդկան կարող է բառնալ զմեղս, որչափ եւս առաւել ինքն անմեղ էր։ Այսն այնորիկ ոչ ասաց, ահա

[1] Ճառընտ. Դ. այն ամ. ըստ յունին։

ւանիկ անմեղն այլ զևս առաւելագոյնն, թէ «Ոչ բառնայ զմեղս աշխարհի»։ Օ՛ի յայսմանէ և զայն ևս ընդունիցիս հաստատութիւն. և յընդունելն 'ի միտ առնուցուս, եթէ այլ ինն էր մատակարարելոց, յայն սակս գայր 'ի մկրտութիւն։ Ա՛ն որոյ և 'ի գալն ասէր, եթէ «Ահա՛ 'ի քէն պիտոյ է մկրտել, և դու առ իս գաս»։ Այ՛ն ոչ ասաց, եթէ դու յինէն մկրտիս. քանզի և զայս կասկածէր ասել. այլ զինչ ասէ. «Այ՛ն դու գաս առ իս»։ Այ՛ն առ այս զինչ արդեաք Ա՛ռ։ Բ.յլ այնպիսի ինչ՝ որպէս առ Պետրոս յետոյ արար, նոյնպէս և այժմ ասաց։ Ա՛նանդի և նա արգելոյր, զի մի լուանայցէ զոտսն. իսկ իբրև լուաւ զայն, եթէ «Օ՛ որ ես այժմ առնեմ՝ դու ոչ գիտես, ապա յետոյ գիտասջիր». և զմիւսն, «Այ՛թէ ոչ լուացից զքեզ, ոչ ունիս ընդ իս մասն յաւիտեանս», վաղվաղակի Թողեալ զյամառութիւնն հաւանէր։ Ա՛յնպէս և սա յորժամ լուաւ, եթէ «Թո՛յլ տուք այժմ, զի այսպէս վայել է մեզ կատարել զնա՛մ արդարութիւն», վաղվաղակի առնոյր յանձն։ Ա՛նանդի չէին այնչափ յամառողք, այլ և զսէրն ցուցանէին, և 'ի հնազանդութիւնն չելանէին, հաւանեալք վաղ-վաղակի առնէին զկամս նոցն։

Տեսանես, զիարդ յորդորէ որ փոքր ինչ իրք կարծէին. քանզի ոչ ասաց՝ եթէ այդպէս արժան է, այլ ասէ՝ այսպէս վայել է։ Օ՛ի իբրև անարժանութիւն ինն կարծէր նմա 'ի ծառայէն մկրտել, յայն սակս դնէ զյաւելուածն իբրև զխտրոց 'ի միջի. որպէս զի ասիցէ, եթէ ոչ յայնպիսի ինչ իրաց փախչիս և արգելուս՝ որ չվայելիցեն. վասն որոյ ասէ՝ եթէ Թո՛յլ տուր։ Այ՛ն ոչ միայն, եթէ Թոյլ տուր, այլ թէ այժմ Թոյլ տուր։ Ա՛նանդի ոչ եթէ հանապազ զայդ այդպէս առնիցես, այլ տեսանիցես զիս և 'ի փառսն ևս, որոց ցանկանասն. բայց այժմ հաւանեաց առնուլ զայս յանձն։

Իսկ զի ցուցանիցէ, եթէ որպէս ինչ վայել էր։ Ա՛նանդի զօրէնս զնա՛մ վայել է մեզ կատարել, ըստ այնմ զոր յայտ արարեալն ասէ՝ եթէ զնա՛մ արդարութիւնն։ Իսկ արդարութի՛ն ասա՝ կատարութիւն նա՛մ պատուիրանացն է։ Ա՛նանդի զնա՛մ պատուիրանն, ա-

սէ, հանաք 'ի գլուխ, և այս միայն պակաս է. և զայս
ևս պատշաճ է յայլն ամ յաւելուլ։ Լոյս քանզի եկի
զանէծս օրինացն որ վասն յանցուածոցն եդան՝ լու-
ծանել, վայելէ նախ զամ ինչ կատարել, և ապա-
տել զձեզ 'ի դատապարտութէ օրինացն. և ապա յե-
տոյ դադարեցուցանել զօրէնսն։ Վայելէ ինձ կա-
տարել զամ օրէնսն. քանզի վայելէ լուծանել զա-
նէծսն, որ կան ձեզ գրեալ հակառակ յօրինացն. զի
յայն սակս իսկ առի մարմին և եկի։

"Լոյս ասա, ասէ, թոյլ ետ նմա։ Լոյս իբրև մկրը-
տեցաւ Յհ, վաղվաղակի ընդ ելանէին նորա 'ի ջրոյ
անտի՝ ահաւասիկ բացան նմա երկինք, և ետես զՀո-
գին ամ, զի իջանէր 'ի նմանութիւն աղաւնւոյ, և
հանգչէր 'ի վերայ նորա։ Քանզի յոյժ քան զնա
մեծ համարէին զՅովհաննէս վասն յանապատին
զամ ժամանակս կենաց իւրոց մնանելոյ, և զի որդի
քահանայապետի էր, և վասն այնպիսի հանդերձս
խիստս զգենելոյ, և զի զամենեսին[1] կոչէր 'ի մկրտութէ,
և զի յամուլ և 'ի պառաւ արգանդ էր ծնեալ։ Իսկ
զՅհ իբրև 'ի դոյզն ումեք յաղջկանէ համարէին
ծնեալ. զի թէ և կուսորդի էր ինչ ումեք յայն
ժամ յայտ. և մանաւանդ զի տնասուն էր, և ընդ
ամենեսեան համարձակ շրջէր, և զհասարակաց ան-
խրտիր զհանդերձ զգենոյր. զի մի զայն ամ տեսեալ՝
փոքր ինչ քան զՅովհան համարիցին զնա. զի չև ևս
մեծամեծ ինչ իբք յայտնեալ էին 'ի նմա. և մանա-
ւանդ զի մկրտեցաւ ևս 'ի Յովհանէ, որով առաւել
հաստատեին կարծիքն. և այսպէս իմանային, թէ և
նա մի ոք յառաջնոցն էր. զի թէ չէր մի ոք 'ի բազ-
մանց, ոչ ընդ բազումն գայր 'ի մկրտութիւն. և
զՅովհաննէս առ մեծս և առ սքանչելիս ունէին։
Լոյս զի մի տարածեալ ունիցին այսպիսի կարծիք զաս-
զուսն, վասն այնորիկ ընդ մկրտելն Յհի՝ և երկինք
բանային, և հոգին իջանէր, և բարբառ յերկնից ե-
կեալ ընդ հոգւոյն քարոզէր զպատիւ միածնին։

Լոյս քանզի բարբառն՝ որ աղաղակէր, եթէ «Դա
է որդի սիրելի», թուէր բազմաց՝ թէ Յովհան-

1 'ի լուս. զամենեսեան։

նու պատշաճ իցէ և ոչ Յոի, քանզի ոչ յաւել ինչ, թէ որ մկրտեցաւդ՝ դա է որդի իմ սիրելի, այլ խառնիխուռն իմն, թէ դա է. զի իւրաքանչիւր 'ի լսողացն կարծէին՝ եթէ զմկրտչին ինչ պատիւ յայտ առնիցէ բարբառն. վասն այնորիկ էջ հոգին 'ի նմա նուիրեալ աղաւնւոյ՝ ձգել զբարբառն 'ի Յոհ. և յայտ առնէր ամենեցուն զայն, եթէ այդ ոչ Յովհաննու մկրտչի է անդ, այլ Յոի որ մկրտեցաւդ։

Այս ընդէր, ասէ, ոչ հաւատացին իրացն գործելոց։ Օ'ի և առ Ի'ովսիսիս բաղում սքանչելիք լինէին, թէպէտ և ոչ այսպիսիք. և հանդերձ նշանօքն և բարբառ և հնչիւն փողոց, և որոտումն և փայլատակունք. և թէպէտ և զայն ամ տեսանէին, սակայն որթ քանդակէին և Ի'ելփեզովը անուանեցան [1]։ Այս նորին իսկ հրեայքն՝ որ յայնժամ անդ էին, և տեսանէին զնշան զարմանալի, այնչափ հեռի էին 'ի հաւատոց, զի իրքն յայտնի կացին, և նոքա զնա ևս մտաբերէին սպանանել։ Օ'ի թէ մինչ ասօքն իսկ տեսանէին զմեռելոցն յարութիւն, և այնպէս կուրացեալ էին չարութեամբքն, ընդ այն զի զարմանաս, թէ և զբարբառն որ եկն յերկնից՝ չընդունէին։ Օ'ի յորժամ ապաշնորհքն 'ի կամակարութիւնս հասանիցին՝ ծնեալք յախտի նախանձու, և ոչ միտմ ումեք յայս պիսեացն անսան։ Այնպէս յորժամ հլու և հպատակ միտք իցեն, ոչինչ կարօտանան այսպիսեաց։

Այս արդ մի զայն ասիցես, թէ ընդէր ոչ հաւատացին. այլ զայն խնդրեա թէ ոչ ամ ինչ եղև, յորոց պարտ էր հաւատալ։ Ի'անզի և մարգարէիւն վասն այսպիսի ամ իրաց ցուցանէ զնոր իրաւունսն առ հրեայսն ածէ։ Օ'ի կորնչելոց էին և յանհնարին պատիժս մերձ էին մտանել. զի մի յորժամ չարիքն գայցեն 'ի վերայ նոցա, զայ տեսչութիւն ոք պարսաւիցէ. "Օ'ինչ ինչ առնել էր այգոյ խմայ, և ես ոչ արարի"։ Այնպէս և աստ է խմանալ, թէ զինչ ինչ պարտ էր լինել և ոչ եղև։ Այս եթէ յանկարծ ոք 'ի պատիժսն ածելոյ բաղմաց՝ բամբասիցէ զայ տեսչութիւն, այսպիսի օրինակաւ տայցես և այսպիսեաց պատասխանի։

1 Յոյնն Բեթֆեզովրոյ Նոխրեցոյն։

Այլ արդ ասեն[1], որպիսի զարմանալիք լինէին, և հանդերձելոց բարութեանցն առհաւատչեայք։ Օր ոչ ևս դրախտ, այլ երկինք բանային. զի և ուսանիցիս, թէ և 'ի քում մկրտութեանն նոյնպէս լինի։ Այլ յորժամ կոչիցիս յայ, և յաժարիցիս լինել զինուոր վերին աշխարհին, մի ևս այսուհետև զբաղնուցուս յերկրի։ Բայց թէ ոչ տեսանիցես, մի լինիցիս չհաւատալ։ Անդի 'ի սկզբան չքնաղ ինչ և հոգևոր իրաց՝ յայտնի միշտ երևին երեսք և նշանք ինն այնպիսիք։ Օր թէպէտ և յետոյ այնպիսի ինչ ոչ լինիցի, յայտնմանէ՝ որ միանգամ յայտնեցաւ 'ի սկզբանն, և զայլն ևս ընդունիցիս հաւատովք։ Անդի և 'ի վերայ առաքելոցն եկն բարբառ ինչ իբրև յուժգին հողմոյ, և դիմակք հրեղէն լեզուաց յայտնեցան, այլ վասն հրեիցն՝ որ դիպեցան անդ։ Բայց սակայն թէպէտ և յայտնի ինչ նշանք ոչ երևիցին, այլ որ ինչ միանգամ 'ի նոցանէ գուշակեցան՝ զայն հանապազ ընդունիցիմք։ Անդի և աղաւնին յայնժամ յայն սակս յայտնեցաւ, զի իբրև մատամբ ցուցանիցէ այնոցիկ որ անդն դիպեցան, և Յովհաննու՝ զորդին այ. և զի ուսանիցիս, թէ և յորժամ դու մկրտիցիս, նոյնպէս դայ հոգին։ Այլ չէն ինչ պիտոյ մեզ այսուհետև կերպարանք երևսաց. քանզի բաւական են ընդ երեսսոյն՝ հաւատքն հաւանեցուցանել։

Այլ ընդէր 'ի նմանութեի աղաւնւոյ։ Բայց զի զգօն է թռչունն և տր. քանզի հոգին հեզութեան հոգի ասի. վասն այնորիկ և այնու կերպարանօք յայտնէր։ Այլ դարձեալ զի և զհինն ևս զգործս, որ գործեցան, յիշատակէ։ Օր յորժամ գայր հասանէր հասարակաց համբրէն աշխարհի նաւակոծութիւն, և եղծանէր ապականէր զնմա ազգս մարդկութեան, և յայնժամ նոյն թռչուն երևէր, և զփարատելոյ կա բամեռն[2] ձմերամուտն բերէր աւետիս. ոստով ձիթենւոյն՝ զոր ունէր 'ի բերան, զհանդարտելոյ[3] ջրհեղեղին տայր առհաւատչեայ։ Որ և ամենայն իսկ յառակ օրինակի հանդերձելոցն լինէր։ Անդի և

[1] Ճառընտ. Գ. և յոյնն եւ արդ տէ։
[2] 'Ի լուս. Խարեմեռն։
[3] 'Ի լուս. զմանդրեմելոյ։

յայնժամ յանհնարին պատիժս կայր ազգ մարդկու-թեան։ Օ՛ի մի անյոյս լինիցիս՝ յիշեցուցանէ քեզ զձառս առաքելոցն։ Զանազի և յայնժամ անյոյս իրաց լինեալ վՀԵՐ և ուղղութեամբ. այլ յայնժամ պատժոցն. իսկ աստ շնորհաց և անձառ պարգևաց աւետիք։ Զ ամն այնորիկ և աղաւնի երևի. և ոչ ձիթենւոյ տերև բերեալ, այլ զազատիչն ամենեցուն յամ չաբեաց ցուցանել, և յոյս բարի ամենեցուն սերմանել։ Օ՛ի ոչ՝ ի տապանէ հանել սակաւ մարդիկ, այլ զտիւ ելիցս ամ յերկրէ յերկինս վերացուցանել. և փոխանակ տերևոյ ձիթենւոյ՝ զորդեգրութիւն հասարակաց ամ աշխարհաց բարձեալ բերել։

ԼՀ արդ խնայեալ զմեծուն պարգևացն, մի փոքր ինչ զպատիւ հոգւոյն համարիցիս՝ այնու զի այնպիսի կերպարանօքն երևեցաւ։ Զանազի ասեմ, եթէ ասեն ոմանք, թէ որչափ ինչ՝ ի միջի ընդ մարդ և ընդ աղաւնի է, նոյնչափ ընդ Զա և ընդ հոգին. զի նա մերով բնութեամբ երևեցաւ, և սա աղաւնւոյ կերպարանօք։ ԼՀ արդ զինչ ունիցիմք ասել առ այս. այլ թէ որդին ՀՀ զբնութիւն մարմնոյ մերոյ էառ. իսկ հոգին ոչ զբնութիւն աղաւնւոյ, այլ զկերպարանս. վասն այնորիկ և ոչ աւետարանիչն ասաց՝ եթէ բբնութեամբ աղաւնւոյ, այլ՝ ի տեսիլ աղաւնւոյ։ ԼՀպա և ոչ յետ այնորիկ նովին կերպարանօք երևեցաւ։ ԼՀ թէ այսու զպատիւ հոգւոյն փոքր ինչ համարիցիս, գտանին և քերովբէքն ևս լաւագոյն քան զհոգին, որչափ ինչ լաւ իցէ արծուի քան զաղաւնի. քանզի և նոքա՝ ի կերպարանս արծուեաց յայտնեցան. և հրեշտակք ևս աւելի լաւագոյնք, քանզի բազում անգամ՝ ի կերպարանս մարդկան երևեցան։ ԼՀյլ չէ այսպէս, զի և չէ իսկ. քանզի այլ ինն է Ձչմարտութեանն տեսչութիւն, և կերպարանօք երևեալ ըստ զի ջանելոյ ընդ ամենեսին։

Զ՝ի այսուհետև ապաշնորհ գտանիցիս առ բարեբարն, և մի ընդդէմ առակս ելեալ՝ չարաչար հատուցցուն հատուցանիցես այնմ, որ զերանութեամբ աղբերն շնորհեաց քեզ։ Օ՛ի ուր որդեգրուն պատիւն իցէ, անդ և չարեացն ամի կորուստ, և բարութեան ամենեցուն զիւտք։ Զ ամն այսորիկ զհրեական միրտու-

թիւնն լուեցուցանէր, և մերումն սկիզբն արարեալ յառաջ խաղացուցանէր։ Այս որ ինչ իրք 'ի զատկին կատարեցան, նոյն և 'ի մկրտութենն. քանզի ընդ երկոսին էանց. և զմին դադարեցոյց, և միւսոյն սկիզբն արար։ Այսպէս և զհրեական մկրտութիւնն 'ի գլուխ եհան, և եկեղեցական մկրտութեանս դուռն եբաց։ Այս որպէս յայնժամ 'ի միում սեղան զմին կատարեաց, և միւսոյն սկիզբն արար, նոյնպէս և աստ 'ի միում դէտ զմին դադարեցոյց, և միւսոյն սկիզբն արար։ Վանզի զստուերն եղծ, և զճշմարտութիւնն հաստատեաց։ Օ՛ի հոգւոյն միայն շնորհք ունին զայսպիսի մկրտութի. իսկ Յովհաննուն թափուր էր յայսմ ամէ. և վասն այնորիկ 'ի վերայ այլոց մկրտելոցն ոչինչ երևեցաւ այսպիսի ինչ, բայց միայն յայնր վերայ՝ որ հանդերձեալ էր տալ զայն։ Օ՛ի ընդ այսմ զոր ասացաքն և զայս ուսանիցիս, եթէ ոչ սրբութի մկրտչին, այլ զօրութի այնորիկ որ մկրտեցաւն՝ կաւ տարեաց զայս ամ։ Օ՛ի երկինք բանային, և հոգին ի՛ջանէր։ Վ՛ հին վարուցն 'ի նոր առաքինութիս ածէր զմեզ. զգրուտն բարձանց բանայ, և զհոգին առաքէ անտի կոչել յայն բնակութի. և ոչ վայրապար կոչէ, այլ մեծաւ պատուով։ Վանզի ոչ եթէ հրեշտակս կամ հրեշտակապետս առնէ, այլ որդիս սիրելիս ՝ի պատրաստէ, և այնպէս ձգէ զմեզ յայն հանգիստ։

ՑՈՐԴՈՐԱԿ

Զայս ամ իմացեալ, ըստ սիրոյ այնորիկ որ կոչեացն և ըստ անտի քաղաքավարութեանն և ըստ պատուոյն որ տուաւ՝ արժանի վարս ցուցանել, 'ի խաչ ելեալ աշխարհի, և խաչեալ զաշխարհ անձին. զերկնից առաքինութիւն առաքինեաց[1] ամենայն հաստատութիւն։ Այ՛, զի մարմնոյդ յերկինս ոչ փոխեցաւ, համարիցիս առնել հաղորդութի ընդ երկրի։

[1] 'Ի լուս. առաքինաւոր ամ հաս. ուղղաձով. առաքինեաց ամ հաս. գաղտնի. իսկ յօրինակին յա. գաղտնի առաքեաց։

Քանզի զլուխն քո անդ 'ի վերս նստի. և վասն այնորիկ նախ այսր եկն ՝ որն՝ ածեալ ընդ իւր հրեշտակս, և ասա առեալ զքեզ չգալ անդր, զի յառաջ քան զանդր քեզ ելանելոյ՝ ուսանիցիս, թէ մարթի յերկրի իբրև յերկինս բնակել։

Այսուհետև կացցուք հաստատուն պահել զաղնուականութիւն զոր ընկալաք 'ի սկզբանէ. և զայն արքունիս խնդրեսցուք զօրհանապաղ. և զնամ որ ինչ ասա է՝ ստուերք և երազս համարեսցուք։ Զի թէ թագաւոր ոք երկրաւոր զքեզ տնանկ մի և զմուրօղ առեալ յորդեգիրս առնէր, զմտաւ ինչ երբէք ըզխուզն և զնուազութիւն քո ածէիր. թեպէտ և չկայ բազում ինչ անդ 'ի միջի։ Այլ այսուհետև և մի ասա զառաջնացն ինչ համարիցիս. քանզի 'ի բազում մեծամեծս կոչեցար. և որ կոչեացն հրեշտակաց որն է. և պարգևեալ բարութիւնքն քան զբանս և զամենայն միտս անցանէ։ Զի ոչ յերկրի յերկիր փոխէ զքեզ իբրև զաստի թագաւոր, այլ յերկրէ յերկինս, և 'ի մահկանացու բնութենէ յանմահն, և 'ի փառս անճառս. և յայնժամ միայն երևեալ գեղեցիկս, յորժամ յայն վայելիցեմք։

Եւ արդ այնպիսի բարութիւնս վայելելոց ես, և զընչից ճառս 'ի մէջ բերես ինձ, և զաստի պատճառանացս կաթոգին ես, և չհամարիս զնամ երևելիսս քան զգլգլիս մուրոդին վատթարագոյնս. և զի արժանաւոր այնմ պատուի դատանիցիս. զոր պատասխանատուութիւն ունիցիս, մանաւանդ թէ զոր վրէժս չտայցես՝ վասն յետ այնչափ պարգևաց յառաջին փսխածն դառնալոյ։ Զի ոչ ես վայրապար իբրև զմարդ, այլ իբրև զորդի ՝՝ այ յանցուցեալ պատժիցիս, և մինչի քեզ առաւելութի պատուոյն յաճախութի տանջանաց։ Քանզի և մեք ոչ նոյնպէս զծառայս յանցուցեալս և զորդիս զնոյն յանցանս յանցուցեալ՝ պատժեմք. մանաւանդ յորժամ մեծամեծ ևս բարութիւնս 'ի մէնջ դատանիցին։ Զի եթէ որ ըզդրախտն 'ի վիճակի էառ, վասն միոյ ստուգանուն յետ այնչափ պատուոյ կրեաց պատիժս. իսկ մեք որ զերկինս ընկալաք, և ժառանգակիցք միածնին եղեաք, զոր ներել թողութիւն ունիցիմք, եթէ առ օձն

փոխանակ աղաւնւոյ ընթանայցեմք։ Օ՛ի ոչ եւ հող
ես և՝ ի հող երթայցես, և մշակ երկրի լինիցես, և
զառաջին պատուհասն լսիցես, այլ եւ անհնարինս
քան զնոսին տանջանս կրիցես. զնաւարն արտաքին,
զկապանս անլոյծս, զորդնն թունաւոր, զկրծել ատա-
մանց. և կարի իսկ յիրաւի։ Օ՛ի որ այնչափ բարե-
բարութեամբ չեղև պիտանի, յարժանի զանհնարին
վրէժս տայցէ։

Այլեաց և փակեաց զերկինս Այդիա, այլ անձրև
ածել և արգելուլ. իսկ քեզ ոչ այնպէս բանան եր-
կինք. այլ անդր ելանել. և որ մեծն եւս իցէ ինչ, ոչ
միայն քեզ ելանել, այլ և զայլս հանել՝ եթէ կամիցիս.
զի այնչափ համարձակութիւն յամ յիւրմն և իշխանու-
թիւն ետ քեզ։ Այլ արդ քանզի անդ է մեր տուն,
զամ անդր համբարեսցուք, զի մի կորուսանիցեմք.
զի ասա թէպէտ և դրուն զնիցես, և փակս և նիպս
արկանիցես, և բաղում ծառայս պահապանս կացու-
ցանիցես, և թէ ամ չարագործայ յաղթիցես, և
յամ չար ականց փախչիցիս, և՝ ի ցեցոյ և՝ ի բաղում
ժամանակաց կորստենէ, որում չէ հնար լինել, սա-
կայն՝ ի մնջուանէ երբէք ոչ ապրիցիս. բառնայցէ
՝ի քէն ամ՝ ի միում վայրկեան ժամանակի. ոչ միայն
բառնայցէ, այլ թերեւս՝ ի թշնամեաց ձեռս առա-
քեսցի։ Իսկ եթէ յայն տուն համբարես, քան զա-
մենայն՝ ի վերոյ լինիցիս. ոչ դրունս, ոչ փակս, ոչ
նիպս հասանիցէ դնել։ Քանզի այնպիսի է զօրութի
այնր քաղաքի. այնպէս առանց դող ական հատանէ-
լոյ է բնակութենն, և յապականութենէ և յամենայն
չարեաց անկախ։

Այլ արդ զիարդ չիցէ յետին անմտութեան, ուր
կորնչին և ապականին համբարքն՝ համբարել, և ուր
անվթարն մնան և յաճախութիւն բազմանան՝ և ոչ
սակաւ ինչ մանն համբարել. և այն զի ցանդ անդ
հասանիցէ կեալ։ Ամն այնորիկ և հեթանոսք չհա-
ւատան բանիցս մերոց՝ զի և՝ ի գործոց, և ոչ՝ ի բա-
նիցս մերոց կամին առնուլ հաստատուն. և յորժամ
տեսանիցեն զի տունս երևելիս չինեմք, և բուրաս-
տանս կազմեմք և բաղանիս, և գեղս գնեմք, չհա-
ւանին հաւատալ՝ եթէ յայլ քաղաք կազմիցեմք եր-

թալ։ Լրթէ այնպէս ինչ էր, ասէն, զամ պարտ էր ասասէն գնոց տալ[1], և անդր յառաջագոյն համբարել. և զայն յասասէն ինչ գործոց կարծեն. քանզի և տեսանելոյն զկարի ընչաւէտսն՝ յայն քաղաքս և 'ի տունս և 'ի գեօղս զամ համբարեն, յորս ցանգն բնակելոց իցեն. իսկ մեք զնորին հակառակն առնեմք. զերկիր՝ որ յետ սակաւ միոյ թողուլ հասանիցէ, բազում փութով ստանամք. ոչ միայն ինչս ծախելով, այլ և զարիւնս անձանց տամք փոխանակ արտավաճառաց և սակաւ ինչ շինուածոց. իսկ ընդ երկնից գնելոյ՝ և ոչ զաւելորդս պիտոյիցն անսամք ծախել. և այն զի սակաւ ևս գնոց գնելոց իցեմք, և ցանգ ունել, թէ միայն գնիցեմք։

Վասն այնորիկ զանհնարին վերէժս տայցեմք, յորժամ՝ մերկք և աղքատք երթայցեմք անդր. մանաւանդ եթէ ոչ վասն մերոյ աղքատութեն, այլ և յաղագս զայլս այսպիսիս առնելոյ՝ անհանգիստ տանջանս կրիցեմք։ Զի յորժամ տեսանիցեն զմեզ հեթանոսք յայնպիսի իրս փութացեալ՝ որ յայնչափ խորհուրդս վայելեցաք, ևս առաւել և նոքա զաստէն իրացս վարժոյժ[2] լինին. և բազում հուր կուտեմք ասա 'ի մեր գլուխս։ Զի յորժամ որք ուսուցանեալս պարտեաք գնոսա՝ արհամարհել զամ երևելիս, մեք առաւել քան զամենեսին ածիցեմք զնոսա յայնպիսեացն ցանկութեն, երբ կարիցեմք ասրել՝ որ այլոց կորստեան պատճառք լինիցիմք։ Զլսիցես Պօղ, զի փոխանակ աղի և լուսաւորաց երթող զմեզ յաշխարհի. զի զմեղկեալսն 'ի փափկութեց սնդեսցուք, և զխաւարեալսն 'ի հոգոց ընչից լուսաւորեսցուք։ Յորժամ ևս աւելի խաւար արկանիցեմք զնոսա, և մեղկագոյնս քան որչափ էինն առնիցեմք, որ յոյս փրկուեն կայցէ մեզ։ Զիք և ոչ մի ինչ. այլ հեծիցեմք, և զատամունս կրճիցեմք, և կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք երթայցեմք 'ի հուրն գեհենին՝ յետ բարւոք մանր խորտակելոյ 'ի հոգոց մեծութենէն։

Այսուհետև զայս ամ զմտաւ ածեալ՝ լուծցուք

1 Յօրինակին ընդ գալ. և գալ ըստ լուս։ 2 Յօրինակին ՀՀԷՅՅԻ։

զկապանս այնպիսի պատրանաց զի մի յայնց ձեռս անկանիցիմք՝ որ անշէջ հրոյն մատնիցեն զմեզ։ Օ՛ի որ ընչից ծառայէ, և աստէն շղթայից՝ և անդր մնալոյ ջենաւորացն պատրաստական գտանի. և որ յայնպիսի ցանկութենէ ազատ է, այլում ցանկութեամբ հասանէ. որում և մեք հասանիցեմք, զանհնարին լուծ ընչասիրութեան խորտակեսցուք, և թռուցուք զանձինս յերկինս շնորհաբն և մարդասիրութիւն մերոյ Յիսուսի, որում փառք յաւիտեանս. ամէն։

ՃԱՌ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

«Յայնժամ վարեցաւ Յի՞ 'ի հոգւոյն փորձել 'ի սատանայէ»։

Լ՚ՐԲ։ Յետ հոգւոյն ի՛ջանելոյ. յետ բարբառոյն 'ի վերուստ գալոյ՝ որ ասէր, եթէ «Դա է որդի իմ սիրելի»։ Լ՚ւ զարմանալի այն է՝ զի 'ի հոգւոյն սրբոյ ասէ ասա եւանել։ Վ՚անզի զամ՚ինչ վասն մերոյ վարդապետութեան արար, և կրեալ յանձին անսայ և ըզվարեցն և 'ի հոգւոյն, և մարտ պատերազմի տալ ընդ թշնամւոյն։ Օ՚ի իւրաքանչիւր ոք 'ի միրտելոցն՝ յորժամ յետ միրտութեան մեծամեծ փորձութիւնք ինչ 'ի վերայ գայցեն, մի՛ խռովիցին և լքեալ գտանիցին՝ եթէ չիցէ յոյս յաղթութեան. այլ կալ և համբերել քաջութիւ՚ն, և զմտաւ ածել՝ եթէ կարդաւ իմն յետ միրտութեան գալոց են փորձութիւք 'ի վերայ։ Վ՚անզի ո՛չ եթէ վասն այնորիկ առնուս զնոսն զի վատանայցես, այլ զի կռուիցիս։

Լ՚ա և ո՛չ արգելու իսկ ՝ուծ զեկեալ հասեալ փորձութիւնն։ Լ՚ախ զի ուսանիցիս, եթէ որչափ ինչ զօրագոյն եղեր։ Լ՚ւ ապա զի կայցես մնայցես հաստատուն արմատովք։ Լ՚ւ դարձեալ զի մի՛ մեծութի՚ պարգևացն հպարտանայցես, ուր փորձութիւքն զքեզ կարձել կարիցեն 'ի հպարտութենէն։ Օ՚ի յորժամ չհաւատայցէ չար դևն քում ապստամբութեան 'ի նմանէ, հանդիսիւ փորձութեանցն զդայցէ՝ եթէ ամենևին թողեր զնա և ապստամբեցեր։ Զորրորդանգամ, զի զօրագոյն քան զերկաթ պատրաստեցար։ Հինգերորդ անգամ, զի զընծայութի՚ գանձուցն՝ որ հաւատացաւ քեզ՝ առնուցուս։ Վ՚անզի և ո՛չ դայր 'ի վերայ թշնամին, եթէ չէր զքեզ 'ի մեծամեծ պարգևս տեսեալ։ Ուստի և 'ի սկզբանէ իսկ դիմեաց 'ի վերայ Ադամայ, քանզի ետես եթէ 'ի բազում պարգևս վայելէր։ Այսմ իրի և ընդ Յովբայ պատրաստէր 'ի մարտ պատերազմի, քանզի պատակեալ և մեծար

գոյ գովելաւ տեսանէր զնա առ 'ի յամենեցունցն ՝ոյ։
Եւ արդ, ասեն, ընդէր պատուէր տայր՝ եթէ «Յաղօթս կացէք, զի մի մտանիցէք 'ի փորձութիւն»։ Ա՝ան այնորիկ ոչ իւրովի վայրապար ցուցանէ քեզ զյն երթեալ յանապատն, այլ ասէ՝ թէ «Ա՝ արեցաւ 'ի հոգւոյն» ըստ տնտեսութեանն։ Եւ այսու այլ իմն ակնարկէ. զի մի՛ ոք իւրովի յամբայր դիմիցէ երթալ 'ի փորձութիւնս, այլ վարեալ յայլոցն՝ կացցէ պնդա կազմ և առաքինասցի։

Եւ արդ տես յո՛ տանէր զնա հոգին։ Ո՛չ 'ի քաղաքս, ոչ յագարակս, քանզի զթշնամին կամէր ըզբռամբ ածել ոչ միայն քաղցիւն, այլ զի և յանապատն ևս երթալ՝ տացէ նմա յօժարութիւն։ Վ՝ասնզի յայնժամ իմն ստէպ գուն գործեալ դիմէ 'ի վերայ թշնամին, յորժամ տեսանիցէ միայնացեալս և առանձինս։ Ա՝յսպէս և կնոջն յառաջնումն յարձակէր, քանզի միայն եգիտ յառնէն։ Ա՝յլ յորժամ ընդ այլս տեսանիցէ 'ի բազմութեան միջի, ոչ այնպէս համարձակի դիմել 'ի վերայ։ Եւ վասն այսորիկ առաւել ևս պարտուպատշաճ է առ միմեանս մնակաղել և շուրջ զմիմեանս բնակել, զի մի դիւրաւ անկանիցիմք 'ի ձեռս սատանայի։

Գտանէր այնուհետև զնա յանապատին. և այնպէս յանհետ և յանշէն անապատի, զի և Ա՝արկոս յայանագոյնս ցուցանէ՝ եթէ «Եր նա ընդ գազանս»։ Եւ արդ տես, որպիսի մեղմեխութեամբ մերձենայր, կամ որպիսի ժամանակ գտանէր։ Վ՝ասնզի ոչ եթէ յորժամ պահէրն, այլ յորժամ քաղցեաւն, յայնժամ մերձեցաւ. զի դու ուսանիցես, թէ որպիսի ինչ բարի են պահք, կամ որպիսի զէն կարծր ընդդէմ թշնամւոյն. և զի յետ մկրտութեանն՝ ոչ փափկութեց կամ արբեցութեանն կամ պէսպէս խորտկաց սեղանոյ պարտ է տալ զանձինս, այլ պահոց։ Ա՝ան այսորիկ և նա պահեաց. ոչ զի կարօտ ինչ էր պահոցն, այլ զի մեզ [1] խրատիցէ։ Վ՝ասնզի մեղքն որ յառաջ քան զմկրտութենն գործին, յորովայնին ծառայ լինելոյ մտին։ Զ՝որ օրինակ եթէ զախտաժէտ

[1] Ճառընտ. Գ. ղեզ։

որ բժշկիցկ՝ պատուիրէ, թէ յորոց իրաց զցաւսն ա-
ծին 'ի վերայ, յայնմանէ պատկառ կայցէ անձին.
նոյնպէս և նա յեռ միրուութիւն կարգեաց զպահն։
Զանազի և զԼդամ անժուժկալուն որովայնին Եհան
'ի դրախտէն. և զՋրհեղեղն յամն Լոյի նոյն էած.
և 'ի Սոդոմ զՀրացան բարկութիւն։ Օ ի թէպէտ և
պոռնկութիւն էր բամբասն, սակայն երկոցուն տան-
ջանացն անտի բուսաւ արմատ։ Օ որ և Լզեկիել
ակնարկելով ասէ, եթէ «Զ.յս է անօրէնութիւն սո-
դոմացւոց, զի յամբարտաւանութեն և 'ի լիութեան
հացի և յպիութեան զբաղեալ էին»։ Զ.յսպէս և
հրեայք զմեծամեծ չարիսն, յարբեցութենէ և 'ի
փափկութենէ կործանեալք յանօրէնութիւս, գոր-
ծէին։

Զ ատն այնորիկ և նա պահէ զքառասուն օր, զի
մեզ զվերկութիւն գեղն ցուցանիցէ։ Լյս ոչ մատչի յա-
ռաջ և ս, զի մի առաւելութիւ զարմանացն՝ առնիցէ
Հաւատալի զտնտեսութեանն զնշմարութիւն. այն
չափ որչափ ինչ Զ՝ոմսէն և Լզիա յառաջագոյն
կարացին երթալ 'ի կէտն՝ այ զօրութեամբն ժուժ-
կալեալք։ Օ ի թէ և յառաջ ձգեալ էր, ասա և
հաւատայր իսկ որ ոչ, եթէ մարմին էառ։

«Լյս արդ պահեաց զքառասուն տիւ և զքառա-
սուն գիշեր միանգամայն, և ապա քաղցեաւ յետոյ»։
Օ ի պատճառս տացէ թշնամւոյն՝ մերձենալ 'ի մարտ.
զի յորժամ գիրկ ընդ գիրկ խառնիցին, ցուցանիցէ՝
թէ արդեսք պարտ իցէ կռուել և յաղթել։ Զրպէս
և մարտիկք զիւրեանց աշակերտս կրթեն, թէ արդեսք
պարտ իցէ կռուել և յաղթել. նոյնպէս և աստ,
յորժամ կամեցաւ 'ի դիմի հարկանել թշնամւոյն, և
զքաղցն եւ յայտնեաց. և յորժամ մատեաւն, և 'ի
դիմի հարաւ։ Լյս 'ի դիմի հարկանել միանգամ և
երկիցս և երիցս, զգեստնեաց դիւրաւ ըստ իւրում
պատշաճութեան։ Լյս զի մի հարեանցի արարեալ ըզ-
յաղթութիւնն՝ զրկիցեմք ինչ զձեզ յօգտի, սկսեալ
յառաջին նուազեմ մարտին մի ըստ միոջէ քննեսցուք
կարգաւ զնմա։ Լյս քանզի ասէ՝ թէ քաղցեաւ, վասն
այնորիկ մատուցեալ փորձիչն ասէր. «Լթէ որդի
ես այ, ասա քարանցս զի հաց լինիցին»։ Զանազի

լուեալ էր 'ի բարբառոյն՝ որ 'ի վերուստ եկն, թէ «Դա է որդի իմ սիրելի»։ լուեալ էր և 'ի Յովհան. նէ զայնպէս վկայութիւն՝ որ 'ի վերայ նորա վկայէր, և ասէր եթէ ես քաղցեալ, 'ի վարանս մտանէր այնուհետև։ Օ՛ի ոչ մարդ լոկ հաւատալ կարէր վասն մեծամեծացն որ ասացեալ էին զնմանէ. և ոչ որդի՞ այ յանձին ունել վասն քաղցեալն տեսանելոյ։ Այլ յանհնարին վարանս մտեալ՝ տարակուսանաց բարբառս արձակէր։ Օ՛ի զոր օրինակ մատուցեալ առ Դաւիթ զառաջինն այլ ընդ այլոց խօսէր, զի 'ի նմանէ ստուգիցէ զկրն, նոյնպէս և աստ։ Դանդի էր տեղեակ անձառ խորհրդոյն տնտեսութենն, և ոչ կիտէր՝ թէ ով իցէ որ եկն, այլ իմն մտաբերել անկանել ձգել վարսն, որովք կարծէրն ճանաչել զծածուկ իրս՝ որ չէին նմա յայտ։ Այլ զինչ ասիցէ։ «Եթէ որդի ես՞ այ, ասա՛ քարանցս զի հաց լինիցին»։ Այլ ոչ ասաց, եթէ քաղցեալ իցես, այլ թէ որդի ես՞ այ։ Կարծէր յարդանօքն զմիտն գոգանալ. վասն որոյ և զքաղցն լռեաց, զի մի կարծիցէ եթէ նախաս տինս ինչ նմա յառաջ բերիցէ զայս։ Դանդի էր տեղեակ մեծութեանէ տեսչութենէն, և այսպէս մեղմախօսք իմն զպատուոյն ևեթ ճառէ։

Լոկ առ այս Դա՞ զինչ ասիցէ։ Կարձէ զհպարտութիւն նորա. և յայտ առնէ, եթէ ոչ ամենեցուն ինչ էր գործն զոր գործէր, և ոչ անարժան ինչ 'ի մատուէն իւրոյ։ Այլ այսպէս զոր նա մեղմախօսքն ծածկէր, զնոյն սա 'ի միջ բերեալ յայտնէր։

«Ո՛չ միայն, ասէ, հայիս կեցցէ մարդ»։ Այլ արդ միա՞ դիր խարդախութենն չար և խոլամանդ գիւին, և տես ուստի սկսանի 'ի կռիւն, կամ՞ զիարդ չմոռա նայ զիւր արուեստն։ Օ՛ի որով զառաջինն մարդն եհան 'ի դրախտէն, և զայլս բազում կործանեաց 'ի պէսպէս չարիս, անտի նիւթեալ և աստ զնենգութիւն՝ առ 'ի յօժարեցուցանել 'ի կերակրոցն տենչանս։ Օ՛ի որպէս անդ յաձախեաց բարուրս, նոյնպէս և աստ նիւթեալ նենգութի՞ վասն որովայնի։ Դայլ Դա՞ զի յայտ արասցէ՝ եթէ զառաջինն ոչ բռնութի՞ բռնաւորին կարէ հնազանդեցուցանել գործել զանպատշաճ՞ իրս, այլ քաղցնու, և հնազանդի հրամանացն։ Դարձեալ

և խրատէ և ես զմեզ, զի մի իւիք հաւանեսցուք հակառակորդին. քանզի առաջին մարդն այսպիսի իրօք գտաւ հակառակ ՝ի և էանց զօրինօք. զի զմեզ առաւելագոյնս ուսուցցէ։ Թէպէտ և չիցէ զօրինօք անցանել յորժամ ուտիցեմք որ ինչ 'ի նմանէն է հրամայեալ, սակայն և այնպէս մի հաւանեսցուք թերեալ նմանոյն։ Եւ զինչ ասեմ զօրինօքն անցանել. այլ թէպէտ և բարի ինչ ասիցէն դեռ, սակայն և այնպէս մի անսայցեմք նոցա։ Որպէս իսկ ըմբերաներ զդեւսն որք քարոզէին զնա որդի ՝ի։ Եւ Պաւղոս սասատեր այսոցն՝ որ կոչէր զնա «Ոչառայ ՝ի բարձրեալ»։ Օ՛յ թէպէտ և զոր ասէրն՝ բարւոք ասէր, սակայն յաձախ խոտեր զնա Պաւղոս, և պարսպեալ ամրացուցաներ զմեզ 'ի նենգութենէ. թէպէտ և զփրկութիւն կրօնս քարոզէին, խուձապեր և ըմբերաներ, և կարկեալ հրամայեր։ Վասն այսորիկ և աստ ոչինչ բանիւքն պատրեր. այլ զինչ ասիցէ. «Ոչ միայն, ասէ, հայիւ կեցցէ մարդ»։ Եւ զոր ասէն այսպիսի ինչ է, թէ կարօղ է ՝ի ած և բանիւք կերակրել զքաղցեալս։ Բերեալ հին վկայութիւն 'ի գրոց՝ խրատէ, զի թէպէտ և սովամահ լինիցիմք, կամ այլ ևս պէսպէս չարչարանաւք տանջիցիմք, սակայն 'ի ՝նոսէ մի հեռասցուք։

Այսպա թէ ասիցէ ոք, թէ պարտ էր փոքր մի յայտնել զանձն։ Հարցանեմ թէ ընդէր։ Վասնզի ոչ եթէ զի հաւատասցէ 'ի նա, վասն այնորիկ ասէր զայս, այլ որպէս կարծէրն՝ զի 'ի թերահաւատութիւն ածիցէ, և յանդիմանեսցէ։ Վասնզի և զառաջինսն այսպէս խաբեաց. և յետոյ իբրև յոյժ թերահաւատեցին յայ, յանդիմանեաց։ Վասնզի այլ ընդ այլոց խոստանայ, զի վրիպեցուսցէ արկցէ 'ի թերահաւատութիւն, և ապա զոր ունիցին ևս զբարին, հանէ 'ի նոցանէ։ Այլ Վասն ոչ նմա, և ոչ այնոցիկ՝ որ զնորա խորհուրդսն ունէին հրեիցն՝ եցոյց նշանս. զի խրատեսցէ զմեզ ՝ամ ուստեք, թէպէտ և նեղեսիմք ինչ առնել, մի զուր կամ ընդ վայր կամ առ վշտի հաւանել չարախօսին։

Եւ արդ տես զպիղծն և զգաբշելի. իբրև ետես թէ պարտեցաւ, և չկարաց ինչ բանիւքն զոր խօսե-

ցաւ ստանանել, զիսրդ հնարէր այլ ինն հնարս, և այն մինչդեռ քաղցն 'ի վերայ կայր, ձգեալ յայլ ինն փորձութիւս ածէր։

«Եթէ որդի ես, ասէ, ՝ով, արկ զքեզ 'ի վերուստ 'ի վայր, զի գրեալ է, եթէ հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, և 'ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ»։ Եւ ընդէր յիւրաքանչիւր 'ի փորձութիւնս զայն գնէ, եթէ որդի ես ՝ով։ Այլ որպէս յաւուրս աջագոյնն արար, նոյնպէս և ասա. զի որպէս յայնժամ չարախօսեաց զ՝ով ասելովն, եթէ «Եթէ ՝ով ես՝ բանայցեն աչք ձեր, և լինիցիք իբրև զաստուած»։ և այսու կամեցաւ ցուցանել՝ եթէ խաբեալ ինչ իցեն, և ոչինչ ունիցին մասն յ՝ով բարեբարութենէն։ Նոյնպէս և ասա ասէ ակնարկելով, եթէ վայրապար կոչեաց զքեզ որդի. խաբեաց պարգևայն անուամբ. և եթէ չիցէ այս այսպէս, աղէ՝ ցոյց ինչ զհանդէս այնր զօրութեան։ Եւ զի 'ի գրոցն խօսեցաւ ընդ նմա, և 'ի մարգարէէն եբեր վկայութիւն, զսիրդ ոչ ցասեաւ նմա Տէր կամ զայրացաւ, այլ մեծաւ հանդարտութեամբ միւսանգամ և նա ընդ նմա 'ի գրոց վիճեր. «Մի փորձեսցես, ասէ, զՏէր քո»։ Զի այսու ևս տայցէ մեզ միտս, եթէ ստանայի ոչ նշանօք ինչ, այլ հանդարտութեամբ և երբ կայնմութեամբ պարտ է յաղթել. և ոչ 'ի ցոյց ինչ կամ 'ի պատիս անձին համարել զյաղթութիւնն։

Եւ արդ միտ դիր, զի և զվկայութենն զոր եբեր՝ անմոռութեամբ եբեր։ Տէրանցի Տէրոյ երկոքին վկայութիւքն 'ի դէպ էին. և նորայքն վայրապար և խառն 'ի խօսուն, և ոչ իրացն որ առաջի կային՝ 'ի դէպ ինչ էին։ Տէրանցի ոչ եթէ որ գրեալն է՝ եթէ «Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո», միտս ինչ տայցէ՝ ընկենուլ զանձն և քարավէժ առնել։ Իսկ այլ ազգ ևս, չէ պարտ 'ի Տէր առնուլ զբանն։ Այլ զայս ինչ առ այժմ ոչ յանդիմանեաց. թէպէտ և թշնամնոջ ասաց զբանն, և կարի իսկ ընդդէմ. քանզի ոչ եթէ որդւոյն ՝ով իցեն այսպիսի իրք, այլ ստատանայի և դիւաց՝ ընկենուլ զանձինս 'ի խոնարհ. իսկ ՝ով և զանկեալսն յարուցանել։ Եթէ պէտք ինչ լեալ էին անդ զհանդէս զօրութեան ցուցանել,

ոչ զիւր անձնն ընկենուլ և քարավէժ առնել պիտոյ էր, այլ զայլս յարուցանել և կեցուցանել։ Օ՛ի զանձինս՝ դարահոս և քարավէժ առնել՝ ի խորխորատ՝ այնր բանակի է. քանզի՝ ի նոսա Թագաւորեալ է մոլորութիւն։ Բ. ՍԼ ՎՐՆ Թէպէտ և զայս ամենայն լուաւ, ոչ ևս ինչ յայտնեաց նմա զանձն, այլ իբրև զմարդ վիճէր ընդ նմա։ Օ՛ի ասելովն, եթէ «Ո՛չ միայն հայիւ կեցցէ մարդ», և միւսովն՝ եթէ «Ո՛չ փորձեսցես զՏէր քո», ուստի քաջ յայտ առնէր զանձնն՝ թէ ուժ իցէ, այլ թէ մի ոք՝ ի բազմացն։

Եւ ընդ այն մի ինչ զարմանայցես, եթէ զնմարդ վիճէր ընդ ՎՐՆի, և կայր և ունէր ժայռ և միանգամ և երկիցս։ Օ՛ի զոր օրինակ որք սաստիկ ինչ տանջանաց կամիցին ժուժկալ լինել, Թէպէտ և ամենևին յարիւն և յապաժայռ կայցեն և՝ ի ցնորս և յաղէտս, սակայն ժուժկալեն առ հետեէն. նոյնպէս և սա Թէպէտ և յառաջին և յերկրորդ վիրացն ցնորեալ խաւարէր, սակայն և՝ ի միւսումն անձին տուեալ քաջալերս՝ բարբառէր։

«Եհան զնա, ասէ, ՝ի լեառն մի բարձր, և եցոյց նմա զՏՐ Թագաւորութիւն աշխարհիս և զփառս նոցա, զայս, ասէ, ՏՐ քեզ տաց, եթէ անկեալ խոնարհ երկիր պագանիցես ինձ։ Յայնժամ ասէ ցնա յո. Երթ՝ ի բաց սատանայ. զի գրեալ այսպէս է, եթէ ՏՐն՝ զքումՐ երկիր պագանիցես»։ Վանզի այնուհետև՝ ի հայր մեզանէր, զի զնոցայն զՏՐ իւր ասէր, և զիւր անձն փութայր ցուցանել արարիչ ՏՐի, յայնժամ սատեաց, բայց ոչ կարի սաստիւ, այլ լոկ՝ թէ «Երթ՝ ի բաց սատանայ». որ հրամանն էր մանաւանդ և ոչ սատ։ Եւ անդէն ընդ ասելն, թէ Երթ զնա սատանայ, լինէր հալածական չարաբասն, և այլ ոչ ևս բերէր՝ ի մէջ փորձութիւն։

Եւ ընդդէմ Ղուկաս ասիցէ, եթէ «Օ՛ՏՐ կատարեաց զփորձութիւնսն։ Լսեա այսպէս թՐուի, եթէ զՁլխաւորացն առնէ յայտ՝ ՏՐն ասելով, որպէս զի և այլք ընդ սոքօք իցեն փակեալք։ Օ՛ի այլքն ՏՐ ընդ սոքօք են, յորժամ որովայնի ոք ծառայիցէ, կամ՝ ի մնոտի փառասիրութի հարկանիցի, կամ ընդ

չից յղփուէ յուլանայցէ[1]. զոր և պղծոյն իմացեալ՝ զզօրագոյնն յետոյ զնէ, զոր 'ի սկզբանէ երկնեայր գայր՝ զի զայն ծնանիցի յետոյ։ Քանզի և կուուոյ այնպիսի սովորութիւն է՝ զսաստիկ ինչ մենբեռնեայ յետոյ բերել 'ի մէջ. որպէս և Յովրայ զսաստիկ զհարուածն յետոյ ածէր 'ի վերայ. նոյնպէս և ասա՝ յայնցանէ, որ դիւրագոյնք իմն և տկարք կարծէին՝ սկսեալ, գայ հասանէ 'ի զօրաւորն։

Այլ զի՞արդ իցէ պարտ յաղթել նմա։ Որպէս Քրիստոս խրատեաց, յանձ ապաստան լինել. ոչ 'ի քաղցի նուաստ զել հաւատացելոցն. ուր զի կարող է և բանիւ կեր բակրել. և ոչ 'ի բարիս ինչ՝ զոր առնուցուսք, փոր ձել զտուիչն, այլ շատանալ վերին շահոնն և զգմարգկօրինաց չունել ինչ փոյթ յանձին. և ամ ուրեք զաւելորդս դիպոյիցն[2] արհամարհել։ Օ՛ի զի՞ք ինչ այնպէս՝ որ ընդ սատանայի կործանէ, քան զշատին ցանկանալ և ագահութեն տենչալ։ Օ՛նոյն և յարդի գործս է տեսանել։ Քանզի և այժմ ասեն ոմանք, զնամ ինչ քեզ տացուք՝ եթէ անկեալ երկիր պագանիցես. որ մարդիկ են բնութիւք, և եղեն նորա գործիք։ Այլ ոչ ինքն միայն, այլ և այլովք և սածէր 'ի վերայ նորա փոքանութիւն. զոր և Ղուկաս յայտ արարեալ՝ ասէ, եթէ «Ի բաց եկայ 'ի նմանէ մինչև առ ժամանակ մի». և այսու ցուցանէ՝ եթէ յետ այսորիկ իւրովք գործովքն դիմեաց 'ի վերայ նորա։

«Այլ ահաւասիկ, ասէ, եկին հրեշտակք և պաշտէին զնա»։ Ինչդեռ 'ի պատերազմին էր, ոչ ետ թոյլ հրեշտակաց յայտնել, զի մի իբրև նոցա իմն օգնականութիւք երևիցի յաղթութեն. այլ նախ զիրշնամին հալածէր, և ապա յայտնէր զհրեշտակսն։ Օ՛ի և դու ուսանիցիս, եթէ և 'ի քուէ փորձութեն հրեշտակք են ընդունելոց զքեզ, և յարգեալ փառաւորեն։ Որպէս և զՂ ազար՝ յետ հնոցի ազքատութեն, և սովամահն լինելոյ, և պէսպէս նեղութեանց

1 Յօրինակին 'ի վերայ բառին յուլանայցէ կարմրագեղով նշանակի, առանց ինչ 'ի լուսանցսն ունելոյ. թերևս մուռացեալ ակնարկել յղփանայցէ. որպէս ուրեմն ճառնա. Գ։

2 'Ի լուս. դիպոյիցն։

տարան հրեշտակքն 'ի գոգն Լ.բրահամու։ Օ որ և կանխագոյնն իսկ ասացի, բազում ինչ և այժմ Վ.ա ցուցանել, յորս և մեք վայելելոց եմք։

ՑՈՐԴՈՐԱԿ

Լ.Ի արդ քանզի ամ ինչ վասն քո եղև, նախանձաւոր լեր և նմանեա և դու յաղթութեանն։ Զոհ մատչիցի ոք առ քեզ 'ի դիւին պաշտօնեից և 'ի նոցին խորհրդականաց, նախատիցէ և ասիցէ, եթէ աքանչելի ոք և մեծ իցես փոխեա զքեառնս, մի ինչ խռովիցիս և մի դաղանիցիս. այլ մեղմով տայցես պատասխանի, զոր 'ի ձեէն քումմէ լուար, եթէ "Մ'է փորձեսցես զնոր ամ քո"։ Լ.ւ այնուհետև ոչ[1] զնորա զփառս և զհարստութիւն առաջի արկեալ, և զանչափ ընչից բազմութիւն, հրամայիցէ քեզ երկիր պագանել. դարձեալ հաստատուն կայցես։ Օ.ի ոչ միայն առ հասարակաց ոչն արար զայս սատանայ, այլ և հանապազ առ իւրաքանչիւր ծառայիւք նորա՝ մտուցեալ որոգայթս, ոչ 'ի լերինս միայն, և ոչ յանապատս, և ոչ անձամբ, այլ և 'ի քաղաքս և 'ի հրապարակս և յատեանս, և մերոյ իսկ ազգականօք մարդկամբք։

Լ.ւ արդ զինչ պարտ իցէ առնել։ Զհաւանել[2] նմա ամենևին, և խնուլ զլսելիս, և թէպէտ և հպատակիցէ ինչ, ասել[3]. և յորժամ մեծամեծս խոստա նայցէ, յայնժամ առաւել զերեսս դարձուցանել։ Վ.ասնզի և զԼ.ւայ յորժամ մանաւանդ գրաւեաց յուսովքն, յայնժամ կործանեաց, և մեծամեծ չարիս գործեաց։ Օ.ի անհաշտ թշնամի է, և անազգ և անզգաստ պատերազմ կալաւ ընդ մեզ։ Լ.ւ ոչ այնպէս մեք փուլթամբ վասն մերոյ փրկութեան, որպէս նա փութանակ մերոյ կորստեան։ Լ.ուսցուք այսուհետև ըզնա, մի միայն բանիւք, այլ և գործովք. մի մնօք, այլ և արդեամբք։ Այն ինչ արասցուք 'ի նորա հաձոյիցն,

[1] 'Ի լուս. 'ի վերայ բառին "ոչ Նշանակի պարոյկ"։
[2] 'Ի լուս. ընդունել.
[3] 'Ի լուս. ասել։

այլ զնմ ընդ որ ոչ հաճեսցի։ Քանզի և խոստա-
նայ բազում ինչ, ոչ զի տացէ, այլ զի առնուցու։
Խոստանայ 'ի յափշտակութենէ, զի հանցէ զարքայ-
ութիւն և զարդարուն. և զնէ իբրև զորոդայթս ինչ
և հաղորս յերկրի, զի և յայսցանէ, և յերկնից գան-
ձուցն զրկեսցէ։ Կամի ընդ մեր աստ մեծանալ, զի մի
անդ մեծանայցեմք։ Չէ եթէ չկարիցէ մեծութեամբ
յանտի հանդստենէն հանել, ընդ այլ հանապարհ
դայ, ընդ աղքատութենն, զոր և առ Յովհաննն արար։
Քանզի ետես, եթէ ոչինչ ինասեաց նման մեծութենն,
աղքատութիւնն ձգեաց նման գործիս, և այնու կարծէր
գամագիտ լինել. քան զոր զինչ այլ ինչ անմտութիւն
կայցէ։ Օ՛ի որ մեծութենն կարէ հանդարտել ցան-
կութիւնս[1], որչափ ևս առաւել աղքատութենն տանիցի
ժուժկալութիւն. և որ մտաւոր ընչիցն չցանկանայ,
և ոչ զհեռաւորսն խնդրիցէ. որպէս և երանելին
յայսմ ժամանակի. այլև յաղքատութենէն միւսանգամ
պայծառագոյն լինէր։

Օ՛ինչսն կարաց հանել չար դևն, բայց զսէրն այ
ոչ միայն հանել չկարաց, այլ ևս զօրագոյն գործեաց
զնա։ Յամ ընչից մերկացեալ՝ բազում բարութիւնք
լցոյց։ Վասն որոյ և յանհնարին վարանս մտեալ.
զի որչափ՝ զբազում տանջանսն էած 'ի վերայ, նոյն-
չափ ևս քան զևս զօրացեալ տեսանէր։ Վասն որոյ
ընդ ամենայն անցեալ յաճեալ շուրջ գայր. քանզի
ոչինչ աւելի վնասեաց, ապա 'ի հին զէնն ընթացաւ՝
'ի կինն. և խնամածութիւն դէմն զգեցեալ՝ զվիշտն
աղերսիւ մրմնջէր. և պատճառեալ վասն 'ի չարեաց
զերծանելոյ զսատակիչ խրատսն ընծայեցուցանէր.
սակայն և այնպէս չյաղթեաց, քանզի հմուտ էր պատ-
րանացն նորա զարմանալի այրն, և բազում իմաս-
տութիւն զկինն որ 'ի նմանէ խօսէր՝ ըմբերանեաց։

Օ՛ որ և մեզ պարտ է առնել. եթէ զեղբայր, եթէ
զբարեկամ մտերիմ, եթէ զկին, և եթէ որ և իցէ 'ի
կարևորաց մերոց զգեցեալ՝ խօսիցի ինչ որ մեզ չիցէ
պատշաճ, մի վասն երեսացն որ զայս խօսիցի՝ ընդու-
նել զնրաան, այլ 'ի կորստեան խրատուէն զնա որ

1 'Ի լուս. ցանկութիւն։

զայնն խօսիցի ատել[1]։ Վրանցն և այժմ այսպիսի ինչ առնեն, և վշտակցութեամբ կերպարանս պատՀաւի. և թուի թէ բարւոք ինչ միտք իցեն, բայց զատակիչ բանն՝ քան զդէղատուս և դժնդակագոյնս մաՀանել. զի 'ի վնաս ողոքել՝ նորա է, և յօգուտ խրատել՝ այլ։ Այլ խաբէսցուք, և մի ամենևին զՀանգրատեան կեանս խնդրեսցուք. զի "Օրը սիրէ՝ որ, և խրատէ" ասէ։ Արդեսն յորժամ 'ի գիւրուն աւուրց վայելիցեմք՝ 'ի չարութեան կեցեալ, յայնժամ առաւել արտմեսցուք։ Այնչափ յորժամ մեղանչեմք, երկրնչել պարտ է, առաւել յորժամ չկրիցեմք ինչ վիշաս։ Օ՛ի յորժամ առ սակաւ սակաւ պահանջիցէ զպատիժն ՀԱԾ, թեթևագոյն զործիցէ մեզ զվրէժն նոցունց։ Իսկ յորժամ ըստ իւրաքանչիւր յանցանացն երկայնամիտ լինիցի, մեծամեծ վրէժս 'ի նմին մեզ յամենից Համբարէ։

Այնթէ ուղղագործացն կարևոր են նեղութիւնք, որչափ և առաւել մեղուցելոցն։ Ցեսս յորչափ երկայնմտութիւն վայելեաց Փարաւոնն, և յետոյ զանՀնարինն ընդ ամենեցունց եհտ վրէժս։ Արչափ ինչ յանցեաւ և Լաբոզոդոնոսոր, և մօտ 'ի վախՃան ընդ բնաւին տանջեցաւ։ Այլ մեծատունն քանզի ոչինչ կրեաց աստէն կարիս, վասն այնորիկ առաւել թշուառացաւ. զի փափկանայր 'ի կեանս աշխարՀիս, չգթաւ անդր ընդ ՀամՀ տալ տոկոսիս. ուր և մխիթարութիւն ինչ չգոյր գտանել։ Սակայն են ոմանք այսպէս ցուրտք և անմիտք, մինչև աստէն միայն միշտ խնդրել. թէ առ այժմ աստէն վայելեսցուք, և ապա տեսցուք զանյայտիցն. ընդհեսցուք որովայնի, ծառայեսցուք ցանկութեաց, Համարձակ կացցուք աստէն յաշխարՀի. տուր ինձ զայս օր, և առ քեզ զվաղիւ։ Այլ զինչ 'ի քօշից և 'ի խոզից ընդՀատ իցեն որ զայսպիսի բանս խօսիցին։

Այնթէ զվինջեալսն 'ի կին ընկերին չտայ թոյլ մարդարէն մարդիկ Համարել, ո՞ մեզ մեղադիր լինիցի՝ եթէ քօշ և խոզ և անմտագոյն քան զեշս Համարիցիմք զայնպիսին, որք քան զերևելիսս զայսոնա-

[1] 'Ի լուս. ՊԳԵԼ։

գոյնսն անյայտս կարծեն։ Այլ եթէ ումեք յայլոց
չհաւատայցես, երթ կայ առ դեւսն՝ յորժամ տան-
ջիցին, վասն մերոյ փաստակարութեան զնմա զոր ասեն
և առնեն չարիսնացքն։ Զանազի առ այն ոչինչ կարի-
ցես ասել. զնմա վասն անհեցուցանելոյ զծուլութիւնն
մեր առնեն, և զգեհենին սպառնալիս փարատելոյ,
և չաւատալի զանտի դատաստանսն առնելոյ։ Զայց
սակայն որ զայնն կամին, զաղաղակ բարձեալ՝ ձիչ
առեալ բազում անգամ զանտի դատաստանսն գու-
շակեն։ Այլ արդ ուստի՞ զայն ամ խօսիցին, և հա-
կառակս որում կամին բարբառիցին։ Զ՝է այլ ուս-
տեք, այլ յաձախ զտաղնապսն կրելոյ. քանզի ոչ ու-
նեին յանձին կամաւ խոստովանել՝ եթէ 'ի մարդոյ
մեռելոյ տանջեին, և ոչ ամենևին թէ վիշտս ինչ կրի-
ցեն՝ զգային։ Այլ զայս առ ո՞ր իրս ասիցես։ Զ՝ի
դևք խոստովանին գեհենն. և դու յայնչափ 'ի պա-
տիւս՝ վայելեցեր, և անձամբ խորհրդոցն հաղորդե-
ցար, և նոցա անգամ չնմանես, այլ ապախտաւորա-
գոյն քան զնոսա եղեր։

Այլ ո՞, ասեն, եկն 'ի մեռելոյ և պատմեաց զայն։
Իսկ յերկնից ո՞ եկն, և ասաց թէ գոյ ամ որ զամ
արար. և եթէ ունիմք շունչ, ուստի՞ յայտ իցէ։
Այթէ երևելեացս միայն հաւատայցես, և զայ և ըզ-
հրեշտակաց և զմտաց և զչնչոյ երկմտես, և այնպէս
ամենևին 'ի դերև ելանիցեն քեզ կրօնք ճշմարտու-
թեանն։ Զ՝էպէտ և երևելեացս կամիցիս հաւատալ,
անսերևութիցն մանաւանդ՝ և ոչ երևելեացս պարտ
է հաւատալ։ Այթէ նորանշան ինչ բանս իցէ, սա-
կայն ճշմարիտ է, և մտացեաց յոյժ յայտնագոյն։
Զանազի աչք 'ի բազում ինչ սխալեն, ոչ միայն յան-
երևոյթսն, զի զայն և գիտեն իսկ ոչ, այլ և յոր-
կարծեանն տեսանել. յերկայնութենէ և յօդոյ, և
'ի մտաց այլ ուր աղամղելոյ, և 'ի ցասմանէ և 'ի
հոգւոյ, և 'ի յայլ ևս բազում խափանչաց առ 'ի
զհաւատին նշանակելոյ։ Իսկ հոգւոյն միտք եթէ
զոյսն սուրբ գրոց ընդունիցին, հաստատուն և ան-
վրէպ լինին ատեան ամի՝ որ ինչ և իցէ։ Զ՝ի զուր

1 'Ի լուս. յայնչափ դարձ։

խաբէսցուք զանձինս. մի՛ ի ծուլութիւն այնպիսի կէս նաց այնպիսի կրօնս ծնանելով և նոքօք զանհնարին հուրն անձանց գանձիցեմք։

Եթէ դատաստան չկայ, ապա և ոչ վրէժս ինչ ընդ գործոցն հատուցանիցեմք, և ոչ պատիւս ընդ աշխատութիւնն առնուցումք։ Եւ միտ առ, զիարդ անէ հոյ հոյութիւնն ձեր, յորժամ ասիցէք զարդարոյն և ըզմարդասէր ՈՅ և զքաղցուէ՝ զայնպիսի աշխատութիւս և զքրտունս անտես առնել։ Եւ զիարդ՝ի դէպ իցէ։ Օ՛ի թէ ոչ այլ ուստէք, գոնէ՝ի քո տանն իրաց ած զմուտ, և ապա տեսանիցես զանպատեհութիւնն։ Եթէ բազմապատիկ իսկ անագորոյն և տմարդի իցես, և քան զդազանն անասնագոյն, չառնուս յանձն զծառայն հեշտական՝ յորժամ մեռանիցիս՝ յանարգուէ թողուլ, այլ և ազատութիւնք դարձուցանես զերախտիսն՝ և ընչից պարգևօք. և քանզի դու երթալոց ես այնուհետև, և չես ձեռնհաս նմա բարի առնել ինչ, ժառանգաց սրաբոյն քո պատուիրես վասն նորա, աղաչես, մաղթես, և զամ հնարս հնարիս՝ առ՝ի չմնալոյ նմա անպատիւ։ Եւ որ չարդ ես՝ այնպէս քաղցր և մարդասէր առ ծառայն գտանիս, իսկ անբաւ բարերարութիւն ՈՅ և անձառ մարդասիրութիւն, այնպիսի քաղցրութիւն, զիւր ծառայն զՊաւղոս և զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս, զհանապազորդ սովամահն վասն նորա, զկապեալսն և զծովակուրսն, զմեռեալս և զանչափ չարչարանօքն չարչարեալ՝ զոր և համարեալն անհնարին է, անպսակ թողուցու։

Եւ մարտայարդարն, յորժամ ըմբշական մրցութեանն որ յաղթիցէ՝ և յարգէ և պսակէ տէրն զծառայն և թագաւորն զզօրականն. և իւրաքանչիւր որ առհասարակ իւրում հպատակի՝ որովք դիւրութիւնք կարող իցէ դարձուցանել զերախտիս. և ՈՉ միայն յետ այնչափ քրտանց և վաստակոց՝ ոչ փոքու և ոչ մեծի հատուցանիցէ նոցա բարի ինչ։ Եւ այնպիսի ինչ արդարք և ՈՉ ապաշաւք՝ որք ընդ ամենայն առաքինութիւնսն անցին, ՝ի նմին համարի[1] և

[1] Յոբինակին սատ դատարկ կէ ընթեռնուլ Դ՝ՆՔ՝ համարի ընտեղի թողեալ, թերևս անկար. ՝ՈՒՂՂ Ն. ըստ յունին։

զՀարս և զմարս անարգողաց և մարդասպանաց և դերեզմանակրկտաց կայցեն։ Եւ այն զինչ 'ի դէպ եկէ։ Եթէ չկէ ինչ յետ աստի անդր երթալոյ, այլ ցմծտաւորս[1] և եթէ իցեն մերքս, 'ի նմին հատարի ըստ քում բանիդ։ Այլ նոքա ասա 'ի հանգստեան են, և սոքա 'ի նեզուքեանս կացին զամ ժամանակս։ Եւ ով որ այնպիսի բռնաւոր և անագորոյն և անողորմ մարդ գտանիցի, եթէ այնպէս զիւրոց ծառայից և հնազանդաց խորհիցի։ Ցնս և դյաձնախուքեան անպա տեհուքեան, և ուր վախճանի բանն։ Եթէ ոչ այլ ուս տեք կամիցիս, գնեթ 'ի քո խորհրդոցդ խրատեալ՝ զերծիր յայնպիսի չարաչար կարծեաց. և փախիր 'ի չարէ և բուռն հար զառաքինութեան վաստակոց. և ապա հաստատութեամբ 'ի վերայ հասանիցես՝ եթէ ոչ մինչև աստէն ցմծտաւորսս կացին մերքս։

Եվ ասիցէ որ ցքեզ, թէ ով եկն անտի՝ և պատմեաց զանտի իրսն, ասասջիր ցայնպիսին, թէ 'ի մարդկանէ և ոչ որ։ Եվերևս բազում անգամ և չհաւատայր խսկ որ, և պարծանաց և յարգանաց զիրսն համարեր։ Այլ հրեշտակայ ոՀրն զամ Ճշդիւ, և հաստատութեամբ պատմեաց։ Օ ինչ այսուհետև մեզ պէտք մարդոյ իցեն. ուր վրէժս պահանջելոց է 'ի մէնջ վասն ցանգ բողոքելոյն[2], եթէ գնհեան պատրաստեաց, և արքայութեան կազմեաց. և զնոցին օրինակս յայտ յանդիման ցուցեալ։ Եթէ չէր դատելոց, ապա ոչ ուրեք աստէն վրէժս պահանջէր։ Այլ ա՛ն չէ ինչ իրաւանց, զկէս 'ի չարացն տանջել, և զկէսս ոչ պատժել։ Օ՛ի թէ չէ ակնառու ՀԾ՝ որպէս զի և չէ խսկ, ընդէ՞ր 'ի միոջէն պահանջեաց վրէժս, և միւսումն թոյլ ետ երթալ առանց պատժոյ։ Օ՛ի այս դարձեալ քան զառաջինն տարակուսանաց է։ Այլ թէ կամիք մտադիրութեամբ լսել բանիցս, և զայսր և զս տարակուսանս լուծցուք։ Եւ զինչ իցէ լուծումն։

Ոչ՛ յամենեցունց աստէն պահանջէ վրէժս, զի մի երկմտիցես 'ի յարութենէ, և չունիցիս ակն դատաստանի՝ որպէս թէ ամենեքեան աստէն ինչ տայցեն

[1] Ցորինակին ասա և 'ի վայր վերագրեալ. եգաք ըստ լուս։ [2] 'Ի լուս. բողոքելոյն։

համարս։ Այլ ոչ զամենեսին՝ թողու առանց պատժոց երթալ, զի մի առանց տեսչութեան համարիցես զա մենայն։ Այլ՝ և տանջիլ, և չտանջիլ։ Զի որովք պատժէն, ցուցանէ թէ և անդ յաստէն չպատժելոցն պահանջիլ վրէժս։ Այլ որովք չպատժէն, յարդարէ քեզ հաւատալ՝ եթէ զոյ յետ աստի անդր երթալոյ տեսան ինչ ահագին։ Զի թէ համօրէն զառաջնոցն անփոյթ առնէր, ապա ոչ զոք պատժէր աստէն, և ոչ բարի ուսուք առնէր։ Իսկ այժմ աւանիկ տեսանես՝ նորա վասն քո զերկիւղս ձգեալ և զարեգակն ծագեալ և զերկիր հաստատեալ և զծով ծաւալեալ և զօդս տարածեալ և լուսնի ընթացս կարգեալ, և ժամուք տարւոյ անշարժ օրէնս յօրինեալ. և զայլ ամ նորին ակնարկելով՝ հաստատուք զիւրաքանչիւր ընթացս յարդարեալ։ Բանզի և մեր ընութիւն և անանոցն և սողնոց և գազանաց և թռչնոց և լուզակաց՝ որ 'ի ծովակսն և 'ի ծովս և յաղբերս և 'ի գետս իցեն, և 'ի լեռնայնոց և 'ի դաշտայնոց, ընտանեաց և վայրենեաց, օդակսնացն և երկրաւորաց, և տունկք և սերմանք և ծառք վայրենիք և ընտանիք, պտղաբերք և անպտուղք, և ամ իսկ ինչ առհասարակ յանվաստակ ձեռանէ շարժեալ՝ զմեր կեանս դարմանեն. ոչ 'ի պէտս միոյն, այլ և առատութիւն 'ի նոցանէ հարկանի մեզ սպասաւորութիւն։

Այլ արդ զայսչափ յօրինածս տեսեալ, թէպէտ և ոչ սակաւ ինչ մասն ասացաք, և իշխես ասել, եթէ որ այնչափ և այսպիսի գործս գործեաց, 'ի կարևորսն զքեզ անտես առնիցէ, և ընդ էշս և ընդ խոզս թողուցու զքեզ կալ վախճանեալ։ Որ այնչափ պարգևօք ածպաշտութենն պատուեաց զքեզ, զոր այնչափ հրեշտակաց հանգոյն արար, յետ այնչափ վաստակոց բազում՝ և քրտանց՝ անտես առնիցէ։ Այլ զիարդ է բաւանց իցեն այսպիսի իրք։ Այլ զայն թէ և մեք լուիցեմք, քարինքն ազազակեն. զի այնպէս յայտնի և գուշակաւոր և քան զՀաւատդայթս արեգական լուսաւորագոյն է։

2 'Ի լուս. զամենեսեան։

Օ այս ամ զմտաւ ածեալ հաստատեսցուք զոգիս մեր՝ եթէ յետ ատենի անդր երթալոյ՝ և ահագին բեմին յանդիման լինելոց եմք, և համարս ընդ ամ գոլ ծոցն տայցեմք. և պատիժս կրիցեմք և վրէժս պահանջիցիմք, եթէ անդէն 'ի մեղն կայցեմք. և 'ի պսակս վայելիցեմք և յանձառ բարութիւն, եթէ սակաւիկ մի անձանց զգուշանալ կամիցիմք։ Օ հակառակորդս իրացս այսոցիկ ըմբերանեսցուք, և մեք զառաքինութեամբ ճանապարհն ախորժեսցուք. զի պատշաճ համարձակութեամբ երթեալ յայն ատեան՝ հանդիպեցեմք խոստացելոց բարութեանցն հնարհաւն և մարդասիրութեամբ ամ մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում փառք յաւիտեանս. ամէն։

ՃԵՌ ԶՈՐԵՔՏԱՍՄԱՆԵՐՈՐԴ

«Իբրև լուաւ Յիս, եթէ մատնեցաւ Յովհաննէս, խոյս եւս 'ի կողմանս գալիլեացւոց»։

Այր ընդէր, ասէն, եւս խոյս։ Օ՛ի և այնու եւս ուսուցանիցէ զմեզ, մի խորհիսցեալ ընդդէմ փոքունութեանց, այլ խորշել և տեղի տալ. զի ոչ այն ինչ ինչաս է՝ յորժամ ոչ ոք յանդգնութիւն զանձն տայցէ 'ի նեղութիւն, այլ այն՝ յորժամ ըմբռնիցի և չկայցէ հաստատուն և անշարժ 'ի նեղութիւնս։ Օ՛այս այսպէս ուսուցանէ. և դաշնեալ զի ջրէական նախանձն ցածուցանիցէ՝ գնայր 'ի Կապառնայում. և միանգամայն զի և զմարդարէութիւն եւս կատարեսցէ, և ըզվարդապետսն ամ աշխարհաց որսայցէ, քանզի անդ շրջէին՝ 'ի կիր արկեալ զարուեստն։

Այր դու միտ դիր, զիարդ թէպէտ և 'ի հեթանոս հանդերձեալ էր երթալ, սակայն 'ի հրէից կամեցաւ առնուլ՝ պատճառս։ Օ՛ի և ասա նենգելով զկարգ պեան և 'ի բանս արկանելով, և զնա եւս մերժէին երթալ 'ի Գալիլեա հեթանոսաց։ Այր ոչ զմանկ ինչ զյուդայեան ազգէն Ճառէ, նա և ոչ զամ միանգամայն ցեղին ակնարկէ. ասս զիարդ զատանկ զտեղին զայն մարգարէն և ասէ, եթէ «Երկիր Օ՛արդոնի և երկիր՝ Լեփթաղեմի, Ճանապարհ ծովու յայնկոյս Յորդանան գետոյ, Գալիլեա հեթանոսաց, ժողովուրդ որ նստէր 'ի խաւարի եղես լոյս մեծ»։ Իսկ խաւար ասա ոչ զերևելի խաւարս կուլեաց, այլ զմոլորութիւն և զամեպարշտութիւն։ Բանզի ածէ զնովիմբ, թէ «Ո՞վք նստէին 'ի խաւարի՝ և 'ի սուրբս մահու, լոյս ծագեաց նոցա»։ Օ՛ի ուսանիցիս՝ եթէ լոյսն ոչ այս լոյս է, և ոչ խաւարն երևելի խաւար. զի 'ի Ճառէլ զլուսոյն՝ ոչ ասաց վայրապար լոյս, այլ լոյս մեծ. և այլ ուր թէ լոյսն Ճշմարիտ. և 'ի պատ-

1 'Ի լուս. ասէն։ 2 'Ի լուս. յանդգնութիւն։

մել զխաւարէն ոչ ասէ դոյզն խաւար , այլ ստուերս մահու անուանէ ։ Լ՝սպա զի եւս յայտ առնիցէ՝ եթէ ոչ նոքա խնդրեցին զնա և գտին, այլ ՝ուծն ՝ի վերուստ եցոյց զանձն , ինքն լոյսն ծագեաց և լուսաւորեցոյց , և ոչ նոքա նախ ընթացան և եկին ՝ի լոյսն . քանզի յանհնարին չարիս կային յառաջ քան զդալուստն ՝Քոյ , վասն այնորիկ ոչ ասէ՝ թէ գնային ՝ի խաւարի , այլ թէ « Լ՝ստեին ՝ի խաւարի » . որ էր նշանակ անյոյս լինելոյ, թէ չիցէ ինչ հնար ազատանալ ՝Քանզի այնչափ պաշարեալ էին խաւարաւն , զի և ոչ գնալ գիտէին . այլ անկեալ կործանեալ նստէին , ոչ կարէին կանգնել ։

« Յայսմ հետէ , ասէ , սկսաւ Յս քարոզել , և ասել . ապաշխարեցէք , զի մերձեալ է արքայութիւն երկնից » ։ Յայսմ հետէ . յորմէ . յորմէ զՅովհաննն արկին ՝ի բանտ ։ Լ՝ս ընդէր ՝ի սկզբանէ ոչ իսկ ինքնին քարոզէր . կամ զի բնաւ կարօտանայր Յովհաննու՝ ուր գործոցն վկայութիւն քարոզէր զնմանէ ։ Լ՝այլ զի այսուհետ զպատիւն նորա ուսանիցիս . զի զոր օրինակ հայր, նոյնպէս և նա ունէր մարգարէս . զոր և Օ՝աբրիա և հրեշտակն գուշակէին ։ « Լ՝ս դու , ասէ , մանուկ՝ մարգարէ բարձրելոյն կոչեսջիր » ։ Լ՝ս զի մի պատճառս ինչ տայցէ անամօթ ազգին հրեից . զոր և ինքն իսկ ասէր , եթէ « Լ՝ոչն Յովհաննէս ոչ ուտէր և ոչ ըմպէր , և ասէին զՆ զոյ ՝ի նմա . եկն որդի մարդոյ ուտէ և ըմպէ , և ասեն ահա այր կերօղ և արբեցօղ , և բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց . և արդարացաւ իմաստութիւն յորդւոց իւրոց » ։ Լ՝ս այլ ազգ էս . զի հարկ էր այլուստ ճառել նախ զնմանէ , և ասպա իւր վասն իւր ։ Լ՝եթէ յետ այնչափ վերկայուեց , և ցուցանելոյ զնա ՝ի մանուկ ։ Յովհաննու , ասէին եթէ « Լ՝ու վա՞ անձին քո վկայես , և վկայութիւն քո չէ ճշմարիտ » , զի եթէ չէր ՝ի մէջ անցեալ Յովհաննու , և զայն ՝ամ վկայեալ վասն նորա , օրչափ էս ամպարշտագոյնս խօսէին ։ Ա՝ման այնորիկ իսկ ոչ քարոզեաց յառաջ քան զնա , և՝ ոչ նշանս ինչ արար մինչև մատնեցաւ նա ՝ի բանտն . զի մի և այսու

1 Յօրինակին Դ մոգենն . ՝ի լուս . Դ նմանէ կամ Դ մոգենն ։

և բաժանիցի ժողովուրդն։ Այն իրի և Յովհան-
նէս ոչինչ արար նշանս, զի առ ՅՍ պահիցին ամ ա-
բուեստք նշանացն։ Լուէ այսպիսի յայտնի իրք մատա-
կարարեցան և յառաջ քան զմատնելն Յովհաննու
'ի բանսն, և յետ մատնելոյն, սակայն այնպէս նա-
խանձընդդէմ իմն Թուէին նմա աշակերտքն Յով-
հաննու 'ի միտս բազմաց. քանզի զՅովհաննու կաբ-
ծէին՝ թէ ՉՍ էր։ Եթէ նշանք ինչ լեալ էին, ոչ-
չափ և առաւել հաստատէին կարծիքն։ Այ ան այ-
նորիկ իսկ նշանակէ Մատթէոս՝ եթէ «Յայնմ հետէ
սկսաւ քարոզել ՅՍ»։

Եւ յորժամ սկսաւն, զայն ինչ քարոզէր՝ զոր
Յովհաննն ուսուցանէր, և ոչինչ վասն իւր Չառաւել 'ի
քարոզուէն զոր քարոզէր։ Եւ և այնպէս իսկ մարթ-
էր զի սիրելի առնիցէ զքարոզութիւն իւր և ոչ ատե-
լի. զի չէ և այնպիսի պատշաՃ նմա փառս իմա-
նալն։ Եւ ոչ ծանր ինչ և տաղտկալի երս առաջի
դներ, որպէս Յովհաննն՝ եթէ «Մհաւասիկ տապար
առ արմատն դնի. և ծառ որ ոչ առնիցէ զպտուղ,
հատանի, և նիւթ հրոյ պատրաստի. և որոյ հեծա-
նոցն 'ի ձեռին իւրում սրբել զկալ իւր»։ որ էր յիւ
շատակ պատժոց գեհենին։ Մյլ ախորժելի իմն առ-
նէ զսիրելին քարոզութենն, զի զերկնից և զարքայու-
թենէ Չառէ, և զպարգևաց աւետիս տայ՝ որ լսի-
ցեն նմա։

«Եւ մինչդեռ շրջէր, ասէ, ՅՍ զծովեզերքն գալի-
լեացւոցն, եռես երկուս եղբարս, զՍիմոնն՝ որ ա-
նուանեալ կոչէր Պետրոս, և զԱնդրէաս զեղբայր նո-
քա, ընկեցեալ ուռկանս 'ի ծով. քանզի ձկնորսք
էին. և ասէ ցնոսա, եկայք զկնի իմ, և արարից զը-
ձեզ որսորդս մարդկան. և նոքա թողին զգործիսն,
և զնացին զհետ նորա»։ Լուկաս և Յովհաննէս
այլ ազգ ինն ասէ զկոչումն նոցա, ուստի յայտ իսկ է՝
եթէ երկրորդ կոչումն էր այս, յետ կողմանց՝ եթէ
կամի զբ ուսանել, խմանայ։ Զանզի անդ ասէ, թէ
չէ և արկեալ զՅովհան 'ի բանտ, յորժամ կո-
չեացն և եկին. և ասա ասէ, յետ մատնելոյն։ Եւ
անդ՝ Մնդրէաս կոչէ զՊետրոս. իսկ ասա՝ զերկոսին
ՅՍ։ Եւ Յովհաննէս ասէ, եթէ «Իրրև եռես ՅՍ

զԱիմոնն՝ զի գայր առ նա, ասէ ցնա. դու ես Աիմոն որդի Յովնանու. դու կոչեսջիր Կեփաս, որ թարգմանի վէմ։ Իսկ Մատթէոս ասէ՝ թէ վաղուց կոչեցեալ էր զանունն. «Իբրև եհաս, ասէ, զԱիմոն, որ անուանեալ կոչի Պետրոս»։

Եւ զա և 'ի տեղւոջէն իսկ՝ ուստի կոչեցան, և յայլ եւս բազում իրաց՝ եթէ կամիցի որ միտ դնել, և մաւանդ յարագ յանձն առնլոյն, և զի զնմա՛ ինչ վաղվաղակի թողլն, յայտ լինի՝ եթէ 'ի վաղուց հետէ էին խրատեալք։ Մանդ այսպիսի ինն երևի՝ եթէ 'ի տունն իսկ չոգաւ առ Յոհ Մանդրէաս, և անդ բազում ինչ լուաւ. իսկ ասա լոկ բանիւք հաւանեցան վաղվաղակի երթալ զկնի։ Եւ նման իսկ էր. զի 'ի դէպ է երթալ զհետ, զառաջինն մեկնել. տեսեալ զՅովհան 'ի բանտ մտեալ, և նոցա խոյս տուեալ՝ և գալ միւսանգամ յիւրեանց արուեստն. և ապա անդ գտանէր զնոսա Յոհ, զի որսային ձուկն։ Զանազի և յորժամ մեկնէրն կամեցան 'ի նմանէ զառաջինն՝ չարգել. և թէպէտ և մեկնեցան, սակայն բնաւ ոչ եթող, այլ անսայր և այնմ՝ զի գնացինն, և դարձեալ միւսանգամ գայր առնոյր, և տանէր իւր. որ և այս եւս մեծի որսորդութիւն օրինակ էր։

Եւ արդ միտ դիր և հաւատոցն և հնազանդութիւն նոցա. թէպէտ և 'ի գործ արուեստին զբաղեալ էին, և գիտէք իսկ թէ զկարդ քաղցր և պատիր ձկնորսութիւն էր, սակայն ոչինչ դանդաղեցան լսել այնմ որ կոչեացն զնոսա. և ոչ ասացին, թէ թող նախ երթիցուք 'ի տուն, և ընդ ընտանիս խօսեսցուք. այլ զնմա՛ ինչ թողեալ՝ երթային մտադիր զկնի, որպէս Եղիշայն զհետ Եղիայի։ Այսպիսի հնազանդութիւն խնդրէ 'ի մէնջ Աստ, զի մի և սակաւ մի ժամ որ յապաղեցէ, թէպէտ և կարի ինչ կարևոր իրք առաջի կայցեն։ Այսոսն որոյ և միւսումն՝ որ աղաչէր երթալ թաղել զհայրն իւր, ոչ հրամայեաց երթալ. զի յայտ արասցէ՝ եթէ քան զնմա՛ իրս այն կարևոր է, յորժամ զնա որ պատուիցէ։

Այլ թերևս ասիցես, թէ վասն զի մեծամեծ պարգևս խոստացաւ նոցա, յայն սակս յօժարեցին. զի ասէ, «Եկայք զկնի իմ, և արարից զձեզ որսորդս

մարդկան »։ 'Լա՝ տեսանեմք աւանիկ, զի Յակով-
բայ և Յովհաննու ոչինչ այսպիսի ասաց, և վաղվա-
ղակի յօժարեցին երթալ զհետ նորա։ ԼՀ։ արդ տես,
զի և զաղքատութիւն ևս նոցա նշանակէ հաւատեաւ։
" Ցհետանէ զնոսա, զի ընկեցեալ էր զուռկանս 'ի
ծով »։ Սակայն և այն ոչ սակաւ ինչ առաքինութիւն
հանդէս է, զի յորժամ աղքատ ոք իցէ՝ և համբեր-
ելիցէ աղքատութենն. և յարդարութիւն վաստակոցն՝
և զանձն և զհայր և զմայր տեսանիցէ։

ԼՀ։ իբրև որսացաւ զնոսա, յայնժամ սկիզբն առ-
նէր նշանաց, զի լինիցին մեծաւորքն ակնածանեաք.
և զայս հաստատէ Յովհաննէս. ասէ, մնանէր ստէպ
'ի ժողովուրդս և ուսուցանէր և առնէր նշանս։ Օ ի
'ի ժողովուրդսն ստէպ մնանելով ուսուցէ, թէ ոչ
ոք հակառակ ՝ այ է կամ մոլորեցուցիչ, այլ հա-
ւան և միաբան հօր։ ԼՀ։ ստէպ նշանք յառաջնումն
յայն սակս լինէին, քանզի յորժամ ինչ մի նոր և
չքնաղ կամ առաքինութեամբ ինչ օրէնս կամիցի ՝ած
յաշխարհի ցուցանել, նշանս սովոր է առնել, զի լի-
նիցին առհաւատչեայ իւրոյ զօրութենն՝ առ այնոսիկ,
որք ընդունելոցն իցեն զօրէնսն։ Լ։ յապէս և 'ի ժա-
մանակի յորժամ զմարդն առաջին առնելոց էր,
նախ զաշխարհ ՝ամ հաստատեաց, և ապա ետ նմա զօ-
րէնսն 'ի դրախտին։ ԼՀ։ յորժամ 'Լոյի էր տալոց
օրէնս, և անդ նախ մեծամեծ աքանչելիս եցոյց, զի
վերստին լինի դղրդէին և նորոգէին արարածք. և ա-
հագին համատարած ծփեալ ծովն ունէր զտարի մի
ողջոյն զաշխարհ. և այսպէս մեծաւքանչ նշանօք ապ-
րեցուցանէր 'ի կարէմեռն ձեռայնոյն զարդարն։
ԼՀ։ առ Լքրահամու՝ բազում նշանս ցուցանէր.
զյաղթութենն՝ որ յաղթեաց թագաւորացն 'ի պատե-
րազմի, զհարուածսն՝ զոր էած վասն նորա 'ի վերայ
Փարաւոնի, և զի բազում անգամ 'ի բազում վըշ-
տացն փրկեաց զնա։ ԼՀ։ հրեիցն յորժամ տալոց էր
զօրէնս, նախ մեծամեծ նշանս և աքանչելիս եցոյց, և
ապա ետ զօրէնսն։ 'Լոյնպէս և ասա, քանզի զարձ-
բազոյն առաքինութիւնն մուծանելոց էր յաշխարհ,
զոր ոչ երբէք ուրեք լուեալ, պիտոյ էր և նշանացն
ընծայութիւն. զի զոր ինչ բանիւքն ասիցէ՝ զնոյն և

նշանաքն հաստատիցէ ։ Քանզի զարքայութիւն երկնից քարոզէր , որ ոչ ուրեք երևէր · վասն այնորիկ երևելի նշանաքն զաներևոյթն հաստատէր ։

Եւ տես զաւետարանիչն, զիարդ ոչ զմի մի 'ի նշանացն ուրոյն ուրոյն պատմէ , այլ սակաւ բանիւք զնամ միանգամայն նշանակէ ։ « Պատուցանէին առ նա , ասէ, զնամ ախտաժէտս, որք 'ի պէսպէս ցաւս և 'ի հարուածս նեղեալ էին , և զդիւահարս և զլուսնոտս և զանդամալոյծս , և վաղվաղակի բժշկեաց զնոսա » ։

Զոյզ ինչ խնդրեն պարտ է, այս է, թէ ընդէր ոչ պահանջեաց 'ի նոցանէ հաւատս , որպէս և յետոյ ասէր ցայլս · ասէ , « Հաւատայք եթէ կարող եմ ես առնել զայս ձեզ » · քանզի չէր յայնժամ զիւրոյ զօրութեն ցուցեալ զհանդէս ։ Եւ այլ ազգ ևս · զի և զայն իսկ և մերձենալ ոչ զսակաւ ինչ զհաւատոց ցուցանէր զնշանակ · քանզի 'ի բացարձակ տեղեացն բերէին զհիւանդս · զի թէ ոչ մեծամեծս իմանային զնմանէ , զիսրդ 'ի հեռաւոր տեղեաց գային և բերէին առ նա , եթէ ոչ մեծամեծս ինչ հաստատեալ էին զնմանէ ։

ԳՈՐԴՈՐԱԿ

ԵՐԹԻՑՈ'ՒՐ այսուհետև և մեք զհետ նորա · քանզի և բազում իսկ ցաւս ունիմք զոգւոց · և զայն նախ կամի բժշկել , զի այսու իսկ այն ողջանայ ։ Զոգ զի զայն մերժիցէ յոգւոց մերոց , մնտիցուք առ նա , մի երկրաւոր ինչ խնդրել , այլ մեղայ թողութի · զի տայ և այժմ, թէ փութայցեմք ։ Քանզի յայնժամ յասորիս չոգաւ համբաւն նորա , և այժմ յամ տիեզերս ։ Նոցա լուեալ՝ եթէ զևս հանել , և միախուռն ընթանային · և զու բազում ինչ փորձ առեր զզօրութեն նորա , և զյորդորիս և չընթանաս ։ Նոքա զքաղաքս թողին , և զաբեկամն և զաղգականս · զու և զտուն անգամ չանսաս թողուլ վասն մերձենալոյ , և առաւել մեծամեծաց հասանելոյ ։ Պանաւանդ թէ ոչ զայս իսկ պահանջեցեմք 'ի քէն , այլ զլաւ սովորու-

թէն թողուլ՝ 'ի տան կալ, և հանդերձ քոյովքն գիւ-
բաւ հասանել փրկութեան։ Այս՝ աւասիկ թէ մարմնա-
ւոր ինչ ախտս ունիցաք, զնա՞մ հնարս հնարիցաք առ-
'ի բժշկելոյ յախտէն, որ ելիցէր զմեզ. իսկ յոգւոյս
հիւանդութեան յամենք իմն և յապաղիմք. վասն այնո-
րիկ և ոչ յայնմանէ զերծանիմք. զի կարևորքն մեր՝
աւելորդք են, և աւելորդքն՝ կարևորք. զաղբեւր չա-
րեացն թողեալ՝ և զջրաշիղջն սրբել կամիմք։

Այլ զի մարմնոյն ախտի չարիք ոգւոյն պատճառք
են, անդամալոյծն՝ որոյ երեսուն և ութն ամ էր 'ի
հիւանդութեան, և որ 'ի ձեղուանէն կախեցաւ՝ յայտ
առնեն. և նախ քան զնոսա Այլին. և բաղում և
այլ ուստեք է տեսանել։ Խցցուք զսկզբն չարեացն, և
վտակք ցաւոցն դադարեն. զի ոչ անդամալոյծն լինել
միայն ախտ է, այլ և մեղանչելն. և այն սաստիկ քան
զայս, որչափ հոգի առաւել լաւ է քան զմարմին։

Ա՞ստիցուք և այժմ առնա, և աղաչեսցուք, զի
հաստատեսցուք զոգիս մեր անդամալոյծս. և զնա՞մ
մարմնաւորս թողեալ՝ զհոգևորացն փոյթ յանձին
կալցուք. և եթէ զսրբոք գայցես, և նոցա հասանես։
Ա՞յն, զի ոչ խօթանայցես՝ մինչ մեղանչեսն, արհամար-
հիցես. այլ նմին իբրև իսկ առաւել յոգւոց հանիցես,
վասն զի չզգաս ցաւոց մեղացն. և այն ոչ 'ի չկսկծե-
ցուցանելոյ մեղացն լինի, այլ 'ի չզգալոյ յանցանաց
ոգւոցն։ Այլ արդ մի՞ դիր այնոցիկ՝ որք անձանց մե-
ղացն զգայցեն, զի՞արդ քան զվիրածսն դառնագոյնս
պաղատին, զինչ գործեն, որչափ վշտանան, քանիսն
սուգ առեալ աշխարհն՝ առ 'ի զերծանելոյ 'ի խղճէ
մտացն. զոր և չառնեին իսկ, եթէ ոչ սաստիկ ցաւք
ոգւոցն լինէին։

Լաւ ամենևին չմեղանչելն է, բայց և զգալ մե-
ղուցելոցն և զալ յուղղութի՞ չէ սակաւ լաւութի։
Բայց թէ զայն ևս չունիցիմք, զի՞արդ աղաչիցեմք
զնա՞ծ, և թողութի՞ մեղաց խնդրիցեմք, որչափ չառ-
նեմք՝ ինչ փոյթ այնպիսի իրաց։ Յորժամ յանցու-
ցեալդ՝ և ոչ թէ մեղար՝ գիտել կամիցիս, վասն որոյ
յանցանաց աղաչիցես զնա՞ծ, զորս չգիտեսն. և զի՞արդ

1 Յորինակին առնիցես։

խմանայցես զյաՀախութիւն բարեբարութեան։ Պատ-
մեա այսուհետև զյանցանսն քո ըստ իւրաքանչիւր
կերպարանաց, զի ուսանիցիս՝ թէ ո՞մ առնուս զթո-
ղութիւնն. զի այնպէս հնորհակալ առ բարեբարն
լինիցիս։

Լա՛ դու աւանիկ յորժամ զայրացուցանիցես զոք
'ի պատուականաց, և զբարեկամն և զդրացիս և
զդունապանս և զգուսանս աղաչես, և ինչս հանես,
և բազում աւուրս ծախես՝ մնաչել և աղաչել։ Լա՛ւ
եթէ միանգամ և երկիցս և բազում անգամ մերժիլ
ցէ ցասուցեալն, չզանգիտես. այլ ևս առաւել 'ի
կասկածանս մտեալ՝ յաՀախես զպաղատանսն։ Լա՛ւ
'ի ցասման ամենեցունցն այ՝ յօրանչելոք և ծուլամբ,
փափկանամբ և արբեանամբ, և ըստ սովորութեանն զնամ
գործս գործելոք. և երբ կարիցեմք ածել զնա 'ի հաշ-
տութիւն. և զիարդ ոչ նովին իրօք առաւել ցասուցա-
նեալք զնա։ Վասն զմեղանչելն՝ չորտալ մեղուցելոցն
առաւել ածէ զնա 'ի ցասումն։

Վասն որոյ և ընդ փապարս իսկ երկրի պարտ էր
մնանել և չտեսանել զարև, և մի ոգի առնուլ ա-
մենևին, զի այնպէս զիւրին առ հաշտել ՀՈՐ ունիմք,
և ցասուցանեմք, և 'ի ցասուցանելն չզղջանամք.
թէպէտ և նա և ոչ յորժամ բարկանայ՝ առ ատել
ինչ առնիցէ զայն, այլ զի գէթ այնպէս ածիցէ զիւ-
րև։ Լա՛թէ միշտ թշնամանեալ՝ և հանապազ բարկ
առնէր, ևս քան զևս արհամարհէիր. արդ զի մի այն-
պէս ինչ լինիցի, դարձուցանել զերեսս առ սակաւ մի
ժամանակ, զի հանապազորդ ունիցի զքեզ ընդ իւր։

ՎաՀալերեսցուք այսուհետև մարդասիրութեան
նորա, և ցուցցուք ապաշխարութիւն, որ զայնմ օրէ
որ գալոցն է 'ի վերայ՝ հոգայցէ, և չտայցէ թոյլ
շահել ինչ մեզ ատի։ Վասնզի այժմ ՀԱՄ ինչ ցմեզ
ապաստան է, իսկ յայնժամ՝ որ դատին միայն լինի
տէր զվՃիռն տալոյ։ Կանխեսցուք այսուհետև յա-
ռաջ քան զերեսան նորա՝ խոստովանութիւ[1], լացցուք
և ապաշխարեսցուք։ Օ՛ի թէ կարասցուք աղաչել
զդատաւորն՝ նախ քան զահագին օրն որ տիրիցէ,

1 'Ի լուս. յառաջ քան զերեսան նորա՝ խոստովանել զերեսս նորա։

թողուլ մեզ զմեղսն, ապա և մնասնելոյ իսկ յատեան այնուհետև պէտք ինչ ո՛չ լինիցին։ Որպէս զի թէ այն չլինիցի, հրապարակաւ իսկ առաջի ամ տիեզերաց լսիցէ, և այնուհետև ո՛չ ևս լինիցի մեզ ակնկալութիւն ներելոյ։ Զ՚անզի չիք ոք՝ որ ասասցէ զԸրեաց ըզմեղսն, երթեալ անդր նոքիմքք կարիցէ 'ի պատժոյն ապրել։ Զ՚այլ զոր օրինակ յաստէն բանտիցս՝ յետ շղթայից յատեանն երթան, նոյնպէս և ամ ոգիք յորժամ աստէն երթիցեն պէսպէս շղթայիւք մեղայն վարակեալք, յահագին ատեանն հասանեն. քանզի չեն ընդհատ ինչ 'ի բանտէ՝ աստի կեանքս։ Զ՚այլ որպէս յորժամ յայն տուն երթայցեմք, զամենեսեան շղթայիւք կապեալ տեսանեմք, նոյնպէս և այժմ՝ եթէ զարտաքին պաճուճանսն յանձանց մերժեսցուք, յիւրաքանչիւր կեանսն մնեալ՝ զանցս իւրոյ ոգւոյս տեսցուք ևս անհնարին քան 'ի կապանս երկաթոյ կապեալ. և մանաւանդ՝ թէ 'ի մեծատանցն յոգիս մտանիցես. զի որչափ աւելին պաճուճեալ են, նոյնպէս 'ի սաստիկ կապանս կապեալք։ Որպէս յորժամ կալանաւորին տեսանիցես 'ի մէջ և յոտս և 'ի ձեռս՝ երկաթս, և վասն այնորիկ առաւել արգահատես, նոյնպէս և զմեծատունն յորժամ բազում իրօք պաճուճեալս տեսանիցես, մի՛ վասն այնորիկ մեծատուն, այլ վասն նորին իսկ հ՚ոգ՝ համարիջիր։

Զ՚ս հանդերձ կապանօքն՝ և բանտապետ ևս անհնարին ունի զչար ցանկութիւն ընչիցն. որ չտայ ելանել յայնմ բանտէ, այլ բազում շղթայս և պահապանս և դրունս և նիգս կազմէ նմա. և 'ի ներքին բանսն ստիպէ արկանել, և ախորժել զկապանսն, զի մի՛ և յոյսն զերծանելոյ գտանիցէ՝ 'ի չարեացն եկելոց հասելոց։ Զ՚ս եթէ մերկանայցես մտօք զոգի այնպիսւոյն, ո՛չ միայն կապեալ, այլ և աղտեղեալ և երիթացեալ և որջալից տեսանիցես. զի չեն ինչ քան զայս լաւագոյնք՝ փափկութեն ցանկութիւք, այլ ևս գարշելիք։ Զ՚անաւանդ զի զմարմինսն ևս նոցա հանդերձ ոգւովք ապականեն, և 'ի սորա և 'ի նորա վերայ բազում աղբեւրս ախտից ածեն։

Զ՚ամն այսր ամի զփրկիչ ոգւոցն մերոց աղաչես

ցուք, զի և զկապանսն խզեսցէ, և զդժնդակ պահանսն մերժիցէ, և 'ի ծանրուէ երկաթոյն զերծուսցէ, և քան զթև թեթևագոյն արասցէ զմիտս մեր. զնա աղաչել, և յանձանց նպաստ զփոյթն լինել և զկամն և զբարուք յօժարութիւն։ Օ՜ի այնպէս կարօղ լիցուք և 'ի սակաւ ժամանակի 'ի չարեացն՝ յորս ըմբռնեցաք՝ ապրել, և ուսանել թէ յորպիսի իրս էաք յառաջագոյն, և զդիպօղ ազատութիւնն բուռն հարկանել. որում լիցի ամենեցուն մեզ հասանել հնորհօքն և մարդասիրութեամբն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդորում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք յաւիտեանս. ամէն։

ՃԱՌ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

« Իբրև ետես Յն զժողովսն, ել 'ի լեառնն. և իբրև նստաւն, մատեան առ նա աշակերտքն իւր։ Եւ բացա զբերան իւր, և ուսուցանէր զնոսա »։

Տես զանմեծարգութիւնն և զանպարծութիւն. զի ոչ ելեալ ընդ իւր շրջեցուցանէր զնոսա, այլ յորժամ պարտ էր զնոսա բժշկել՝ ինքնին շրջէր ընդ ամ տեղիս, և քաղաքաց և գաւառաց լինէր տեսուչ. իսկ յորժամ բազում ժողովք ժողովէին, 'ի միում տեղւոջ նստէր։ Եւ զայն ոչ 'ի քաղաքի և ոչ 'ի հրապարակաց միջի, այլ 'ի լերին և յանապատի, առ 'ի զմեզ խրատելոյ, զի մի 'ի ցոյց ինչ և յայտ մարդկան գործիցեմք. և զի 'ի միջոց ամբոխից զերծանել մաքթիցեմք. մանաւանդ յորժամ զգաստանալ պարտ և պատշաճ իցէ, և ճարտարաբանել, և վասն կարևոր իրաց խօսել։

« Իբրև էլ, ասէ, և նստաւ 'ի լերինն, մատեան առ նա աշակերտքն »։ Տեսանես զաճումն առաքինութենն, զիսրդ յանկարծակի վազվազակի եղեն ազնուագոյնք. զի բազումք զնշանսն եկեալ տեսանելին, բայց նոքա և լսել ինչ մեծ և բարձրագոյն ցանկային. որ և 'ի վարդապետութենն իսկ զնա լիներ պատճառք ածելոյ, և բանիցս այսոցիկ սկիզբն առնելոյ։ Զանազն ոչ ելեալ զմարմինսն և ելեալ բժշկեր, այլ և զոգիսն կարգեր յուղղութիւնս. և դարձեալ յոգւոցն խնամոյ միւսանգամ 'ի մարմնոցն դարմանս փոփոխեր. պէսպէս ինն և ազգի ազգի շահս 'ի բանիցն վարդապետութեէ խառնեալ ընդ հանդէս արդեանցն ցուցանէր։ Եւ զանամեթ հերձուածողացն բերանսն միանգամայն ցուցանէր դարմանս, զի յայտ արասցէ՝ թէ ամենեքին իսկ ողջոյն կենդանւոյն ինքն է արարիչ. վասն որոյ բազում իսկ դարմանոց արժանի առնէ զերկոսին բնութիւնսն, մերթ զնա՝ և մերթ

զսա ածէ յուղղութիւնս. որպէս և յայնժամ խսկ առնէր։

«Լրեաց, ասէ, Տէր զբերան իւր, և ուսուցանէր զնոսա»։ Լրա ընդէր կայցէ առընթերակայ՝ Լրեաց նա զբերան իւր. այլ զի ուսանիցիս, թէ և մինչ լուռն կայր՝ խրատէր, և ոչ յորժամ խօսէր. այլ մերթ բանալով զբերան և մերթ 'ի գործոցն արձակէր զբարբառս։ Խսկ յորժամ լուիցես, եթէ ուսուցանէր զնոսա, մի կարծիցես եթէ ընդ աշակերտսն և եթէ խօսէր, այլ նոքօք ընդ ամենեսեսան։ Լրա քանզի բաղումք դեռ տխմար էին, և երկրանախանձք և դեռանաքարշք, վասն այնորիկ զգուշդ աշակերտացն զիւրև ածեալ՝ առ նոսա կարգէ զբանսն։ Օ՛ի յորժամ ընդ նոսա խօսիցի, և այլոցն ևս ամենեցունց՝ որ կարի կարօտ իցեն Ճառելոցն, անտաղտուկ կամիցէ զիմաստութեանն վարդապետութիւնն։ Օ՛որ և Պուկաս ակնարկեալ Ճառէ, թէ «Ի՛ն աշակերտսն շրջեաց զբանն»։ Լրա Մատթէոս զսոյն յայտ արարեալ՝ գրէ, թէ «Մատեան առ նա աշակերտքն»։ և «Օ՛նոսա ուսուցանէր»։ զի այնպէս և այլքն յոյժարագոյնք լինիցին, քան թէ առ ամենեսեսան ձգեալ էր զբանն։

Լրա արդ ուստի սկսանիցի, կամ զո՞ր դնիցէ հիմն նորոց առաքինութեանցս մերոց։ Լուիցուք հաւաստեաւ. զի առ նոսա Ճառեցաւ, և առ ամենեսեսան՝ որք յետ նոցա լինելոց էին՝ նոքօք գրեցաւ։ Պ ասն այնորիկ իսկ յաշակերտսն հայեցեալ՝ առ ամ՝ աշխարհս բարբառի. զի ոչ 'ի նոսա միայն հաստատէ զասացեալսն, այլ խառն 'ի խուռն առ ամենեսեսան Ճառէ զերանութիւնն։ Վանզի ոչ ասաց, թէ երանի իցէ ձեզ՝ եթէ աղքատանայցէք, այլ թէ «Երանի է աղքատաց»։ Օ՛չ թէպէտ և զնոցանէ ասացեալ էր, սակայն հասարակաց խրատ լինելոց էր։ Վանզի և յորժամ ասիցէ՝ թէ «Ընդ ձեզ եմ զամ աւուրսն մինչև 'ի կատարած աշխարհի», ոչ առ նոսա միայն Ճառէ, այլ նոքօք առ ամ՝ տիեզերս։ Լրա յորժամ զնոսա երանիցէ՝ հալածեալս և խուճապեալս և զանպատշաճ՝ չարչարանս չարչարեալս, ոչ նոցա միայն, այլ և այլոց ամենեցունց՝ որ յետ այնր ամի

ցուցանիցէն ուղղութիւն, բոլորէ պսակ։ Այլ սա-
կայն զի յայտնագոյն եւ նոյն լինիցի, և ուսանիցիս
թէ և դու հաղորդութեան ունիցիս ընդ ասացեալսն,
և ամ իսկ մարդկեղէնն ընութիւն՝ թէ կամիցի անսալ,
լուր զիարդ սքանչելի բանիցս այսոցիկ առնէ սկիզբն։
"Երանի իցէ աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից"։ Զի զինչ իցէ ասել աղքատս
հոգւով. այլ զխոնարհս և զբեկեալս սրտիւք։ Օ՛ի
հոգի ասա՝ զշունչն և զկամն ասէ։ Վասնզի են բազում խոնարհքն, և ոչ կամաւ, այլ ակամայ և՛ի բըռնութենէ բռնաղբօսիկ ինչ իրաց. Թողեալ զայնպէս
սիսն, քանզի ոչ եթէ նոցա ինչ իցէ գովեստ և յարգանք, այլ այնոցիկ՝ որք կամաք զանձինս խոնարհեցուցանիցեն և ցածուցանիցեն, զայնպիսին նախ ասէ
բանէ։ Զի ընդէր ոչ ասաց՝ եթէ խոնարհք, այլ թէ
աղքատք. զի այս քան զայն յոլովագոյն էր։ Զի աղքատս ասա զայնոսիկ կոչէ, զոր յոյժ հրամանացն երկնչիցին։ Օ՛որս և Լասայաւ մարգարէիւ միտագոյնս
ընկալեալ՝ այ՝ ասէր, եթէ "Յո՞ հայեցայց. այլ՝ի
խոնարհն և՛ի հեզն և՛ի հանդարտն, և որ դողայն
յիմոց բանից"։

Զի քանզի բազում օրինակք են խոնարհութեան.
և ոմն չափով ոք խոնարհ իցէ, և ոմն ամ առաքինութիւն։ Օ՛այս խոնարհութեան և մարգարէն յարգեալ գովէ. և ոչ զվայրապար ինչ ցածութեան մտացն
հաստատուն համարի, այլ զյոլովագոյն բեկումն սրբոյն. որովք ասէր իսկ, եթէ "Պատարագ այ հոգի
բեկեալ է. և զսիրտ բեկեալ և զխոնարհ ամ ոչ արհամարհէ"։ Զի երեք մանկունքն զոյն փոխանակ
ընդ մեծի պատարագի մատուցեալ այ՝՝՝ի հնոցին՝ ասէին. "Այլ յանձինս բեկեալս և յոգիս խոնարհութեան ընդունելի լիցուք"։ Օ՛այս և Վերա երանէ
այժմ։ Վասնզի յաճախութիւք չարեացն՝ որ զհամբոյն աշխարհ ապականեցին, յամպարհաւաճութենէ
մտին, յորժամ բանսարկուն՝ որ յառաջ քան զայն
էր այնպիսի, և յետոյ լինէր նովին[2] բանսարկու։

[1] Յոբենակին պակասէր այ. [2] Ի լուս. Նովին։
Եդաք ըստ լուս։

Օ որ և Պաւղոսի յայտ արարեալ ասէր. «Օ՛ի մի՛, ասէ, հպարտանայցէ, և 'ի դատաստանս անկանիցի սատանայի»։ Դանդի և առաջին մարդն ուռուցեալ մտոտի յուսովք թշնամւոյն՝ ամբարտաւանեալ, լինէր մահկանացու. կարծէր լինել ՅԱԾ, և զոր ունէր՝ և զայն ևս կորոյս։ Օ որոյ և ՅԻՍ դասովեալ զանմտութիւնն՝ ասէր հեգնելով, թէ «Ահաւասիկ Ադամ է, զի իբրև զմի 'ի մենջ»։ Լաւ իւրաքանչիւր ոք՝ որք յետ այնորիկ յամպարշտուն մտաբերելին կործանել, լինել զուգական ՅԻՍ տենչային։

Լաւ քանզի այս է սկիզբն և արմատ և բղխումն ամ չարեաց, վասն այնորիկ և ըստ իւրաքանչիւր ախտից և զգեղն կազմէ. զի իբրև զհին ինչ հաւատատուն անշարժ նախ զայս օրէնս դնէ. զի յորժամ սա հաստատուն զգուշութիւն 'ի ներքոյ կայցէ, ապա և զայնն ամ անխեթ 'ի վերայ դնիցէ շինօղն։ Լակ եթէ սա 'ի միջոյ բառնայցէ, թէպէտ մինչև յերկինս բարձրացեալ հասանիցէ առաքինեալն, ամ դիւրաւ քակտի, անկանի 'ի խոնարհ, և յանդոյր վախճան կործանի։ Թէպէտ և պահք իցեն և կամ աղօթք կամ ողորմութիւն կամ զգաստութիւն կամ զինչ բարիս և ժողովիցես, առանց խոնարհութեան՝ խարխալեալ խախտի և կործանի ամ։ Որ և փարիսեցւոյն իսկ դիպեցաւ. զի յետ հասանելոյն նորա 'ի գլուխս ամ հաճութեանն, կորուսեալ զամ իջանէր 'ի յատակ չարութեաց. քանզի զմայր ամ բարութեան չունէր յանձին։ Օ՛ի զոր օրինակ աղբեւր ամ չարութեան՝ հպարտութիւն է, նոյնպէս և խոնարհութեան՝ սկիզբն ամ ցածութեան։ Վասն որոյ և անտի իսկ սկիզբն առնէ, արմատաբին խլեալ զամբարտաւանութիւնս 'ի մտաց լսողացն։

Լաւ առ աշակերտսն, ասէն, զինչ 'ի դէպ էր այս. զի ամենեքին իսկ զգածեալք խոնարհութեամբ էին. քանզի և ոչ ունէին իսկ պատճառս ամբարտաւանութեան ինչ իրիւ. զի ձկնորք էին և աղքատք և անշնաղնաւորք և տխմարք։ Այլ ոչ յաշակերտսն, այլ 'ի մերձաւորսն որ յայնժամ անդ էին, և յայնոսիկ որ յետ նոցա ընդունելոյց էին, պարտիմք տեսանել ըստ միտս ճառելոյն. և զի մի այնու արհամարհիցեն զնո-

սա, ասեմք թէ առաւել ևս յաշակերտն պատշաճ է. թէպէտ և ոչ յայնժամ, սակայն յետոյ պիտոյ էր նոցա այնպիսի զգուշութիւն յետ նշանացն և աքանչելեաց և յամ աշխարհաց պատուելոյ և առ ՅԾ համարձակութիւն ունելոյ։ Զի ոչ մեծութիւն և ոչ հարստութիւն և ոչ թագաւորութիւնն իսկ գլխովին բաւական էր այնպէս հպարտացուցանել, որպէս զնոսա ժամանակին դէպ։

Այլ այլազգ ևս. զի յառաջ քան զնշանսն 'ի դէպ էր հպարտացուցանել զնոսա բազմամբոխիցն տեսիլ. և որ զվարդապետաւն շուրջ եկեալ մնծեալ ժողովքն՝ կարօղ էին ախտացուցանել զնոսա ախտ մարդկեղէն։ Ա՝ ասն որոյ վաղվաղակի իսկ կարձէ զայնպիսի զմիտս նոցա. և ոչ 'ի կարդի խրատու կամ հրամանաց ձառէ, այլ յերանութեց. զի անտաղտուկ առնիցէ զանն, և ամենեցուն հօրդիցէ զվարդապետութիւնն ասպարէզս։ Բանզի ոչ ասաց, եթէ այս անուն և այս անուն, այլ թէ ամենեքեան ոչք առնիցեն զայն երանելիք են։ Ասպէս զի թէ ծառայ իցես կամ աղքատ կամ տնանկ կամ օտար կամ շինական, չեցէ ինչ արգել քեզ լինելոյ երանելի, եթէ այսպիսի առաքինութիւն լինիցիս նախանձաւոր։

Բ.ոդ սկսեալ անտի՝ ուստի առաւել խորշել պարտ էր, յառաջագոյն մատուցեալ 'ի միւս ևս պատուիրանն, որ իբրև հակառակ ինն կարծէր. առ 'ի վՃիռ համբրէն ամ տիեզերաց, որք զուրախարիցն՝ երանելիս կարծեն, և զայնոսիկ ոչք 'ի տրտմութեան և յաղքատութեան և 'ի սուգ իցեն՝ հէքս և եղկելիս. իսկ նորա աւանիկ սոցա փոխանակ նոցա տուեալ երանի, ասէր թէ «Երանի իցէ ազաւորաց», թէպէտ և ամենեքեան զնոսա եղկելիս համարին։ Ա՝ ասն այնորիկ իսկ յառաջագոյն զնշանսն արար, զի յորժամ այսպիսի օրէնս դնիցէ՝ հաւատալն լինիցի։ Այս ասա դարձեալ ոչ զվայրապար սգաւորս երանի, այլ զայնոսիկ որք վասն մեղաց 'ի սուգ իցեն. զի այլն ևս սուգ՝ որ վասն աշխարհի կենաց իցէ, յոյժ իսկ արդելեալ է։ Զ՝որ և Պաւղոսի յայտ արարեալ ասէր, եթէ «Աշխարհս տրտմութիւն մահ գործէ. իսկ որ ըստ ՅՅ տրտմութիւնն է՝ ապաշխարութիւն 'ի փրկուի

առանց զղջանալոյ »։ Լ.ըդ և ինքն իսկ ասաց այնպի-
սեացն տայ երանի՝ որ ըստ այմ օրինակի տրտմի-
ցին. և ոչ զվայրապար տրտմեալսն երանէ, այլ զոյ-
նոսիկ որք յորովագոյն իցեն 'ի տրտմութեան։ Ա՛ման
որոյ և չասէ իսկ թէ երանի տրտմեցելոցն, այլ՝ թէ
« Լ.րանի սգաւորացն »։

Լ.ս սոյն իսկ այս պատուիրան բնաւին զգաստութեան
է վարդապետ. զի եթէ ոչք վասն կնոջ կամ վասն
որդւոց կամ վասն այլոց հարազատաց վախճանելոց
'ի սուգ իցեն, ոչ ընչից և ոչ գեղոյ մարդոյ ցանկա-
նան, յորչափ ժամանակս ցաւքն 'ի սրտին կայցեն,
ոչ փառաց բաղձան, և ոչ ընդ թշնամանս զսպրա-
նան, և ոչ 'ի նախանձուէ ձնգին [1], և ոչ այլ իւիք
ախտիւ ջերանին, բայց սգոյն միայն կան պատկառ.
ուրչափ և առաւել ոչք վասն անձանց մեղաց 'ի սուգ
իցեն՝ որպէս արժան իցէ սգալ, և առաւել ցուցա-
նիցեն զգաստութիւն։ Լ.սպա և փոխարէնս առաքինու-
թեանն յարէ 'ի նոսին։ « Օ՛ի նոքա, ասէ, մխիթարեսս-
ցին »։ Լ.ս արդ աղէ՝ ասա՛, ո՞ւր մխիթարեսցին. և
ասաց իսկ և անդ. քանզի հրամանն յոյժ ծանրա-
գոյն և տաղտկալից էր, որ թեթևազոյնն կարող է
երևեցուցանել զնա՝ զայն ինն առաւել խոստանայր
տալ։ Ա՛րպէս զի թէ մխիթարել կամիցիս, 'ի սուգ
մտանիցիր. և մի՛ համարիցիս եթէ առակ ինչ իցէ
ասացեալն. զի յոյժամ ՀԱԾ մխիթարեսցէ, թէպէտ
և բիւրապատիկ տրտմականացս ձիւնաբեր 'ի վերայ
հոսիցին, քան զՀԱՄ իսկ 'ի վերոյ լինիցիս։ Ցոյժ իսկ
առաւել մեծամեծս քան զվաստակս տայ փոխարէնս
ՀԱԾ. զոր և ասաց իսկ արար. զի երանելիս ցուցանէ
զսգաւորս, ոչ ըստ իրացն ինչ արժանաւորութեան,
այլ ըստ իւրումն մարդասիրութեան։ Օ՛ի սգաւորացն՝
որ վասն յանցանացս 'ի սուգ իցեն, այն իսկ շատ է՝
զի թողութեան արժանի լինիցին, և պաղատանս և
աղերսս առաջի դնիցեն։ Լ.սկ նա այնչափ մարդասէր
է, զի ոչ զտանջանաց թողութիւն և ոչ զմեղաց աղա-
տութիւն համարի բաւական 'ի պարգևս, այլ երանե-
լիս և առնէ, և բաղում մխիթարութեանց արժանիս։

[1] 'Ի լուս. ՅԱՒՌ։

Իսկ սգալ ոչ վասն անձանց միայն մեղաց, այլ և վասն այլոց հրամայէ. որպէս և սրբոցն իսկ ոգիք էին, Մովսէսի կամ Պաւղոսի կամ Պաւեթի. զի նոքա և ամենեքին իսկ այսպիսիք՝ բազում անգամ վասն այլոց չարեաց 'ի սուգ մնանէին։

"Լրանի հեղոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր։" Օ՛ որ երկիր։ Մանք իմանալի ինն երկիր ասեն. այլ չէ այնպէս։ Վանզի ոչ ուրեք գտանեմք 'ի գիրս, եթէ երկիր իմանալի ասիցի. այլ ըստ բանին և զհաստատուցումն երևելի ինն գնէ. որպէս և Պաւղոս ասէ ըստ հնոյն, թէ "Պատուեա՛ զհայր և զմայր քո, և լինիցես երկայնակեաց 'ի վերայ երկրի։" Լոյս ինքն իսկ ՝ուրն ասաց ցաւազակն, եթէ "Այսօր ընդ իս իցես 'ի դրախտին։" Վանզի ոչ եթէ հանդերձեալ բարութիւնքն ևեթ յորդորէ, այլ և մնաւորօքս՝ վասն թանձրամիտ լսողացն, որք նախ քան զհանդերձեալսն զմնաւորսս խնդրեն։

Այ՛ այնորիկ մատուցեալ ևս յառաջ ասէ. "Յառաջագոյն հաշտեաց ընդ ոսոխի քում։" Նա և զհաստատուցումն զայնպիսի առաքինութիւնս յարեալ անդէն 'ի նոյն գնէ. "Գնա՛ց, ասէ, մատնիցե՛ զքեզ ոսոխն դատաւորին, և դատաւորն դահճի։" Ցեսանես, զի աստէն յերևելեացս երկեցուցանէ, որ աստէն առաս դիպիցին 'ի հոգոյ։ Լոյս դարձեալ ասէ, եթէ "Որ ասէ ցեղբայրս իւր՝ ռակա, պարտաւոր լիցի յատենի։" Լոյս Պաւղոս բազում ինչ երևելիս հատուցմունս գնէ, և 'ի մնաւորացս յօժարեցուցանէ. այս պիսի ինչ՝ յորժամ վասն կուսութեան ճառիցէ, և անդ ոչինչ վասն երկնաւորականացն ասէ, այլ 'ի մնաւորացս հաւանեցուցանէ։ "Վասն հարկին, ասէ, որ 'ի վերայ կայ, բայց ես խնայեցի 'ի ձեզ, և կամիմ զի անհոգք իցէք։" Այնպէս և Աստ ընդ հոգևորսն և զերևելիսս խառնեաց։ Վանզի կարծի հեղն՝ եթէ զնամ ինչ զիւր կրուանսիցէ, զնորին հակառակն խոստացեալ՝ ասէ, եթէ նա է՝ որ զնամ ինչ զգուշութիւն ստացեալ ունի, որ ոչ յանդուգն ոք իցէ և ոչ ամբարտաւան։ Իսկ հպարան՝ և 'ի հայրենի ընչից տարագիր գտանի, և բազում անգամ իւրոց ոգւոցն իսկ թշնամի։ Լոյս այլազգ ևս. քանզի 'ի հնում

ստէպ մարգարէն ասէ, եթէ «Հեզք ժառանգեսցեն զերկիր՝», անդէն ընդ մերնդակից և ծանօթական բանն խառնեալ արկանէ զբանն, զի մի ՝ամ ուրեք օտարաձայն այլաբարբառ կարծիցի։

Օ այս ասելով՝ ոչ եթէ միոյ 'ի մօտաւորսս և եթ հաստատէ զհատուցմունսն, այլ յետ այսորիկ և զայն ևս պարզևէ։ Օ՛ի եթէ հոգևոր ինչ ասիցէ, չքառնայ այնու զմօտաւորսս և զաստէն կենացս. և եթէ 'ի մօտաւորացս ինչ խոստանայցէ, ոչ միանգամ յայն և եթ հաստատէ զկարողութիւն։ «Խնդրեցէք, ասէ, զաղքայութիւն՝՝ և զարդարութիւն նորա, և այս ՝ամ տացի և յաւելցի ձեզ»։ և դարձեալ ասէ, «Եթէ որ թողուցու զտուն իւր կամ զեղբարս կամ զհայր կամ զմայր կամ զկին կամ զորդիս կամ զագարակս վասն անուան իմոյ, հարիւրապատիկ առցէ յաշխարհիս յայսմիկ, և զկեանսն յաւիտենից ժառանգեսցէ»։

«Երանի ոյք քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան»։ Արդարութիւն։ Կամ զա՞մ առաքինութեան»։ Զոմ արդարութիւն։ Կամ զա՞մ առաքինութեան ասէ, կամ զմիոյ մասնի՝ որ ընդդէմ ագահութեան իցէ։ Զանազի վասն ողորմածութիւն պատուիրելոց էր, ցուցանէ թէ որպէս պատշաճ՝ իցէ ողորմել. այսպիսի ինչ՝ զի ոչ 'ի յափշտակութենէ և ոչ յագահութենէ երանէ զայնոսիկ՝ ոյք արդարութեան փափաքեալ իցեն։ Զե տես, որչափ առաւելութիւն դնէ. զի ոչ ասաց, թէ երանի ոյք յարդարութեան կողմ իցեն, այլ թէ «Երանի ոյք քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան»։ Օ՛ի ոչ վայրապար ինչ, այլ զի ՝ամ ցանկութիւն վայելեցեմք 'ի նմա։

Զե քանզի այս սեպհական իմն է ագահութեան, զի ոչ այնչափ կերակրոց կամ ըմպելեաց ցանկանամք՝ որպէս շատ ինչ ստանալոյ և հանդերձս երևելիս ա դանելոյ. արդ զի զայսպիսի ցանկութիւն ագահութեան 'ի բաց հրամայիցէ Թեոթափէլ, դարձեալ երևելի հատուցմունս սահմանէ։ «Օ՛ի նոքա, ասէ, յագեսցին»։ Զ՝ ասն կարծելոյ բազմաց զագահութիւն՝ եթէ զբազումն ընչաւէտս առնիցէ, ասէ զհակառակն նոքին, եթէ արդարութիւն առնէ զայն։ Զե արդ մի, յորժամ զարդարութիւն գործիցես, յաղքատութիւն երկնչիցիս, և մի 'ի սոցա կասկածիցես։ Օ՛ի յա-

փրշտակօղքն են՝ որ [1] մանաւանդ յամէ անկանիցին. և որ արդարութեան ցանկանայցէ, նա է որ զամ ինչ ունիցի զգուշութիւն։ Օ՛ի թէ որք այլոց ընչից չցանկանան [2], այնչափ վայելիցեն՝ ի մեծութիւն, որչափ և առաւել որք զիւրեանցն այլոց բաշխիցեն։

«Լրանի ողորմածաց»։ Զոտ ինձ այսպէս թուի, եթէ ոչ միայն զայնցանէ՝ որք ընչիւքն ողորմիցին՝ ասիցէ, այլ և որք իրօք ինչ օգնական լինիցին։ Օ՛ի բազմադիմի են ողորմածութեանն օրինակք. և ընդաբձակ է պատուիրանս այս։ ԼՀ՝ արդ զինչ իցէ հաստուցումն։ «Օ՛ի նոքա, ասէ, ողորմութիւն գտցեն»։ ԼՀ՝ թուի եթէ հակառակ [3] ինչ առաքինութեան իցէ հաստուցումն. բայց առաւել յոյժ մեծ է քան զուղղութիւն։ Օ՛ի նոքա ողորմին իբրև զմարդիկ, և ինքեանք ողորմելի գտանեն յամենեցունցն այ։ Զ՝ան զի չէ իսկ հաւասար մարդկեղէն ողորմութիւն և ածական, այլ որչափ ընդ չարութիւն և ընդ բարութիւն ինչ՝ ի միջի իցէ, նոյնչափ ընդ սա և ընդ նա անջրպետութիւն։

«Լրանի սրք սուրբ իցեն սրտիւք, զի նոքա զաստ տեսցեն»։ Զհաւանիկ դարձեալ հոգևոր հաստուցումն։ Սուրբ ասա՝ կամ զայնոսիկ որ զամ առաքինութիւն յանձինս ունիցին կոչէ, և ոչինչ գիտիցեն զմեաս անձանց, և կամ զայնոսիկ՝ որք ցածութիւն և զգաստութեամբ վարիցին։ Օ՛ի չիք ինչ մեզ այնպէս պատշաճագոյն առ՝ ի զաստ տեսանելոյ՝ իբրև զայս առաքինութիւն։ Պատն որոյ և Պաւղոս իսկ ասէ, եթէ «Օ՛խաղաղութեան զՀոգ եբեթայք, և զսրբութիւն, զի առանց այսորիկ ոչ ոք տեսցէ զտէր»։ Իսկ եբեաս ասա զմարդկեղէնն կերպարանացն նոքա ասէ. քանզի ոչ ոք ըստ ածութեանն կարէ տեսանել։ ԼՀ՝ քանզի բաղուսքն ողորմութիւնս առնեն, և չյաւիշտակեն զուրուք և ոչ զրկեն, բայց պտռնկին և պղծին, զի ցուցցէ՝ թէ չէ բաւական առաքինին միայն՝ յաւելու և զայս ևս։ Օ՛ որ օրինակ և Պաւղոս զմակեդոնացւոցն վկայէր՝ յորժամ առ կորնթա-

[1] Յօրինակին ընդ որ։
[2] Յօրինակին ցանկանան։
[3] Թերևս հաստաբակ. որպէս յոյնն։

ցիսն առաքէր զթուղթն, եթէ ոչ միայն ողորմածութեամբն մեծանային, այլ և այլովքն ևս առաքինութեամբքն. զի յորժամ ասաց վասն առատութեան ընչիցն զոր բաշխեին, ապա ասէ, թէ զանձինս ետուն ՚ի ներ և մեզ։

"Դրանի խաղաղարարաց"։ Ոչ միայն զկրուելն և զատել զմիմեանս արգել, այլ և այլ ինն աւելի խնդրէ. զի և զայլս՝ որք կռուիցին՝ ածիցեմք ՚ի հաշտութիւն։ Դարձեալ և ասա հոգևոր տրիտուր խոստանայ. "Օ՛ի նոքա, ասէ, որդիք ՚այ կոչեսցին"։ Դա և միածնին իսկ որդւոյն ՚այ սոյն գործ եղև, զի ժողովեսցէ զցրուեալս, և ածցէ ՚ի հաշտութիւն զպատերազմողս։ Դէ զի մի կարծիցես՝ եթէ ՚ամ ուրեք խաղաղութիւնն բարւոք ինչ իցէ, յարէ ՚ի նոյն, եթէ "Դրանի ոչք հալածեալ իցեն վասն արդարութեան"։ Ա՛յն իսկ է, յորժամ վասն առաքինութեան կամ վասն այլոց վերակացութեան կամ վասն ՝ածպաշտութեանն ոք Հալնիցի։ Դանզի արդարութիւն միշտ զամ իսկ զառաքինութիս ոգւոցն սովոր են կոչել զիրք։ Դէ ասա ևս հոգևոր հատուցումն զնեա. "Օ՛ի նոցա է, ասէ, արքայութիւն երկնից"։

"Դրանի իցէ ձեզ յորժամ նախատիցեն զձեզ, և ասիցեն բան չար զձենջ սուտ"։ Դամ կախարդս կամ մոլորեցուցիչս կամ ժանտագործս կամ թէ այլ ինչ կոչիցեն, երանի իցէ, ասէ, ձեզ։ Օ՛ինչ այլ ինչ կայցեն այսպիսի նորընծայ հրամանք, յորժամ որ այլոց ինչ սոսկալի իցէ՝ զայն տենչակամս հասանիցէ համարել. աղքատանալ և ՚ի սուգ մտանել, հալածական լինել, բանս չարս լսել։ Դայց սակայն ասաց և հաւանեցոյց, ոչ զերկուս որ կամ զտասն կամ զքսան կամ զՀարիւր կամ զՀազարս ՚ի մարդկանէ, այլ զամենայն տիեզերս։ Օ՛ի և լսեն ըզծանրատաղտուկսն և զկատակ սովորութեամբ բաղմաց, որպէս և յայնմ ժամանակի իսկ՝ զի լսէին բազումք և զարմանային, և այժմ և յամ ժամանակս. քանզի բազում էր զօրութիւն այնորիկ՝ որ ասացն։

Ա՛յլ զի մի կարծիցես, եթէ փոխանակ բանից չարաց լսելոց վայրապար ինչ տայցէ երանութի, երկուս կէտս եդ ՚ի միջի։ Դի յորժամ վասն նորա իսկ իցէ.

և միւս և յորժամ սուտ իցեն բանքն։ Եւ եթէ այսպիսի ինչ չիցէ, ոչ միայն երանելիս չառնէ, այլ և եղկելիս զայն, որ զչար բանսն լսիցէ։ Այսպա տես և զարիտուրն զոր խոստանայ։ «Օ՛ի վարձք ձեր, ասէ, բազում են յերկինս»։ Եւ զու թէպէտ և յիւրաքանչիւր երանութենն ոչ լսիցես զարքայութենէ երկնից խոստացեալ, մի՛ ինչ տրտմիցիս. զի թէպէտ և այլևայլ ինն անուանէ զհատուցմունսն, այլ զամենասին յարքայութենէ տանելոց է։ Արանզի յորժամ ասէ միսիթարեսցին սգաւորքն, և ողորմելի գտցեն ողորմածքն, և զնոսա տեսցեն սուրբքն սրտիւք, և որդիք նոյ կոչեսցին խաղաղարարքն, ոչ այլ ինչ՝ այլ զարքայութենէ երկնից ակնարկէ այսու ամենայնիւ։ Օ՛ի որք սոքօք վայելեցեն, պատշաճ է՝ զի այնմ՝ և հասանիցեն։ Եւ արդ մի՛ միայն աղքատացն հոգւով կարծիցես զարքայութենէ երկնից, այլ և քաղցելոցն և ծարաւեաց արդարութենէ և հեզոց և այլոցն ամենեցուն առ հասարակ. զի նոքօք՝ի վերայ ամենեցուն առհասարակ նկարեաց զերանութենն։ Եւ մի՛ ինչ երևելի՝ համարիցիս՝ի պարգևացն. քանզի և չէ իսկ երանելի՝ որ յայտնեաքս պսակիցի. որք ըստ ժամանակացս լուծանելոց են, և վաղվաղակի քան զստուերս անցանելոց։ Իսկ յորժամ ասաց՝ եթէ «Ա՛ արձք ձեր բազում են յերկինս», ածէ զնովիմբ և միւս և միսիթարութենէ։

«Օ՛ի այսպէս, ասէ, հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան զձեզ էին»։ Արանզի արքայութենն խոստումն առ յապա էր, և յուսով ակն ունէր, ՝ի հասարակացն վշտակից լինելոց ընդ մարգարէսն՝ տայ նոցա միսիթարուն։ Ա՛ի, ասէ, կարծիցէք, եթէ հանկառակ ինչ խօսիցիք և օտարոտի ինչ օրէնս դնիցէք, և վասն այնորիկ չարչարիցիք. կամ չարաց ինչ կրօնեից իցէք վարդապետք, վասն այնորիկ հալածիցիք՝ի նոցանէն։ Օ՛ի ոչ եթէ՝ի չարութենէ բանիցն, այլ՝ի լսողացն չարաց դան՝ի վերայ նենգութենիք և վնասք։ Ասատի ոչ զձեզ՝ որ զչարչարանսդ կրիցէք, այլ զնոսա՝ որ զչարչարանսն ածիցեն՝ի վերայ, բամբասիցեն։ Եւ վկայէ այդմ՝ ասի իսկ առաջին ժա-

1 Յորինակին էրանէ։

մանակին. զի ոչ եթէ զանօրէնութիւն, կամ ՝ուծ ընդ
ՀՅ մուծանել՝ բամբասէին զմարգարէսն. և զկէսան
հալածէին, և զկէսան քարկոծ առնէին, և զայլս բա-
զումս չարչարանօք չարչարէին։ Այլ այդ մի ինչ զձեզ
խռովեցուսցէ. զի նովին մտօք և այժմ զնոսն գործ
գործեն։

Տեսանեմ, որպէս զմիտս նոցա զարթոյց և տարաւ
կացոյց մտա առ Մովսիսի և Այդեայի. որպէս և
Պաւղոս իսկ Թեսաղոնիկեցւոցն գրէ. «Ասուք, ասէ,
նմանօրք եղէրուք եղբարք եկեղեցեացն ՀՅ՝ որ են
'ի հրէաստանի 'ի Քրիստոս Յիսուս. զի զնոսն չարչարանս չար-
չարեցայք և դուք 'ի ձերոց ազգականաց, որպէս և
նոքա 'ի հրէից, որք զՏէր Յիսուսն սպանին և զիւրեանց
մարգարէսն, և զմեզ հալածեցին, և ՀՅ չեղեն հա-
ճոյք, և ՝ամ մարդկան հակառակ կացին»։ Զոր և
ասաց իսկ յօրինեաց Քրիստոս. զի յայլ երանութիւնսն ասէ,
երանի ազքատաց և ողորմածաց. իսկ ասաս ոչ խառնէ
'ի խուռնն ինչ, այլ առ նոսա շրջէ զբանն. «Երանի
իցէ ձեզ, ասէ, յորժամ նախատիցեն զձեզ, և ասի-
ցեն բան չար զձէնջ սուտ»։ Զի յայսմ արասցէ՝ թէ
առ նոսա առաւել ինն էր այն, և առ այլ ՝ամ վարդ-
ապետս սեպհական։ Այլն միանգամայն և զիւր
իսկ պատիւն ակնարկէ այնուիկ, և ընդ ծնողին ըզ-
հանդիսապատիւ զուգականութիւն։ Զի որպէս մար-
գարէքն, ասէ, Քո՞ հօր, նոյնպէս և դուք, ասէ, վասն
իմ՝ չարչարիցիք։ Իսկ ասելովն՝ եթէ «Զ մարգա-
րէսն որ յառաջ քան զձեզ եղեն», յայտ առնէ, թէ
և նոքա իսկ անդէն մարգարէք եղեն։ Այս ասպա ցու-
ցանէ, եթէ այս ինն առաւել օգուտ գործէր նոցա,
և առնէր երանելիս. ոչ ասաց՝ եթէ չարախօսիցին
և հալածիցին, և ես արգելից։ Ո՛չ 'ի լսելոյ զբանսն
չարս, այլ 'ի լսելոյն և առաքինութիւնքն տանելոյ՝ գործ-
ի լաւութիւն. զի արգելամբք իսկ յանդիմանիցեն
զնոսա. որպէս զի ոչ չարչարիցն, այլ չարչարիցն և
չլքանելն առաւել մեծ է։

Զոտ ասէ, թէ «Զ արձք ձեր բազում են յեր-
կինս»։ Իսկ Զ ուկաս մեծաւ առաւելութիւն միութիւ-
բութիւն ինն մատուցեալ նոցա Քրիստի յայտ առնէ։
Զի ոչ միայն զայնոսիկ՝ որք բամբասիցին վասն ՝ այ,

երանէ, այլ և զայնոսիկ՝ որք բարի բանն լսիցեն յաւ մենեցուն, եղկելիս համարի։ «Վայ ձեզ, ասէ, յորժամ բարի ասիցեն զձեզ ամ մարդիկ»։ Զ՝Էպէտ և զառաքելոցն էին ոմանք որ բարի խօսէին, այլ ոչ աւ մենէքեան։ Վասն այնորիկ ոչ ասաց՝ եթէ յորժամ բարի ասիցեն զձենք մարդիկ, այլ թէ ամենայն մարդիկ։ Զի չէ հնար այնոցիկ՝ զոք յառաքինութիան կեցցեն, եթէ յամ մարդոյ բարի լսիցեն։

Եւ դարձեալ ասէ, եթէ «Յորժամ հանիցեն զձենք անուն չար՝ ուրախ լինիջիք և ցնծասջիք»։ Զի ոչ միայն ընդ ճգանց համբերութիւն, այլ և ընդ բամբասանացն բաղում սահմանք հատուցմունս։ Վասն այնորիկ ոչ ասաց, եթէ յորժամ հալածիցեն զձեզ և սպանանիցեն, այլ «Յորժամ նախատիցեն զձեզ, և ասիցեն զամ բան չար զձենք»։ Զի քան զիրսն՝ ևս չար դժնդակ բամբասանքն են. զի 'ի ձրգունսն բաղում ինչ է՝ որ փոփոխէ[1] զցաւսն. բաղմացն խրախոյսք, մեծակացացն յարգանք, պսակս նմա մատուցանել, անուանիսն քարոզել։ Իսկ չարախօսութեանն չիք ինչ մխիթարութիւն. և չերևի՝ թէ մեծ ինչ ուղղութիւն իցէ. և առաւել քան զձգունսն կսկիծեցուցանէ զպատերազմողն։ Զի բաղումք իսկ առ չժուժալ աղետիցն և 'ի խեղդ մնաբերեն։

Եւ ընդ այս զի զարմանայցես. զի զմտանիչն, ըզպիղծ և զանամօթ և զանկոր առ ամենեսեան՝ այս պիսիք քարուսկանք ածին 'ի խեղդն կախաղանի։ Եւ Յովհ՝ որ ադամանդեայն էր և քան զվէմ ևս հաստատուն, յորժամ ինչքն ամ 'ի նմանէն վատանէին, և յանհնարին կոտանս մտանէր, և անորդի և անժառանգ մնայր յանկարծակի, և աղբեւր որդանց 'ի մարմնոցն[2] եռայր եղանէր, և զկինն ևս տեսանէր 'ի վերայ յարուցեալ. զամ դիւրաւ 'ի բաց քերէր միանգամայն։ Զանգի տեսանէր զարեկամն՝ զի նախատեին և ոան հարկանէին, և չարաչար կարծիս կարծէին զնմանէ, եթէ վասն մեղաց մատնեալ իցէ 'ի պատիժսն, ապա խռովէր, ապա զայրանայր նահատակն և այրն մեծ և առաքինի։

[1] Յոյնն «Ֆոֆէ»։

[2] 'Ի լուս. 'ի մարմնոյն։

Լ։ Պաւթայ թողեալ զամ զվիշտն՝ զոր վշտացաւ, ընդ բամբասանացն Աեթ խնդրեր, վերժիցիր առներ զնոյն։ " Թ։ Ոչ մուր դամ, ասէ, անիծանել, զի նոր այդպէս ետ հրաման. որպէս զի տեսցէ զվիշտս իմ, և հատուսցէ ինձ բարի՝ փոխանակ անիծիցդ դոքա այսր աւուր "։ Լ։ Պաւղոս ոչ միայն զՀնեալս և զարբարեալս. այլ և զբամբասեալսն յարդէ. " Զի՞ չեցէ՛ք, ասէ, զաւուրսն զառաջինս յորս լուսաւորեցայք, և բազում Հնութիւն չարչարանաց համբերեք՝, նախատանաց և նեղութեանց "։ Պ։ ասն այնորիկ և Ի՞նչ մեծ վարձս խոստացաւ։

Լ։ Զի մի՝ ոք ասիցէ, եթէ աստ ոչ խնդրես վրէժս և ոչ կարկեա զբերանն նոցա, և անդ վարձս տայցես, դնէ ի միջի զմարդասէրսն, զի ցուցցէ՝ թէ և ոչ զնոցա վրէժ ինչ խնդրեաց ՝։ Լ։ թէ ուր անդէն վաղվաղակի առ ոտս եղանէին վրէժք հատուցմանց, ՝ի հանդերձելոցն կրթէր, որչափ և առաւել այժմ. յորժամ լուսաւորագոյն և յայտնի եղև յոյսն, և մեծ և առաւել զգաստութի։ Լ։ տես իսկ ընդ որչափ պատուիրանս դնէ զայս. զի ոչ վայրապար ինչ, այլ յայտ առնէ, թէ չէ հնար այլազգ, եթէ ոչ նախ այնու ՝ամիս կազմեալ և յօրինեալ իցէ, մարթի յայլ և նահատակութիս եղանել։ Պ։ ասն այնորիկ միշտ յառաջնմէն յաջորդն յառաջագոյն հորդէ Հանապարհ պատուիրանացն, իբրև շար խնն ոսկի տողեալ մի ըստ միոջէ զպատուիրանն։ Ի՞նչ յորժամ խնդարհ ոք իցէ, յայտ է՝ թէ ՝ի սուգ է վասն մեղացն։ Լ։ ոք որ սգաւորն իցէ և հեզ, յայտ է՝ թէ արդար է և ողորմած։ Լ։ ոք որ ողորմածն է և արդար, յայտ է՝ թէ մնախսոհ և սուրբ սրտիւ է։ Լ։ ոք այնպիսւոյն պատշաՀ է՝ զի խաղաղարար [2] և սուրբ իցէ։ Լ։ ոք որ զամենայն զուղղութիւն յանձին ցուցանիցէ, այնպիսին և առ Հնութիւն պատրաստագոյն գտանի. և ոչինչ խոովի՝ յորժամ լսիցէ բանս բամբասանաց. և ոչինչ զանդիտի՝ յորժամ բեւր չարչարանս յանձին կրիցէ։

Լ։ արդ յորժամ խրատեաց զնոսա պատշաՀ խրատուքն, դարձեալ Հանդուցանէ զնոսա յայրգանացն

1 Յօրինակին համբերէ։ 2 Յօրինակին խաղաղար։

գովութիւնք։ Վասնզի բարձրագոյն հրամանք էին, և յոյժ մեծամեծք քան զՀնոյն, զի մի խռովիցին ինչ և ամբոխիցին, և ասիցեն թէ զնարդ կարիցեմք զայսպիսի ուղղութիւս յանձին ցուցանել, լուր զինչ ասէ. «Ասուք էք, ասէ, աղ երկրի»։ Օ՛ի ցուցցէ՝ թէ ստէպ ինն տայ զայնպիսի հրամանս, զի ոչ միայն վասն անձանց ինչ կենցաց, այլ վասն ամենայն աշխարհաց լինիցին ձեզ բանք։ Օ՛ի ոչ եթէ յերկուս քաղաքս կամ՝ ի տասն կամ՝ ի քսան, և ոչ՝ ի մի ազգ ուրեք առաքեցից զձեզ՝ որպէս և զմարգարէսն, այլ ընդ երկիր և ընդ ծով և ընդ ամ տիեզերս, որք յար՝ ի յարամբի և՝ ի չարի իսկ կայցեն։ Զա և ասելովն իսկ եթէ «Ասուք էք աղ երկրի», յայտ արար՝ եթէ անհամեալ էր ամենևին ամ բնուի մարդկան, և փտեալ հարեալ՝ ի մեղացն հարուածոց։ Վասն այնորիկ զա մենայն զայսպիսի առաքինութիս՝ ի նոցանէ խնդրէ, որ մանաւանդ առ՝ ի բազմաց դարման կարօղ իցեն լինել պիտանացուք։ Օ՛ի յորժամ հեղն և խոնարհն և ողորմած և արդար, ոչ յիւր անձն միայն կորզիցէ զուղղութիւնն, այլ՝ ի բազմացն օգուտ զգեղեցիկ զայսպիսի աղբեւրս պեղէ՝ բղխել դյստակ ջուր. և յոյժամ սուրբն սրտիւ և խաղաղարար և հալածեալն վասն Ճշմարտութեան, առ հասարակաց շահն ուղղիցէ զիւր վարսն։

Այ՛ի այսուհետև՝ ի սակաւ ինչ Ճգուենս ձգեալ զձեզ համարիցիք, և մի վասն դոյզն ինչ իրաց կարծիցէք զբանն. այլ «Ասուք էք աղ երկրի»։ Այս արդ զի՞նչ արդեօք. զնեխուութիւնն նոքա՞ համեմեցին. և ոչ ուրեք. քանզի չէ ինչ հնար նեխեալ իմիք՝ աղն օգնել, որում և չէ իսկ բաւական։ Այլ որ ինչ նախ նորոգեցաւ, և՝ ի չար հոտոյն սրբեցաւ և աւանդեցաւ նոցա, զայն յաղեալ՝ ունէին պինդ և պահէին։ Օ՛ի նորոգել՝ ի փտութենէ մեղացն՝ այն Վ՛ոչ ուղղութիւն էին. և անդէն՝ ի նոցն չդառնալ՝ այն նոցա փութոյն և տառապանաց գործ։

Տեսանե՞ս, զնարդ առ սակաւ սակաւ ցուցանէ զնոսա ազնուագոյնս քան զմարգարէսն. զի ոչ միայն պա՛ղեստինացւոց աշխարհին լինելոց էին փարդապետք, այլ՝ ամ երկրի. և ոչ վայրապարք, այլապետք, այլ

ահագինք։ Այլ զարմանք այն էին, զի ոչ ողբէին զոք, և ոչ հպատակէին ումեք, այլ կսկծեցուցանէին և իբրև զաղ, և նոյնպէս ցանկալի ամենեցուն լինէին։ Այլ ընդ այդ մի զարմանայք զի զայլս թողեալ՝ և ընդ ձեզ ևեթ խօսիմ, և 'ի մեծամեծ ՃԳուռնս ձգեմ տանիմ. այլ ընդ այն զարմացարուք, եթէ որչափ քաղաքաց կամ ժողովոց կամ ազգաց առաքէլոց եմ զձեզ վերակացուս։ Այլ ոչ զայն միայն կամիմ՝ եթէ դուք ևեթ իցէք իմաստունք, այլ զի և զայլս ևս բաղումս իմաստադոյնս առնիցէք։ Օ՛ի այնպիսեացն յոյժ պարտ է իմաստուն լինել՝ զորոց և այլոց փրկութիւն կախեալ կայցէ. և այնպիսի յաճախագոյն ունել յանձին զառաքինութիւն, որպէս և յայլս ևս փոխել զշահս։ Օ՛ի թէ այնպիսիք ինչ չլինիցիք, և ոչ անձանց իսկ կարէք բաւական լինել։

Այ՛ն այսուհետև դժուարեսջիք, եթէ թախանձէլիք ինչ իցեն բանքդ. զի այլոց անհամելոց մարթի ձեւք գալ 'ի համեստութիւն։ Այլ թէ դուք այնպիսի ինչ լինիցիք, ընդ ձեզ և զայլս ևս կորուսանէք. զի որչափ ինչ իրս յանձն առնուք, նոյնպէս ըստ նմին մեծ փոյթ պարտիք յանձին ցուցանել։ Այ՛ան որոյ և ասէ իսկ. "Եթէ աղն անհամեացի՝ ինքն ի՞ւ յաղեսցի. քանզի և ոչ իմիք յաղթէ, բայց թէ ընկենուլ արտաքս, և կոխան լինել 'ի մարդկանէ"։

Օ՛ի այլք թէպէտ և բեւր անգամ անկանիցին, կարեն հաստանել ներելոյ և թողութ. իսկ վարդապետաց որ զնոյն ախտ ախտանայցէ, յամ պատասխանւոյ զրկեալ գտանի, և զվերջին պատժոյն տուժեալ տայցէ տոկոսս։ Օ՛ի իբրև լսիցեն՝ եթէ յորժամ նախատիցեն զձեզ և հալածիցեն, և ասիցեն բան չար զձենջ՝ մի զանգիտիցեն ինչ, 'ի մէջ առեալ ասէ, զի թէ ոչ առ այս ամ պատրաստագոյն գտանիջիք, 'ի զուր է ընտրուլն ձեր։ Օ՛ի ոչ 'ի բամբասանացն ինչ պարտ է երկնչել, այլ զկեղծաւորակիցսն գովել՝ այն է կասկածանաց. և յայնժամ ասէ անհամիցիք և լինիցիք կոխան։ Այ՛սպա եթէ կայցէք ինայցէք հաստատուն առ 'ի կսկծեցուցանել, յորժամ չար բանս լսիցէք՝ ուրախ լինիջիք[1]. զի այն իսկ գործ է աղի,

[1] 'Ի լուս. լինիցիք։

կսկծեցուցանէին և մորմոքեցուցանել զլոյծս։ Որում 'ի հարկէ իսկ ստէպ զՀետ գան բամբասանք. որ ոչ ինչ կարիցէ ձեզ վնաս առնել, այլ և վկայիցէ եւ հաստատատուութեան ձերում։ Բ՝ալ՝ եթէ երկուցեալք՝ 'ի ձեռս տայցէք զպատշաճն առաքինութեան ձերոյ, եւ անհնարին կրիցէք անարգանս. զի և բամբասիցիք և արհամարհեալք յամենեցունց լինիջիք. զի այն իսկ է կոխան լինել 'ի մարդկանէ։ Բ՝ալ այլ եւ բարձրագոյն օրինակ հանեալ ասէ։

"Դուք էք լոյս աշխարհի"։ Ո՛չ միում ումեք ազգի և ոչ քանից քաղաքաց, այլ ամենայն տիեզերաց, լոյս իմանալի, և առաւել պայծառագոյն քան զարեգական Հառագայթից։ Զ՝որ օրինակ ասն հոգևոր, նոյնպէս և լոյսն հոգևոր. և նախ աղ և ապա լոյս. զի ուսանիցիս՝ եթէ որչափ ինչ իցէ շահ բանիցն կսկծելեաց, և օգուտ 'ի լուսաւոր վարդապետութենէն. զի և մնդէ և չտայ ժողովել. և լուսաւորի՝ և յառաքինութիւն առաջնորդէ։

"Ո՛չ կարէ քաղաք թաքչել՝ որ 'ի վերայ լերին շինեալ իցէ, և ոչ լուցանեն ճրագ՝ և դնեն ընդ գրուանաւ"։ Դարձեալ և այսու իսկ առաջնորդէ ածէ զնոսա 'ի վարուցն հաստատութիւն. և խրատէ կասկած յանձին ունել՝ որպէս զի թէ առաջի աչաց ամենեցուն կայցեն 'ի մէջ տիեզերական թատերոց պատերազմելք։ Ա՝ի յայս և ետ հայիցիք, ասէ, զի այժմ աստս նստիմք, և յանկեան միոջ կողմանն աշխարհի. զի այնպէս լինիջիք երևելիք, որպէս քաղաք մի որ 'ի վերայ լերին կայցէ, և իբրև ճրագ մի 'ի վերայ աշտանակի յայտնի։

Եւ արդ ուր իցեն՝ որ 'ի զօրութենէն Քրիստոսի թերահաւատ լինիցին. լուիցեն զայս, և ընդ մարգարէութեանն զօրութիւն զարմացեալք՝ երկիր պագցեն զօրութեանն նորա։ Ցեռ, որպիսի ինչ խոստացաւ նոցա. որ և յիւրեանց աշխարհին չէին ումեք ծանօթք, զի ընդ ծով և ընդ ցամաք հատեալ անցեալ Հանդիպիցին, և ընդ ծագս աշխարհաց ելցեն բարբառք նոցա. մանաւանդ թէ ոչ իսկ բարբառք, այլ զօրութիւք բարեբարութեց նոցա։ Քանզի ոչ եթէ համբաւք նոցա հասեալ ամ ուրեք՝ առնէին զնոսա յայտնի,

այլ գործոցն հանդէսք. իբրև թեւաւորք լին առաւել քան զարեգական ճառագայթս ընթացեալ ընդ ամ երկիր՝ սերմանելին զնծնպարտութեն լոյս։

Այլ թուի ինձ, թէ 'ի համարձակութի իսկ կրթեալ զնոսա ասա ասելովն, եթէ «Մի՛ կարէ քաղաք թաքչել որ 'ի վերայ լերին կայցէ»։ Այս այսու զիւր զօրութիւն ցուցանէ. զի որպէս նմա անհնար է թաքչել, նոյնպէս և քարոզութեանն անմարթ է լռել։ Զանազի ասայ հալածանս և բամբասանս և նեղութիւնս և պատերազմունս, զի մի կարծիցեն՝ թէ այն կասեցուցանել կարիցէ զնոսա, քաջալերէ զնոսա և ասէ, եթէ ոչ միայն ոչ թաքչիցիք, այլ հասեալ ժամանիցիք ընդ ամ տիեզերս, և այսու իսկ լինիցիք լուսաւորք և նշանաւորք։ Այս այսու զիւր զօրութիւն ցուցանէ. իսկ յաջորդսն զնոցա համարձակութիւն պահանջէ ասելովն, եթէ «Մի՛ լուցանեն ճրագ և դնեն ընդ գրուանաւ, այլ 'ի վերայ աշտանակի. և լուսաւորէ զամենեսին՝ որ 'ի տանն իցեն. այնպէս լուսաւորեսցի լոյս ձեր առաջի մարդկան»։

Այս, ասէ, լուցի զլոյսն. և պահել անշէջ զլուսաւորութիւն՝ ձերոյ փութոյ գործ լիցի. ոչ վասն ձեր միայն, այլ և վասն այլոց՝ որ վայելելոց իցեն դովին լուսաւորութեաբ, և առաջնորդելոց 'ի ճշմարտութիւն։ Զի ոչ կարիցեն բամբասանք ծածկել զձեր լուսաւորութիւնդ, եթէ դուք իցէք 'ի ճշմարիտ վարս. և այսպէս կարող լինիջիք դարձուցանել զտիեզերս, յորժամ արժանի ըստ շնորհացն ցուցանիցիք զձն։ Զի որպէս նա ընդհանուր քարոզիցէ, նոյնպէս և դա ընդ նմին համերեսանակ ընթանայցէ։

Այլ և այլ ինն շահս դնէ 'ի միջի հանդերձելոց փրկութիւնն. յոյժ արկանէ զկասածն 'ի միտս, և յորդորէ ամենեին 'ի փոյթ. զի ոչ միայն, ասէ, զտիեզերս ուղղիցէք ձերովք ուղիղ կարգօքն, այլ և ՅՍ փառաւորութիւն լիցիք պատճառք. զոր օրինակ յորժամ հակառակս ինչ գործիցէք, և զմարդիկ կորուսանիք, և զՅՍ անուն 'ի հայհոյութիւն ածիք։ Այս զիարդ, ասէ, ՅԾ փառաւորեսցի մեւք, եթէ մեք 'ի մարդկանէ բամբասելոց իցեմք։ Այլ ոչ թէ ամենեքեան բամբասիցեն. զի նոքա իսկ՝ որ հեռայցենն կո-

բուսանել զձեզ, ընդ միտս զարմանայցեն ընդ ձեր լաւութիւնն. զոր օրինակ զի որք յայտնի զչարագործս պաշտօն առնելով գովիցեն, և ընդ միտս պարսաւիցեն։ Եւ արդ զնա՞ւրդ, ասէ. առ մարդկա՞ն ակամէ հրամայիցես մեզ ցուցանել կարգս ուղղութիւնն։ Զի պարծանս ինչ մնոցիս։ Ոչ այդպէս, ասէ. քանզի և ոչ յայդ յորդորեցի իսկ՝ եթէ 'ի մէջ բերեալ ցուցանիցէք զքաջութիւնս ձեր. այլ թէ «Լուսաւորեսցէ լոյս ձեր»։ Լուսինքն է, զի բազմանայցէ առաքինութիւնն, յաճախեսցի հուրն, անչափ վառեսցի լոյսն. զի յորժամ այնչափ լուսով [1] իցէ առաքինութիւնն, չէ հնար թէ թաքչել կարիցէ, թէպէտ և բեւեր անգամ կամիցի ծածկել՝ որ առնէն զնա։ Զնա բարս ցուցանիջիք նոցա զվարս, զի մի և յիմիք գտանիցեն պատճառս բամբասանաց. թէպէտ և բեւերք բիւրուց իցեն բամբասանքն, ոչինչ կարիցեն սանանել ձեզ։ Եւ բարուրք իսկ կուչեաց լոյս. զի ոչ այնպէս ինչ նշանաւոր առնէ զմարդ, թէպէտ և բեւեր անգամ թաքչել կամիցի, որպէս առաքինութիւնն հանդէս։ Որպէս զճառագայթս իսկ զգեցեալ՝ այնպէս պայծառաւոյն առնէ. ոչ յերկիրս ծագեալ զփայլատակունս, այլ և քան զերկինս 'ի վեր տարածեալ։

Եւ և միւթարէ իսկ այսու յորդորագոյն զնոսա. զի թէպէտ և վշտանայցէք, ասէ, յորժամ բամբասիցիք, այլ և բազումք իցեն որ փառաւորիցեն վասն ձեր զոհ. և յերկոցունց կողմանց գանձիցէք ձեզ գանձս, և ՝՝՝ փառաւորելոցն վասն ձեր, և ձերով բամբասելոցն վասն ՝՝՝։ Զի մի կարծիցեն եթէ 'ի վայրապար բամբասելոյն վարձք ինչ չիցեն, երկուս խտրոյս եդ 'ի միջի. մի զայն, եթէ «Յորժամ ասիցեն բան չար զձեզ սուտ»։ Եւ միւս և զայն, եթէ «Վասն ՝՝՝»։ Եւ յայտ առնէ, թէ ոչ այն միայն, այլ 'և բարի բանս լսել բազում շահս գործէ առ 'ի փառս ՝՝՝, և հաստատէ զբարուրք յուսոյն զաւետիս։ Զի ոչ այնչափ ինչ կարօղ են բամբասանք չարաց և զայլս ևս խաւարեցուցանել առ 'ի չտեսանել զձեր լոյսն. զի յորժամ անհամիցիք, յայնժամ միայն կո-

[1] Յորինակին յուսով։

խեն զձեզ. և ոչ յորժամ ուղղութիւն ինչ գործիցէք, աղարտել կարիցեն. այլ յայնժամ բազումք իսկ զարմանայցեն՝ ոչ միայն ընդ ձեզ, այլ և ձեւք զՀայրն ձեր փառաւորիցեն։ Այլ ոչ ասաց՝ թէ զնոյն, այլ թէ զՀայրն. զի զՀանդերձելոյ աշխուականութենն նոցա անդէն վաղվաղակի սերմանիցէ սերին. և միանգամայն զիւր հանգիստապատիւ զուգականութիւն ընդ հօր ցուցանիցէ։ Ի վերագոյնն ասաց, եթէ մի արտմիք յորժամ բամբասիցեն զձեզ, զի շատ է ձեզ 'ի մխիթարութիւն այն իսկ՝ զի վասն իմ բամբասիցիք. և ասա զՀայրն դնէ, զի ամ ուրեք զզուգական հաւասարութենն զիւր ընդ հօր յայտ առնիցէ։

ՑՈՐԴՈՐԱԿ

Այսուհետեւ իմացեալ զշահ փութոյս այսորիկ, և 'ի ծուլութենն զվնաս կորստեան մերոյ զսաստիկն և զանհնարին, զի մի՝ երբն մեր հայհոյիցի վասն մեր, և մի գայթագղութի հրեից և հեթանոսաց և եկեղեցւոյն այ լինիցիմք, վարս պայծառագոյնս քան զաբեղակն ցուցցուք։ Եթէ կամիցի ոք զմեզ բամբասել, մի ընդ չար բանսն զչարեսցուք, այլ թէ գուցէ յիրաւի հասանիցէ զբամբասանսն լսել։ Եթէ 'ի չարբիս կեցեմք, թէպէտ և չբամբասիցէ ոք զմեզ, քան զամենեսեան թշուառականք եմք։ Եւ եթէ զառաքինութիւն գայցեմք, թէպէտ և ամ աշխարհ զմենք չար խօսիցի, յայնժամ քան զամենեսեան նախանձելի լինիմք, և զամենեսեան ինքնակամ ձգիցեմք 'ի փրկութիւն։ Վասն զի ոչ եթէ ընդ բամբասանս չարայն, այլ ընդ առաքինութիւն վարուցն հային. և քան զամ փող առաւել յայտնի հնչէ գործոցն օրինակ, և քան զլոյս լուսաւորագոյն՝ վարք պարկեշտութեանն։

Այս թէպէտ և կարի իսկ բազումք իցեն՝ որք բիծ դնիցեն, եթէ զառաջինսն զոր ասացաք՝ յանձին ցուցանիցեմք, հեղս լինել և խոնարհս և ողորմածս և ողջ սրտիւք և խաղաղարարս [1] և բամբա-

[1] Յօրինակին Խաղաղ։

սիցիմք և փոխարէն չԹշնամանիցեմք, այլ և ուրախ
ևս լինիցիմք, ոչինչ նուազագոյն քան զնշանսն ածէ-
ցեմք զմեզ զտեսօղսն. և ախորժելով իսկ ամենեքին
յարիցին 'ի մեզ, Թէ և գազան ոք իցէ կամ դև,
կամ զինչ և իցէ։ Լ՝ու եԹէ իցեն՝ որ զըզուիցեն ըզ-
քեզ, և չխռովիցիս ինչ ընդ այն, մի ընդ այն նայ-
ցիս՝ Թէ և հրապարակաւ իսկ Թշնամանիցեն զքեզ,
այլ զմիտս նոցա քննեա, և տեսանիցես՝ զի գովեն և
զարմանան ընդ քեզ, ազգի ազգի դրուատիս տայ-
ցեն։ Տես զիարդ Լաբոբոդոնոսոր գովէր զման-
կունսն՝ որ 'ի հնոցին էին, Թէպէտ և Թշնամի և
պատերազմող էր. այլ քանզի ետես Թէ պինդ կա-
ցին, յարգէ և պսակէ. ոչ վասն այլ իրիք, այլ զի
նմայն չլուան, և զնա պատուիրանսն պատուէցին։
Լա և ստանայ իսկ յորժամ տեսանիցէ Թէ չմնա-
բեաց ինչ 'ի բաց կայ այնուհետև, կասկածեալ Թէ
գուցէ բաղում պսակաց լինիցի մեզ պատճառք։ Լ՝ու
յորժամ նա 'ի բաց մեկնեսցի, Թէպէտ և կարի ոք
ժանտ և եղծեալ իցէ՝ ճանաչէ զառաքինութիւն, 'ի
փարատել միգոյն որ մածեալ կայր 'ի վերայ. և եԹէ
'ի մարդկանէ խաբիցիս, սակայն յայ գտանես զը-
բուատիս, և մեծամեծ զարմանս գործիցես։

Մի այսուհետև զչարիցիս ինչ և մի 'ի կոր կործա-
նիցիս։ Զանզի և առաքեալքն ոմանց հոտ 'ի մա-
հուանէ 'ի մահ էին, և ոմանց հոտ 'ի կենաց 'ի
կեանս։ Լ՝եթէ դու չտայցես ինչ պատճառս, յամ
բամբասանաց զերծանիցիս. մանաւանդ Թէ երա-
նելի ևս լինիցիս։ Պայծառացիր պարգևօքն և վա-
րուք, և չգրիցես ինչ ամենևին զբամբասանսն։ Զան-
զի չէ և չէ իսկ մարԹ այնմ որ զառաքինութիւն գայ-
ցէ՝ չունել բազում Թշնամիս. այլ չէ ինչ փնաս այն
առաքինւոյն. քանզի այնպիսեաքն առաւել պայծա-
ռանայ։

Օ՝այս ամ զմտաւ ածեալ, միումն միայն գէտաին
կալցուք, հաստատութիւն կարգել զգնացս և զկեանս
անձանց մերոց. և այնպէս լինիցիմք առաջնորդք
խաւարելոյն՝ 'ի կեանսն յաւիտենից։ Զանզի այն-
պիսի է զօրութիւն լուսոյն. ոչ աստ միայն լուսաւորել,
այլ և անդր առաջնորդէ այնոցիկ՝ որ զհետ նորա

երթայցեն։ Յորժամ տեսանիցեն թէ զամ ինչ արա-
համարհեցաք, և 'ի հանդերձեալսն միայն պատրաս-
տեցաք զանձինս, յառաջ քան յամ բանից 'ի գոր-
ծոցն մերոց հաւանիցին։

Ո՞ որ իցէ այնչափ անմիտ, որ տեսանիցէ զայն՝ որ
յերկինն և յերանդն 'ի փափկութիւն և 'ի մեծութիւն
էր, զամ 'ի բաց մերկացեալ, և քաղցի և աղքա-
տութեան և վշտամբերութիւն միտ եդեալ, և ընդ-
վիշտս և ընդ արեան և ընդ մահու և ընդ ամ-
որ ինչ տաղնապութիւն իրք կարծիցին՝ պատրաստեալ
'ի մարտ պատերազմի, և չառնուցու այնու ամի ըլ-
հանդերձելոցն օրինակ։ Այ՝ եթէ զաշխարհս կենաց
զգածնուցումք, և եւ 'ի ներքս արկանիցեմք զան-
ձինս, զիա՞րդ կարիցեն հաւանել եթէ յայլ տարաշ-
խարհական ճանապարհ փութայցեմք երթալ։ Այ-
այնուհետև ո՞ր պատասխանատուութիւն կայցէ մեզ,
յորժամ որչափ վճարեցին մարդկեղէն կարծիք հե-
թանոսացն իմաստնովք, չվճարիցէ 'ի մեզ երկիւղն
ա՞յ. քանզի և 'ի նոցանէ ոմանք յընչից մերկացան, և
զմահ առ ոչինչ համարեցան, զի մարդկան քաջութիւն
օրինակ լինիցին. վասն որոյ և ընդունայն իսկ եղև
յոյս նոցա։ Այ արդ զմեզ ո՞ր բան զերծուցանել կա-
րէ. զի այսչափ ինչ առաջի կայ, և այսպիսի զգաս-
տութիւն բացեալ դուռն, և այնչափ ինչ չվճարիցեմք՝
որչափ ինչ նոքա վճարեցին. այլ և զանձինս և զայլս
ընդ մեզ կորուսանեմք։ Այ՝անզի ո՛չ այնչափ վնաս
առնէ հեթանոսն՝ որ զանօրէնս գործիցէ, որպէս
քրիստոնեայն՝ որ զնոցն առնիցէ։ Այ յիրաւի իսկ.
զի նոցա ապականեալ կարծիք են, և մերքս՝ շնոր-
հօքն ա՞յ՝ և ամենաշնորհն եւ պարկեշտ և երևելի
թիւն։ Այ՝անզի և յորժամ նախատեալ կամին զմեզ,
և մեծացուցանել զթշնամանսն, զայս իմն յառաջ
բերին, թէ և քրիստոնեայ եւս է։ Այ՝ա և ասէին իսկ
ո՛չ զայն, եթէ ո՛չ մեծարանաց զկրօնսս համարէին։

Ո՞չ լուար՝ ո՛րչափ ինչ և որպիսիս պատուիրեաց
Տէր։ Այ արդ երբ կարիցես վճարել ինչ 'ի պատ-
ուիրանացն, յորժամ զամ թողեալ՝ և շուրջ գայցես
տոկոսիս ժողովել, զփոխոցն զվաշխս զետեղել[1], վա-

1 'Ի լուս. ՀԵՏԷԼ։

Հառացն նիւթս յաշխատել, զերդաստանաց դասակս գնել, յարծաթոյ սպաս կազմել, զեօղս և ապարանս և անդաստանս ստանալ։ Այլ երանի թէ զայս միայն։ Յորժամ յանօգուտ յայնպիսի ժրութիւն՝ և ապիրատութիւն ևս յաւելուցուս, զսահմանս այլոց հատանել, զտունս յափշտակել, զաղքատութիւն կեղել, զքաղցն սատկացուցանել, երբ ժամանեսցես զէթ զարտաքին անդաստակս պատուիրանացն կոխել։ Այլ իցէ ժամանակ՝ զի և աղքատացն ողորմիցիս. գիտեմ և ես։ Այս և անդ բազում ճնաս կայցէ, եթէ առ պարծանս ինչ և առ մնապարծութիւն զայն առնիցես. զի բարի գործովքն չշահիս ինչ։ Այլ զինչ քան զայն թշուառութիւն կայցէ, յորժամ և 'ի նաւահանգստեանն նաւաբեկ լինիցիս։

Այլ արդ զի մի այնպիսի ինչ գիպիցի, յորժամ բարի ինչ գործիցես՝ մի յինէն խնդրիցես շնորհս. զի զոհ ունիս պարտապան։ «Տուք փոխ, ասէ, այնոցիկ՝ յորոց ոչ ունիցիք ակն առնելոյ»։ Յայտ կայ պարտապանն. ընդէր զնա թողեալ՝ յառնէ միոջէ և տառապելոյ և 'ի խօլելոյ պահանջիցես։ Այլ թէթ ցանուցո՛ւ պարտապանն յորժամ պահանջիցի. միթէ աղքա՞ռ ոք իցէ. միթէ չունիցի յանձին հատուցանել։ Ընտեսանիցես զանբաւ գանձս նորա. չհայիցես 'ի բազում մարդասիրութիւնն. զնա իսկ կալ և պահանջեա՛. քանզի ուրախ լինի ընդ պահանջելն։ Այլ թէ ընդ իւր պարտուցն զայլս տեսանէ պահանջեալ, թշնամանս հմարի անձին։ և այնուհետև չհատուցանիցէ քեզ, այլ և պատուհասիցէ յիրաւի, եթէ զո՞ր ապաիտաւորութիւն ըստգտեր զնմ, յորմէ՞ աղքատութիւն 'ի վերայ հասեր, զի զիս թողեր, և յայլոց վերայ դիմեցեր. այլումի փոխ ետուր, և յայլմէ պահանջես։ Ամենայն և մարդ իցէ՝ որ էառն, այլ ո՞ւ հրամայեաց տալ. ինքն առաջին պարտապան, և ինքն երաշխաւոր կամի լինել։ Իւրաքանչիւր պատճառս տայ քեզ՝ յամ կողմանց 'ի նմանէ պահանջելոյ։ Այլ թէ այսչափ դիւրութիւն և ընչաւետութիւն գտանիցես, ասէ, զի զիս թողեր, և 'ի չքաւորէն կամիս առնուլ։

Ա՛ման էր ինձ ցոյցս առնես, յորժամ աղքատին ողորմիս. միթէ ե՞ս ինչ ստիպեցի զքեզ թէ տուր.

միթէ յինէն լուար՝ զի յինէն պահանջես։ Այս աւ
սաց, թէ «Որ ողորմի տնանկի՝ այ փոխ տայ»։ Այ
փոխ ետուր, զնովաւ եկ։ Այլ չտայ, ասէ, զամ
ատտ։ Այս զայն վասն քոյոյ օգտի առնէ։ Վասնզի
այնպիսի է պարտապանն, ոչ իբրև զմարդիկ՝ զփոխն
զոր առ ևեթ փութայ հատուցանել, այլ և բազմա
պատիկ տալ. և զոր տալոցն իցէ՝ յամուր տեղւոջ
պահէ. զկէսն ատտէն հատուցանէ, և զկէսն անդ
համբարեալ պահէ։

Օ այս ամ իմացեալ՝ արասցուք բազում ողորմու
թիւնս, և ցուցցուք յաձախ մարդասիրութիւն, և ըն
չիւք և իրօք։ Այս հայեսցուք ի նեղեալսն, որք գան
ի հրապարակն ընդիցեն. եթէ բանիւք իցէ՝ եթէ
ինչ տալով՝ մի դանդաղեսցուք զերծուցանել զնոսա
ի տաղնապէն։ Վասնզի գոն և ընդ բանից վարձք.
և առաւել յորժամ յոգւոց որ հանիցէ. և զայս ե
բանելին Յովբ ասէ, եթէ «Այս ի վերայ ամ տնան
կի լայի և յոգւոց հանէի»։ Յորժամ տեսանիցես
զոք ի վիշտս, արտասուեսջիր։ Իսկ եթէ ընդ յոգ
ւոց հանելոյ վարձք կայցեն, յորժամ բանք ևս և
արդիւնք լինիցին, զմտաւ ած՝ թէ որպիսի ինչ հա
տուցումն գործիցի։ Վասնզի և մեք թշնամիք էաք
այ, և հաշտեցոյց միածինն. զանձն եդ ի միջի, և
ընդ մեր էարը գան. նա և ի մահ ևս վասն մեր մատ
նեցաւ։ Փութասցուք և մեք ապրեցուցանել զայնո
սիկ՝ որ ընդ բազում վշտոք իցեն։ Այլ մի, որպէս
ցայժմ առնէաք, յորժամ տեսանէաք զոմանս ի
միմեանս յարձակեալ, զմիմեանս զգեանսի հարեալ,
կայաք և ծաղր առնէաք զընկերացն քարուկանուն
թիւնս. և իբրև զստանայական թատերք բակ ա
ռեալ կայաք և հայէաք. և զինչ քան զայն այլ ինչ
անպատրաստութիւն կայցէ։

Տեսանես, զի կագին, զմիմեանս ուտեն, յարձա
կին, այր զընկեր զգեանսի հարկանեն, զՀանդերձս
պատառեն, զերեսս խոթարեն. և դու կաս հան
դարտիկ և ծաղր առնես։ Այնիթէ աչքդ կուրիցին,
միթէ գագանք մարանցիցին, միթէ օձք զմիմեանս
ուտիցեն։ Արդիւն են որ ամենեքին հաղորդակիցք
քո իցեն, եղբարք և անդամք քո։ Այն կայցես նայիլ

ցիս, այլ համոզակեր անկանիցիս։ Մի կայցես և ծաղը առնիցես, այլ 'ի միմեանց քակեսջիր։ Մի զայլս 'ի քարուսկանան կոչիցես, այլ և զժողովեալսն 'ի բաց մերժեսցես, և զնոսա 'ի միմեանց քակեսջիր։ Հանգի անամոթից և չկեցուաց է կայն և ծաղը առնել զայնպիսի նշաւակութիւն. վատթարաց և իշոց անխօսից։ Ցեսանես զմարդ 'ի խայտառակն, և չհամարիցիս զայն անձինդ 'ի քարուսկանս, և չանկանիցիս 'ի մէջ, և չիլուզանիցես զձակատն սատանայի. զի 'ի քակէլն վկուիսն մարդկեղէն և նա վէրս առեալ դնայցէ։

'Ի մէջ անկանիցիմ, ասէ, և համոզակեր լինիցիմ, զի ես ևս վէրս առից։ Համոզակեր խրատեմ լինել, և ոչ վէրս առնուլ. բայց թէ և այնպէս ինչ պատահիցէ, ընդ մարտիրոսութեան համարեն քեզ իրքն. զի վասն ոյ կրեցեր զաբչարանսն։ Իսկ եթէ դանդաղիցիս գան ըմպել, զմտաւ ածջիր՝ զի քո տէրն վասն քո և 'ի խաչ չդանդաղեցաւ ելանել։ Հանգի նոքա արբեալ են, և ցնորեալ 'ի բռնութենէ ցասմանն, և կարօտ քում օգնականութեան՝ որ ողջդ ես, և որ զբրկէն և որ զբիկիցեն. մին զի ապրիցի 'ի լկանացն, և միւսն զի ցածնուցու 'ի չարիսն գործելոյ։ Ոչ՝ ոչ երթ, և կարկառ ձեռն դու որ լուրջդ ես՝ արբեցելոցն. զի չար է ցասմանն արբեցութեան քան զդինւոյ։

Դատեսանիցես զնաւորդս, որ զայլ նաւորդս նաւակոծեալս տեսանիցեն, պարզեն վաղվաղակի զառագաստն՝ և փութան անդր հասանել, զի կարասցեն զարուեստակիցսն 'ի տագնապէն ապրեցուցանել։ Հանթէ արուեստագէտք առ արուեստակիցսն այնչափ խնամակալութիւն ցուցանեն, որչափ և առաւել որ միոյ բնութեան հաղորդակիցք իցեն՝ զնոսն պարտին առնել։ Հանգի և ասա նաւակոծութիւն է։ և չար քան զայն. կամ հայհոյէ կամ ինաս առնէ կամ զնամ ցասումն թափիցէ։ Հանթէ սուտ երդնուցու՝ ամ այն 'ի ցասմանն բռնութեէ է, և դարձեալ 'ի գեհենն արկանելոյ արժանի լինիցի։ Հանթէ խոցիցէ կամ սպանանիցէ իսկ, և յայտ է թէ այս նաւակոծութիւն չար է քան զայն։ Վասն թէ երթ վաղվաղակի, ցածն զմբրիկն, և յարիշտակեա զընկղմեալսն 'ի ծփանաց

ծուլուն։ Լ՝Ջ և խանդաբեռ զԹատրն տատանայի. և մեկուսի առեալ զերբաքանչիւր ոք 'ի նոցանէ՝ տուր խրատ, ցաճուցանել զբոցն բորբոքեալ, և դա դարեցուցանել զալիսն կուտակեալս։ Լ՝Ջ Թէ կարի իսկ խարոյկն բորբոքեալ իցէ և հնոցն վառեալ, մի զանգիտիցես. քանզի բաղում օգնականս ունիս շինելոյ, և ձեռնտուս ցաճուցանելոյ՝ Թէ միայն սկիզբն առնիցես. և նախ քան զամենեսեան՝ զի զՅոհ իսկ տէր խաղաղարարութեան ունիցիս։ Լ՝այց զի նախ դու սկիզբն առնիցես Թօթափելոյ զբոցն, այնուհետև այլք բաղումք 'ի Թիկունս հասանիցեն. և ընդ ուղղութեն որ յամենեցուն զործիցի՝ զվարձս դու առնուցուս։

Լ՝ուր զինչ պատուէրս պատուիրեաց Լ՝ՅՈ հրեիցն, որք ընդ գետին ԼԵԹ քարշէին. «Լ՝Թէ տեսանիցես, ասէ, զգրաստ Թշնամւոյ քո անկեալ բեռամբ՝ մի զանց առնիցես»։ Լ՝Վեպէտ և զգրաստն անկեալ յարուցանել կարի ԹԵԹԵԼագոյն է քան զարս 'ի կուուի 'ի միմեանց Թափել։ Լ՝Թէ զԹշնամեացն զգրաստ ընդ նոսին յարուցանել պարտ իցէ, սրչափ ևս առաւել զբարեկամացն զոգիսն ընդ նոսին կանգնել. մանաւանդ յորժամ անհնարին կործանումն իցէ։ Զ՝ի ոչ ԼԵԹ 'ի տիրմ անկեալ Թաղելին, այլ 'ի հուր դեհենի, որ Չհանգարտիցին բեռանց ցասմանն։ Լ՝ու դու տեսանիցես զեղբայրն անկեալ ընդ բեռամբ, և զստատնայ հարեալ 'ի վերայ՝ զխարոյկն բորբոքեալ, զանց առնիցես իբրև զանաղորոյն և զանողորմ. զոր և յանասունսն առնել չէ առանց պատժոյ։

Շ՝ամարիան ետես զանծանօթն և զօտարն 'ի նմանէ՝ և չարաբ զանց, այլ և 'ի գրաստն իւր ԼՀան նստոյց, և 'ի պանդոկին տարաւ ինքոյց, և բժիշկ 'ի վարձու կալաւ, և ետ ինչ և խոստացաւ տալ։ Լ՝ուր դու ոչ յաւազակաց ԼԱԿեալ տեսանիցես, այլ 'ի գիւաց բանակաց միջն ցասմամբ պաշարեալ. ոչ յանապատի ուրեք, այլ 'ի շինամիջն և 'ի հրապարակս. ոչ գրաստ հասանէ 'ի վարձու առնուլ, և ոչ հեռի ուրեք Ճանապարհ յուղարկել, այլ բանս միայն խօսել. և դանդաղիս, և յապաղես, և զանց առնես անագորոյն մնօք և անողորմածութեամբ. և զիարդ ու-

նիցես ակն երբէք զնոծ ածել ընդ քեզ 'ի հաշտութիւն։
Լսայցից և առ ձեզ՝ որք նշաւակիքդ, և քարուսակ
կայք 'ի հրապարակս. և ցքեզ իսկ ասեմ, որ ակն
ցեսդ և զրկիցես և դան հարկանիցես, այսր անդր
քարշիցես, աքացիցես և խածանիցես։ Խոշ վայրե-
նի եղեր, և իշավայր անապատի. և չամաչիցես և
չկորանայցես, որ զդազանացն բարս առեր, և վտա-
ռանդի ետուր զաշնուականութիւն։ Լիթէ աղքատ
իցես, այլ ազատ ես. և եթէ ձեռադէտ ինչ, սակայն
քրիստոնէեայ ես։ Դա զի և աղքատն իսկ իցես,
յայն սակս կարևոր պէտք են հեզ և հանդարտ լինել
լոյ։ Որանզի մեծատանցն են կռիւք՝ և ոչ աղքա-
տաց. մեծատանցն՝ որոց բազում վտանգք պատե-
բազմաց 'ի միջի կայցեն։ Դու որ զհեշտականութիւն
մեծութիւնն չունիցես, ընդէր մեծատանցն օրինակի
յածեալ շրջիցիս՝ կուտեալ անձին թշնամութիւնս և
հակառակութիւնս. և խեղդես և մղձկես զեղբայրն,
և քարշես առաջի ամենեցուն 'ի հրապարակի. և չհա-
մարիցիս՝ եթէ դու աւելի խայտառակ կաս՝ նման-
նեալ անասնոց յանդգնութիւն. մանաւանդ թէ ևս
չար քան զնոսա եղեր։ Որանզի նոցա ամ ինչ հասա-
րակաց է. առ միմեանս մակաղին, և ընդ միմեանս
պառակ պառակ արածին. և մեր չիք ինչ հասարա-
կաց, այլ ամենևին օգտեալք և քակեալք 'ի մի-
մեանց. հանապազ կռիւք, միշտ հակառակութիւք,
բամբասանք, ատելութիւք, թշնամանք. և ոչ յերկ-
նից ակն ածեմք՝ յոր հասարակն ամենեքեան կոչե-
ցաք, և ոչ յերկրէ՝ զոր հասարակ ամենեցուն ետ.
և ոչ 'ի բնութիւնս, զի մի բնութիւն է ամենեցուն. այլ
զամ ինչ ցասումնն և ընչիցն ցանկութիւն 'ի քարշ ար-
կեալ տանին։

Զտեսանիցես զայն, որ բեւր կշիռ արծաթոյն
պարտ էր, և յետ այնչափ պարտուցն թողութեան՝
խեղդեր և մնդեր զիւր ծառայակիցն վասն հարիւր
դահեկանի, որպիսի պատիժս կրեաց, և մատնեցաւ
անմահ տանջանացն։ Զերկնչիցիս յօրինակէն, դու-
ցէ և դու զնոյն կրիցես. քանզի և մեք բազում
պարտս պարտիմք Տոնն. այլ սակայն անսայ և երկայ-
նամիտ լինի, և ոչ ստիպէ՝ որպէս և մեք զծառայա-

կիցն, և չխեղդէ և պնդէ։ Այս և թէ սակաւ ինչ մնան զպարտուցն կամեցեալ էր պահանջել, վաղուց իսկ կորուսեալ էաք։

Օ այս ամ զմնաւ ածեալ, սիրելիք, խոնարհեցուսցո՛ւք զանձինս, և ընդ հարկս պարտապանացն մերոց. զի թէ ցածնուցումք, մեծի թողութիւն պատճառաք լինիցին մեզ. սակաւ ինչ տուեալ՝ և բազում առնուցուք։ Այնո՛ւր 'ի հարկէ պահանջիցես, որում պարտն էր՝ թէպէտ և նա տայր՝ քեզ ընդհարել, զի յայլ առնուիր զամ։ Զոր աւագիկ ամենեքին իմն յանդգնեալ վիճիս և հարստահարես, զի բնաւին իսկ քեզ թողութիւն ինչ մնան ոչ մնայցէ։ Այլ թուի թէ ընկերին ինչ ՀԼսաս առնիցես, և ոչ գիտես՝ եթէ զանձն ընդ սուր հանես, և զդեհենին տանջանսն բորբոքես։ Այլ թէ ասա սակաւիկ մի հանդարտիցես և ներիցես, մեղմագոյնս առնիցես անդ զպատիժս տանջանացն։ Այլ և ՀՀՀ իսկ յայն սակս կամի զմեզ իշխանս լինել առատութեան, զի անտի առնուցու պատճառս բազմապատիկ հատուցանելոյ մեզ։

Որչափ պարտապանս ունիցիս՝ եթէ ընչից և եթէ յանցանաց, և թողուցուս, յոյս պահանջեա զիսիսա ընդ այնպիսի առատութեան։ Զանազի մինչ պարտապանքն պարտիցին քեզ, չունիս զՀՀՀ պարտապան. իսկ եթէ նոցա թողուցուս, ապա կարես զՀՀՀ ունել և պահանջել բազում առատութիւն ընդ այնպիսի հանդարտութեան հատուցմունս։ Օ՛ի թէ մարդ որ յորժամ անցանիցէ, և տեսանիցէ զքեզ՝ զպարտապանն կալեալ, և աղաչիցէ՝ զնա թողուլ, և ընդ նմա ունել այնուհետև զամսոր զպարտուցն, չկայ այնուհետև յուրաստ՝ յետ զպարտապանն յերաշխի առնելոյ և արձակելոյ, թէ չիցեմ քեզ պարտապան։ Իսկ ՀՀՀ որ յանձն առեալ ընդ պարտապանին՝ զիարդ ոչ բազմապատիկ հատուցանիցէ, յորժամ վասն նոցա հրամանաց՝ զպարտապանսն մեր առանց խօսելոյ [1] և պահանջելոյ արձակիցեմք երթալ ազատս 'ի պարտուցն։

Այլ արդ մի 'ի ժամանակեան 'ի շահն հայիցիմք՝

1 'Ի լուս. Խ-ՀԷ, Թերևս Խ-ԷՅ։

որ 'ի պարտուցն պահանջելոյ մթերիցին, այլ 'ի վերնասն զոր 'ի հանդերձեալ աշխարհին ընդ այնր կրկի-ցեմք, զուցէ յանմահ բարութեցն վրիպեցուցանի-ցեմք զանձինս։ Այլ զի 'ի վերոյ քան զամենեսին գտանիցիմք, շնորհեսցուք զինչս, և թողցուք զյան-ցանս պարտապանացն, զի մեղմագոյնս անձանց պատ-բաստեսցուք զպատիժն. և զոր ոչ կարացաք այլովք առաքինութեամբն վճարել, զայն յիշելով զյանցանն ընկերացն՝ վճարեսցուք. զի և զյաւիտենից բարու-թիւն վայելեսցեմք շնորհօքն և մարդասիրութեամբն մերոյ Տէր Յիսուսի. ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ

« Մի՛ համարիք, եթէ եկի լուծանել զօրէնս և զմարգարէս »։

Ո՞ՌՔ զայս կարծէք, կամ՝ ո՞ք սմին լինէք մեղադիր, զի այսմ առնիցէ զդիպող պատասխանին. քանզի և ոչ յասացելոցն ինչ ծնանին այսպիսի կարծիք. զի հրամայելովն հեզս և հանդարտս և ողորմածս և սքս սրտիւք լինել, և վասն արդարութեան մարանչել, ոչ այսպիսի ինչ երևէր, այլ ամենևին հակառակ նոքին։ Այլ արդ ընդէր ասիցէ զայս։ Ոչ՝ ընդ վայր և ոչ վայրապար. այլ զի մեծամեծս քան զՀինսն դնելոց էր օրէնս պատուիրանաց։ « Լուարուք զի ասացաւ առաջնոցն՝ եթէ մի սպանանիցես. բայց ես ասեմ ձեզ՝ թէ և մի բարկանայք իսկ ». և այսու ՇՈՒՇԵՂԷՆ ԻՄՆ և երկնաւոր առաքինութեան հորդէ Ճանապարհ. զի մի նորն ինչ խռովեցուցանիցէ զոգիս լսողացն և 'ի կռիւ պատրաստիցէ բանիցն ասացելոց, զայսպիսի ուղղութեան յառաջագոյն կազմէ։

Օ՛ի թէպէտ չկատարէին զօրէնսն, այլ ինամ իմն ունէին ընդ օրէնսն. զոր արդեամբքն հանապազ լուծանէին, զնորին նշանագիրսն անշարժ կամէին պահել, և ոչինչ այլ յաւելուլ։ Բայց և զյաւելուածս իշխանացն յանձն առնուին, ոչ 'ի բարի ինչ, այլ'ի վատթար անդր. մինաւանդ զՀարց և զմարց պատուիս՝ զոր միշտ իւրեանց յաւելուածովքն խախտէին. և այլ ինչ բազում՝ որ 'ի նեբքս կայր, լուծանէին վայրապար իւրեանց յաՃախութեանքն։ Այլ քանզի ՎՐԾ չէր 'ի քահանայական ցեղին, և զոր ուսուցանելոցն էր՝ յաւելուած էր, ոչ առ 'ի նուազեցուցանել, այլ առ յոլովել զառաքինութիւնն, ծանուցեալ յառաջագոյն՝ եթէ երկոքեան սոքա խռովեցուցանելոց էին գնոսա, նախ քան զայսպիսի աքանչելի օրէնս գրել՝ հանէ 'ի միջոց զայն ինչ, որ զնոցա միտն խաբ-խաբելոց էր։

Օ՛ինչ իցէ՝ որ խարխարէրն և ընդդէմ բախէր։ Կարծէին եթէ զայն ամ ասելով՝ զՏէն օրէնսն նոցա կամիցի 'ի միջոց բառնալ. արդ զի զայսպիսի կարծիս բժշկիցէ, ոչ միայն յայսմ վայրի՝ այլ և 'ի միւսմ կողմանէ, քանզի և ամ հակառակ այ ասէին զնա, այնու զի զշաբաթսն չպահէրն, զի ողջացուցանիցէ զայսպիսի կարծիս, դնէ բազում պատասխանիս 'ի մէջ։ Օ՛կէսսն՝ որ իւր իսկ պատշաճէին. զոր օրինակ յորժամ ասիցէ, եթէ "Հայր իմ մինչև ցայժմ գործ գործէ, և ես գործեմ"։ և զկէսսն ըստ բազում զիջանելոյ ըստ նոցա. յորժամ զոչխար լուծեալ 'ի կապոյ 'ի շաբաթու 'ի մէջ բերիցէ, կամ հանեալ 'ի խորխորատէ, և նորա փրկութիւնն ցուցանիցէ զօրէնսն խախտեալ. և զթլփատութիւնն յիշեցուցանիցէ, նովիմբ զնոսն գործեալ՝ յայտ առնէ։ Զ՚ սոն որոյ և խոնարհագոյն ևս բանս խօսիցի, զի որով կարծէիսն ամ հակառակ այ՝ զայն 'ի բաց բառնայցէ։

Զ՚ սոն այնորիկ իսկ բազում մեռեալս բանիւ միայն յարոյց. և յորժամ զ՚ ազարն կոչէր արտաքս՝ և աղօթս ևս յաւելոյր։ Լ՚չ զի մի այնու նուազագոյն քան զնոսոն կարծիցի, առ ուղղելոյ զայնպիսի կարծիս՝ յարէ 'ի նոսն, եթէ "Օ՛այս վասն ժողովոյս՝ որ շուրջ կան՝ առնեմ, զի հաւատասցեն՝ եթէ դու ա՚ռաքեցեր զիս"։ Լ՚չ այնպէս ոչ ամ ուրեք իշխանութիւ գործ գործէ, զի զնոցա տկարութիւն ուղղիցէ. և ոչ ամ ուրեք յաղօթս կալով, զի մի վերջնոց թողուցու չար պատճառս 'ի միջի՝ որպէս թէ տկար ոք և առանց զօրութեան իցէ։ Բ՚ս լեառնէ զայս ընդ այսմ; և զայն ընդ այսմ։ Լ՚չ ոչ վայրապար ինչ, այլ ըստ պատշաճիոյ իւրոյ իմաստութեան։ Օ՛ի զմեծամեծսն իշխանութիւ գործէր. և յորժամ խոնարհագոյնս ինչ առնէր՝ յերկինս հայէր։ Օ՛մեղս թողուլ, և զծածուկս յայտնել, և զդրախտն բանալ, և զդևս հալածել, և զբորոտս սրբել, և զծովն սանձել, և զմեռեալս յարուցանել, և բազում և այլ ինչ այսպիսիս հրամանաւ միայն կատարէր։ Լսկ յորժամ

1 'Ի լուս. ընդ գործ գործեալ։

զկարի զիրքրն քան զայսոսիկ, 'ի սակաւ հացէ բա-
զում հաց աճեցուցանել կամէր, ընդ երկինս հայէր.
զի յայտ արասցէ եթէ ոչ վասն տկարութեանէ ինչ առ-
նէր։ Այր զմեծամեծսն կարօղ էր առնել իշխանութիւն,
զիարդ 'ի փոքունս աղօթից կարօտանայր։ Այլ որ-
պէս յառաջագոյնն ասացի, զի զնոցա յանդգնութիւնն
ըմբերանիցէ։

Օ սոյն և բանիւքն ցուցանէ. զի յորժամ լսիցես
խոնարհագոյն բանս խօսեալ, զնոյն 'ի միտ առնու-
ցուս. քանզի բազում և բանից ինչ և գործոց այս-
պիսեաց են պատճառք։ Այն զի մի օտար իսկ կար-
ծիցի յայ. և դարձեալ զի զամենեսեան խրատիցէ
և բժշկիցէ. և զի խոնարհութիւնս ուսուցանիցէ. և
զի մարմինն իսկ էր զգեցեալ. և զի չէր մարթ զամ-
ինչ վաղվաղակի հրէիցն ասել. և զի ուսուցանիցէ
մի ինչ մեծամեծս զանձանց կարծել։ Ա ան այսր ամի
բազում բանս խոնարհութիւնքն զանձնէ խօսի։

Օ և յորժամ ինքն ընդ հրեայս խօսէր, "Յառաջ
քան զլինելն Աբրահամու եմ ես" ասէ։ Իսկ յոր-
ժամ աշակերտն զնմանէ ճառէր, "Ի սկզբանէ, ասէ,
էր բանն. և բանն էր առ ած. և ած էր բանն"։
Այլ դարձեալ թէ զերկինս և զերկիր և զծով և
զամ երևելիս և զանտեսանելիս՝ նորա իցէ արարեալ,
ինքն ինչ յայտնապէս ոչ ճառեաց. իսկ աշակերտն
մեծաւ համարձակութիւնք ոչինչ խորշեցաւ. այլ մի ան-
գամ և երկիցս և բազում անգամ զնոյն ասաց, եթէ
"Ամենայն ինչ նովաւ եղև. և առանց նորա եղև և
ոչինչ. և յաշխարհի աստ էր, և աշխարհ նովաւ
եղև"։

Այլ զի՞ զարմանաս, եթէ այլք զնմանէն մեծամեծս
ճառեցին, և ինքն զանձնէ ոչինչ այնպիսի. ուր ար-
դեամբք իսկ ցուցանէր, թէպէտ և ոչ բանիւք յայտ-
նէր։ Այլ զի զմարդն իսկ արարեալ էր, կուրիւն՝
զորոյ ծեփեաց զաչս կուռին և եբաց, յայտ արար։
Յորժամ վասն 'ի սկզբանէ արարածոյ մարդոյ բանք
էին, ոչինչ յայտնապէս ասաց, թէ ես արարի. այլ
"Որ արարն, ասէ, 'ի սկզբանէ՝ արու և էգ արար
զնոսա"։ Այլ զի զաշխարհ նորա արարեալ էր,
ձկամբն, և զկնուռն զոր 'ի ջրոյն արար, և հացիւն

զոր բազմացոյց, և ալեօք ծովուն զորս կարկեցոյց, և ճառագայթիւք արեգականն զորս մթացոյց 'ի խաւին, և բազում և այլովք այսպիսեօք յայտ արար։ Այլ բանիւք ինքն զայսպիսեայ ինչ յայտնագոյն ոչ ճառեաց. իսկ աշակերտքն յաճախագոյնս բարբառին, Յովհաննէս և Պաւղոս և Պետրոս։

Իսկ եթէ նոքա՝ որ ցայգ և ցերեկ լսէին զիսուս նորա, և տեսանէին զսքանչելի գործսն, որոց բազում անգամ առանձինն մեկնէր զառակս, և զօրութիւն ևս ետ զմեռեալս յարուցանել, և այնպէս աբար կատարեալս, մինչ զամ ինչ վասն նորա թողուլ, և նոքա յետ այնչափ զգաստութեան և առաքինութեան և իմաստութեան՝ ոչ կարէին ամի հանդարտել. իսկ զիարդ հրեական ռամիկն, որք յիմաստութենէ անմասն էին՝ և յայնպիսի առաքինութենէ զրկեալք, զիարդ ոչ զնա օտար յամենեցունցն այ համարէին, եթէ ոչ այնչափ ամենևին ըստ նոցա զիջեալ էր։ Այս և 'ի շաբաթն լուծանել՝ ոչ նախամեծար իմն օրէնսդրութիւն զայն համարէր, այլ պէսպէս և բազում պատասխանիս յօդէր։ Իսկ եթէ յորժամ զմի պատուիրանն միայն լուծանելոց էր, այնչափ բազում մտաբերական բանս 'ի գործ արկանէր, զի մի զայրացուցանիցէ [1] զլսօղսն, որչափ ևս առաւել յորժամ ամենևին իսկ յողջ օրէնսն յաւելայր կատարեալ օրէնսդրութիւն, պարտ էր ազգի ազգի հնարս հնարել առ ողջել՝ զի մի խռովեցուսցէ զլսօղսն յայնմ ժամու։ Զմին իրի իսկ և ոչ վասն ճծութեան իւրոյ երևի ճառեալ յայտնի ամ ուրեք. զի թէ օրինացն յաւելուած այնչափ խռովէր զնոսա, որչափ ևս առաւել թէ զանձն ճծ էր ցուցեալ. վասն այնորիկ բազում խոնարհագոյն բանս ճառէր զիւրոյ ճծական պատուոյն։

Այլ քանզի յօրինացն յաւելուած մերձ էր այնուհետև ելանել, բազում ինչ յառաջագոյն առնէ գործ ուղղութեաց։ Օ՛ի ոչ մի անգամ ասաց՝ եթէ ոչ լուծանեմ զօրէնս, այլ երկրորդ զնոսն, դարձեալ յայտ առնէ մեծաւ յաւելուածով. « Այն, ասէ, հա-

[1] Գրեալ էր զայրացուցան է։

մարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս։ և դարձեալ զնովիմբ ածեալ, «Ոչ եկի, ասէ, լուծանել՝ այլ լնուլ»։ Եւ այսու ոչ միայն զՀրէից զանամօթութիւնն ըմբերանէ, այլ և զՀերձուածողացն կարկէ զբերանս, որք ի սատանայէ համարին զՀին կտակարանս։ Օ՛ի եթէ զբռնութիւն սատանայի լուծանել էին Քրիստոս, զիա՞րդ ոչ քակէր զօրէնսն՝ եթէ ի նմանել էին, այլ լնոյր և։ Օ՛ի ոչ միայն ասաց, եթէ ոչ լուծանեմ, այլ թէ և լնում եմ։ որ ոչ միայն հաստատութիւն ոչ էր, այլ և միաբանութիւն և կամակից լինելոյ։

Եւ զիա՞րդ, ասէն, ոչ ելոյծ, և որպէս ելից զօրէնս կամ զմարգարէսն։ Բ՛սեմք, եթէ զմարգարէսն՝ ո՞ր ովք վասն նորա ինչ ասացեալ էին, և նա հաստատեաց արդեամբք զայն ամ։ Բ՛անզի և իւրաքանչիւր իսկ աւետարանագիրքն ասէին, եթէ «Օ՛ի կատարեսցի որ ինչ ասացաւն ի մարգարէէն»։ Եւ յորժամ ծնաւն իսկ, և յորժամ մանկտին աքանչելի օրհնութիւնն երգէին ի նա, և յորժամ յէշն նստաւ, և այլովքն ևս բազմաք զնոյն կատարէր. որք զի թէ չէր եկեալ, անկատարք մնային։ Իսկ զօրէնսն՝ ոչ միայն միով իւիք, այլ և երկուք և երեք օրինակաւք կատարեաց։

Ա՛ն՝ զի ոչ իւիք էանց զօրինականաւքն։ Եւ զի զա՞մ ինչ զօրինացն կատարեաց, լուր զինչ ասէր ցՅովհաննէս, եթէ «Բ՛ոյսէս վայելէ մեզ կատարել զամ արդարութիւն»։ և ցՔրիստոս ասէր, «Ո՞վ ի ձէնջ յանդիմանէ զիս վասն մեղայ»։ և ցաշակերտսն, եթէ «Դայ իշխան աշխարհիս այսորիկ, և յիս ինչ ոչ գտանէ»։ և մարգարէն անդուստ ի վերուստ աղաղակէր՝ եթէ «Ի՞նչս ինչ ոչ արար»։ Օ՛ի միովն այսպիսի կերպարանաւք ինքն կատարեաց։

Եւ միւսովն ևս մեք զնոյն առնէ։ Եւ զարմանալի այն է, զի ոչ միայն ինքն կատարեաց, այլ և մեզ զնոյն շնորհեաց. զոր և Պաւղոս յայտնի ասէր, եթէ «Կատարած օրինացն Աստ է յարդարութիւն՝ ամ հաւատացելոց։ Եւ զմեզ, ասէ, դատապարտեաց ի մարմնի իւրում. զի արդարութիւն օրինացն կատարեսցի ի մեզ, որ ոչ ըստ մարմնոյ գնայցեմք»։ Եւ

դարձեալ թէ « Օ՛ օրէնսն ինչ խափանիցեմք հաւատովք . քաւ լիցի . այլ զօրէնսն հաստատեմք » . քանզի և օրէնքն 'ի նոյն փուրթացուցանէին՝ արդար կատարել զմարդն ։ Իսկ եթէ ինքն եկն և օրինակ ինչ ընծայեցոյց զարդաքուրթեն հաւատովքն , յայտ է եթէ հաստատեաց զկամն օրինացն . զի զոր ինչ նա դրոշն ոչ կարաց ուղղել , սա զնոյն հաւատովքն վճարեաց ։ Այլ վասն այնորիկ ասէ , եթէ « Մ՛չ եկի լուծանել զօրէնսն » ։

Զոգա եթէ հաւաստեաւ քննիցես , և երբորդ օրինակ նմին գտանես ։ Զանգի հանդերձեալ օրէնգրութիւն ոչ խափանիչ էր առաջնոյն , այլ լրութիւն և կատարումն ։ Օ՛ի չսպանանելոյն ոչ խափանումն ինչ է չբարկանալն , այլ լրութիւն և մեծ զգուշութիւն . և այլոցն ևս ամենեցունց ։ Զ՝ասն որոյ և յառաջագոյն իսկ ցանկը զսերմն առանց կարծեաց յայնժամ , յորժամ յայտնագոյն ընդ միմեանս հարկանելոց էր զառաջինսն և զվերջինսն . և որ ինչ հակառակն կարծեալոց էր , յառաջագոյն բառնայ զայնր զբարուրս . թէ պէտ և առակի օրինակաւ , սակայն յառաջագոյն ընծայեցուցանէ ։ Օ՛ի ասէն՝ եթէ երանի աղքատաց հոգւով , նոյն է չբարկանալն . և երանելի զբարս սրտիւք , հանգոյն այնմ է՝ չհայել ցանկութիւն 'ի կին մարդ . և չգանձել գանձս յերկրի՝ հաւասար է ողորմածացն երանութիւն . և սգալ և հալածական լինել և նախատանաց տանել , հանգոյն ընդ նեղ դուռնն մտանելոյ է . և քաղցնուլն և ծարաւել արդարութիւն՝ ոչ այլ ինչ , եթէ ոչ զոր յետոյն հրամայէ՝ եթէ « Օ՛ որ ինչ կամիցիք դուք , զի արասցեն ձեզ մարդիկ , և դուք նոցա զնոյն արասջիք » . և զիաղաղարարն երանելով՝ գրեթէ զնոյն հրամայեաց՝ թողուլն զպատարագն և փութալ երթալ հաշտել ընդ տրամեցելոյն , և յառաջագոյն հաշտ լինել ընդ ոսոխին ։

Զայլ անդ զհատուցմունսն ուղղութիւնն խոստացաւ . իսկ աստ զպատիժս չառնելեացն սպառնայ ։ Օ՛ի անդ ասէ , « Հեղք ժառանգեսցեն զերկիր » . և աստ եթէ « Որ կոչէ զեղբայր իւր մերձս , պարտաւոր լիցի 'ի դեհենն հրոյ » ։ Զնդ ասէ , « Օ՝ այծ տեսցեն սուրբքն սրտիւք » . և աստ թէ հնացօղ կատա-

բեալ է, որ յայրատն ոք հայիցի 'ի գեղ կնոջ։ Զնդ զխաղաղարարն որդի ՝այ կոչեաց. և ասա ահագինս ինն բարբառի, եթէ «Ղուլէ մանանիցէ զքեզ դաստուրն դահձի»։ Զս այսպէս զզաւուրսն և զհալածականսն երանէ յառաջինսն. իսկ ասա կորուստ սպառնայ՝ որք ոչ զնոյն Ճանապարհ գնայցեն. և որք ընդ արձակ Ճանապարհն գնայցեն, ասէ, վերկիցեն 'ի կենաց։ Զս ոչ կարէք դուք ՝այ ծառայել և մամմնայի, թուի ինձ՝ թէ հանդոյն երանի ողորմածացն տալոյ է, և քաղցելոց և ծարաւեաց արդարութեան։ Զ.յլ որպէս վերագոյնն ասացի, եթէ քանզի յայտնագոյնս էր Ճառելոց զնոյն. և ոչ միայն յայտնագոյնս, այլ և ս քան զնոյնս առաւելագոյն։ Զ՝ի ոչ և զողորմածն միայն խնդրէ, այլ և 'ի պարեգօտիցն և հրամայէ անկանել. և ոչ հեզ միայն վայրապար լինել, այլ և զծնօտ և մատուցանել այնմ որ կամի ցի ապտակ հանել։ Զ՝ի որ ինչ ընդդէմն թուէր, որպէս յառաջագոյնն ասացի, այսու կամի 'ի միջոց բառնալ. զի ոչ մի անգամ միայն ասաց, այլ և երկրորդէ և զնոյն։

«Զ՝ի համարիք, ասէ, եթէ եկի լուծանել։ Զ՝է, ասէ, եկի լուծանել։ Զ՝մէն ասեմ ձեզ, մինչև անցցեն երկինք և երկիր, և յոլտ մի գրախեց ոչ անցցէ յօրէնսայն, մինչև ամենայն լեցի»։ Զս զոր ասէն՝ այսպիսի ինչ է։ Զ՝նշնար է, ասէ, թէ անկատար մնայցէ. այլ և փոքր ինչ իցէ, և այնմ պարտ է կատարել։ Զ՝ որ ինքն իսկ ՝ամ հաւաստեաւ արար և կատարեաց. և ասա 'ի մեզ ինն առակէ, թէ և աշխարհս ՝ամ կերպարանափոխ լինելոց է։ Զս զայս ոչ վայրապար ինչ եդ, այլ զի զարթուցցէ զլսօղսն, և ցուցցէ արդարութիւն ընծայեցուցանել այլ ինն առաքինութիւն։ Զ՝ի թէ արարածքս ՝ամ կերպարանափոխ լինելոց են, ապա և ազգ մարդկան յայլ ինն աշխարհ կոչելոց են, և 'ի բարձրագոյն վարս փոփոխելոց։

«Զ՝որ ոք լուծցէ, ասէ, մի 'ի պատուիրանաց յայսցանէ 'ի փոքունց, և ուսուցցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեան երկնից»։ Զորժամ աղաւեաց զանձն 'ի չար կարծեացն, և զայնասիկ ոչք

կամէին հակառակել՝ ըմբերանեաց, ապա երկեցու-
ցանէ և մեծամեծ սպառնալիս դնէ վասն հանդեր-
ձեալ օրէնսդրութեան։ Այլ զի ոչ զհնոց օրինակա-
նացն ինչ ձառէ, այլ զայնց օրինաց՝ զորս ինքն էր
դնելոց, միտ դիր յաջորդացն։ «Օ՛ի եթէ ոչ առա-
ւել, ասէ, լինիցի արդարութիւն ձեր քան զդպրացն
և զփարիսեցւոցն, ոչ մտանիջիք յարքայութիւն»։
Այնթէ զհին օրինացն ինչ ասէր, զի՞րդ ասէր՝ եթէ
առաւել լինիցի. եթէ զոր նոքային առնէին՝ զայնմա-
նէ ինչ ձառէր, ապա չէր ինչ առաւել յարդարու-
թեան պէտս. զի առաւելն՝ չարիկանալն է, չհայելն
յայրատութի՛ւն 'ի գեղ կանանց։

Այլ ընդէր արդեաք փոքունս կոչիցէ զպատուի-
բանսն, որ այնչափ մեծամեծք և բարձրագոյնք էին։
Զ՚ամենայն ինքն ընծայեցուցանելոց էր զօրէնսդրու-
թիւն, զոր օրինակ զիւր անձն խոնարհեցոյց, և բա-
զում անգամ զիւրմէ խոնարհագոյն բարբառի, նոյն-
պէս և վասն իւրոյ օրէնսդրութեանն. զի՞ամ իւիք
խրատիցէ զմեր զանձինս 'ի չափու ունել։ Այլ այլ ազգ
ևս. քանզի նորընծայ վարդապետուն կարծիք էին,
առ ժամանակ մի մեղմագոյնս ինն զբանսն ձառէ։

Այլ յորժամ լսիցես, եթէ «Փոքր է յարքայութի՛ն
երկնից»։ մի՛ այլ ինչ կարծիցես, այլ զդեհենն և զը-
տանջանս։ Օ՛ի արքայութի՛ն ոչ միայն զվայելելն 'ի
բարիսն գիտէ կոչել, այլ և զժամանակ յարութեան,
և զահագին դալուստն։ Այլ թէ ոչ՝ զի՞ՐԴ 'ի գեղ
իցէ այժմ. որ զեղջայրն մորոս կոչիցէ և անցանիցէ
զմիով պատուիրանաւ, 'ի գեհենն անկանել. և որ
լուծանիցէ զպատուիրանն, և զայլս ևս 'ի նոյն դրբ-
գիցէ, յարքայութի՛ն մտանել։ Այլ արդ ոչ ասէ, թէ
յարքայութի՛ն մտանէ, այլ թէ 'ի ժամանակին յայն-
միկ փոքր գտանի, տարագիր, լեռին. իսկ որ յե-
տինն ամենեցունց իցէ, հարկ է՝ զի 'ի գեհենն անկա-
նիցի յայնժամ։

Այլ քանզի՞ՈՐ է, և յառաջագոյն զիտէր զբազ-
մայ ծուլութի՛ն, եթէ հանդերձեալ են ոմանք կար-
ծել՝ եթէ ըստ աւելեաց ինչ ասացեալ իցեն միայն
բանքս, և խծբծիցեն զօրէնսն՝ և ասիցեն, զի թէ որ
մորսն կոչիցէ՝ տանջիցի, և որ հայիցին միայն՝ ընդ

շունս համարիցի, ո՞ կարիցէ ապրել. վասն այնորիկ յառաջագոյն բառնայ 'ի միջոց զվհատութիւն, և մեծամեծ սպառնալիս դնէ երկոցունց կողմանց, և այնոցիկ ոչք յանցանիցեն, և այնոցիկ որ զայլս ևս 'ի նոյն դրդիցեն։ Այլ արդ իմացեալ զայսպիսի սպառնալիս, մի՛ մեք իսկ անձամբ յանցանիցեմք, և մի՛ զայլս՝ որ զգուշանալ կամիցին՝ արգելուցուք։

"Որ արասցէ, ասէ, և ուսուսցէ, նա մեծ կոչեսցի"։ Օ՛ի ոչ առանձինն ևեթ պարտիմք լինել պիտանիք, այլ և զայլս ածել 'ի պիտանութիւն։ Վասնզի և ոչ վարձքն ինչ հասարակ ինչ են՝ այնր, որ զանձն յուղղութիւն կարդիցէ, և այնր՝ որ ընդ իւր և զայլս շահիցի։ Օ՛որ օրինակ ուսուցանելոյ առանց առնելոյ դատապարտէ զուսուցիչն, "Որ ուսուցանեսդ, ասէ, զընկերն՝ զանձն քո ոչ ուսուցանես"։ Նոյնպէս և զայն որ առնիցէն և այլոց ոչ առաջնորդիցէ, նուազեցուցանէ զվարձս։ Այլ արդ պարտ է յերկոսեան դէմսն կատարեալ լինել. նախ առ 'ի զանձն ուղղելոյ, և ապա այլոց դարմանիչ լինելոյ։ Վասն որոյ և ինքն իսկ նախ զառնէն քան զուսուցանէն եդ. զի յայտ արասցէ՝ թէ այդպէս՝ առաւել կարէ ուսուցանել, և ոչ այլ ազգ ինչ։ Վասնզի և լուարուք իսկ, եթէ "Ուժիւն բժշկեա նախ զանձն քո"։ Իսկ որ զանձն ոչ կարէ ուսուցանել՝ և զայլս մտաբերիցէ ուղղել, բազումք իցեն որ հեղնիցեն զայսպիսին։ Այլ և ուսուցանել չկարէ այնպիսին, զի բազում իրք իցեն՝ որ ընդդէմ դարձեալ յանդիմանիցեն զնա։ Իսկ եթէ յերկոսեան կողմանս կատարեալ գտանիցի, այնպիսին մեծ կոչեսցի յարքայութեան երկնից։

"Այլ ասեմ ձեզ, զի թէ ոչ առաւել լիցի արդարութիւն ձեր քան զդպրաց և զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից"։ Արդարութիւն ասա զնամ առաքինութիւն կոչէ. որպէս զՅովհան յորժամ պատմէր, "Այր մի, ասէ, անբիծ արդար և ճշմարիտ է"։ Այլ Պաւղոսի նշանակեալ լինի՝ զայսպիսին կոչէ արդար, որում և օրէնքն իսկ ոչ դնիցին. զի "Ի վերայ արդարոյն, ասէ, օրէնք ինչ ոչ կան"։

1 Յօրինակին ԱՅԴ ԱՅԴՊԷ։

Լու բազում անգամ ընդ բազում տեղիս զսնունս զայս 'ի վերայ ամենայն իսկ ' առաքինութեանն հաստատեալ գտանեմք ։ Լու դու միտ դիր ընդարձակման՝ զիարդ զնոր աշակերտսն քան զՀին վարդապետսն լաւ կամի առնել ։ Օ ի դպիրս աստ և փարիսեցիս ոչ վայրապար զոք զօրինազանցս ասէ , այլ զպիտանիս . զի թէ ոչինչ ուղղութիւն գործեալ էր , և ոչ արդարութի ինչ անուանէր զնոցա , և ոչ զՀին ինչ ընդ էին համեմատէր ։ Ցեսէր աստ իսկ , զիարդ ընդ միմեանս համեմատութիւն հարկանէ զՀինն և զնորս . զի ցուցցէ՝ թէ համացեղ և ազգական միմեանց են . զի յոլովն և նուազագոյն՝ անդստին նորին ազգի են ։ Լու արդ ոչ եթէ խոտէ զՀինն , այլ առաւելագոյն ինն քան զնոցն կամի . զի եթէ 'ի չարէ անտի էր , ոչ յառաւելութի ինչ ձգէր , և ոչ յուղղութիւնս ինչ ածէր , այլ 'ի բաց մերժէր և 'ի դերև հանէր ։

Լու զիարդ , ասէն , եթէ այնպիսի ինչ իցէ , չտանիցի յարքայութի ։ Լ.յժմ չտանի յետ Արքի գալստեան՝ զայնոսիկ , որ ըստ օրինացն պատերազմիցին . իսկ սա քա որ 'ի բազում զօրութենն արժանի եղեն վայելել և բազում ճգնութիս պարտին յանձին ցուցանել ։ Լայց և զսոսա և զնոսա իբրև զամենախաս 'ի նոցն յանձանձիչ գոգս տանի զամենեսեան . քանզի և ասէ իսկ , " Լաղուանք յարևելից և յարևմտից եկեսցեն , և բազմեսցին ընդ Լ.բրահամու և ընդ Սահակայ և ընդ Յակովբայ » ։ Լու զի՞ ազար՝ որ մեծայ պարգևացն եղև արժանի , 'ի գոգն Լ.բրահամու տեսանեմք հանգուցեալ ։ Լու ամենեքեան՝ որ կարի քաջ առաքինացան 'ի հնումն , նովին օրինակօք [2] տեսանեմք զամենեսեան նահատակեալս ։ Լու եթէ չար ինչ էր և օտարոտի , ապա և Արքի 'ի գալստեանն ոչ կատարէր զնմա ։ Լայլ վասն զի զՀրեայսն զիւրև ածիցէ՝ վասն այնորիկ միայն զայն արար , և չկայցէ ինչ ազգականութի և միաբանութի հնոյն ընդ նորոյս , ընդ էր և զՀեթանոսաց օրէնսն ոչ կատարեաց , զի և զկռապաշտսն և զիւրև ածիցէ ։ Լրպէս զի՞մ ուս

1 'Ի կարգին գաւառակ թուղեալ 'ի լուս . եգեալ էր էոկ ։

2 'Ի լուս . օրինօք ։

տեք յայտնի լինիցի, եթէ ոչ վասն չարութիւն ինչ ոչ տանիք յարքայութիւն, այլ զի մեծամեծ պատուիրանացս լինիցի ժամանակ։ Այս եթէ չէր կատարեալ իբրև զնորս, սակայն և այնու չերևի նորա չարուն։ Այլ եթէ այսպէս չիցէ, և նորս իսկ զնոյն կրելոց է. զի յորժամ սորա գիտութիւն հանդերձելոց բարեացն համեմատիցի, մանաւանդ ինչ գտանի և անկատար, և խափանելոց է 'ի նորա երևելն. «Յորժամ եկեսցէ, ասէ, կատարումն, ապա և որ փոքր 'ի շատէն իցէ՝ խափանեսցի»։ որպէս և կրեաց իսկ հինն 'ի նորոյս։

Այլ ոչ եթէ վասն այնորիկ և զսա չար ինչ բամբասիցեմք, թէպէտ և սա տեղի տալոց իցէ՝ յորժամ արքայութիւնն հասանիցեմք. զի յայնժամ ասէ «Այս որ փոքր 'ի շատէն իցէ՝ խափանեսցի»։ Այլ սակայն մեծ համարիմք զսա. քանզի և մեծամեծ իսկ պարգևք են, և յորդ հոգւոյն զօրութիւն, յիրաւի իսկ և մեծամեծս պահանջեն շնորհքն. քանզի ոչ ևս է երկիր՝ որ բդխէ զկաթն և զմեղր, և ոչ ծերութիւն պարարտութիւն, և ոչ որդւոց յաճախութիւնք, և ոչ խաշանց և անդէոց բազմութիւնք, այլ երկինք, և որ ինչ երկնից բարութիւնք իցեն, և որդեգրութիւն, և եղբայրութիւն ընդ միածնին, և հաղորդութիւն ժառանգուն, և ընդ նմին փառաւորել, և թագաւորակից լինել, և այլ ևս բիւրուց բեւրք հատուցմունք։ Այլ զի 'ի բազում օգնականութիւն վայելեցաք, լուր Պաւղոսի՝ որ ասէ, թէ ոչ դատապարտութիւն է այժմիկ 'ի Քրիստոս Յիսուս, որոց ոչ ըստ մարմնոյն գնայցեն, այլ ըստ հոգւոյն. զի օրէնքն հոգւոյն կենաց՝ ազատեցին զքեզ յօրէնսն անտի մեղաց և մահու։

Այլ արդ իբրև սպառնացաւ յանցաւորացն, և մեծամեծ պարգևս խոստացաւ այնոցիկ՝ ոյք զուղղութիւնն առնիցեն, և եցոյց եթէ յիրաւի յոլովագոյն պահանջէ 'ի մէնջ քան զառաջնոցն զչափ, սկիզբն առնէ օրէնսդրութեանց այսուհետև. և ոչ վայրապար ինչ, այլ ըստ համեմատութեան ըստ հնոց օրինակացն։ Այլ երկուս իրս կամի ցուցանել. մի զի ոչ կռուի ընդ առաջինսն, այլ յոյժ միաբանեալ՝ դնէ այսպիսի օրէնս. և միւս ևս՝ յիրաւի և 'ի դէպ ժամանակի զերկրորդս յառաջինսն յաւելու։ Այլ զի

և սայտնագոյն լինիցի, նոցին իսկ բանից օրէնսդրին ունկնդիր լինիցիմք։ Եւ զինչ իցէ՝ զոր ասէն։

«Լուարուք, ասէ, զի ասացաւ առաջնոց, թէ մի սպանանիցես»։ Թէպէտ և ինքն է՝ որ զառաջինսն իսկ պատուիրեաց յառաջագոյն, այլ ոչինչ յայտ առնէ զդէմս, ոչ զիւր և ոչ զՀօր։ Զի եթէ ասացեալ էր, լուարուք ապաքէն՝ զի ասացի առաջնոցն, դժուարընկալ լինէր բանն և չախորժելի՝ մանաւանդ։ Եւ դարձեալ եթէ ասացեալ էր, լուարուք զի ասացաւ առաջնոցն 'ի Հօրէ, և 'ի նոցն յարեալ ասէր, բայց ես ասեմ ձեզ, աւելի իմն Ճոխութիւն յայտ արարեալ կարծեցուցանէր. վասն որոյ խառնէ 'ի խուռն իսկ Ճառէ։ Մի միայն իմն յարդարեալ ցուցանէ, եթէ 'ի ժամանակի եկն զպատշաճն Ճառել։ Զի ասելովն՝ եթէ ասացաւ առաջնոցն, յայտ առնէ՝ եթէ բազում ժամանակք են, յորմէ հետէ պատուիրանն այն տուաւ. և զայս ասելովն՝ պատկառեցուցանէ զլսօղն, որ դանդաղիցի ելանել 'ի բարձրութիւն հրամանացն։ Որպէս վարդապետ ոք յորժամ հեղգ աշակերտի սաստիցէ, թէ որչափ ժամանակս ծախեցեր այդրէն 'ի սղոբայսդ[1]։ Լսելիսի իմն և սա ակնարկեալ առաջնոցն անուամբն՝ լինի մեղադիր նոցա, թէ ցերբ ոչ առնուք 'ի միտ զմեծամեծս հրամանացն։ Որպէս թէ ասիցէ, թէ շատ է ձեզ ժամանակն՝ զոր յայդմ ծախեցիք, պարտիք այսուհետև 'ի բարձրագոյնսն փութալ. բայց և այժմ միտ դիր, զի չխարիսալէ զկարգ պատուիրանացն, այլ յառաջնումն առնէ սկիզբն՝ յորմէ և օրէնքն աւրարին սկիզբն։ Զանգի և այս ցուցանելոյ զմիաբանութիւնն էր։

«Բայց ես, ասէ, ասեմ ձեզ, թէ որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց, պարտաւոր եղիցի դատաստանի»։ Տեսեր զկատարեալ իշխանութիւն. տեսանէս զօրինակ որ օրէնսդրին և եթէ վայելէ։ Ո՞ ոք 'ի մարգարէից երբէք այնպէս բարբառեցաւ, ո՞ ոք յարդարոց, ո՞ ոք 'ի նահապետաց. ոչ ոք, ոչ ուրեք. այլ ասէին, թէ այսպէս ասէ Տէր. բայց որդին մի-

[1] 'Ի լուս. սղոբայսդ։

այն, զի իշխանութիւն բարբառի։ Եւ որքա զսէրուն՝ա-
կանն պատմիչն, և սա զՀայրենիսն։ Ասել յորժամ
ասեմ զՀայրենիս, զնորայն յայտ առնեմ. ըստ այնմ
եթէ «Լուսն քո են, և քոյքն իմ»։ Եւ նոքա ընդ
ծառայակիցս խօսէին, և սա իւրում ծառայից զնե-
օրէնս։

Եւ արդ հարցցուք զայնոսիկ՝ որ զօրէնսն խոտի-
ցեն։ Զբարկանալն՝ չսպանանելոյն հակառակ ինչ
իցէ, թէ մանաւանդ նորին կատարումն, նորին և
հնարք։ Եւ յայտ է, եթէ սա նորին իսկ լրութիւն
է. զի որ 'ի ցասումն չգայցէ, օրշափ և առաւել 'ի
սպանանելոյն խորշիցի. և որ զբարկութիւն նշանջի-
ցէ, օրշափ և առաւել և զձեռն կարձիցէ 'ի սպա-
նանելոյ. զի արմատ սպանութեանն ցասումն է. և
արդ որ զարմատն հատանէ, յայտ է թէ և առա-
ւել զոստն կոձոպիցէ. մանաւանդ զի և բուսոյն
իսկ սկիզբն չտայցէ լինել։ Յայտ է թէ ոչ խափա-
նումն ինչ օրինացն է, այլ յաճախագոյն իմն պահ-
պանութեան օրէնդրութիւն։ Եւ արդ զինչ կամք իցեն
օրինացն. ոչ ապաքէն հրամայէին, զի մի ոք սպանա-
նիցէ զընկերն. ապա եթէ այս այսպէս իցէ, որ ընդ
օրէնսն կռուիցի սպանանել հրամայէ, զն սպանա-
նելն չսպանանելոյն հակառակ է. իսկ որ և բարկա-
նալն հրամայիցէ, զոր ինչ օրէնքն կամին զայն հաս-
տատէ. ոչ ապաքէն և նմանագոյնս խորշիցի 'ի սպան-
մանէն, որոյ 'ի մոի եղեալ է բնաւ և բարկանալ
իսկ ոչ։

Եւ զայլ և զոր ասէին, առեալ ածիցեմք 'ի մէջ,
եթէ որ զաշխարհ արար՝ ՅԱՆՆ, որ զարեգակնդ ծա-
դէ 'ի վերայ չարաց և բարեաց, որ զանձրևդ ածէ 'ի
վերայ արդարոց և մեղաւորաց, չար ոմն է։ Իսկ որ
գոգցես փոքր մի հանդարտագոյնք իցեն 'ի նոցանէն,
արդար կոչեն զարարիչն, և բարի ոչ անուանեն. և
զայլ ոմն որ չէ իսկ ուրեք և ոչ արարիչ է արարա-
ծոց, հայր անուանեն Աստուած. և զայն զոր չկոչենն
բարի, յիւր սահմանն կալ մնալ ասեն, և զիւրն
պահել. և զբարին՝ այլոց արարածոց որոց չիցէ արա-
րիչ, համբաւեն ցանկացեալ լինել նոցա յանկարծա-
կի փրկիչ։ Ցեսանես զմանկունսն ստատնայի, որք

յաղբերէ հօրն քարբառէն, զիարդ օտարացուցանէն յոյ զարարչութիւն. ուր Յովհաննէս մեծաձայն աղաղակէ, եթէ «Յիւրս անդր եկն, և աշխարհ նոսվաւ եղև»։

Այսպա և զհին օրէնսն իմն բամբասէն, որ հրամայէն՝ «Այն ընդ ական և ատամն ընդ ատամն». զիարդ, ասէն, մարթիցի նմա բարի լինել՝ որ զայս այսպէսն հրամայէ։ Այլ առ այս զինչ ասիցեմք։ Այլ թէ և այն ևս մեծի ոյ մարդասիրութիւն է նշանակ։ Ոչ զի զիմեանց աչս հանիցեմք՝ եդ զայսպիսի օրէնս, այլ զի երկիւղիւն՝ մի մեք յայլոց և մի այլք 'ի մէնջ վնասիցին այսպիսի վնասուք։ Օ որ օրինակ նիշնուեցուցոյն՝ որոց սպառնացաւ կործանումն, ոչ զի սատակեսցէ զնոսա, զի եթէ սատակել կամէր, բնաւ ընդէր իսկ առաքէր առ նոսա քարոզ, այլ զի սասանիւն առնիցէ պիտանիս, և ցածուցանիցէ 'ի նոցանէ զբարկութիւն։ Այսպէս և որք յանդգնիցին խեղել զիւրեանց ընկերս, եդ 'ի վերայ նոցա պատիժ պատուհասի. զի թէպէտ և բարւոք կամք չկամիցին խորշել 'ի վնասուէ, գոնեայ 'ի յահէ սաստիցին արգելուցուն 'ի խեղելոյ զիմեանս։ Օ, եթէ այս անազորոյն ինչ մնաց իցէ, ապա և զարգելուն զսպա նօրն, և կարձել զչնացօրն 'ի չնութենէ՝ համարեսցին անազորոյն մնաց։

Այլ գիտեմ, եթէ անմտացն են այսպիսի բանք, և մոլեկանաց և շամբչելոց։ Այլ ես այսչափ երկրն չիմ անազորոյն մնաց համարել զայսպիսի բանս, զի և զմտաւ իսկ ածել անօրէնութի համարիմ և մարդկեղէն խորհուրդս։ Զոր ասես, վասն զի ակն ընդական հրամայեաց՝ անազորոյն է. այլ ես ասեմ. թէ չէր այսպէս հրամայեալ, յայնժամ կարծէր բազմաց այնպիսի ինչ՝ զոր դուդ ասես։ Այլ արդ համարեսցուք բանիւք, եթէ լուծեալ իսկ իցէն օրէնքն, և չիցէ ինչ անտի կասկած և ոչ պատիժք պատուհասից, և համարձակ իցէ՞մ չարագործաց՝ զինչ և կամիցին առնել. շանց և սպանողաց և գողոց և երդմնահարաց և զհայր և զմայր անարգողաց։ Ոչ ամենևին յայտնի ամենայն իսկ վերՙ 'ի վայր հարեալ եղծանէր. և բիւրապատիկ պղծութեամբք և սպա-

նութեամբք՝ քաղաքք և հրապարակք և տունք, և ծով և ցամաք, և առհասարակ ամենայն իրեղէնք ընուին։ Եւ զի այսպէս է, ամ ուրեք յայտ է։ Օր մինչ օրէնք 'ի վերայ կան՝ և սատա և սպառնալիք, հաղիւ յոտին կան չարակամն խորհուրդք. եթէ այսպիսի զգուշութիւն 'ի միջոց բառնայցէ, զինչ այն ինչ էր՝ որ զչարիսն արգելուլ կարիցէ. և կամ զիարդ ո՛չ ամենևին տարածիցին 'ի վարս մարդկան ապականութիւնք։

Եւ ո՛չ այն միայն անազորոյն մտաց է՝ թոյլ տալ չարագործաց գործել զինչ և կամիցին, այլ և անտես առնել զլեկեալսն և զչարչարեալս զուր [1], չէ փոքր քան զայն։ Եւ արդ աղէ՝ ասա, եթէ ոք զստահակ մարդիկ ժողովէր յամ կողմանց, և սուր 'ի ձեռին դնէր, և արձակէր շուրջ զքաղաքաքն, զի ում պատահիցեն՝ սուր 'ի վերայ դնիցեն, զինչ կայր քան զայն դժոդակ՝ և նմանութիւն գազանացն բարոյից։ Եւ արդ եթէ այլ ոք զզինեալսն հրամայէր կապել և 'ի բանտ արկանել, և զորս կոտորելոց էին՝ ապրեցուցանել յանօրինացն ձեռաց, զինչ ինչ կայր քան զայն մարդասիրագոյն։ Այսպիսի ինչ օրինակաւ ի մտնալ պարտիմք և զօրէնսն։ Օր որ հրամայէն ակն ընդ ական, իբրև սաստիկ կապանօք կապէ ահիւն զմիտս չարագործաց. և այնմ նման է, որ զսուսերն ձեռանն 'ի բանտ արկեալ խափանիցէ։ Իսկ որ ո՛չինչ դնիցէ պատիժս 'ի վերայ, զրեթէ ինքն իսկ վառէ զնոսա անսաստութեամբն. և այնմ նման է, որ սուր 'ի ձեռն դնիցէ՝ և արձակիցէ ընդ քաղաքն ամ, կոտորել զոր և դատնիցէն։

Յեսանէս, զի ո՛չ միայն խստութիւն ինչ չէն [2], այլ և մարդասիրութիւն հրամանք։ Այլա թէ այսու ծանր ինչ և սաստիկ համարիցիս զօրէնսդիրն, աղէ՝ ասա, որ ծանրագոյն և սաստիկ իցէ. չսպանանէին, եթէ չչարկանային։ Կամ ո՞ ոք սաստիկագոյն իցէ. որ զսպանանելոյն վրէժս պահանջիցէ, թէ որ զչարկութիւն. որ զշնացօղն յետ գործոյն պահանջիցէ, եթէ որ

1 Յօրինակին ԷԲ. եգաք ըստ լուս։

2 Յօրինակին ԷԲ. եգաք ըստ լուս։

զցանկութեն իսկ հրամայիցէ վրէժ՝ անմահս պահանջել։

Տեսանէք զի ընդդէմ նոցին շրջի բանն. և հին կտակարանացն ասէ՝ զոր բարին անուանեն, գտանի հեզ և հանդարտ. և նոր կտակարանացս ասէ՝ զոր բարին կոչեն, ծանր և սաստիկ՝ ըստ նոցա անմոռութեանն։ Բ.յլ մեք՝ մի և զնոյն ասեմք օրէնդիր երկոցունց կտակարանաց, որ զնամ յօգուտ մատակարարեաց, և ըստ ժամանակացն՝ նոյնպէս և զօրենս դրութիւն երկոցունց պատշաձեաց։ Բ.ս յայտ է, եթէ ոչ այնք խիստ ինչ են, և ոչ սոքա ծանրութիւն։ այլ միոյ և նորին տեսչութեամբ ամենայն։ Բ.ս զի զհինն և նոյն էտ, լուր մարգարէին՝ որ ասէ. մանաւանդ զի ինքն իսկ մարգարէիւն «Հաստատեցից նոցա, ասէ, կտակ նոր, ոչ ըստ այն կտակի՝ զոր եդի ընդ հարսն նոցա»։ Բ.ս եթէ զայս ոչ ընդունիցի՝ որ զմանկնեցուց ախտն ախտանայցէ, լուիցէ և 'ի Պաւղոսէ զնոյն. «Բ.բրա համու երկու որդիք էին, ասէ, մի յաղախնոյն և մի յազատէն. այսինքն են երկու կտակարանք»։ Օ որ օրինակ անդ այլ և այլ են կանայքն, և մի է այրն, նոյնպէս և աստ երկու կտակարանք, այլ մի է օրէնդիրն։ Բ.ս զի ուսանիցիս՝ եթէ միոյ և նորին զօրութեան են երկոքին, անդ ասէ՝ «Բ.ին ընդ ական». և աստ՝ «Բ.թէ ածէ զք ապտակ յաջ ծնօտ քո, մատուս դու նմա և զմիւսն ևս»։ Օ որ օրինակ անդ ահիւ խեղութեն զգօնացուցանէ զինասակարն, նոյնպէս և աստ ընդդէմն չդառնալով։ Բ.ս ընդդէր, ասէն, հրամայիցէ զմիւսն ևս մատուցանել. և զինչ պիտոյ իցէ այն։ Ա.յ եթէ վասն երկիւղին մերժելոյ հրամայիցէ զայն, այլ նմա պատուիրէ համբերօղ լինել առ ամենեսին։ Բ.ս ոչ ասաց, թէ որ հարկանէն՝ առանց պատժոյ լինիցի, այլ թէ դու մի՝ հարկանիցես զնա։ Բ.ս այսու միանգամայն զհարկանօղն յաձախագոյն երկեցուցանէ, զի մի և եթ 'ի նոյն փնտակարութեանն կայցէ. և զհամբերօղն մխիթարէ։ Բ.յլ զայս, որպէս 'ի հաւանացի ոք անցանիցէ՝ այնպէս իսկ զամենայն պատուիրանացն ասացաք։ Բ.այց արդ հարկ է 'ի կարգն գալ, և որ ինչ առաջին կայցէ՝ զայնու լինել։

Ա.երագոյնն ասացաւ՝ եթէ «Որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց, պարտաւոր եղիցի 'ի դա-

տաստանի »։ Ա՛չ ամենևին 'ի միջոց բառնայ զերան։ Այս զի չէ հնար մարդոյ բնաւին 'ի կարեաց ազատանալ, բայց կարՃել մարթի. այլ ամենևին առանց կարեաց լինել անհնար է։ Այլ զի և յոգուտ իսկ է ցասումն, եթէ 'ի պատշաՃն որ ինչ վարիցէ և 'ի դէպ ժամանակի։ Այլ արդ միտ դիր, որպիսի ինչ բարութիւն գործեաց Պաւղոսի բարկութիւն, որ յայնժամ առ Կորնթացիսն զայրանայր. զի և զնոսա 'ի չարեաց փրկեաց. և զգաղատացուց ազգն նովիմբ կանգնեաց 'ի կործանմանէն. և այլ ևս բազումս քան զնոսա։ Այլ արդ որ ժամանակ 'ի դէպ իցէ ցասմանն։ Յորժամ ոչ զանՃանց վրէժ, այլ զայլ ստահակս խրատիցեմք, և զայլս յորդորիցեմք։ Օ՛ որ և Պաւղոս արգելլոյր, եթէ « Մի՛ զանՃանց վրէժ խնդրէք, եղբարք, այլ տուք տեղի բարկութեանն »։ Յորժամ ոչ վասն ընչից զայրանայցեմք. քանզի և զայս իսկ ասպախտ համարեցաւ ասելովն, թէ ընդէր իսկ ոչ դուք առաւել զրկիք։ Օ՛ի որպէս այս աւելորդ է, նոյնպէս և այն կարևոր և շահաւոր է։ Ա՛յլ ո՞մանք զորին հակառակն առնեն. զի յորժամ զրկիցին ինչ, գաղանեն. և յորժամ զայլս զրկեալս տեսանիցեն, մեղկին, իգանան, լքանին։ Որ և երկոքին իսկ կողմանք հակառակ են աւետարանական օրինաց։ Այլ արդ ոչ եթէ բարկանալն ինչ անօրէնութիւն իցէ, այլ յանդգնին ժամանակի. զոր և մարգարէն զգուշացուցանէ, թէ « Խարկանայք, և մի մեղանչէք »։

« Որ որ ասիցէ, ասէ, զեղբայր իւր ռակա, պարտաւոր եղիցի ժողովրդեան »։ Խողովուրդ ասէ զեբրայեցւոց ատեանն կոչէ. և վասն այնորիկ ասէ անդ պարտաւոր, զի մի՝ ամ ուրեք օտարոտի ինչ վարդապետութիւն կարծիցի։ Իսկ ռակայն՝ մեծ՝ ինն թէնամանք են հեբրայեցերէն, և արհամարհանաց և անգոմնելոյ։ Որպէս և մեք ծառայից կամ այլոց վատթարաց սատիցեմք, եթէ այ դու քեզ ասեմ, երթ յայս անուն, այսպիսի ինչ ասա. և որք զասորի լեզուն գիտիցեն, փոխանակ ընդ այ դուն ասելոյ՝ 'ի սան-

1 Յոյնն ՝ռ ռեծ ի՛ն ... այլ արհամարհանաց Ն։

պատուականաց [1] տեղի՝ զուակայն ասէն։ Եւ մարդաս-
սէրն ՅԻՇ զմանուանն եւս կարձէ. զի 'ի պատշաձն
եւեթ ստիպիցէ վարել ընդ միմեանս՝ հանդերձ 'ի
դէպն պատուոյն. և սոքօք և զմեծամեծսն եւս կար-
ձիցէ։

«Եւ որ ասիցէ ցեղբայր իւր մորոս, պարտաւոր
եղիցի 'ի գեհենն հրոյ»։ Ամանց ծանր իմն և խիստ
թուի հրամանս. և ընդ դոյզն բանից, ասէն, պատիժս
իցեմք կրելոց։ Եւ ոմանց՝ ըստ աւելեաց իմն թուի
ասացեալ, իբրև ահ ինչ արկանելով։ Եւ երկրն-
չիմ զուցէ ասա բանիւք խաբիցեմք զանձինս, և անդ
արդեամբք իսկ տայցեմք զյետին պատժոցն տոկոսս։
Եւ արդ ընդէր իցէ խիստ հրամանս. ոչ գիտիցես,
եթէ մեծ մասին պատժոցն և մեղաց 'ի բանից է ըս-
կիզբն։ Զի հայհոյութիւն և ուրացութիւն 'ի բանից են.
և չարախօսութիւն և թշնամանք և սուտ վկայել և
մահապարտ առնել։ Եւ արդ մի ընդ այն նայիր, ե-
թէ փոքր ինչ իցէ բանն, այլ թէ չիցէ բաղում վնա-
սակար՝ զայն քննեա։ Եամ թէ չգիտիցես, 'ի ժամա-
նակի թշնամութիւն և բարկութիւն բորբոքման՝ յոր-
ժամ միտքն զայրանայցեն, և փոքրն մեծ թուի, և որ
չիցէ ինչ կարի թշնամանաց՝ և այն ընդ մեծ անար-
գանս համարեալ լինի. և բաղում անգամ և մա-
նուանք իսկ զմահ ծնանին, և բնաւին զքաղաքս աս-
պալեն։

Զի որ օրինակ 'ի հաշտութիւն և ծանուանքն թեթև
իմն թուին, նոյնպէս և 'ի թշնամութեան փոքրանքն
մեծամեծք երևին։ Թէպէտ և դոյզն որ ինչ բանս
խօսիցի, սակայն 'ի չար կարծիս առնուն։ Զի որ օրի-
նակ հրոյ յորժամ սակաւ ինչ կայծակունք կայցեն,
թէպէտ և բաղում փայտ շուրջ կայցէ, ոչ վաղվա-
ղակի բորբոքի. ապ՝ եթէ յորդեալ բոցն տոչորի-
ցի, ոչ միայն զփայտն, այլ և զքար և զնամ ինչ զինչ
և 'ի բուռն անկանիցի՝ վաղվաղակի ծախէ. և բա-
զում անգամ որով սովորն իցէ շիջանել՝ նովին առա-
ւել բորբոքի։ Այլ և ասէն իսկ ոմանք, եթէ զայն-
պիսի զասատկացեալ հրդեհ, ոչ միայն փայտ կամ

1 Շնորհալին 'ի սանֆասարեան գրէ։

խծուծ կամ այլ ինչ այրելի, այլ և ջուր ևս ցանեալ՝ բորբոքեն։ Այնպէս և 'ի ցասման՝ յորժամ խօսիցի ոք, ևս գրգռեն, և ջամբ լինի չար հրդեհին։ Զոր ամենևին զնմա յառաջագոյն ցուցանեն Քրիստոս, զվայրապարն բարկացեալ՝ 'ի դատաստանի պարտաւորեն։ Քանզի և ասէ, եթէ ընդ վայր ցասումն պարտաւոր լիցի 'ի դատաստանի. և զայն՝ որ ռակայն ասիցէ, թէ դատապարտ լիցի 'ի ժողովրդեանն։ Այլ ոչ և թէ այնք մեծամեծք ինչ իցեն, որ ասա պատիժքն իւ ցեն։ Իսկ այնմ որ մորոն կոչիցէ՝ զգեհենն հրոյն յաւել։

Այլ ասա նախ անուանէ զգեհենն. զի նախ զարքայութիւն բազում ինչ Ճառեաց, և ապա զգեհենէ յուշարար։ Զի յայտ արասցէ, եթէ արքայութիւն 'ի նոքա մարդասիրութենէն և 'ի կամաց պատրաստեցաւ, և գեհենն 'ի մերմէ ծուլութէ։ Այլ տես, զիարդ առ սակաւ սակաւ յառաջ մատուցեալ՝ գրեթէ աղերսիւ ինն իրաւունս ցուցանէ, եթէ ինքն ոչ կամի այսպիսի ինչ սպառնալ, բայց մեք մեզէն ձգեմք 'ի մեզ զայսպիսի պատուհաս։ Այլ արդ միտ դիր. ասացի, ասէ, թէ մի բարկանայցես վայրապար, ապա թէ ոչ՝ պարտաւոր լինելոց ես 'ի դատաստանի. արհամարհեցեր զառաջինն, տես զինչ ծնաւ բարկութիւն. 'ի թշնամանս գրգռեաց։ Կոչեցեր զեղբայրն ռակա. դարձեալ եդի միւս ևս պատուհաս, զի 'ի ժողովրդեանն դատապարտ լինիցիս. և եթէ զայն ևս քամահիցես, ևս յանհնարին պատիժս մատնիցիս. զի ոչ չափ ինչ պատժովք, այլ գեհենին տանջանօք տանջիցիս. զի գոնէ 'ի սպանանէն ևս ոչ մնաբերիցես։ Քանզի չէ և չէ իսկ ինչ անհնարին քան զթշնամանսն, որ առաւել զայրացուցանիցէ զմիտս մարդկան. իսկ յորժամ և բանք թշնամանացն կսկծելիք իցեն, կրկին խաբոյկս վառիցի։ Այլ մի ինչ փոքր համարիցիս զմորոն կոչել. զի որով ընդհատ յանամոնցն եմք, և առաւել մնօք իսկ՝ և իմաստութեամբն եմք մարդիկ, և յայնմանէ զրկիցես զեղբայրն, ամենևին իսկ բառնաս 'ի նմանէ զաշնուականութիւն։

Այլ արդ այսուհետև մի վայրապար 'ի բանսն հայիցիմք, այլ և զարդեամբքն ևս գայցեմք, և զամսն

զմտաւ ածիցեմք. և տեսցուք ծրչափ վէրս դնիցէ բանս այս 'ի սրտի, և յորպիսի չարիս գրգռիցէ։ Վասն այնորիկ և Պաւղոս ոչ միայն զշուտս և զիգայեալս, այլ և զամբաստանս տարագիրս առնէ յաբքայութիւն։ Եւ առաւել յիրաւի իսկ. քանզի թշնամանօղն զսէր ըստ խնամս խախտէ, և 'ի պէսպէս օձիրս գրգռէ զընկերն, և հանապազորդ ատելութիւնս գործէ, և զՔրիստի անդամն քակտէ 'ի մարմնոյն. զոր զցանկալի զիաղաղութիւնն միշտ հանապազ առնէ հալածական, և բազում տեղի և մուտ տայ սատանայի թշնամանօքն, և եւս զօրագոյն առնէ զհակառակորդն։ Վասն այնորիկ և Քրիստոս զի զՋիլս նորա զօրութեամն հարկանիցէ, յայն սակս այսպիսի օրէնս ընծայեցոյց. և բազում խնամս զսիրոյ պատուիրէ։ Օ՜ի մայր ամ բարութեանց, և աշակերտայն ծանօթ, և որ զմեր կեանսս զամ հաստատուն ունիցի, նա է։ Եւ յիրաւի իսկ զարմանս թշնամութեան՝ որ [1] ապականէ ըստ սէրն, կոտորէ. և զաղբեւրս գրգռութեանն մեծաւ առաւելութեամբ ցամաքեցուցանէ։

Եւ արդ մի ընդ վայր ինչ և ըստ աւելեաց ասա ցեալ զբանն համարիցիս. այլ 'ի միտ առեալ զանտի ուղղութիւն զարմանայիս ընդ օրէնսն նորա մեղմակասս. զի ոչ այնպէս այ հաճոյ ինչ է՝ որպէս միաբանել և կապել զմեզ ընդ սէր միմեանց։ Վասն այնորիկ և անձամբ իսկ և աշակերտաւքն իւրովք, որ 'ի նորումն էին և 'ի հնումն, բազում անգամ զսոյն բանս ճառէ. և յաճախագոյն վերժմնդիր լինի այնոցիկ՝ որ արհամարհիցեն զայնպիսի իրս։ Օ՜ի չիք այնպիսի ինչ՝ որ զչարիս ծնանիցի և հաստատիցէ [2], որպէս յորժամ սէրն 'ի միջոյ բառնայցէ։ Վասանզի և ասէ իսկ. «Յորժամ բազմանայցէ անօրէնութիւն, յայնժամ ցամաքեսցի սէր բազմաց»։ Որով Կային եղբայրասպան գտաւ, և Այսաւ եղբայրատեաց. նոյնպիսիք և Յովսեփու եղբարքն. և այսպէս բազում չարիք յաշխարհս մտին առ 'ի սիրոյն ցամաքելոյ։

Վասն այնորիկ և ինքն նոյն՝ զապականիչ սիրոյն

[1] Յօրինակին Բ. Թշնամութիւն նոր ոգոյնք։ [2] 'Ի լուս. արհամարհիցէ։

յամ կողմանց բազում հաւատեօք 'ի միջոյ բառնայ։ Այլ ոչ այնչափ միայն, այլ և այլ իմն աւելի քան զասացեալսն ընծայեցուցանէ. որովք յայտ առնէ, թէ ուրչափ ինչ փութացուցանէ 'ի նոցն։ Զի յետ սպառնալոյն եթէ պարտաւոր է այնպիսին ժողովրդեան և դատաստանի և գեհենի, յարէ դարձեալ յառաջինն և այլ ևս նոցին միաբան, և ասէ. «Այնթէ հանիցես պատարագ 'ի սեղան, և անդ յիշեսցես՝ եթէ եղբայր քո ունիցի ինչ խիթ զքէն, թող զպա տարագն քո առաջի սեղանոյն. և երթ նախ հաշտեաց ընդ եղբօրն քում, և ապա եկեալ մատուցանիցես զպատարագն քո»։

Ո՛վ բարերարութիւն, ովք մարդասիրութեան առաւելութիւն. զիւր պատիւն արհամարհել տայ վասն զընկերն սիրելոյ. զի յայտ արասցէ, թէ և ոչ զառաջինսն զորս սպառնացաւ, ոչ առ ատելութեան ինչ սպառնացաւ, և ոչ զի տանջելն ինչ յօժարիցի, այլ առ 'ի բազում խնամոց։ Այլ արդ զինչ ինչ կայցէ մեղմագոյն քան զայսպիսի պատգամն։ Այսպիսեալի, ասէ, իմ պաշտօնն, զի քո սերն հաստատեսցի. քանզի և հաշտելն իսկ ընդ եղբօրն՝ պատարագ ՝ի՜ է։ Ո՛ ասն այնորիկ ոչ ասաց՝ թէ յետ մատուցանելոյն կամ յառաջ քան զմատուցանելն, այլ մինչդեռ առաջին իսկ կայցէ պատարագն, և մինչդեռ սկիզբն իսկ ելցէ ընծային, առաքէ հաշտել ընդ եղբօրն։ Ո՛չ յորժամ կատարիցէ, և ոչ յառաջ քան զդնելն, այլ մինչդեռ 'ի միջին կայցէ, հրամայէ ընթանալ։

Այլ արդ ընդէր հրամայեսցէ զայս այսպէս առնել, կամ վասն ի՞նչ։ Զոտի ինձ, եթէ երկուս ինչ իրս ակնարկիցէ այսու և յարդարիցէ։ Ա՛ի՝ որպէս և յառաջագոյնն իսկ ասացի, թէ զսէրն պատուէ, և լաւ ևս քան զպատարագն համարի, թէ առանց սորա և նա չէ ընդունելի։ Այլ միւս ևս, զի յորժամ հարին 'ի վերայ կայցէ՝ անհնար լինի չհաշտել։ Զի յորժամ հրամայիցի չմատուցանել նախ քան զհաշտելն ընդ ընկերին, 'ի հարկէ ձեռն ածել՝ խափանեալն կալով 'ի հաշտութիւն տրամեցելոյն՝ և 'ի լուծանել թշնամութեան։ Ա՛ ասն այնորիկ և յայտնագոյնս իսկ զնա՛մ ասէ երկեցուցանելով և զարթուցանելով. քանզ

զի ասէ, թէ «Լուծող զպատարագն քո». և ոչ մինչև յայսչափ միայն, այլ ածէ զնովիմբ՝ թէ «Լուսոյն սեղանոյն». զի և 'ի տեղւոյն արկանիցէ նմա արհաւիրս։ «Լու երթ». և ոչ վայրապար ասէ՝ թէ երթ, այլ յաւելու և թէ «Նախ. և ապա եկեալ մատուցանիջիր զպատարագն քո»։ Օ՛ի ամենևին իսկ այսու յայտ առնիցէ, եթէ ոչ ընդունի սեղանն զայնոսիկ՝ ոչք թշնամութիւն ինչ ընդ միմեանս ունիցին։

Լուիցէն միջամուխք խորհրդոյն՝ որ թշնամութի ընդ ընկերս ունիցին, եթէ յորպիսի սեղան մատչելոց իցեն։ Լուիցէն և որ չև և ս իցեն 'ի խորհուրդն մտեալ. զի և նոքա հաղորդութի ունին ընդ բանին. քանզի և նոքա մատուցանեն պատարագ զաղօթս և զողորմածութիս։ Լու զի այն և ս պատարագ է, լուր մարգարէին՝ որ ասէ իբրև յերեսաց ՝ այ, եթէ «Պատարագ օրհնութի փառաւոր արասցէ զիս». և դարձեալ՝ եթէ «Ի՝ատո՛ այ պատարագ օրհնութի». և դարձեալ՝ «Ի՛մբառնալ ձեռաց իմոց՝ պատարագ երեկորին»։ Օ՛ի թէ և աղօթս 'ի նոյն միտս մատուցանիցես, լաւ է նախ թողուլ զաղօթսն՝ և երթալ հաշտել ընդ եղբօրն, և ապա գալ մատուցանել զաղօթսն։ Ա՛ն այնորիկ ՝ամ՝ ինչ եղև, յայն սակս իսկ և ՝ած մարդ եղև, և զ՝ամ հնարս հնարեցաւ՝ զի զմեզ ժողովեսցէ։

Լու աստ զվնասակարն առ վնասակէն առաքէ. իսկ յաղօթսն՝ զզրկեալն առ զրկիչն։ Ընդ ասէ, «Լուսոյն՝ զոր մարդկան զյանցանս նոցա». և աստ ասէ, «Լու թէ ունիցի ինչ ընդ քեզ խիղճ եղբայրն, երթ առնա»։ Ա՝ռնաւանդ զի և աստ իսկ թուի ինձ՝ եթէ զզրկեալն առ զրկիչն առաքիցէ. քանզի և չասաց իսկ, եթէ արա՛ ընդ քեզ հաշտ զեղբայրն, այլ թէ «Լու երթ հաշտեա՛ ընդ եղբօրն»։ Լու թուի՛ եթէ զայնմանէ որ տրտմեցոյցն՝ ասիցէ, բայց ամենևին յայտ է՝ եթէ զտրտմելոյն ՝ռառէ։ Օ՛ի թէ սիրով, ասէ, ընդ ընկերին հաշտիցես, ապա և զիս ընդ քեզ հաշ՝ առնես, և մեծաւ համարձակութի՝ կարիցես մատուցանել զպատարագն։ Ը՛սպա թէ և բորբոքիցիս, իմասջիր եթէ ես և ս առաւել։ Լս արհամարհել զիս ախորժելով հրամայեցի, զի դուք միմեանց

սիրելիք լինիցիք. և զոյն իսկ բաւական համարիցիք 'ի միութեան բարկութեն։

Այլ ոչ ասաց, թէ յորժամ կարի մեծ ինչ վնաս գործեալ իցէ հաշտեսջիր, այլ թէ և զոյզն ինչ խիղճ ունիցի ընդ քեզ։ Այլ զոյն ինչ ոչ յաւել, և թէ յիրաւի իցէ և եթէ յանիրաւի. այլ խառն'ի խուռն, եթէ զինչ և ունիցի ինչ խիղճ։ Եպիսկոպոսն յիրաւի իցէ, սակայն չէ պարտ ձգել զթշնամութիւն։ Արանզի և Արն յիրաւի ցասուցեալ էր մեզ, բայց սակայն ետ զանձն փոխանակ մեր 'ի սպանումն, և չհամարեցաւ զոյն ամ յանցանս։ Որպէս և Պաւղոս յոլով ինն օրինակաւ ստիպեալ 'ի հաշտուիսն ածել՝ ասէ, եթէ «Արեգակն 'ի վերայ բարկութեան ձերոյ մի մտցէ»։ Զի որպէս աստ Արն պատարագաւն կաւ մի հաստատել զհաշտութիւնն, նոյնպէս և նա անդ տուընջեամբն յորդորէ 'ի նոյն. քանզի կասկածեալ ինն 'ի գիշերոյն, գուցէ առեալ զզայրացեալն և բոր-բոքիցէ։ Զի ցերեկ բազում ինչ իրք են՝ որ զբաւ-սուցանեն և ցածուցանեն. իսկ ցայդ յորժամ միայն իցէ, և առանձինն զնոյն զմտաւ ածիցէ, յաճախեն ալիքն, և բազմանայ ամբոխ մրրկին։ Վասն այսորիկ յառաջագոյն գրաւեալ՝ կամի նախ քան զգիշերն ա-ծել 'ի հաշտուն Պաւղոս, և ապա տալ ցայդութեան. զի ամենևին մի ինչ պատճառս դատարկութեան գտա-նիցէ թշնամին՝ առ 'ի բորբոքել զշնոյ բարկութեն։

Այնպէս և Արն ոչ սակաւ ինչ թոյլ տայ յապա-ղել, զի մի, մինչ պատարագն մատուցեալ կատարի-ցի, 'ի վհատութիւն անկեալ այնպիսին՝ ժամ 'ի ժամ արարեալ յապաղիցի։ Արանզի գիտէ՝ եթէ բազում երագութի պիտոյ է առ այնպիսի ախտ. և իբրև զի մատուն բժիշկ՝ ոչ միայն յորոց պարտ իցէ նախ քան զախտն զգուշանալ՝ յառաջագոյն պատուիրիցէ, այլ և զայնս ևս՝ որ յառողջութիւն ածիցեն։ Այնպէս և նա արգելումն կիրել մտրոս, զոյն ինչ՝ որ յառաջա-գոյն 'ի թշնամութենէն պահիցէ, յայտ առնէ. և հրամայելումն հաշտել, զոյն ևս որ յետ թշնամուն ախտք մատնելոց իցեն՝ խափանել։

Այլ տես զիմաստ ստստուութիւն բարբառի զերկո-սեան։ Զի անդ գեհենն սպառնայ, և աստ զպատա-

բաղն իսկ չընդունի յառաջ քան զՀաՀելն. զի ցուցցէ թէ ուրչափ ինչ է բարկութիւն. և այսու ՀամԻ առ հասարակ զարմանն և զպտուղն ջնջէ։ Այլ նախ ասէ, թէ մի բարկանար, և ապա թէ մի բամբասեր։ Այլ երկոքեան սոքա 'ի միմեանց առնեն. 'ի թշնամութենէն բամբասանք, և 'ի բամբասանացն թշնամութիւն։ Այլ վասն այնորիկ մերթ զարմանն կոտորէ, և մերթ զպտուղն եղծանէ, զի և զբոյս չարեացն սկզբան խափանեսցէ. ապա թէ բուսանիցի, և պրտուղ տայցէ ևս դառնագոյն, ամենևին այնուհետև հրոյ Ճարակ լինիցի։ Վասն այնորիկ իսկ և զդատաստանսն Ճառէ, և 'ի ժողովրդեանն և 'ի գեհենի պատժապարտ. և զպատարագն 'ի սեղանն՝ ապախտ առնել յառաջ քան զՀաշտութիւնն։ Այլ յաւելու 'ի նոյն և զմիւսն, եթէ «Յառաջագոյն հաշտեսջիր ընդ ոսոխի քում վաղվաղակի մինչդեռ իցես ընդ նմա 'ի ՃանապարՀի»։

Զի մի ասիցես, թէ ընդէ՞ր զուկիցիմն, վասն է՞ր 'ի յափշտակութիւն մատնիցիմ, յո՞ր սակս դատափետ առնեսքարշ լինիցիմ. և զայն ևս պատՀառս և բաբրս 'ի միջոյ բառնայ. հրամայէ և այնպէս ևս մի թշնամութի ընդ ուսեք ունել։ Այլ զի այս մեծ հրամանն էր, 'ի մերձաւորացս տայ խրատ. զթանձրամիտսն այս իմն աւելի քան զՀանդերձեալսն սովոր է գրաւել։ Այլ արդ զի՞ ասիցես, ասէ, եթէ բուռն քան զիս է, և յաղթահարէ։ Զոհ այսպէս իցէ, ևս չար յաղթահարէ՝ եթէ ոչ յառաջագոյն հաշտիցիս. և հարկ իցէ քեզ այնուհետև յատեան մտանել։ Զի յառաջ քան զյատեանն մտանել՝ թէպէտ և յընչից անկանիցիս, սակայն անձին ՀՐ ես. իսկ յորժամ 'ի ձեռս դատաւորին անկանիցիս, և 'ի կապանս ևս մտանես, և զյետինն պատիժս կրիցես։ Այլ եթէ զերծանիցիս անտի, երկուս ինչ բարիս շահիս։ Զի՝ զի 'ի վիշտս ինչ չանկանիցիս. և մի զի քո իսկ իցէ ուղղութիւն, և ոչ 'ի նորա ինչ բռնութենէ։ Այլ թէ այսպիսի բանից ոչ կամիցիս անսալ, ոչ նմա ինչ ՀԱաս այնպիսի կարիցես առնել, որպէս և քում անձինդ։

Տես զիարդ և ասա իսկ ստիպէ. «Յառաջագոյն, ասէ, հաշտեսջիր ընդ ոսոխի քում». և յարէ 'ի նոյն,

թէ վաղվաղակի. և չհամարի զայն բաւական, այլ յաւել ևս, թէ «Մինչ դեռ իցես ընդ նմա 'ի ճանապարհի»։ Այս այսու ամենայն ասիցէ 'ի նոյն մեծաւ առաւելութիւն. զի ոչ այնչափ ինչ եղծանէ զմեր ոգն, իբրև զծուլութիւն և յապաղել 'ի գործս բարութեան. բազում անգամ և անկանել յիմն առնէ։ Օ որ օրինակ և Պաւղոս յառաջ քան զմտանել աբեղական խրատէ քակել զթշնամութիւնն. և վերնոյին ասէ՝ յառաջ քան զմտուցանել պատարագին հրամայէ հաշտել. նոյնպէս և աստ ասէ. «Վաղվաղակի մինչդեռ իցես դու ընդ նմա 'ի ճանապարհի». մինչև զդուրս կոխեալ իցէ զդատաստանի, մինչև հասեալ կայցես 'ի մէջ առնին, մինչև մտեալ իցես ընդ իշխանութիւն դատաւորին. զի մինչև մտեալն իցես՝ դու որ ես ամ իրացն. իսկ յորժամ ընդ հարկաւ մտանիցես, ոչ որպէս դուն կամիցիս, այլ որպէս ինչ բռնութիւն հրամայիցէ։

Այս զինչ իցէ բարեմիտն[1] ունել ընդ ոսոխին։ Կամ այն իսկ է՝ բնաւ յանձին ունել զնմանս. կամ այնպէս տալ իրաւունս, որպէս թէ ընդ դատաւորաւն իսկ մտեալ՝ արդար զնչինն կորովիցէ. զի մի անձնսիրութեամբն և զիրաւունսն ևս կորուսանիցէ. այլ որպէս և զիւր ինչ՝ նոյնպէս և զընկերին իրս վերձարիցէ։ Այս եթէ մեծ ինչ թուիցի այս, ընդ այն մի ինչ զարմանար. զի վասն այնորիկ եդ[2] զայն ամ երաշնութիւն՝ առ 'ի յորդորել և յերիւրել զմիտս լսողին, զի պիտանացու գտանիցի առ ընդունել զայսպիսի ամ օրէնսդրութիւն։

Իսկ ոմանք ասեն, եթէ զսատանայէ ինն ակնարկէ ոսոխին անուամբ, և հրամայէ ոչինչ ունել 'ի նոցայոցն. զի այն է, ասեն, բարեմիտն լինել, հրաժարելն 'ի նմանէ, յորժամ աստի երթեալ՝ ոչինչ գտանելի նորա մանն ընդ սմա. ապա թէ ոչ այնպէս ինչ իցէ, անհրաժեշտ լինիցին տանջանքն։ Այլ ինձ այսպէս թուի՝ եթէ զայսմ իսկ դատաւորաց ասէ, և զայսմ ատենէ և զայսմ բանէ։ Դանդի բարձրագունութիւնքն և հանդերձելովքն պատկանեցայց, ապա և

1 'Ի լուս. Բարի Գործոն։ 2 'Ի լուս. Եդ։

մեռաւորօքս երկեցուցանէ։ Իբրեւ և Պաւղոս, զի մերթ հանդերձելովքն, և մերթ մեռաւորօքս յորդորէ զլսողն. զի յորժամ 'ի չարեաց մերժել կամիցի զոք, զիշխան սուր ընդ մէջ ածեալ բերէ 'ի մէջ 'ի սաստ չարագործին. զի «Եթէ զչար ինչ գործիցես, ասէ, երկիւղիր. զի ոչ վայրապար ինչ ածեալ իցէ սուսեր ընդ մէջ. զի այ պաշտօնեայ է»։ Եւ դարձեալ 'ի հնազանդելն հրամայել, ոչ միայն զայ երկիւղն 'ի միջի դնել, այլ և զիշխանացն սաստ. քանզի և ասէր իսկ, թէ «Հարկ է հնազանդ լինել՝ ոչ միայն վասն բարկութեան, այլ և վասն խղճին մեռայ»։ Զի զանմիտն, որպէս և ասացի իսկ, ոչ այն միայն սոսոր է ածել յուղղութիւն, այլ և որ ինչ յայտնի իցէ՝ և անդէն առ ոտս ելանիցէ։

Վասն որոյ և Պօ՛ռ ոչ միայն զգեհենն յիշեցուցանէ, այլ և ատենիւ և բանտիւ և ամ Ճգամբք որ անդ դիպիցին՝ սպառնայ. զի այսու ամիւ զարմատ սպանութեան կոտորիցէ։ Զի որ ոչ բամբասիցին, և ոչ դատափետ ձգձգիցի, և ոչ թշնամութեի ինչ ընդունաքք ունիցի, զիարդ իցէ զի սպանանել ժտիցի։ Զի այսու ևս յայտ լինիցի, եթէ ընկերին օգտէ և մեզ յօգուտ գործի։ Զի որ ընդ ոսոխին բարւոք միտս ունիցի, որչափ ևս առաւել իւր շահ առնիցէ, յորժամ յատենից և 'ի բանտից և յամ տառապանաց զանձն ազատիցէ։

ՑՈՐԴՈՐԱԿ

ՀԱՒԱՆԵՍՑՈՒԻՐ այսուհետև բանիցս ասացելոց, և մի վիճեսցուք, և մի հակառակեսցուք. զի մնասանդ և յառաջ իսկ քան զհատուցմունսն՝ կայ հեշտականութեի և օգուտ 'ի հրամանն։ Իսկ եթէ բազմաց ծանրատաղտուկ ինչ և բազում աշխատութեի կարծիցին, զմտաւ ածջիր՝ եթէ վասն Պ'ոի առնես, և տրտմականն հեշտական լինի։ Եթէ այսպիսի միտս ունիցիմք հանապազ, չլսիմք երբէք իբրև 'ի ծանրաբեռնեալ ինչ, այլ բազում յամ կոգմանց շահիցիմք

հեշտականութիւն. և չթուիցի այնուհետև վաստակն վաստակ. այլ ուրախ և 'ի տոկ անկանիցի, և քան զևս քաղցր և հեշտական թուի։

Եւ յորժամ ընդ այնմ ընդելնուցուս, ածէ կացմ հանդէպ նմին մարտ պատերազմի զչարեացն պատրանս և զընչիցն ցանկութիւն, այնպիսի մրտաց՝ որ խորհիցին, թէ բազում վարձս առնլոց եմք վասն զժամանակեան հեշտականութիւնս արհամարհելոյ։ Եւ ասիցես անդէն ցանձնդ. տրտմիցիս զի զրկեմն ըզքեզ 'ի հեշտականացս. այլ ուրախ լեր՝ զի երկնից բարութիւնն լինիմ քեզ առիթ. քանզի ոչ եթէ վասն մարդոյ առնես, այլ վասն այ. անսա սակաւիկ մի, և ապա տեսանիցես ուրախ ինչ իցեն շահք. ժուժ կալեա ասէն 'ի կեանս աշխարհիս, և առնուցուս անդ անբաւ համարձակութիւն։

Օ՛ի թէ այսպէս խօսիցիմք ընդ նմա, և ոչ միայն զծանրատաղտուկ առաքինութիւնն ածիցեմք զմտաւ, այլ և զդպակէն՝ որ անտի բոլորի յիշեցուցանիցեմք, վաղվաղակի զերծուցանիցեմք զնա յայմ չարեաց։ Օ՛ի թէպէտ և սատանայ զհեշտականն ժամանակեան կարծեցոյց. և զվիշտն հանապազորդ համարել, սակայն յաղթէ և գերի՛ելերոյ լինի. յորժամ՝ 'ի մէնջ անդրէն ընդդէմ լսիցէ, թէ աշխատութիւնն ժամանակեան է, և հեշտականութիւնն և գիւրութիւնն՝ անմահական։ Բայց զինչ օգուտ իցէ մեզ, որ չուտնիմք յանձին զառաքինութիւնն յետ այսչափ միխիթարութիւն։ Բաւական մեզ ընդ հատուցմանցն՝ պատճառք վաստակոցն, և ստուգութեամբն հաստատել 'ի միտ՝ թէ վասն այ համբերեմք։ Օ՛ի թէ որ զթագաւոր ոք պարտական [1] ունիցի, բաւական յայմի համարի ունել այնու յոյս և միխիթարութիւն կենաց իւրոց. զմտաւ ած՝ թէ որպիսի ոք իցէ, որ զմարդասերն և զյաւէժ կենդանական զած՝ և փոքր և մեծամեծ ուղղութեամբ պարտական կացոյց անձին։

Եւ արդ մի այսուհետև պատճառս զաշխատուին և զբրտուս համարիցիս. զի ոչ եթէ հանդերձելոյն միայն յուսով, այլ և այլով օրինակաւ արար ած թէ-

1 Յօրինակին պարտական։

թեւ զառաքինութիւն, ամենեւին ամ ուրեք ձեռնկալ
լու և պատսպարան լեալ։ Եթէ միայն կամիցիս գնել
սակաւիկ մի նպաստ լինել յաժարութիւն, և այլն ամ
իւրովի և ինքնին զՀետ գայցէ։ Կամի զի և դու սա
կաւիկ մի վաստակիցիս, զի և քո յաղթութիւն գտա-
նիցի։ Որպէս թագաւորին կամք այն էն, եթէ մեծ
կայցէ բարեկիրն 'ի պատերազմի, նեռս ձգիցէ, և
արութիւս կացուցանիցէ, և նպաստ 'ի յաղթութիւնն
լինիցի, զի և նմա քաջութիւն համարիցի. թէպէտ և
կարի իսկ յայտ է՝ զի բնաւ յաղթութիւն թագաւո-
րին է և ամ զօրացն։ Այնպէս և ամ 'ի մարտին՝
զոր ընդ սատանայի ունիմք, առնել։ Մի ինչ միայն
պահանջէ 'ի քէն, զի թշնամութիւն ևեթ սատակ ու-
նիցիս ընդ ախոյեանին. և զամ ինքն վճարէ և մղէ
զպատերազմ։ Եթէ ցասմամբ վառեալ իցես, և ըն-
չից ցանկութիւք բորբոքեալ, և եթէ այլով իւիք կա-
րեօք բռնադատեալ, վաղվաղակի հասանէ 'ի թի-
կունս. միայն թէ զքեզ տեսանիցէ կազմ և պատրաս-
տական 'ի մարտ պատերազմի. և դիւրաւ զամ վա-
նիցէ, և զքեզ յապահով 'ի բոցոյն առնիցէ իբրև
զերիս մանկունսն 'ի հնոցին Բաբիլոնի։ Օ՛ն և նո-
քա ոչինչ աւելի քան զկամն եղեն ընծայ։

Արդ զի և մեք զամ հնոցն անառակ հեշտակա-
նութիւն ցածուցանիցեմք աստէն, և անդ ապրիցիմք
'ի բոցոյ դեհենին, զայս հանապազ խորհիցիմք, 'ի սոյն
հոգասցուք, և գործեսցուք յաժարութիւն զբարիս. և
ստեպ աղօթիւք զայ խնամն 'ի մեզ կորզեսցուք։
Այլ այնպէս որ ծանուցէն և դժուարին կիրք կարծի-
ցին այժմ, թէթևք և փոքրոգիք և ցանկալիք լինի-
ցին։ Մինչդեռ զկարեօքն վառեալ եմք, խիստ և
դժուարին և դառ 'ի վերս համարիմք զառաքինութիւն,
և զչարիսն քաղցր և հեշտական։ Այս եթէ սակա-
ւիկ մի հեռանայցեմք անտի, յայնժամ երևեսցի գաբ-
շելի և չարատես, և սա թեթև և դիւրին և հեշտա-
կան. և զայս 'ի բարեգործացն մարթի ստոյգ ուսանել։

Այլ լուր, զիարդ Պաւղոս զայն յետ զերծանելոյն
անտի համարի. «Օ՛ինչ, ասէ, պտուղ ունէիք յայն-
ժամ, վասն որոյ այժմ զամօթի հարեալ էք». և
զայս ևս յետ աշխատութեանն թեթև. «Որ այժմ,

ասէ, առժամայն թեթև նեղութիւն է»։ Թեթև կո-
չէ, և ուրախ լինի ընդ կարիսն, և յօրանայ յերաշ-
խէպան՝ զորս վասն Քրիստի էառ յանձն։ Օ՛ի և մեք
յայնպիսի բարս կացուցայուք զանձինս, բանիւքս ասա-
ցելովքս յարդարեսցուք զօրհնանապաղ. զառ 'ի յե-
տոյսն մոռասցուք, և յառաջադէմն նկրտեսցուք,
և 'ի կէտ և 'ի պարգևս վերին կոչմանն փութասցուք,
որով լեցի ամենեցուն մեզ հասանել շնորհաբն և
մարգասիրութեամբ տն մերոյ Յիսի Քրիստի. որում
փառք իշխանութիւն և պատիւ յաւիտեանս յաւի-
տենից. ամէն։

ՃԱՌ ԵՒԹՆՈՒՏԱՍՆԵՐՈՐԴ

“Լուարժուք, զի ասացաւ առաջնոցն, եթէ մի՛ հնայցես. բայց ես ասեմ ձեզ, եթէ ամ՛ որ հայի՛ ի կին առ ի՛ ցանկանալ նմա, անդէն շնացաւ ընդ նմա ի՛ սրտի իւրում”։

ՅՈՐԴԱՆ կատարեաց զառաջին պատուիրանն, և ի՛ զլուխ առաքինութենն և զգաստութենէ տարաւ հաւսոյց, ասա իբրև յուղի անկեալ գայ հասանէ յերկրորդ պատուիրանն. զի գոնէ այնու գտանիցի հաւանեալ մարդն օրինաց. զոր չէ պարտ երկրորդ պատուիրան կոչել, այլ երրորդ։ Զի առաջին ո՛չ այն է եթէ “Ամ՛ սպանանիցես”, այլ այն է, թէ “Ցերաճ քո տեր մի է”։ Զոր և պարտ իսկ է խնդրել, եթէ ընդէր ո՛չ նախ անտի արար սկիզբն, ուստի ըստ կիզբն պարտ էր առնել, և զնոյն առնեցուցանել, և զիւրոյ անձին իսկ զծանօթս ընծայեցուցանել։ Այլ քանզի չէ էր ժամանակ վասն իւրոյ անձին այնպիսի ինչ ուսուցանել։ Այլ այլ ազգ ևս. քանզի դեռ ի՛ խրատականս կրթել կամէր, և նշանօքն հաւանեցուցանել զլսօղս՝ եթէ արդարև՛ որդի է այ։ Զի թէ վաղվաղակի մինչև զայլ ինչ բարբառեալ էր, ասացեալ էր, եթէ լուարժուք զի ասացաւ առաջնոցն, եթէ ես եմ տէր քո, և բաց յինէն այլ ո՛չ դոյ քեզ. և անդէն ասէր, բայց ես ասեմ ձեզ՝ եթէ ինձ և ես երկիր պագէք, զամենեսին խրատուցանէր՝ իբրև ի՛ մոլեկան ոք հայել ի՛ նա։ Զի թէ յետ վարդապետութենն և այնչափ նշանաց, և մինչև այսպիսի իսկ ինչ էր յայտնի ասացեալ, դիւահար կոչէին զնա, եթէ յառաջ քան զայն ամ՝ այնպիսի ինչ մտաբերեալ էր ասել, զինչ ինչ արդեւք ո՛չ կոչէին զնա, և կամ զոր ինչ ո՛չ իմանային զնմանէ։ Իսկ ի դէպ ժամանակ պահելով զայսպիսեաց ինչ վարդապետութիս դիւրընկալ առնէր բազմաց զկրօնսն։

Վասն որոյ առ ժամանակ մի զանց առնէ զայնու,

և 'ի նշանացն միայն ամ ուրեք յարդարէ, և զառաւել վարդապետութիւնն յետոյ յայտնէր բանիւքն։ Այլ նախ նշանացն հանդիսիւք, և զվարդապետութիւն իսկ օրինակ առ սակաւ սակաւ մեղմով ընդ նմին խառնեալ՝ յայտնէր։ Զի իշխանութիւն այն պիսի օրէնս դնել և կարգել ուղղութիւն՝ զուշակացն և զմտադիր առ սակաւ սակաւ և 'ի կրօնսն իսկ ձգէր ածէր։ Վանզի և ասէ իսկ, եթէ "Զարմանային ամենեքին ընդ վարդապետութիւն նորա, զի ոչ որպէս զդպիրսն և զփարիսեցիսն ուսուցանէր"։

Այլ սկսեալ յընտրոծիսն ախտիցն մերոց 'ի ցասմանէ և 'ի ցանկութիւն, քանզի նոքա բռնագոյնք իմն էին 'ի մեզ՝ և քան զայլսն առաւել բնակաւորք, բազում իշխանութիւն և որպէս օրէնսդրի իսկ վայելի՝ ածէր զայնպիսի ախտն յուղղութիւն, և ամ հաստատութիւն խափանեալ արգելոյր։ Վանզի ոչ ասաց, եթէ մեռ ցօղն միայն իցէ տանջելոց. այլ որպէս զսպանողէն, այնպէս իմն է ասա մեռանէ. և զայրատ նայեցածն 'ի տանջանս հրաւիրէ. զի իմասցիս՝ եթէ յանձախազոյն քան զդպրացն իմն ձառէ։ Զայն որոյ և ասէ իսկ. «Եթէ որ հայիցի 'ի կին առ 'ի ցանկանալ, անդէն ընացաւ ընդ նմա 'ի սրտի իւրում»։ Այս ինքն, որ յայն հարեալ՝ զայն ևեթ գործ առնիցէ իւր, զգեղեցիկ մարմնոյն նշմարել հանապազ, և ըզպարկեշտ երեսս որոնել աչօք. որով զմիտսն կրթեալ յապուշ՝ որսայցէ յանհնարին ցանկութիւս, զինեալով զերեսս գեղեցիկս։ Վանզի ոչ եթէ զմարմինս ևեթ եկն զերծուցանել 'ի չարացն գործոց, այլ և զոգիսն նախ քան զմարմինն. և քանզի 'ի սիրտն զչնորհս հոգւոյն ընդունիցէ, զնա նախ սրբէ։

Այս զիարդ, ասէն, մարթ իցէ 'ի ցանկութեց ազատանալ։ Անաւանդ, եթէ կամիցիմք ևեթ, հնար է և նմա մեռանել, և անազգական լինել։ Այլ այլ ազգ ևս. ասա ոչ եթէ վայրապար զցանկութիւնն ինչ 'ի միջոյ բառնայ, այլ որ 'ի գեղեցիկ երեսաց զրզուութիւն ինչ ցանկութեց լինիցի։ Զի որ փութայցէ զգեղեցիկ երեսս ևեթ զնել, այնպիսին է որ առաւել բորբոքէ զհնոց ախտին. և զմիտսն 'ի գերութիւն մատնէ, և վաղվաղակի և դիւրաւ և 'ի գործն

և զայդ։ Վասն այնորիկ ոչ ասաց՝ թէ որ ցանկանայցէ շնալ, այլ թէ « Որ հայիցի առ ցանկութիւն »։ Այլ 'ի բարկութենն խտրոց ինն 'ի միջի դնէ ասելովն, եթէ տարապարտուց բարկանալ և զուր. իսկ աստ ոչ այսպիսի ինչ, այլ միանգամայն իսկ արգելու զցանկութիւնն։ Թէպէտ և երկոքեան ընտաբոյսք, և 'ի բարի պէտս հաստատեալ իցեն 'ի մեզ, և ցաւումն և ցանկութիւն. զի միոքն զչարս տանջիցեմք և զստահակս յուղղութիւն ածեմք. և միւսոքն որդիս ծնանիցիմք, և պայազատս և ժառանգս յետ մեր կարգիցեմք։

Այլ աստ ընդէր ոչ դնիցէ խտրոց 'ի միջի։ Այլ և աստ իսկ, եթէ կամիցիս միտ դնել, կայ մեծ խտրոց 'ի միջի։ Զանազի ոչ վայրապար թէ որ ոք և ցանկանայցէ. զի և որք 'ի լերինսն նստիցին՝ չեն առանց ցանկութիւն. այլ ասէ, « Թէ որ հայիցի առ ցանկութեան »։ Այն իսկ է, որ անձամբ անձին շեղջիցէ զցանկութիւն, առանց ուրուք բռնադատելոյ արկանիցէ զչար գաղանն 'ի դարտակացեալ միտս. և այն ոչ եթէ 'ի բնութենէն ինչ լինիցի, այլ 'ի քումմէ ծուլութենէ։ Զոր և 'ի հինն իսկ պատուիրէ անդուստ 'ի վերուստ, եթէ « Մի պշնուցուս ընդ գեղ օտար »։ Զի մի՞ ոք ասիցէ, թէ պշնուցումդ միայն՝ և ըմբռնիցիմ ոչ, ընդ հայելոյն և եթէ պատիմք ինչ իցեն. զի մի յայն ապաստան՝ և 'ի մեզն և մտաբերիցես անկանել, վասն այնորիկ յառաջագոյն պատուիրէ։

Այլ եթէ հայիցիմ, ասէ, և ցանկանայցեմ իսկ, և գործ ինչ չար ոչ գործիցեմ, այնր զինչ բանք իցեն։ Այլ այնու և ընդ շունս համարեալ ես։ Զանազի ետ վՀիռ օրէնսդիրն. և չէ պարտ վայրապար յողալ և պշնուլ աւելի։ Զայց թէ միանգամ կամ երկիցս կամ երիցս ուրեք հայիցիս՝ թերևս կարասցես ապրել. ապ՝ եթէ և յաճախիցես, քեզէն իսկ բորբոքես զՀնոցն, և անկանիցիս 'ի բուռն. զի ոչ եթէ արտաքոյ ուրեք իցես քան զմարդկեղէն բնութիւն։ Զոր օրինակ մեք յորժամ տեսանիցեմք զմանուկ ոք, զի սուր ինչ 'ի ձեռին ունիցի, թէպէտ և չիցէ խոցեալ, սակայն զան հարկանեմք, և ասատ 'ի վերայ դնեմք, մի երբեք առնուլ սուր ինչ 'ի ձեռն. նոյնպէս

և ՝ած զյայրատ նայեցածն՝ յառաջ քան զգործսն՝ հրամայէ խափանել, զի մի երբեք և ՝ի գործսն ևս գայցէ։ Օ՛ի որ միանգամ զբոցն բորբոքիցէ, թէ՝ պէտ և չիցեն ուրեք բնաւ կանայք հուսկ, կանգնէ միշտ ՝ի միտս կուռս իրացն աղտեղեաց. և այնու բաւ զում անդամ և ՝ի գործս իսկ երթեալ հասանիցէ. վասն այնորիկ և զբոլոն բաջաղանս հրամայէ խա՝ փանել՝ Վ՚ն։

Լ՚ս արդ զինչ ինչ պատասխանի կարիցեն տալ, որք և տանտիկնայս ևս ունիցին զհաւատաւորսն։ Օ՛ի ըստ օրինադրին օրինաց՝ բազում հնութեց հա՝ նապազօր գտանին պարտաւորք. զի միշտ ցանկութիւն և խնամով հայեին ընդ նոսա։ Վ՚ասն այնորիկ իսկ և երանելին Յովբ այսպիսի իմն՝ օրինաց պարսպէր զանձն հանապազ յայնպիսի տեսլենէ։ Լ՚սա և մեծ պատերազմ է՝ յետ հայելոյն և չվայելելոյ ՝ի սէր սիրելւոյն։ Լ՚ս ոչ այնպէս ՝ի հայելոյն միայն մեթ՝ ութեամբ ՝ի մեզ զցանկութիւն, որչափ յաճեցուցանելոյ զցանկութիւն՝ դնեմք վերս մտաց, և զբաւոր առնեմք զանխոյեանն, և բազում մուտ և ընդարձակութիւն տամք սատանայի. և այնուհետև ոչ կարիցեմք մերժել զնա ՝ի բաց, յորժամ ՝ի ներքս ՝ի խորհուրդս արկանիցեմք։ Վ՚ասն այնորիկ իսկ ասէ, մի՝ հնայցես աչօքդ, զի մի և մտօքդ ևս հնայցես։

Վ՚արթի հայել առանց մեղաց՝ որպէս և ցածքն հայիցին. վասն այնորիկ ոչ զվայրապար հայելն խա՝ փանէ, այլ զցանկութիւնն հայեցուածսն։ Լ՚թէ ոչ այսպիսի ինչ կամիր, ապա ասէր՝ թէ որ վայրապար իսկ հայիցի ընդ կին մարդ, հնայ։ Լ՚այց նա աւանիկ ոչ այնպիսի ինչ ասէ, այլ թէ «Որ հայիցի առ ցան՝ կութիւն». որ հայիցի իբրև վայելել իմն ՝ի ցանկութիւն երեսացն։ Լ՚սա և ոչ վասն այնորիկ եւ քեզ ՝ած աչս, զի նոքօք հնութիս կուտիցես քեզ, այլ զի տեսանիցես նոքօք զարարածս, և փառաւորեսցես զարարիչն։ Օ՛ի որպէս բարկանալն տարապարտուց մարթի, նոյնպէս հայելն ընդ վայր և առ ցանկութիւն։ Լ՚թէ կամիցես հայել և ուրախ լինել, ընդ քո կինն հայես՝

1 ՝Ի լուս. ՝Ի գԺ։

ջիր միշտ. և չլցեն ինչ այնպիսի օրէնք՝ որ զքեզ արգելուցուն։ Այլ թէ ընդ օտար կնոջ դեղ պշուցեալ յողայցես, և նմա վնաս առնես զվայրօքն ածելով զաչս, և յանօրէնութիս բորբոքես։

Օ՛ի թէպէտ և ձեռօքդ չջոչափեցեր, սակայն աչքդ զնեցեր. վասն այնորիկ և այն իսկ շնութիւն համարեալ է. և յառաջ քան զբուն տանջանսն՝ ոչ սակաւ տանջանս ածիցէ՛ ի վերայ. և բազում խռովութիւ և աղմկաւ ամ խորհուրդքն՝ ի ներքս ընուցուն, բազում մրրկաւ և չարաչար ցաւօք. և ոչինչ ընդհատ՝ ի գերեաց և՝ ի կալանաւորաց գտանիցի՝ որ զայնպիսի սխտ ախտանայցէ։ Օ՛ի մին նեռատիպ է, և միսն վէրս յանձն առնու։ Այ՝ և ոչ նա ինչ ձրգեաց զնեսն, այլ դու անձամբ յանձն առեր զհատոյր հարուածսն՝ յայրատսն հայելով։

Այ՝ զայս ասելով՝ ոչ եթէ զցածուն կանայս ինչ աղարտեմ, այլ զայնոսիկ՝ որ լկտի զարդուքն պՀնիցին, և զրազմաց աչս գերիցեն։ Օ՛ի թէպէտ և՝ ի գործ ինչ ոչ հասանիցեն, սակայն պատրանօքն պատժապարտ լինիցին։ Օ՛ի նոքա զդէզն խառնեցին՝ և զթմբիրն կազմեցին, թէպէտ և զբաժակն չմատուցին։ նա և զբաժակն իսկ մատուցին, թէպէտ և ոչ զք գտաւ որ ըմպիցէ։ Այլ ոչ, ասեն, առ կանայս ինչ լցէ օրէնդրութիս։ Այլ ես ցուցանեմ, զի առհասարակ արս և կանայս կարգէ զօրէնսն. թէպէտ և ընդ արս խօսիցի, զլեռնն ընդ ամ մարմինն կարգէ զկրաան։ Օ՛ի զայր և զկին մի ինչ երէ գիտէ կռչել. և ոչ ուրեք որոշէ ազգս յազգաց յօրէնդրութեանն։

Այ՝ զա թէ առանձինն ինչ կամիցիս զնոցա պատուհաս լսել, լուր Այ՝սայայ, որ յաՀախագոյնս ինն յերդ արկեալ հինգնէ զնոցա կերպարանս, և զհայեցուածսն, և զքարշել ատորատցն, և զկաքաւել ոտիցն, և զզարդս գլխոց և պարանոցաց։ Լուր ընդ նմա և՝ Պաւղոսէ երանելւոյ, որ բազում օրէնս գնէ նոցա վասն հանդերձից և ոսկեացն զարդուց, և ծամոցն հիւսից, և վասն գրգռութեան և փափկութեան, և վասն այլոց ևս ինչ այսպիսեաց. զի յաՀախագոյնս ևս ստատեկ կանանց ազգի։ Այ՝ Վ՚ա յաջորդօքն եր-

ըև առակաւ իմն զնոյն Ճառէ. յորժամ ասիցէ՝ եթէ խլեա և 'ի բաց ընկեա զդայթակղեցուցիչն, 'ի նոսա իմն հայեցեալ ասէ զնոյն սատանա։ Վասնզի յարէ իսկ 'ի նոյն. «Եթէ ակն քո աջ դայթագղեցուցանէ զքեզ, խլեա զնա, և ընկեա 'ի քէն 'ի բաց»։ Օ՛ի մի՛ ասիցես, եթէ զիա՞րդ կոյր և կաղ և խեղ կարի՛ ցեմ լինել։ Մի՛չ զանդամոց ինչ ասէ, և մի՛ ինչ դու զայն կարծիցես. զի ո՛չ մարմնոյն ինչ մնասէ, այլ՝ ամ ուրեք զչար բարոյսն բամբասէ։ Օ՛ի ո՛չ աչքն և եթէ տեսանեն, այլ միտքն են որ տան աչաց տեսանել։ Օ՛ի բազում անգամ յորժամ միտքն զբօսեալ լ՝ ցեն, աչքն ո՛չ տեսանեն զմերձաւորսն. զի յայտ լ՝ նիցի՝ եթէ ո՛չ ամ ինչ աչացն ազդմանն է։ Օ՛ի եթէ զանդամոցն ինչ Ճառէր, ո՛չ ասէր եթէ զաջու ակն միայն խլեսջիր, այլ զերկոցունց իսկ ասէր. զի որ յաջու ականէն ոք դայթագղեսցի, յայտ իսկ է, թէ և 'ի ձախմէն զնոյն իրս կրեսցէ։

Եւ արդ ընդէ՞ր զաջ ակն և զաջ ձեռն յաւելու՝ ցու։ Օ՛ի ուսանիցիս, եթէ ո՛չ վասն անդամոցն ինչ են բանք, այլ վասն այնոցիկ՝ որ կարի ինչ ընտանու՝ թի՛ ունիցին ընդ մեզ։ Օ՛ի թէ այնպէս զոք սիրիցես իբրև զաջ ակնդ, և կամ թէ այնպէս պիտանի ոք իցէ քեզ իբրև զաջ ձեռնդ, և ոգւոյդ փնաս ինչ առ՝ նիցէ, հա՛տ և 'ի բաց ընկեա։ Եւ տես զիա՞րդ ո՛չ ա՝ սէ՝ թէ մերժեա 'ի նմանէ, այլ զբաղում որոշումն յայտ առնէ. «Խլեա, ասէ, և ընկեա 'ի բաց»։ Եւ զի համառօտս իմն եւ զՀրամանն, ցուցանէ 'ի միւսմէ կողմանէ և զշահն 'ի բարութի՛ ցեն, և 'ի չարեացն զվնասն. և յամէ յայլասացիկ յորդորմանն։ «Լաւ իցէ, ասէ, քեզ, եթէ անդամ 'ի յանդամոցն կորնչիցի, և ո՛չ զի ամ իսկ մարմնդ անկանիցի 'ի գեհենն»։

Յորժամ ինքն ո՛չ ապրիցէ, և զքեզ եւս կորուսանիցէ։ Եթէ երկոքին ընկղմիցին, զի՞նչ ինչ պատ՝ Ճառք մարդասիրութի՛ ն 'ի միջի մնայցեն։ Օ՛ի 'ի քաւ կեցն 'ի միմեանց, զոմանք մնն ապրիցին։ Եւ արդ զիա՞րդ, ասեն, իցէ, զի Պաւղոս նզովկամէր լինել[1]։ Մի՛չ եթէ՝ զի մի՛ ինչ շահիցի, այլ զի թէպէտ և ինքն նզովիցի,

1 Յօրինակին ԱՆԷՐ։

գէթ զայլս ապրեցուցանիցէ։ Իսկ ասա աւասիկ երբ կոյսունց իմն վնաս լինի։ Ա ասն որոյ ոչ միայն ասէ՝ թէ իսկեա և էթէ, այլ թէ և 'ի բաց ընկեսա 'ի քէն։ Օ ի մի միւսանգամ ամիսոտիցես, եթէ 'ի նոյն միտս յամառեալ կայցէ. այնպէս զնա 'ի բազում պատուհասից ապրեցուցանիցես, և զքո անձնդ ազատ 'ի կորստենէն առնիցես։

Լոյս զի և սայմանագոյն տեսանիցես զշահս օրինացն, եթէ կամիս և 'ի մարմնոյ իսկ ածեալ տեսանիցեմք զանն։ Օ ի թէ յընտիր ոք առնէր, և հարկ ինչ 'ի վերայ կայր կամ զակն մի միայն հանել և ընկենուլ 'ի բաց, և զայլ մարմինն ապրեցուցանել, և կամ ամենևին իսկ զամ կորուսանել, ոչ ապաքէն զառաջինն [1] յանձին ունելիր։ Լոյս զի այս այսպէս է, ամ ումեք յայտ է. ոչ առ ատելութեամբ ինչ, այլ առսէր մարմնոյն հնարելիր զայնպիսի հնարս։ Լոյս արդ զսոյն իմանայցես և առ արս և առ կանայս։ Օ ի թէ որ սիրովն վնաս առնիցէ քեզ՝ առանց բժշկութեամբ կայցէ մնայցէ, յորժամ հատանիցես և 'ի բաց ընկենուցուս զայնպիսին, և դու 'ի ժանտագործ հարուածոցն ապրեալ լինիցիս, և նմա 'ի բազում տանջանաց թեթևագոյն լինիցի. և ոչ [2] այնուհետև ընդ նոքա չարին՝ և զքո և սկորստեան պատիժն կրիցես։ Ցեսանես, որչափ զգօնութիւն և խնամով լի են նոր պատուիրանքս. և որ կարծէրն բազմաց սաստիկ և համառօտ, անտի երևի առաւել մարդասիրութիւն։

Լուիցեն զայս ոքք 'ի թատերսն փութացեալ երթայցեն, և հանապազօր անձամբ անձանց ուսուցանիցեն ընութիւն։ Օ ի եթէ զընտանին վնասակար հատանել ընկենուլ հրամայէ, ապա զինչ պատասխանի կարիցեն տալ՝ ոքք զայնոսիկ, զորս բնաւին ոչ ճանաչիցեն, վասն միշտ անդ դեգերելոյն՝ ածիցեն զանձամբ զեղեռնն հանապազ, և բազմապատիկ պատրաստիցեն անձամբ անձանց զկորստեանն պատճառս։ Լոյս արդ ոչ միայն զայրատոն հայել արգելու, այլ քանզի զվնաս իսկ իրացն եցոյց, յառաջագոյն մատուցեալ ևս ձգէ զօրէնսն, զի հատանել ևս և 'ի

[1] Յօրինակին ՔՐԻՍՏՈՍ։ [2] Յօրինակին պակասէր ՝։

բաց ընկենուլ հրամայէ. և այնչափ բազում բանս շարժեալ վասն սիրոյ ընծայեցուցանէ զօրէնսդրութեան, զի յերկոցունց կողմանց ուսանիցիս զխնամն, և ոչպէս իսկ յամ կողմանց զքո օգուտն խնդրէ։

«Լսացար, ասէ, թէ որ արձակէ զկին իւր՝ տացէ նմա թուղթ ապահարազանի. բայց ես ասեմ ձեզ, թէ որ արձակիցէ զկին իւր առանց բանի պոռնկութեան, նա տայ նմա հնար. և որ զարձակեալն առնուցու՝ և նա հնայ»։ Ոչ նախ ևս յառաջագոյն մատչի, մինչև զառաջինսն բարբոք սրբիցէ։ Կա աւանիկ և այլ իմն նշանակ հնութեան յուցանէ մեզ. և թէ զինչ իցէ՝ ասել պարտիմք։ Օ՛ի օրէնք իմն հինք էին, եթէ զայն՝ որ ատիցէ զկին իւր յինչ պատճառս և իցէ, մի՛ ոք իցէ որ արգելուցու հանել արտաքս, և այլ փոխանակ այնր ածել՝ի տուն։ Եւ ոչ վայրապար ինչ հրամայէին առնել զայս օրէնքն. այլ և թուղթ ևս ապահարազանի տալ կնոջն, զի մի լինիցի նմա իշխանութեան անդրէն՝ի նոյն այր դառնալ. զի գոնէ կերպարանք ինչ հայթայթանօք լինիցին և երկրորդ ամուսնութեան։ Եւ թէ զայս այսպէս չէր հրամայեալ, և համարձակեալ էր զառաջինն հանել, և միւս ևս այլ առնել, և դարձեալ անդրէն յառաջինն դառնալ, բազում անխտիր խառնուրդք լինէին. և միշտ զիմեանց կանայս յափշտակէին ամենեքեան. և յայտնի իսկ հանապազ հնութիւք գործէին։ Ոման օրոյ ոչ առ՝ի սակաւ ինչ միութարութիւն հնարեցաւ զգիրն ապահարազանի։ Եւ այս վասն այլոց ինն մեծամեծ չարեաց լինէր։ Օ՛ի թէ հրամայեալ էր օրինացն զատելի կինն՝ի տանն ունել, սպանանէր իսկ այրն զկինն՝ զոր առեալր. քանզի այնպէս իսկ յանդուգնն է հրեիցն ազգ։ Եթէ յորդիս չենայէին, և զմարդարէսն կոտորէին, և իբրև զջուր հեղուին զարիւն, որչափ ևս առաւել՝ի կանայս իսկ չենայէին։ Ոմն այնորիկ զիրքրն թողացուցանէ, զի զմեծ ինամն խառփանիցէ։

Եւ զի ոչ յառաջագոյն այսպիսի ինչ օրէնք էին, լուր զինչ ասէն. «Որ՝ոլսէս, ասէ, վասն խստասրտութեան ձերոյ հրամայեաց զայն»։ զի մի անդրէն՝ի տան մարդ գործիցէք, այլ՝ի բաց հանիջիք։ Եւ զի ոչ միայն

զսպանութիւն, այլ ամենևին իսկ զցասումն կարձէ, յայն սակս և զայսպիսի օրէնս ընծայեցուցանէ։ Լաւ վասն այնորիկ ստէպ զառաջին բանսն յիշեցուցանէ, զի ցուցցէ՝ եթէ ոչ հակառակ ինչ նոցա, այլ միաբանք նոցին. և զնոսին ձգէ, և ոչ եթէ շրջէ ինչ. և յառաւել ուղղութիւն ածէ, և ոչ եթէ լուծանէ։ Լաւ արդ տես զիարդ ամ ուրեք առ արս ևեթ կարգէ զհրամանսն։

«Որ արձակէ, ասէ, զկին իւր, նա տայ նմա հնալ. և որ զարձակեալն առնէ՝ և նա հնայ»։ Օ՛ի մին՝ թէ պէտ և այլ կին ոչ առնուցու, այնու իսկ արար զանձն պատժապարտ, զի հնալն ետ կնոջն 'ի հանելն. և միւսն զայլոյ հանեալն առնելով՝ եղև հնացօղ։ Լաւ զայն մի ինչ զմտաւ ածիցես, եթէ նա էհան, և ես կին առնիցեմ, չէն ինչ բանք. զի թէպէտ և էհան, սակայն նորա կին է՝ որ էհան։ Լ՚այս զի մի ամենևին 'ի կնահանն ձգիցէ զինամն. և Հոխանալոյ ինչ պատճառս տայցէ կնոջն, և զայնր՝ որ առնելն կամիցի զկինն, փակեաց զդուրս առ 'ի նմանէ։ Օ՛ի ասելովն՝ եթէ «Որ զարձակեալն առնիցէ, հնայ», ակամայ իսկ զկինն ածէ 'ի զգաստութիւն. և յամենեցունց խնու զհանապարհն նորա. և չհրամայէ պատճառս գտանել ինչ կարձմտութեան։ Կամ զի ուսանիցի, թէ ամ հարկաւ յայնր անուն՝ որում 'ի սկզբանէն բաժին տուաւ, նմա պարտ է նստել. կամ թէ 'ի նմանէ վերիպել՝ յայլ ումեք պատսպարան մի գտանել, 'ի հարկէ այնուհետև նեղիցի յանձն առնուլ՝ իւրում ամուսնոյն ևեթ սկել։

Լաւ եթէ ոչինչ այսպիսի առ կինն ձառէ, ընդ այն ինչ մի զարմանայցես. քանզի տկարագոյն անօթ է կին մարդ. վասն այնորիկ զնա թողեալ՝ յարս ստիպէ սպառնալիս, առ ուղղել զայնպիսի վհատութեան։ Օ՛որ օրինակ եթէ ոք մանուկ ստահակ ունիցի, զնա թողեալ՝ զստահակեցուցիչսն պատուհասիցէ, և սաստ 'ի վերայ դնիցէ մի հուպ լինել և մի մօտ երթալ։ Լ՚այս թէ ծանրագոյն ինչ զայս համարիցիս, յիշեա ջիր զառաջին զբանսն որովք երանէ զլսողսն, և տես ջիր զի յոյժ դիւրին և հնարաւոր է։ Օ՛ի հեզն և խաղաղարարն և խոնարհն սրտիւ և ողորմածն

զիմրդ յանձն առնուցու զկին հանել։ Որ զայլոց կագ 'ի հաշտութեն ածիցէ, զիմրդ իցէ՝ զի ինքն ընդ իւրում կնոջ 'ի կագ գրգռիցի։ Այլ ոչ այսու միայն, այլ և այլով իսկ օրինակաւ ցուցանէ զօրէնսն թեթևագոյնս. և յայտ առնէ զպատճառս արձակելոյն և չարձակելոյ ասելովն՝ եթէ «Զոմանց բանի պոռնիկութեն»։ Այսպէս թէ ոչ՝ 'ի նոյն իսկ դառնալոց էր։ Զի թէ հրամայեալ էր՝ թէպէտ ընդ բազումս լինիցի՝ սակայն ունիցի, և ոչ հանիցէ, և այնպէս ևս 'ի հնութիս կործանէր զերան։

Տեսանես, զիմրդ միաբանեն յեռին բանքս ընդառաջինսն. զի որ ոչն հայիցի յայրատս 'ի կին ընկերի, յայտ է թէ ոչ պոռնկի. իսկ որ ոչն պոռնկիցի, ոչ տայ պատճառս այլում առն հանել զիւր կին։ Զայսն այնորիկ մեծաւ զգուշութիւն պնդէ, և պարսպէ բաղում երկիւղիւ, ածել ձգունս զարամբն՝ եթէ հանել կամիցի, եթէ պոռնկութեն կնոջն ինքն լինի պատժապարտ։ Զի մի յորժամ լսիցես՝ եթէ «Խրեա ընկեա 'ի բաց զակն քո», զկնոջէ կարծիցես՝ եթէ վասն դոյզն ինչ իրաց պարտ իցէ արձակելոյ յարէ 'ի նոյն 'ի դէպ ժամանակի և զյառաջադոյնն նորին ուղղութեն. զի միով իրօք հրամայէ հանել, և միասով չհրամայէ։ «Դարձեալ լուարուք, զի ասացաւ առաջնոցն, մի երդնուցուս սուտ. բայց հատուսջիր տոն զերդմունսն քո. այլ ես ասեմ ձեզ, թէ ամենևին իսկ մի երդնուլ»։ Զայսն էր ոչ արդեւք նախ զգուշութէն ձառիցէ. զի զայնու զանց արարեալ՝ և 'ի սուտ վկայութէն վազէ. զի որ չգողանայցէն, հարկ է եթէ և երդնու իսկ ոչ։ Իսկ որ ոչ երդնուլն և ոչ ստել գիտիցէ, որչափ ևս առաւել և ոչ 'ի գողանալն յօժարիցէ. որպէս զի և այսու իսկ և զայն մեզս խաւփանէ. զի սուտն խօսել 'ի գողանալոյն է։

Այս զինչ իցէ, թէ «Հատուսջիր տոն զերդմունսն քո». այս ինքն՝ արդար երդնուցուս։ Բայց ոմանք և այլ ազգ ասեն, եթէ զի մի յայլ տեղս երդնուցուն հրեայքն, պատուէր էս՝ զի յորժամ երդնուցուն, 'ի նա երդնուցուս, և մի զայլոց օտարոտի աստուածոց անուանս անուանեսցեն։ «Բայց ես ասեմ ձեզ, եթէ ամենևին իսկ մի երդնուք». որպէս և յա-

ջորդաբն ամենևին չտայ հրաման երդնուլ յԱծ։
«Մի՛ յերկինս, ասէ, զի աթոռ ՅԱ է. և մի՛ յերկիր, զի պատուանդան է ոտից նորա. և մի՛ յԵրուսաղէմ, զի քաղաք է մեծի արքայի»։ Վասն և ես տակաւին 'ի մարգարէականացն բարբառի, և յայտ առնեմ զանձնէ՝ եթէ չէ ինչ հակառակ առաջնոցն։ Վասնզի սա վերը իսկ էին յայտպիսի երդմունս երդնուլ հրեայք. և զայս 'ի կատարած կոյս աւետարանիս յայտ առնեմ։ Այլ դու միտ դիր, զիարդ յարգէ զարարածսն, ոչ առ իւրեանց բնութեամբ ինչ, այլ վասն ՅԱ խնամանցն որ ընդ նոսա ունիցի, ըստ զիջանելոյ ընդ մարդկան՝ Ձառէ զայսպիսի բանս։ Վասնզի բազում բռնութեամբ էր յայնժամ կռապաշտութեամբ, զի մի՛ որ կարծիցէ՝ թէ անձամբ ինչ պատուական են արարածքն, դնէ զայսպիսի պատճառս 'ի միջի՝ զոր ասացաքն. և դարձեալ զի յՅԱ իսկ փառս հանիցէ զՅամ։ Վասնզի ոչ ասաց, եթէ գեղեցիկ և մեծ են երկինքք, և բարւոք և յարգաւոր է երկիր, այլ թէ մին աթոռ ՅԱ, և մին պատուանդան ոտից նորա. զի ՅԱՄ ուստեք խոնեալ՝ ըզնոսա առ ՅԱրն մղիցէ։

«Այլ մի՛ 'ի գլուխս քո, ասէ, երդնուցուս, զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել և միւս ևս թուխս»։ Այս աստ դարձեալ ոչ եթէ փառաւոր ինչ զմարդն համարելով՝ յարէ 'ի նոյն, 'ի գլուխն չերդնուլ։ Օ՛ի թէպէտ և մարդն երկրպագութեամբ առնուցու իբրև ըզմարդ յայլմ մարդկանէ, այլ գիտասցէ՝ թէ ՅԱ միայն վայելէն փառք. վասն որոյ 'ի նա իսկ հանէ ըզփառաւորութիւնն. և ցուցանէ՝ եթէ ոչ քում անձինդ իսկ տէր ես. ապա յայտ առնէ, թէ և ոչ 'ի գլուխն երդնելոյ։ Օ՛ի թէ զիւր ոք որդի այլում ոչ կամիցի տալ, ո՛րչափ ևս առաւել ՅԱծ զիւր գործն չտայցէ քեզ։ Թէպէտ և քո իցէ գլուխն, այլ նորա արարած է. և այնչափ հեռի ես 'ի տէր լինելոյ գլխոյդ, զի և ոչ զփոքրն քան զՅամ կարես գործել 'ի նմա. զի ոչ ասաց՝ թէ ոչ կարես ածել մազ, այլ թէ ոչ զգոյնն իսկ կարես փոխել։

Այս արդ զիարդ, ասէ. եթէ պահանջիցէ ոք երդ-

1 'Ի լուս. Խոռնիալ։

դումն, և հարկ 'ի վերայ ածիցէ, մարթիցի՞ չերդնուլ։ Բայց զայ երկիւղն 'ի վեր քան զհարկն համարիցիս. զի թէ այսպիսի պատճառս 'ի միջի դնիցես, ապա և ոչ զմի ինչ 'ի հրամանացն պահիցես։ Օ՜ 'ի կանանց պատուիրանին պատճառս զայն դնիցես, եթէ կաղացօղ և լեզուանի իցէ, զինչ առնիցեմ։ Եւ յաջոյ ակամն պատուիրանի. եթէ սիրիցեմ և խնամ արկեալ իցէ զնովաւ, զիա՞րդ կարիցեմ 'ի բաց խլեալ ընկենուլ։ Եւ 'ի յայրատագոյնսն նայել. եթէ ոչ ունիցիմ ժայժ 'ի նայելոյ, զի գործիցեմ։ Եւ 'ի բարկանալ եղբօրն. եթէ անսաստ իցեմ ինչ, և չկարիցեմ զլեզու ունել, զինչ բանք իցեն։ Եւ այսպիսի մնօք այնուհետև զնա՞մ պատուիրանսն կոխիցես։ Մովսէսէ և մարդկան 'ի դատաւորացն օրէնս ոչինչ իշխիցես այնպիսի բարուրս յօդել, և ոչ ասել եթէ զայս ինչ և զայս ինչ ասիցեմ, միթէ բանք ինչ իցեն. այլ կամաւ և ակամայ առնուցուս յանձն 'ի հարկէ զհրամանսն։ Եւ այլ ազգ ևս, նա և ոչ հարկ ինչ յանձին կրիցես. զի որ զառաջին երանութիսն լսիցէ, և այնպիսի ինչ յարդարիցէ զանձն՝ որպէս և Քրիստոս պատուիրեաց, և ոչ մի ինչ հարկ յուսիքէ կրիցէ, յորժամ հանեստ և պարկեշտագոյն յամենայն իրս գտանիցի։

«Եղիցի ձեր, ասէ, այոն այո, և ոչն ոչ, և որ ինչ աւելին քան զայս, 'ի չարէն է»։ Եւ զինչ իցէ աւելին քան զայոյն և զոչն։ Երդնուլն իսկ. և ոչ եթէ սուտ երդնուլ. զի այն յայտնի իսկ է, և չէ որ կարօտ ուսանել՝ թէ ոչ 'ի չարէն իցէ. և ոչ եթէ աւելի ինչ է, այլ հակառակ աւելոյն. այլ աւելի երդումնն է։ Եւ եթէ 'ի չարէն ինչ էր, ասէն, երդումնն, զիա՞րդ յօրէնսն կայր, եթէ «Երդնուցուս յանուն Տե՛ր Աստուծոյ»։ Օ՜ դոյն և զկնոջէ ասիցես, եթէ զիա՞րդ յեռոյ ընդ հնութիս համարիցէ, ուր յառաջ քան զհանելն ընդ ամուսնութի՛ համարեր։ Եւ զինչ իցէ առայն ասել. այլ թէ ըստ տկարութի՛ ընդունելեացն նոյնպէս և զօրէնսն 'ի ժամանակսն կարգեաց։ Քանզի զի Հեթանոսքէ պաշտօն մատուցանել՝՝՝ յոյժ անարժան էր, որպէս թոթովէին անարժան իցէ Հաստատելոյսն։ Եւ արդ հնութիւն կարծեցաւ այնպիսի

գործն, և 'ի չարէն՝ երդնուլն, յորմէ հետէ յառաջ եկեալ առէցին առաքինութիւն կարգք։ Օ՛ի եթէ սատանայի ինչ էին 'ի սկզբանէ այնպիսի օրէնք, ապա ոչ այնչափ ուղղութիւս գործէին։ Թէ նոցա չէր յառաջ կարասկեսեալ, ոչ այնպէս դիւրընկալ լինէին արդի օրէնքս։

Լ՚ս արդ մի ինչ պահանջեր յայնց օրինաց զառաքինութի՝ յետ անցանելոյ պիտոյից նոցա. այլ յայն ժամ՝ մինչդեռ աստիրն նոցա էին. մանաւանդ թէ կամիցիս, և այժմ իսկ արբունք նոցին էն։ Բանզի և այժմ իսկ առաքինութիւն նոցա երևի. և վասն այնորիկ աղարտի առ 'ի ձէնջ. և այնպէս երևի, զի մեծի գովութեան արժանի իցէ։ Օ՛ի թէ չէր հին օրինացն մնուցեալ զմեզ, և առ ընդունել զմեծամեծն արարեալ պիտանացուս, ապա և ոչ երևէին իսկ այնպիսի առաքինութիւնք։ Օ՛որ օրինակ ստին՝ զիւր զնամ զպէտսն վճարիցէ, և՝ 'ի կատարեալ սեղանն հասուցանիցէ զմանուկն, անպիտան ինն երևի այնուհետև. և զոր յառաջագոյն 'ի կարևոր պէտս համարէին մանկանն ծնօղքն, բազում ինչ իրօք գարշեցուցանեն և զազրացուցանեն. և բազումք ոչ միայն բանիւք գարշեցուցանեն, այլ և դառն ինչ և լեղի ածեն զստեանքն։ Թէպէտ և բանքն չկարիցեն 'ի մտել հանել զանդէպ ժամանակի զգուութիւն 'ի սրտէ մանկանն, գոնէ իսկ իրքն մուացուցանիցեն զսովորութիւնն։

Այնպէս և Բ՚ս 'ի չարէ անտի ասէ զչարն յոյն և յայոյն, ոչ զի 'ի սատանայէ ցուցանիցէ զհին կատկարանն, այլ զի բազում առաւելութիւն մերժեսցէ 'ի հնոյն նուազութիւնն։ Լ՚ս առ նոսա զայսպիսի բանս խօսի։ Լսէք առ հրեայսն մոլեկանս և անհանձարս՝ իրքև դառն ինչ դեղովք դերութեանն ահիւ շաղախեալ զքաղաքն արար հիմն 'ի վեր։ Լ՚ս քանզի այն ևս ոչ կարաց զնոսա ունել յահաստանի, այլ դարձեալ միւսանգամ զնոյն ցանկային տեսանել, զոր օրինակ մանուկ մի որ անդէն 'ի ստինս մօրն խանգաղատիցի, զքաղաքն հիմն 'ի վեր առնէր, և զասզումն 'ի նոցանէ յօտար աշխարհ վարատականս վարտարանդիս վարէր։ Օ՛որ օրինակ զերնջոցն զորիմն

անջրպետեալ քեզիցէն, զի ժամանակաւն ընդելու-
զանիցէն մոցել քեցել՝ի կաթինն սովորութեէ։

Օ՛ի թէ՝ի սատանայէ ինչ էր հինն, ապա ո՛չ էր-
բէք՝ի կռապաշտութեէ անտի յօժարեցուցանէր մեկ-
նել, այլ հակառակ նմին՝ անդէն՝ի նոյն տիպէր մը-
տանել. զի այն իսկ կամք էին սատանայի։ Իսկ արդ
աւասիկ հակառակ նմին տեսանեմք՝ի հին կտակա-
բանացն գործս վՀարեալ։ Ա՝ի և երդմանն օրէնք՝ի
հնումն վասն այնորիկ դնէին, զի մի յանուն կռոցն
երդնուցուն. քանզի և ասէ իսկ, եթէ «Երդնու-
ցուք յաՀ ՀՀնմարիտ»։ Եւ արդ ո՛չինչ սակաւ իրս
ուղղեցին օրէնքն, այլ առաւել մեծամեծս. զի՝ի
հաստատուն կերպակուր գալ նոցա՝ և այն իսկ փու-
թոյ օրինացն լինելոր գործ։

Եւ զի՞արդ, ասէն. իսկ արդ չիցէ՞՝ի չարէ երդ-
նուլն։ Ասեմ՝, և յոյժ իսկ՝ի չարէն է. բայց այժմ՝
յետ այսչափ զգաստութեէ և առաքինութեէ, այլ ո՛չ
յայնժամ։ Եւ զի՞արդ, ասէն, մարթիցի միումն՝ մերթ
բարի լինել, և մերթ չարի։ Իսկ ես զնորին հակա-
ռակն ասեմ՝, թէ զի՞արդ ո՛չ լինիցի նոյն մերթ բարի
և մերթ չարի. ուր ՀամՀ իսկ իրքն յայտ յանդիմանն
աղաղակեն՝ ծնանոց և պտղոց, և այլոցն եւս ամենե-
ցունց այնպիսեաց։

Եւ արդ նայեաց նախ՝ի մեր բնութիս. և անդ
գտանես, զի կրեալ՝ի գիրկս զմանուկ յառաջին տիս
հասակին՝ կարի բարւոք է. և յետ այնր ժամանակի՝
յոյժ փասակար։ Օ՝ ծամեալ կերակուրս ջամբել՝ի
սկզբան կենաց մերոց՝ կարի բարւոք, և յետ այնր
ժամանակի՝ յոյժ գարշելի։ Կաթամբ սնանել, և՝ի
գիրկս մօրն հանգչել անդէն՝ի տիսեղծութենն՝ կարի
շահաւոր և կենաց պատճառք են, և յետ այնր ժա-
մանակի՝ անօգուտ և փասակար։ Ցեսանես զնոյն
իսկ իրս, զի ըստ ժամանակացն բարի են, և յետ
այնորիկ ո՛չինչ նոյնպիսիք։ Եւ հանդերձ ինչ մանկու-
թեան՝ի մատաղութենէ մանկանն կարի բարւոք է, իսկ
յորժամ այր կատարեալ լինիցի՝ յոյժ տգեղագոյն։
Եւ դարձեալ թէ կամիցես, տաջիր մանկանն հան-
դերձ առն կատարելոյ, և տեսջիր ո՛րչափ ինչ ծաղր
կայցես, և ո՛րչափ ինչ մանուկն տաղտկայցէ փարա-

ւաթեալ պարաւանդել, և չմարթիցէ դնալ, և ոչ քայլ մի յառաջ փոխել։ ԼՀ կամ հաւատայջիր այն պիսումն զիրս ինչ արքունիս, կամ զպէտս քաղաքաց, կամ զտուրեւառ վաճառաց, կամ սերմանել, կամ հնձել. և տեսջիր զնարդ ծաղր և քրքիջ ամենեցուն կայցէ։

ԼՀ զի զայսպիսի իրս յաճախիցեմ. նա և սպառնութիւն՝ որ ամենեցուն յայտնի է, եթէ գիւտք չարին են, 'ի դէպ ժամանակի առեալ օձան՝ պատուեաց քահանայութիւն զվինեհէս։ ԼՀ զի սպանութիւն գործ սատանայի է, լուր իսկ անդուստ 'ի ճեն. «ԼՀուք, ասէ, զգործս հօր ձերոյ կամիք գործել, քանզի նա մարդասպան իսկ էր 'ի սկզբանէ»։ Լ.յլ եղև մարդասպան վինեհէս, և համարեցաւ նմա յարդարութիւն։ Իսկ Լ.բրահամ ոչ միայն մարդասպան, այլ և որդեսպան, որ ևս դժնդակագոյն է. և առաւել հաճոյ եղև ՅՀ։ Լարձեալ և Պետրոս կրկին սպանութիւն գործեաց, բայց սակայն հոգևոր էր գործ։ ԼՀ արդ մի միայն զիրսն 'ի քնին արկեալ՝ աղարտիցեմք ինչ, այլ և 'ի ժամանակն հայել և 'ի պատճառսն և 'ի կամն և 'ի դէմն այլագունակս և յայլ ՅՀմ պատշաճն՝ որ մեզ 'ի դէպ իցեն, և այնպէս ՀՀմարտիւ խնդրեսցուք։ Լանգի չէ ինչ մարթ ՀՀմարտութիւնն հասանել, եթէ ոչ մեծաւ քննութիւն։

ԼՀ արդ փութասցուք, եթէ կամիցիմք արքայութեան հասանել, աւելի ինչ քան զառաջին հրամանն ցուցանել. զի եթէ յառաջնոցն ևեթ 'ի չափ հասանիցեմք, ապա արտաքոյ դրանցն արքայութիւն գտանիցիմք։ «Լ.թէ ոչ, ասէ, առաւել լինիցի արդարութիւն ձեր քան զդպրացն և զփարիսեցւոց, ոչ կարասջիք մտանել յարքայութիւն երկնից»։ ԼՀ սակայն թէպետ և այսպիսի սպառնալիք 'ի վերայ կան, ոչ միայն ոմանք չանցանեն ըստ հին արդարութիւն, այլ և յետնեալք ևս գտանին։ Ոչ միայն յերդմանէ չփախչին, այլ և սուտ ևս երդնուն։ ԼՀ ոչ միայն յայրատ ինչ հային[1], այլ և 'ի գործսն անօրէն յանդգնեալք անկանին։ ԼՀ զՅՀմ զարգելեալսն՝ անխէթ և անկասկած դի-

1 Յօրինակին, յայրոտն լՀայն։

մագրաւեալ զորձէն, և սիրում միայն սպասէն, տանջանացն աւուր, յորում ընդ ՀԱՄ անօրէնութեանցն տայցէն պատիժս պատուհասից։ Որք 'ի չարիս կատարիցէն զՀԱՄ աւուրս կենաց, նոքա ևեթ վրիպեալ էն 'ի յուսոյն, և տանջանաց ևեթ ակն ունել պարտին։ Իսկ որ դեռ կենդանիքս էն, մարթ է նոցա միաբանդամ կռուել և յաղթել, և դիւրաւ պատկացն հատանել։

ՅՈՐԴՈՐԱԿ

Մի այսուհետև յուլանայցես ոչ մարդ, և մի զբաւոք յօժարութիւնն քակտիցես. քանզի չէ ինչ ծանր հրամանքն։ Այլ՝ ասա, զինչ աշխատութիւն յերդմանէն փախչելն իցէ. միթէ ընչից ծախք իցեն, միթէ քրտունք ինչ և տառապանք. շատ է կամէրն միայն, և ՀԱՄ վնարեցաւ։ Իսկ եթէ զսովորութիւն պատճառս դնիցես, նա վասն նորին այնորիկ ասեմ դիւրին զուղղութիւն. եթէ յայլ ընդելութիւն կրթեսցես զանձն, զՀԱՄ դիւրաւ վնարեսցես։ Օ մտաւ ած, զի բաղումք իսկ 'ի հեթանոսացն իմաստնոց՝ որ առքաղաքատաւորեալ թոթովէին, ստեպ կրթութիւն զկաղ լեզու նոցա էած յուղղութիւն. և ոմանք՝ որոց թիկունքն ընդոստ ընդոստ դողացեալ շարժէին, սուրս կապեցին 'ի վերայ թիկանցն, և մերժեցին զսովորութիւն։

Զանզի 'ի դրոց չանսայք դալ յուղղութիւն, յարատաքնոցն հարկ համարիմ խօսել։ Որպէս և ՀԱԾ իսկ առ հրեայսն առնէր. «Այրթայք, ասէ, 'ի կղզիս քեզ տացուց, և 'ի Կեդար առաքեցէք՝ և ծաներուք, եթէ փոխիցէն հեթանոսք զաստուածսն իւրեանց, և նոքա չէն ՀԱԾՔ»։ Այս առ անասունս յղէ բաղում անգամ. «Այրթ, ասէ, առ մինչեւն ոչ վատ, և նախանձեաց ընդ ՀԱՆԱՊԱՐՀՆ նորա». և դարձեալ թէ «Ողջ առ մեզս»։ Զոյնպէս և այժմ ես ասեմ ձեզ, եթէ երթայք առ հեթանոսացն իմաստունս, և ապա առնուցուք 'ի միտ, թէ որպիսի պատժոց արժանի էն՝ որք ՀԱԾԵՂԷն օրինացն չանսայցեն. յորժամ նոքա վասն մարդկեղէն պատշաճութեանն ազգի ազգի հնարս հնարէին, և զուք վասն երկնից չցուցանիցեք ինչ այնպիսի փոյթ յանձին։

Այլ եթէ դարձեալ յետ այսր ասի՝ ասիցես, թէ և կարի փութիցն դժուար է զսովորութիւնն մոռանալ. ունիմ յանձին և ես։ Բայց սակայն և զայն ընդ սին ասեմ, թէ որպէս դժուարին է մոռանալ, նոյնպէս և դիւրին է գալ յուղղութիւն։ Այլ եթէ կացուցանես 'ի տան բազում դէտս՝ յաշխարհ պահապանս անձինդ, զծառայս և զկին և զբարեկամս, յադգը-դեալ ըստդտեալ դիւրաւ մերժիցես 'ի չար սովորութիւնէն. գէթ զտան օր թէ ժոյժ ունիցիս, դաս յուղղութիւն. և այնուհետև այլում ժամանակի չառնիցես կարօտ, այլ ամենևին 'ի զգուշութեան պահիցես՝ 'ի հաստատելոյ զարմատս միւսոյ սովորութեանն։

Այլ յորժամ սկիզբն առնիցես ուղղութէն, թէ պէտ և մի անդամ և երկիցս անցանիցես զօրինաքն, և եթէ երիցս՝ և կամ քսանիցս իսկ, մի անյոյս լինիցիս. այլ դարձեալ յառնիցես պատապարիցիս, և բուռն հարկանիցես զնմին փութոյ. ապա ո՞ գիտէ և յաղթիցես իսկ։ Բանզի ոչ սակաւ ինչ չարիք են սուտն երդնուլ։ Օ՛ի թէ երդնուլն 'ի չարէն իցէ, իսկ ընդ սուտ երդնելոյ որպիսի՞ ինչ պատիժս կրիցես։

Գովեցէք զբանսս. այլ ինձ չեն ինչ պէտք յարգանացդ, և ոչ կայթելոյդ և հնչիւնս հանելոյ։ Այլ զմին ևեթ կամիմ, եթէ հանդարտութիւն և խնամատութիւն լսէիք, և առնէիք զոր լսէիքն. այն էին ինձ յարգանք և կայթիւնք և գոփիւնք։ Այլ թէ գովիցես զբանսս, և առնիցես ոչ, մեծամեծ պատիժք են, յաշխարհ ամբաստանութիւն, և ամօթ և ծաղր հասանիցէ կալ։ Բանզի չեն աստ թատերք, և ոչ զերգս երգեցկացն նստայք լսել, թէ հարկանիցէք կայթս, և գոփիւնս հանիցէք։ Հոգևոր վարդապետութիւն հրամանդք են այս, ածեղէն պատգամաց վարժոցք. և այնմ միայն պէտք, զի ուղղութիւն ինչ գործիցի, և արդեամբք ցուցանիցէք զհնազանդութիւն, և մեք յայնժամ ընդունիցիմք զնա՝, որպէս այժմ դանդաղիմք զսովորութիւնդ լսել։ Այս և որ առանձինն ոք մեզ պատահիցէ, չդադարեմք յայսպիսի խրատելոյ, որպէս այժմ ընդ ամենեսեան իսկ առ հասարակ խօսիմ։ Այլ չտեսանեմ ուրեք լաւութիւն ինչ գործեալ, այլ տակաւին անդէն յառաջին նշանագիրսն կայք.

որ բաւական է վարդապետացն բազում դանդաղու-
թիւն բերել։

Այլ տես զՊաւղոս իսկ դժկամակ ընդ այսպիսի
իրս լեալ, յորժամ կարի յամեցին յառաջին ուս-
մանն լսողքն։ «Պարտ էր ձեզ, ասէ, վարդապետս լի-
նել վասն ժամանակին. և դարձեալ կարօտ վարդա-
պետաց էք, որ ուսուցանիցեն զձեզ՝ թէ զինչ են
նշանագիրքն առաջին պատգամացն ՅՍ»։ Վասն որոյ
և մեք աշխարհիս և ողբամք. և եթէ անդէն և յա-
մեալ տեսանիցեմք, վհատիմք այնուհետև դէթ 'ի
նուիրական և 'ի սուրբ արտաքին դրուանն ածել, և
վայելեցուցանել յանմահ խորհուրդն. և խղճեմք
իրբև 'ի պառնկաց և 'ի հնացելոց և 'ի սպանողաց։
Այլ և լաւ իսկ իցէ՝ երկուք և երեք որ զՅՍ օրէնսն
պահիցեն՝ մատուցանել զաղօթսն մշանջենաւոր, քան
զբազմութիւն անօրինաց տողէլ, որք և զՅՍ էս ապա-
կանիցեն։

Այլ ոք ասասցէ զինչ մեծատուն հպարտացի, և զքիթս
'ի վեր տանիցի։ Օ՛ի այն ամ ինձ առատպէլք են
և ստուեր և երաշ. քանզի չէք ոք յայժմս մեծա-
տանցս՝ եթէ անդ ինձ բարեխօս կարիցէ լինել, և
յորժամ 'ի պատիժս և 'ի համարս մտանիցեմ, եթէ
ոչ պատշաճ ասասիս ՅՍ օրինացն լինիցիմ վրէժխնդիր
դիր։ Այլ այն իսկ զբարմանալի ծերն կորոյս, զ՞ի-
նչ զեայ ասեմ. թէպէտ և վարս անարատս եցոյց, այլ
քանզի զօրէնսն ՅՍ կոխեալ տեսանէր՝ և անտես առ-
նէր, պատժեցաւ որդւոյքն հանդերձ, և զանհնա-
զին վրէժս էառ։ Այլ թէ ուր այնչափ իշխանութիւն բնութիւն
էր, և ոչ պատշաճ արու թիւ արկ 'ի կիր առ որդիսն,
զայնպիսի պատիժս պատժեցաւ, մեզ որպիսի՞ զինչ նե-
րել թողուն կայցէ, որ յայնպիսի բռնութիւ ազատեալ
եմք, և սուտակասպաս լինելով՝ զՅՍ եղծանեմք։

Արդ զի մի մեք և մի դուք առ հասարակ կորնչի-
ցիմք, աղաչեմ, բազում ոստիկանս և դէտս անձանց
կացուցէք, զի կարիցէք 'ի սովորութիւն երդմանացն զեր-
ծանել. և անտի յառաջ մատուցեալ՝ և զայլ ամե-
նայն առաքինութիւնսն դիւրաւ ուղղիցէք. և յաւիտե-
նից բարութիւնսն վայելեսցուք 'ի Տէր մեր։
որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

«Լուարուք, զի ասացաւ, ակն ընդ ական, և ատամն ընդ ատաման. բայց ես ասեմ ձեզ, մի ինչ կալ հակառակ չարին. այլ որ ածիցէ քեզ ապտակ յաջ ծնօտ քո, մատո դու նմա և զմիւսն եւս. և որ կամիցի որ ընդ քեզ դատ դնել և առնուլ՝ի քէն զպարեզօտս քո, թող՝ի նա և զհանդերձն քո»։

ՏԵՍԱՆԵ՞Ս, զի ոչ վասն ական ասաց զառաջինն՝ յորժամ դնէր օրէնս խլել ընկենուլ զակն գայթագղեցուցիչ. այլ զայնպիսւոյն ումեքէ ասէ, որ բարեկամութիւն կամիցի մեզ փնաս ինչ առնել, և՝ի կորստեանն խորխորատ արկանել։ Այլ որ այնչափ մեծաւ զգուշութիւն պատուիրէ, զի յորժամ այլ որ հանիցէ զակն՝ հրամայէ վրէժս առնուլ առ՝ի զփնասակարն կարձելոյ, զիարդ իւրովի զիւր ակն ումեք խլել ընկենուլ՝ի բաց՝ դնէր օրէնս։ Այսպէս թէ որ զՀին օրէնսն վասն այնպիսի վրէժխնդրութեան բամբասէ, յայտ է թէ կարի անմիտ է. զի յոյժ իմաստութիւն է գործն, որպէս օրէնսդրին իսկ վայել էր. այնպիսին անտեղեակ է և ժամանակացն և զօրութեանն չէ հմուտ, և ոչ շահին ըստ զիջանելոյն։ Զի թէ՝ի միտ առնուցուս, թէ որպիսիք որ էին որք զայսպիսի բանս լսէին, կամ յորպիսի՞ ինչ կայրի, և եթէ երբ զօրէնսդրութիւն զայս ընկալան, ապա յաճախագոյն ընդունիցիս զօրէնսդրին զիմաստութիւն. և տեսանիցես, զի մի և նոյն է՝ որ զայն և զայս օրէնս դրեաց։ Այլ կարի պիտոյ են երկոքին, և՝ի պատշաճ ժամանակի դրեցան։ Զի թէ յառաջնումն մեծամեծս և բարձունս պատուիրանս էր ընծայեցուցեալ, ապա և ոչ զայս իսկ ընդունէին, և ոչ զայնս։ Այլ նա աւանիկ՝ի պատշաճ ժամանակի զերկոսեան դիպեցոյց, որոյ զնամ աշխարհ միանգամայն էած յուղղութիւն։

Այլ այլ ազգ եւս։ Ո՛չ վասն այնորիկ եւս այսպիսի

պատուիրանս, զի զմիմեանց աչս հանիցեմք, այլ զի կարձեալ զձեռս՝ կայցեմք յանձանց պայմանի։ Օ՛ի սպառնալիք վրիժուցն խնդրելոյ՝ զյանդգնութեան գործոցն սրգելուն. և այնպէս բազում մեղմով սերմանի ինն ցածութեան և խմաստութիւն, յորժամ խեղճելոյն կշիռ ըստ խեղճութեան հրամայիցի առնուլ վրէժխնդրութեան. թէպէտ և մեծաց իսկ պատժոց արժանի էր՝ որ այնպիսի անօրէնութեան եղև ձեռներեց. նա և իրաւունքն իսկ զնոյն պահանջեն. բայց քանզի մաքրասիրութեան կամն խառնել ընդ իրաւունսն, մեծամեղին սակաւ պատիժս հրամայէ դնել՝ ի վերայ, զի զմեզ խրատիցէ, թէ և՝ ի չարչարանս բազում պարտ է ցուցանել զդժնութեան։

Իսկ իբրև ասաց զՏէն օրէնսն և ընթերցաւ զնամ, ապա յայտ առնէ՝ թէ ոչ եղբայրն ինչ գործեաց զայնպիսի գործ, այլ չարն. վասն որոյ յարէ իսկ՝ ի նոյն. «Այլ՝ այդ ես ասեմ ձեզ, եթէ մի կալ հակառակ չարին»։ Չէ ոչ ասաց, եթէ մի կայցես հակառակ եղբօրն, այլ թէ չարին. զի յայտ արասցէ, թէ նոքա դրդեալք յանդգնի յայնպիսի գործն անօրէն։ Չէ այսու զլացուցեալ՝ զայրուցս ցասմանն ցածուցանէ, զի զգործելիսն կարձեացէ, բայց զպատճառսն՝ ի չարէն դնէ։

Իսկ արդ, ասէն, չիցէ՞ ինչ պարտ հակառակ կալ չարին։ Պարտ է հակառակ կալ, այլ ոչ այնպիսի ինչ օրինակաւ. այլ որպէս նոյն իսկ պատուիրեաց՝ տալ զանձն՝ ի չարչարանս, զի այնպէս յաղթիցես նմա. զի ոչ եթէ հրով հուր շիջանիցի, այլ ջրով։ Օ՛ի ուսանիցիս, եթէ՝ ի հին իսկ օրէնսն, որ չարչարին՝ նա յաղթէ, և զի նա իսկ առաւել պսակի, քննեսա՞ զիրսն և տեսջիր, զիարդ նա յարգոյ և առաջինն է։ Որ ձեռներեց չարեացն լինիցի, նա է որ հանէ զերկոսին աչսն և զիւրն և զընկերին։ Այն որոյ յիրաւի առելի ամենեցուն լինի, և ընդ՝ բազում բամբասանաց մտանէ. և յետ կշիռ վրէժխնդրութեանն՝ զզուր խեղճելն ոչ ոք ինչ բամբասէ, և բազումք ևս արգահատիցեն նմա. զի ոչինչ ումեք ինաս արար, և այնպիսի խեղճութեամ յանձն էառ։ Չէ խեղճութեան հաստարակ երկոցունց լինի. իսկ արգահատանքն և փառք

ոչ հասարակ եկեղեցւոյն, ոչ յայլ և ոչ 'ի մարդկանէ։

Զ ամն որոյ և անդէն 'ի սկզբանն Ճառեալ ասէր, «Զի բարկանայ եղբօր իւրում տարապարտուց, և որ կոչէն զեղբայր իւր մերոս, դատապարտ եղիցի 'ի գեհենի»։ Իսկ ասա բաղում ինն զդաստուածի պա հանջէ. ոչ միայն հրամայէ զգօնանալ այնմ, որ 'ի զուարն չարչարիցի, այլ առաւել ևս հակառակ նմին քաղցրանալ և պատուել. և զմիւսն ևս ծնօտս մատուցանել։ Լ՝ զայս ասելով, ոչ միայն վասն ապատակէն 'ի ծնօտ առնելոյ գնէ օրէնս, այլ և յամ յայնպիսի իրս անոխակալ լինել խրատէ։ Զ՝ որ օրինակ յորժամ ասիցէ, թէ «Զի կոչէ զեղբայր իւր մերոս, պարտաւոր եղիցի 'ի գեհենն». ոչ վասն այնորիկ միայն, այլ և վասն ամ իսկ բամբասանաց ապառնայ։ Զ՝ոյնպէս և ասա, ոչ յորժամ ապտակ 'ի ծնօտ առնուցուցէ՝ յայնժամ ևեթ պարտիմք առաքինութիւն ևեթ ժուժկալել, այլ և յամ չարչարանս մի զանգէ տիցեմք։ Զ՝ ամն այնորիկ իսկ և անդ զյետին թշնամանսն ընտրեալ գնէ 'ի միջի, և ասա զնախատանաց հարուածս ապտակին։

Լ՝ զայս ոչ վասն այնր օգտի որ զապտակն առնուցու, այլ վասն այնր՝ որ հարկանիցէն, Ճառէ։ Զ՝ի յորժամ թշնամանեալն ոչինչ համարիցի զբշնամանսն, որչափ ևս առաւել ածիցէ 'ի զդաստուածի զթշնամանսիցն։ Զ՝ի յորժամ ընդ այն նայիցի, թէ պէտ և քան զդազան վայրենամիտ իցէ, ոչ երբէք յանդգնի յայնպիսի գործ. նա և առաջնոցն ևս զանձն ըստգտանիցէ։ Զ՝անզի ոչ այնպէս ինչ յաղթեմ զնասակարաց՝ որպէս համբերութիւն զնասելոյն. ոչ ևս միայն զայլ զնասն խափանէ, այլ և զառաջինսն ևս զդիջանալ տայ. և զարմանալ ընդ զգօնութիւն, և մերժել յայնպիսի գործոյ, և ընտանի և բարեկամ լինել. և ոչ միայն բարեկամ լինել, այլ և ծառայ առնել զթշնամին։ Զ՝ որ օրինակ վերէժ իրն դրել՝ զամ ինչ հակառակ եկեղեցւոյն գործէ. և յաւմնթ առնէ, և ապաժամսն առ ամենեսեան. և ըզցասմսն բոցն ևս բորբոքէ. և բաղում անգամ 'ի մահ ևս տայ մնաքեալել, յորժամ ևս յառաջ մեծ ըիցին ուղիքն։

Ոչ սոն որոյ ոչ միայն չբարկանալ ընդ ապտակն ա-
ծել հրամայէ, այլ և յապեցուցանել զցանկութիւն.
զի մի առաջինն իբրև ի հարկէ ինչ համբերութիւն
կարծիցի։ Ոչ այնչափ առանց ակնածութեան իցէ յետ
առաջին համբերութեան թէ այլ ևս յանդգնիցի հար-
կանել. և թէպէտ և յանդգնութեամբ ձեռն ձգեալ
իցէ, այլ 'ի մեծ հեզութենէ դարձուցանիցես համբե-
րութեամբն։

«Եւ որ կամիցի, ասէ, դատ դնել քեզ, և առ-
նուլ 'ի քէն զպարեգօտս քո, թող նմա և զխանդերձդ
ևս»։ Օ՛ի ոչ միայն 'ի հարկանելն, այլ և 'ի հանդերձ-
ին մերկանալ, և յընչից արկանելով, կամ առ-
նել առանց տրակալութեան. վասն որոյ զնոյն առա-
ւելութիւն միւսանգամ 'ի միջն դնէ։ Օ՛ որ օրինակ
անդ չարչարանացն համբերելով, սոյնպէս և ասա
յընչիցն ակն արկանելով, ևս աւելի քան որչափ ինչ
ազատհէն կամէր՝ հրամայէ տալ։ Ասայ սակայն ոչ վայ-
բապար ինչ զնոյն ձառէ, այլ մեծաւ յաւելուածով։
Ասանզի ոչ ասէ, եթէ որ և պատահիցի՝ տաջիր ըզ-
հանդերձդ, այլ թէ «Որ կամիցի դատ դնել ընդ
քեզ»։ Այս իսկ է, եթէ յատեան ոք ձգիցէ՝ և աշ-
խատութեամբ 'ի վերայ կամիցի հասուցանել։ Եւ զոր
օրինակ նախ պատուիրէ չկոչել մարս, և չբարկա-
նալ զուր, ևս յառաջ մատուցեալ աւելի ինն պա-
հանջէ. զի և զծնօտն ևս հրամայէ մատուցանել։
Զոյնպէս և ասա յետ ասելոյն՝ թէ յառաջագոյն
հաշտ լինիջիր ընդ ոսոխին, ևս յառաջ ձգէ զհրա-
մանն. զի ոչ միայն զոր կամիցին առնուլ՝ հրամայէ
տալ, այլ ևս աւելի առատութեամբ ցուցանել։

Եւ արդ զիարդ, ասեն. մերկ ինչ պարտիցիմք
շրջել։ Զ՚այլ ասեմք, եթէ ոչ երբեք մերկանայաք,
եթէ այնպիսի հրամանաց հնազանդեաք հաւատեաւ.
այլ առաւել քան զամենեսեան զգեցեալ դատանեաք։
Զայս թէ այսպիսի ոք էաք, և ոչ յաչս իսկ ոք հա-
մարձակէր դնել զմեզ։ Եւ երկրորդ անգամ, թէպէտ
և դիպեր ոք այնպիսի վայրենամիտ և գազանաբարոյ՝
զի այնչափ յանդգներ, այլ ևս առաւել բազումք
դատանեին՝ այք զայնպիսի զգօնացեալն, ոչ միայն հան-
դերձիւք, այլ թէ հնար ինչ էր՝ և մարմնովքն ի-

բեանց ծածկէին։ Այս թէ և մերկ էս պարտ էր շրջել վասն այսպիսի զգաստութեան, և ոչ այնպէս գարշանք ինչ էին։ Բանզի և Ադամ մերկ շրջէր 'ի դրախտին, և ոչ ամաչէր. և Լայսի մերկ և բոկ շրջեցաւ, և քան զնամ հրեայսն առաւել վայելուչ էր. և զՅովսէփ յորժամ մերկացան, յայնժամ առաւել զգեցեալ պայծառանայր։ Օ՛ի ոչ այնպէս ինչ մերկանալն լաւ իցէ, այլ նոյնպէս զգենուլն. զի զնա և գովեաց իսկ ՏԾ. և առ մերկացուցիչն պատուհաս սպառնացաւ և մարգարէիւքն իսկ և առաքելովք։

Եւ արդ զոր ինչ 'ի պատուիրանացն անհնարին հաստատիցիմք. որ մանաւանդ զի յոյժ իսկ օգուտ են և գիւրինք, եթէ արթուն և զուարթուն կայցեմք. և այնչափ ևս, մինչ զի ոչ միայն մեզ ինչ շահ գործել, այլև միասակարացն մերոց օգուտ առնել։ Եւ այն իսկ է յոյժ առաւելութիւն նոցա, զի հաւանեցուցանեն զմեզ չարչարանօքն կրել, և նոքիմքք և չարչարանացն՝ ուսուցանեն զգաստանալ։ Օ՛ի յորժամ նա յայլոց առնուլն մեծ համարիցի, և դու ցուցանիցես թեթեթև, զի ոչ միայն զոր խնդրիցեն՝ տայցես, այլ և հանդոյն նորա աղքատութեան՝ առատութի ընծայեցուցանիցես, և ըստ ազահութեան՝ զգօնութի, զընտաւ ած՝ որչափ ինչ վայելիցէ 'ի վարդապետութեան. ոչ 'ի բանիցն, այլ 'ի գործոցն, անարգել զչարիսն, և ցանկալ առաքինութեան։ Օ՛ի ոչ առանձինն ևեթ կամի զմեզ ՏԾ պիտանիս առնել, այլ զի և զայլս ևս 'ի պիտանութի ածիցեմք։ Օ՛ի թէ տայցես ինչ, և չդնիցես դատ, զքո ևեթ զօգուտն խնդրես. ապ՝ թէ 'ի հարկէ տայցես և ընդդէմ՝ ոչ դառնայցես, և զնա ևս ածես 'ի լաւութի։

Բանզի այնպիսի իսկ է աղն. որպէս ինքն է, նոյնպէս և յոր մարմին մերձենայցէ՝ նոյնպիսիս առնել կամի։ Նոյնպէս և լոյսն. զի որպիսի ինքն է, նոյնպէս և զայլս լուսաւորէ։ Եւ քանզի 'ի նոցա տեղի կարգեաց զքեզ, նոյնպէս և դու լինիջիր համեմիչ անհամից, լուսաւորիչ խաւարելոց։ Ասա զնա, թէ և

1 Յոյն լուսաւորեսցն։

զառաջինն իսկ էառ ինչ 'ի քէն բռնութիւն. հաւանեցո՛ թէ չարաբ ինչ քեզ վնաս։ Օ՛ի այսպէս և դու քաղցր և ախորժելի երևեսցիս, յորժամ ցուցանիցես՝ թէ շնորհեցեր և ո՛չ յափշտակեցեր. շահեա՛ զնաբա մեղսն քով հեզութեամբն 'ի քո առատութիւն։ Լա՛ւ եթէ մեծ լինել համարիցիս, անսա՛ և տեսանիցես ստոյգ, զի չև հասեր 'ի կատարումն։ Բ՛ան զի ո՛չ եթէ յայսմ վայրի հանդուցանել զչոխակալութիւն օրհնագրութիւն, այլ ևս յառաջ մատուցեալ, «Լ՛թէ ոք, ասէ, պահակ վարիցէ զքեզ մեղսն մի, երթ ընդ նմա և երկուս»։

Տեսանես զդաստութիւն առաւելութիւն. զի յետ տալոյ զպարեզօտս և զբաճկոն, զի թէ մերկանալ հասանիցէ, սակայն մի տայցես պատճառս թշնամանսն բիծ ինչ դնել 'ի քում ազնուականութիւդ։ Օ՛ի հաւարակաց իմն կամի ստանալ մեզ և զմարմինս և զինչս. զի և կարօտելոյն և թշնամեաց անխտիր տայցեմք։ Օ՛ի մին արութիւն գործ է, և միւսն զդաստութիւն։ Ա՛ռն այնորիկ ասէ. «Լ՛թէ վարիցէ զքեզ տարաբ պահակ մեղսն մի, երթ ընդ նմա և երկուս»։ Լա՛ւս վերագոյն կամի հանել զքեզ, և զնոյն առաւելութիւն հրամայէ ցուցանել։ Օ՛ի թէ զորս 'ի սկզբանն ասաց ցեսս՝ նուազագոյն քան զնոսա, այնչափ երանութիւն լի էին, 'ի միտ առ որպիսի հանդիստք կայցեն այնոցիկ, որ զայսպիսի ուղղուն յանձին ցուցանիցեն. և նախ քան զանդ հատուցումն՝ 'ի մարդկեղէն և 'ի չարչարելի մարմնի երևեալ գտանի անչարչարութիւն։ Օ՛ի յորժամ ո՛չ թշնամանօք և ո՛չ հարուածովք և ընչից յափշտակութիւ քասքնիցեն, և ո՛չ այլով իւիք այն պիսեաք վհատիցեն, այլ առաւել առաքինասցեն չարչարանօքն, միտ դիր, որպիսի ինչ ոգիքն յօրինեցին։ Ա՛ռն այնորիկ զոր ինչ 'ի հարուածս և յընչից յափշտակութիւն, զնոյն և աստ հրամայէ գործել։ Օ՛ինչ ասեմ, ասէ, թշնամանս կամ յընչից անկանել, այլ թէ և զմարմնդ կամիցի յերկս և 'ի վաստակս մաշել, և զայն 'ի զուր ինչ, սակայն և այնու յաղթիցես և 'ի վերոյ գտանիցիս քան զապիրատ ցանկութիւն բռնաւորին։ Օ՛ի պահակն վարել այն իսկ է, զուրն փեռել, տարապարտուց ձգձգել, և

յանդէպ վարել խուսելով։ Լ.յլ սակայն, ասէ, և առ այն և պատրաստական գտանիցիս. աւելի ևս ՀԸ-գունս յանձն առնուցուս՝ քան զոր նայն կամիցի 'ի վերայ հասուցանել։

«Որ ինչ խնդրէ ոք 'ի քէն, ասէ, տացէր. և որ կամիցի ոք 'ի քէն փոխ առնուլ, մի դարձուցանիցես»։ Լ.ս այս փոքր է քան զառաջինսն. բայց մի ինչ զարմանայցես. քանզի սովոր իսկ է ընդ մեծա մեծսն և մանուսնս խառնել։ Լ.ս եթէ սոքա քան զառաջինսն փոքունք ինչ իցեն, լուիցեն որք զայլոց ինչ յափշտակիցեն, և 'ի բոզս զիւրեանց արար վատնիցեն, և կրկին անձանց բորբոքիցեն զխարդին յանօրէն հարկացն և յանօգուտ ծախոցն։ Իսկ փոխս ասա՛ չ ընդ որոց զտոկոսին առնուցուն ասէ, այլ յորժամ պէտք ինչ լինիցին անաւադին, և փոխ որ տայցէ։ Ա.յլ ուր և յայսմի իսկ առնէ, եթէ «Լ.մոցիկ տացէք փոխ՝ յորոց ոչինչ ակն ունիցիք առնուլ»։

«Լուարուք՝ զի ասացաւ, եթէ սիրեսցես զընկերն քո, և ատեսցես զթշնամին. բայց ես ասեմ ձեզ, սիրեցէք զթշնամիս ձեր, և աղօթս արարէք 'ի վերայ նեղչաց ձերոց, օրհնեցէք զանիծիչս ձեր, և բարի արարէք ատելեաց ձերոց. որպէս զի լինիջիք նմա նօղք հօրն ձերոյ՝ որ յերկինսն է, զի զարեգակն ծագէ 'ի վերայ չարաց և բարեաց, և ածէ զանձրև 'ի վերայ արդարոց և մեղաւորաց»։ Տես, զիարդ ըզլիսաւոր բարութեանն եդ վերջին. վասն այնորիկ իսկ հրամայէ՝ ոչ միայն զապատակն առնուլ յաջոյ ծնօտս, այլ և զմիւսն ևս մատուցանել. և ոչ միայն տալ զպարեգօտն, այլ և զբաճկոնն ևս յաւելուլ. և ոչ այսչափ միայն, այլև երկուս մղոնս երթալ ընդ պահանկավարին։ Զի զայլսն ևս՝ որ ինչ աւելի քան զայս իցէ, ամ դիւրութիւն ընդունիցիս։

Լ.ս զինչ իցէ, ասէն, աւելի քան զայս, որ պիտոյ իցէ այնմ՝ որ զայս ամ կատարիցէ։ Զի բնաւ թշնամի զոք ոչ ունիցի։ Զ՝անաւանդ քան զայս միւս ևս աւելի ինչ. քանզի ոչ ասաց՝ թէ մի ատեսցես, այլ թէ և սիրեսցես ևս. և ոչ ասաց՝ եթէ մի մեղանչիցես, այլ թէ և բարի ևս առնիցես։ Լ.ս եթէ մանուսնս ոք քննիցէ, տեսանէ և սոցա այլ յաւելուած

իմն առաւել մեծ քան զնոսա։ Բանզի ոչ վայրապար հրամայէ սիրել, այլ և աղօթս ևս առնել։ Յեսանեն, ուրչափ ինչ յաստիճանս հանէ 'ի վեր, և զիարդ բնաւ 'ի կատար իսկ առաքինութեաց տանի հասուցանել։

Եւ արդ մինչ զիր անդուստ'ի վերուստ իսկ թուոյն. զի առաջին աստիճան է անիրաւութեն յաղթել։ Երկրորդ աստիճան, վրէժ ընդ վրիժուցն չպահանջել։ Երրորդ աշտիճան, չդառնալ ընդդէմ փնասակարին՝ որ զչկանսն ածիցէ 'ի վերայ. այլ հանդարտել և զգօնանալ։ Չորրորդ աշտիճան, յանձին ունել՝ թէպէտ զոր ինչ չարչարանք գայցէն 'ի վերայ։ Հինգերորդ աստիճան, և աւելի ևս տալ քան զոր ինչ կամիցին ոք հանել։ Վեցերորդ աստիճան, չառնել զայն՝ որ այնպիսի ինչ անցս անցուցանիցէ։ Եւթներորդ, սիրել ևս զայնպիսիսն։ Ութերորդ, և բարի ևս առնել։ Իններորդ, և զնոսա աղաչել վասն նորա։ Յեսանեն զբարձրութի առաքինութեն. վասն այնորիկ և հատուցումն նորին ևս լուսաւորագոյն է։

Եւ քանզի մեծ էր հրամանն, և մանկութե տիսոյն կարօտ, և բազում փութոյ, և զվարձան այնպիսի իմն դնէ՝ որպէս ոչինչ այնպիսի առաջնոցն պատուիրեաց։ Բանզի ոչ ևս ասա զերիրէ ինչ յիշէ, որպէս 'ի հեզոցն պատուիրանի. և ոչ զմխիթարութենէ և զողորմութենէ, որպէս 'ի սգաւորացն և յողորմածացն. և ոչ զարքայութենէ երկնից. այլ որ ևս քան զնոսա ահագին է, լինել նմանօրոն ոչ, որպէս մարդկան մարթիցի լինել։

« Օ՜ի լինիջիք, ասէ, նմանօղ հօրն ձերում, որ յերկինս է »։ Եւ դու մինչ զիր, զի ոչ ասա և ոչ յառաջինսն հայր իւր կոչէ զնոսա. զի անդ՝ ուրեմն և թագաւոր մեծ, յորժամ վասն երդմանցն ձառէր. և ասա հայր նոցա կոչէ՝ և ոչ իւր. և զայս դիպօղ ժամանակն իմն իմաստութիւն պահէ։ Եւ զնմանեալն ևս, թէ որպէս պարտ իցէ նմանել, յառաջ բերէ, թէ « Որ զարեգակն իւր ծագէ 'ի վերայ չարաց և բարեաց, և ածէ անձրև 'ի վերայ արդարոց և մեղաւորաց »։

Բանզի և նա, ասէ, ոչ միայն չատէ, այլ և բարի

և ասէնք թշնամողացն։ Լիմէպէտ և չէն իսկ զայդ իրքն որ լինիցին, ոչ միայն վասն յորդ բարեբարութեն, այլ և վասն պատուոյն առաւելութեն։ Օ՛ի դու 'ի քոյոյ ծառայակցէ արհամարհիս, և նա յիւրմէ ծառայէ՝ որում բազում երախտիս միշտ հանապազ առնիցէ։ Այլ դու բանս և եթ չծախես[1] առնել աղօթս վասն նորա. իսկ նա և արդիւնս բազումս և մեծամեծս և զարմանալիս. զի զարեգակն ծագէ, և զամբոստամէն զցօղն պարգևէ։ Սակայն գրեսցուք այնպէս թէ նմանօղ իցէ, որպէս մարդոյ մարթիցի նմանել։ Այսուհետև մի ասիցես զայն՝ որ չարչարիցէն զքեզ. զի այնպիսի բարութեց լինիցի քեզ առիթ, և յայնչափ առաւել պատիւ է հասուցանելոց. զաշխատութիւնն յանձին կալար, և 'ի պտղոյն զրկեալ գտանիցես։ Մի անիծանիցես զնեղիչն, ապա թէ ոչ՝ զինամն կրեցեր, և զվարձն և զորուսանիցես. որ վերջին իսկ անմտութեն է, դժնդակացն տանել համբերութեն, և մանուանցն չհամբերել ժուժկալութեն։

Այլ զիարդ, ասեն, մարթ իցէ այսմ լինել։ Օ՛ն տեսանես մարդ լեալ, և այնչափ խոնարհեալ և չարչարեալ վասն քո և տակաւին հարցանես, և յերկբայս լինիս, թէ զիարդ մարթիցի ծառայակցացն թողուլ զինամն։ Ալսիցե՞ս անդուստ 'ի ճէն իսկ՝ զի ասէր 'ի խաչին, եթէ «Լիմող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն»։ Այլ ելսիցես 'ի Պաւղոսէ՝ որ ասէ, եթէ «Այլեալ 'ի բարձունս, և նստեալ ընդ աջմէ, և բարեխօս է վասն մեր»։ Ասեսանիցե՞ս, զի և յետ խաչելութեն և յարութեն և համբառնալոյն՝ առ հրեայս սպանօղս առաքէր զառաքեալս. որ 'ի բազում բարութիս վայելէին, և բիւրապատիկ չարչարանս անցուցին ընդ նա։ Մինչև մեծամեծ ինչ վնասեցար։ Այլ զինչ ինչ այնպիսի չարչարանս կրեցեր, որպէս քո ճէն իսկ գլխովին կապեալ, տանջեալ, սպատակեալ, թուք 'ի դէմն 'ի ծառայիցն ընկալեալ, տաներ այնպիսի մահու, որ քան զնամ մահ ձաղանաց էր, յետ այնչափ բազում բարերարութեց։

Այլ թէպէտ և մեծամեծ ինչ վնաս կրեցեր յան-

1 Շնորհալին և յոյնն ֆոխէ։

ձին, սակայն և այնպէս պարտիս աւելի բարիս հաստուցանել, զի քեզ լուսաւորագոյն ընդելուզանիցես պսակ, և զեղջայրն 'ի վերջին ախտէն բուժեալ զերծուցանիցես։ 'Այս և բժիշկք իսկ՝ յորժամ թշնամանիցին, և յաքսոտելոյն հարկանիցին յանզգայելոցն հիւանդաց, յայնժամ առաւել ողորմին, և կազմին առ հնարս հիւանդացն բժշկութեան, իմացեալ թէ 'ի յաճախութենէ ցաւոցն են թշնամանքն։ Այլ դու այսպիսի միտս ունիցիս առ քո նենգիչսն, և այնպէս գնասջիր առ քո մեղանչականսն. քանզի և նոքա ևս չար քան զհիւանդս են յախտի, և ընդ ամ բռնութիւնք վարսեալ։ Այլ արդ ջանայցես զերծուցանել զայնպիսին 'ի չարաչար ախտէն. և տուր ցածնուլ 'ի բարկութէն, և ազատեա 'ի դժնդակ դիւէն։ Բայց զի և զդիւահարսն յորժամ տեսանեմք, արտասուս արկանեմք, և ոչ թէ մեք փութայցեմք դիւախանգարել։ Այլ արդ այսպիսի ինչ միտս ցուցանիցեմք առ բարկացեալս. զի դիւահարաց նման են ցասկոտք. նա և աւելի ևս քան զնոսա թշուառականք. զի իմանան, և այնպէս մոլին. վասն որոյ և արգահատութիւն իսկ արժանի է անզգայութիւն նոցա։

Այլ արդ մի ոտս տրուփիցես 'ի վերայ անկելոյն, այլ ողորմեսջիր և կանգնեսջիր։ Զի յորժամ մաղձայոյզ ոք իցէ, և թալուկ և ցնորք զսրտիւն գայցեն, և երթեալ դարձուցանել կամիցի զչար մաղձն, յորժամ տեսանիցեմք՝ հարկ է ձեռն տալ և պատսպարել։ Զվէպտ և զհանդերձս ինչ մեր ապականիցէ՝, սակայն զերեսս ոչ դարձուցանիցեմք. և զայն ևեթ հնարիմք, զի միայն 'ի կարեացն ապրեցուցանել կարիցեմք։ Զյայսպիսի ինչ պատսպարան և բարկացելոյն հնարեսցուք առնել. զի յայնպիսի յանհնարին գլորմանէ կանգնել կարիցեմք։ Զնոյն և առ այնպիսին արասցուք. թէպէտ և փսխիցեն և աքսորիցեն, 'ի վեր առցուք՝ և պատսպարան լիցուք. և մի տացուք թոյլ նախ թափել զամ դառնութիւն։ Այլ յորժամ ցածնուցու, ապա լինի քեզ շնորհակալ. և իմանայցէ քաջիկ, թէ յորպիսի խռովութենէ զերծուցեր զնա։

1 Յորինակին ՀԱՄԻՏ։

Եւ զինչ ասեմ, թէ այնպիսումն շնորհս ինչ առնես. այլ ՝ն ծ իսկ և իսկ պատակեսցէ զքեզ, և մեծամեծ պարգևացն արժանի արասցէ. զի զեղբայրն յայնպիսի անհնարին սխտից ազատեցեր. և նա իսկ իբրև զտէր պատուիցէ, ակնածելով 'ի քումմէ հեզուութենէն։ Ողորմութիւնս զկանայսն իսկ՝ յորժամ ծնանիցին, զիարդ առ երկունսն զսպասեալսն ատամնացեն, և նոցա ոչ ցաւէ. այլ մանաւանդ թէ ցաւէ իսկ, և համբերեն և վշտակիցք վշտացելոցն լինիցին, որ առ երկունսն առատանիցին։ Եւ դու նմանեա՛ նոցա, և մի վատթար քան զկանայսն լինիցիս. և յորժամ ծնանիցին կանայքն, շնորհակալ սպասեսցուք լինիցին. և դու մի ապաժամանս քան զնոսա գտանիցիս։

Եւ եթէ ծանր ինչ թուիցին հրամանքն, զիտասջիր թէ և Քրիստոս այնորիկ եէր, զի զայնպիսի ինչ խնամս անկեսցէ 'ի մեր միտս. զի առ թշնամիսն և առ բարեկամսն պիտանիս յարդարեսցէ զմեզ։ Պա՛ն այնորիկ իսկ երկոցունց իրացս այսոցիկ հրամայէ պատկառ կալ. եղբարցն՝ յորժամ տայցէ զպատարագն 'ի վերայ սեղանոյն թողուլ. և թշնամեացն՝ յորժամ սիրել օրէնս դնիցէ, և աղօթս առնել 'ի վերայ նոցա։ Եւ ոչ միայն այ նմանօղ լինելոյ օրինակաւ ածէ յայս, այլ և հակառակաւն։

«Զի եթէ սիրէք, ասէ, զայնոսիկ՝ զոր սիրիցէն զձեզ, զինչ վարձք են. ո՞չ ապաքէն և մաքսաւորքն զնոյն առնիցեն»։ Եւ Պաւղոս ասէ, «Զի և ես էք արեամբ չափ ընդ մեզն մարտուցեալ»։ Եթէ զայս այսպէս առնիցես, այ նմանօղ լինիս. ապա եթէ լքանիցիս ինչ, ընդ մաքսաւորսն հաշուիցիս։ Տեսանես զի ոչինչ այնչափ 'ի մէջ պատուիրանացն կայ, որչափ ինչ կրճիմ 'ի մէջ իցէ երեսացն և երեսաց։ Եւ արդ մի ինչ զայն ածել զմտաւ՝ եթէ խիստ իցէ հրամանն, այլ թէ որպիսի ինչ հատուցումն իցէ։ Զայն խնամս ցուք, թէ ուստ նմանօղ լինելոյ իցեմք, յորժամ ուղղութիւն ինչ առնիցեմք. և ուստ զուգական, յորժամ 'ի մեզն հատանիցիմք։ Եւ ընդ եղբօրն հաշտեալ հրամայէ, և մի ուրեք խուսափել, եթէ ոչ նախ զթշնամութիւնն 'ի միջոյ բառնայցեմք։ Եւ յորժամ

վան՝ համ իսկ պատուիրանացն Աստուծոյ. ոչ ևս ընդ նովին[1] հարկաւ մուծանել զմեզ, այլ առ 'ի մինչ միայն պահանջել զդիւրութիւն, և այնու հաստատել զօրէնսն։ Եւ քանզի ասաց, թէ «Հալածելոյն զմարդարէսն որ յառաջ քան զձեզ էին», զի մի այնպիսի բանիւք դժկամակ լինիցին ընդ նոսա, հրամայէ՝ ոչ միայն յորժամ այսպիսի ինչ անցս անցուցանիցեն՝ այնմ ևեթ տանիցին, այլ զի և սիրիցեն ևս զչարչարիչսն։

Ցեսանես, զիարդ արմատաբի զցասումն և ըզմարմնոյ ցանկութիւն և զընչիցն տենչանս և զփառացն և զկենաց աշխարհիս խլել ընկենու միանգամայն։ Եւ զայս յառաջնումն իսկ արար, բայց ասաց ևս աւելի. զի յորժամ հեզ և խոնարհ հոգւով ոք լինիցի և սգաւոր, հարկ է զի զցասումն հանեալ 'ի բաց մերժեսցէ։ Եւ յորժամ արդար և ողորմած ոք իցէ, հարկ է զի զընչից տենչանս թօթափիցէ յանձնէ։ Իսկ որ սուրբ սրտիւն իցէ, հարկ է զի 'ի չար ցանկութենէն ազատանայցէ։ Եւ հալածեալն և որ թշնամանացն համբերիցէ և չար բանս լսիցէ, նա ամենեին իսկ կերթ իցէ առ 'ի չհայել յիրս կենաց աշխարհիս, և յամբարտաւանութենէ և 'ի հպարտութենէ սուրբ և ազատ գտանիցի։

Յորժամ ելցէ յայսպիսի կապանաց զլսողն, և կրթեաց 'ի պատերազմունս, դարձեալ այլ ազգ ևս խլէ զախտսն, և բազում հաւատեաւ։ Ակիզբն ա-բարեալ 'ի ցասմանէն՝ համ ուստեք կոտորէ զՄիլ զախտիս այսորիկ, թէ որ բարկանայցէ եղբօրն և որ մորոմն կոչիցէ և ռակայ, տանջեսցի. և որ զպատարագն մատուցանիցէ, մի մերձենայցէ 'ի սեղանն, եթէ ոչ նախ զթշնամութիւն լուծանիցէ. և որ ոսոխ ոք ունիցի, մինչև յատեան հասեալ իցէ՝ բարեկամ առնիցէ զթշնամին։ Եւ անտի ապա և 'ի ցանկութիւն փոխի։ Որ հայիցի, ասէ, յայրատ աչօք, իբրև զշնաձոցն պատժեսցի. և որ գայթագղեսցի յառնակոնջէն և կամ յայլ ումեքէ, նոյնպիսի պատիժս կրիցէ. և որ օրինօքն ամուսնացեալ իցէ, մի երբեք իշխեսցէ զկինն հանել և յայլ կին մտաբերել. և այ-

1 'Ի լուս. նոյին։

սու Ամիւ զչար ցանկութենն կոտորէ զարմատ։ Լ՚պա և զընչիցն տենչանս հրամայէ կարձել. մի երդնուլ և մի ստել. և մի 'ի պարեգօտսն և ի ինայել, թէ զէպ ինչ այնպէս լինիցի, այլ և զբաձկմանն և հաներել զկնի ձգել ամենի, որ կամիցին հանել. և զմարմնոյն պէտս հանդերձ ընչիւքն՝ բազում առատութիւնք խափանել հրամայէ։

Լ՚ս յետ այսր Ամի պէսպէս պատուիրանաց՝ զաւարտն [1] իսկ սոցին բերեալ մատուցանէ ասելովն, եթէ «Լ՚զօթս արարէք 'ի վերայ այնոցիկ՝ որք նեղեցին զձեզ». անդր ուրեմն 'ի գլուխ առաքինութեացն հանէ զլսօղն։ Օ՚ որ օրինակ քան զՀեղն լինել՝ ապտակ 'ի ծնօտ առնուլ մեծ է, և քան զողորմածն լինել՝ զպարեգօտսն հանդերձ բաձկնաւն տալ 'ի բաց, և քան զարդարն լինել՝ զուրն չարչարիլ, և քան զնաւ զաղարարն լինել՝ 'ի պահակին վարել, նոյնպէս և քան 'ի հալածանսն կալ՝ զհալածիչսն օրհնել։ Ցեսանես, զի առ սակաւ սակաւ անդր իսկ 'ի վեր զմեզ յերկնիցն կամարս հանէ։

Լ՚ս արդ իմ իմիք արժանի լինիցիմք, որք պատուէր առաք՝ այ նմանել, և թերևս և մաքսաւորաց զուզականք ոչ գտանիցիմք։ Օ՚ի թէ սիրէն զսիրելիս՝ մաքսաւորաց և հեթանոսաց իցե, իսկ յորժամ զայն ևս չառնիցեմք մեք, ո՞ւմ նմանիցեմք։ Օ՚ի և չառնեմք իսկ. քանզի և նախանձիմք ընդ եղբօրս աջողեալս։ Լ՚ս արդ որպիսի ինչ պատիժս ոչ կրիցեմք, որք քան զդպիրս օրինացն հրաման առաք առաւել լինել, և ապաժամանն քան զՀեթանոսս գտանիցիմք. զիարդ տեսանիցեմք զարքայութիւն, կամ զիարդ մտանիցեմք ընդ երանելի դրունսն։ Վանդի և զսոցն իսկ ակնարկեալ՝ ասէր, թէ «Լ՚ս մաքսաւորք զդոյն գործ գործեն»։

Լ՚ս արդ զարմանալ իսկ է ընդ վարդապետութիւն, զիարդ ընդ Ամի խոստանայ հատուցմունս բարուեց, և զաճ տեսանել, և ողորմութիւն գտանել, և զարքայութիւն երկնից ժառանգել, և որդիս այ լինել, և նմանօղս նմին, և բազում վարձս ընդունել։ Լ՚ս

[1] Ցօրինակին ՀԱՎԱՐԵՆ, եղաք ըստ լուս։

ուր զտրամանականացն ինչ պարտ իցէ Հառել, մեղմա-
գոյնս ինն բարբառի. զի զգեհենին անուն յայսչափ
բանս միանգամ Հառեաց. և այլ ևս ինչ թէպէտ և
Հառեաց, և Հանդարտագոյնս և պատկառեցուցա-
նելով առաւել, և ոչ պատուհասելով. և այն զի
զլսողին միտս ուղղիցէ։ «Ո՛չ ապաքէն և մաքսաւորք
զնոյն գործեն». և թէ «Զոյն անհամեսցի». և «Վարձ
կուլեսցի յարքայութենէ երկնից»։

Այս է ուրեք՝ զի զմեզն դնէ ընդ տանջանացն. զի
ծանրագոյն ևս քան զտանջանսն խմացուցանէ զայս
լսողին։ Որպէս յորժամ ասիցէ, եթէ «Զնդէն հնա-
ցաւ ընդ նմա 'ի սրտի իւրում». և զարձեալ եթէ
«Որ ինչ աւելին քան զայս է, 'ի չարէ անտի է»։
Որ զմտացիս փոխանակ տանջանացն անուան՝ բաւա-
կան է մեղացն սաստկութեան ածել 'ի զգաստութիւն։
Վասն որոյ և զհեթանոսս և զմաքսաւորս 'ի մէջ
բերէ 'ի նմանութի երեսացս այսոցիկ, զի զաշակերտսն
պատկառեցուցանիցէ։ Այս Պաւղոսի այսպիսի ինն
յայտ արարեալ՝ ասէ, թէ «Մի՛ արամիցիք ինչ որ-
պէս զայլսն, որ յոյս ինչ ոչ ունիցին. որպէս և հե-
թանոսք՝ որք ոչ գիտիցեն զաճ»։ Այս յայտ ինչ առ-
նէ, թէ ոչ մեծամեծս ինչ պահանջէ. այլ սակաւ
ինչ աւելի քան զսովորութենն։ Զանգի ասէ իսկ, թէ
«Մաքսաւորք զդոյն գործեն»։ Զայց ոչ յայսմ
վայրի միայն զեռեղէ զբանն, այլ ևս առաւել տա-
նի հանէ 'ի հատուցմունսն, և զերանելի զոյս խոս-
տանայ։

«Այլերուք, ասէ, կատարեալ, որպէս Հայրն ձեր
յերկինս կատարեալ է»։ Այս բազում անգամ զերկ-
նից սերմանէ զանուանն, զի և տեղեաւն իսկ զարթու-
ցանիցէ զմիտս նոցա. քանզի զեռ ևս տկարագոյնք և
ծանրամիտք էին։

Եւ մեր այսուհետեւ խմացեալ զայսպիսի բանս, բազում սէր և առ թշնամին ցուցցուք. և ցծաղրալից սովորութիւնն 'ի բաց ընկեսցուք, զոր բազումք յանհանձարիցն կրեն. զի կան մինան պատահելեացն նախ ողջոյն տալոյ։ Յորում երանութիւն կայ, այնմ չառնին նախանձաւորք. և որ ծաղուն է, զայնր ստէպ զհետ երթան։ Ինդէր և դու յառաջագոյն չտայցես ողջոյն։ Վասնզի և նա իսկ, ասէն, այնմ անսայ։ Լաւ այնպէս իցէ, նմին իրի իսկ և քեզ պարտ էր առնապարել, զի դու առնուցուս զպատէն։ Այ՛, ասէ. քանզի նա այնմ փոյթ կալաւ յանձին։ Եւ զինչ քան զայն անհանձարութիւն տգեղագոյն կայցէ. որովհետեւ ասէ, նա զայն փոյթ յանձին կալաւ՝ վարձուց[1] լինել ինձ առիթ, չկամիմ մեռել յայսպիսի պատճառս։

Եթէ նա նախ քան զքեզ տայցէ զողջոյնն, քեզ ինչ լաւուի չգործի. թէպէտ և յետոյ տայցես զողջոյն։ Իսկ եթէ դու նախ քան զնա առնապարիցես, բազում շահս նախողջոյնն լինելով 'ի նորա հպարտութենէն շահիցիս, և յաձախ պտուղս 'ի նորա ամբարտաւանութենէն կթիցես։ Օ խորդ չիցէ յետոյն անմտութիւն. ուր այնչափ շահս 'ի դոյզն բանից հասաս նիցէ շահել, և վտարանդի այլում զօգուտն տայցես, և ըստգտանիցես զնա 'ի նոյն զառաձեալդ։

Եթէ վասն այնորիկ եպերեսցես զնա, զի նախ քեզ մնասցէ ողջոյն տալոյ, ընդէր նմանօղ նմին լինիցիս՝ զոր պարսաւեսն[2]. և զոր չարն կոչեիր, նմին[3] իրրև բարւոյ փութաս հասանել։ Ցեսանես, զի չիք ինչ անմտագոյն քան զմարդ՝ որ 'ի չարիս կայցէ։ Ա՛ սան որոյ աղաչեմ, փախիցուք 'ի չարէ. զի սովոր է ախտն այն զբազում բարեկամութիս քակել, և բիւրապատիկ թշնամութիս գործել. վասն այնորիկ կանխեսցուք քան զնոսա մեք։ Օ՛չ ոք ապտակիլ, և պահակ

1 'Ի լուս. վարձոյ։
2 'Ի լուս. պարսաւիցեսն։
3 'Ի լուս. նմին իրի։

երթալ, և մերկանալ 'ի թշնամեաց առաք հրամանս համբերել, որում թողութեան արժանի լինիցիմք, եթէ 'ի դայլն ողջոյնն տալ հակառակութեան ցուցանիցեմք։

Լ.Յլ արհամարհիմք, ասեն, և անգոսնիմք, յորժամ մեք նախ ողջոյն տայցեմք։ Օ՛ի մի դու արհամարհիցիս, ով այր դու, դիմադարձ լինիս ՝այ. զի մի արհամարհիցիս 'ի ծառայիցէն, զՏէրն քամահես՝ յորմէ այնչափ երախտիս գտեր։ Լ.Թէ յոռութեամբ ինչ գործիցէ արհամարհելն քո 'ի քումմէ պատուակցէն, և առաւել քո արհամարհելն զքո արարիչն զՀա՞ծ։ Լ.Ս յետ այնորիկ և զայն ևս գիտեա, զի յորժամ արհամարհիցէն զքեզ, յայնժամ մեծայ վարձուց լինի քեզ առեալ։ Ա՛ սան ՝այ կրես զայն, քանզի նորա օրէնսայ ունկնդիր եղեր. և այն օրչափ պատուոյ զինքիցէն, քանի՛ թագայ։ Լնձ լիցի արհամարհիլ և թշնամանիլ վասն ՝այ՝ քան պատուիլ յամենայն թագաւորաց. զի չիք ինչ և չէ իսկ ինչ հանդոյն այնմ փառաց։

Լ.Ս արդ զայնր զՀետ երթիցուք, որպէս և նա իսկ հրամայեաց. և զմարդկօրինացս մի ինչ փոյթ յանձին կալցուք. այլ զտոյգ առաքինութիւն ցուցցուք յանմի։ Օ՛ի այնպէս և զմեր կարգն յարդարիցեմք. և զերկնից և զանտի պակացն արդէն համբարեսցուք զբարութիւն. իբրև հրեշտակք ընդ մարդկան շրջիցիմք, և իբրև զվերին զօրութիւնն յերկրի ՃՀմիցեմք. և յամ տրամութիւնք և 'ի խռովութիւնք յապահով իցեմք. և հանդերձ այսու ՝ամենայն և զանՃառևս բարութիւնն առնուցցուք։ Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհքն և մարդասիրութիւն ՝նոն մեր Յեսի Քրիստոսի. որում փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ԻՆՆԵԻՏԱՍՆԵՐՈՐԴ

«Զ՝ոյշ լերուք ողորմութեան ձերում, մի առաջի մարդկան առնել՝ իբրև 'ի ցոյց ինչ նոցա»։

ՈՐՈՆԱՒՈՐԱԳՈՑՆ իսկ քան զամենայն ախտսն մերժէ հանէ այսուհետև, զկատաղութիւն և զմոլուր որ 'ի մնապարծութենէն լինիցի այնոցիկ, որք ուղղութիւնս ինչ կամիցին գործել։ Զ՝ի յառաջինսն ասէին Ճառեաց զայսմ ախտէ. զի աւելորդ իսկ էր յայնժամ Ճառել, մինչև հաւանեցուցեալ էր ինչ մի 'ի պատշաՃիցն գործել, նախ թէ զիարդ պարտ իցէ առնել զայն ամենայն և վՃարել և ուսուցանել։ Այլ քանզի ած հասոյց 'ի գլուխս առաքինութեցն, ապա և զառընթերակաց նորին զեղծագործ ապականութիւնն քակէ։ Զ՝ի ոչ վայրապար ինչ ծնանի այսպիսի ախտ. այլ յորժամ զուղղութիւնս հրամանացն յանձին ցուցանիցեմք, յայնժամ վաղվաղակի իմն առ ոտս բուսանի։ Այլ արդ պարտ է նախ անկել զառաքինութիւն, և ապա զՊնասակար պտղոյն նորա զախտն 'ի միջոց բառնալ։

Այլ դու տես ուստի առնէ սկիզբն։ 'Ի պահոց, և յաղօթից, և յողորմածութենէ. քանզի այսպիսի իմն ուղղութեց սովոր է սկել հպարտութիւն։ Ամբոխ փարիսեցին ուռուցեալ հպարտանայր։ «Պահեմ, ասէ, երկիցս 'ի շաբաթու, և տասանորդս տամ յԸնչէից իմոց»։ Արդ և յաղօթսն ևս հպարտանայր, և 'ի ցոյց և յաչս մարդկան կայր յաղօթս։ Այլ քանզի չէր ոք ոչ այլ մեծ, 'ի մաքսաւորն իբրև ընդ նմա իմն գոռացեալ զայրացուցանէր. «Ահա, ասէ, իբրև զայլ մարդիկ, և ոչ իբրև զմաքսաւորս զայս»։ Այլ տես ուստի առնէ սկիզբն, իբրև զարն և զանհնարին գազանէ Ճառեալ զՀպարտութենէն, որ գողանայ զայն որ չիցէ կարի արթուն։ «Զ՝ոյշ կացէք, ասէ, ողորմութիւն ձերում, մի առաջի մարդկան իբրև 'ի ցոյց ինչ նոցա՝ առնել»։

Պաւղոս գրէ փիլիպեցւոցն, թէ «Զ գոյշ լերուք 'ի շանց անտի». քանզի գաղտ իսկ մոռանէ գազանն, և զնամ յանդգայս առանց ոտնառաջն առնելոյ՝ հանէ հոսէ արտաքս 'ի նեղբուստ։ Լաւ զի բազում ինչ Հաւատեաց զողորմածութենէն, և զնաց ևս 'ի մէջ էած, թէ «Ոչ գոգ զարեդաւն 'ի վերայ չարաց և բարեաց». և յնամ կողմանց 'ի նոցն յորդորէ, և առնել՝ հաւանեցուցանէ առատութիւն պարգևացն։ Պպա եղծանէ և զվնասակարն ինչ զայսպիսի զգեղեցիկ և զպտղալից ձիթենւոյ։ Պ՞ որոյ և ասէ, թէ «Զ գոյշ լերուք ողորմութեան ձերում, մի առաջի մարդկան իբրև 'ի ցոյց ինչ նոցա առնել»։

Զ ի առաջի այ լինի ողորմութիւն, և մի առաջի մարդկան։ Զանզի յորժամ ասաց, թէ մի առաջի մարդկան առնել, յարէ 'ի նոյն՝ թէ «Իբրև 'ի ցոյց ինչ նոցա»։ Լաւ թուի եթէ կրկին զնոյն ինչ ասիցէ. այլ թէ հաւատեաւ ոք միտ դնիցէ, գտանէ զի ոչ նոյն է, այլ այլ իմն սա, և այլ իմն նա. և բազում զգուշութիւն ունի, և անչափ խնամ և անխայութիւն։ Զանզի է մարթ և առաջի մարդկան առնել, և 'ի ցոյց ինչ ոչ առնել. և դարձեալ չառնել առաջի մարդկան, և առնել 'ի ցոյց։ Պ՞ ասն որոյ և չէ ինչ վայրապար գործն՝ որ գործիցի, այլ և հարկանի իսկ զմիտսն և պսակէ։ Զ ի թէ որոշումն ինչ 'ի միջի ոչ կայր իրացն, զբազումն և դանդաղկոտս իսկ առնէր առ ողորմութենն տուրս. քանզի ոչ մարթէր ամենևին ամենայն ուրեք գաղտ գործել զգործն, վասն այնորիկ ազատէ զքեզ յայնպիսի հարկէ, ոչ իրաց ինչ վնասարմամբ, այլ կամաբ առնելեացն. զի և զինասն և զվարձսն խարոց 'ի մէջ արկեալ որոշէ 'ի միմեանց։ Զ ի մի ասիցես, եթէ ինձ պատիւք ևս ևն այն՝ եթէ ոք տեսանիցէ. ոչ, ասէ, զայդ ինչ խնդրեմ, այլ զմիտսն քո, և զիրացս որ գործիցի զպայման. և զոգիդ յերիւրել կամի, և ամենևին յնամ ախտ առնել առատ։ Զ առ այս մարդկան տալ զտուրսն՝ խափանել, և զինասն որ 'ի նմանէ լինիցի՝ ուսուցանէ, եթէ զուր և վայրապար է, եթէ այնպէս ինչ ոք զտուրսն տայցէ՝ իբրև 'ի ցոյց ինչ և 'ի պարծանս։

1 'ի լուս. -ծել։

Պարձեալ զարթուցանէ զմիտս նոցա զՀօրէն յԼեցուցանելով, որ յերկինս է։ Օ՛ի մի միայն մնա-սուն կսկծեցուցանիցէ, այլ և յիշատակաւ իւրոյ ծնողն պատկառեցուցանէ 'ի մտոտի պարծանայ. եթէ այնպէս ինչ առնիցէք, ասէ, ոչ ընդունիցիք վարձս 'ի Հօրէն ձերմէ որ յերկինս է։ Այս ոչ յայն միայն կայ, այլ յառաջ մատչի, և այլովքն ևս յաճախագոյն կսկծեցուցանէ. որպէս վերագոյնն զմաքսաւորս և զՀեթանոսս էած յառակ օրինակի երեսայն նոցա, յամենի առնելով զայնոսիկ՝ որ նոցա լինիցին նման նոցոյն, նոյնպէս և ասա զկեղծաւորսն։

«Յորժամ, ասէ, ողորմութիւն առնիցես, մի փող հարկանիցես առաջի քո՝ որպէս կեղծաւորքն»։ Օ՛ի ոչ եթէ փող հարկանելին, այլ զբաղում մտոտի պարծանսն նոցա յորջորջմամբ փողոց հեգնէ և ձաղէ։ Այս բարւոք իսկ կեղծաւորս կոչէ զնոսա, զի զդէմս ողորմածութիւն ցուցանելին, և զմիտս անագորոյնս և անմարդիս։ Օ՛ի ոչ եթէ վասն ընկերին ողորմելոյ զայն առնելին, այլ զի ինքեանք մտոտի փառաք վայելեսցեն։ Ոչ վերջին իսկ անագորոյն մտաց է, զի զայլոց 'ի առվոյն մեռանել՝ իւրեանց պարծանաց բարուրս առնելին, և ոչ հայելին և ձեռնտու լինելին վշտացելոցն։ Այս արդ ոչ առնել զողորմութիւն խնդիր ինչ իցէ, այլ 'ի դէպ և մարդասէր կամաք։

Իսկ իբրև հեգնեաց զնոսա և կսկծեցոյց, զի 'ի լսելոյ անտի իսկ յամենի լինիցին, ասա այնուհետև սկսանի ածել յուղղութիւն՝ որ զայնպիսի ախտս ախտանայցեն. և ցուցանէ՝ թէ զիարդ պարտ իցէ առնել, և զիարդ չիցէ պատշաճ առնել։

«Այ՛ի, ասէ, զիտասցէ ձախ քո՝ զինչ գործէ աջդ»։ Պարձեալ և ասա, ոչ եթէ զձեռնն ինչ ակնարկիցէ, այլ զյաճախութիւնն դնէ։ Օ՛ի թէ հնար ինչ իցէ, ասէ, և քեզ իսկ չիմանալ, սակայն և այնպէս փոյթ յանձին ունիջիր. որում չեն մարթ լինել, եթէ ձեռքն որ մատակարարիցեն՝ ոչ իմանայցեն։ Այս ոչ, որպէս ոմանք ասեն, եթէ 'ի չարաց մարդոց թաքուցանիցես. այլ յամ իսկ մարդկանէ լռելեայն գործել հրամայէ։

Այսպա և վարձուցն միտ դիր, ուրչափ ինչ իցեն։

Յորժամ ասաց՝ եթէ զինչ անտի տանջանքն լինելոց իցեն, ապա ցուցանէ՝ թէ զինչ իցէ նոցա անտի պատիւ։ Օ՛ի երկոքումբք կոչմամբք ստիպիցէ հանիցէ զնոսա՝ի բարձրագոյն վարդապետութենն. և ուսուցանէ իսկ՝ եթէ ՝ամ ուրեք մնա՛ է ՝ած. և ո՛չ այսու կենաց և եթէ վնարիցին մեր իրք, այլ և ահագին ևս դատաստան ընդունելոց է զմեզ. և ընդ ՝ամ գործոց պատիժք պատուհասից, և կամ թէ պսակք և պատիւք. և ո՛չ փոքր ինչ և ոչ մեծ՝ զոր առնիցեն մարդիկ, կարիցէ թաքչել յերեսաց ՝այ։ Պանզի և ասէ իսկ, թէ «Հայրն քո որ տեսանէ՝ի ծածուկ, հատուցցէ քեզ յայտնի»։ Լ՚ս մեծ իմն հանդէս թատերց նստուցանէ, որպէս և քո իսկ անձնն ցանկանայցէ։ Օ՛ինչ կամիցիս, ասէ. ո՛չ ապաքէն հանդիսատեսս գործոցդ. ահաւանիկ ունիս, ո՛չ զշրեշտակս կամ ըզշրեշտակապետս, այլ զամենեցունցն ՝ած։ Լ՚ս եթէ զմարդիկ և ևս կամիցիս նստուցանել հանդիսատես, և ո՛չ յայմմ ևս ցանկութենէ զրկիցէ զքեզ՝ի դէպ և՝ի պատշաճ ժամանակի. այլ բազում առատութի՛ և զայն ևս շնորհեսցէ քեզ։ Լ՚ս այժմ թէ կարի քաջ կամիցիս յայտնել, տասն կամ քսան կամ հարիւր առն միայն կարիցես ցուցանել. իսկ եթէ փութայցես այժմ թաքուցանել, յայնժամ ինքն իսկ ՝ած ՝ամ տիեզերաց որ շուրջ զքեզ կայցեն՝ ազդ արարեալ յայտնեսցէ։ Թէ և մարդկան իսկ կամիցիս ցուցանել, թաքո՛ այժմ, զի բազում պատուով յայնժամ ամենեքեան տեսանիցեն, յորժամ ՝ած յայտնիցէ, և յարգիցէ, և քարոզ ընդ բնաւ հրաման տայցէ կարգալ։ Օ՛ի այժմ բազումք իսկ որ տեսանիցեն, ըստ գտանիցեն իբրև զթեթև ոք և ընդունայնապարծ. այլ յորժամ պսակեալն տեսանիցեն, ո՛չ միայն չըպարսաւիցեն, այլ և զարմանայցեն ևս ամենեքին, յորժամ և զվարձն իսկ հասանիցէ առնուլ։

Լ՚ս արդ տես, որչափ ինչ անմտութի՛ իցէ. զի՝ի վայրկենի չժուժալոյն՝ յերկուցունց իսկ անկանիցին. և յոյ՝ վարձս չառնուցու, և՝ի մարդկանէ ձիր ինչ չգտանիցէ. որոց առաջի իբրև մարդահաճոյ գտանիցի։ Լ՚ս եթէ ցուցանել ինչ պարտ իցէ, ապա հօրն ամենեցունց պարտ է ցուցանել. մանաւանդ զի պատ-

կելոյն և պատժելոյն տէր է Հայրն։ Զի թէպէտ և ինաս ինչ չգործէր յայնմանէ, չէր պարտ զնորա հանդէսն թողուլ, և 'ի մարդկան հանդէս երթալ՝ ցանկացողին փառաց։ Լաւ զինչ քան զայն հիքուութիւն և թշուառութիւն իցէ, զի յորժամ թագաւորն ինքնին փութայցէ գալ զհանդէսն տեսանել, և նա զաղքատս և զմուրօղս ածեալ նստուցանիցէ հանդիսատես իւրոյ ուղղութեանն։ Զոր և ցուցանելոյն չհրամայէ, այլ առաւել փութալ թաքուցանել։ Արանդի ոչ զոյզ ինչ իցէն, փութալն յայտնել՝ և փութալն թաքուցանել։

«Լաւ յորժամ կայցէք, ասէ, յաղօթս, մի լինիջիք իբրև զկեղծաւորսն, որ սիրեն 'ի գուեհս և յանկիւնս հրապարակաց կալ յաղօթս, որպէս զի յայտնի լինիցին մարդկան. ամէն ասեմ ձեզ, այն իսկ են վարձք նոցա. այլ դու յորժամ յաղօթս կայցես, մուտ 'ի սենեակ քո, և փակեա զդուռն քո ընդդէմ քո. և կաց յաղօթս առ Հօրն քում 'ի ծածուկ»։ Պարտ ձեալ և զսոսա կեղծաւորս կոչէ. և արդարև յիրաւի իսկ։ Զի այ պատճառին յաղօթս կալ, և մարդկան շուրջ ածեալ զաչս Հային. ոչ զաղօթականաց զգեցեալ զկերպարանս, այլ զմարդոց զծաղր և զծանակ կացելոց։ Զի որ աղաչիցէն զոք, զամենեսեան թողեալ՝ 'ի նա Հայի որ տերն իցէ, և կարօղ տալ զՀայցուածսն։ Իսկ եթէ զնա թողեալ՝ այսր անդր Հայիցի բանդագուշեալ, և զվայրօք զաչսն ածիցէ, ունայն ձեռօք ելանիցէ անտի. վասն զի ինքն այնպէս կամեցաւ։ Զի և չասէ իսկ, եթէ ոչ առցէն զվարձս այնպիսիքն, այլ թէ ունին. այս ինքն է, զի յայնցանէ՝ որոց զաղօթսն ցանկանային ցուցանել, առնուցուն։ Զի ոչ ՀԱԾ այնպէս ինչ կամէր, այլ նա յիւրմէ կամէր տալ զիսիսարէնն. բայց նոքա որ 'ի մարդկանէն խնդրեն, չեն արժանի 'ի նմանէն առնուլ, վասն որոյ չարաչարինն իսկ։ Այլ դու տես զԱՅ մարդասիրութիւնն. զի յորժամ և մեզ ինչ բարիս խնդրիցեմք, և ընդ այնր և վարձս խոստանայ տալ։ Զի իբրև խոտեաց զայնոսիկ, որ ոչ դիպօղ իրօքն վարեին, և 'ի տեղեացն և 'ի մտայն ցանկութիւնեն, և եցոյց թէ կարի ծաղու արժանի էին, ածէ այնու-

հետև 'ի գեղեցիկ պայման աղօթիցն, և խոստանայ միւսանգամ վարձս, եթէ «Պ'ժուտ 'ի սենեակ քո»։

Եւ արդ զիարդ, ասեն. յեկեղեցւոջ լիցէ պարտ յաղօթս կալ։ Պարտ և կարի քաջ. այլ ամ ուրեք այնպիսի կամաք, զի ամ զմիտսն խնդրէ։ Օ՛ի թէ և 'ի սենեակ մտանիցես, և զդրունսն եւ փակիցես, մաք թի 'ի ցոյցս մարդկան կալ յաղօթս, և ոչինչ օգուտ փակել զդրունսն զործիցէ։ Ցեռ զիարդ և աստ զխարոցն 'ի միջի դնէ. «Որպէս զի երևեսցին, ասէ, մարդկան»։ Օ՛ի այնպիսի ինն ուղղութիւն կամի կարկել, յառաջադոյն քան զդրունսն փակել զմտացն դրունսն նախ փակել, զի ամենևին ամենայն ուրեք մերժիցի 'ի վայրապարն պարծանաց։ Լաւ է ամենայն ուրեք հեռանալ յայնպիսի ախտէ. մանաւանդ յաղօթս. զի թէ առանց այնր իսկ վերիպեմք, և այսր անդր հարկանիմք, եթէ այնպիսի ախտիւ յաղօթսն մատչիցիմք, զիարդ կարիցեմք զհայցուածսն զոր խնդրեմք՝ առնուլ. թէ մեք զկարօտեալսն՝ որ աղաչեն, նոցա ոչ լսիցեմք, իսկ ամ զոր աղաչեմք՝ զիարդ լսիցէ։

Դայց սակայն են բաղումք, որ յետ այսպիսի և այլոցպէս պատուիրանաց՝ ծանակ կան յաղօթս. զի թէպէտ և մարմինն 'ի ծածուկ ուրեք իցէ, բարբառովքն ամենեցուն աշխարհագոյժ առնեն, անհեղեղս ինն աղաղակեն, և կերպարանօքն և մեծամայն բարբառովքն ծաղր և ծանակ առնեն զանձինս։ Ոչ տեսանես, զի և 'ի հրապարակս իշխանաց յորժամ յանդուգն ոք մատչիցի, և անձայն բարբառիցի։ Դպա թէ մեղմով և պատշաճ կերպարանօք մատչիցի, յայնժամ ածիցէ 'ի հաւան զայն՝ որ կարօղն իցէ զպաղատանսն հնարել։ Եւ արդ մի մարմնոյ կերպարանօք, և մի մեծամայն բարբառովք, այլ բարուք յոժարութիւ կամացն զաղօթսն մատուցանիցեմք։ Մի՛ յանդուգն աղաղակաւ, և մի՛ 'ի ցոյց ինչ և առ մարդկան ականել, այլ հեզութիւ և հանդարտութիւ, մտացն սարկանօք և մեղմ արտասուօք զիրսն 'ի նեղբս զարթուցանել։ Այլ սիրտդ ձմլիցի, և չկարիցես ժուժալ թէ ոչ աղաղակիցես. ոչ եթէ այնու ինչ սրտին

փղձուկ՝ Թափիցի։ Այլ որպէս Պողոսէս փղձկէր՝ ի սրտին իւրում, և՝ ի վեր ինչ ոչ հանէր. և այնպէս լսելի եղէն լռութիւն աղօթք, զի և ասէր իսկ ՅԾ, «Օ՛ի աղաղակես առ իս»։ Այլ Պնինա թէպէտ և բարբառ ինչ ընդ շրթունսն ոչ հանէր յաղօթսն, այլ զամ ինչ վճարեաց զինչ կամեցաւ, քանզի սիրան աղաղակէր։ Իսկ Հաբէլ ոչ լռութիւ ինչ, այլ յորժամ վախճանեցաւն՝ կայր յաղօթս. և արիւն նորա քան զՏնչիւն փողոյ ևս քաջ աղաղակէր առ ՅԾ։ Հեծեաւ և դու, և հան յոգւոց իբրև զսուրբսն, ոչինչ արգելում. պատառեա, որպէս մարգարէն ասաց, զսիրտ քո և մի զպատմուճանն։ Ի՞ստ այնմ, թէ «Ի խորոց կարդացի առ քեզ Տեր»։ Ի՝ ներքուստ՝ ի սրտին արձակէր բարբառս։ Խորհուրդ առնիջիր զաղօթսն։

Ղեսանիցես, զի յարքունիսն աղմուկ ՅԾմ և աղաղակ խափանեալ, և յԾմ կողմանց լռութիւն շահեալ տիրեալ. և դու նոյնպէս յարքունիս մտեալ համարիջիր զանձն. ոչ որ յերկրի ինչ լցեն, այլ անդ՝ ի վեր յահագինսն քան զայս՝ յերկինս բազմացուցանիջիր զՀանդարտութիս. քանզի հրեշտակաց իսկ եղեր դասակից, և հրեշտակապետաց գնդակից, ընդ սերովբէսն սրբասաց։ Օ՛ի ամենեքեան իսկ գունդքն վերնոյ բազում յօրինուածութիս ցուցանեն յանձինս. բազում դողութիւն զխորհրդական նուագսն նուագեն, և զերանախառն օրհնութիսն երգեն թագաւորին ամենեցունցն ՅԾ. ընդ նոսա խառնեա և դու զանձն յաղօթս. և խորհրդական զարդուն նոցա լինիջիր նախանձաւոր. և ՅԾ կայջիր յաղօթս, որ յԾմ տեղիս մնա է, և յառաջ քան զբարբառելն լսէ, որ զԾմ ծածուկ մտաց գիտէ։ Այնթէ այսպէս կայցես յաղօթս, բազում վարձս առնուցես։

«Այս հայրն քո, ասէ, որ տեսանէ՝ ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս»։ Այս ոչ ասաց, թէ հնորհեսցէ քեզ, այլ թէ հատուսցէ. քանզի պարտապան քեզ կացոյց զանձն և մեծամեծ պատուովք ասէն իսկ պատուեաց զքեզ։ Այս քանզի ինքն անբաւական

[1] Յօրինակին ԺԷ։

և, և զաղօթան այնպիսի կամի։ Բ. Դ և զամենն ասէ զաղօթիցն։

«Յորժամ յաղօթս կայցէք, ասէ, մի շատխօսք լինիցիք իբրև զհեթանոսս»։ Յորժամ զողորմութեանն Ճառեաց, զմարդահաճութիւնն միայն խոտեաց, և այլ ինչ ոչ յաւել և ասաց, թէ ուստի պարտ իցէ առնել զողորմութեան. յարդար վաստակոց, և ոչ 'ի յատիշտակութենէ կամ յագահութենէ. քանզի այն յոյժ յայտնի ամենեցուն էր, ոչինչ Ճառեաց. բայց սակայն յառաջինն կանխաւ կարգեաց՝ յորժամ քաղցելոցն և ծարաւեաց արդարութեան ետ երանութիւն։ Իսկ յաղօթան և այլ իմն աւելի յաւելու, չլինել շատխօսս։ Որպէս անդ զկերդաւորն, նոյնպէս ասա զհեթանոսն դարով։ Մինայն ուրեք յայլոց դէմն զայլոց նուազութեան ազարտէ. և զի քան զնմա ինչ այս մերմոքեցուցանէր զլսողն, յորժամ վատթար մարդկան ոք նմանեցուցանիցէ, և զնոսա այսու իմն զկնքուցանէ։ Իսկ շատխօսութեան ասա զցոփութենն կոչէ, յորժամ ոչ զպատշաճն խնդրիցեմք յայ, հարստութեի, փառս, թշնամեացն գերՙիվերոյ լինել, ընչից յաճախութեի, և վայրապար ոք ինչ չիցէ մեզ օգուտ։ «Զի գիտէ, ասէ, որ ինչ ձեզ պիտոյն է»։

Հանդերձ սոքիմքք թուի ինձ, թէ և երկայն աղօթս չհրամայէ մատուցանել։ Երկայնս՝ ոչ ժամանակաւ ինչ ասեմ, այլ բազմութեամբն և շատխօսութեաբ։ Այլ յամենն և դեգերել պարտ է, և զնոյն խնդրել. ըստ այնմ թէ «Աղօթից հպատակ լինիջիք»։ Այս ինքն իսկ առակաւ դատաւորին՝ զոր այրին թախանձէր, յայտ առնէ։ Զի թէ զանողորմ և զանազգոյն իշխանն խոնարհեցոյց էած 'ի հաւան՝ պաղատանացն յաՃախութիւն. և բարեկամն՝ որ 'ի տարաժամու գիշերին չոգաւ թախանձել, զինջեցեալն 'ի մահՃայն յարոյց, և զպէտսն վՃարեաց՝ ոչ վասն բարեկամութեան ինչ, այլ վասն ժուութեան և դեգերանաց. ոչ այլ ինչ, այլ յաՃախագոյն պաղատել առ նա դնել օրէնս ամենեցուն, և ոչ բազում տունս աղօթից կարգել առնուլ 'ի բերան, և երթալ տալ նմա համարս հրամայել։ Այ՝ որոյ և ասէ իսկ առակաւ։

«Օ՛ի նոքա այսպէս համարին, եթէ 'ի շատխոսութենէն ինչ լսելի լինին։ Օ՛ի գիտէ, ասէ, զինչ պէտք ձեր իցեն»։ Եւ եթէ գիտէ, ասէ, զինչ պէտք իցեն, հիմ իսկ բնաւ կայցեմք յաղօթս։ Մ՛է զի ուսուցանիցես, այլ զի խոնարհեցուցանիցես զնա 'ի քեզ. և ընտանի լինիցիս նմա յաճախու

քան զընկերն աւելի. ոչ մեծատունն քան զանանկին, ոչ տէրն քան զծառայն, և ոչ իշխանն քան որում իշխիցէն, ոչ թագաւորն քան զզօրականն, ոչ իմաստունն քան զանմիտն, ոչ ճարտարն քան զտգէտն. զի ամենեցուն մի ազնուականութիւն առ հասարակ շնորհեաց, և զամենեսեան իսկ արժանի արար կոչել զնա Հայր։

Լ՛ս արդ յետ յիշեցուցանելոյ զազնուականութէն և զվերին պարգևացն և զհասարակապատիւ պատուոյն եղբարց և զսիրոյ և յերկրի հեռանալ և յերկնից ընակութէն հաստատելոյ, տեսցուք զինչ ինչ այլ ևս հրամայիցէ. մանաւանդ զի սոյն իսկ բան բաւական է զընտաւ զառաքինութեն ընծայեցուցանել զվարդապետուն։ Զի որ Հայր կոչիցէ զնոսա, և Հայր հասարակաց, պարտ է նմա այնուհետև ըստ ազնուականութենն՝ նոյնսկսի ինչ և առաքինութիւնս ցուցանել, զի մի անարժան այնմ ազնուականութեանն գտանիցի. և ըստ պարգևացն և զիսոյթն յանձին ունել։ Լ՝այց սակայն չհամարի զայս միայն բաւական, և միւս ևս քան զսոյն մեծ յաւելու։

«Սիրելք եղբիր, ասէ, անուն քո»։ Լ՝ըժանի զնոսա Հայրն կոչելոյ են աղօթքն. զի ոչ նախ քան զՀօրն փառս այլ ինչ խնդրիցէ, այլ զնմանէ ինչ երկրորդ նորա փառացն համարիցի։ Զի սուրբն, ասէ, փառաւորեալ է. զի նա զիւր փառսն միշտ լիով ունի, և նոյն պիսի հանապազ կայ մնայ. բայց աղաչել հրամայէ զայն՝ որ յաղօթսն կայցէ, զի մերովք իսկ կենօքս փառաւորեսցի։ Լ՝ս զոր յառաջագոյնն ասաց, եթէ «Լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայր ձեր՝ որ յերկինս է»։ Լ՝ս սերովբէքն 'ի փառաւորութենն[1] այսպէս ասէին, եթէ «Սուրբ սուրբ սուրբ». որպէս զի յայտ լինիցի, եթէ սրբեսցին՝ փառաւորեսցի է։ Լ՝ըժանի արա, ասէ, զմեզ այնպէս սուրբ վարս յանձին ունել, զի մեք ամենեքին զքեզ փառաւորեսցուք։ Որ դարձեալ կատարեալ առաքինութենն այնպէս անարատ յամենայնի զոՀն ցուցա-

1 'Ի լուս. 'Ի ֆառաստրութենն։

նել, որպէս զի իւրաքանչիւր [1] 'ի տեսողացն վասն բոլորի գործոյն փառաւորեսցեն զնոր։

«Լուկեսցէ արքայութիւն քո»։ Լու այս դարձեալ մտերիմ և բարեբար որդւոյ է՝ չքաւեռել ընդ երևելիսս, և ոչինչ մեծամեծս զանցաւորս համարել, այլ փութալ առ հայրն, և հանդերձելոցն ցանկալ. որ բարւոք կամաց և մտաց ազատացելոց է յերկրաւոր զբօսանաց։ Որում և Պաւղոս իսկ հանապազօր ցանկայր. վասն որոյ և ասէ իսկ, եթէ «Լու մեք որ զպտուղ հոգւոյն ունիմք՝ հեծեմք, զի որդեգրութիւն ակն ունիմք, փրկութեան մարմնոյ մերում»։ Զի որ զայսպիսի անձուկ 'ի մտի ունիցի, ոչ 'ի վայելչութեաց աշխարհիս հպարտանալ կարէ, և ոչ 'ի տրամականացն զիջանել, այլ թէ անդ իսկ յերկինս բնակեալ իցէ. զի յերկոցունց անհարթ իրաց ազատ և անհոգ է։

«Լուցին կամք քո որպէս յերկինս և յերկրի»։ Տեսանես զգեղեցիկ կարգն զի ցանկանալ հրամայեաց հանդերձելոցն, և յայն Ճանապարհ փութալ։ Մինչ աստ իսկ իցէ՝ յայն բնակութիւն Ճեպել հասանել, և զնորին առաքինութիւնն ունել յանձին։ Պարտ է, ասէ, երկնից և երկնաւորացն ցանկալ. բայց յառաջ քան զերկինս՝ և զերկիրս իսկ հրամայեաց երկինս առնել. և մինչ աստ շրջիցին, անդր զենուորել. այնպէս զամ ինչ առնել և ասել, որպէս զի վասն նոցին աղաչել զտերն։ Զի չիցէ ինչ, որ արգելուլ կարիցէ՝ 'ի բաշանց զօրացն 'ի կարգացն հաստատուի հասանել վասն յերկրիս բնակելոյ. այլ մարթի մինչ աստ ոք շրջիցի, անդ 'ի վեր գտանել, և զամ ինչ ըստ այնմ օրինակի առնել։

Լու արդ զոր ասէն, այսպիսի ինչ է, թէ զոր օրինակ անդ ամ ինչ անարգել և անխափան գործի, և ոչ թէ զկէսն առնիցեն հրեշտակք՝ և զկէսն ստուն գանիցեն, այլ ամ հրամանացն հնազանդեալք և հաւանեալք են. քանզի և ասեր իսկ, եթէ «Զշրջք են զօրութիւք՝ առնել զբան նորա»։ Այնպէս և զմեզ, ասէ, զմարդիկ՝ արա արժանի, մի զկէս կամացն միայն առնել, այլ զամ ինչ որպէս և կամիս՝ կատարել։

1 Օրինակին «ոչ» ավելորդ է։

Տեսանէս, որչափ ուսուցանէ խոնարհել. և յայտ առնէ, թէ ոչ ըստ մերոյ փութոյն միայն է առաքինութիւն, այլ և 'ի վերին շնորհայն։

Վարձեալ և զինամ իւրաքանչիւր 'ի մէնջ 'ի վերայ ամ տիեզերաց հրամայէ ունել յանձին։ Վասն զի ոչ ասաց, թէ եղիցին կամք քո յիս, կամ թէ 'ի մեզ միայն, այլ յամ երկրի. առ 'ի քակելոյ մոլորութիւն, և տնկելոյ ճշմարտութիւն. առ 'ի խլելոյ չարեաց ամէն, և 'ի տեղւոջ հաստատելոյ ճշմարտութիւն. և այսու ևս ոչինչ լաւ լինել երկնից քան երկրի։ Օ՛ի եթէ այս այսպէս լինիցի, ասէ, ապա ոչինչ ընդհատ լինիցին նեղբինքս 'ի վերնոցն։ Օ՛ի թէ բնութիւն անջրպետութիւն է ընդ հրեշտակս և ընդ մարդիկ, տակայն առաքինութիւնքն 'ի մի միաբանութիւն եկեալ հասանիցեն։

«Օ՛հաց մեր հանապազորդ տուր մեզ»։ Օ՛ինչ իցէ հանապազորդն։ Օ՛ որ օրըստօրէն պատրաստէ։ Այլ քանզի ասաց, թէ «Եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի». զի զմարդկանէ խօսին, որ զմարմին զգեցեալ են, և ընդ հարկօք բնութեանն հնազանդեալք, որոց չէ մարթ՝ մինչդեռ աստէն 'ի մարմնի իցեն, զհրեշտակաց անչարչարութիւնն կրել յանձին. զհրամանսն զնոյն հրամայէ և առ 'ի մէնջ կատարել, այլ այլովքն զնջանել ըստ մերում տկարութեան։ Օ՛ի թէ զհրամանսն, ասէ, հաւաստեաւ պահանջեմ, այլ ոչ նոյնպիսի ինչ և զանչարչարութիւն. զի ոչ եթէ բռնադատել ինչ կամիցի զբնութիւնն, որ կարօտ է կերակրոյ պէտքիւք։

Այլ արդ դու միտ դիր, զիսրդ և 'ի մարմնաւորսն բազում ինչ հոգեւոր գտանի։ Օ՛ի ոչ վասն ընչից, և ոչ վասն փափկութեաց, և ոչ վասն պէսպէս հանդերձից, և ոչ վասն այլ իրիք սոյնպիսեաց, այլ վասն հացի միայն հրամայէ կալ յաղօթս. և զնոյն վասն օրըստօրէն հացկան. որպէս զի և ոչ 'ի վաղուն տայ հոգալ։ Վանզի և յաւելու իսկ զհանապազորդն, այսինքն զօրըստօրէն։ Այլ ոչ զայս միայն բաւական համարի, այլ զայն ևս յաւելու, թէ «Տուր մեզ այսօր»։ Օ՛ի մի և յառաջ հոգովքն աշխատ ինչ առնիցէ զնոսա վաղուի աւուրքն. զորոյ ոչ գիտիցես

զերկայնութիւն, զիմաստիցիս հոգովքն նորա։ Եւ զայս ևս յառաջ մատուցեալ, բազում բանիւք տայ հրաման. «Մի, ասէ, հոգայցէք՝ի վաղիւն». և ամ ուստեք զմեզ պնդակազմ կամի առնել և թեաւորս. յայնմ ևեթ կալ՝ որպէս պիտոյիցն հարկ պահանջիցէ՝ի մէնջ։

Այլ քանզի բազում անգամ դէպ լինի յետ աւազանին և միւսանգամ ծննդեանն մեղանչել, բազում և ասա զիւր մարդասիրութիւն յայտ արարեալ՝ հրամայէ վասն մեղայն թողութեան պաղատել առ մարդասէրն ՅԾ, և ասէ այսպէս, թէ «Թողջ մեզ զյանցանս մեր, որպէս և մեք թողումք մեղոց պարտապանաց»։ Տեսանեա զմարդասիրութիւն առաւելութիւն. յետ այնչափ զբարիսն ընդելոյ, և այնպիսի պարգևս մեծամեծս ընդունելոյ, դարձեալ զյանցուցեալսն թողութիւն արժանի առնէ։ Եւ զի հաւատացելոց պատշաճ են այս աղօթք, եկեղեցւոյ իսկ օրէնքն ուսուցանեն, և սկիզբն աղօթիցս. զի երախայրին չէ հնար հայր կոչել զնՅԾ։ Եւ եթէ հաւատացելոց պատշաճ են աղօթքս, քանզի նոքա ազատեն և խնդրեն մեղայ թողութիւն, յայտ է թէ և ոչ յետ աւազանին խափանեալ է ապաշխարութեան շնորհ։ Օ՛ի թէ այսպիսի ինչ ոչ կամիր, նա և դներ իսկ ոչ օրէնս, այնպիսի աղօթս մատուցանել։ Այլդ որ զմեղսն յիշեցուցանէ, և հրամայէ թողութիւն խնդրել չարեացն՝ որպէս զի հասանիցեմք ժառելով թողութեան, և դիւրագոյն գնորին Ճանապարհն առնէ, յայտ է թէ գիտեր և եցոյց, թէ և յետ աւազանին հնար է լուանալ յանցանցն աղտոյ, և վասն այնորիկ ըստ նմին զաղօթիցն օրէնս կարգեաց։ Օ՛ի յիշեցուցանելով ըզմեղսն՝ խոնարհել հաւանեցուցանէ. և այլոց թողութիւնն առնել հրամայելով, յամ ոխակալութենէ կամի զմեզ առնել ազատս։ Եւ ընդ այսր ամենայնի, և ընդ մեր թողլոյն այլոց, խոստանայ մեզ ներանութեամբն յոյս. և զանբաւ ՅՅ մարդասիրութենէն միշտ գոհանալ խրատէ զմեզ։

Օ՛ի յորմէ կարի զդուշանալ պարտ է, այս ինչ է, զի յիւրաքանչիւր Ճառելոյն լնով յիշեցոյց զառաքինութիւն, և ընդ նմին զանոխակալութիւն փակեաց։

Օ՛ի և ՝ոչն եղեցի անուն քո, բնաւին իսկ առաքի-
նութեան է հաստատութեան. և եղեցին կամք քո, զնոյն
նշանակէ. և հայր համարձակ կոչել զՅԾ, անարատ ա-
ռաքինութեաց հանդէս է. ընդ որով բնաւ իսկ քաջու-
թիւնն փակեալ կան. և զի պարտ է յանցաւորաց թո-
ղուլ զյաւսումն։ Բ՛այց սակայն ոչ զայս միայն բաւա-
կան համարի, այլ ցուցանել կամի՝ թէ ոչչափ ինչ
փոյթ իրացն իցէ. վասն որոյ և առանձինն իսկ զնէ.
և յետ աղօթիցն ոչ զայլ ինչ 'ի պատուիրանացն
յիշէ։ «Բ՛թէ թողուցուք, ասէ, մարդկան զյանցանս
նոցա, թողցէ և ձեզ հայրն ձեր երկնաւոր»։ Որպէս
զի 'ի մինչ է սկիզբն, և մեք եմք տեառքք դատաս-
տանին մերոյ։ Օ՛ի մի ոք յանմոնաց՝ յորժամ 'ի տանչ
ջանս մտանիցէ, մեղադիր լինիցի կամ մեծի կամ
փոքու, զքեզ իսկ, ասէ, զպատժապարտող արարի տէր
և դատաւոր՝ տալ վՀիս. որպէս զի դու իսկ կշռի-
ցես քեզէն անձինդ զդատաստանն. այսպէս, ասէ, և
ես զքեզ դատեցայց. և թէ թողուցուս ծառայակ-
ցին, և յինէն այնպիսի շնորհաց լինիցիս արժանի.
թէպէտ և այս այնմ չիցէ ինչ զուգական։ Օ՛ի դու
իբրև զկարօտ թողուս, և ՝ոչ և ՝ոչ իմիք կարօտա-
կան. և դու քումմ ծառայակցի, և ՝ոչ իւրումմ ծա-
ռայի. դու բեւր չարեաց պատժապարտ, և ՝ոչ անա-
բատ 'ի մեղաց։

Բ՛այց սակայն և այսու զիւր մարդասիրութիւն ե-
ցոյց. մարթ էր և առանց այնր իսկ թողուլ քեզ
զյանցանսն, այլ կամի և այսու ևս երախտիս դատ-
նել յիւրմէ քեզ. զի յԱմ կողմանց հեղութեան և մար-
դասիրութեան տացէ քեզ պատճառս։ Օ՛ի և զառ զա-
զանութեան 'ի մտէդ հանիցէ, և զցաւումնն շինջուցա-
նիցէ, և ՝ոչ ուստեք տարեալ յարիցէ 'ի քո ան-
դամն։ Բ՛ս ապդ զինչ ասիցես, եթէ զուր ինչ փաս
կրեցեր յեղբօրէն։ Օ՛ի թէ յիրաւի ինչ, և ոչ փաս
իսկ էր։ Բ՛այլ դու այնպիսի ինչ ես, որ մատուցեալ
թողութիւն խնդրես, նա և բաղում իսկ յանցանաց
պարտապան. և յառաջ քան զթողութիւնն և ոչ միոյ
իւիք արդեւք 'ի պարգևացն վայելեցեր։ Բ՛այս զի
ուսար իսկ ՀանդՀել զքո անձնդ մարմնաւոր՝ առ 'ի
խրատելոյ ՀամՀեղութիւն. և ընդ այնր ՀամՀ վարձք

և-ս կայցեն պահիցեն քեզ անդ, յորժամ ոչ պահան-
ջիցես համարս յայլոց՝ որ քեզ յանցանիցեն։ Եւ
արդ որպիսի տանջանաց չիցեմք արժանի, յորժամ
զայսպիսի իշխանութիւն առեալ՝ անձամբք լինիմք
մատն, տալ՝ի ձեռս թշնամեացն զմեր փրկութիւն.
և յայլ և-ս իրս զիարդ աղաչիցեմք լսելի լինել, եթէ
որոյ իշխեմքն՝ այնու ոչ խնայիցեմք յանձինս։

«Եւ մի տանիր զմեզ՝ի փորձութիւն, այլ փրկեա
զմեզ՝ի չարէ. զի քո է արքայութիւն և զօրութիւն և
փառք յաւիտեանս. ամէն»։ Եւ ասա զմերոյ զնուա-
զութիւն զհպարտութիւն խրատէ ցածուցանել, հրաժա-
րել ուսուցանէ՝ի պատերազմաց. մի մեզէն յանդ-
դուգն՝ի վերայ երթալ անձամբ. զի այնպէս մեր
յաղթութիւն լուսաւորագոյն լինիցի, և թշնամւոյն
պարտութիւն՝ի ծաղր և՝ի կատականս։ Այլ յոր-
ժամ բռնադատեալ ձգիցիմք, յայնժամ հաստատուն
կալ իբրև զառաքինիս։ Այս թէ ոչ կամիցիմք հան-
դարտել, և՝ի ժամանակի իմն տալ պատերազմացն.
զի այնպէս և զամբարտաւանութիւն ցածուցանիցեմք,
և զառաքինութիւն ցուցանիցեմք։

Իսկ չար ասա զսատանայ կոչէ. և անհաշտ պատե-
բազմ հրամայէ ունել ընդ նմա հանապազ։ Եւ ցու-
ցանէ թէ ոչ՝ի բնէ այնպիսի ինչ էր. զի ոչ այնմ որ
՝ի բնէ, այլ այնմ որ՝ի կամացն եկամուտ լինիցի՝ հա-
մարեալ լիցի չարութիւն։ Եւ ըստ յաճախութեան չա-
բեացն կոչի նմա անուն չարութեան. և քանզի ոչինչ
իւիք՝ի մէնջ է վնասեալ, և անհաշտ ունի ընդ մեզ
զպատերազմն։ Ալ ասն այնորիկ ոչ ասէ, թէ փրկեա
զմեզ՝ի չարեաց, այլ թէ՝ի չարէն. զի խրատեսցէ
զմեզ, եթէ ոչ ուրեք առ ընկերսն պարտիմք զայրա-
նալ՝ յորժամ՝ի նոցանէն չարչարիցիմք ինչ, այլ
զամ թշնամութիւնն՝ի նա ընկենուլ. որպէս զի թէ
ամ իսկ չարեացն նա իցէ պատճառք։

Եւ յորժամ կասկածագոյն արար զմեզ՝ի թշնամ-
ւոյն, և զամ զվհատութիւն եհան ընկէց՝ի մէնջ, ա-
պա և խրախոյս տայ և զարթուցանէ զմիտս՝ թաղա-
ւորին յիշատակաւ, որոյ հրամանաւ՝ի մարտ պատե-
բազմի ձակատիցիմք. և եցոյց զնա կարօղ և զօրաւոր
յամի ասելովն, թէ «Քո է արքայութիւն և զօրու-

թիւն և փառք »։ Այլ եթէ նորա է արքայութիւն, ապա չէ յումեքէ պարտ երկնչել։ Արանզի և չիք որ՝ որ նմա կարիցէ կալ հակառակ։ Զի յորժամ ասիցէ, թէ քո է արքայութիւն, յայտ առնէ եթէ ոչինչ է զօրութիւն այնորիկ, որ ընդ մեր դէմ Ճակատել պատրաստեալ կայցէ. և թէպէտ և թուի թէ հակառակ ինչ կայցէ, իմասջիր թէ յայ թոյլ տալով է առ ժամանակ մի. և այն թէ ընդ ծառայսն ինչ հակառակ կայցէ կամ անարգաց՝ որ ընդդէմ դարձեալ իցեն այ։ Արանզի ոչ և միոյ իսկ 'ի վերայ ծառայակցացն իշխել դիմել, եթէ ոչ 'ի վերուստ առնուցու հրաման։ Այլ զինչ ասեմ ծառայակցաց, ուր ոչ խոզից և արջառոց և ոչխարի իշխեաց փնաս առնել, է թէ ոչ 'ի վերուստ էառ հրաման։ Այլ եթէ այս այսպէս իցէ, թէպէտ և բեւեր անգամ տկարանայցես, խնդալսել պարտիս, որ այնպիսի թագաւոր ունիս, որ զայմ ինչ դիւրաւ վասն քո կարող է յարդարել։

« Այլ փառք, ասէ, յաւիտեանս. ամէն »։ Ոչ միայն 'ի շուրջանակի չարեաց ազատէ, այլ և փառաւոր ևս կարէ առնել. զի որպէս զօրութիւն նորա բազում է, նոյնպէս և փառքն անչափ։ Տես, զիարդ յայմ կողմանց կրթեաց զնահատակն, և ետ խրախոյս լինել պատրաստագոյն. և քան յայմ ումեքէ՝ յոխակալութիւն և յատելութիւն կամի ցաճուցանել. և ընդդէմ այմ չարեացն զայս առաքինութիւն ինն աւելի հաստատէ. զի յետ աղօթիցն և այլոց ուղղութեաց յիշեցուցանելոյ, և զդատաստանացն և զպարգևացն Ճառելոյ, ստիպէ զլսօղսն ածել յայսր պատուիրանի 'ի հնազանդութիւն։

« Եթէ թողուցուք, ասէ, մարդկան զյանցանս նոցա, և հայրն երկնաւոր թողցէ ձեզ, ապա թէ ոչ թողուցուք, և ոչ նա ձեզ թողցէ »։ Պատան այնորիկ զերկնից միւսանգամ և զՀօրէ յիշեցուցանէ, զի այսու ևս պատկառեցուցանիցէ զլսօղն. յորժամ այսպիսի հայր ունիցի, և գազանաբարոյ լինել մտաբերիցէ. յերկինս կոչեցեալ երկրաւորն, և զաշխարհիս ինչ հոգս հոգայցէ, որպիսի պատժոց արժանի չիցէ։ Զի ոչ միայն ընդհօր պարտ է լինել որդիս, այլ և զործովք։ Զի ոչ այնչափ ինչ նմանօղ այ առնէ,

որչափ յորժամ առ չարն և առ մեղանչականն է բախտաւոր ոք զտանիցի։ Որպէս յառաջագոյնն է ցոյց ասելովն, եթէ «Այս զարեգակն իւր ծագէ 'ի վերայ չարաց և բարեաց»։ Այսոյսիկ իսկ և յիւրաքանչիւր 'ի բանս աղօթիցն՝ հասարակաց հրամայէ մատուցանել զաղօթսն։ «Հայր մեր, ասէ, որ յերկինսդ ես. և եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. և տուր մեզ զհացն, և թող զյանցանսն. և մի տանիր զմեզ 'ի փորձութիւն. և փրկեա զմեզ 'ի չարէ»։ Այս ամ ուրեք բազմագիմի բանիւս այսուիկ հրամայէ վարել, և հետք իսկ ցաւամանն մի զտանիցին մեր առ եղբայրն։

Այս արդ որպիսի տանջանաց արժանի լինելոց ի ցեմք յետ այսր ամի պատուիրանաց, յորժամ ոչ միայն մեք չթողուցուք, այլ և զանց ևս 'ի վրէժխնդրութիւն թշնամւոյն կոչիցեմք։ Այս մեք այնչափ խիստ կամիմք անցանել զայնպիսի օրինօք, զի նա ամ իւիք հնարեցաւ առ 'ի չգրգռել մեզ ընդ միմեանս։ Այս քանզի արմատ ամ բարութեց սէր է, վասն այսորիկ զապականիչն նորա եղծանէ, զի ամ հնարիւք զմեզ 'ի միմեանս յարիցէ։ Օ՛ի չիք ոք, քանզի և չիք իսկ, թէպէտ և հայր իցէ կամ մայր կամ բարեկամ կամ զինչ ոք և իցէ, եթէ այնպէս սիրիցէ զմեզ՝ իբրև զանձ, որ արարն զմեզ. և այս՝ յերախտեացն զոր հանապազ առնէ, և 'ի պատուիրանացն զոր տայ, յայտ է։

ՑՈՐԴՈՐԱԿ

Զան թէ զորտմութիւնս ինչ 'ի մէջ բերիցես, և զցաւս և զկենաց վիշտս, և զայն ևս 'ի միտ առնուցուս՝ եթէ որչափ ընդդէմ դառնայցես նորա հանապազ. և ոչ զարմանաս թէ զնարդ ևս աւելի քան զայն չարիք 'ի վերայ չգայցեն. այլ յորժամ բարիս 'ի վերայ ածէ, յայնժամ միայն զարմանաս։ Այս արդ 'ի վիշտսն և եթէ հայիցիմք. և որչափ ընդդէմ դառնամք հանապազ, զայն չպարտիցիմք առնուլ 'ի միտ։ Այս ամ այնորիկ իսկ տրտմիմք. զի և ոչ զմիոյ

աւուր զյանցանսն մեր Ճշմարտիւ քննեմք։ Օ՛ի թէ զայն Ճշգիւ 'ի միտ առնուաք, ապա գիտեաք ստոյգ, թէ ոչչափ պատժոց պարտապան եմք։ Եւ զայլսն ամ թողեալ՝ զմիոյ աւուր միայն զիւրաքանչիւր ըզմեղն՝ զինչ և գործեալ իցէ, ասացից։ Թէպէտ և չգիտիցեմք իսկ քաջ զինչուղինչ այսր աւուր մեղուցեալ իցէ. բայց սակայն այնչափ յաՃախումթիւք են յանցանաց, որպէս զի և որ կարին իսկ քաջ գիտիցէ՝ չկարէ զամ Ճշգրտիւ ասել։

Ո՞ ոք 'ի ձէնջ ոչ ծուլացաւ յաղօթս, կամ ո՞ ոք չհպարտացաւ, կամ ո՞ ոք չամբարտաւանեաց, ո՞ ոք չար չխօսեցաւ զընկերէն, ո՞ ոք չվարեցաւ ցանկութիւն, ո՞ ոք չհայեցաւ յայրատ աչօք, կամ ո՞ ոք յիշեաց զթշնամին և չար ոչ խորհեցաւ նմա 'ի սրտի իւրում։ Օ՛ի թէ մինչ յեկեղեցւոջ եմք՝ և 'ի սակաւ ժամանակի այսչափ չարեաց պարտաւոր գտաք, եթէ արտաքս ելանեմք, որպիսի՞ ինչ ոք լինիցիմք։ Օ՛ի թէ 'ի նաւահանգստեանս այսպիսի ալիք են, յորժամ 'ի մէջ խորոց չարեացն խառնիցիմք, զվառնացն ասեմ և զքաղաքացն իսկ իրաց և զտանցն հոգոց, և ոչ զանձինս ևս անգամ արդեւք Ճանաչել կարէաք։ Եւ սակայն այսչափ մեղաց ետ մեզ ամ ծած կարՃառօտ ազատութիւն, և դիւրին և անվաստակ հոգեաց Ճանապարհ։ Օ՛ինչ աշխատութիւն իցէ թողուլն յանցաւորին։ Աշխատութիւն այն իսկ է՝ չթողուլն և ունելն զթշնամութիւնն 'ի սրտի. այլ 'ի ցածուցանել զցաստնին և հանգիստ ևս մեծ լինի, որ կամիցի ոք։ Զանազի ոչ եթէ ընդ ծով անցանել հաստանիցէ, կամ ընդ երկար ուրեք Ճանապարհս երթալ, կամ ընդ լերանց սարս անցանել, և ոչ ինչս ծախել, և ոչ զամարմին աշխատ առնել, այլ կամել եթէ. և այն միայն բաւական է զամ մեղն ջնջել։

Իսկ եթէ ոչ միայն դու չթողուցուս, այլ և առ ամ ևս ամբաստան լինիցիս զնմանէ, զինչ ինչ այնուհետև ունիցիս յոյս փրկութեան. և յորժամ պարտն իցէ հաշտեցուցանել զամ, յայնժամ առաւել գԸրդռիցես. զկերպարանս մարդոյ ունիցիս, և զգազանի բարբառս արձակիցես, և անձամբ անձին զմարխ նետոն ձգիցես։ Այսոքիկ և Պաւղոսի զաղօ-

թից յուշ արարեալ՝ ոչ այնպիսի ինչ Հնդիւ խընդ-
բեաց, որպէս զայսր պատուիրանի պահպանութիւն.
«Լմբառնայցեն, ասէ, զնա ձեռս իւրեանց յաղօթս
առանց բարկութեան և երկմիտ խորհրդոց»։ Լոյս ուր
ողորմութեան պէտք իցեն, և անդ չթողուս զցաւունն,
այլ և՝ աւելի յիշես։ Օ՝այս գիտասջիր, թէ ան-
ձամբ անձին ձգիցես նեռս։ Լրբ կարիցես լինել
մարդասէր, և զդառն թոյնս չարութեան 'ի բաց ըն-
կենուլ։ Լոյս չլուծանելով զթշնամութիւն՝ զոյ օրէնսն
թշնամանես, որ հրամայէն թողուլ զյանցանս ընկե-
րին. և այն իսկ չիցէն շատ պատիժք, այլ և զնոսա
գրգռես վրէժխնդիր լինել։ Մինթէ իւրոց հրամա-
նացս հակառակ լինիցի, և կամ թէ մուռացաւ ար-
դեւք զոր պատուիրեացն։ Մինթէ մարդ ոք իցէ.
ոչ ապաքէն ՝ուծ է, որ զնա՝մ ինչ գիտէ. և այնչափ
չընդունի զանօգուտ աղօթսն՝ որչափ դու աղաչիցես
առնուլ վրէժս 'ի թշնամեացն։

Լոյս կենաք զորդիս և թշնամեացն անիծանեն. և
եթէ հնար ինչ էր՝ և զմարմինսն և ուտելին։ Օ՝որ
թէպէտ և յատամունսն չառնուն, սակայն մնօքն
ուտեն։ Լայլ Լ՝ոչ ոչ այնպէս պատուիրեաց քեզ։ Լոյս
յորժամ այնչափ թանայցես զբերան յարեան թշնա-
մեացն, զիարդ զերդայրն համբուրիցես, և կամ
զիարդ 'ի սեղանն մատչիցիս, և կամ զիարդ 'ի տե-
բունի յարենէն Հաշակիցես։ Յորժամ ասիցես յա-
ղօթսն, թէ հար զնա և կործանեա զտունն, և այլ
և՝ մեծամեծ չարիս ըղձանայցես նմա յաղօթսն, ոչ
ինչ ընդ հատ իցես 'ի մարդասպանէ. և ոչ միայն
մարդասպան, այլ և՝ մարդակեր։ Լոյս զայսպիսի
թոյնս եւ կարիցեմք հանել 'ի մտաց. այլ յորժամ
զանձանց մեղս յիշիցեմք։

Լոյս բաղումք առ զբօսանս՝ և գրոց և՝ անգամ
չպարապէն լսել։ Լթէ արքունի հրովարտակք ուս-
տեք յանկարծակի հասանիցեն, յոտնիմատն յառ-
նեն, յահձիւռ կայցեն լսել։ Լսակ արդ յերկնից ե-
կեալ այսպիսի օրէնք, և՝ ոչ ոք կամի ունկնդիր լինել։
և՝ այնպիսի աւետիք՝ որ զամենեսեան իսկ յորդորէն
յօրհնութիւնս. «Օրհնեցէք, ասէ, ՝ամ գործք ՝ան
զնոր»։ Ոչ ըստ ՝ամ միտս և՝ ըստ մարդկեղէն խոր-

հուրդս անցանէն, զոր յառաջագոյն քարոզէին մարգարէքն, և պատմէին զյաղթութիւնն ամենազօրին։

Օր մին ասէ, թէ «Յէ՛ի բարձունս, զերեսաց զգերութիւն, և առ զպարգևս 'ի մարդիկ. և տէր սատիկ և հզօր 'ի պատերազմի»։ Յէ միւսն ասէր, թէ «Հրոյն աւար բաժանեսցէ»։ և վասն այսորիկ ելին՝ զի զերեսաց թողութիւն քարոզեսցէ, և կուրաց տեսանել. և մանաւանդ զյաղթութիւնն բարբառն հնչէր, եթէ «Ահա է մահ յաղթութիւն, և ո՞ւր է դժոխք խայթոյն քո»։ Յէ միւսոյն զխոր խաղաղութիւնն տուեալ զաւետիս ասէր, թէ «Զուլեսցեն զսուսերս իւրեանց 'ի խոփս, և զսուինս իւրեանց 'ի մանդաղս»։ Յէ միւսն նոթձեր Յրուսաղէմի, եթէ «Արարա լեր յոյժ դուստր Սիոնի, և գոչեա դուստր Յրուսաղէմի. զի ահաւասիկ թագաւոր քո գայ հեզ և հեծեալ յէշ և 'ի նոր մարկի»։ Յէ միւսոյն զերկրորդ գալստենէն յառաջագոյն կարապետեալ ասէր, եթէ «Յկեսցէ տէրն՝ զոր դուքն խնդրէք. և ո՞վ իցէ՝ որ ժուժկալ լինիցի աւուր գալստեան նորա. խայտասջիք իբրև զորթս արձակեալս 'ի կապոյ»։ Յէ միւսն ասէր զարմանալով, թէ «Ա՞ստ է ոՃ մեր, ընդ որում ոչ համարեսցի այլ. և յետ այսորիկ յերկրի երևեցաւ, և ընդ մարդկան շրջեցաւ»։

Բայց սակայն թէպէտ և այս ՅՃՄ և աւելի քան զնոցնս յորդորեն խօսք վարդապետութիւն, յորոց սուրկան պարտ էր, և մի յերկրի համարել զանձինս, այլ յերկինս, մեք 'ի վարձառս զբաղեալ եմք, և յաղմկի և 'ի խռովութիւն կամք. և որ ինչ չիցէ մեզ անգ՝ զայն խօսիմք. և ընդ վայր ծախեմք զժամանակս ժողովրդեանս։ Լսակ արդ յորժամ 'ի փոքունս և 'ի մեծամեծս, յունկնդրութիւն, 'ի գործս, արտաքոյ և 'ի ներքս, և աստէն իսկ յեկեղեցւոջ այսչափ ծուլայցեմք, յետ այսր ՅՃՄի և ընդ հենգս թշնամեացն աղօթս մատուցանիցեմք, ուստի՞ ակն ունիցիմք յուսոյ փրկութիւն։ Օր յայնչափ մեղսն միւս և անհնարին անօրէնութիւն հանդոյն նոցին՝ զդատելոյ աղօթսն յաւելուցումք. և չգիտեմք՝ եթէ ելանիցէ՞ մեզ այն 'ի դէպ՝ և եթէ չելանիցէ։ Ոչք պատուէր առաք աղօթս առնել 'ի վերայ թշնամեաց, մեք

զՅԾ թշնամանեմք՝ հակառակ թշնամեացն աղօթս մատուցանելով։ Օ՛ի խնամանք՝ թէ տեսանիցէն զարև, և վայելիցեն յանձրևս, և յայլն ևս ՅԱՄ պարգևս։ Պ՛արդք՝ որ անագորոյն մտօք և գաղանաց ևս յաղթեցաք. ընդ միմեանս եղեալ հակառակ, խածանելով զընկերս՝ շաղախեմք արեամբք զերեզուս, յետ վայելելոյ 'ի հոգևոր սեղանոյս, և այսչափ երախտեաց և բիւրապատիկ պատուիրանաց։

Օ՛այս ՅԱՄ խմացեալ՝ փութասցուք զթոյնսն ընկենուլ, լուծցուք զթշնամութիւն. և որպէս մեզ վայել իցէ արասցուք աղօթս։ Փոխանակ դիւաց գազանութեան՝ զՀրեշտակաց զգօնութիւն առցուք. և որչափ զրկիցիմք, զմեր ինչ յանցանս ածցուք զմտաւ, և ըզվարձն՝ զոր ընդ այսր պատուիրանի խոստացաւ մեզ։ Յածուսցուք զբարկութիւն, դադարեցուսցուք զաւլսն. զի և զաստէն զկեանսս առանց խռովութեան անցուսցուք, և անդր երթեալ՝ այնպիսիք յանդիման լիցուք Ն՛ոյն՝ որպէս ընդ ծառայակիցսն զնայաք։ Լ՛թէ ծանր և տաղտկալի, և առ նա համարձակութիւն բացցուք զբերանս լուսաւորութիւն։ Լ՛ս զոր ոչ վՀարեցաք 'ի մեզանէն 'ի բաց չկալով, վՀարեսցուք զայն առ յանցաւորս մեր զգնդապետս լինելով։ Վ՛անդի չէ ինչ այն՝ ծանր և տաղտկալի. և թշնամեացն բարիս առնելով՝ բազում ողորմութիւն անձանց համբարիցեմք։ Լ՛ս այնպէս և աստէն իսկ ընդ մեզ բազումք գութ արկանիցեն, և նախ քան զայլսն ամենեսին՝ ՅԱ՛ՄԻ սիրեսցէ և պսակեսցէ, և հանդերձելոց բարութեանցն արժանի արասցէ. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ Ն՛ոյն մերոյ Յ՛ի՛սի Վ՛ի՛ի, որում փառք յաւիտեանս. ամէն։

1 Յ՛որինակին «ԺԷ»։

ՃԱՌ ԲՍԱՆԵՐԱՐԴ

« Յորժամ պահիցէք մի լինիք երբև զկեղծաւորսն տրտուամբ. զի ապականեն զերեսս իւրեանց, որպէս թէ երևեսցին մարդկան պահօղք »։

ԲԱՐԻՈՒԹ է ասա հեծել և յոգւոց հանել դառնապէս. զի ոչ միայն կեղծաւորաց նմանեմք, այլ և անդր քան զնոսա անցանեմք. քանզի գիտեմ զբազումս, ոչ յորժամ պահիցեն միայն, այլ և յորժամ ոչ պահիցեն, զկեղծիս կեղծաւորացն ցուցանեն։ Այս իրաւունս ինն վարկանին, որ և ս չար քան զմեղսն իցէ. զի մի, ասեն, զբազումս գայթագղեցուսցուք։ Օ՜ինչ խօսիսդ. օրէնք ՝ճծեղէնք են՝ որ զայդպիսի կեղծաւորութեան արգելուն, և դու պահել զօրէնսն գայթագղութիւն համարիցիս, և զանցանելն ուղղութիւն։ Այս զինչ ինչ չար քան զայն անմտութիւն կայցէ, զի ոչ ակնածէ՝ յորժամ և ս չար քան զկեղծաւորացն ցուցանիցէ զկեղծաւորութիւն։ Օ՜բազում զայսպիսի զչարութեանէ գայձախութիւն 'ի միտ առեալ՝ չամանչիցէ՞ 'ի բանէս։ Օ՜ի ոչ վայրապար ասաց, թէ կեղծաւորքն, այլ առաւել կամեցաւ կսկծեցուցանել, եթէ « Ապականեն զերեսս իւրեանց »։ այն իսկ է՝ զի եղծանեն և խանգարեն։

Օ՜ի եթէ կեղծաւորութենն դեղնութիւն զգայն երեսացն եղծանիցէ, զինչ պատասխանի կարիցեն տալ՝ որք մեղուրոմն և ծարրոմն զգայն երեսացն ապականիցեն կանայք, 'ի կորուստ յայրատ երիտասարդաց. որք ինքեանք անձանց և եթ մեղանչեն, և կանայքն՝ և անձանց և տեսողաց։ Ա՜ան որոյ և պարտ է յերկոցունց չարացն փախչել, և ս առաւել 'ի մեղանչելոն. զի ոչ միայն ցուցանել՝, այլ և թաքուցանել հրամայէ։

Օ՜ր օրինակ վերագոյնն 'ի տրոցն պատուիրանի,

1 Յօրինակն ՝ՃՃՆԵԼ։

«Օ գոյշ լերուք, ասէ, մի առաջի մարդկանն», և յաւելէ թէ «Լերեալ 'ի ցոյց ինչ նոցա». իսկ 'ի պահս և յաղօթս՝ ոչ այսպիսի ինչ եդ 'ի միջի։ Ընդէր արդեաւք՝ անզի զողորմութիւն չմարթի գաղտ գործել. իսկ զաղօթսն և զպահսն մարթի։ Օ որ օրինակ անդ ասէ, «Որ զիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո». և ոչ եթէ զձեռացն ինչ ասիցէ, այլ թէ ամենևին մի ումեք տայցես իմանալ։ Այլ մնասել 'ի սենեակ հրամայէ, ոչ զի այն ինչ լաւ իցէ, և անդ հրամայիցէ կալ յաղօթս, այլ զնոյն ակնարկէ։ Այսպէս և ասա օծանել զգլուխ հրամայէ. ոչ զի արդարև զգլուխն օծանիցեմք՝ եդ զօրէնսն, ապա թէ ոչ ամենեքեան իսկ գտանիցիմք անցեալք զայնու օրինօք. և մանաւանդ վանականացն գունդք, որ առաւել փոյթ յանձին ունին պահել զպատուիրանսն. և որ ինաւ 'ի լերինսն բնակեալ իցեն. այլ քանզի առաջնոցն ստէպ օծանելն՝ մեծի ուրախութիւն պատճառք էին. և զայս 'ի Դաւթայ և 'ի Դանիելէ եթէ կամի ոք՝ տեսանէ յայտնագոյն. ասաց օծանել, ոչ զի արդարև զգլուխս օծանիցեմք, այլ զի ամենևին փոյթ յանձին ունիցիմք թաքուցանել զկրսն։

Այլ զի գիտասցես՝ թէ այս այսպէս է. զի զոր ինչ բանիւքն հրամայեաց, զնոյն արդեամբք իսկ եցոյց, յորժամ զքառասուն տիւն և զքառասուն գիշերն լռելեայն պահեաց. ոչ իւղով օծաւ, և ոչ ձեռս լուաց, և առանց ամ կեղծաւորութեան վճարեաց զբնաւ, զոր և մեզ հրամայէ։ Այլ զկեղծաւորսն 'ի մէջ բերէ, զի կրկին պատկառեցուցանէ զլսօղն. նա և այլ ինն անուամբ կեղծաւորացն ակնարկէ։ Օ 'ի ոչ միայն գործն ծաղր իցէ և փնասակար, այլ և առժամանակ մի ցուցանեն զպատիրսն[1]. և արդ հրամայէ հեռանալ յայնպիսի չար ցանկութենէ։ Օ 'ի կեղծաւորսն յայնժամ պայծառագոյն երևի, մինչ հանդիսատեսքն 'ի հանդիսի նստիցին։ Ամենայնդ զի և ոչ յայնժամ իսկ ամենեցունց. քանզի գիտեն բազումք 'ի տեսողացն, ով ոք է, և յինչ կերպարանս կեղծաւորեալ։ Այլ սակայն յորժամ թաքերցն

1 'Ի լուս. ընդդիմն։

զրաւ լինիցի, ապա յայտնի ամենեցուն երևի։ Բ.յա-
պիսի ինչ չարիք են կեղծաւորաց և զրապարծաց։
Բ.ւ ասա իսկ բազմաց են յայտնի, թէ չեն այնպիսի
ինչ՝ որպէս երևին, այլ կերպարանս միայն ունին
զերեսաքն. և առաւել յայնժամ խայտառակին,
յորժամ մերկապարանաց յայտնեսցին։

Բ.ւ այլովք ևս իրօք դարձեալ մերժէ զնոսա 'ի
կեղծաւորաց, և թեթևազոյն ցուցանէ զհրամանն։
Օ.ի ոչ եթէ զպահն այնչափ առաւել յարգոյս հրա-
մայէ ցուցանել, այլ զպակաս պահոցն չկորուսանել։
Որպէս զի որ ծանրագոյնն ինչ թուիցի, յայտ առ-
նէ թէ մեր և կեղծաւորացն հասարակաց է. քանզի
և նոքա իբրև զմեզ պահեն։ Իսկ թեթևագոյնն այն
է, յորժամ վաստակաւորացն վարձք ոչ կորնչիցին։
Օ.այն իսկ, ասէ, հրամայեմ, 'ի վաստակսն ոչինչ կա-
րի յաւելուլ. և զվարձսն մեծաւ զգուշութիւ ժողո-
վել, և չառնել առանց պսակաց զվաստակաւորսն
իբրև զնոսա. իսկ նոքա աւանիկ և ոչ ըմբշամարտ
մարտակցն կամին նմանել։ Օ.ի թէպէտ և անչափ
բազում ժողովք հանդիսատեսացն նստիցին, և իշ-
խանք 'ի զլուխս հանդիսիցն, և ոչ միում ումեք կա-
մին հաճոյ լինել, այլ այնմ միայն, որ ընդ յաղթու-
թեն պարգևս բաշխիցէ. թէպէտ և բազում ան-
զամ քան զբազումս խնամարհաղոյն իցէ։ Բ.յլ կրկին
ինն պատճառս տայ նմա եւեթ ուշ ունելոյ. մի՝ զի
զյաղթութիւնն իսկ յայտ առնիցէ. և միւս ևս՝ զի
պսակիչ իսկ ինքն է. և զիտեն թէ ամենեքին չէ նա
այլոցն համեմատ։ Իսկ դու այլոց՝ որ ոչ միայն չիցեն
ինչ օգուտ, այլ և վնասիցեն ևս քեզ, կամիս ցուցա-
նել զպահն։

Բ.այց սակայն և զայդ չարգելում, ասէ. զի թէ-
պէտ և մարդկան կամիս ցուցանել զպահն, դադա-
րեա բաւեա, և ես մեծաւ առաւելութիւ և զայն ևս
հնարհեցից քեզ. յորժամ այժմ 'ի սակաւուց թա-
քուցանիցես, յայնժամ ընդ բազումս վայելելոցս 'ի
պարգևս։ Բ.ւ հանդերձ այնու, զի և զմարդկեղէն
ևս պարծանս կոխիցես, և 'ի դժնդակ ծառայութիւ
մարդկան ազատանայցես, և ժրաքլուխս մշակ առա-
քինութեն լինիցիս։ Բ.պա թէ ոչ այսպիսի ինչ միտս

ունիցիս, այլ տեսօղս առաքինութեանն խնդրիցես, թափուր գոյանիս յառաքինութենէն, և թշնամանեա զգործն։ Օ՛ի ոչ վասն առաքինութեանն, այլ վասն չուանամանաց և պղնձագործաց, և վասն այլոց գուեհիկ մարդկան գործեա զգործն. զի դժկամակքն որ հեռի իցեն յառաքինութենէն, զարմանայցեն ընդ քեզ. և զթշնամիս իրացն ածիցես 'ի տեսիլ։ Որպէս զի յորժամ զգաստանալ ոք կամիցի, և ոչ վասն ըզգաստութեան, այլ զի առ 'ի ցոյց շնացողացն զգաստանայցէ. նոյնպէս և դու ոչ փութայիր յառաքինութենէն, եթէ ոչ վասն թշնամեաց առաքինութենէն։

Պարտ էր և այնու իսկ զարմացուցանել, յորժամ թշնամիքն գովիչք նորին դատնէին։ Բայց այնպէս զարմացուցանել որպէս պարտ էր. և մի վասն այլոց, այլ վասն նորին իսկ առաքինութեան։ Բանզի և մեք յորժամ ոչ վասն մեր, այլ վասն այլոց մեծարիցիմք, թշնամանս զիրսն համարիմք։ Այսպիսի միտս և առաքինութենէն պարտիս խմանալ։ Օ՛ի մի վասն այլոց, այլ վասն նորին իսկ ընթանալ զկետ նորա. մի վասն մարդկան լինել հնազանդ այ, այլ վասն այ՝ մարդկան։ Օ՛ի թէ զկախառակ նորին առնիցես, թէպտ և գործ ինչ վնաբել համարիցիս, քան զայն որ բնաւ չառնիցէն՝ եւս բարկացուցանիցես. զի նա չառնելովն ստահակեաց, և դու անդէպն առնելով։

« Այլ զանձէք ձեզ գանձս յերկրի »։ Բանզի զանձնզովութենն ախտ եհան մերժեաց, ապա 'ի դէպ ժամանակի դնէ 'ի տեղւոջ զինչն ստանալ. զի ոչ այնպէս ինչ գործէ զցանկութիւն ընչասիրութեանն որպէս փառացն ցանկութիւն։ Այ ասն որոյ և զգերդաստանաց զբազմութիւնս, և զնեբբինեաց դասակս, և զձիս ոսկեսանձս, և սեղանս արծաթիս, և զայլ ամ ծաղրալիցս յաձախեն մարդիկ. ոչ միայն զի զգեստն ընուցուն, կամ 'ի ցանկութենն վայելիցին, այլ զի այլոց բազմաց ցոյց առնիցեն։

Այ երանգոյն զի ողորմել միայն պարտ էր ասաց. և ասա թէ որչափ ինչ արժան իցէ ողորմել ցուցանել։ « Այլ ասէ դնէք ձեզ գանձս յերկրի »։ Բանզի չէր իսկ 'ի դէպ անդէն 'ի սկզբանն իսկ և իսկ զանտեսութեէ ընչիցն ձառել, զի սաստկացեալ 'ի վերայ

կայր բանուելոյ ախտին. այլ առ սակաւ սակաւ կարձէ, և աղատեալ արկանէ 'ի միտս լսողացն, զի դիւրընկալ զբանն առնիցէ։ Ա՝ ասն այնորիկ նախ երանելի տայ ողորմածաց. և յետ այնր, թէ «Յառաջագոյն հաշտեսջիր ընդ ասոխի քում»։ և ասա՝ «Ամ դատ ոք դնիցէ ընդ քեզ և կամիցի առնուլ զպարեգօտս քո»։ իսկ ասա մեծ էս քան զնա՝։ Օ՛ի անդ ասէ. եթէ դատաստան ինչ հասանիցէ 'ի վերայ, առնիցես զայն. քան զկուռէին՝ զմերկանալն 'ի հանդերձից լաւ համարի։ Իսկ ասա ոչ զոսոխ ինչ և ոչ զդատախազ յիշէ, այլ առանձինն զընչիցն անտեսութեի ուսուցանէ։ Օ՛ի ցուցցէ, թէ ոչ վասն նոցա՝ որոց ողորմեսցի, այլ վասն նորա որ տայցէն, դնէ օրէնս։ Ամենայն չիցէ ոք որ դատ դնիցէ և յատեան ձգիցէ, սակայն և այնպէս արհամարհեսցուք զինչս, և տացուք կարօտելոց։ Այլ ոչ զնա՝ ասա եդ, այլ և մեղմով ասա. թէպէտ և զՀգուտնն որ վասն սոցին էին՝ մեծաւ առաւելութեամբ յայտ արար յանապատին, սակայն չև էս 'ի մէջ բերէ, զի չև էր ժամանակ յայտնելոյ. զնրատտուի կարգ՝ և ոչ զօրէնսգրի ցուցանէ այսոքիւք։

«Ա՝ի, ասէ, դնէք ձեզ գանձս յերկրի»։ և յարէ 'ի նոյն, թէ «Որ ցեց և ուտիճ՝ ապականեն, և գողք ական հատանեն և գողանան»։ Դեռ էս զերկրիս գանձուց յայտ առնէ զինս, և զերկնից գանձուցն զօգուտն և 'ի տեղւոջէն և 'ի ինասակարացն։ Այլ ոչ այսչափ միայն, այլ և միւս էս միտս ուսուցանէ։ Այլ նախ յորոց երկնչէինն՝ անտի տայ խրախոյս։ Օ՛ի երկնչիցիս, ասէ, ընդ ծախս ընչիցն. եթէ երկրնչիցիս, բաշխեա՛ 'ի տուրս. և յայնժամ ոչ ծախիցին, այլ և մեծ էս յաւելուած առնուն. քանզի յերկինս յաւելու։ Դայց զայն այժմ չասէ, քանզի յետոյ դնէ. այլ որ առաւել յորդորելն կարօղ զնոսա՝ զայն բերէ 'ի մէջ, թէ անծախս լինելոց են գանձք նոցա. և յերկոցունցն ձգէ զնոսա յուղղութիւն։ Դանզի ոչ ասաց, եթէ 'ի տուրս բաշխիցես՝ պահիցին միայն, այլ և նմին հակառակ սպառնացաւ էս, եթէ ոչ

1 Յօրինակին նաչ։

տայցեա՝ կորնչելոց է։ Լաւ տեսս զանձառ իմաստութիւն. զի ոչ ասաց, թէ այլոց թողցես. որ ախորժելն է մարդկան. այլ թէ և այնմ ևս ոչ հասանես։ Թէպէտ և մարդիկ ևս վնաս չառնիցեն, այլ է ինչ որ վնասէ, ցեցն և ուտիճ։ Օ՛ի թէպէտ դիւրաձախ ապականին թուիցի, սակայն անպարտ[1] և անարգել է. զինչ հնարս և հնարիցիս, ոչ կարիցես արգելուլ զվնասակարն։

Լաւ արդ զիա՞րդ, ասէն. միթէ զոսկի ցեց հարկանիցէ։ Թէպէտ և ցեց ոչ, սակայն գողք գողանայցեն։ Այ՛ի թէ զամենեցունց, ասէն, գողք գողանայցեն։ Լ՛թէ ոչ զամենեցունց, սակայն զբազմաց։ Այ ասն որոյ և այլ իմն միտս յարէ՝ ի նոյն, եթէ «Այր զանձք մարդոյն իցեն, անդ և սիրտ նո՛ր»։ Օ՛ի թէպէտ և ոչինչ վնաս իցէ, այն իսկ մեծ վնաս է, զի ընդ երկրաւորսն միշտ բևեռեալ կայ, և ազատն ծառայ լեալ, և յերկնից բարութիւնն անկեալ, և ոչինչ՝ ի բարձանոյ երանութիւնն զմտաւ ածեալ. այլ հակառակ յինչս և՝ ի տոկոսիս և՝ ի փոխս և՝ ի շահս և՝ ի գին և վաճառս և անազատիկս ծնգեալ։ Լաւ ո՞ որ հիբագոյն քան զայնպիսին կայցէ, և ստրուկ քան զնա՞մ ստրուկս, ընդ այնպիսի դժոգակ ծառայութեամբ հնազանդեալ, և զկարևորն քան զնա՞մ ինչ զաղնուականութիւնն վտարանդեալ՝ ի ծառայութիւն՝ զմտայն ազատութիւն։ Օ՛ի որչափ ինչ խօսիցի որ ընդ քեզ, մինչ միտքն ընդ ինչսն բևեռեալ իցեն, թէպէտ և կարի ինչ քեզ օգուտ իցեն, չկարես լսել. այլ քան զշուն մի առ գերեզմանի խառանեալ, ևս ընչիցն կապանք գրգռիցեն զքեզ հաղել՝ առ մերձաւորաց։ Այ՛ի միայն գործ միշտ ցուցանիցես, զի այլոց պահիցես զմթերսն. և արդ որպիսի՞ հիբութիւն չաք իցէ քան զայն։

Բայց սակայն քանզի այս բարձրագոյն էր քան ըստ միտս լսողացն, և ոչ վնասն՝ որ ինչ ասասի ծնանէր՝ յայտ էր բազմաց, և ոչ շահն երևելի ինչ. այլ զգաւտասէր մնաց էին պէտք. և ընդ նմին և զմիսն՝ որ յայտնագոյնն է, «Այր զանձք մարդոյ են, ասէ, անդ

1 Ի լուս. փնգգ։

իցէ և սիրտ նորա »։ Լոյս զի և սա յայտնագոյն առնի-
ցէ, յերևելի ինչ իրս ձգէ զբանն։

« Դրագ մարմնոյ, ասէ, ակն է »։ Լոյս զոր ասէ՝
այսպիսի ինչ է։ Մի թաղիցես, ասէ, ոսկի յերկրի,
և մի այլ ինչ. զի ցեցոյ և ուտձի և գողոց ժողո-
վեսս։ Լուսեպէտ և յայսպիսի վնասակարաց ապրիցես,
այլ 'ի ծառայութենէ և ընդ երկրաւորս բևեռելոյ
չկարիցես ապրել. զի « Որ գանձք իցեն, ասէ, անդ
և սիրտն իցէ »։ Յերկինս գանձեսջիր. ուր ոչ ընդ-
գանձելոյն միայն հատուցումն առնուս, այլ և արդէն
իսկ անդր ելեալ գտանիցիս, անդր խորհել, անդր
հոգալ։ Օ՛ի ուր զգանձն եդիր, յայտ է թէ և ըզ-
միտսն անդր ժողովեցեր. և եթէ յերկրի, ասասցէ
յերկրիս պատաղիս։ Լոյս եթէ ոչինչ յայտ զբանդ
համարեսցիս, լուր յայծորդացն։

« Դրագ մարմնոյ ակն է. եթէ ակնդ, ասէ, առատ
է, ամ՝ մարմնդ լուսաւոր եղիցի. և եթէ ակնդ չար
իցէ, ամ՝ մարմնդ խաւարին լիցի. և եթէ լոյսն որ
'ի քեզ իցէ խաւար իցէ, խաւարն քանի՞ ոն իցէ »։
Դարձեալ և սա յայտնիս ածէ զբանն։ Վանգի զմտաց
ծառայելոց և զգէրելոց յիշեաց. և այն չէր ինչ բաղ-
մաց յայտնագոյն. ապա յարտաքինսս՝ որ ինչ աչացն
երևէին, փոխել զվարդապետութենն. զի այսու և զայնս
և 'ի միտ առնուցուն։ Լուսեպէտ զմտացն վնասակարս
չգիտիցես, 'ի մարմնաւորացս ուսանիցիս զնոսն։ Օ՛ի
որպէս ակն մարմնոյ լուսաւորիչ է, նոյնպէս և միտք
ոգւոյն։ Օ՛որ օրինակ ոչ ցանկանայիր ոսկի զարդ
յանձն ունել և հանդերձս պատուականս զգենուլ,
եթէ վասն այնպիսի զարդուց զաչդ որ կուրացուցա-
ներ. այլ առաւել զառողջութիւն խնդրեիր, և ոչ
զայնպիսի զարդս. յորժամ աչքն կուրանային, և
այլ և սնդամքն խաւարազգած լինէին. նոյնպէս և
յապականել մտացն՝ բիւրապատիկ չարեօք կեանք
մարդոյն [1] լինին։ Օ՛ի որպէս մարմնոյ լուսաւորու-
թիւն՝ աչաց առողջութիւն է, նոյնպէս և ոգւոյն՝
մտաց զուարթուն։ Օ՛ի թէ զնա խափուցանիցեմք,
որով և այլ և անդամքն լուսաւորին, իւ տեսանի-

1 'Ի լուս. մարմնոյն։

ցեմք զլոյս։ Օ՞ր օրինակ եթէ որ զանկ աղբեր խը-
նուցու, և զգետս ցամաքեցուցանէ. նոյնպէս և որ
զմիտն ապականիցէ, զնմա՛ զկենացն իւրոց զգործս
պղտորէ։ Ա՛ստ որոյ և ասէ իսկ. «Լ՚ԹԷ լոյսդ որ՚ի
քեզ է խաւար իցէ, խաւարն քանի՞ օն իցէ»։ Յորժամ՝ նաւապետն՝ որ զնաւն ուղղիցէ՝ ընկղմիցի, և
Ճրագն շիջանիցի, և զօրավարն դերի երթիցէ, որ-
պիսի՞ ինչ լոյս կենաց ռամկին իցէ։ Ա՛ստ այսորիկ
եթող Ճառել առ այժմ զնենգութեանց՝ որ յազգին-
թենէն լինիցի, և զկռուց, և զդատաստանաց. զոր
վերագոյնն ասաց ընդ աղօտ, եթէ «Գ՚ուցէ մանիցէ
զքեզ ոսոխն դատաւորին, և դատաւորն զդահ-
ճի»։ Ո՞ր քան զնա՛մ դժնդակ է և միշտ լինելոյ, զայն
դնել. զի գոնէ այնու մերժիցէ՚ի չար ցանկութենէն։
Ի՚ստ՚ի բանտի բնակել՝ ևս չար այն է, յորժամ
միաբն այնպիսի ախտի ծառայիցեն։ Ա՚յս և դիպիցի
իսկ, և այլքն մի ըստ միոջէ՝ ընչիցն ցանկութեանն վի-
Ճակեալ են։ Ա՛ստ որոյ և զսա յետ այնր դնէ, քան-
զի դժնդակագոյն և անվերջ դիպիցի։ Ա՚ծ, ասէ, ետ
քեզ միտս՝ զուղղն իմանալ և զարժանն քննել, ՚ի
տրամանկանացն և ՚ի վնասակարացն մերժել. զի իբ-
րև զինու վառեալ, և լուսով լուսաւորեալ՝ այնպէս
լինիցիմք ՚ի զգուշութեանէ։ Իսկ մեք թշնամեացն մատ-
նեմք զպարգևսն՝ վասն անօգուտ և անշահ իրաց։

Օ՞ինչ օգուտ իցէ, եթէ զօրքն յոսկի հանիցին,
և զօրավարն դերի գնացեալ։ Օ՞ինչ շահ իցէ՚ի յո-
բինել նաւի, եթէ նաւավարն ծովակուլ լինիցի։ Օ՞ի
պիտոյ իցէ մարմնոյ առողջութիւն, եթէ աչքն խաւա-
բաղգած խափնուցուն։ Օ՞ որ օրինակ յորժամ՚ի
բժշկի առողջութեանն ակն ունիցին, և նա ևս յաւե-
լուած՚ի ցաւսն առնիցէ. ապա թէպէտ և յոսկի գա-
հոյս հրամայիցէ հանդչել, և՚ի սենեակս արծաթա-
զօծս, ո՛չ ինչ օգուտ հիւանդացն գործիցի։ Ն՚այն-
պէս և եթէ զմիտն ապականիցես, թէպէտ և՚ի մեջ
գանձուց նստիցիս, այլ առաւել ևս վնաս առնիցես
ոգւոց։

Ցեռանեա՛ս, որոց ցանկան մարդիկ՝ անտի առաւել
կարձի, և յառաքինութենէն յորդորել։ Ա՚ռ արդ ընդ-
ելր ցանկանայցես ընչից. ո՛չ ապաքէն զի՚ի ցանկուն

և 'ի փափկութեան վայելիցես։ Այս աւանիկ հակառակ
ինն իրքն լինին։ Եթէ աչքն խափնուցուն, ջնայեալ
լեմք 'ի բարիս ինչ. և եթէ միտքն ապականիցին, ըզ-
նոյն կարիս յանձին կրիցեմք։

Այս արդ ընդէր թաղիցես յերկրի. ոչ ապաքէն՝
զի պահիցի։ Այս աւանիկ 'ի գողոց կասկած է, և
յայլոց փնասակարաց։ Օ որ օրինակ զպահօղն և զ-
զորմանն և զաղօթականն՝ վասն մնայարձութեան և
առ մարդկան ակամէ, յորոց ցանկանայն՝ առաւել
հաւանեցուցանէ ջնայարձել։ Ընդէր, ասէ, այդ-
պէս յաղօթս կայցես և ողորմիցին. ոչ ապաքէն զի
մարդկան փառաց ցանկացեալ իցես. և եթէ այն-
պէս իցէ, մի այնպէս կայցես յաղօթս. և հասանի-
ցես 'ի հանդերձելումն աւուրն։ Այնպէս և զարծա-
թասէրն, որովք յորս փութայրն՝ գրաւեցաւ։ Օ ինչ
կամիցես, ասէ. զի ինչքն պահիցին քեզ, և 'ի ցան-
կութեանն վայելիցես։ Օ երկոսեան իսկ բաղում ա-
ռատութիւն հնարհեցից քեզ, եթէ անդ դնիցես զոս-
կին՝ ուր ետն հրամայեմ։

Այս յայտնագոյն զոսկին փնասն 'ի փշոցն առակէ
եցոյց։ Այլ սակայն և աստ ընդ աղօտ ակնարկեաց։
Օ որ օրինակ որ ընդ խաւարն գնայցեն, ոչինչ կա-
րեն տեսանել կշնա. այլ թէ չուան տեսանեն, օձ
համարին. և եթէ լերինս, ձորս. և այնպէս մեռեալ
են 'ի յահէն, զի զպահիչսն ահագինս կարծեն։
Այնպէս և սոքա յաղքատութենէ երկնչին, և 'ի
սակաւ ինչ փնասուց. և եթէ սակաւ ինչ 'ի ծանծաղ
եղանիցեն, յայնժամ էս աւելի կասկածեն։ Այս բա-
զումք 'ի մեծատանց յորժամ յաղքատութի հասա-
նիցեն, խեղդամահ լինին առ 'ի չժուժալ չար կե-
նացն, և թշնամանացն, և 'ի տառապանս անկանե-
լոյ։ Օ և այնպէս չժուժկալն և անհնարին թուի նո-
ցա, մինչ զի և բազմաց վասն նորին իրաց և 'ի կե-
նաց աշխարհիս անկանել։ Օ և առ ամ անժամս ա-
բար զնոսա մեծութին. բայց միայն առ իւր սպասա-
ւորութեան ժուժկալս։ Օ և յորժամ իւր 'ի ծառայու-
թեան հրամայիցէ կալ, ոչ զմահն ինչ համարին, ոչ
զնախատինս, և ոչ զամ ամեթ. որ յետին իսկ թը-
շուառութեանէ է։ Օ և յորժամ պարան էր զպաստա-

նալ, քան զամենեսեան մեղմագոյնք լինին. և յորս երկիւղածս լինել, յանդգնագոյնք և լրջագոյնք քան զամենեսին։

Եւ այնպիսի ինչ պատահիցէ նոցա, որպէս թէ ոք փաշաման յանօգուտ զինչն ծախելոյ կրիցէ. և 'ի դէպ ժամանակի յորժամ կարեւորացն պէտք ստիպիցեն, չգտանիցէ ինչ 'ի մէջ բերել, սրտառուչ չաբաալուկ լինիցի. քանզի զնմա յառաջագոյն չարաչար ծախեաց։

Որպէս ոք զգուսանացն արուեստն գիտիցէն, բազում ինչ նոր և չքնաղ զարմանալիս ցուցանիցեն, և պէսպէս Ճգունս Ճգնեալ, և 'ի լաւութիւն ինչ և 'ի կարեւորս՝ յամենեցունց ծաղր կայցեն. նոյնպէս և սոքա։ Զա և որ 'ի չուանացն ճգելոց վերայ գնայցեն, մեծ իմն արուեստ ցուցանեն. և յորժամ 'ի կաբեւոր լաւութիւն ժրանալ պահանջիցես, և իմանալ իսկ զՀանգամանս իրացն չունին յանձին։ Նոյնպէս և մեծատունքն վասն ընչիցն միայն 'ի վսեր եկեալ յանդգնին. և վասն ցածնոյց և զգաստանալոյ՝ ոչ 'ի մեծի և ոչ 'ի փոքու ունին յանձին վշտանալ։ Եւ զոր օրինակ նոքա զինասակար և զանօգուտ արուեստն 'ի ձեռն առեալ յանդգնին, նոյնպէս և սոքա 'ի բազում Ճգունս Ճգնին, և ընդ պէսպէս անկեալ կան 'ի վտանգի, և ոչ 'ի լաւուն ինչ վախճան դէմ արարեալ. և կրկին մեռով մեռանան, 'ի մտացն ցնորիցդ դամաբեալք, 'ի հոգոցն պատրանացն 'ի բազում յարամբի և 'ի միգի կան. վասն որոյ և ոչ նայել 'ի վեր կարիցեն գիւրաւ։

Որ 'ի խաւարի իցէ, 'ի ծագել միայն արեգական զերծանի 'ի մեռոյն. իսկ որ կոյրն աչօք իցէ, և ոչ 'ի ծագել արևու։ Այնպիսի ինչ և նոքա կրիցեն. քանզի զի և ոչ յերևեալ արեգականն արդարուն և 'ի խրատել տեսանեն. զի կալաւ զաչս նոցա մեծութիւնն։ Ուսամ և կրկին իսկ մութ յանձինս կորզեն, և յինքեանց և 'ի չանսալոյ վարդապետին։

ՑՈՐԴՈՐԱԿ

ԼԱՑԵՍՑՈՒՈՒ[1] այսուհետև մտադիւրութիւն, զի զկնի անագան երբեք բանայցեն աչք մեր և տեսանիցեմք։ Եւ զիարդ, ասեն, մարթիցի բանալ զաչս։ Եթէ ուսանիցիս ոչպէս կուրացար։ Եւ արդ զիարդ կուրացար։ Ի չար ցանկութենէն. իբրև զյստակ բբաք անկեալ չար մտաւս ընդեցն ցանկութեան՝ թանձրացոյց զկամն իբրև զամպ։ Բ.յլ և փարատել և մաղել[2] զոյ հնար ամպոյն դիւրաւ, եթէ սխորժելով ընդունիցիմք զվարդապետութիւն Քրիստի. եթէ անասայցեմք խրատու նորա՝ որ ասէ, «Ի զանձէք ձեզ զանձս յերկրի»։

Եւ զինչ, ասէ, օգուտ իցէ լնել յունկնդրութենէն, յորժամ ցանկութեամբն դրաւեալ իցեմ։ Ի՞անաւանդ թէ և զցանկութենէն իսկ ստէպ ունկնդրութենն[3] կարօղ է փարատել։ Բ.ալա թէ 'ի նմին տակաւին դրաւեալ կայցես, 'ի միտ առ՝ զի ցանկութիւն չէն իրքն, այլ ցաւք։ Օ՞ինչ ցանկութէն իցէ զդժուդակ ծառայութենն հարկանել, կծիկ կալ ընդ բռնութիւն՝ կապեալ յամ կողմանց, և ընդ մաթ շրջել, և խուռ վուութիւն լնուլ, և անօգուտ աշխատութիւն կրել, և այլոց ինչս պահել. բազում անգամ թերևս և թշնամեայն իսկ։ Ի՞բրում ցանկութեն իցէ արժանի այն, և ոչ փախստի և աւերոց[4] եւանելոց։ Օ՞ինչ ցանկութիւն իցէ զանձս 'ի մէջ գողոց դնել։ Եւ եթէ ցանկանայցես և ա՛ ընդեցս, անդր փոխեա, ուր մարթիցի զամուրս[5] յամուր բերդին պահել. ուր չիցէ ինչ որ զամագիտ կարիցէ լինել։ Բ.յլ զոր այժմ գործես[6], չէ ընդեցս ցանկանալոց, այլ ծառայութեն և ճեասու և խուելոց և հանապազորդ ցաւոց։

Դու աւադիկ՝ եթէ որ յերկրի տեղի ինչ ամուր խոստանայր ցուցանել քեզ, ուր զինչս անվթար հա-

1 Փար. օր. Կ.ուայեցուուս։
2 Փար. օր. Մ.ալել։
3 Յօրինակին ունկնդրութիւն. Ջնորեալ։ Եգոք ըստ փար. օր։
4 Փար. օր. ասելոց։
5 Ի լուս. ՀՀեղ. փար. օր.
6 Փար. օր. այժմ ինչ գործես։

տանէր պահել, թէպէտ և յանապատ իսկ տանէր՝ չդանդաղէիր և ոչ յապաղէիր, այլ հաւատայիր, և ստիպէիր անդր կրեալ զկարասին։ Իսկ ուր ՝ՈՏ՝ փոխանակ մարդկան՝ խոստանայ պահել քեզ զդանձն, ոչ յանապատի ուրեք, այլ յերկինս, և ոչ առնուս յանձն։ ԼՀ զայն զի [1] գիտես եւ, եթէ որչափ յամրի և զնիցես աստէն յերկրի, չլինիս ազատ 'ի հոգոց. եթէ կորուսանիցես, և եթէ չկորուսանիցես, չառնիս երբէք յապահով 'ի տատանելոյ [2]։ Իսկ անդ ոչ երբէք երկիցես [3] այսպիսի ինչ։ ԼՀ որ ինչ կարի առաւելուն է, զի ոչ միայն թաղես զոսկին, այլ և տընկես, և միանգամայն գանձք և սերմանք գործին քեզ. մնանուանդ թէ քան զերկոսին իսկ յաՀախս առաւելութիւն։ Օ՛ սերմանքն ոչ ցանգ տեւեն, և նա միշտ տեւական է. դարձեալ գանձքն չտան արմտիս, և նա զանմահ տոհմականս բերիցէ քեզ։

Իսկ եթէ զերկար ժամանակէն ինչ ասիցես, և զյապաղելոյ հատուցմանն, ունիմ և ես ցուցանել քեզ, թէ զուր են պատՀառքն՝ զոր դնես առաջի։ Դանդի և աստէն իսկ բաղում ինչ կազմես՝ յորում չՀասանիցէ վայելել. և եթէ մեղադիր ոք լինիցի, զորդիսն և զորդւոց որդիս դնես պատՀառս 'ի միջի, և Համարիս բաւական ինչ միսիթարութիւն այնու աշխատութեանցն գտանել։ Յորժամ 'ի վերջին ծերութիւն իցես, և ապարանս գեղեցիկս սկսանիցիս շինել, զոր ոչ Հասանիցէ կատարել և գնալ, թերեւս և դրախտս եւս տնկիցես, որ յետ բաղում ամաց 'ի բեր Հասանիցեն, և արարս և ժառանգութիւնս գնիցես, որում յետ բազմաց [4] Հասանիցէ տիրել. և այլ եւս աշխատուես՝ յորս չՀասանիցէ վայելել. վասն քո՞ արդեւք, թէ վասն քոց յետնոց խնջիցիս այնչափ։ ԼՀ զնարդ չէ յետին անմտութիւն, զի ասա չդանդաղիս ինչ 'ի ժամանակին յապաղութենէ. և գիտիցես եւ, թէ վասն յերկարելոյն՝ բաղում անգամ և վրիպել իսկ Հասանէ 'ի փոխարինից վաստակոյն։ ԼՀ անդ դանդաղիս ընդ յամենն. և այն զի գիտակ եւս իցես՝ եթէ բաղ-

1 Փար. օր. այն զի։
2 Փար. օր. 'ի գոգամնելոյ։
3 Փարիզեան օրինակին կրէ. օր. ՀԲաղում ՀՀամանՀելոյ։
4 'Ի լուս. ՀԲաղում ամաց. փար. ՀԲաղում ՀՀամանՀելոյ։

մնպատիկ շահս բերէ քեզ. ոչ զի յայլս արարքն կըրթիցին, այլ զի քեզ հաճարիցին դանձքն։

Եւ առանց այսր իսկ՝ նա և չէ յոյժ յապաղումն. զի և առ դուրս իսկ եկեալ կան իրքն, և չդիտեմք եթէ 'ի մերում իսկ դարուս գայցէ կատարած, և առ մեզ իսկ հասանիցէ ահագին օրն 'ի վերայ, ահեղ անաչառ դատաստանն։ Վանդի մեծ մանն նշանացն կատարեցաւ. և աւետարանն այսուհետև ընդ ամ տիեզերս քարոզեալ է. և պատերազմունք և սովք և սատանուքք եղեն. և չկայ [1] կարի շատ 'ի միջի։ Այլ չտեսանիցես [2] նշանս. նա և այն իսկ մեծ նշան է։ Վանդի և առ Հոյիւ իսկ տեսանէին զսկիզբն բնաջինջ համանկարոյս սատակմանն. այլ առ այնու խաղային և խնդային, ուտէին և ըմպէին, և ամուսնանային, և զամ սովորութեան վճարէին. և յանկարծակի հասին 'ի վերայ ահագին վրէժքն։ Եւ 'ի Սոդոմ փոփկանային, բարեկեցիկ լինէին, և չունէին ինչ ակն գործոյն. և յանկարծակի կրակատեղոյ հրացան բարկութեամբն իջին կենդանւոյն 'ի դժոխս։

Եւ արդ զայս ամ զմտաւ ածեալ՝ պատրաստք լիցուք չուելոյ աստի։ Օր թէպէտ և հասարակաց վախճանի օրն չէ եւս հասանիցէ 'ի վերայ, սակայն իւրաքանչիւր կատարած առ դուրս կայ, եթէ ծերոք իցէ և եթէ մանուկ։ Եւ չէ հնար յորժամ ասի ոք անդր երթիցէ, և անդ [3] եւղ գնիցէ. և ոչ թէ աղաչիցէ ոք, թողութիւն գտանէ. թէպէտ և Աբրահամ իցէ կամ Հոյ կամ Յովբ կամ Դանիէլ։ Այնուհետև ժամանակս 'ի ձեռս է, համբարեսցուք կանխաւ անձանց բաղում համարձակութիւն. ժողովեսցուք եւղ բազում. փոխեսցուք զամ ինչ յերկինս. զի 'ի դէպ ժամանակի վայելեսցուք, և չլինիցիմք իմիք կարօտ. զի հանդերձելոց բարութեանցն արժանի լիցուք շնորհօք և մարդասիրութիւն տան մերոյ Յիսի Քրիստի. որում փառք և իշխանութիւն յաւիտեանս. ամէն։

1 Յորինակին լիայոյ. եղաք դաք ըստ փար. օր։
2 Յորինակին թէ-ատիցէ-. և. գէ-ոցէ։
3 Փար. օրին. ԲԷ ԱՆԴՐ ԻՆՉ ըստ փարիզեան օր։

ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

« Ո՛չ ոք կարէ երկուց տէրանց ծառայել. թէ զմին ատիցէ, և զմիւսն սիրիցէ. և կամ զմին մեծարիցէ, և զմիւսն եւս արհամարհիցէ »։

Տեսանե՞ս, զիարդ առ սակաւ սակաւ յամենայն իմաքէ մերժէ. և բազում բանիւք յընչից մերկ և լոկ հրամայէ լինել. և զարծաթասիրութեան բռնութիւնն զի-ջուցանէ։ Այլ ոչ բաւական համարի զառաջինսն, թէ պէտ և մեծամեծք և բազումք էին, այլ եւս մեծա-մեծս և ահագինս յաւելու։ Այլ զինչ քան զարդի ասացեալս կայցէ ահագին, եթէ վասն ընչից ի Աստ-ծառայութենէ ելանել հասանիցէ։ Այլ զինչ քան զայն ցանկալի կայցէ, եթէ զինչսն արհամարհելով՝ զնորա սերտ խնամն ստանայցեմք։ Օ՛ի զոր միշտն ասէի՝ և այժմ ասացից. երկոքումբք ստիպէ զալ ի հնազանդութեան բանից. և զոր օրինակ բժիշկ մի ձաղ-տար և զախտն որ յանսաստութենէն իցէ, և զա-ռողջութիւն որ ի հնազանդութենէն լինի, յայտ առնիցէ։

Այլ արդ տես, զիարդ կրկին շահս ցուցանէ, կամ որպէս հնարի զօգուտն՝ ի հակառակացն զերծուցա-նելոյ։ Օ՛ի ոչ այնու միայն, ասէ, միտս առնէ ձեզ մե-ծութիւն, եթէ զդողս և զաւազակս վառեալ ի վե-րայ յարուցանիցէ, և ոչ զի զմիտսն և եթէ խաւարե-ցուցանիցէ, այլ զի և ի ծառայութենէն այ մերժէ և զերիս անշունչ ընչիցն առնէ. և երկոքումբք միտս զործէ. զի և ծառայ ընչիցն առնէ՝ որոց տիրելն պարտ էր, և ի ծառայութենէն այ հանէ՝ որում պա-ժանն էր ծառայել։ Օ՛ որ օրինակ և անդ կրկին և-ցոյց զմիտսն, և ասելն գանձելով՝ ուր ցեցս հարկա-նէ, և անդ չգանձելով՝ ուր պահպանութիւն է, նոյն պէս և առ երկուս միտս դնէ. զի և յայ հեռացու-ցանէ, և մամոնայի հնազանդէ։ Այլ զայս ոչ վաղ-վաղակի դնէ, այլ նախ ի հատարակաց մնաց յօրի-նէ. և ապա ասէ, եթէ « Ո՛չ կարէք դուք երկուց

տերանց ծառայել »· որ հակառակ միմեանց տայցեն հրամանս· զի թէ այսպէս չիցէ, և ոչ երկուս իսկ ա-նուանէին։ Այլ այնպիսի ինն խնդրէ՝ որպէս ասէն, եթէ « Լոր բազմութեամբ հաւատացելոցն մի սիրտ և մի ոգի »· զի թէպէտ և բազում մարմինք 'ի միմեանց ուրոյն էին, այլ միաբանութիւն զբազումն մի արար։ Պարձեալ և ձգէ և զանն· ոչ միայն, ասէ, չծառայիցէ, այլ և ատիցէ և, և զերեսս դարձուցանիցէ։

« Զի թէ զմին ատիցէ, և զմիւսն սիրիցէ· կամ զմին մեծարիցէ, և զմիւսն արհամարհիցէ »։ Լոչ թուի թէ երկուք ինչ իցեն զոր ասէն, այլ նոյն է։ Լոչ ոչ վայրապար մի ըստ միոջէ կարդեաց, այլ զի ցուցցէ եթէ դիւրին է դառնալ 'ի լաւ անդր։ Զի մի ոք ասիցէ, եթէ միանգամ ծառայեցայ և ընդ բռնութիւն մտի ընչիցն, կարեմ զերծանել· ցուցանէ թէ հնար է փոփոխել, որպէս անտի այսր, նոյնպէս և աստի անդր։ Լդառն'իխուռն 'ի մէջ ինն ընկենու զբանն, զի զլսօղսն հաւանեցուսցէ լինել անաչառ դատաւոր բանիցն, և անդստին յիրացն տայցէ զվրէժիս նոցին։ Լսկ յորժամ էած յօժարեցոյց և միաբանեաց, ապա և զիւր անձն յայտնէ ասելովն զնորին զհետ, եթէ « Մի՛չ կարէք դուք ՅՀ ծառայել և մամոնայի »։ Լոչ արդ իմացեալ զայս՝ սարսեսցո՛ւք· յորպիսի իրս իջուցաք զՆՀ՝ ասել զայսպիսի բանս, և դնել հաւասար ՅՀ զոսկին։ Զի թէ լսէն իսկ դ-զումն իցէ, որք արդեամբք իսկ զոսկին պատուիցեն քան զերկիւղն ՅՀ՝ որչափ ևս ահագին։

Լոչ առ առաջնորդն, ասէն, չէր այսպիսի ինչ։ Զէր իսկ ուրեք այսպիսի ինչ։ Լոչ զիարդ, ասէն։ Լբրահամ կամ Յովբ զի արդարացան։ Լոչ դու մի զմեծատունն ինչ աղարտիցես, այլ զծառայակալն ընչիցն· ապա թէ ոչ և Յովբ մեծատուն էր, և չծառայեաց մամոնայի, այլ ունէր բազում ինչս և տիրէր· և տէր ընչիցն էր, և ծառայ ՅՀ, և իբրև զայլոց մատակարար կայր 'ի վերայ ընչիցն· և ոչ միայն զայլոց չյափշտակէր, այլ և զիւրն ևս այլոց կարօտելոց բաշխէր· և ևս մեծանայր, զի չէր ինչ ուրախ ընդ անցաւորս։ Լանզի և ասէր իսկ, եթէ « Ուրախ ինչ եղէ՞ երբեք ընդ մեծութիւն՝ որ եկն ինձ »։ Լա և

յայնժամ չարտամեցաւ, յորժամ բարձաւ 'ի նմանէ մեծութիւն։ Լաւ ուչ այսպիսիք ոք իցեն և արդի մեծատունքս. այլ քան զնա՛մ սարուկս և անազատք, իբրև զդժոգակ բռնաւորի ումեք կան 'ի հարկի։ Որպէս զբարձրաբերձ ինչ քաղաք 'ի յատակս իջուցեալ խոնարհեցուցանեալ զմիտս նոցա յընչիցն ցանկութիւն։ Այնոքայն անօրէնութեաց հրամանս հանապազ յաձախեն նոցա ինչքն, և չիք ոք որ անհնազանդ լինիցի։ Լաւ արդ մի աւելիս ինչ ձարտարել. քանզի միանգամ վնիռ եղ՝ ՝ն ած՝, եթէ չէ հնար այսմ և այնմ ծառայութիւն միաբան հարկ հարկանել։

Լաւ դու մի ասիցես, եթէ այն հնար է[1]։ Յորժամ տեսանիցես եթէ մին յափշտակել հրամայէ, և միւսն մերկ լինել. մին զգաստանալ, և միւսն պոռնկել. մին արբենալ և շուայտել, և միւսն համ դնել որկորի. մին չհայել 'ի մատաւորս, և միւսն աստէն ընդ նոսին բաւեալ. մին զարմանալ ընդ կձեայս և ընդ որմն բռեալս և ընդ յարկս նկարեալս, և միւսն արհամարհել զայն և պատուել զցածութիւն։ Լաւ արդ զիարդ մարթիցի նոցա միաբան լինել։

Այլ զմամոնայն տեր, ուչ վասն նորա ինչ բնութիւն, այլ վասն այնոցիկ՝ որ ընդ նովաւն երթեալ գանուցուն։ Այլ ոչ օրինակաւ և զորովայն աստուած կոչէ, ուչ ըստ նորա ինչ պատուոյ, այլ ըստ ծառայացելոցն թշուառութիւն. որ քան զնա՛մ տանջանս և դաժանագոյն է, և յառաջ քան զտանջանս բաւական պատժել զբմբռնեալն։ Քան զորպիսի՝ դատապարտեալս չիցեն եղկելիք, որք զնա՛ծ՝ որ ունիցին, և 'ի զգօն թաքաւորութիւն 'ի խիստ բռնութիւն անձամբ զանձինս առնիցեն վտարանդիս. և այնչափ անչափ փնաք անտի լինիցին և դատք և դատաստանք և ձգունք և վաստակք և ոգւոց ապշութիւնք. և եւս չար քան զնա՛մ՝ 'ի բարձանց բարութեցն անկանել, և յայ ծառայութենէ։

Իսկ յորժամ եցոյց ամենայնիւ զօգուտն՝ որ յինչիցն անտեսութիւն իցէ, և թէ ուր պահիցին ինչքն, և զոգւոցն ցանկութի, և զցածութենէն ստացուածս,

[1] Յորինակին անհնար է։

և զանձնպաշտութիւնն զգաստութիւն, յարդարեն զանուշութիւն ցուցանելոյ թէ և զօրաւոր իսկ է խրատն։ Զանազի յայնմ աւելագոյն է գեղեցիկ օրինաւորութեանն. ոչ միայն զոգատակարսն հրամայել, այլ և զօրաւորս ևս զնոսն առնել։ Զ սան որոյ և ածէ և զնովիմբ, եթէ «Զի հոգայք վասն ոգւոց ձերոց զինչ կերիցիք»։ Զի մի ասիցեն թէ զիարդ. զնոմ ինչ՝ի բաց պարտիցիմք ընկենուլ, և զիարդ կարիցեմք կեալ։ Զ-այս միտս դիպեցուցանեմ զընդդէմ պատասխանին՝ի պատշաճ ժամանակի։ Զի թէ յառաջնումն ասացեալ էր, թէ «Զի ինչ հոգայք», ծանր իմն թուէր այնպէս բանն. և քանզի եղոյց զասպականութիւնն որ յարծաթսիրութենէն լինի, ապա այնու իմն դիւրին կալ առնէ զխրատն։ Զ սան որոյ և այժմ չասէ վայրապար թէ մի հոգայցէք, այլ զպատճառսն՝ի միջի եդեալ՝ ապա զայն հրամայէ։ Զի յետ ասելոյն, և թէ «Զ՝չ կարէք դուք ոչ ծառայել և մամոնայի», յարէ՝ի նոյն, թէ «Զ այս ասեմ ձեզ, մի հոգայցէք»։ Զ այս. զոր. զանբաւ վնասն. զի ոչ եթէ յընչիցն միայն վնասիցիք, այլ և՝ի կարևորսն առնուք վերս՝ի կործանումն փրկութեանն ձերոյ։ Զի դոյն իսկ յարարչէն և՝ի խնամածուէն ձերոյ յոյ հանել զձեզ. վասն այսորիկ ասեմ ձեզ թէ մի հոգայցէք։ Զ-ի քանզի եղոյց զվնասն՝ եթէ մեծ է, ապա յոլովք ևս զհրամանն. ոչ միայն զոր ունիցի զբ ինչ հրամայէ ընկենուլ, այլ և վասն կարևոր պիտոյից կերակրոյն չհոգալ. և «Զի», ասէ, հոգայցէք վասն ոգւոց ձերոց զինչ ուտիցիք»։

Զ՝չ եթէ ոգին կերակրոց ինչ կարօտ իցէ, քանզի անմարմին է, այլ ըստ հասարակաց սովորութեանն բարբառի։ Զ-Դէպետ և չիցէ ինչ, ասէ, կարօտ կերակրոյ, այլ ոչ կարէ մնալ՝ի մարմնին առանց մարմնոյն կերակրելոյ։ Զ-ոչ զայս ոչ վայրապար ինչ դնէ, այլ յուզէ իմն և աստ խորհուրդս. զկէսն յիրաց ինչ գործելոց, և զկէսն յայլոց ինչ օրինակաց։ Զ-Ի բաց ինչ գործելոց՝ ասելովն, եթէ «Զ՝չ ապաքէն ո զին առաւել է քան զկերակուրն, և մարմին քան զհանդերձն»։

Զ-ի որ զմեծն ինչ էտ, զիարդ զիարդ ոչ տայցէ.

որ զկերակրելն մարմնոյն ստեղծ, զնաբդ իցէ զի ըզ-
կերակուրսն ոչ շնորհիցէ։ Զանազն և ոչ իսկ վայրա-
պար ասաց, եթէ «Մի հոգայցէք զինչ ուտիցէք
կամ զինչ զգենուցուք», այլ թէ վասն մարմնոյդ
և ոգւոց։ Զի քանզի ի նոցանէ ցուցանելոյց էր օրէն
նախ, ըստ նմին համեմատութեանն և զանազն ձգէ յա-
ռաջ. այլ զոգին մի անգամ էտ, և նոյնպիսի ինչ կայ
և մնայ. և զմարմինն օր ըստ օրէ զարգացուցանէ։
Վասն որոյ և զերկոցունց իսկ յայտ առնէ. զմիոյն
իբրև զանմահն, և զմիւսոյն իբրև զմահկանացուն.
քանզի և յարէ իսկ ի նոյն, եթէ «Մի՞ թէպ
որ յաւելուլ կարիցէ ի հասակ իւր կանգուն մի»։
Զի զոգւոյ լուեաց, քանզի չառնու աճումն ինչ. և
զմարմնոյն միայն ճառեաց. և այնու յայտ է, եթէ
ոչ ի կերակրոյ ինչ աճէ ոգին, այլ յայ դարմանոյ։
Զ որ և այլովք յայտ արարեալ Պաւղոսի ասէր.
«Որպէս զի ոչ այն ինչ է որ անկէն, և ոչ այն ոք որ
ջուրն տայ. այլ որ աճեցուցանէն ՚ած»։
Յիրաց ինչ գործելոց այնպէս յորդորեաց. իսկ
յայլոց օրինակաց, եթէ «Հայեցարուք ընդ թռ-
չունս երկնից»։ Զ ի մի ոք ասիցէ՝ եթէ օգտիմք ի
հոգալոյն, և ի մեծէն և ի փոքուէ կասեցուցանէ
զնոսա։ Զ ի մեծէ՝ զի վասն ոգւոյն չտայ հոգալ. և ի
փոքուէն՝ զի վասն մարմնոյն չհրամայէ տատամել.
և փոքունն զթռչունն ածէ օրինակ. զի թէ կարի յետ
նոյն այնչափ դարմանս տանիցի, որչափ և առաւել
ձեզ լինիցի խնամակալ։ Զ ու առ նոսա այսչափ ինչ,
զի ռամիկ ժողովք ժողովեալ էին ի մի վայր։ Իսկ
սատանայի ոչ այսպիսի ինչ, այլ թէ «Մի՛չ հայցիս մի-
այն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիս որ ելանէ ի
բերանոյ ՚այ»։ Իսկ աստ զՀաւուց յիշեցուցանէ, և
առաւել խին կամի պատկառեցուցանել. որ կարի
զնրատու բանից ունի զօրութիւն։

Զ այլ յայնչափ անմտութիւն եկին ոմանք յամ-
պարշտաց, զի բիծս խին կամին դնել օրինակին։ Զկր,
ասէն, պարտ նմա՝ որ զանձնիշխանութիւն կրթիր,
յայնցանէ՝ որ զբնութիւն այնպիսի ինչ բարս ունէին,
բերել առակ օրինակի ի մէջ. զի նոքա, ասէն, զայն
բնութիւն ունին։ Զ ու արդ առ այս զինչ իցէ ասել։

Օ՛ի թէպէտ և նոցա բնութիւն իցէ այն, այլ և մեզ մարթի նոյնպէս անձնիշխանութիւն լինել։ Բ՛անզի ոչ ասաց, եթէ նայեցարուք զի թռչին թռչունք, որ չէ մարթ մարդկան. այլ թէ կերակրին առանց հոգոց. զոր թէ և մեք կամիցիմք, դիւրին է ուղղել. և զայս այնոքիկ ցուցին՝ որ արդեամբք իսկ զսոյն վճարեցին։ Վ՛ասն որոյ արժան է առաւել զարմանալ ընդ իմաստութիւն օրէնսդրին. որ 'ի մարդկանէ կարէր տալ օրէնսակ, 'ի Յ՛ունայէ և 'ի Պ՛ովսիսէ և 'ի Յ՛ովհաննէ, և յայլոց յայնպիսեաց յանհոգաց. այլ զի զնոսա կասեցուցանիցէ, զթռչնոցն յիշեցուցանէ։ Զ՛ի զարդարոցն ճառեալ էր, ունէին ասել թէ չէ և՛ 'ի նոցա չափն հասեալ։ Զ՛այս աւանիկ զնոցանէ լուեաց, և զթռչունսն էած 'ի մէջ, զի զնոսա պատճառսն հատանիցէ 'ի նոցանէն։

Զ՛ի յայսմ վայրի կարի նմանօղ եղև օրինացն. քանզի և հին կտակարանքն մերթ առ մեղու, մերթ առ մրջիւն առաքէին զվասն. և երբեմն առ տարակ և առ ծիծառն։ Զ՛ի այս ոչ սակաւ ինչ պատուոյ նշանակ է, եթէ զոր նոքա բնութիւն ունիցին՝ մեք զնոսն կամօք ուղղիցեմք։ Օ՛ի թէ որոց վասն մերն են՝ այնչափ ինամ տանիցի, ոչչափ և առաւել մեզ. եթէ ծառայիցն այնչափ, և՝ առաւել տերանցս։ Վ՛ասն այնոքիկ ասաց, թէ «Զ՛այեցարուք ընդ թռչունս»։ Զ՛ի ոչ ասաց՝ թէ ոչ վաճառեն, և ոչ շահ ինչ շահին, զի այս կարի խոտելոցն էր. այլ թէ «Ո՛չ սերմանեն, և ոչ հնձեն»։

Զ՛ի զնարդ, ասեն. չիցէ՞ պարտ սերմանել. ոչ ասաց եթէ չէ պարտ սերմանել, այլ թէ չէ արժան հոգալ. և ոչ թէ գործել չիցէ պարտ, այլ կարճամիտ լինել և զանձն 'ի հոգս մաշել չէ օրէն։ Զ՛այլ գործել, և զկիր վաստակս ուտել հրամայեաց, այլ ոչ եթէ հոգալ և յանձն ապաստան ինչ լինել։ Օ՛սոյն և Դ՛աւիթն ակնարկելով ճառէ անդուստ 'ի վերուստ, եթէ «Զ՛ասաս դու զձեռն քո, և լցուցանես զամ կենդանիս կամօք քովք». և դարձեալ թէ «Ո՛ր տայ անասնոց զկերակուրս իւրեանց, և ձագուց ագռաւուց՝ ոյք կարդան առ նա»։

Զ՛ի ոմ ոք, ասեն, ոչ հոգայցէ։ Ո՛չ լուար որպի-

սի արդարս Կած 'ի մէջ։ Ոտեսանիցես ընդ նոսա և զՀակո�եալս, որ 'ի Հայրենի տանէն իւրմէ մերկ և լոկ եկաներ. զլիցես զիարդ կայր յաղօթս և լիներ ուխտաւորիր։ «Լցեալ տայցէ ինձ, ասէ, Տէր Հայ ուտել, և Հանդերձ զգենուլ». որ ոչ Հոգալով ինչ ասէր, այլ զամ յայ խնդրէր։ Ոչ սոյն և առաքեալքն ուղղեցին. զի զամ ինչ 'ի բաց ընկեցին, և անՀոգք եղեն. և Հինգ Հազարքն և երկք Հազարքն[1]։ Ոչ սա թէ և այլ ևս չանսայցես յետ այսչափ բանիցս ասացելոց՝ լուծանել զանձն յայնպիսի անՀնարին կապանաց, զանշահութիւն իրացն զմտաւ ած. քանզի եթէ մերժեալ զՀոգսն 'ի քէն բանիւն՝ որ ասէ. եթէ «Ով իցէ 'ի ձէնջ, որ կարիցէ առ 'ի Հոգալ յաւելուլ 'ի Հասակ իւր կանգուն մի»։ Ցեսանես, զիարդ 'ի յայսուրոյն զանյայսն յայտնի արար։ Ոչ որպէս 'ի մարմին, ասէ, Հոգալովն չկարես ինչ յաւելուլ, նոյնպէս և ոչ 'ի կերակուրսն ժողովելոյ։ Լոյս յայսմանէ յայտ է, եթէ ոչ 'ի մերմէ ինչ փութայ, այլ յայ դարմանոց, և զոր Համարիմք թէ մեր ինչ գործ իցէ, զամենայն նա վՀարէ։ Ոչ թէ նա զմեզ թողուցու, ոչ փոյթ և ոչ Հոգք և ոչ վաստակք և ոչ այլ ինչ նոյնպիսիք երևեսցին երբէք, այլ ամենայն 'ի դերև ելեալ գնայցէ։

ՅՈՐԴՈՐԱԿ

Մի այսուհետև անՀնարին ինչ զՀրամանսն Համարիցիմք, քանզի բազումք եղեն որ կատարեցին զնոսա և այժմ. թէ չգիտիցես չէն ինչ զարմանք. քանզի և Լդղիա կարծեր թէ ինքն միայն իցէ, այլ լուաւ՝ եթէ «Լողն ինձ, ասէ, եւ թեն Հազար այր»։ Ուստի և յայտ իսկ է, թէ և այժմ բազումք իսկ ցուցանեն առաքելական վարս. որպէս յայնժամ երեքՀազարեան և ՀինգՀազարեան ժողովքն։ Լոյս եթէ ոչ Հաւատամք, ոչ զի չգուցեն ուղղագործք, այլ զի 'ի մէնջ յոյժ Հեռի են իրքն։ Ոչ որ օրինակ

[1] Յօրինակին հինգ հարիւրքն և երեք հարիւրքն. եդաք ըստ լուսն։

արբեցողն ոչ դիւրաւ հաւատայ եթէ գոյ ոք մարդ, որ և ջուր չըմպիցէ. զոր բաղումք 'ի վանականաց և առ մեզ իսկ արարին։ Այլ որ ընդ բազում կանայս խառնակութիւն գործիցէ, դժուարաւ հաւատայ՝ թէ զկուսութիւն ոք պահիցէ։ Այլ ոչ որ զայլոցն յափշտակէ, թէ զիւր ոք այլոց բաշխիցէ։ Այսպէս և որ հանապազ յաղագի աղագի հոգս զառաքեալ ծնգիցին, ոչ դիւրաւ ընդունին զայս։

Այլ զի բազումք են՝ որ արարին զայս, 'ի նոցունց իսկ որ այժմ 'ի մերում ամս 'ի նմին զգաստութեան են՝ մարթի ցուցանել։ Բայց ձեզ առ անգամ մի շատ լիցի յուսումն չագահելն. և եթէ բարւոք է ո զրամածութիւն, և զիտելն՝ թէ պարտ է 'ի գոյաւորութիւնն և այլոց տալ։ Այլ զայսր ուղղութիւն ցուցանիցես, սիրելի, վաղվաղակի իսկ և իսկ յայն գայցես։ Բայց առ այժմ զաւելորդն 'ի բաց թօթափեսցուք, և 'ի չափոյն անասացուք կալ. և յարդարուն վաստակոցն ուսցուք ստանալ՝ զոր ինչ և ստանայցեմք։ Վանդի և երանելին Յովհաննէս յորժամ զնոցանէ՝ որք մաքաւորութիւնն պարապէին, և զզնուորաց խօսեր, շատանալ իւրեանց ուռճկօքն հրամայեր։ Կամէր և յայլ մեծամեծ առաքինութիւնսն ածել զնոսա, բայց քանզի յայնմ իսկ չէին պիտանիք, զխոնարհագոյնսն պատուիրէ. զի թէ զմեծամեծացն ձառեալ էր, և ոչ այնց ևս անասային, այլ յայմմ իսկ վրիպէին։

Վասն այնորիկ և մեք խոնարհագունօքս նախ կրթեմք զձեզ. քանզի գիտեմք իսկ, եթէ կարի ծանր թուի ձեզ չքաւորութիւն բեռնն. և որչափ 'ի բացէ են երկինք յերկրէ, նոյնչափ և 'ի ձէնջ այն զգաստութիւն։ Եւ այնպէս իցէ, ապա հարկ է 'ի խոնարհագոյն պատուիրանսն յորդորել. նա և այն իսկ չէ սակաւ մխիթարութիւն։ Բայց և 'ի մէջ հեթանոսաց գործեցաւ այսպիսի իրաց ուղղութիւն, թէպէտ և ոչ դիպող կամօք մերկացան յայմ ընչից։ Վասկայն և մեք շատ համարեսցուք առ 'ի ձէնջ զէթ զողորմածութեան ուղղութիւս առատութիւն ցուցանել։ Այլ եթէ յուղն անկանիցիք, վաղվաղակի իսկ և յայն գայցէք։ Իսկ եթէ և զայն չառնիցեմք, որում թո-

ղութիւն արժանի լինիցիմք. որոց զՀնոլքն անցանել հրամայեցաւ, և քան զՀեթանոսաց խմաստունսն վատ թարագոյն գտանիցիմք։

Այս արդ զի՞նչ ասիցեմք, յորժամ պարտ էր հրեշտակս լինել և որդիս ՅՍ, և ոչ զմարդիկն լինելոց պահիցեմք զաահման։ Օ ի յափշտակելն և ագահել՝ ոչ մարդկան զգծութեան է, այլ գազանաց անագորոյնութիւն. մանաւանդ թէ և սատանի քան զնոցայն, որք յայլոց վերայ յարձակիցին. զի նոցայն բնութիւն ընտածին բարք են։ Այս մեք որ խօսիմքս և իմաստութիւն պատուեալ եմք, անցանելով ընդ սահման բնութեան՝ անկանիցիմք 'ի չաղնութիւն, յո՞ր ներել թողութիւն վայելիցեմք։ Օ մտաւ ածեալ այսուհետև զչափ ըղգաստութեան՝ որ կայ մեզ առաջի, զի գոնէ՛ 'ի մէջն ժամանեսցուք և 'ի հանդերձելոց պատժոցն ապրեսցուք, և տակաւ յառաջ մատուցեալ 'ի կատար բարութեանն ելցուք. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ մերոյ Յիսի Քրիստի. ընդ որում հօր միանգամայն և սուրբ հոգւոյն փառք, իշխանութիւն և պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ԲՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

«Լայեցարուք ընդ շուշանն վայրենի զիսրդ առէ, ոչ վաստակէ և ոչ նիւթէ. բայց ասեմ ձեզ, և ոչ Սողոմոնն յամենայն 'ի փառս իւր զգեցաւ իբրև զմի 'ի նոցանէ»։

ՅՈՐԺԱՄ ասաց վասն կարևոր կերակրոցն, և եցոյց եթէ ոչ վասն այնր ինչ պարտ էր հոգալ, ապա 'ի թեթևագոյնն փոխէ. զի ոչ այնպէս ինչ կարևոր է հանդերձն իբրև զկերակուրն։ Լաւ ընդէր ոչ և ասաց զնոցն հաւուցն օրինակ բերիցէ 'ի մէջ, և յիշիցէ ըզսիրամարգ կամ զփոր կամ զոչխար. զի բազում ինչ օրինակս մարթէր առնուլ անտի։ Այլ զի յերկոցունց կողմանց կամի ցուցանել զառաւելութիւն. 'ի նուազութենէ նուազեցն՝ որ այնչափ փառաւոր են վայելչութիւք, և յառաւելութենէ գեղեցկութենն՝ զոր տուեալ է շուշանացն վայրենեաց. վասն այնորիկ ապա և ոչ շուշան իսկ կոչէ զնոսա, այլ խոտ վայրենի։ Լա և յայնմ ևս իսկ չեկաց, այլ դարձեալ միւս ևս նուազութիւն յաւելու. «Որ այսօր է, և վաղիւ կորնչի»։ Լաւ որ ևս կարի նուազագոյնն է, եթէ «'Ի հնոց անկանիցի»։ Լաւ ոչ ասէ թէ զգեցուցանէ, այլ թէ «Այնպէս զգեցուցանէ»։

Տեսանե՞ս ամ ուրեք զբազում առաւելութիւն. և զայս յայն սակս ասէ, զի զնոսա մերմոքեցուսցէ. վասն որոյ և յարէ 'ի նոյն, եթէ «Ոչ ապաքէն առաւել ևս զձեզ»։ Զանգի և այս զբազում ինչ յայտ առնէ. և զձեզն ասելով՝ զառաւել պատիւ և զփոյթն զոր ունի ընդ ազգիս մերում՝ ակնարկէ։ Որպէս զի ասիցէ, թէ զձեզ՝ որոյ զոգիսդ ընդ հեաց, զորոց մարմինդ եստեղծ[1], վասն որոյ զամ երևելիսս արար, վասն որոյ զմարդկաբնն առաքեաց և զօրինն ետ, և բազում և այլ ևս բարութիւս զոր-

1 'Ի լուս. «ստեղծ»։

ծեաց, վասն որոյ զմիածին որդին էտ։ Եւ քանզի զնմա յայտնի եցոյց, ապա և մոբմոքեցուցանէ և ասէ. «Ա՛յ, ասէ, Թերահաւատք»։ Զի այնպիսի իսկ միտք վայել էին խրատտուաց. ոչ միայն ողբել, այլ և կսկծեցուցանել. զի առաւել զարթուցանիցէ 'ի հաւանութիւն բանիցն ասացելոց։ Որովք ոչ միայն չհոգալ ուսուցանէ, այլ և մի քքուել կարի ընդ պէս պէս և ազգի ազգի հնդերձս. զի խոտոր նման է վայելչութեան, և դալարուոյ պայծառութեան. մանաւանդ զի պատուականագոյն ևս է խոտն քան զայսպիսի պատմուճանս։ Եւ արդ զի մեծամտիցես այնու՝ որ բուսմ խոտոյն պայծառութիւն յոյժ յաղթել կարէ։

Յես, զիարդ 'ի սկզբանն թեթև իմն ցուցանէ ըզհրամանն. և 'ի հակառակացն՝ և յորոց կասկածէին, մերժէ զնոսա։ «Հայեցարուք, ասէ, ընդ շուշանն վայրենի». և յարէ 'ի նոյն, թէ «Ո՛չ վաստակին». զի յաշխատութենէ ազատս առնիցէ։ Ո՛չ եթէ չհոգալն աշխատութիւն ինչ իցէ, այլ հոգալն։ Եւ զոր օրինակ ասելովն՝ եթէ «Ո՛չ սերմանեն», ոչ եթէ զսերմանելն ինչ խափանիցէ, այլ զհոգն. և ասելովն՝ թէ «Ո՛չ վաստակէ և ոչ նիւթէ», ոչ եթէ ըզգործն ինչ խոտէ, այլ զտատամանելն։

Զի եթէ Աղօտմովն պարտեցաւ 'ի գեղեցկութենէ նոցա, և ոչ միանգամ միայն կամ երկիցս, այլ յամ իսկ 'ի թագաւորութեանն իւրում։ Եւ չկարէ ոք ասել, եթէ երբեմն այնպիսի ինչ զգեցոյր, և երբեմն ոչ նոյնպիսի, այլ թէ և ոչ մի օր այնպիսի զարդուք զարդարեցաւ։ Վասնզի ասելովն, թէ «Յամենայն 'ի փառս իւր», յայտ առնէ, թէ յամ իսկ 'ի թագաւորութեան իւրում այնպիսի ինչ ոչ զգեցաւ։ Եւ ոչ եթէ 'ի միոյ ծաղկէն պարտեցաւ և միւսումն նմանել կարացս, այլ յամենեցունց միանգամայն յաղթեցաւ։ Զայն որոյ և ասէ իսկ, եթէ «Ո՛չ իբրև զմի 'ի նոցանէն»։ Զի որչափ ինչ 'ի մէջ Հշմարտութեան և ստութեան իցէ, նոյնչափ 'ի մէջ հանդերձիցն և ծաղկանց։ Զի եթէ նա՝ որ յայտնի քան զամ թագաւորս փառաւոր էր երբեմն, յանձին կալաւ զպարտութիւն. իսկ դու՝ որ ոչ այնպիսի ոք ես, յաղթել չկարիցես պայծառութեան. մանաւանդ զի ոչ սակաւ

ինչ մեծ իցես յայնպիսի գեղեցկութեան։ Այս և խրատ տէ իսկ զմեզ այսու չցանկանալ բնաւ զարդուցն պաճուճանաց։ Այլ արդ տես զվախճանն, զի յետ յաղթութեան՝ ի հնոց անկանելոց է։

Այնքէ նուազկոյն, որք յոչինչ պէտս համարեն, այնպիսի դարմանս ցուցանէ՝ ասէ, որչափ ևս առաւել քեզ պարգևեսցէ, որ քան զամ երևելիքս պիտանացու[1] ես այ։ Այս վասն էր արդեաք այնպէս գեղեցիկ արար զնոսա ասէ։ Օ՛ի զիւր խնամատութեան ցուցանիցէ, և զառաւելութեան զօրութեան. որպէս զի ամ ուսուցէք զնորա փառսն ուսանիցիմք։ Վասնզի ոչ եթէ երկինք միայն պատմեն զփառս այ, այլ և երկիր։ Այս զսոյն Դաւթի իսկ յայտ արարեալ ասէր, եթէ «Օրհնեցէք զնոր ծառք պտղաբերք և ամ մայրք»։ Կէսքն պտղովք և կէսքն մեծութիւքն և կէսքն գեղեցկութիւքն փառաւորեն զարարիչն։ Օ՛ի բազում իսկ և այս առաւելութեան խնամատութեան է նշանակ, յորժամ և՝ ի կարի նուազագոյնսն, նորա խնամքն երևեսցին։ Օ՛ինչ նուազագոյն քան զայն կայցէ, զի որ այսօրն իցէ և վաղիւ չիցէ, և յայնմ ևս զայնպիսի պայծառութեան ցուցանիցէ։ Զ՛ի որ խոտոյն՝ որ չէ ինչ՝ ի պէտս, և ճարակ հրոյ, զայնպիսի գեղեցկութիւն ընդհանուց, զիարդ ոչ քեզ՝ որ՝ ի պէտս հաստատեցար, տայցէ զամ պէտս։ Որ ինչ քան զամ ինչ նուազագոյնն էր՝ այնպէս զարդարեաց, որ ոչ՝ ի պէտս ինչ հաստատեցաւ, այլ միայն՝ ի զարդ և յառաւելութեան, որչափ ևս առաւել զքեզ՝ որ քան զամ ինչ պատուականագոյն ես, ամենայն պիտոյիւք պատուիցէ։

Այս իբրև եցոյց զայդ բազում խնամն և զդարմանն, ապա պատչաճ էր փոքր մի և ընդոստուցանել զնոսա. սակայն և զայն խնայելով. քանզի ոչ եթէ զանհաւատութեան ինչ նոցա, այլ զթերահաւատութիւնն բամբասէ։ «Օ՛ի եթէ զնոսն վայրենի, ասէ, ոչ՝ այնպէս զգեցուցանէ, որչափ ևս զձեզ՝ այ թերահաւատք»։ Զ՛ի՞նչ է և ինքն է որ զամ ինչ առնէ, ըստ այնմ եթէ «Զ՛ամենայն ինչ նոսա եղև, և առանց

1 Զ՛ի լուս. զամ որ է լուսոփոյն գիրքն։

նորա եղև և ոչինչ», բայց սակայն չև և զանձնէ ինչ Ճառէ։ Օ՛ի զայն և եթե բաւական համարի առ ժամանակն, յիւրաքանչիւր պատուիրանն զիշխաւ նութիւն ցուցանիցէ ասելովն, եթէ «Լուարուք զի ասացաւ առաջնոցն, այլ ես ասեմ ձեզ»։ Այլ արդ ընդ այն մի ինչ զարմանայցես՝ եթէ յետ այնորիկ և թաքուցանիցէ զանձն, կամ խոնարհագոյնս ինչ զինքն խօսիցի։ Վասնզի դեռ 'ի մին և եթե փութայր, զի դիւրընկալ առնիցէ նոցա զբանն, և ամ իւիք ցուցցէ թէ ոչ ած ոք հակառակ այ է, այլ միաբան և միախորհուրդ հօր. զոր և յայսմ վայրի իսկ առնէ։ Օ՛ի յայնչափ բանս ասէպ ծախել զինքն 'ի միջի դնէ։ Այլ արդ ընդ խմաստութիւն նորա է զարմանալ, և ընդ խնամն, և ընդ դարմանն, ընդ ամ իսկ ընդ մեծամեծս և ընդ փոքունսն։ Օ՛ի յորժամ զԱրուսաղէմ խօսէր, քաղաք մեծի արքայի կոչեաց. և յորժամ զերկնից, աթոռ այ անուանեաց. և յորժամ զամ աշխարհաց տեսչութիւն Ճառէր, անդր 'ի վերս զամ առ հայր հանեալ ասէր, եթէ «Օ՛արէ դակն իւր ծագէ 'ի վերայ չարաց և բարեաց, և՝ ածէ անձրև 'ի վերայ արդարոց և մեղաւորաց». և յաղագս ուսուցանել՝ ասէր, եթէ զի «Նորա է արքայութիւն և զօրութիւն և փառք»։ Այլ ասաս յորժամ վասն խնամոյն Ճառեալ, յայտ առնէ, եթէ և 'ի փոքունսն ամենահնար Ճարտարապետ է։ «Օ՛ի եթէ զնոսան վայրենի, ասէ, այնպէս զգեցուցանէ՝ ած»։

Այլ ոչ ուրեք իւր հայր կոչէ զած, այլ նոցա, զի և պատուոյն անուամբ ընդոստուցանիցէ զնոսա փոքր մի. և դարձեալ յորժամ իւր և ես հայր կոչիցէ, մի ինչ ցասնուցուն։ Այլ արդ եթէ վասն դոյզն ինչ և կարևոր իրաց չիցէ պարտ հոգալ, որոմ նեբեբոյ և թողուլթիւ վնիցին արժանի՝ որք վասն մեծամեծաց ինչ և չպիտոյից հոգայցեն. որք ոչ և 'ի քուն մտանիցեն, մինչ ոչ զայլոց ինչ յաջշտակիցեն։

Այլ արդ «Ա՛յի, ասէ, հոգայցէք և ասիցէք, եթէ զինչ կերիցուք կամ զինչ արբցուք կամ զինչ ըզգեցցուք. զի զայս ամ հեթանոսք երկրի խնդրեն»։ Տեսանես, դարձեալ պատկառեցուցանէ զնոսա, և յայտ առնէ՝ թէ չեն ինչ խիստ և ծանրատաղտուկ

հրամանքն։ Օ՛ի զոր օրինակ յորժամ ասացն, «Լ՚Թէ սիրէք զայնոսիկ՝ որ սիրեն զձեզ, զինչ աւելի՞ զործէք, քանզի և հեթանոսք զնոյն զործեն». զի հեթանոսաց յիշատակաւն էած զնոսա՛ ի մեծ ատեանն. նոյնպէս և աստ զնոսին՝ ի մէջ բերելով՝ կսկծեցուցանէ. և ցուցանէ թէ կարևոր իմն պարտ պահանջէ՝ ի մէնք։ Զոր քան զդպրացն և փարիսեցւոց պարտ իցէ առաւել արդարութի՛ ցուցանել, իմ իմիք արժանի լինիցիմք, զի ո՛չ միայն ըստ նոցայն չանցանիցեմք, այլ քան զհեթանոսացն նուազութի՛ևս չար ցուցանիցեմք, և նոցին կարձմտութե՛ն նմանօղք լինիցիմք։ Լ՚այց ո՛չ միայն կարի կսկծեցուցանէ, այլ մեծ թարութե՛ն ևս՝ ի մէջ բերեալ՝ ասէ, եթէ «Գ՚իտէ հայրն ձեր երկնաւոր զնա՛մ ինչ որ պիտոյ իցէ ձեզ»։ Լ՚ս ո՛չ ասաց՝ եթէ գիտէ՝ ած, այլ թէ գիտէ հայրն ձեր. զի զնոսա՝ ի մեծ յոյսն հանիցէ։ Լ՚Թէ հայրն է՝ ցէ, և այսպիսի հայր, ապա ո՛չ ժուժայցէ անտես առնել զորդիսն, յորժամ յանհնարին ինչ չարիս իցեն. քանզի և մարդիկ յորժամ հարք իցեն, ո՛չ տանին զչարչարանս ծննդոց իւրեանց։ Լ՚ս ընդ սմին և զայլ իմն միտս մերժէ ասելովն, եթէ «Լ՚ա գիտէ զնա՛մ զպէտս ձեր»։ Պ՚ետք աւելորդք ինչ իցեն, ասէն, պէտքն, զի արհամարհիցէ. թէպէտ և զաւելորդսն իսկ չարհամարհիցէ, որպէս և զնոսն իսկ վայրենի. նա աւանիկ կարևորքն իսկ են։ Որպէս զոր կարծես եթէ պատճառք հոգոց իցեն քեզ, զնոյն բաւական ցուցանեմ քեզ աղաւաղ՝ ի հոգոցն։ Լ՚ապա թէ ասիցես, վասն այնորիկ պարտ է ինձ հոգալ՝ զի կարևոր պէտքն են. և ես զնորին հակառակն ասեմ քեզ, թէ վասն այնորիկ մի՛ հոգայցես՝ վասն զի կարևոր պէտքն են։ Օ՛ի թէպէտ և աւելորդ ինչ էին, տակայն և այնպէս չէր պարտ յանձն վստահ լինել՝ եթէ անձամբ ինչ կարէիր ստանալ։ Լ՚ս քանզի կարևոր պէտքն են, վասն այնորիկ իսկ չէ պարտ երկմտել։ Օ՛ի ո՞ր հայր իցէ՝ որ ժուժալ կարիցէ զկարևոր պէտս որդւոցն չկատարել։ Լ՚ս վասն այնորիկ զնորհեալս՝ ած, քանզի արարիչ է բնութե՛ն, և հաւաստեաւ զիտէ զպէտսն։

1 Ի լուս. ընդեղ։

Այլ զայն ոչ կարեմ ասել, թէ գիտեմ՝ զի հայր է, բայց զկարևոր պէտսն զոր խնդրեմ՝ ոչ գիտէ։ Օ՛ի զընուութիւնն գիտէ, և արարիչ նորին է, և այնպիսի ստեղծ զնա. անտի յայտ է՝ թէ և զպէտսն Ճարտար գիտէ. զի ոչ եթէ իւրում ստեղծուածին Հակառակ ինչ կամիցի կալ, եթէ այնպիսի ինչ արար, և 'ի պէտ տայիցն զրկիցէ։

Այլ արդ մի՛ ինչ հոգայցեմք. զի ոչինչ աւելի անտի զտանեմք, բայց անձանց և եթ Հալանս։ Յորժամ 'ի հոգալն և 'ի չհոգալն պատրաստիցէ մեզ զպէտսն, զինչ ինչ աւելի 'ի հոգոցն շահիցիմք, բայց միայն զատաստանս և աւելի։ Արանզի և ոչ յորժամ 'ի Ճաշ ոք յաւագաց երթայցէ, պարտիցի հոգալ թէ զինչ հասանիցէ ուտել. և ոչ յորժամ յաղբեւր ոք երթայցէ, թէ զինչ հասանիցէ ըմպել։ Այլ արդ մի՛ մեք, որ քան զՆմ աղբեւրս և քան զՆմ Ճաշս և ընթրիս կազմեալս զառատաբուղխ զՆոյ պարգևսն ունիմք, աղքատ ինչ համարիցիմք։ Ա՛յս և այլ իմն միտս 'ի նոյն յաւելեալ՝ տայ խրախոյս։

«Խնդրեցէ՛ք, ասէ, զարքայութի՛ւն և զարդարութիւն նորա. և այս Ամ տայցի և յաւելցի ձեզ»։ Այլ երբև զՀոգսն զՆմ փարատեաց յոգւոցն, ապա և զերկնից յիշեցուցանէ։ Արանզի զՀինսն քակել եկն, և 'ի վերին աշխարհն կոչել. վասն այնորիկ Ամ հնաբիւք հնարի, զի յաւելորդացն զերծուցանիցէ։ Վա՛յ որոյ և զՀեթանոսս իսկ 'ի մէջ ածէ, եթէ «Օ՛ այս Ամ հեթանոսք խնդրեն». որոց աշխատութի՛ն Ամ յերկրաւորսս և եթ է, և զՀանդերձելոցն և զերկնաւորաց չունին ինչ փոյթ 'ի մտի։ Այլ ձեզ, ասէ, չէ պարտ զայս լաւ համարել, այլ զայն։ Արանզի ոչ եւ թէ վասն այնորիկ եղէք, զի կերիցուք և արբցուք և Հանդերձ զգեցցուք, այլ զի՝ այ հաՃոյ լինիցիմք, և Հանդերձելոց բարութեցն հասանիցեմք։ Արանզի և ասէ իսկ, եթէ դուք «Խնդրեցէ՛ք զարքայութիւն երկնից, և այս Ամ յաւելցի ձեզ». և ոչ միայն ասաց՝ թէ տայցի, այլ և յաւելցի. զի ուսանիցիս, եթէ չէ ինչ մեծ երկրաւոր պարգևքս, և ոչ անցաւորքս համեմատ հանդերձելոցն։ Վասն այնորիկ ոչ հրամայէ խնդրել զայս, այլ զայն. և վստահ լինել

թէ այս եւս ընդ այն յաւելու։ Եւ արդ խնդրեա՛ զՀանդերձեալսն, զի առնուցուս և զմնտաւորսս. մի՛ խնդրեր զերևելիսս, և չերթան ուրեք 'ի քէն։ Բան զի և անարժան իսկ է քեզ վասն այսպիսեացս աղաչել զնոսն։ Որում զնա՛մ զիպիցէ և զՀոգ վասն անձառ ուիցն պարտ իցէ յանձին ունել, այնպիսին անձամբ զանձն յամենի առնէ, յորժամ յանցաւոր ցանկութիւնս ծախիցէ զվաստակս։

Եւ զկարդ, ասեն. Հրամայեաց արդեւք հաց խընդրել։ Ա՛յլ օր ըստ օրէն. որպէս ասաց՝ թէ մի՛ հոգայք, այլ թէ զվաղուն մի՛ հոգայք։ Այ՝ հանգամայն զի և յազատութիւն հանիցէ զոգին, և ընդ կարևորսն բևեռիցէ։ Ա՛յլ թէ կարօտ յիշեցուցանելոյն ինչ իցէ ՝ուծ, հրամայէ խնդրել, այլ զի ուսցուք թէ նորա օգնականութիւն առնեմք զնոչ և առնիցեմք ուղղութիւնս. և զի ընտանենայցեմք նմա խնդրուածովքն։

Տեսանես, զի որ զմեծամեծսն խնդրէ, և զմանունսն եւս առնու։ Ա՛յլ վասն այնորիկ, ասէ, չհրամայեցի հոգալ և խնդրել՝ զի տառապիցիք և մերկ գնայցէք, այլ զի եւս աւելի 'ի բարութիւն վայելիցէք։ Որպէս զողորմածութիւնն թաքուցանելով՝ ո՛չ էթէ 'ի գործոցն ինչ կարէ, այլ եւս աւելի պարգևս խոստանայ, յորժամ ո՛չ 'ի ցոյց ինչ մարդկան առնիցէն, և զերկիցին 'ի հատուցմանէ։ Բանզի և ասէ իսկ, էթէ « Հայրն քո՝ որ տեսանէ 'ի ծածուկ, հատուցէ քեզ յայտնապէս »։ Այնպէս և ասա՛ չհրամայէ խնդրել զկերակուրս. զի չխնդրելովն՝ եւս աւելի տայ յաճախագոյնս։ Ա՛ն այնորիկ, ասէ, չհրամայեմ խնդրել, ո՛չ զի չառնուցուս, այլ զի եւս առատագոյնս՝ որպէս քեզ պատշաճ իցէ առնուլ՝ առնուցուս։ Օ՛ի մի՛ հոգոցն զբօսանօք՝ և յայնմանէ եւս անկանիցիս, և հոգևորացն չլինիցիս արժանի։

« Մի՛ հոգայք վասն վաղուի, զի շատ էն աւուրն իւր չարիքն »։ Օ՛տառապանն և զվարանն ասէ չարիս աւուրն։ Ա՛յն իսկ չիցէ՞ շատ քեզ՝ զի 'ի քիրսն երեսաց հրամայեցար ուտել զՀաց քո. և այլ եւս տառապանս 'ի վերայ տառապանացն 'ի հոգոցն յաւելուցուս քեզ։ Իսկ չարիս ասա՝ ո՛չ զչարութիւնն ինչ

ասէ, քաւ լիցի, այլ զտառապանսն և զաշխատու-
թիւնն և զվնասն։ Օ որ օրինակ որպէս այլ ուր իսկ
ասէ, եթէ «Ազիցն չարիք 'ի քաղաքի, զոր ոչ ելցէ
արարեալ», ոչ եթէ դյուսիշտակութիւնս և զպա-
հուութիւնս և զայլ ինչ այսպիսիս ասէ, այլ զառ 'ի վե-
րուստ եկեալ զհարուածսն։ Լոյս այլ ուր ասէ, եթէ
«Լոյս եմ՝ որ առնեմ զխաղաղութիւն, և հաստատեմ
զչար». և արդ ոչ եթէ զչարութիւնն ինչ ասիցէ,
այլ զսով և զսուր, որ բազմացն չարութիւն թուի։
Այսպէս և հնգից նախարարաց այլազգեացն քուրմք
և իղձքն՝ յորժամ զերինչսն առանց որթուցն լծե-
ցին 'ի տապանակին, և թոյլ եղուն իւրովի երթալ,
զանձասաստ հարուածսն չարիս կոչէին, զիւրեանց
արտմութիւնն և զվարանսն։ Այսպէս և աստ այնպէ-
սի իմն ասէ, եթէ «Շատ են աւուրքն չարիքն իւր»։
Օ 'ի ոչ այնպէս ինչ ցաւեցուցանէ զոգիսն՝ իբրև ըզ-
հոգս։ Որպէս և Պաւղոս յորժամ 'ի կուսութիւնն
յօժարեցուցանէր, ասէր՝ եթէ «Կամիմ զձեզ՝ զի
անհոգս իցէք»։

Լոյս յորժամ ասէ եթէ «Վաղիւն վասն իւր հո-
գասցէ», ոչ եթէ վաղիւն հոգայցէ, վասն այնորիկ
ինչ ասիցէ, այլ քանզի ընդ ռամիկ մարդկան խօսէր,
'ի բազմաց սովորութիւն դէմն իմն կամի դնել բանին։
Լոյս աստ խրատ իմն տայ, բայց յառաջ մատուցեալ՝
և օրէնս իսկ դնէ զնոսն։ «Մի՛ ստանայք ձեզ, ասէ,
ոսկի, և մի՛ արծաթ»։ Լոյս քանզի արդեամբք եցոյց,
ապա և բանիւք ընծայեցուցանէ նմին սաստիկ օրէնս-
դրութիւն. յորժամ դիւրընկալ զբանն արար, նախ
ինքն արդեամբք եցոյց։ Լոյս եթէ ուր եցոյց արդ-
եամբք. լուր նմին խօսք՝ որ ասէր, եթէ «Որդոյ
մարդոյ ոչ գոյ տեղի՝ ուր դիցէ զգլուխս իւր»։ Լոյս
ոչ անձամբ միայն, այլ և աշակերտօքն եցոյց զսորին
հանդէս։

Լոյս դու միտ դիր խնամոյ նորա, զիարդ ըստ ամ
հարցն անցանէ դուքն։ Ոչ վասն այլ իրիք հրա-
մայեմ զայս, ասէ, այլ զի զձեզ ազատս արարիցէ յաւ-
ելորդն բեռանց։ Օ 'ի թէ այսօր հոգայցես վասն
վաղուի, և դարձեալ 'ի վաղիւն վասն միւսոյ աւուրն
ոչ հոգայցես, զինչ օգուտ իցէ այսր աւուր հոգալն։

Օ՛ ածես աւելի կարծիս 'ի վերայ աւուրն՝ քան զիւրս իւրոյն [1] հասեալ նմա զկարիսն, ընդ իւրում ցաւսն և զվաղուն և ցաւս յաւելուլ։ Բայց զի յա-Ճախագոյն և կսկծեցուցանիցէ զնոսա, զբեթէ ըղ-ժամանակն իբրև զնչաւոր ինչ ՝ի՛ասեալ ցուցանել, եթէ բողոք ինչ բարձեալ ունիցի զնոցա խոշտանգա-նացն։ Բ՛ւեր զօրն, զի նմա և եթէ հոգայցես. և արդ ընդէր զմիւսոյ աւուրն զմիշտն նմա յաւելուցուս. չիցէն նմա շատ իւրոց հոգոցն բեռինք. ընդէր այլ և մեծ բեռինս դնիցես 'ի վերայ։ Բ՛սկ յորժամ օրէնսդիրն՝ որ զմեզ դատելոց է, այսպիսի բանս խո-սեացէ, ո՛չ ապաքէն առաւել իմն յոյս խոստանայցէ։ Բ՛անզի ինքն իսկ վկայէ, եթէ տառապանօք և ցա-ւովք են կեանք աշխարհիս, զի և միոյ աւուր հոգքն կարեն վշտացուցանել զմեզ։

Բ՛ս մեք թէպէտ և այսպիսի բանս միշտ լսեմք, սակայն այսչափ և այսպիսի բանս լուեալ՝ զաստեացս հոգամք, և զերկնից և ո՛չ երբեք. այլ եղծաք զկարգն, և երկրքումքք կռուիմք ընդ բանիցս ասացելոց։ Բ՛ս միտ դիր. մի՛, ասէ, խնդրեաք աստէն ինչ. և մեք ամե-նևին զայս խնդրեմք։ Օ՛երկնիցն խնդրեցեք, ասէ. և մեք և ո՛չ մի ժամ ծախեմք յայն. այլ որչափ 'ի մարմնաւորացս ցուցանեմք փոյթ, նոյնչափ 'ի հո-գևորսն ծուլութիւն, մինաւանդ թերևս աւելի. և ո՛չ ցանգ այնր ժամանակ է, և ո՛չ նմին միշտ մարթ։ Բ՛հաւասիկ և զաւուրս իսկ արհամարհեմք, և զքսան օր, և զհարիւր իսկ. թէ այնպէս իցէ՝ հարկ է երթալ 'ի ձեռս դատաւորին։ Թ՛երևս 'ի յամենն միսի-թարութիւն ինչ կայցէ։ Ո՞ր միսիթարութիւն կայցէ, ուր ցանգ պատժոց և տանջանաց ակն ունել հասա-նիցէ։ Բ՛թէ միսիթարութիւն 'ի յամենցն կամիցիս առ-նուլ, ապաշխարութեամբ շահեաց զայնպիսի ուղղուն. զի թէ զերկաբել պատժոցն սիսիրութիւն ինչ համարիցիս, որչափ և առաւել զանկանելն ընդ պատժովք պարտ իցէ հաշուել։

1 'Ի լուս. զիւրս ուրոյն։

ԾՈՐԴՈՐԱԿ

Այժ արդ այսուհետև գործ արասցուք զյամենն ամենևին յանհնարին տանջանացն ապրելոյ։ Վասն զի չիք ինչ ծանրատաղտուկ 'ի հրամանացն, այլ այնպէս թեթև և դիւրին, մինչև յօժարութիւնն միայն սերտ նպաստ լինել կարօղ է զամենայն վնասել, թէ պէտ և ընդ բաղում յանցանօք իցեմք։ Վասնզի և Մանասէ, որ յայնչափ աղտեղութիւս յանդգնեալ էր, որ և 'ի սրբութեան ձեռնամուխս եղև, և զպղծութիւնն եմոյծ 'ի տաճարն, և սպանութիւնք եղեալ զքաղաքն, և այլ ևս մեծամեծ չարիս քան զթողութիւնն գործեաց. սակայն յետ այնչափ և այնպիսի անօրէնութեանց զամենայնս լուաց և 'ի բաց ընկէց։ Օ իարդ, և որովհետև։ Պաշխարութիւնք և կամք։ Վասնզի չիք և չէն իսկ մեղք, որ ոչ խորշիցեն և տեղի տայցեն յապաշխարութենն զօրութեան. մանաւանդ թէ յոյժ իսկ շնորհացն։ Վասնզի թէ դառնայցեմք և եթէ, զնա ունիմք ամենայն ուրեք պատսպարան մեզ։

Եթէ կամիցիս բարի լինել, չիցէ ինչ որ զքեզ արգելու։ Մանաւանդ թէ իցէ իսկ, սատանայ որ արգելուլ կամի, բայց չէ ձեռնհաս. քանզի դու զՀայրն ընտրեցեր, և այնու ածես զնա յօգնականութիւն։ Իսկ եթէ չկամիցիս, և 'ի բաց ոստանելոյ ուշ առնիցես, նա զիարդ լինիցի քեզ զօրավիգն. զի ոչ 'ի հարկէ ինչ և բռնութիւն, այլ կամք կամի կենցուցանել։ Եթէ դու՝ յորժամ ծառայ ունիցիս, որ զքեզ ատիցէ և ատելի փախչիցի, չկամիս կրել, և այն զի կարօտ ևս իցես սպասաւորութեան նորա, որչափ ևս առաւել Ա՛ծ, որ ոչ յիւր ինչ պէտս, այլ վասն քոյոյ փրկութեան առնէ զամենայն, չկամիցի ըզքեզ բռնութիւն ունել։ Որպէս զի թէ միայն յօժարութիւն ցուցանիցես, չտայ զքեզ 'ի ձեռս, որչափ ինչ պաշարս և պաշարիցի սատանայ։

Այսպս ուրեմն մեք եմք պատճառք մերոյ կորստեան, զի ոչ մերձենամք առ նա, և ոչ պաղատիմք, և ոչ աղաչեմք որպէս արժան իցէ։ Այլ թէպէտ և մատչի

ցիմք, ոչ որպէս թէ ակն ունիցիմք առնլոյ մօտիմք, և ոչ պատշաճ հաւատովք. ոչ որպէս թէ պահանջիցեմք, այլ ձգտիմք, յօրանչելիմք, քաջքոտիմք։ Այս և կամի իսկ թէ պահանջիցի 'ի մէնք ՝ն, և կարի իսկ հնարհակալ լինի քեզ այմմ։ Այս միայն 'ի պարտապանաց, յորժամ պահանջիցի՝ հնարհակալ լինի, և զոր չէ փոխ առեալ՝ հատուցանել։ Զոր էպէտ և կարի ստէպ 'ի վերայ կացեալ տեսանիցէ զպահանջողն, և թէ չիցէ ինչ առեալ, սակայն արկանէ չափ։ Այս թէ հեղգայցես, և նա յերկարէ. ոչ զի կամի տալ, այլ զի 'ի մէնք ախորժելով կամի պահանջել։

Այսն այնորիկ և զօրինակ բարեկամին որ զիշերին չոգաւ խնդրել հաց, 'ի մէջ բերէ. և զդատաւորին որ յայ ոչ երկնչէր, և ոչ 'ի մարդկանէ ամաչէր։ Այլ ոչ զետեղեցաւ անդէն զնովին օրինակօք, այլ և արդեամբք եցոյց, յորժամ զիրենիկ ասորին լցեալ աղխաղխեալ պարգևօք արձակեաց։ Այանգի նոսա եցոյց, թէ և չիցեն արժանի, և ստէպ պահանջիցեն, տայ առատաբար։ « Զէ բարւոք, ասէ, առնուլ զհաց մանկանց և տալ շանց », բայց սակայն ետ. և հրեշտն յայտ արար, թէ ծուլեցն և ոչ զիւրեանցն տայ. թէ այնպէս իցէ՝ և առին ինչ ոչ, այլ և զիւրեանցն կորուսին։ Այդպա քանզի չինդրեցին, և ոչ զիւրեանցն առին. և սա քանզի ստէպ պահանջեաց, այլոց վրէժխնդիր կարաց լինել, և զորդւոցն առնկալաւ շունն։ Զի այնպէս բարւոք է ստէպ հպատակութիւն։ Զոր պէտ և շուն իցես, և յամիցես, նախասահման քան զայլ որդին լինիցես։ Որչափ ինչ չմնարեաց բարեկամութիւն, զայն վճարեաց յամէն։

Այս արդ մի ասիցես, եթէ թշնամի է իմ ՝ն, և չլսէ խնդ պաղատանաց։ Զ աղվաղակի արագ ելանէ քեզ 'ի խնդիր, որ ստէպ թախանձես. ոչ զի իցես [1] բարեկամ, այլ զի յամիցեսն։ Այանգի ոչ թշնամութիւն և ոչ անժամութիւն [2] և ոչ այլ ինչ կարիցէ լինել արգել։ Զի ասիցես, չիցեմ արժանի՝ չկացիս յաղօթս. քանզի և փիւնիկ ասորի կինն այնպիսի էր։ Զի ասիցես, թէ վասն զի բաղում յանցեայ,

[1] Յօրինակին մնա։ [2] 'Ի լուս. անանձնութիւն։

չկարեմ կարդալ առ ցասուցեալն։ Ա՛չ եթէ ընդ արժանաւորութիւն հայի ՝ուծ, այլ ընդ կամն։ Զի եթէ զիշխանն՝ որ յոյ ոչ երկնչեր և 'ի մարդկանէ ոչ ամաչէր, էած 'ի հաւան այրին, ուրչափ ևս առաւել զբարբարն ՝ուծ 'ի հաւան ածիցէ ստէպ պաղատանաքն։ Որպէս թէ չիցես բարեկամ, և ոչ զպարտսն խնդրիցես, և ոչ զհայրենիսն, թէպէտ և ակնկորիցես, և բաղում ժամանակս 'ի դիպահոլ կայցես, թէպէտ և քան զամենեսեսն անարդ իցես և յետին, և մինչդեռ 'ի ցասմանն և 'ի բարկութիւն իցէ՝ մատչիցիս, վաղվաղակի յինքն ամիտիցէ։ Կամեաց միայն պաղատել և միսանգամ կանգնել, և զամ առնուցուս. և զցասումն և զպատիժս վաղվաղակի անցուցանիցեսն։

Բ. Յլ ահա, ասէ, կամ յաղօթս, և չլՀարի ինչ։ Բ. Յլ չկաս ըստ այնմ օրինակի՝ որպէս կինն փիւնիկ ասորի, և բարեկամն՝ որ տարաժամ չոգաւ առ բարեկամն, և այրին՝ որ ստէպ թախանձէր զդատաւորն, և որդին անառակ՝ որ վատնեաց զինչսն հայրենի։ Եթէ այնպէս կայիր յաղօթս, վաղվաղակի հասանէիր խնդրոյն։ Զի թէպէտ և թշնամանեցար, սակայն հայր է. թէպէտ և ցասուցեալ իցէ, այլ որդեսէր է. ոչ վրէժս ընդ թշնամանացն առնու, այլ ըզքեզ խնդրէ և զդարձն 'ի չարեացն, տեսանելով և յաղօթս և 'ի մաղթանս եկեալ։

Երանի թէ և մեք այնպէս ջերմ ինչ էաք, որպէս և այն աղիք 'ի մեր գուցս յորդորին. այլ պատճառեալ թէ ինդրէ այն հուր. զի սակաւիկ մի անդր կայծակուցս նպաստ լինիցիս, և զողջոյն իսկ զբոց բարեբարութեն բորբոքեաս։ Ա՛չ զի թշնամանեցաւն՝ ցասնու, այլ զի այնու ևս թշնամանես զնա։ Զի եթէ մեք որ չարքս եմք, թէպէտ և թշնամանիցեն որդիքն՝ խորովիմք զնոքօք, ուրչափ ևս առաւել ՝ուծ, որում չէ հնար թշնամանիլ 'ի քէն, որ թշնամանիցեալ։ Յանմա՛ն, և ոչ գթայցէ։ Զի եթէ մեք որ չափով ըստ բնութեան սիրեմք, ուրչափ ևս առաւել նա որ 'ի վեր է բազմագութ։ «Երթ մոռանայցէ, ասէ, կին զծնունդս որովայնի իւրոյ, սակայն ես ոչ մոռացայց զքեզ, ասէ տէր»։

Ա՝ատիցուք առնա այսուհետև, և ասասցուք, եթէ

« Լ.յո՛ տէր, և շունք կերակրին 'ի փշրանաց՝ որ անկանին 'ի սեղանոյ տէրն իւրեանց » ։ Պատիցուք 'ի ժամու և 'ի տարաժամու. մանաւանդ թէ չիք իսկ տարաժամ մատչելոյ. քանզի տարաժամ ժամ՝ ցանգ չմատչելն է. իսկ այն որ հանապազ ցանկանայցէ խնդրել, ցանգ դէպ ժամանակ է տալոյ ։ Օ որ օրինակ հանդչելն չէ տարաժամ ժամու երբէք, նոյնպէս և ոչ խնդրելն, այլ չինդրելն է տարաժամ ժամու ։ Լ.ս որպէս զօգաս ծծելոյ կարօտ եմք, նոյնպէս և նորա օգնականութեան ։ Լ.թէ կամիցիմք՝ դիւրաաձեմք զնա զմեզ ։ Լ.ս զայս մտրգարէն յայտ առնէ, եթէ հանապազ պատրաստ է 'ի բարերարութիւն։ « Լ.բրև զառաւօտ պատրաստական, ասէ, գտցուք ըզնա » ։ Լ.անիցս անգամ թէ մատչիցիմք, տեսանեմք զի մեզ կայ և սպասէ ։ Լ.ս եթէ չոռոգանիմք 'ի նոր յորդաբուղխ վտակացն, մերոյ վատութեան գսպուվութիւն է ։ Լ.ա և հրեշտն սովիմք մեղադիր լինեալ. « Ողորմութիւն իմ, ասէ, իբրև զամպ վաղորդայնոյ, և իբրև զցօղ առաւօտին որ անցանիցէ » ։ Լ.ս զոր ասէ այսպիսի լինէ է. եթէ ես յինէն զամ լինչ հնարէցի, բայց դուք իբրև զարև ջերմաջերմ հասեալ 'ի վերայ՝ իբրև զամպ և զցօղ 'ի բաց մերժեցէք. բազում չարեօք զանբաւ առատութիւս մերժեցէք։

Որ և այն իսկ դարձեալ խնամակալութեան է. յորժամ անարժանս տեսանէ վայելելոյ 'ի բարիսն, արգելու զբարերարութիւնն, զի մի և ես ծուլագոյնս դործիցէ զմեզ։ Իսկ եթէ դառնայցեմք, և զայն ևս կարիցեմք ձանաչել եթէ մեղաք, քան զաղբեւբ առաւել բղխէ, և քան զծով յաձախագոյն զեղու։ Լ.ս որչափ շատ առնուցուս, ևս քան զևս ուրախ լինի, և յայնժամ ևս յաձախէ տալ։ Լ.յլ և իւր մեծութիւն համարի զմեր փրկութիւն, և զպարգևէն առատութիւն կարօտելոցն։ Օ որ և Պաւղոսի յայտ արարեալ ասէր, թէ « Որ՝ մեծացուցանէ զամենեսեան յամի որ կարդան առնա » ։ Յորժամ չինդրիցեմք, յայնժամ բարկանայ. յորժամ չհայցեմք, յայնժամ ըզչարի ։ Նմին իբրև իսկ աղքատացաւ, զի զմեզ մեծացուցցէ. յայն սակս ամի տարաւ, զի զմեզ 'ի խնդրել կուտեսցէ ։

Մի այսուհետև վհատեսցուք. այլ քանզի այսչափ պատճառք փրկութեան ընկալաք, և ըստ հրեշտակացն յուսոյ յոյս ունիմք, թէպէտ և զօրհնանպազ մեղանչեցեմք, մատիցուք և պաղատեսցուք և խնդրեսցուք զթողութիւն յանցանաց։ Զի այսպէս և 'ի մեղանչելն այնուհետև դանդաղագոյնս գտանիցիմք, և զսատանայ 'ի բաց մերժեսցուք, և զայլ մարդասիրութիւն 'ի մեզ կոչեսցուք, և հանդերձելոց բարութիւնցն հասանիցեմք. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յսի Քրսի. ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

« Մի դատիք, զի մի դատիցիք » ։

Եւ արդ չլցէ՞ պարտ սաստել յանցաւորաց ։ Բայ. այլ վայրապար ոչ է պարտ։ Քանզի և Պաւղոս իսկ զդոյն ասէ, մանաւանդ թէ Յն իսկ Պաւղոսիւ, թէ « Դու զի՞ դատես զեղբայրն, և կամ ընդէ՞ր անդամնես զեղբայր քո՞ » . և « Դու ո՞վ ես, որ դատես զայլոց ծառայ » . և դարձեալ « Մի՛ յառաջ քան զժամանակն դատիցիք, մինչև եկեսցէ Տէրն » ։ Եւ զիարդ այլուր ասէ, եթէ « Յանդիմանեա՛ սաստեա՛ և մխիթարեա՛ » . և « Որք յանցանիցեն, առաջի ամենեցուն յանդիմանեա՛ » . և Յն ընդ Պետրոս ասէր, եթէ « Երթ՛ յանդիմանեա՛ զնա, մինչդեռ առանձինն լցէք դու և նա » . և եթէ անսաստիցէ ինչ, առջի՛ր ևս ընդ քեզ միւս ևս ընկեր . և եթէ այնպէս ևս ոչ անսայցէ, ասասջի՛ր յեկեղեցւոջ » . և այնպէս սաստիչս հրամայեաց և տանջիչս ։ « Իսկ եթէ նոցա ևս ոչ լուիցէ, ասէ, համարեա՛լ լիցի քեզ իբրև զՀեթանոսն և իբրև զմաքսաւոր » ։ Եւ զիարդ տայր փականս աշակերտացն, եթէ չէին զոք դատելոց, ապա ամենևին խոտանք ինչ իցեն, և զուր առին զիշխանութիւն կապել և արձակել ։

Եւ այլազգս ևս . զի եթէ այն բան սիրիցէ, ապա ամենայն ինչ խախտի և քայքայի, և եկեղեցեաց կարգք և քաղաքաց օրէնք և տանց առակք ։ Զի ոչ տերն զծառայն խրատիցէ, և ոչ տիկինն զաղախինն, և ոչ հայր զորդի, և ոչ բարեկամ զբարեկամ. և այնուհետև յաձախիցեն և առիցեն չարիք ։ Եւ զի՞ ասիցեմ, եթէ բարեկամ զբարեկամ. զի թէ ոչ դատիցեմք զթշնամիսն, և ոչ զթշնամութիւնն իսկ ջրել կարեմք . և՞մ ինչ վեր 'ի վայր հարեալ եղծանի ։ Եւ արդ զի՞նչ իցէ բանն որ ասացաւ ։ Մի՞ դիցուք ՝ հաւաստեաւ, զի մի զփրկութեան դեղն և

՝ Յօրինակին ի դ-ոի-ոի ։

զօրինացս խաղաղու թիւն՝ նմին կործանու�մն որ կար-
ծիցէ. զոր յաջորդօքն իսկ յայտ առնէ, թէ «Օ՛ի
հայիս տեսանել զչիղ յական եղբօր քոյ, և 'ի քում
ականդ զգերանդ ոչ տեսանես»։

Բայց թէ բազմաց ծուլից անյայտ ինչ թուիցին,
անդուստ 'ի սկզբանէն կամիմ լուծանել զանոնս։ Օ՛ի
ասա ինձ այսպէս թուի, ոչ եթէ վայրապար զանա-
նայն մեղս չհամայէ դատել, և ոչ առ հասարակ զա-
մենեցուն յոյս հատանել որք զայսպիսիս գործիցեն.
այլ այնոցիկ՝ որք ինքեանք բեւեր չարեօք լի իցեն,
և զայլոց սակաւ մեղս բամբասիցեն, չհրամայէ դա-
տել։ Լոյս թուի ինձ, եթէ զհրեիցն ակնարկիցէ ասա-
զի այլոց վասն սակաւ և դոյզն մեղաց դառն դա-
հիճ լինիցին, և ինքեանք 'ի մեծամեծ մեղսն եկեալք
չհամարիցին ինչ։ Օ՛որ և 'ի կատարած կոյս նախա-
տէ, եթէ «Կապէք բեռինս ծանրանս և անհնարինս,
և դուք մատամբ մի չկամիք շարժել զնոսա։ Ցասա-
նորդիք զանանուի և զսամթի, և թողէք զծանր
ծանր օրինացս, զիրաւունս և զողորմութիւն և զհա-
ւատս»։ Օ՛ինքն զնոսա յառաջագոյն յայտնա-
նէ՝ որով զաշակերտացն կամիցին ամբաստան լինել.
զի թէպէտ և ոչինչ այնպիսի յանցանս յանցանէին,
սակայն նոցա յանցանս թուէին զշաբաթն չպահել,
անլուայ ձեռօք հաց ուտել, ընդ մաքսաւորս բազմել.
զոր և այլուր ասէ, եթէ «Օ՛մեղուիս քամէք, և
զուղտս կլանէք»։

Բայց սակայն հասարակաց իմն օրէնս դնէ զայս,
որպէս կորնթացւոյն Պաւղոս. ոչ վայրապար հրա-
մայեաց չդատել՝, այլ զայնոսիկ որ քան զնոսա որ 'ի
վեր իցեն՝ մի դատիք, և վասն յայտնի ինչ իրաց. և
ոչ թէ զամ յանցաւորս չհրամայիցէ ածել յուղղու-
թիւն. և ոչ խառն 'ի խուռն ինչ ամենեցուն սաս-
տէր յայտնամ, այլ աշակերտաց՝ որ զվարդապետն
դատէին. որ ինքեանք բեւեր չարեաց պատժապարտք
էին, և զայլս զանմեղս բամբասէին։ Որպէս Ղ՚ն իսկ
ասա ակնարկեաց. և ոչ վայրապար ինչ ակնարկեաց,
այլ բազում պատուհաս 'ի վերայ դնէ, և տանջանս
անվախճան։

1 Յօրինակին դ՝ գրեալ։

« Որով դատաստանաւ, ասէ, դատիք, նովին դա-
տելոց էք »։ Ո՛չ զնա ինչ, ասէ, դատապարտես, այլ
քոյմ անձին պատրաստես զահագին դատաստանն և
զանվրէպ պատիժս։ Օ որ օրինակ մեղացն Թողուլ՝
այն 'ի մէնջ է սկիզբն, նոյնպէս և դատաստանին 'ի
մէնջ է չափ դատապարտութեանն։ Ոչ պարտ նախա-
տել, և ոչ զոտս 'ի վերայ տրոփել, այլ խրատել և
միտս դնել. ոչ հպարտութիւ երթալ 'ի վերայ, այլ
զթով ածել յուղղութիւն։ Այս եթէ ոչ այսպէս, ոչ
զնա ինչ՝ այլ զքեզ մատնիցես յանհնարին տանջանս,
յորժամ ոչ խնայիցես 'ի նա։

Տեսանես, զի երկոքեան իսկ պատուիրանք թե-
թևք են, և մեծաց բարութեց պատճառք հաւանե-
լեացն. զոր օրինակ և չարեաց պատճառքն նոյն է
չանսալեացն։ Յորժամ թողուցուս ընկերին, զքեզ
յառաջ քան զնա առնես աղատ 'ի պատժոց՝ առանց
աշխատութեան. յորժամ զընդալով և արդահատելով
զայլոց յանցանս քննիցես, յաճախագոյն անձին զարդ-
դահատանացն կոյտս յայսոսիսի վնիռս տալոյ համ-
բարիցես։

Այս արդ զիարդ, ասէ. թէ պռունկիցի ոք, չա-
սեմ թէ չար է պռունկութիւնդ. և չիցէ ինչ պարտ
ուղղել զնասուածացնացն։ Այո՛, ուղղեա. բայց մի իբ-
րև զթշնամի վրէժս պահանջիցես, այլ իբրև զբժիշկ
որ հնարիցի դեղս կազմել։ Զանգի ոչ ասաց, եթէ
մի ցածուցանիցես զյանցաւորն, այլ թէ մի դատի-
ցիս. զի մի դառն դահիճ, ասէ, լինիցիս նմա։ Այս
այլ ազգ է. ոչ եթէ վասն մեծամեծացն և անհնա-
բին մեղացն իցէ ասացեալ. այլ վասն այնպիսեացն
ինչ՝ որ և 'ի մեղս իսկ չիցեն համարեալ. քանզի և
ասէ իսկ, թէ « Օ՛ն հայիս տեսանել զչիզ յական
եղբօր քո »։ Օ՛ որ և բաղուզք իսկ այժմ առնեն.
յորժամ տեսանիցեն զվանական ոք, եթէ աւելի ինչ
հանդերձիկ ունիցի, զօրէնս տերունական առաջի
դնեն. և ինքեանք հանապազ բեւեր յափշտակութիս
յափշտակեն. և եթէ 'ի կերակուր մտաբերիցէ,
դառն դատախազք լինին։ Այս զայն ոչ գիտեն, եթէ
յիւրեանց մեղն ևս աւելի յաւելուն հոր, և զբր-
կեալ գտանին ամենևին 'ի պատասխանուց։ Զանգի

և ասէ իսկ, եթէ «Կեղծաւոր՝ հան նախ զգերանդ յականէ քումմէ»։ Լաւ ասա մեծ ցասումն իմն յայտ առնէ առ այնոսիկ՝ որ այսպիսի ինչ միտս ունիցին. որպէս և այնմ՝ որ զհարիւր դահեկան պահանջէր 'ի պարտապանէն, սաստեաց. «Ծառայ չար, ասէ, զամ պարտն թողի քեզ». նոյնպէս և ասա կեղծաւոր ասէ։ Դիանզի ոչ եթէ խնամակալութիւն ինչ միտք ի ցեղն այնպիսւոյն, այլ մարդատեցիկ բարոյք. զի զերեսս բարեկամի ցուցանէ, և զգործ թշնամւոյ գործէ. զվարդապետի թէկին ածէ, և ոչ յաշակերտաց կարգի գտանի։ Ո՞ան այնորիկ իսկ և կեղծաւոր կոչէ զայնպիսին։ Լաւ արդ որ առ այլն դժնդակ իցես, այնպէս զի և զմանուանն և տեսանիցես, 'ի քոյն զիարդ ծուլայցես, զի և զմեծամեծն անգամ չկաս միս տեսանել։

Լաւ բարւոք իսկ ասէ, եթէ «Հան նախ զգերանդ յականէ քումմէ»։ Տեսանես, զի ոչ արգելու դատել, այլ նախ հրամայէ զգերանն յականէ հանել, և ապա զայլն ածել յուղղութիւն։ Լա զիւրն իսկ քաջ գիտէ քան զընկերին. և մանաւանդ զմեծամեծն քան զմանուանն. և զանձն որ քաջ սիրէ [1] քան զընկերն. զի թէ այնչափ խնամակալ իցես, նախ անձին խնամ ունիջիր։ Օ՛ի թէ զանձինդ ինչ չհոգայցես, յայտ է թէ և ոչ ընկերին ինչ խնամ ունելով դատիս, այլ առ ատելութեամբ և ճաղել կամիս. զի թէպէտ և դատել ևս պատշաճ իցէ, յանարատէ ումեքէ, և ոչ 'ի քէն։

Լաւ քանզի մեծամեծս և բարձրագոյնս զառաքինութեանն կարգեաց հրամանս, և զի մի որ ասիցէ, եթէ բանիւք դեւբ է առաքինանալ, ցուցանել կամի զհամարձակութիւն, թէ և ոչ միոյ իմիք յաստացելոցն պարտ է, այլ զամ իսկ հրամանացն զուղղութիւն յանձին ցուցանել. վասն այնորիկ ասաց զառակս։ Լաւ քանզի ինքն իսկ յետոյ դատելոց էր ասելովն, թէ «Ո՛ այ ձեզ դպիրք և փարիսեցիք». և չէր իմիք պարտական յաստացելոցն. քանզի ոչ զչիզ ուրուք հանէր, և ոչ գերան յական ունէր, այլ սուրբ ոամիւ

[1] Յօրինակին գիրէ։

էր. և զամենեցուն յանցանս ածէր յուղղութիւն։ Զի պարտ, ասէ, զայլս դատապարտել, յորժամ ոք նորին մեղաց պատժապարտ իցէ։

Եւ զի զարմանաս, եթէ նա այսպիսի օրէնս էդ, ուր և աւազակն իսկ 'ի խաչին ասէր այսպիսի ինչ ցընկերն, եթէ «Զերկնչես յայ, զի 'ի միում դատաստանի էք». և այսու զԲՐՈՆ միտն ցուցանէր։ Զոր ոչ միայն զգերանն յականէ չհանէս, այլ և տեսանես իսկ ոչ. և զընկերին շիւղ ոչ միայն տեսանես, այլ և դատիս էս, և հանել ժոլրհիս։ Զոր օրինակ եթէ ջրզողեալ ոք իցէ, և այլ ինչ անհնարին ախտիւ ծնգեալ, և գիւրն թողեալ, և այլումն որ սաւ ինչ այտումն 'ի մարմնի ունիցի, մեղադիր լինիցի։ Զի թէ չար ինչ իցէ չհայել յիւր մեղն, ապա կրկին և երեքկին այն չար է՝ որ զայլն դատիցի, և ինքն զիւր գերանն յական ոչ զգայ. զի էս ծանր քան զգերանն՝ մեղքն են։

Եւ արդ զոր հրամայեացն՝ այս ինչ է։ Յորժամ ոք բեւեր չարեաց պատժապարտ իցէ, այլոց փոքր մեղաց դառն դատաւոր մի լինիցի։ Ո՛չ զյանդիմանելն և ոչ զուղղելն խափանէ, այլ զայս միայն՝ որ յիւրումն ծայլ իցէ, և զայլոց պահանջիցէ հաւաստեաւ. զի էս յոյժ առնն չարիքն, և կրկին լինի անօրէնութիւն, յորժամ զիւրոց մեծամեծ մեղաց անփոյթ առնիցէ, և զայլոց փոքրունսն ՀՆԴԻՒ քննիցէ. և անտի թշնամութիւն և չարիք ծնանին։ Եւ արդ իբրև երարձ 'ի միջոյ զայսպիսի փնաս բարւոք օրէնսդրութեամբն, յարէ 'ի նայն և միւս էս պատուիրան։

«Ա՛ի տայք, ասէ, զարբութիւն շանց, և մի արկանէք զմարգարիտ առաջի խոզից»։ Զի թէպէտ էս յառաջ կոյս ասիցէ, թէ «Զինչ լսէք յականի՝ քարոզեսջիք 'ի վերայ տանեաց», այլ և ոչ այս ընդդէմ ինչ իցէ առաջնոյն։ Զանզի անդ ոչ վայրապար ամենեցուն հրամայեաց ասել, այլ զի որոց պարտ իցէ ասել՝ ամենայն համարձակութիւն ասիցեն։ Զայց շունս ասէ՝ զայնոսիկ որ յանհնարին ամպարշտութիւս իցեն՝ կոչէ, և դառնալոյ ինչ 'ի լաւութիւն չունիցին ակն. և խոզս զայնոսիկ՝ որք յանառակութեան միշտ մնալոցեն զաւուրս. զորս քան զամենեսին

անարժանս համարի այսպիսի օրէնսդրութիւն։ Օ սոյն և Պաւղոսի յայտ արարեալ ասէր, եթէ «Շնչաւոր մարդ ոչ ընդունի զհոգւոյն, քանզի յիմարութիւն է նմա»։ Եւ ամենայն յայտ առնէ՝ եթէ չէն ընդունելոց զկատարեալ վարդապետութիւնն, և վասն այնորիկ շրջամտեալ նոցա բանալ դուռն։ քանզի և մեզանչաւ կանք լինելոց էն, յորժամ զխորհուրդն ուսանիցին։ Օ ի ողջամտաց և հնազանդից յորժամ յայտնին, յայնժամ պարկեշտագոյնս երևի։ իսկ անհանձաւ լիցին, յորժամ 'ի ծածուկ իցէ՝ յայնժամ օգուտ իցէ։ Օ ի որք 'ի բնութենէն տեղեակ լինել չկարիցեն սրբութեանցն, գէթ յանգիտութենէն պատկառեսցին։ Զանզի և խոզն ոչինչ գիտէ զինչ մարգարիտն իցէ։ և զի ոչ գիտէ, և մի տեսցէ իսկ զոր ոչն գիտէ, զի մի կոխեսցէ։ զի ոչինչ լաւութիւն գործի, բայց միայն վնաս մեծ։ Օ ի և լսեն և թշնամանի 'ի նոցա նէ սրբութիւն։ քանզի չգիտեն զինչ իցէ սրբութիւն։ և նոքա առաւել յառնեն և վառին ընդդէմ մեր։ Զոյն իսկ է զոր ասէն, եթէ «Դուցէ կոխիցեն, և դարձեալ երդիծուցանիցեն զձեզ»։ Զա և այնպէս իսկ առաւել դրդռնին՝ տալ զմինչ այլոց պատճառս վնասու։ Զոչ եթէ սրբութիւն ինչ զայն առնիցէ, այլ նոցա խոզութիւն։ Օ որ օրինակ յորժամ զմարգարիտ ոք կոխիցէ, ոչ՝ եթէ վասն զի արհամարհանաց է մարգարիտն՝ կոխիցէ, այլ զի ընդ խոզինն ոտս անկաւ։ Զոր բարւոք ասաց, եթէ «Դարձեալ երդիծուցանիցեն զձեզ»։ Զանզի կեղծաւորին մինչև ուսանիցին։ և յորժամ 'ի վերայ հասանիցեն, այլ ընդ այլոց իմն երևեալք՝ յերգ արկանեն, այպանեն, ծաղր առնեն, իբրու թէ զեղծեալ ինչ իցեմք։ Զ՚ այնորիկ և Պաւղոս ասէր ցՏիմոթէոս, թէ «Զորոց և դու զգոյշ լինիջիր, զի յոյժ հակառակ կացին նոքա բանից մերոց»։ և դարձեալ «Զայնպիսեաց անտի տեղի տուր, և յառնեն հերետիկոսք յետ մի և երկուց խրատուց հրաժարեսջիր»։ Զոր արդ ոչ եթէ 'ի նոցանէ վառին, այլ ինքեանք այնու անմտաւ զոյնք լինին՝ լցեալ բազում ամպարհաւառութիւն։ վասն այնորիկ իսկ ոչ սակաւ շահ է կալ մնալ յանծանօթութենէ 'ի նոցանէ, քանզի ոչ եթէ այնչափ աղ-

համարՀիցեն։ Այսպա թէ տեղեկանայցեն խորՀրդոյն, կրկին փնաս է. զի նոքա ինչ անտի չօգտին, այլ և վնասին ևս. և զքեզ բազում իրօք աշխատ առնիցեն։

Լուիցեն, որ ամենեցուն ընդ ծոց և ընդ դող մի-տեալք անխտիր քծինս տայցեն և զպարկեշտն արՀամարՀելիս արասցեն։։ Այանզի յորժամ զխորՀուրդն կամիցիմք կատարել, զդուրս փակեմք և զերախայս արտաքոյ պահեմք. ոչ եթէ զտկարութիւն ինչ խորՀրդոյն զոր կատարեմք՝ զստգելուցուցամք, այլ զի բազումք չև ևս են հասեալ 'ի կատարեալն։ Այանզի և ոՀն իսկ բազում ինչ Ճառեաց առ Հրեայսն, եթէ քանզի տեսանեն՝ և ոչ տեսանեն։ Զմին իրի և Պաւղոս Հրամայեաց խմանալ՝ որպէս զիարդ արժան իցէ իւրաքանչիւր ումեք տալ պատասխանի։

«Խնդրեցէք և տայցի ձեզ. Հայցեցէք և գտանէք. բախեցէք և բացցի ձեզ»։ Այս քանզի մեծամեծս և զարմանալիս և 'ի վերս քան զմարդկան կարիս Հրամայեաց առնել, և անդր յերկինս իսկ ելանել. ոչ Հրեշտակաց և ոչ Հրեշտակապետաց, այլ նմին իսկ ամենեցուն՝ այ, որպէս մարթի մարդոյ, Հրամայել նմանել աշակերտացն։ Այս ոչ միայն նոցա, այլ և ամենեցուն Հրամայել՝ քնել 'ի մէջ չարաց, և 'ի մէջ այնոցիկ՝ որ չիցեն նոյնպիսիք. և 'ի մէջ շանց, և այնոցիկ՝ որք չիցեն շունք։ Այանզի բազում ինչ ծածուկ է 'ի մարդիկ. զի մի ասիցեն, եթէ անՀնարին և դժուարին է այն, որպէս յետոյ և Պետրոս իսկ ասաց, թէ ո՞ կարիցէ ապրել. և դարձեալ թէ այդպիսի պատՃառք 'ի մէջ առն և կնոջ կայցեն, լաւ է բնաւ իսկ չամուսնանալ։ Զ ասն այնորիկ բազում խորՀուրդս, որ կարօղ իցեն՝ Հաւանեցուցանել, 'ի միջի դնել։

Այս արդ զգլխաւորն իսկ ոՀմ դիւրութեաց 'ի մէջ բերեալ՝ 'ի մխիթարութիւն վաստակելոց՝ յօգնականութիւնն Հանապազորդն ալօթից. զի ոչ զանձինս և եթ փութացուցանել, այլ և 'ի վերուստ առնուլ օգնականութիւն Ճգանցն, որ եկեալ Հասեալ դիւրաւ

1 Յօրինակին ամենեցուն. եդաք ըստ լուս։

առնիցէ զվաստակն։ Ա՝ան այնորիկ և խնդրել հրամայէ, և առնոյց երաշխաւոր լինի. և ոչ վայրապար խնդրել, այլ յամել 'ի խնդրուածսն։ Օ՛ի որ խընդրիցէ ոք ինչ, զամենայն ինչ հանէ 'ի մտացն, և զոր ինչ խնդրիցէն՝ այնմ և եղեալ ուշ ունի. և գիտէք զոր ասեմս որոց զծառայս կամ զոսկի կորուսեալ խընդրիցէն։ Լսէ 'ի խնդրելոյն զայս յայտ առնէ. բայց 'ի բախելոյն՝ զի ստէպ ոք ջերմ մտօք մատուցեալ աղաչիցէ։ ԼՀ՝ արդ մի ինչ վհատիցիս, ով մարդ, և մի սակաւ փոյթ վասն առաքինութեն քան վասն ընչից ցանկութեան ցուցանիցես։ ԼՀ՝ զայն բաղում անդամ խնդրես և ոչ գտանես. իսկ զայս խոստանայ թէ առնոյց ես։ ԼՀ՝այց թէ ոչ վաղվաղակի առնուցուս, մի ինչ վհատիցիս. քանզի վասն այնորիկ իսկ ասէ թէ բախեցէք, զի ցուցցէ, թէպէտ և ոչ վաղվաղակի բանայցէ զդուռնն, այլ յամել պարտ է։ Ա՝պ' եթէ 'ի միոյ վՀեռս տալոյ Հաւատայցէն, ասէ, զէթ օրինակին հաւատան։

« Ա՝վ, ասէ, 'ի ձէնջ, որոյ որդի իւր հաց խնդրիցէ, միթէ քար տայցէ »։ Օ՛ մարդիկ յորժամ թաւ խանձիցես և ձանձրացուցանիցես, յայնժամ ծանր թուիցիս նոցա. իսկ զնա՞ծ եթէ ոչ ստէպ կարդայցես, յայնժամ յոյժ բարկացուցանես։ ԼՀ՝թէ յամիցես 'ի խնդրուածսն, թէպէտ և վաղվաղակի չառնուցուս, սակայն երբ և է առնոյց ես։ Ա՝ան այնորիկ փակի դուռնն, զի զքեզ 'ի բախելն յորդորիցէ։ Հայն սակս իսկ ոչ վաղվաղակի լսէ, զի և զս քան զեւ 'ի խընդրուածսն յամիցես, և առնուցուս։

ԼՀ՝ զի մի ասիցես, եթէ զինչ օգուտ իցէ՝ թէ խնդրիցեմ և չառնուցում. 'ի մարդկեղէնն մտաց աՀ՝ ձէ առակ օրինակի՝ տալ քեզ խրախոյս. և ցուցանէ եթէ ոչ զինչ և կամիցիս, այլ յորժամ զօգուտն խնդրիցես։ « Ա՝յր ոք 'ի ձէնջ, ասէ, հայր, յորժամ խնդրիցէ որդին հաց, միթէ քար տայցէ նմա »։ որ պէս զի թէ չառնուցուս, վասն զի քար խնդրես, յայն սակս չառնուցուս։ Օ՛ի թէ որդի իցես, ապա ոչ զանօգուտ ինչ խնդրիցես. մի զարշխարհիս ինչ, այլ զնա՞մ զՀոգևորսն, զի և առնուցուս։ Ա՝յ և Ա՝ողոմոնն յորժամ զպատշաՀն խնդրեաց, տես, զի

վաղվաղակի երկուս էառ ընդ միոյն։ Եւ արդ խրն-
դրել ստէպ պարտ է՝ որ յաղօթսն կայցէ. և զպատ-
շաձն խնդրել. և դուք, ասէ, հարք, յորժամ ան-
դէպ խնդրիցեն 'ի ձէնջ որդիք ձեր, արդեւլուք զխրն-
դրուածսն. և յորժամ զդէպն ինչ խնդրիցեն, հա-
ւանիք և տայք։

Եւ քո այսուհետև զայս իմացեալ, մի հեռանայ-
ցես մինչև առնուցուս, և մի մեկնիցիս՝ մինչև գտա-
նիցես, մի մեղկիցես զփոյթն՝ մինչև բանայցէ դուռնն։
Օ՛ի թէ այսպիսի մտաք մատչիցիս և ասիցես, եթէ
ոչ առնում ոչ գնամ աստի, առնուս հաւաստեաւ։
Օ՛ի թէ այսպիսի ինչ խնդրիցես որ ինչ և տալեացն
վայել իցէ, և քեզ որ խնդրեսդ օգուտ իցէ, ոչ արգ-
ելուցուն խնդրուածքն. յորժամ զհոգևոր ինչ խրն-
դրիցես, և յանցաւորաց թողուցուս, և առանց բար-
կութեան և երկմտութեան սուրբ ձեռս 'ի վեր ամբառ-
նայցես։ Եւ թէ այսպէս խնդրիցեմք, առնուցումք
անշմարիտ. և ոչ որպէս այժմ, ծաղր իմն առնեն ըզ-
խնդրուածսն, և մարդիկ արբեալ՝ մատուցեալ բա-
զում ինչ շատխօսութիւս յաձախսեն։

Եւ զիարդ, ասէ. թէ յորժամ հոգևոր ինչ խրն-
դրիցեմ և ջառնուցում, զինչ օգուտ իցէ։ Կամ
ստէպ չբախեցեր, և կամ չարարեր զանձն արժանի
առնլոյ, և կամ վաղվաղակի թողեր և գնացեր։
Եւ ընդէր, ասեն, չասաց զինչ պարտ իցէ խնդրել,
և զինչ չիցէ պարտ։ Ա՛յլ ասաց իսկ զնամ վերա-
գոյնն, և եցոյց թէ վասն էր պարտ է աղաչել։ Եւ
արդ մի ասիցես, եթէ աղաչեցի և ոչ առի։ Զանգի
չէ ուրեք ջառնուլ յոյ, որ այնպէսն սիրէ՝ զի և ըզ-
հարց ևս զթովք անցանել և յաղթել, որպէս չարու-
թեանն բարութիւն։

«Օ՛ի թէ դուք չարք, ասէ, գիտէք պարգևս բա-
րիս տալ որդւոց ձերոց, որչափ ևս առաւել հայրն
ձեր երկնաւոր»։ Օ՛այս ասելովք՝ ոչ եթէ զմարդկե-
ղէն բնութիւն ինչ խոտիցէ, և կամ թէ չար ինչ ըզ-
մարդկան ազգս ցուցանիցէ, այլ առ 'ի զատանել իւ-
րոյ բարութեանն՝ զատի հայրենի գութն չարութի-
կոչէ, զի այնպիսի է նորա մարդասիրութեանն առա-
ւելութիւն։ Ցեսանես զանձաւ խորհուրդն, որ բաւա-

կան է և զկարել անցոյն յորդորել 'ի յոյս բարուցեց։ ԼՀ։ ասա 'ի հարցն ցուցանել զիւր բարութիւն. իսկ 'ի վերագոյնն 'ի մեծամեծացն եւ ծանօթս, 'ի հոգւոյն և 'ի մարմնոյ։ ԼՀ։ չև եւս զգլխաւորէն բարութեց Ճառէ, և ոչ 'ի մէջ ինչ բերել զիւր գալուստն։ Որ այնպէս փութացաւ տալ զորդին 'ի սպանումն, զնարդ ոչ զամ ինչ շնորհեսցէ մեզ։ Բայց չև եւս յայտնէ. այլ Պաւղոս յայտնի դնէ, «Որ յիւր որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա, զիարդ ոչ նովաւ հանդերձ զամ ինչ շնորհիցէ մեզ»։ Բայց դեռ 'ի մարդկեղէն իրաց խօսէր նա ընդ նոսա. զի ցուցցէ թէ ոչ յաղօթսն միայն պարտ է ապաստան լինել, և յայլ ինչ իրս հեղգալ. և ոչ յանձանց ինչ փոյթ ևեթ վատահ լինել, այլ և զվերին օգնականութիւնն խնդրել, և զիւրեանց 'ի նոյն նպաստ լինել։ Պատն այնորիկ ստէպ զերկոսեանն դնէ. քանզի և բազում ինչ խրատ տայ, և յաղօթս կալ ուսուցանէ։ ԼՀ։ յորժամ զաղօթսն ուսոյց, ապա և 'ի խրատ այնպիսի ինչ իրաց, զոր պարտ իցէ գործել, ասէ. և անտի դարձեալ՝ զի ստէպ պարտ է կալ յաղօթս, ասելովն՝ եթէ խնդրեցէք և հայցեցէք և բախեցէք. և անտի դարձեալ՝ զի և յանձինս եւս զփայլեն ցուցանիցեն։

«Օ՞ր ինչ կամիջիք դուք, ասէ, եթէ արասցեն ձեզ մարդիկ, արասջիք և դուք նոցա»։ ԼՀ։ սակաւ բանիւք զամ եհան 'ի գլուխ, և եցոյց՝ եթէ համառօտ է առաքինութիւնն և զիւրին և ամենեցուն ծանօթ։ ԼՀ։ ոչ վայրապար ասաց՝ թէ զամ զինչ և կամիջիք, այլ թէ զամ այսուհետև զոր և կամիջիք։ Զի զայսուհետևն ոչ վայրապար ինչ յաւել, այլ զայն ակնարկեաց, եթէ կամիջիք, ասէ, լսել, հանդերձ այլովք պատուիրանօքն՝ զոր պատուիրեցի ձեզ, և զայս եւս առնիջիք։ Օ՞ր։ «Որչափ ինչ, ասէ, կամիջիք թէ արասցեն ձեզ մարդիկ, արասջիք և դուք նոցա»։

Տեսանէս, զնարդ եցոյց և այսու եւս, եթէ հանդերձ աղօթիւքն՝ և վարք եւս պիտանիք պիտոյ են մեզ։ ԼՀ։ ոչ ասաց, թէ որչափ կամիցիս լինել քեզ յոյ, այնպէս առնիջիր և դու ընկերին։ Զի մի ասէ

ցեն, եթէ զիմարդ մարթիցի այսմ լինել, զի նա ՝ն ծ է, և ես մարդ։ Բ.ՍԼ ասէ, որչափ կամիցիս, թէ լինիցի քեզ 'ի ծառայակցէն քումմէ, նոյնչափ առնիջիր և դու քում ընկերին։ Լ.չ զինչ թեթևագոյն կամ արդարագոյն քան զայն կայցէ։ Բ.պա և զգովութիւն իսկ մեծ քան զՀատուցումն ցուցանէ ասելովն, թէ « Բ.յսպէս են օրէնք և մարգարէք »։ Լուսոյ յայտ իսկ է, թէ ընութեամբ իմն է 'ի մեզ առաքինութիւն. և զի ընտանի են պատՃառքն, ամենեքին գիտեմք. և չէ հնար թէ ոք ոչ իմանայցէ։

« Ա՝տէք ընդ դուռնն նեղ, զի լայն է դուռնն և ընդարձակ Ճանապարհն՝ որ տանի 'ի կորուստ. և բազումք են որ մտանեն ընդ նա. և նեղ դուռնն և անձուկ Ճանապարհն՝ որ տանի 'ի կեանս. և սակաւք են՝ որ գտանեն զնա »։ Ցա ևս յառաջ կոյս ասէ, եթէ « Լուծ իմ քաղցր է, և բեռն իմ փոքրոգի »։ և յարդի՝ ասացեալս զնոյն ակնարկէ։ Օ խարդ իցէ, զի աստ նեղ դուռն և անձուկ Ճանապարհ ասիցէ. և մնաւանդ՝ թէ միտ դնիցես, և աստ իսկ կարի թեթև և դիւրին ցուցանէ։ Լ.չ զիմարդ, ասեն, նեղ և անձուկն դիւրին իցէ. որպէս և միւսն թէպէտ լայն և ընդարձակ իցէ, զի չէ՞ ինչ անտի կալոց մնալոց, այլ՝ամ ինչ անցանելոց է և վիշտք և բարիք աշխարհիս։ Լսակ առաքինութեցն ոչ միայն աստ դիւրին, այլ և վախՃան ևս դիւրագոյն լինելոց։ Օ՝ի ոչ միայն զվաստակսն և զբարուանս տանիցի անդր, այլ և բարի վախՃանի դիսեցուցանէ. քանզի վախՃանն 'ի կեանս հասուցանէ։

ՀաՃախագոյն մխիթարեաց զՀգնեաքն, թէ վաստակքն առ ժամանակ մի են, և պսակքն միանջնասուրականք։ Ալսպէս և Պաւղոս թեթև կոչէ զնեղութիւնս, ոչ յիրացս որ լինիցին, այլ 'ի կամաց Հգնելոցն, և յուսով հանդերձելոցն։ « Բ.յս, ասէ, որ սակաւ մի թեթև նեղութիւնս է, զժառանգութիւն յաւիտենից փառացն գործէ 'ի մեզ. քանզի ոչ զիտեմք զայս՝ որ երևիս, այլ զայն՝ որ ոչն երևի »։ Օ՝ի թէ սիտ ալիք և անդունդք զնաւորդս նեղիցեն, և սպառնութիւն և հարուածք զզօրականսն, և ձմեռն և սառնամանիք զՀողագործսն, և բռնիկեթք զամբաստանս-

տիկն, այլ թեթև և ախորժելի համարին զվիշտն վասն յուսոյ հատուցմանցն՝ որ առաջի կայցէ. և այն զի անցաւորք ևս են և ժամանակաւորք։ Զ՚ըստափ ևս առաւել յորժամ երկինք առաջի կայցեն և անչառ բարութիւնն և անմահական պարգևքն, ոչինչ անցաւոր վշտաց զգայցէ։ Զ՚պա թէ ոմանք այնպէս աշխատութիւն ինչ համարիցին, դիտասցեն թէ ըստ իւրեանց ծուլութեանն կարծեաց, և ոչ ըստ Ճանապարհին ինչ դժուարութեան։

Զ՚չ արդ տես իսկ, զի և այլուստ ցուցանէ զնոյն դիւրին, հրամայելովն չխառնակել ընդ շունս, և մի տալ զմարգարիտ իւրեանց խոզիցն, և զգայլ լինել ՚ի սուտ մարգարէիցն. զի ամ՚ուստեք կասկածագոյնս յարդարիցէ զնոսա։ Զ՚ա և ՚ի նեղն իսկ կոչելով՝ ըզ դիւրութիւն յայտ առնէ, զի արթնութիւն և զուարթնութիւն պատրաստիցէ զնոսա։ Զ՚բպէս Պաւղոս յորժամ ասիցէ, եթէ «Զ՚է մեր մարտ պատերազմի ընդ արեան և ընդ մարմնոյ», ոչ զի ՚ի վշտատութիւնս կործանիցէ, այլ զի զմիտս զինուորելոցն զարթուցանիցէ։ Զ՚այնպէս և ՝ուրն զարթուցանել կամի զՃանապարհորդսն, վասն այնորիկ խիստ կոչէ զՃանապարհն։ Զ՚չ ոչ այնու միայն կազմեաց, այլ և յաւելուածովն։ Զ՚ազգումքն են, ասէ, որ անդ դանդաչեալ շրջիցին. և ևս չար այս է՝ զի ոչ յայտանեն զթոյնսն, այլ թաքուցանեն զանձինս. քանզի այն իսկ արուեստ է առոց մարգարէիցն։ Զ՚չ արդ մի, ասէ, ընդ այն նայիցիս, զի նեղն և անձուկ է և խիստ, այլ թէ յո՞ տանիցի հատուցանիցէ. և մի ընդ այն ինչ՝ զի լայն և ընդարձակ է, այլ թէ ո՞ւր տարեալ կորուսանիցէ։

Զ՚Օ այս ամ՚ասելով՝ զարթուցանէ զմեզ ՚ի յոժարութիւն. որպէս զի և այլուր ասէ, եթէ «Զ՚ըբայութիւն ՝այ բռնաբարեալ է, և բռունք յափշտակեն զնա»։ Զ՚Օ ի պատերազմոնցն յորժամ տեսանիցէ ըզպսակիչ պատերազմողացն՝ եթէ յարգէ զաշխատութիւն, ևս յոժարագոյն լինի։ Զ՚չ արդ մի ինչ վշտատեսցուք, յորժամ աստ բազում տրտմութիւք ՚ի վերայ գայցեն. զի թէպէտ և նեղ իցէ դուռնն և անձուկ Ճանապարհն, այլ ոչ եթէ քաղաքն. և վասն այնորիկ ոչ աստ հանգստեան պարտ է ակն ունել, և

ոչ անդ այնուհետև տրտմութիւն։ Այլ ասելովն եթէ «Սակաւք են, որ գտանեն զնա», զբազմաց ծուլութիւն յայտ արար. և ունկնդրացն միտս եդ՝ մի 'ի բազմացն բարեկեցութիւս հայել, այլ 'ի սակաւուցն վաստակս։ Զի բազումքն, ասէ, ոչ միայն չգնան ընդ նա, այլ և կամին իսկ ոչ. որ վերջին իսկ ամբաստանութիւն է։ Մի՛ ընդ բազումս նայել և խռովել, այլ ընդ սակաւսն, և նոցին նախանձաւոր լինել. և նմա ուստեք ամփոփել զանձինս, և ապա գնալ ընդ այնպիսի ճանապարհ։ Այլ քանզի անձուկ է, բազումքն մոլորին յայնպիսի ճանապարհէ, և կարծեցուցանեն թէ 'ի ճանապարհին կայցեն. վասն որոյ և յարէ իսկ 'ի նոսա, եթէ «Զ գոյշ լերուք 'ի սուտ մարգարէիցն, որ գան առ ձեզ 'ի հանդերձս գառնենիս, և 'ի ներքոյ են գայլք յափշտակողք»։

Հաւասիկ հանդերձ շունսն և խոզսն կոչելով և այլ ինն նշանակ դարանակալութիւն և նենգութիւն չար քան զայն նշանակէ. զի նոքա յայտնիք իսկ են, և սոքա 'ի ծածուկ և կեղծեաք։ Զ ամն այնորիկ 'ի նոցանէ հեռանալ հրամայէ, և զնոսա քննել մեծաւ զգուշութիւ. մի յառաջին կերպարանսն և եթէ հայել։ Քանզի և ասէ իսկ, եթէ նայեցարուք 'ի յամառութիւն նոցա. զի ձիշդ քննօղս կատարեսցէ զնոսա։ Զպա զի մի, յորժամ զնեղ և զանձուկ լսիցես, և զնորին հակառակն ընդարձակ, և ընդ այն լաւ համարիցիս գնալ, հրամայէ 'ի շանց և 'ի խոզից զգուշանալ, և 'ի միւսոյ ևս քանասարիկ ազգէն գայլոյ։ Զ մի 'ի դժնդակ տրտմութենէն ինչ զանգիտիցեն, և ասիցեն, եթէ այնչափ դժուարին և անձուկ է ճանապարհն, զիարդ որ կարասցէ գնալ ընդ նա, յիշեցուցանէ, թէ և 'ի հարցն նոցա աւուրս սուտ մարգարէք էին. և արդ մի ինչ խռովիջիք, ասէ, եթէ նոր ինչ և օտարոտի դիպիցի ձեզ. զի հանապազ ընդդէմ ճշմարտութենն կանգնէ զտութիւն սատանայ։

Իսկ սուտ մարգարէս ասա թուի ինձ եթէ ոչ զհերձուածողն ասիցէ, այլ զայնոսիկ որ 'ի զեղծ վարս ինչ իցեն. որք զկերպարանսն առաքինութիւն ունիցին, և չիցեն ինչ այնպիսիք. զոր և խաբէբայս սոցոր են կոչել բազումք։ Քանզի և ածէ իսկ յարէ 'ի նոսա,

եթէ «Ի գործոց նոցա ծանիջիք զնոսա». զի 'ի հերձուածողն բազում անգամ գտանին վարք պարկեշտք. այլ առ այնպիսիսն և ոչ երբէք։ Եւ թէ այնու ևս կեղծաւորիցեն, ասէն, զիա՞րդ ոք իմանայցէ։ Այլ վաղվաղակի խայտառակին. քանզի այնպիսի իսկ է Ճանապարհն։ Եւ, ասէ, ընդ աշխատութենն և ընդ վաստակոց Ճանապարհ հրամայեցի գնալ, և կեղծաւորն ընդ այն չկամի գնալ, այլ կեղծիս ևեթ ցուցանել. և վասն այնորիկ վաղվաղակի յանդիմանի։ Եւ ասելովն եթէ «Պակաւք են՝ որ գտանեն զնա», սրբէ զնոսա յայնցանէ՝ որք չգտանիցենն և կեղծաւորեսցին։ Պ'ի ընդ այնոսիկ որ կեղծեօքն իցեն հայել, այլ ընդ այնոսիկ զոք Ճշմարտութիւնն իցեն։ Եւ ընդէր, ասէ, չարար իսկ զնոսա յայտնիս, այլ զմեզ արկ 'ի քէն։ Օ՛ի արթունք և միշտ կասկածագոյնք լինիցիք, ոչ միայն 'ի յայտնի թշնամեացն ըզգուշանալ, այլ և 'ի գաղտնեացն։ Օ՛որոց և Պաւղոս ակնարկէ, եթէ «Զաղցր բանիւք պատրեն ըզսիրտս անմեղաց»։ Եւ արդ մի՛ ինչ խռովիցիք, թէ՞ պէտ և այժմ այնպիսիս տեսանիցեմք զբազումս. քանզի և զայս յառաջագոյն ասաց Տէր։

Եւ արդ տես զքաղցրութիւնն. ոչ ասաց թէ պատժեսջիք զնոսա, այլ թէ մի՛ ինչ վնասեսջիք 'ի նոցանէ, և յանպատրաստից 'ի ձեռս անկանիջիք։ Եւ զի մի՛ ասիցես, եթէ անհնարին է Ճանաչել զայնպիսիսն, դարձեալ ինն միտս 'ի մարդկան օրինակաց 'ի մէջ բերեալ ասէ. «Ո՞չ ոք քաղէ 'ի փշոց խաղող, և ոչ 'ի տատասկէ թուզ. զի՞մ ծառ բարի պտուղ բարի բերէ, և ծառ չար պտուղ չար բերէ։ Ո՞չ կարէ ծառ բարի պտուղ չար բերել, և ոչ ծառ չար պտուղ բարի բերել»։

Օ՛որ ասէն այսպիսի ինչ է, եթէ չիք 'ի նոսա ըզգծութի՞ն և քաղցրութի՞ն, մինչ զՀանդերձսն գառնեներս ունիցին, և զբարսն գայլենիս. ուստի և դիւրին իսկ է Ճանաչել զնոսա. և զի միայն ինչ սակաւ մի թաքուցանիցէ, և այլ ինչ որում չիցէ մարթ թաքուցանել՝ ցուցանել, վասն այնորիկ ասէ զայս։ Ընդ այս և Պաւղոս իսկ ասէ, եթէ «Յորհուրդ մարմնոյ մահ է, զի օրինացն ո՞չ հնազանդի, քանզի և կա-

բէ իսկ ոչ »։ Այլ զի կրկին զնոյն դնէ, չէ ինչ միաբա-
նութիւն։ Օ ի մի՞ զ ասիցէ, թէ չար ծառ բերէ չար
և բարի պտուղ, և դժուարին առնէ զծանօթութեան երկ-
դիմի պաղովքն։ Զէ, ասէ, այդ այդպէս. այլ չարն՝
չար և՛ է թերէ, և բարի պտուղ ոչ երբէք. որպէս
և նորին հակառակն։

Այլ զիարդ, ասէն. մարդ բարի՝ չար երբէք ոչ լի-
նիցի։ Լսեմ, եթէ բազումք 'ի բազում ժամանակս.
քանզի և լի էին իսկ կեանք մարդկան այսպիսի փո-
փոխմամբ և օրինակօք։ Լայլ Տէ՞ր ոչ եթէ այսպի-
սի ինչ ասիցէ, եթէ չար մարդոյն չիցէ հնար դառ-
նալ 'ի չարէն, և կամ բարւոյն չիցէ մարթ անկա-
նել 'ի բարւոյն։ Լայլ թէ՝ մինչդեռ 'ի չարութեանն
կայցէ, ոչ կարէ բարի պտուղ բերել. բայց փոխիլ
յառաքինութենն մարթի, թէպէտ և չար էցէ. իսկ
մինչդեռ անդէն 'ի չարութեն կայցէ, բարի ինչ պը-
տուղ չկարէ երևեցուցանել։

Այլ արդ զիարդ, ասեն. Դաւիթն որ բարին էր, չար
ինչ պտուղ ոչ եցոյց։ Այլ մինչ 'ի բարուէն կայր, այլ
յորժամ անկաւ 'ի բարութենէն. զի թէ որպէս էրն
միշտ նոյնպիսի կացեալ էր, այնպիսի պտուղ ոչ ցու-
ցանէր. եթէ 'ի նմին առաքինութեն կացեալ էր, յոր
յանդգնեցաւն՝ ոչ յանդգնէր։ Այլ զայս ոչ թէ
վայրապար ինչ ասէ, այլ զի զբամբասողաց զբերանս
կարկեսցէ։ Զանզի բազումք և զբարին չար կար-
ծեն, զի յա՞մ պատասխանուոյ առնիցէ զնոսա զրկեալս՝
ասէ զայս. զի մի՞ ասիցեն, եթէ խաբեցաք և զեղ-
ծեցաք. նա աւանիկ 'ի գործոցն իսկ տայ զհաւատի
ծանօթութեան չխառնակել ընդ այնպիսին։ Այլ քանզի
պատժել ոչ հրամայեաց, բայց զգուշանալ միայն,
արդ միանգամայն և զմնասեալսն 'ի նոցանէ մխիթա-
րէ, և զնոսա երկեցուցանէ, և դարձուցանել կամի.
ցուցանէ՝ եթէ ոչ նա տանջէ զնոսա, այլ նոքա զան-
ձինս։ « Զմենայն ծառ, ասէ, որ ոչ առնիցէ պտուղ
բարի, հատանի և 'ի հուր արկանի »։ Այլ յորժամ
անտաղտուկ արար զբանն, ապա յարէ 'ի նոյն, եթէ
« 'Ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա »։

1 Յօրինակին էր ինչ նոյն երանութիւն. թերևս նոյնութիւն. իսկ 'ի լուս. գրչանութիւն կամ նմանութիւն։

Օ՛ի մի յառաջագոյն զսպառնալիսն համարիցիս ընծայեցուցանել, խրատու և հաւանութեամբ կարգաւ յորդորել զնոսա։ Եւ թուի ինձ՝ թէ զհրեայսն իսկ նշանակիցէ, որ միշտ զայնպիսի պատուոյ ցուցանէին։ Բանդի և զՀովհաննու իսկ զբանսն յիշէ, և նոա վիմբ անուամբ զպատիժս բարբառի։ Օ՛ի և նա ըզտապարէ և զծառայ կոչելոյ և զանշէջ հրոյ յիշեցոյց նոցա։ Եւ թուի թէ մի ինչ պատիժ իցէ. բայց թէ հաւաստեաւ ոք քննիցէ, երկու իսկ տանջանք գտանիցեն։ Մի զի նախ յաղքայութենէն վրիպիցի, և ապա ի հուրն ևս տանջիցի. և առաւել դառն տանջանք այն են՝ յորժամ յաղքայութենէն ոք վրիպիցի։

Եւ գիտեմք, զի բազումք ի գեհենէն միայն երկիւղ չին. բայց ես զառ ի փառացն անկանելն չար համարիմ քան զգեհենին տանջանսն։ Եւ եթէ չկարիցեմք բանիւք յայտ առնել, ընդ այն չէն ինչ զարմանք։ Բանզի չեմք բաւական գիտել զբարութեանցն երանութիսն, թէ և զթշուառութեան վրիպելոցն ևս ի նոսա ցանէն կարիցեմք ստոյգ իմանալ։ Եւ և ոչ Պաւղոս այնպէս ճշմարտագոյնս ինչ գիտէր. բայց այնչափ միայն, զի անկանել ի փառացն Քրիստոսի քան զամ թըշուառութիս դաժանագոյն է։ Յայտժամ և եթէ կարեմք գիտել, յորժամ ի փորձ իրացն հասանիցեմք։

Եւ արդ աղաչեսցուք զնոյն որդին միածին, զի մի զայնպիսի զանհանգիստ տանջանաց հասանիցէ առնուլ զփորձ։ Բանզի օրչափ ինչ իցեն չարիք անկանել ի բարեացն՝ ասել հաւաստեաւ չէ հնար. բայց սակայն որչափ ինչ մարթ իցէ՝ ջանացայց և օրինակաւ իւիք գոնէ սակաւիկ մի յայտ առնել ձեզ։ Գրեսջիր թէ իցէ որդի ուրուք քաջ, և ընդ առաքինութեան զթագաւորութեան ամ աշխարհաց ունիցի. և այնպէս ամ ուրեք քաջ գտանիցի, զի զամենեսին ի սեր և ի խրատ հօրն ածիցէ։ Եւ արդ որպիսի վիշտ ոչ կարծիցեք հօրն վշտանալ, եթէ վրիպել հաւանիցէ յայնպիսի խնամոյ։ Այսպիսի ինչ խմսցուք զայնր փառաց։ Բանզի ոչ այնպէս որդի հօր՝ եթէ բիւրապատիկ առաքինի իցէ՝ ցանկալի է, իբրև ըզհանգիստ այսց բարութեանց, և գառնալ և ընդ Քրիստոսի լինել։ Անհնարին են գեհենն և տանջանքն. բայց

սակայն թէ բիւրապատիկ ոք ինչ գէհէն ասիցէ, ոչ այնպէս ինչ ասէ, որպէս յերանելի փառացն անկանել, և ատելի Վշոի լինել, և լսել թէ ոչ գիտեմ զձեզ, և պատուհասել թէ «Աղցեալ տեսէք զիս, և ոչ կերակրեցէք»։

Լաւ է բիւրապատիկ փայլատակմամբք հարուածս առնուլ յանձն, և ոչ զզգօն երեսն և զքաղցրահայեաց աչն դարձուցեալ տեսանել 'ի մէնջ, եթէ չկամիցի ընդ մեզ հայել։ Այթէ նա զիմ՝ զատելոյ և զթշնամւոյ և զփախստականի այնչափ զհետ ընթացաւ, մինչև յինքն ևս ոչ խնայել, այլ և զանձն ևս մատնել վասն իմ. և յետ այնր ամենայնի քաղցեալ տեսանիցեմ զնա, և պատառի միոջ հացի չառնիցեմ արժանի, որովք աչօք կարացից ընդ նա հայել։ Բայց դու միտ դիր և աստ զգօնութեան նորա. չարկանի զերախտին. չասէ թէ այսչափ ինչ շահս գործեցի քեզ, և անտես արարեր. չասէ թէ զիս՝ որ 'ի զգոյն 'ի գոյ ածի զքեզ, և շունչ կենդանի փչեցի 'ի քեզ, և կացուցի զքեզ 'ի վերայ ամ իրիք՝ որ յերկրի է, զիս՝ որ վասն քո զերկինս և զերկիր, զծով և զամ արարածս արարի, անարգեցեր և քան զստատնայ անարգադոյն համարեցար. սակայն և ոչ այնպէս 'ի բաց կացի 'ի քէն, այլ և յետ այնորիկ ազգի ազգի հնարս հնարեցայ։ Որ կամեցայս ծառայ լինել և ապտակեցայ և թուք յերեսս առի և սպանայ և կրեցի զանարգանաց մահ. որ և յերկինս բարեխօս լինիմ քեզ. որ զհոգին շնորհեցի քեզ, և արքայութեան արժանի արարի. որ այսչափ բարութիւս խոստայ քեզ. նա և գլուխս ևս կամեցայ լինել քո և փեսայ և հանդերձ և տուն և արմատ և կերակուր և ըմպելի և հովիւ և թագաւոր և եղբայր, և ժառանգակից առնել զքեզ. որ 'ի խաւարի իշխանութենէն ածի զքեզ 'ի լոյս։ Օ այս ամ և ևս բազումն ունի ասել, և ոչ ասէ։ Բ՝ յլ զինչ. գյանցանսն միայն։ Այլ աստ ևս ցուցանէ զսէրն և զգութ զոր ունի առ քեզ։ Վանգի ոչ ասաց, թէ երթայք 'ի հուրն՝ որ պատրաստեալ է ձեզ, այլ թէ որ պատրաստեալ է սատանայի։ Այլ նախ զյանցանսն ասէ. նա և այնպէս չժուժայ զամ ասել, այլ սակաւ ինչ։ Այլ

նախ քան զնոսա՝ զբարեգործսն կոչէ. զի այսու յայտ առնիցէ, թէ յիրաւի պատուհասէ։

Եւ արդ քան զոր տանջանս չիցեն անհնարին այս պիսի բանք։ Օ՛ի թէ զմարդ ոք երախտաւոր քաղցեալ տեսանիցէ, չառնէ անտես. և եթէ անտես առնիցէ, նախատի. լաւ համարի ընդ գետին մտանել, քան առաջի երկուց և երից բարեկամաց զայն ասել. մեք զի գործեսցուք յորժամ առաջի ՝ամ աշխարհաց լսիցեմք։ Օ՛ որ և յայնժամ չկամէր ասել, եթէ ոչ զկիր իրաւունս փութայր ցուցանել. և զի ոչ ՝ի նախատինս բերէ զայն ՝ի մէջ, այլ վասն իրաւունս տալոյ. զի ցուցցէ, թէ ոչ ՝ի զուր ինչ և ՝ի նանիր ասէ ցնոսա, եթէ երթայք լինիցն. յայտ յայնչափ բարութեանցն է։ Եթէ նախատել կամէր, ապա զերախտիսն ՝ամ վարկանէր. նա աւանիկ զոր կրեացն միայն ասէ, և այլ ինչ ոչ։

ՑՈՐԴՈՐԱԿ

ԵՐԿՐՈՐԴ այսուհետև, սիրելիք, զի մի հասանիցէ զայնպիսի բանս լսել։ Զէն ինչ խաղոյ կեանք աշխարհիս. մանաւանդ թէ սա խաղոյ իցէ, և հանդերձեալքն ոչ խաղոյ։ Բայց թերևս ոչ միայն խաղոյ, այլ և չար քան զխաղոյ. զի ոչ միայն ծաղուն[1] վնարին, այլ և բազում վնաս գործէ այնոցիկ՝ որ ոչ մեծաւ քնութեամբ կամիցին զնուրեանց կեանս կարդել։ Եւ արդ աղէ՝ իսկ եկ սա դու ցիս. զինչ ընդհատ ՝ի մանկտւոյ իցեմք, որ ընդ խաղ տունս շինիցեն, մեք որ գեղեցիկ ապարանս շինիցեմք. կամ ընդ խաղ նոցա ՃԱՆ առնելոյ, մեք որ ՝ի բարեկեցութեամբ զ՝ամ աւուրս հանիցեմք. և ոչինչ. բայց այնչափ միայն, զի մեք տանջանս մեթերեմք։ Եւ թէ չեն և ևս երևի մեզ ապաժամանութիւն գործոյն, չէն ինչ զարմանք. քանզի չեն հասաք ՝ի չափ արութեան։ Յորժամ ՝ի չափ հասանիցեմք՝ յայնժամ ընթերցանիմք թէ այն ՝ամ մանկտւոյ գործ էր։ Նա և զայն իսկ

1 ՝Ի լուս. Դ ծաղուն։

յորժամ արք լինիցիմք, ծաղր առնեմք, զոր մինչդեռ մանկտին էաք՝ կարևոր համարեաք, խեցի և կաւ ժողովելով, և տնկուսս շինելով. և քան զնոցայն՝ որ մեծամեծ տուսս շինիցեն, և աղգի աղգի փողոցս յօրինիցեն, չհամարեաք 'ի վայր։ Այլ վաղվաղակի փլանին անկանին, և չառնին իմիք պիտանացու. որպէս և ոչ գեղեցիկ ապարանքն՝ զոր մեծամեծքն շինիցեն։ Այանզի զերկնից բնակիչսն չհանդարտեն ընդունել. նա և ոչ յանձն իսկ առնու բնակել 'ի նոսա՝ որ զվերին աշխարհն ունիցի։ Այլ որպէս և մեք ըզնոսա ոտիւք փլուզանեմք, նոյնպէս և նոքա մնօք. և որպէս մեք զմանկտին որ ընդ փլուզանել տանցն լայցեն՝ ծաղր առնեմք, նոյնպէս և նոքա յորժամ տեսանիցեն թէ աշխարեմք, ծաղր առնեն. և ոչ մեք այն ծաղր առնեն, այլ և լան. քանզի վշտակից լինին մեզ աղեացն զթովք. և այսպէս բազում ինաւք գործին մեզ անտի։

Այլ զիցուք այսուհետև արք. մինչև ցերբ ընդ գեղտին քարշիցիմք, և 'ի քարի և 'ի փայտի հարեալք մեծամտիցեմք։ Մինչև ցերբ խաղայցեմք. և երբ նի թէ խաղայաք միայն. սա աւասիկ և զփրկութիւն անձանց վտարանդի այլոց առնեմք։ Այլ զոր օրինակ մանուկն յորժամ զայսու գայցէ, և 'ի գրոյն ուսանէ յուլանայցէ[1], անհնարին գանս ըմպէ, նոյնպէս և մեք յորժամ յայսմ ամենայնի ծախիցեմք զփոյթն, և զհամարս հոգևորացն պահանջիցիմք տալ արդեամբք, և չկարիցեմք ստուգել, յայնժամ զանհնարին պատիժս հասանիցէ կրել. և չիցէ ոք որ ապրեցուցանիցէ, թէպէտ և հայր իցէ կամ եղբայր կամ զինչ և իցէ։ Այլ այս ամ 'ի դերև եւանիցէ. և որ ինչ աստի մեթերք տանջանացն լինին, անմահ և մշանջենաւոր կայցեն մնայցեն. որ ինչ անցք ընդ մանկտին անցանիցեն, յորժամ զիաղալիկս մանկուանն հարք եղծանիցեն, և նոքա 'ի լալ դառնայցեն։

Այլ զի ուսանիցիս թէ այս այսպէս է, որ առաւել կարևորն թուի՝ զայն 'ի մէջ բերցուք. զմեծութիւնն ասեմ. և զիցուք համեմատ զոգւոցն առաքինութիւն,

1 Գրեալ էր յ ՈՒՅՅԷ։

զոր և կամիցիս. և ասա տեսանիցես թէ զիարդ ա-
պաժամն գտանիցի։ Պ.ՐԵՍՅՈՒՔ թէ իցէն երկու
արք. և չև և զագահութենէն ասեմ, այլ առ ան-
զամ մի զարդարութենն մեծութենէ. և յերկոցունցն
մին ինչս ժողովեսցէ, ընդ ծով նաւարկեալ շրջեցի,
և զանդունդս 'ի գործ արկեալ գործիցէ. և այլ և
բազում հնարս ընչաւետութեան գտանիցի։ Մ.ԵԿԻՑԷ
և չգիտիցեմ քաջ, թէ և այնպէս արդարութեամբ
շահս կարիցէ շահել. այլ չկարիցէ շահել։ Ասայ սա
կայն գրեսջիր թէ շահեսցի արդարութիւն զշահն, և
գեօղս գնիցէ, և գերդաստանս ժողովիցէ, և այլ և
ինչ նոյնպիսի. և չյարիցի ինչ անդր անիրաւութիւն։
Այլ միւսն նոյնչափ ինչս ունիցի, և վաճառիցէ գեօղս
և տունս և սպասս զոսկւոյ և զարծաթոյ, և տացէ
կարօտեալոց. բաւական լիցի աղքատաց, դարմանիչ
հիւանդաց, վշտացեալոց դիւրութիւն առնիցէ, 'ի կա-
պանաց զբաղումս արձակիցէ, և զայլս 'ի մեռաղաց
ազատիցէ, զնեղդարկեալսն 'ի կախաղանաց ի ջուրս
նիցէ, գերեաց դարձ առնիցէ։

Այդ յոյր կողմանէ կամիք լինել. և չև և սկսն
դերձելոցն ասեմ ինչ, այլ զաստէնս զոր ասացաք։
'Ի նորա կողմանէ, որ զոսկին ժողովիցէ, եթէ 'ի սա-
բա՝ որ զվիշտս վշտացեալոցն բառնայցէ. որ զգեօղսն
գնիցէ, եթէ որ նաւարկանիցիս ծովածուփ բնութենն
մարդկան լինիցի. որ բազում ոսկին մթերիցէ, եթէ
որ բարւոք համբաւաւ պատկեցաւ։ Ոչ ապաքէն մին
հրեշտակն՝ որ յերկնից իջեալ իցէ՝ նմանեցաւ, դիւ-
րութիւն առնել մարդկան. և միւսն ոչ մարդոյ, այլ
մանկան՝ որ վայրապար զինչ և գտանի ժողովիցէ։
Այնթէ արդարութիւն զինչսն ժողովել՝ այնչափ ծաղու
և անմտութիւն իցէ, յորժամ և ոչ արդարութիւն վաս
տակք 'ի միջի իցեն, ոչ ապաքէն քան զամենեսին
թշուառական իցէ այնպիսին։ Այնթէ ծաղր կալ այն-
չափ դժուարութիւն իցէ, յորժամ 'ի գեհենն և սա-
սանիցէ երթալ, և յաբբայութենէ վրիպել, որչափ
ողբոց արժանի իցէ և 'ի կենդանիս և 'ի մեռեալս։

Մ.ԻԼ կամիցիս և այլ ինչ կողմն զառաքինութեանն

1 Յորինակն 'ի Գ.։

'ի հանդիսի անցուցանել։ Եթէ այնպէս իցէ՝ ածցուք զայլ ոք 'ի մէջ, որ 'ի հարատութիւն իցէ, և բաղմաց հրամանս տայցէ, մեծամեծար պատուով մեծարիցի, քարոզք առաջի հնչիցեն՝ կամարաւոր պէսպէս զարդուք զարդարեալ, բաղում սպասաւորքն շուրջանակի վարոցաւորք, որ զամբոխն 'ի բաց մերժիցեն։ Այս արդ Թուիցի այն մեծ իմն երանութիւն. ճն սա կացուցուցուք նմին յանդիման զՀեզ ոք և զՀանդարտ և զխոնարհ և զչոխակալ և զերկայնամիտ, և Թշնամանիցի և դան ըմպիցէ և չհամբիցի ինչ, այլ տանիցի դիւրաւ ամի, և զԹշնամանիչն օրհնիցէ։ Այս արդ աղէ՝ ասա, ո՞ զարմանալի իցէ. ուռուցեալն և հպարտացեալ, եթէ հանդարտն և համբերօղն։ Ոչ ապաքէն դարձեալ մին վերին զօրութեանցն նմանեցաւ, որ ամենեին աղատ են 'ի կարեաց, և միւսն ջրդողելոյ, որ ուռուցեալ և տորմեալ իցէ. մին հոգևոր բժշկի, և միւսն մանկաւոյ, որ զԹուրծսն[1] ուռուցանիցէն, այնպէս ծաղր կայցէ։

Ինդեր մեծամտիցես, ով այր դու. զի 'ի կանս բարձուն նստիցիս, և լուծք ջրեաց ձգիցեն. նա և ըզփայտ և զբար այնպէս կրեն սայլիւք կամ յոպնակօք։ Այլ զի մեծապայծառ հանդերձ ունիցիս. այլ նայեաց ընդ այն՝ որ զառաքինութիւն հանդերձն զգեցեալ իցէ. և տեսանիցես զայդ իբրև զիստ մերձ 'ի փտել, և զնա իբրև զծառ պտղալից՝ որ խոտոտիցէ զաչս տեսողացն։ Դու զգեցոյն և զորդանց կերակուր արկեալ զանձամբ շրջիս. զոր յորժամ և ծնանիցին՝ մերկանայցեն 'ի քէն։ Քանզի հանդերձքն և ոսկի և արծաթ կէսն ցեցոյ ձարակ է, և կէսն հող և փոշի, և այլ ինչ ոչ աւելի։ Իսկ որ զառաքինութեան հանդերձն ունիցի, այնպիսի պատմուճան զգեցեալ է, որում ոչ միայն ցեց, այլ և ոչ մահ կարիցէ դամագիտ լինել։ Այս յիրաւի իսկ. զի ոչ յերկրէ սկիզբն ոգւոցն առաքինութեանց, այլ հոգւոյն պտուղ են. վասն որոյ և չեն իսկ ընդ որդանց և ընդ ցեցոյ բերանովք. քանզի յերկինս անկանին այն հանդերձք, ուր ոչ որդն և ոչ ցեց և ոչ որ այլ ինչ վնասակարք են։

1 'Ի լուս. զԹուրծն։

Այս արդ զինչ լաւ իցէ. մեծանալն, եթէ աղքատանալ. 'ի հարստութեան լինել, եթէ յանարգուած. 'ի բարեկեցութեան, եթէ 'ի քաղցի. յայտ է եթէ 'ի բարեկեցութեան և 'ի պատուի և 'ի մեծութեան։ Զի՞նչ այնպէս իցէ, և զարդիւնն կամիցիս, և ոչ զանուանն, թող զերկիր և որ ինչ յերկրի իցէ, և դիւ մեա յերկինս։ Վանզի որ ինչ աստ է, ստուեր է, և որ ինչ անդ՝ արդիւնք, անշարժք և հաստատունք, և յա՞մ ձեռաց ամրացեալք։ Փափաքեսցո՛ւք այսուհետև և այնմ՝՝՝ ամ մտադիւրութեամբ. զի և յաստի խռովութեցս զերծանիցիմք, և 'ի խաղաղ նաւահանգիստն հասանիցեմք բազում բեռամբք ակաղնեալովք, և անբաւ ողորմածութեն մեծութիւն. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօքն և մարդասիրութիւն՝՝՝ մերոյ Յիսի Վրոի. որում փառք յաւիտեանս. ամէն։

ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԶՈՐԲՈՐԴ

«Ո՛չ ամենայն որ ասէ ցիս Տէր Տէր, մտցէ յարքայութիւն երկնից, այլ որ առնիցէ զկամս Հօր իմոյ որ յերկինս է»։

Այ՛ն ընդէր արդեւք ոչ ասաց, թէ որ առնիցէ զՔրիստոսի կամս իմ։ Այլ քանզի դեռ ևս այն պատշաճ էր և ընդունելի, զի նախ զայն ընդունիցին՝ որ ինչ նոցա տկարութեան կարի՛ ի դէպ էր[1]։ Այլ այլազգ ևս. զի զայս այնու ակնարկեաց. և ընդ սմին և զայն ևս է ասել, քանզի չէք այլ կամք որդւոյ արտաքս քան զՀօրն։ Այս թուի ինձ, թէ աստ առաւել զՀրեայսն մերմոքեցուցանել և՝ ի կրօնսն դնել և զվարսն պաքկեչաս խնդրել։ Որպէս Պաւղոս պատուհասէ զնոսա, «Օ՛ի թէ դու Հրեայ անուանեալ ես, ասէ, և հրահանգուցեալ[2] ես յօրէնսն, և պարծիս յԱծ, և գիտես զկամսն». այլ չէ ինչ օգուտ քեզ յայնմանէ, եթէ ոչ զկարգացն և զգործոց հանդէս ցուցանիցես։ Այս ոչ այսչափ միայն, այլ և այլ իմն առաւել ասէ զանձնէ. եթէ «Բազումք ասացեն ցիս յաւուր յայնմիկ, Տէր Տէր ոչ յանուն քոյ մարգարէացաք»։

Օ՛ի ոչ միայն, ասէ, թէ զՀաւատսն ունիցիս՝ և գործոց անփոյթ առնիցես, ելանիցես յերկինս[3], այլ թէպէտ և հաւատովքն իսկ բազում նշանս առնիցես, տակայն և այնպէս արտաքոյ գտանիցիս ցանկալի և երանելի դրանցն։ «Բազումք, ասէ, ասիցեն ցիս յաւուր յայնմիկ, Տէր Տէր ոչ յանուն քոյ մարգարէացաք»։ Տեսանէս, զիարդ մեղմով տակաւ և զիւր անձն յայտնէ։ Իբրև զնամ հրամանսն առ ռամիկն կատարեաց, ապա ցուցանէ զանձնէ՝ թէ դատաւորն է։ Այս զի խնդիրքն ամ գործոց լմնելոց են, զայս վե-

1 Ի լուս. Խորի դեպ էր։
2 Ի լուս. հրայանգուցեալ։
3 Յօրինակին յերկինս. գուցէ ելանիցէ յերկինս։

բազմն յայտ արար։ Բայց թէ ոմն ասիցէ՝ որ դատե-
լոցն իցէ, յայտմ հետէ յայտ առնէ։ Եւ ոչ ասաց
յայտնի, թէ ես եմ դատաւոր, այլ թէ «Աստուածն
ասիցեն ցիս», զնոցն յարդարէ։ Զի թէ ոչ ինքն էր
դատաւոր, զիարդ ասէր ցնոսա, եթէ «Յայնժամ
ասացիցէ ցնոսա, 'ի բաց կացէք յինէն. քանզի ոչ էր-
բէք ճանաչեմ զձեզ»։

Եւ ոչ միայն 'ի դատաստանին ժամանակի, այլ և
յայնժամ իսկ՝ մինչ դեռ զնշանսն առնէր, զնոցն ա-
սէր ցաշակերտսն, եթէ «Մի խնդայք, թէ՝ դևք
հնազանդին ձեզ, այլ զի անուանք ձեր յերկինս
գրեալ են». և ամ ուրեք բազում փոյթ վասն վա-
րուց յանձին հրամայէ ցուցանել։ Զանգի ոչ եթէ
երբէք զմարդ՝ որ բարւոք կարգս ունիցի, և յամ
կարեաց ազատեալ իցէ, անտես առնիցէ. այլ թէ և
մոլորեալ էր իցէ, վաղվաղակի ձգէ զնա ած 'ի Հրշ-
մարտութիւն։

Բայց են ոմանք որ ասեն, թէ սուտ խօսէին զայն.
և յայնմանէ յայտ է, զի ոչն ապրեցան։ Զի այդ-
պէս իցէ, ապա զհակառակ սորին կամի ցուցանել,
եթէ հաւատք առանց գործոց ոչինչ օգնեն։ Եւ յա-
ւելու 'ի նոյն և զնշանսն, եթէ ոչ միայն հաւատք,
այլ թէպէտ և նշանս առնիցեն, չէ ինչ օգուտ, եթէ
առաքինութիւնս ինչ ոչ ցուցանիցեն։ Եւ զիարդ մոլ-
թիցի այնմ յայտնի լինել։ Եւ այլ ազգ ևս. նա և
թէ չէր արարեալ, ոչ իշխէին ասել՝ եթէ արարաք
ինչ. մանաւանդ 'ի դատաստանին ժամանակի։ Եւ
զի հարցանելով ևս ասէին, յայտնանէ յայտ է՝ թէ
արարեալ էր նոցա զնշանս։ Զի ոչ զորոյ կարծէին՝
տեսին զվախճան. և ասա զարմանալիք էին, զի առ-
ամենեսեան զաքանչելիս գործէին. և անդ տեսանէին
զանձինս 'ի տանջանս, հիացեալք և զարմացեալք
հարցանեն ցտէրն, թէ ոչ 'ի քո անուն[2] մարգարէ-
նայաք. արդ ընդէր դարձուցանես զերեսս 'ի մէնջ.
և արդ զինչ յայտ նոր և չքնաղ վախճանն կամի ցու-
ցանել։ Եւ նոքա զարմանային, զի այնչափ նշանս
առնէին, և 'ի տանջանսն մատնեցան. բայց դու մի

1 'Ի լուս. էի դեռ։ 2 Յորինակին ոչ 'ի ուռն մարգարէնայաք։

ինչ զարմանայցես. զի շնորհքն այնորիկ են՝ որ զպարգևսն շնորհեաց, և ոչ եթէ նոքա անձամբ ինչ առնէին. վասն որոյ արժանի են սանջանաց, զի և առնա՝ որ անարժանիցն ետ շնորհս, գոսան ապախտաւորք։

«Լրթայք, ասէ, յիսէն ամենեքեան, որք գործէք զանօրէնութիւն»։ Իսկ ոմանք ասեն, թէ ոչ 'ի ժամանակին մինչ զնշանսն առնէին՝ անօրէն էին, այլ յետոյ զարձան յանօրէնութենէ։ Այլ թէ այսպէս ևս իցէ, սակայն զփոյթն ոչ կասեցուցանէ։ Բայց զոր ցուցանեն կամեցաւ այս ինչ է. եթէ ոչ հաւատք և ոչ նշանք կարէն օգնել, եթէ վարք պարկեշտք չիցեն։ Օ՞ր և Պաւղոս իսկ ասէր. «Լրթէ ունիցիմ զամ հաւատս, մինչև զլերինս փոփոխել, և գիտիցեմ ըզխորհուրդս ամ և զամ գիտութիւն, և սէր ոչ ունիցիմ, ոչինչ եմ»։

Բայց ոմանք ասեն, եթէ բազումք 'ի հաւատացեալոց անտի՝ շնորհս առին։ Որպէս որ զգևսն հանէր, և ընդ նմա ոչ շրջէր. կամ որպէս Յուդա զի չար էր, և շնորհս ունէր։ Այս և 'ի հնումն իսկ որ թէ կամի գոսանել՝ յանարժանս շնորհացն այ գործս ցուցեալ վասն այլոց օգտի։ Վասանզի ոչ ամենեքեան յամենայն իրս պիտանիք էին, այլ կէսքն վարս պարկեշտս ունէին՝ և հաւատս ոչինչ այնպէս. իսկ 'այլք զնորին հակառակն, վասն այնորիկ իսկ զնոսա սոքօք յորդորէր, զի առաւել ցուցանիցեն զհաւատս. և զայլսն հաւատովքն կոչէ գալ յաշխարութիւն. վասն որոյ բազում առատութիւն իսկ պարգևէր զշնորհսն։ Վասանզի և ասէ իսկ, եթէ «Բազում զօրութիւս արարաք»։ Այլ սաստեցից նոցա, ասէ, յայնժամ, եթէ «Ոչ գիտեմ զձեզ»։ Այժմ կարծեն՝ եթէ սիրելիք ինչ իցեն իմ. բայց անդ գիտասցեն, եթէ ոչ իբրև սիրելեաց ետու զշնորհսն։

Այլ ընդ այն զի զարմանայցես, եթէ մարդոց հաւատացելոց 'ի նա՝ որ վարս ինչ ոչ ունէին միաբան հաւատացելոց[2], ետ շնորհս. ուր և յայնոսիկ՝ որք յերկոցունց իսկ անկեալ էին, գոսանի երևեալ զօրութիւնն։ Զի Բաղատամ և 'ի հաւատոց և յառաքել

1 'Ի լուս. Իսկ եթէ ասիցէ։ 2 'Ի լուս. 'Ի գործս հաւատացելոց։

նութեան վարուց օտար էր, սակայն ցուցին 'ի նա զօրութեան հնորհքն վասն այլոց տեսչութեան։ Այլ Փարաւոն այնպիսի էր, սակայն և նմա եցոյց զհանդերձեալս ինչ։ Այլ Ղաբրոդոնոսոսը անօրէն էր, բայց և նմա որ յետոյ ինչ լինելոց էր յայլ ազգս՝ յայտնեցաւ։ Այլ որդւոյն՝ որ զլէր զհայրն անօրէնութիւնք, ցուցան հանդերձեալ սքանչելիքն։ Ոչինչ և յայտժամ, քանզի դեռ սկիզբն էր քարոզութեանն, և բազում հանդիսիւ պարտ էր երևեալ զօրութեան նորա։ Վասն այնորիկ բազումք յանարժանիցն՝ հնորհս ընդունէին. բայց ոչինչ օգտէին 'ի նշանացն, այլ ևս առաւել 'ի տանջանս մնանէին։ Վասն որոյ և ահաղինս իսկ բարբառի առ նոսա, թէ «ՎՀ՛չ երբէք գիտեմ զձեզ»։ Այլ զբազումս արդէն իսկ ատեաց, և զերեսս դարձուցանէ 'ի նոցանէ։

Այրկիցուք և մեք, սիրելիք, և բազում փոյթ յանձին ցուցցուք վարուց. մի կարծիցեմք՝ եթէ սակաւ ինչ հնորհս ունիցիմք, թէպէտ և նշանս չառնիցեմք. այլ ոչ եթէ յայնմանէ օգուտ ինչ իցէ մեզ. որպէս զի և ոչ սակաւ ինչ 'ի չառնելոյն, եթէ յառաքինութենն ինչ չծուլայցեմք[1]։ Օ՛ի նշանացն մեք եմք պարտապանք, իսկ վարուցն և գործոցն զՅԾ ունիմք պարտապան։

Այլ արդ իբրև կատարեաց զՅՀառս առաքինութենն հաւաստեաւ, և զկեղծաւորսն յանդիմանեաց, թէ որպիսի ոք էին՝ որ առ մարդկան ակամէ պահիցեն և յաղօթս կայցեն, որք 'ի գառանցն հանդերձս գայցեն և ՀՆասակարք լինիցին, զոր խոզս և շունս անուանեաց, ապա յայտ առնէ, թէ ոչչափ առաքինութենն շահք իցեն, և ոչչափ ինչ չարեացն Հնասք։ «Վ՛մենայն, ասէ, որ լսիցէ բանից իմոց՝ և առնիցէ, նմանեցուցից զնա առն իմաստնոյ»։ Այլ որք անասայցեն նմա և լսիցեն բանիցն, յՀամ բարութիս վայելեսցեն, ոչ միայն 'ի հանդերձեալ աշխարհին, այլ և ասա։

«Վ՛մենայն, ասէ, որ լսէ զբանս իմ զայսոսիկ և առնիցէ, նմանեցուցից զնա առն իմաստնոյ»։ Տե-

1 Յօրինակին ԾՈՒՅՆԷՄ։

սանեն, զիարդ զունակս զունակս յեղյեղու զբանն. երբեմն ասէ, «Ո՛չ ամ որ ասէ ցիս ՝ուր ՝ուր». և սակաւ մի զանձն յայտ առնէ. և երբեմն ասէ, թէ «Որ առնիցէ զկամն Հօր իմոյ». դարձեալ և դատաւոր ցուցանէ զանձն ասելովն, եթէ «Խազուքք ասիցին ցիս յաւուր յայնմիկ, ո՛չ 'ի քո անուն մարգարէացաք. և ասացիցս ցնոսա, թէ ո՛չ գիտեմ զձեզ»։ Այլ ասա դարձեալ ցուցանէ զանձնէ, եթէ իշխանութիւն ունի ամենայնի. վասն որոյ և ասէ իսկ, եթէ «Որ լսիցէ բանիցս իմոց»։

Այլ քանզի զամ ինչ զՀանդերձելոցն Ճառեաց. արքայութիւն խոստացաւ և վարձս բազումս և միսիթարութիւն և այլ ինչ այսպիսիս, կամի և ասել տալ նոցա պտուղ, և ցուցանել թէ որչափ ինչ ասէն յայնմանէ ցիս օգուտ գործէ առաքինութիւն։ Այլ զի՞նչ իցէ օգուտն. այն իսկ է, զգուշութեամբն կեալ, չՀնազանդել չարեաց իմիք, և վերագոյն քան զամենայն փնասակարն լինել։ Որոյ զի՞նչ կայցէ զուգական։ Այլ զայս և ո՛չ որ զթագն իսկ 'ի գլուխս ունիցի՝ կարէ միշտ անձին հանդարտել. այլ որ զառաքինութիւս ունիցի. որ զայն մեծաւ առաւելութիւն ստանայ, 'ի մեջ անցաւոր իրացս զբօսանաց՝ 'ի բազում հանդարտութիւն վայելել միշտ։ Այլ զարմանք այն են, զի ո՛չ 'ի ջերմ ժամանակի, այլ միւսդեռ ալեկոծն ծռվածուփ իցէ, 'ի մեջ բազում փորձութեանց՝ նա և ո՛չ սակաւիկ մի ինչ շարժիցի։

«Լոյնն, ասէ, անձրևք և յարեան գետք և հնեցին հողքն և բախեցին զտունն, և ո՛չ կործանեցաւ. քանզի հաստատեալ էին հիմունքն 'ի վերայ վիմին»։ Ունձրև և գետս և հողմն՝ զմարդկեղէնն վիշտն և զտառապանն ակնարկէ առակաւ. զզրպարտութիւնս և զնենգութիւնս, զսուր, զմահս, զառ 'ի տանցն անկանել, զարտաքնոցն փնասակարութիւնս, և զամ ինչ միանգամայն՝ որ յաշխարհիս նեղութիւք իցեն։ Ամ ո՛չ իմիք հնազանդին այնպիսի իրաց առաքինեաց ոչ զիք. քանզի հիմունք նորա 'ի վերայ վիմին հաստատեալ են։ Այ էմ զամբութիւն իւրոյ վարդապետունն կոչէ. քանզի վէմ հաստատուն են հրամանքն, որ բարձրագոյն քան զամ մարդկան ալիսն առնեն։ Այլ

որ զայս զգուշութեամբ պահիցէ, ոչ միայն մարդկան ինքասակարութեան յաղթէ, այլ և դիւաց մեղանչականութեանն։

Եւ զի ոչ ընդ վայր ինչ պարծանք են բանքս, վըկայեսցէ առաքինին Յովբ, որ զամ զնեաս էառ թըշնամւոյն, և անշարժ եկաց հաստատուն։ Վկայեսցեն և առաքեալքն, յորոց վերայ ամ իսկ աշխարհացս ալիք հեղան, և ռամկաց և բռնաւորաց և ընտանեաց և օտարաց և դիւաց և սատանայի. և թէպէտ ամ մինքենայք բազմացան, քան զվէմ ևս հաստատուն կացին, և զամ շինջուցին։ Եւ զինչ ինչ է բանելի քան զայնպիսի վարս կայցէ. ոչ մեծութիւն և ոչ մարմնոյ զօրութիւն, ոչ փառք և ոչ հարստութիւն, և ոչ այլ ինչ այնպիսի կարէ նման համեմատ լինել, բայց միայն առաքինութեան ստացուածք։ Եւ զի չէք քան զնա, և չէք իսկ այլ կեանս ազատս յամենայն չարեաց գտանել, բայց միայն յայնպիսի կենաց։ Եւ վկայէք դուք իսկ ձեզէն, որ զարքունեացն զիտէք զնենգութիւս, և զբազի աղմուկք և խռովութիւնք 'ի մեծամեծաց տունս կայցեն. այլ ոչ այսպիսի ինչ յառաքեալսն։

Եւ արդ չկրեցին ինչ այնպիսի վիշտս արդեւք։ Եա քան զամ իսկ այն զարմանք են, զի եկին 'ի վերայ նոցա նեղութիւք, և հնչեցին ձմերունք, և նոքա ոչինչ զանգիտեցին. այլ մերկանդամ մարանչէին, և յաղթեցին։ Եւ դու թէ զնոցն գործ գործիցես, ըզբազումն ծաղր առնիցես. և եթէ այսպիսի առաքինութեան խրատու ամրանայցես, ոչինչ կարէ զքեզ տրամեցուցանել։ Զինչ ինչ հնաս կարիցէ առնել, որ զքեզ նենգել կամիցի։ Եթէ յընչից կամիցի արկանել, նախ քան զնորա սպառնալիսն առեր հրաման արհամարհել զինչսն, և այնպէս 'ի բաց մերժել, զի և 'ի ոտն իսկ այնպիսի ինչ ոչ խնդրիցես։ Եւ եթէ 'ի բանտ կամիցի արկանել, այլ նախ քան զբանսն այնպէս հրաման առեր կեալ՝ զի ամենեքին 'ի խաչ էլեալ լինիցիս աշխարհիս։ Եւ եթէ 'ի բամբասանս ինչ արկանիցէ, սակայն և անտի ազատ արար զքեզ Տէր, և բազումս ևս վարձս խոստացաւ, և այնպէս յստակ 'ի բարկութենէ և 'ի սրտմտութենէ արար

զքեզ, զի և 'ի թշնամեացն վերայ աղօթս հրամայէ առնել։ Լ,Ս եթէ բազում ինչ լինիս 'ի վերայ ածէ ցէ, այլ պայծառագոյն բոլորէ քեզ զպսակն։

Լ,Ս եթէ սպանանել ևս ոք կամիցի, սակայն և այնպէս մեծամեծ շահս գործէ քեզ. զի զմարտիրոսաց պարգևսն պատրաստէ քեզ, և վաղվաղակի 'ի խաղաղ նաւահանգիստն հասուցանէ, և մեծաց հատուցմանց լինի քեզ պատճառք, և 'ի հասարակաց դատաստանէն ազատէ զքեզ։ Լ,Ս որ քան զամ զարմանալի է, զի ոչ միայն ոչ վնասէն նենգիչքն, այլ և ընտիրս ևս կատարէն զայնոսիկ՝ որոց վնասէլն ևս կամիցին։ Որոյ զի՞նչ ինչ կայցէ զուգական. այնպիսի վարս յանձն առնուլ, զի որպէս ինքն է՝ նոյնպէս և նոքա լինիցին։ Լ,Ս քանզի ասաց՝ եթէ «Կեղ է դուռն, և անձուկ ճանապարհն», թէպէտ և այսու մխիթարեաց զվաստակաւորսն, ցուցանէ եթէ բազում զգուշութիւն է նորին, և բազում ցանկութիւն. որպէս և նորին հակառակորդին՝ բազում խարխապանք և վնասք։ Օ որ օրինակ առաքինութեան այսու եցոյց զհատուցումն, նոյնպէս և չարեացն՝ սոքին պատիժս։

Լ,Ս զոր միշտն ասէի, և այժմ ևս ասացից. զի երկոքումբքն ամ ուրեք յարդարէ զլսողացն զիրկուն. և առաքինութեան նախանձու, և չարեացն ատելութ։ Լ,Ս քանզի բազումք զարմանալոց էին ընդ բանսն, և գործոց ինչ արդիւնս ոչ ցուցանէին, յառաջագոյն գրաւէ ընդ երկիւղիս զայնպիսին. զի թէպէտ և բարի իցեն բանքն որ ասացան, չէ բառական 'ի զգուշութի ունկնդրութեան, այլ և արդեանցն հնազանդութեանն պէտք են. և ամ իսկ առաւել այնու։ Լ,Ս զահն սաստկացուցանելով՝ հանգուցանէ զբանն։ Որպէս զառաքինութեան՝ ոչ միայն 'ի հանդերձելոց խոստանայ զհատուցումն, զարքայութենէն ճառելով և զերկնից, և զանբաւ վարձն խոստանալով և մխիթարութիւն, և այլ ևս բիւրապատիկ բարութիւս. այլ և 'ի մօտաւորացս, զի հաստատունք լինելոց էին, և անշարժք իբրև զվէմն։ Նոյնպէս և վասն չարեացն՝ ոչ այնոքիւք որոց ակն ունէին միայն երկեցուցանել, ծառայն կարելով և անչէջ հրովն և յարքայութեան

չտանելով[1], և ասելով՝ թէ «Ոչ գիտեմ զձեզ», այլ և մեծաւորքս, շինածոցն կործանմամբ։ Ոմն այնորիկ իսկ և յայտնագոյն առնէ՝ թէպէտ և առաւել ինչ ասիցէ. քանզի չէր ընդ մի համար, չանկանել[2] 'ի բուռն՝ առաքինութեան, և վաղվաղակի ըմբռնել[3] չարագործին. յայն սակս զվէնն դնէ և տուն և զետ և անձրև և հողմն։

«Զմենայն, ասէ, որ լսիցէ զբանս իմ, և ոչ առնիցէ, նմանեսցի առն յիմարի, որ շինեաց զտուն իւր 'ի վերայ աւազոյ»։ Զոչ բարւոք իսկ կոչէ զայնպիսին մերոս. զի ոչ զոք քան զայնպիսին անմտագոյն կայցէ՝ որ 'ի վերայ աւազոյ տուն շինիցէ. զի զվաստակսն ծախիցէ, և 'ի հանգստեանն ոչ վայելեսցէ, և դարձեալ պատիժս ևս ընդ այնր կրեսցէ։ Զի որ տուն շինեսցէն, աշխատ լինին, ամ ումեք յայտ է. նա և յափշտակօղն և շնացօղն և զրպարտն բազում աշխատութիւն և տառապանս կրեն, զի զչարին իւրեանց յանգ հանիցեն. և ոչ միայն չօգտին ինչ անտի, այլ և բազում ևս վնաս կրեն։ Զոր և Պաւղոս ակնարկէ, թէ «Որ սերմանէ 'ի մարմին, 'ի մարմնոյ անտի հնձէ զապականութիւն»։ Զայնպիսումն նման էն՝ որ 'ի վերայ աւազոյ շինեն, որ պոռնկութեամբն և զիջութեամբ զդաժեալ իցեն, և ցասմամբ բորբոքեալք, և այլովք բազում չարեօք։

Որպէս Զաքարն էր, այլ ոչ այնպիսի որ Նղիա։ Զոչ եթէ առ միմեանս զնիցեմք զառաքինութիւն և զչարիս, ապա իմանամք ստոյգ զայլ և զայլ կերպարանս. զի մին 'ի վերայ վիմի շինեաց, և միւսն 'ի վերայ աւազոյ։ Զի թէպէտ և թագաւոր էր, գողայր և սարսեր 'ի մարգարէէն, որ զմահկեանն ասէր սիրեալ էր։ Զայնպիսիք էին և հրեայք, այլ ոչ այնպիսիք որ և առաքեալքն. թէպէտ և սակաւք էին և կապեալք, այլ զվիմի հաստատութիւն ցուցանէին. և նոքա թէպէտ և բազումք էին և վառեալք, զաւազոյ տկարութիւն ունէին։ Զանզի և ասէին իսկ, «Զինչ արասցուք զարսս զայսոսիկ»։ Զեսանէս, զի 'ի վարանս մնեալ էին, ոչ որ ընդ ձեռամբն էին

1 'Ի լուս. մթոնելով։
2 'Ի լուս. լանկանել։
3 'Ի լուս. ըմբռնել։

և կապեալք, այլ որ կալանն և կապեցին։ Եւ զինչ ինչ քան զայն զարմանք կայցեն. դուք կալայք կապեցէք, և ի վարանս մտեալ էք. և յիրաւի իսկ. քանզի ի վերայ աւազոյ շինեցին զտամ։ վասն այնորիկ և տկարապոյն քան զամենեսին էին։ Օ՛ի և ասէին իսկ, «Օ՛ի գործէք, զարիւն առնն կամիք աճել ի վերայ մեր»։ Օ՛ինչ խօսիս. դու տանջես, և դու երկնչես. դու խոշտանգես, և դու կասկածես. դու դատես, և դու դողաս։ Եւ յայտ է թէ այնպէս տկար են չարիքն։ Բ՛այլ ոչ այսպէս էին առաքեալքն։ Իսկ որպիսի՞ ինչ։ «Ընկալեմք մեք, ասէին, զոր ինչ տեսաքն և լուաք՝ չխօսել»։ Տեսանէս զմիտսն բարձրագոյնս, տեսանես զվէմն, զիարդ ի վերՀ էր՝ զալեօքն. տեսանես զտունն անշարժ։

Եւ այն իսկ են զարմանք, զի ոչ միայն չերկնչէին ի չարչարանաց լսելոյն, այլ և առաւել համարձակութեամբ առնուին, և զնոսա ի բազում կասկածանս մտչէին։ Բ՛անզի որ զադամանդ հարկանիցէ, ինքն հարկանի. և որ խեմանի ընդդէմ աքացիցէ, ինքն խոցի. նոյնպէս և որ զառաքինին նենդիցէ, ինքն պատժի. և չարիքն առաւել յայնժամ տկարանան, յորժամ ընդ առաքինութեան ձակատ տայցեն։ Եւ զոր օրինակ յորժամ հուր ոք ի հանդերձ ծարիցէ, զոցն չկարէ շիջուցանել, և զհանդերձսն այրէ և ծակոտէ, նոյնպէս և որ զարդարսն նեղիցէ, և զնոսա ևս լուսաւորագոյնս առնէ, և զիւր անձնն մաշէ յապականութիւն։ Օ՛ի որչափ և վիշտս յանձն առնուցուս, յորժամ՝ ի հեզութեամբ կայցես, ևս առաւել զօրագոյն լինիս. և որչափ պատուիցեմք զզգաստութիւն, նոյնչափ ոչ իմիք կարօտանայցեմք, նոյնչափ զօրագոյն լինիմք։ Որպիսի՞ ոք Յովհաննէս իսկ էր. զի զնա ոչ ոք տրամեցուցանէր, և նա զՀերովդէս տրամեցուցանէր. զի նա որ ոչինչ ուներ, զեր՛խէրոյ լինէր այնմ՝ որ ուներ. և որ զթագն և զծիրանին և զպէսպէս պաճուճանսն ուներ, դողայր և սարսէր ի մերկոյն։ Օ՛ի և մինչ գլխատեալն էր, չկարէր անկասկած լինել ի նմանէ. և զի յետ սպա-

1 Յորինակին Դ ԱՀԷ. մարթ է ուզել և Դ Վ է։

նանեալսն և երկնչէր, լուր զինչ ասէրն, եթէ «Սա է Յովհաննէս՝ զոր էին սպանի»։ Այլ եթէ առ հրապարտանալ ինչ ասէր, այլ առ երկնչել. զի յիշեալսն անձին միութեամբ տայցէ, թէ սպանի զնա։ Այլ պէս իսկ և յետ վախճանելոյն հոգւոյ քան զկենդանին են առաքինիքն։ Քանզի և մինչդեռ կենդանի իսկ էր, բազում մեծատունք առ նա եկեալ ասէին, եթէ «Օ՞ինչ արասցուք». և զինուորքն 'ի նմանէ խրատ խնդրէին։

Այսպիսի էր և Աղնա. զի այսպիսի իսկ համարձակութիւն բարբառէր առ բազում ժողովուրդն, թէ «Մինչև յերբ կաղս 'ի կաղս իցէք յերկուս ոտս ձեր»։ Եւ սա ասէր, «Ինչունդք իւից՝ ո՞ եցոյց ձեզ փախչել»։ Եւ նա սպառնայր Աքաաբու, թէ «Հա սպաներ և ժառանգեցեր»։ Եւ սա յանդիմանէր զՀերովդէս, եթէ «Չէ արժան քեզ ունել զկին եղբօր քոյ Փիլիպպեայ»։ Ցեսանեն զվիմին հաստատութիւնն, և զուաղջին զքայքայութիւնն, զիարդ վաղվաղակի կործանի. քանզի և ասէ իսկ, եթէ «Լինի կործանումն նորա մեծ յոյժ»։

Օ՛ի ոչ սակաւ ինչ է, այլ և ոգւոյն կորուստ է, և յերկնից բարձրութեցն անկանել. և ոչ այնչափ միայն, այլ և աստէն իսկ հանապազորդ հոգւոյ բեկեալ, յերկիւղի և 'ի կասկածանս մաշեալ։ Զ ասն որոյ և ասէ իսկ իմաստունն, եթէ «Փախուցեալ եղեալ՝ յայսպիսիքն և 'ի ստուերացն երկնչին, և զբարեկամն թշնամիս համարին, և յիւրեանց ծառայից կասկածեն, եթէ դիտիցեն ինչ զնոցա և եթէ ոչ դիտիցեն. և յառաջ քան զտանջանսն՝ աստէն իսկ յանհնարին տանջանս են։ Զ ասն որոյ և ասէ իսկ Դաւ, եթէ «Լը կործանումն՝ նորա մեծ յոյժ»։

Եւ արդ ամրացուցեալ այնպիսի պատուիրանօք, և զայսոսիկ՝ որ կարի անհաւատքն իցեն՝ հաւանեցուցանել փախչել յանցաւորացս. զի թէպէտ և մեծամեծք իցեն հանդերձելոյն սասաք, այլ զԹանձրամիտսն ոչ այնքան կարձէ և արդելու 'ի չարեաց. վասն որոյ և անդ իսկ հանգուցանել զբանն, զի և զայն իսկ առնիցէ կայեան շահիցն նոցա։

ՑՈՐԴՈՐԱԿ

Եւ արդ զայս ամ իմացեալ 'ի մօտաւորսս և 'ի հանդերձեալսն, փախիցուք 'ի չարեաց և նախանձաւոր լիցուք բարեաց. զի մի 'ի զուր ինչ և ընդ վայր վաստակիցիմք. զի և աստ բոշխնիցեմք[1] ըզբարիսն զգուշութիւն, և անդ վայելիցեմք 'ի փառսն։ Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութիւն նոն մերոյ Յեսի Քրիստի. որում փառք յաւիտեանս. ամէն։

1 'Ի լուս. ըմբոշխնիցեմք։

ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

«Այլ եղև իբրև կատարեաց Յն զբանս զայսոսիկ, զարմանային ժողովուրդքն ընդ վարդապետութիւն նորա»։

ԱՌԷՊԷՏ և տաղտկալ պարտ էր ընդ ծանրագոյն բանսն, և տաղտապել ընդ բարձրուն հրամանացն, նա աւանիկ այնպէս իմն էր զօրութեն վարդապետին, մինչ ախորժելիս զբանն առնել, և զբազումս 'ի նոցանէ գրաւել և 'ի մեծամեծ զարմանս ածել. զի ոչ կամէին թէ բնաւ լուիցէ իսկ 'ի յուսուցանելոյն։ Քանզի և յորժամ 'ի լեռնէն էջ, ոչ մեկնեցան 'ի նմանէ լսողքն, այլ նոյնպէս ամ իսկ տեսողքն զկնի գնային նորա. զի այնպէս անկաւ զութ 'ի բանիցն 'ի սիրտս նոցա։ Այլ առաւել ընդ իշխանութեն զարմանային. զի ոչ եթէ յայլ ոք հանէր զբանսն որպէս Մովսէս և մարգարէքն, այլ ամ ուրեք՝ զիւր անձն ցուցանէր իշխանութեն ունել ամի։ Քանզի 'ի ստէպ օրէնսդնէն՝ զայն եւս յաւելոյր, եթէ «Բայց ես ասեմ ձեզ»։ Այլ յորժամ զդատաստանին օրէ յիշեցուցանէր, զիւր անձն դատաւոր ցուցանէր, և տանջանացն և պատժոց զինքն իշխան։

Ամենեպետ և 'ի դէպ էր ընդ այն խառնել նոցա. զի եթէ մինչ գործօքն ցուցանէր զիշխանութեն, քարկոծել կամէին զնա գպիրքն, իսկ ուր բանիւքն զնոյն յայտ առնէր, զիարդ ոչ էր 'ի դէպ նոցա գայթագղել. և մանաւանդ զի 'ի սկզբանն այնպիսի բանս խօսէր, մինչև զզօրութեն իւրոյ փորձ ցուցեալ։ Սա կայն ոչինչ այսպիսի ախտիւք ախտացան։ Յորժամ միտքն և ոգիքն հաւանողք իցեն, վաղվաղակի անսան ճշմարտութեանցն։ Ա՝ սան այնորիկ մինչդեռ նշանքն քարոզէին զզօրութեն նորա՝ գայթագղէին. և սոքա բանս ևեթ լսէին, և հաւանէին և զհետ

1 'Ի լուս. ռոեէ։

երթային։ Որպէս և աւետարանիչն ակնարկեալ ասէ, եթէ «Յերթային զհետ նորա ժողովուրդք բազումք»։ Ո՛չ յիշխանաց ոք և ո՛չ ի դպրաց, այլ որք ի չարեացն աղատ էին, և միտս անմանկս[1] ունէին։ Յորմ ժամ զայնպիսին տեսանես յաւետարանին երթեալ զհետ նորա։ Յորմ մինչդեռ խօսէր նա, նստեալով[2] ունկն դնէին, և ոչինչ խափանէին, և ոչ զկարգն ընդ մէջ մտանէին, և ոչ ի հարց և ի փորձ արկանէին, և ոչ պատճառս խնդրէին, որպէս դպիրքն և փարիսեցիքն։ Այլ և յետ հրապարակաւ վարդապետութեանն դարձեալ զհետ երթային, և զարմանային։

Յորմ դու միտ դիր խմաստութեան նոցն, զիարդ պէս-պէս շահս յաձախակ մերձաւորացն. զի ի նշանացն ի բանս շրջի, և դարձեալ ի բանիցն վարդապետութեէ ի նշանսն։ Որ ինչպէս եղեալ ի լեառն՝ զբազումս բժշկեաց, զի յառաջադոյն ձանապարհ բանիցն հորդիցէ։ Յորմ յետ կատարելոյ զայնչափ հրապարակախօս վարդապետութեան՝ դարձեալ ի նշանսն գայ, զի հաստատեսցէ արդեամբքն զանսն։ Յորմ քանզի իշխանութեամբ ուսուցանէր, զի մի կարծիցի ինչ՝ թէ անձնայարգութեամբ և պարծանաց ելեալ վարդապետութիւն, վասն այնորիկ և արդեամբք ևս ցուցանէր զիշխանութիւնն ի բժշկել հիւանդացն. զի մի ինչ խռովիցին յորժամ տեսանիցեն զնա իշխանութեամբ ուսուցանել։

«Յորմ իբրև էջ, ասէ, ի լեռնէ անտի, զհետ չոգան նորա ժողովուրդք բազումք. ահաւասիկ մերձեցաւ առ նա բորոտ մի, աղաչէր և ասէր, թէ եթէ կամիս կարող ես զիս սրբել»։ Աղաչում խմաստութիւն և մեծ հաւատք էին առնն. զի ոչ խափանեաց զվարդապետութիւն, այլ դադարեաց բաւեաց մնաց ի դէպ ժամանակի. և իբրև էջ ի լեռնէն, ապա մերձեցաւ. ոչ վայրապար, այլ բազում ջերմութեամբ. և ի գուշն ևս անկանէր՝ որպէս և միւս աւետարանիչն յայտ առնէ, սերտ հաւատովք և պատշաճ կարծեօք։ Զանազի ոչ ասաց թէ յաղօթս կայցես և խնդրիցես յայ, այլ «Եթէ կամիս, կարող ես սրբել»։

1 Ի լուս. անխորհանիս կամ անմարս. յոյնն անիմաստս։ 2 Ի լուս. անասելով։

Եւ ոչ ասաց, թէ ՝ի՛ր սրբեա զնս, այլ ՝ի նա ապաւ-
տան արար զիշխանութիւն։

Եւ եթէ յանդէպ ինչ էին կարծիք բորոտին, ա-
պա խոտել օրէն էր զսուտ կարծիսն, և սատել և
ածել զնա յուղղութիւն. նա աւանիկ հաստատել ըզ-
բանն։ Բ՝անզի ոչ ասէ, եթէ սրբեաց, այլ թէ «Կա-
միմ, սրբեաց». զի ըստ նորա կարծեացն, նոյնպէս
և զՀրամանն տայցէ։ Իսկ առաքեալքն ոչ այնպէս
ինչ, յորժամ ժողովուրդքն զարմացեալ հարցանել-
ին ընդ նոսա. «Օ՞ի, ասէ, պշուցեալ հայիք ընդ մեզ,
իբրու թէ անձամբ ինչ իշխանութեամբ ուսաք զմս
գնալ»։ Իսկ ՝ի՞ր թէպէտ և բազում անգամ խո-
նարհագոյնս խօսեցաւ, որ չէր ինչ նորա փառացն
արժանի, մինչ զի զՀրամանս հաստատիցէ. այլ ասա-
մինչդեռ զարմանային ընդ իշխանութի՝ նորա, և զայս
ևս յաւել՝ թէ «Կամիմ սրբեաց»։ Օ՞ի թէպէտ և
այնչափ և այնպիսի նշանս արար, ոչ երևի ուրեք՝ թէ
այսպիսի ինչ բարբառեցաւ. այլ ասա զի հաստատես-
ցէ զընտաւ ռամիկն և զբորոտին կարծիս, «Կամիմ,
ասէ, սրբեաց»։

Եւ ոչ ասաց միայն և չարար, այլ և զարդիւնսն
ընդ բանին երևեցոյց։ Իսկ եթէ չասաց բարւոք, և
հայհոյութիւն ինչ բանք էին, ապա խոտանել պարտ
էր գործոյն. նա աւանիկ հնազանդ եղև բնութիւնն
հրամանին։ Եւ մեծաւ պատշաճութիւ՝ զվաղվաղակին
դնէ աւետարանիչն. զի երագ երագն քան զվաղվա-
ղակին ևս հեզգագոյն է ՝ի փոյթ ինչ գործոց։ Եւ
ոչ լոկ ասաց, թէ կամիմ սրբեաց, այլ և «Օ՞ձեռն
ևս ձգեաց, և մերձեցաւ ՝ի նա»։ Օ՞ որ մանաւանդ
պարտ իսկ է խնդրել, թէ ընդէր, զի կամքն և բա-
նիւ սրբեաց, և զձեռն ևս մատուցանէր։ Մուի ինձ
թէ ոչ վասն այլ իրիք, այլ զի ցուցցէ և այնու իսկ՝
թէ չէ հնազանդ օրինացն, այլ ՝ի՞ր է օրինացն. և
թէ սրբոյ չէ ինչ որ անսուրբ իցէ։ Վասն այնորիկ
և Եղիշէա և ոչ տեսանել իսկ կամեցաւ զԵ՝ղեսման
բորոտ, այլ և զայթաղեցոյց ևս, զի ոչն էլ և ետես
վասն հաւատեաւ զօրէնսն պահելոյ. քանզի ՝ի տան
նստէր, և առաքէր զնա երթալ լուանալ ՝ի Յորդա-
նան գետ։

Լսակ ՝ուրն զի ցուցցէ, թէ ոչ իբրև զծառայ, այլ իբրև զտէր բժշկէր, մերձենայ. զի ոչ եթէ ձեռն ՝ի բռ բորոտութենէն պղծէր, այլ մարմինն բորոտ՝ ՝ի՞ սուրբ ձեռանէն լինէր նոր։ Բ.անզի ոչ եթէ զմարմինս և եթէ եկն բժշկել, այլ և զոգիս և ածել ՝ի ցածութիւն։ Օ՞ որ օրինակ զանլուայն ձեռօք հաց ուտել ոչ և ս արդելու ազնուական և նոր օրինօքն, զոր վասն անխտրութեաՀ կերակրոցն ՝ի միջև դնէ, նոյնպէս և աստ խրատէ, եթէ ոգւոցն պարտ է դարման տանել, և արտաքին սրբութեցն ոչ այնպէս կալ պատկառ. այլ զներքինսն սրբել, և ՝ի նորին բորոտութենէն կասկածել՝ որ են մեղք։ Օ՞ի բորոտութի ոչինչ է խաչման առաքինութեաՀ. յայն սակս նախ ինքն մերձենայ, և չիք ոք՝ որ մեղադիր լինիցի. քանզի չև և ս էր առաՀեանն խանդաբեալ, և ոչ տեսօղքն ՝ի նախանձուէ վնասեալք։ Վասն այնորիկ ոչ միայն չաղարտէին, այլ և զարմանային և ս ընդ նշանսն. և ՝ի բանիցն և ՝ի գործոցն տային նորա զօրութեանն յաղթութիւն, և պագանէին նմա երկիր։

Լ՞բև բժշկեաց զմարմին բորոտին՝ ապա և հրամանս տայ չասել ումք, այլ ցուցանել զանձն քահանային, և մատուցանել պատարագս, որպէս և հրամայեաց նոցա Մ՝ովսէս ՝ի վկայութի նոցա։ Ամենք ասեն՝ յայն սակս ոչ հրամայեաց ասել ումք, զի մի նենդիցեն ինչ զքննութի սրբութեանն քահանայքն։ Ա՛սարի անմտութիւ զայսպիսի կարծիս. քանզի ոչ եթէ այնպէս սրբեաց՝ եթէ երկեանն ինչ մնայր առ ՝ի քննել զբորոտութին։ Բ.այլ յայն աղագս չը հրամայեաց ասել, զի անպարծութի և անմեծարութի ուսուցանիցէ։ Ա՛յա և գիտէր իսկ, եթէ ոչ առնու յանձն թաքուցանել, այլ աշխարհագոյժ առնել զերախտիս երախտաւորին. բայց սակայն նա զիւրն արար։

Լ՞ւ զիարդ այլ ուր հրամայիցէ պատմել։ Ա՛չ եթէ ինքն ինչ անձին դիմադարձ և հակառակ լինէր, այլ զի զմեզ խրատիցէ հնորհակալս լինել. և ոչ զանձն ինչ հրամայէր քարոզել, այլ այ՞ հօր տալ փառս։ Լսակ բորոտաւն անհոգարտս և անանձնգոլս ուսուցանել լինել մեզ. և նովաւ հնորհակալս և չժխտել զե-

բախտիսն. և ամենևին խրատէ, զի ընդ ամ գործոցն տայցէմք գովուիս ՝ն։ Այլ քանզի բազում անգամ մարդիկ՝ յորժամ 'ի հիւանդութիւն իցեն, յիշեն զԱծ. և յորժամ յախտէն զերծանին՝ յուլանան, հրամանն տայ՝ միշտ յառողջութիւն և 'ի հիւանդութիւն ընդ ՝ն։ Եւ զի՞նչ ասէ, տուր փառս ՝այ։

Այս վասն էր հրամայիցէ ցուցանել նմա զանձն քահանային, և մատուցանել պատարագ։ Այլ զի և այսու ևս զօրէնսն կատարիցէ։ Զանգի՞ չէ ամ ուրեք պահեաց զօրէնսն, և չէ ամ ուրեք ելոյծ. այլ մերթ զայն առնէր, մերթ զայս. զի այսու հանդերձեալ զգաստութեն հոգիցէ ճանապարհ, և այնու զանամթի լեզուս հրէիցն ունիցի, և ըստ նոցա տկարութեն զիջանիցէ։ Այս զի՞ զարմանաս եթէ 'ի սկզբանն այսպիսի ինչ առնէր, ուր և առաքեալքն յետ հրամայելոյ 'ի հեթանոսս երթալ, և ամ աշխարհաց բանալ զդուռն վարդապետութեն, և զօրէնսն փակել, և զհրամանսն նորոգել, և զհինսն ամ ցածուցանել, երևին զի մերթ պահեն զօրէնսն, և մերթ ստերիւրին[1]։

Այս այն զի՞նչ, ասէ, առ օրինացն պահպանութի՞ կատարիցէ՝ թէ «Այ՛րթ ցոյց զանձն քո քահանային»։ Այլ քանզի օրէնք հինք էին, յորժամ բորոտ ոք սրբէր՝ չ անձամբ ինչ զքննութի սրբութեն որոնել, այլ երթալ ցուցանել զանձն քահանայապետին, և նա ընտրէր։ Զոնե ասէր քահանայն՝ սրբեալ է, խառնելին. եթէ երկմիտ ինչ լինէր, և այլ ևս ժամանակս արտաքոյ նստէր բանակին կամ քաղաքին։ Զ ամն այնորիկ ասէ, «Այ՛րթ ցոյց զանձն քո քահանային», և մատո՛ պատարագ, զոր Մ՛ովսէս հրամայեաց»։ Եւ չէ ասաց, թէ ես հրամայեցի, այլ առ օրէնսն առաքէ։ Զ՛է զի քննիցի, որ յամենասուրբ ձեռացն սրբեցաւ, այլ զի և այնու ևս կարկիցէ զբերանս նոցա, զի մի ասիցեն՝ եթէ զքահանայիցն փառսն յափշտակեաց, և զգործն նոցա կատարէ։ Զ՚ս նոսա առաքէ, և զնոսա առնէ քննիչ իւրոյ սքանչելեացն. այնչափ, ասէ, հեռի եմ 'ի կռուելոյ ընդ Մ՛ովսիսի և ընդ քահա-

1 'Ի լուս. ՀԵՐՅՈՒԵՆ։

նայեն, զի որք յինէն բժշկիցին՝ 'ի նոցա հնազանդութիւն առաքեմ։

Այլ զինչ իցէ, եթէ «'Ի վկայութիւն նոցա»։ Այն իսկ է, զի 'ի կշտամբութիւն և յամբաստանութիւն նոցա լինիցին իրք, թէ եւս 'ի նմին ապաիստաւորութիւն կայցեն։ Այլ քանզի ասէին՝ եթէ զմոլորեցուցիչ և ըզխաբեբայ հալածեմք, և զհակառակ ՝այ և օրինազանց, դու լինիցիս ինձ վկայ, ասէ, 'ի ժամանակին յայտնիկ, զի չեմ օրէնսզանց. քանզի առաքեմ ըզքեզ առ օրէնսն, զոր եսդ բժշկեցի, և 'ի քահանայիցն քննութիւն։ Այլ այս պատուելոյ զօրէնսն էր նշանակ, և մեծարելոյ զՄովսէս, և ոչ թէ հակառակ ինչ լինելոյ հնոյ կրօնիցն։ Զի՞ պէտ և նոքա չէին ինչ շահելոց անտի. այլ զի զօրէնսն պատուէր՝ մարթի յայտնանէ իմանալ։ 'Այս և յառաջագոյն իսկ գիտէր, թէպէտ և զամ իսկ կատարիցէ, սակայն նոքա չէին ինչ օգտելոց։ Քանզի և կանխաւ իսկ գիտէր, և յառաջագոյն ասաց։ Զ՞չ ասաց, եթէ յուղութիւն ինչ նոցա կամ 'ի վարդապետութիւն, այլ թէ 'ի վկայութիւն նոցա. այն իսկ է՝ զի յամբաստանութիւն և 'ի կշտամբութիւն նոցա լինելոց էին իրքն. այլ և 'ի վկայութիւն՝ եթէ յինէն ՝ամ ինչ եղև և կատարեցաւ. և թէպէտ յառաջագոյն գիտէի՝ թէ չէիք ինչ ուղղելոց, այլ ոչ իւիք պակասեալ գտայք զոր պարտէր ինձ առնել առ ձեզ. այլ նոքա եւս քան զեւս պահէին 'ի մտի զոխսն։

Բայց զայս և այլ ուր իսկ ասէ, եթէ «Արարողեսցի աւետարանս[1] ընդ բնաւ աշխարհ 'ի վկայութիւն՝ ամ հեթանոսաց», և ապա եկեսցէ կատարած»։ Հեթանոսաց՝ որք ոչ հնազանդեսցին։ Զի մի որ ասիցէ՝ թէ ընդէր քարոզիցես, եթէ չիցեն ամենեքեան հաւատալոց. այլ ես զնմն, ասէ, արարից, զի մի որ մեղ դնիցէ՝ որպէս զի չիցէ լուեալ. վկայեսցէ և ըմբերանեսցէ զնոսա քարոզութիւն, զի մի յետոյ պատճառիցեն՝ թէ չիցէ լուեալ. քանզի ընդ ՝ամ ծագած տիեզերաց տարածեցաւ բանն ՝ածպաշտութեն։

1 Յօրինակին ա-ԷԿԷՐՈՆ։

Օ՜ԱՑՍ ամենայն իմացեալ, զառ 'ի մէնջն զնմա կատարեսցուք յընկերսն, և զայ հանապազ դոհացօղք լիցուք։ Վանդն յոռուԹԵ գործ է, եԹէ յեբախտիս նորա զօրհանապազ վայելիցեմք, և բանիւք և անգամ շնորհակալ չլինիցիմք։ Այս այն զի և շընորհակալուԹիւն և մեզ օգուտ բերիցէ։ Վանդն ոչ եԹէ նա ինչ կարօտ մերովքս իցէ, այլ մեք ամենեին նորայովքն. քանդն և գոհուԹիւն իսկ նմա ինչ ոչ յաւելու, և զմեզ և ընտանեգոյնս կազմէ նմա։ Օ՛ի ԹԷ յորժամ զմարդկան երախտիս յիշիցեմք, բորբոքիմք 'ի սէր, ուրչափ և առաւել յորժամ ըզ-նոն զուղղուԹիս՝ որ 'ի մեզ գործեաց՝ յիշիցեմք, և յորդորագոյնք 'ի նորա պատուիրանսն լինիցիմք։ Ասիցի իսկ ասէր Պաւղոս, ԹԷ «Գոհացօղք լինիջիք»։ քանդն ամուր պահապան երախտաւորուԹեանն՝ յիշատակ երախտաւորին, և հանապազորդ գոհուԹիւն։

Այս վասն այնորիկ և ահագին խորհուրդքն՝ որ լի բազում փրկուԹիւն են, և յամ ժողովուրդս կատարեալ, ԳոհուԹիւն կոչին։ Վանդն բազում բարեբարուԹեց յիշատակ են, և գլուխ ամ խնամոցն այ։ և ամենեին կազմին 'ի գոհանալ։ Օ՛ի ԹԷ ծնանել 'ի կուսէն մեծամեծ սքանչելիք իցեն, և զարմացեալ ասէր Գաբրիել. ԹԷ «Այս ամ եղև», զմեռանելն ուրչափ ինչ համարիցիմք։ Այ՛Թէ 'ի ծնանելն այս ամ կոչիցի, իսկ 'ի խաչ ելանել՝ և զարիւն հեղուլ, և զիւր անձն տալ մեզ կերակուր և ուրախուԹիւն հոգևոր, ուրչափ ինչ կոչիցի։

Գոհացցուք այսուհետև հանապազ զնմանէ և բանիւք և արդեամբք. և զայն քան զամ նախամեծար համարեսցուք։ Գոհացցուք մի վասն մեր միայն, այլ և վասն այլոց բարուԹեց. զի այնպէս և զնախանձն 'ի միջոյ բառնալ կարասցուք, և զսէրն հաստատուն և սերտագոյն գործել։ Վանդն չկրեն իսկ ձեռնհաս այնուհետև նախանձել, վասն որոյ գո-

հանապազեմք զնոսա։ Վասն զի քահանայն վասն ամենայն աշխարհի, և վասն առաջնոցն և վասն այժմուցս, վասն վաղուց գործելոյն և վասն որոյ յետոյ գործիցին ի մեզ, հրամայեալ զոհանալ՝ մինչդեռ պատարագն առաջի կայցէ. զի այն և յերկրէ քակէ զմեզ, և յերկինս փոխէ, և հրեշտակս ի մարդկանէ առնէ։ Վասն զի և նոցա գունդս գործեալ պարտ առեալ կան, և վասն մերոյ բարուքեանցն զոհանան զայս. «Փառք, ասեն, ի բարձունս այ, և յերկիրս խաղաղութիւն, և ի մարդիկ հաճութիւն»։ Այլ զի՞ առ ձեզ, որ չիցէք դիերկրի և ոչ մարդիկ իցէք։ Այս առաւել ևս, ասէ, մեզ հանարիմք. քանզի այնպէս խրատեցաք զծառայակիցսն սիրել՝ մինչև զնոցա բարութիւնն մեզ հաշուել։

Այլ ինչ իսկ և Պաւղոս յամ ի Թուղթն՝ վասն ամ աշխարհաց ուղղութեանն զոհանայ։ Այլ մեք այսուհետև վասն մերոց և վասն այլոց, վասն մեծամեծաց և վասն փոքրունց ցանգ զոհացօղք լիցուք։ Թէպէտ և փոքր ինչ իցի՝ որ տուաւն, այլ մեծ է՝ զի յայ տուաւ. և մանաւանդ թէ չիք ինչ փոքր ի նմանէ, ոչ վասն զի ի նմանէն պարգևիցի, այլ զի և բնութիւն իսկ այնպիսի է։

Այլ զայն ամ թողից՝ որ և աւազոյ բազմութիւն յաղթէ, զինչ հանգոյն մտաեսութիւն կայցէ՝ որ վասն մեր եղև։ Որ քան զամ առաւել պատուական էր նման, զմիածին որդին՝ վասն մեր թշնամեաց մատնեաց. և ոչ միայն մատնեաց, այլ և յետ տալոյն՝ ի սէզան ևս եդ զնա մեր առաջի։ Օ ամենայն վասն մեր արար, և զտալ զնա, և հնորհակալս վասն նորին առնել զմեզ։ Այլ քանզի յաձախ դժգոհէ մարդ, ամ ուրեք ինքն երաշխաւոր մնանէ, և կալցէ զբազմարսն մեր։ Այլ որպէս առ հրեիւքն արար, տեղեաքն և ժամանակաքն և ոճսիւքն յիշեցուցանելով զերախտիսն, նոյնպէս և ասա գործեաց. յօրինակէ զենման հանապազորդ պատարագին՝ զերախտեացն որ ի մեզ եղեն զյիշատակն տնկէ ի մեզ։ Օ ի՛ ոչ այնպէս ոք փութայ՝ ընտիրս և լաւս և մեծամեծս և ամենեին հնազանդս առնել զմեզ, որպէս արարիչն մեր ամ։ Ինչ իսկ և ակամայ բազում անգամ բարերա-

բութիւն գործէ 'ի մեզ, և զոր ոչ գիտիցեմք և զոր ոչ ակն ունիցիմք։

Այսպա եթէ զարմացուցանիցէ ինչ զքեզ բանս և օտար թուիցի, ոչ դոյզն ումեք, այլ երանելւոյն Պաւղոսի ցուցից դիպեալ այսպիսի ինչ։ Զի մինչդեռ 'ի վիշտն և 'ի նեղութիւնս բազում անգամ աղաչէր զնոյն զերծուցանել 'ի փորձութենէն, սակայն ոչ 'ի խնդրուածս նորա, այլ յօգուտն նայէր. և յայտ իւր իսկ արարեալ, ասէր թէ «Շատ են քեզ ընդարձակ իմ, զի զօրութիւն իմ 'ի տկարութիւն կատարի»։ Որպէս զի յայտ իսկ է, թէ յառաջ քան զխնդրելն նորա՝ ակամայ իսկ զոր ոչ գիտէր ընդունէր բարերարութիւն։ Այս արդ զինչ խնդրէր աւելի քան զայն խնամակալութիւն. գոհացօղս պատուիրէ լինել։

Հաւանեսցուք այսուհետև, և ամ ուրեք զնոյն պահեսցուք. քանզի և զհրեայսն ոչինչ այնպիսի կոչոյս, որպէս դժգոհսն լինել. և բազում յաճախ հարուածս նոցա ոչ այլ ինչ եաց, թէ ոչ նոյն. մանաւանդ թէ յառաջ քան զհարուածսն՝ զոգիս նոցա նոյն կոչոյս և ապականեաց։ «Այնհորհակալին յոյս, ասէ, իբրև սառն ձմերայնոյ է»։ Զի այնպէս բերբատացուցանէ և կսկծեցուցանէ զոգիս՝ որպէս սառն զմարմնս. և այն 'ի հպարտութենէն լինի, և զանձն առ լաւս ունելոյ։ Այսպա ուրեմն մտավարժ՝ ոչ միայն վասն բարութենէն, այլ և վասն որ նոցին հակառակն թուիցին, գոհանայ զնոյ. և որչափ ինչ վիշտս կրիցէ՝ չհամարի թէ չիցէ այնմ արժանի։ Այսպէս և մեք որչափ զարգանայցեմք յառաքինութեան, և աս քան զևս կակղացուսցուք զմիտս. քանզի այն իսկ է առաւել առաքինութի։ Զի որ օրինակ որչափ քաջ և սուրբ ակամբ տեսանիցեմք, յայնժամ խմանամք՝ եթէ որչափ 'ի բացեայ եմք յերկնից. նոյնպէս և որչափ յառաքինութեանն զարգանայցեմք, և աս քան զևս խրատիմք, եթէ որչափ ինչ իցէ 'ի միջի ընդ մեզ և ընդ ածի։ Այանզի չէ սակաւ մասն զգաստութեան՝ կարող լինել 'ի միտ առնուլ զմեր պատիւն. զի այնպիսի է որ առաւել գիտէ զանձն, որ չհամարիցի ինչ զանձն։

Ղ.մին իբրև խակ և Դաւիթ և Ա.բրահամ, որ'ի կա-
տարեալ և'ի զլուխ առաքինութեան ելին, յայնժամ
առաւել ցուցին ուղղութիւն։ Օ ի մին՝ հող և մոխիր
կոչէր զանձն, և միւսն որդն՝ և՝ ոչ մարդ. նոյնպէս
և ՅՈՎ սուրբք զանձինս'ի չափոյ ունէին։ Որպէս զի
որ հպարտութեամբն ամպարհաւաճ ելցէ, նա է որ
առաւել չճանաչիցէ զանձն։ Զանազի և հասարակաց
սովորութիւն է ասել զամբարտաւանէն, թէ չճանաչէ
զանձն, չգիտէ զինքն. և որ զանձն չճանաչիցէ, զո՞
ճանաչիցէ։ Օ որ օրինակ որ զանձն գիտիցէ՝ զամե-
նեսեան ճանաչէ, նոյնպէս և որ զանձն չգիտիցէ, զայլս
զիա՞րդ ճանաչէ։ Ա.յնպիսի էր՝ որ ասէրն, եթէ։ «Ա-
լից'ի վերայ երկնից, և արկիցս զաթոռս իմ». և քան-
զի չգիտաց զանձն, և ոչ զայլն ՅՈՎ ծանեաւ. իսկ
Պաւղոս ոչ այնպիսի ինչ, այլ ընկեցիկ և տրուպ
զանձն կոչէր, և յետին ՅՈՎ սրբոց, և անուանել
զանձն առաքեալ չհամարէր արժանի՝ յետ այնչափ
և այնպիսի ուղղութեց։

Ա.ւ արդ նմին նախանձաւորք և նմանողք լիցուք։
Ա.ւ նմանողք լինիցիմք, եթէ յերկրէ և յերկրա-
ւորացս զերծցուք. զի ոչ այնպիսի ինչ չտայ ՅՈՎ ան-
չել զանձն՝ որպէս ընդ երկրաւորսս բեւեռել. և ոչ
ինչ դարձեալ բեւեռեալ ընդ երկրաւորս կազմէ, որ-
պէս չգիտել զանձն. քանզի միմեամբք միեալ՝ եր-
կոքեան։ Օ որ օրինակ որ արտաքին փառացն ցան-
կանայցէ, և մեծամեծ զանցաւորս համարիցի, թէ-
պէտ բեւր անգամ ոգորիցի, չկարէ ՅՀԳրիստ զանձն
ճանաչել, նոյնպէս և որ յայն ինչ չհայիցի, գիւ-
բաւ գիտէ զանձն. և յորժամ զանձն ճանաչիցէ,
յուղի անկեալ և յայլ ևս մասունս առաքինութեան
գայցէ։

Ա.րդ զի այնպիսի գեղեցիկ հանգամանաց խելա-
մուտ լինիցիմք, առ'ի զերծանելոյ յայմ ժամանա-
կաւորացս որ զասստիկ բոցն բորբոքիցեն'ի մեզ,
հայեացուք'ի վերայ տկարուն անձանց, և զամենայն
խոնարհութիւն և զգաստութիւն ցուցցուք. զի և'ի մե-

1 'Ի լուս. Խմբեաւ։

տաւորսս և 'ի հանդերձեալ բարութիս վայելեսցուք հնարհօք և մարդասիրութեաբ տն մերոյ Յիսի Քրիստի. ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՎԱԽՃԱՆ ԱՌԱՋԻՆ ԳՐՈՑ



Դիրքի համարները և գրանցումները
1/Ի — 19 թ.